(47·925)
U - 93

1069.

Արեւելյան

Արեւելյան. Պարսկերեն ձեռագրեր

Համարներ

IV	5, IV	151
	IV	53
		3
		159
		8

9(47.925)
ՊՈՒՇԱՄԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
9(47.925)
Դ.
Ս - 93
ՄՄՊԳԱԱ ի 1961

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՆԱՀԱՆԳԻՆ ՍԻՍԱԿԱՆ

1069

ԱՐԱՐԵԱԼ

ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՕՐՄԷԼԵԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՄԻՆՉԵՒ

Ա II 34187



ԹԻՖԼԻՍ
ԵԼԵՔՏՐԱՇԱՐԺ ՏՊ. ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ. ՊՕԼԻՑ. 7.
1910

ի ՅԱՒՆՐԹԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿ

ԱՒԵՏԻՔԱՅ ԲԱԼԱՅԵԱՆ

ՂՈՒԿԱՍԵԱՆՑ

Հուշեցուց

Ստեփաննոս Օրբէլեանի այս տպագրութիւնն արտատպուած է Կարապետ վարդապետ Շահնազարեանցի 1859 թուին Փարիզում հրատարակած երկհատոր օրինակից։

Ա.

Նախադրութիւն գրոցս. եւ պատճառ առաջինին առաջնին:

Սկիզբն ամենայն գոյացութեանց՝ Աստուած: Սկիզբն ամենայն բարեաց՝ սէր: Սկիզբն ամենայն շնորհաց՝ խոհականութիւն:

Աստուած է սկիզբն ամենայն գոյացութեանց զի ի նմանէ սկսեալ և յառաջ եկեալ ամենայն բնութիւնք արարածոց երևելեաց և աներևութից՝ բաժանեցան ի զանազան սեռս և ի տեսակս և տրոհեալ տպաւորեցան ըստ իւրաքանչիւր պատշաճի ի ձևս, ի կերպս և յորակս: Սէրն է սկիզբն բարեաց զի ի նմանէ ծնանին ամենայն հոյլք զանազան բարութեանց առ Աստուած, առ հրեշտակս և առ մարդիկ: Առ Աստուած զի ի սիրոյ շարժեալ գոյացոյց զեղեալքս ամենայն. և ի սիրոյ շարժեալ սակս պատկերին Հայրն ոչ խնայեաց յՈրդին. Որդին ոչ խնայեաց յանձն. Հոգին ոչ խնայեաց ի միշտ բաշխելն մարդկան: Առ հրեշտակս զի անխոնարհ կամօք, անխզելի սիրով միշտ միացեալ են ընդ Աստուած, և միշտ հոգան վասն մարդկան՝ գոյակից և ծառայակից գոլով մեզ:

Այս մարդիկ պի ի սիրոյ յղացեալ ծնանին զամենայն բարիս հոգևոր և մարմնական. հոգևոր այնքան պի զանձինս սակս սիրոյ արքայութեանն ի մահ մատնեն և ի զանազան տանջանս և ի ճգունս անհնարինս ամօք և ժամանակօք. և մարմնաւոր, այսինքն ըստ աշխարհիս այնքան պի ի խելաց ևս ցնորին և յանհնարինսն ձեռնարկեն:

Ծոհականութիւնն է սկիզբն շնորհաց պի ամենայն շնորհք որ ի մարդիկ հոգևոր և մարմնական եթէ ի բանս և եթէ յարհեստս նախ խոհականաւն խորհեալ լինի, և յետ բազում որոճմանց և ընտրութեանց լաւին և վատթարին, օգտին և անօգտին, ապա յառաջ եկեալ լինի իմաստ և բան խորհրդական, և կամ արուեստ կատարեալ՝ ծընունդք գեղեցիկք յընտիր ծնողէ խոհականութեանն:

Եւ արդ ստեղծ Աստուած զմարդն ամենայնիւ նման ինքեան, և եդ զերիս զայս ի նմա. որով կարող գոյ ամենայնիւ նմանիլ Աստուծոյ, այս է զարարչութիւնն, զսէրն, զխոհականութիւնն որ է բանականութիւն: Զարարչութիւնն, որով արարչակից լինի ստեղծողին. զսէրն, որով միշտ բաղձայ ցանկալւոյն, և հանապազ ջանայ հասանել և վայելել ի նմին. զխոհականութիւնն, որով որոշի յանբանից և կարող գոյ խորհել և ընտրել զպիտանին և զանպիտանն, զվնասակարն և զօգուտն. և ուսմամբ և ջանիւ ի կատարեալն հասանել հա-

սակ: Եւ թէ որպէս լինի արարչակից. վարդապետք ուսմամբ զոհաս ոգիսն առնեն այր կատարեալ. քահանայք՝ զախտի ծնունդս՝ անախտ, ըզմարդիկ՝ Աստուածս: Իսկ արհեստաւորք գոյացուցանեն յանպատշաճ իրաց պատշաճաւոր և պիտանի. որպէս հիւսունք ի մայրից սեղան և աթոռ. կարուսակք յօդեաց՝ կօշիկ և զգեստ: Դարբինք ի քարանց՝ զերկաթ, և յերկաթոյ՝ սուսեր և այլ ինչ գործի. ահա այսոքիւք նմանին մարդիկ Աստուծոյ և արարչակից կոչին:

Ահա սակս այսր պատճառի ոչ կարէ զօրել մարդն զերիս զայս շնորհս յաման մարմնոյն թաքուցանել և անգործ պահել. այլ միշտ եռայ, զեռայ կայտռալով. և չանայ զամենայն ի գործ արկանել զի ի վերկոյս ունի միշտ զձգտումն և զառփումն առ ազգակիցն: Եւ գործէ այսգունակ յղացեալ մարդն ի սիրոյն եթէ բարի և եթէ չար. սաղմն առեալ յարգանդի մտացն՝ միշտ խորհի խոհականաւն և յօրինէ զհնարս պիտոյիցն և չանայ ծնանիլ և ի կատարումն ածել զբաղձալին. և ապա յառաջ բերեալ գործէ զոր յղացաւն սիրով և յարմարեաց խոհականաւն. և լինի արարիչ այնմ իրի: Յորոց մի ես վաթթարագոյնս քան զամենայն մարդ, և վերջինս ի ծնունդս եկեղեցւոյ, լի անկարգութեամբ և պղերգ յամենայն գործս պիտանիս և ճշգականս, լքեալ ի լուսոյն և եղծեալ ի շնորհացն, ոչ զօրեցի տանել այսմ

արարչաւանդ պարգեւացս որ ի բնութեանս մեր. այլ սերմն առեալ ի սիրոյն՝ վաղ աւուրբք և յոլով ժամանակօք՝ եռայր յիս տարփուճն բաղձանաց, և խորհէի, խոկայի, խնդրէի, սակաւ ինչ գրէթէ ընդ լոմայինն պղտաբերել ի սուրբ եկեղեցիս երկնահանգէտ և աստուածաբնակ տանս Սիսական, այսինքն ընձեռել գրով ըստ իմում կարի զպայազատութիւն նախարարութեան և զմեծ նահապետութիւն բարձր իշխանութեանս Սիւնեաց, և զնախագահութիւն վսեմական և աստուածամեծար աթոռոյ հայրապետութեանս այսմ. և այս ոչ վայրապար. այլ Հոգւոյն ազդմամբ. զի ի նուազեալ աւուրս և ի վերջին ժամանակս տեսաք ամենայնիւ բարձեալ և ջնջեալ զյիշատակ այսմ գեղեցիկ և մեծափառ աթոռոյ տէրութեանց. մարմնականն բնաւին սպառեալ և ի մոռացօնս անկեալ. և հոգևորն ոչ ընդհատ քան զնա մերձ ի սպառումն։

Յոլով երկօք որոնեալ՝ ոչ գտաք յառաջնոցն զյիշատակ սոցա ընդ գրով արկեալ, և զկնի եկելոցս թողեալ արձան գովելի։ Թէ ոչ էին գրեալ. և կամ թէ ի բազում աւերմանց և հինահարութեանց կորուսեալ էր՝ ոչ գիտեմ։ Յաղագս որոյ և մեք ոչ կամեցաք անփոյթ առնել և ընդ անգիտութեան խաւարաւ թողուլ և կորուսանել զորպիսութիւն այսց իշխանութեանցս, և զանազան գործոյցքս պիտանիս և գովելիս հոգևոր և մարմնա-

կան գործոց իշխանաց և հայրապետաց. և այս երկու պատճառաւ. մի՝ զի մի կորիցէ առաջնոցն գովելի գործ քաջութեանցն։ Եւ մի՝ զի մի բնաւին չնչեսցի, և յանգիտութիւն անկցի յղկնի եկելոցս յիշատակ առաջնոցն, և ժառանգութիւն եկեղեցեացս։ Նաև շփոթեսցի սահման իշխանութեանն և խանգարեալ քակտեսցի և պառակտեսցի ի զանազան բարբանջմանց, որպէս և եղև իսկ բազում անգամ։ Եւ զի ծանիցեն զպատիւ և զբարձ իշխանաց և հայրապետաց Սիւնեաց և զամենայն կարգ սահմանի նոցա, և մի զրկեալ կողոպտեսցի յագահողաց և ի դիւապատիր մարդկանէ։ Բայց թէպէտ ցանկալի է ինձ այս. այլ սաստիկ երկիւղիւ անկրթութեան ուղղոյս ընդոստուցեալ միտք իմ վրիպեցուցանէ զիս յառաջարկութեանցս։

Սակս որոյ սատար առեալ նեցուկ և օգնական զաղօթս նախնի սուրբ հայրապետացն և զգեստ իսկ ընթերցողացդ, նաև զշնորհս մեծի և առաքելական եկեղեցւոյս և աստուածագումար սրբոցս՝ կառուցից զգարշապար մտացս ի յոյսն անկարծելի և ի սէրն անկեղծաւոր, և զօրացեալ ի Բանէն որ բանիւ գոյացոյց զերեալքս ամենայն՝ ուղեսցուք զընթացս բանիս ի վերայ անյայտ շաւղաց անկոխ ոտին՝ սկիզբն առնելով համառօտիւք հին և նոր զրուցաց յոգնատեղեակ վիպագրութեանս որում աւարտն և նաւահանգիստն

յանձն է քալ և անմոլար նաւապետին։ Եւ արդ ոմն եղբարք՝ ի բազում ամաց տենչացեալ իմ այսմ իրագործութեան, զորոյ զպատճառն կանխագոյն ասացի, ստիպեալ միշտ ի տասլոյ բաղձանաց, բազում խոյզ քննութեան ի մէջ առեալ՝ տեղեկացայ յաշխարհս հեռաւորս և մօտաւորս, ի վանորայս և յարկեղս կտակարանաց, այլ և ի գիտունս և ի տեղեակս հնագէտ պատմութեանց, և ոչ ինչ գտաք յիշատակ զրուցաբանութեանց ուրոյն այսմ աշխարհի և կամ տեղեկութիւն իրաց։

Ապա հանդէս արարեալ ամենայն պատմագրաց Հայոց. և զոր գտաք՝ հաւաքեցաք ի նոցանէ ամենայն ճշդիւ, նաև սակաւ ինչ ի Պետրոսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի ճառիցն, որ վասն Բաբկայ՝ Սիւնեաց տեառն, և այլ ինչ ի հինն նամակաց թագաւորաց Հայոց և իշխանաց Սիւնեաց, նաև ի կաթողիկոսաց Հայոց և եպիսկոպոսաց Սիւնեաց, որ մնացեալ էին ի վաղ ժամանակաց յամուրս քարանձաւին և որ ի սուրբ ուխտս հայրապետանոցիս Տաթևու, և յարձանագրութեանց եկեղեցեաց և ի յիշատակարանաց գրոց։ Այսպէս անդ գտեալ զթիւ աւուրց և զթուականն ժամանակաց իշխանաց և եպիսկոպոսաց, և իւրաքանչիւր գործոց և բանից, շինութեանց և աւերմանց, նաև կարգի և սահմանի և պատուոյ սուրբ աթոռոյս և առաջնորդ պարգևաց ի սուրբ եկեղեցիս զոր ժողովեալ սնաղեղով՝ եղաք ի մի պարուրեալիկս

սակաւ ինչ տեղեկութիւն զոր հնար էր ի մէնջ և կար։ Եւ սակս ստուգութեանն առաւել տարժանեցաք՝ սկսեալ յառաջին նահապետէն Սիսակայ մինչև ի բաց բարձումն նոցին։ Եւ յառաջին եպիսկոպոսէն Սիւնեաց ի Գրիգորէ մինչև ի մերս ամանակ թշուառութեան. զոր և ընկալ դու սիրով և հաւատա զրելեացս ամենայն ողջմտութեամբ. և շնորհ կալ զՀոգւոյն. և զմեզ անմեղադրելի թող։

Բ.

Սակս ազգաբանութեան եւ նախնական նախակարգութեան եթէ ուստի սերեցաւ նահապետութիւնք Սիսական ազգին յԱդամայ հետէ։

Տիրապատուէր հրամանաւն պարտականեալ յանպայքար օրէնս ժամանակախոյզ խնդրողացն Այն, որ ասէ «ոչ է ձեզ գիտել զժամս և զժամանակս զոր Հայր եդ յիւրում իշխանութեանն», միայն հետոց անուանցն և ծննդաբանութեանց հետևեսցուք ստոյգ կտակաւ յարմատոյն մարդկութեանս մինչ ի սկիզբն նահապետութեան ազգին Սիսական։ Եւ այս վասն զի ծանիցես զնոսա ոչ ի խառնիճաղանճ ամբոխից, կամ վասն յառաջադիմութեան ինչ կամ վասն պատահման ունել զնախագահ նահապետութիւնն. այլ ի ծայրագոյն և յազնուական տոհմէ յատուածատեղծ մարդոյն

ակսեալ երևելի հարազատութեամբ որդիք գհարս փոխանակելով՝ հասին ի նախարարութիւն։

Գ.

Յուցմունք սահմանաց ասխարհիս Սիւնեաց. եւ թէ զինչ ունի պարարտութիւն ի պէտս մարդկան· եւ որպանութիւն գաւառաց եւ անառիկ բերդից։

Իսկ գաւառք ունի երկոտասան. առաջինն որ ունի զբուն գահ իշխանացն և հայրապետաց՝ Ծղուկ գաւառ անուանեալ ի Ծղկայ գաւառապետէ։ Երկրորդ՝ Վայոց ձոր որ ի հասարակական դիպուածոց ողբոց և աշխարանաց կոչեցաւ Վայոց ձոր։ Երրորդ՝ Գեղաքունի որ ի հայկեանն Գեղամայ կոչեցաւ Գեղարքունի։ Չորրորդ՝ Սօթից գաւառ, որ սակս հանապազորդեան ըքոց և գառնաշունչ օդոյն կոչեցաւ Սոթք։ Հինգերորդ՝ Աղահէջ գաւառ, որ այժմ կոչի Քաշաթաղ և Ժոժոռաբերդ։ Վեցերորդ՝ Հաբանդ գաւառ։ Եօթներորդ՝ Բաղք գաւառ, որ այժմ կոչի Ա.ճէն, որ ի Բաղակայ անուանեցաւ։ Ութերորդ՝ Կովսական գաւառ, որ այժմ Գրհամ կոչեն։ Իններորդ՝ Արևիք գաւառ, որ այժմ կոչի Դաշտօն և Մեղրի։ Տասներորդ՝ Ջորք գաւառ, որ ունի զանմատոյց ամուրն Բաղաբերդ, և այժմ կոչի Կապան։ Մեհասանեորդ՝ Երնջակ գաւառ և Գողթն։ Երկոտասաներ-

բորդ՝ Ճահուկ գաւառ, որ և ձորն որ Շահապաւնս կոչի։

Ահա այսոքիկ են գաւառք երկոտասանք գըլխաւորք Սիւնեաց։ Բայց այլ ևս ունի գաւառս յոլով գորս ոչ յիշեցաք. է որ փոխեալ են անուանք սոցա. է որ յայլ և յայլ գաւառս բաժանեալ են։ Իսկ ամուրք անառիկք ի սմա որ ի մարդկան հնարից հեռացեալ են, բայց միայն թէ Տէր մատնեսցէ՝ Բաղաբերդ, որ և մի ոմն ի զարմից Սիսակայ Բաղակ անուն, առեալ զայս գաւառ մասն ժառանգութեան՝ շինէ զքարն Բաղակու ամրոց, որ կոչի Բաղակի քար. և ամրացուցանէ զբերդն և կոչէ Բաղաբերդ. և գաւառն յիւր անուն կոչեցաւ Բաղաց գաւառ։ Իսկ մի ոմն ի կանանց նոյն նահապետացն երնջիկ անուն, շինէ և զանհնարին ամուրն երնջակ. և յիւր անուն բերդն և գաւառն կոչի երնջակայ. և դնեն ի նմա տուն գանձու և հարկաց աշխարհին։ Եւ այլ ևս ամուրք գովելիք անվախ և անսասան ի հնարից մարդկան՝ Հայրաբերդ, Փրհամ, Մայրի, Շլորուան, Կքեբերդ, Բարկուշատայ բերդ, Անդոկայ բերդ, Գեղաքունեայ բերդ, Բղենոյ բերդ, Վանդայ բերդ, Բորոդանայ բերդ, Հանբաղայ բերդ որ ի նոյն տոհմէ Սիսակայ ի Զագայ նահապետէ շինեալ ի վերայ գետոյ միոյ՝ կոչէ յիւր անուն զձորն Զագէձոր և զբերդն՝ Զագէձորոյ բերդ, Քաշէթաղուց բերդ, Խոժոռաբերդ, Որոտան բերդ, Սիւնեաց բերդ, Բորտոյ

բերդ, Շահապաւնից բերդ՝ ի Շահապայ պարսկէ շինեալ. և զձորն յիւր անուն Շահապաւնից ձոր, որ հատուածի պատճառաւ եկեալ էր առ նահապետքն Սիւնի: Իսկ ի վայոց ձոր՝ կապոյտ բերդ, Հրաեղկայ բերդ ի Հրաեղկայ շինեալ անհնարին ամրութեամբ աստուածաստեղծ պարսպօք ամրացեալ: Սուլեմայ բերդ՝ ի Սուլեմայ տանուտեառնէ շինեալ, և այլ ևս յոլովս, զորս աւելորդ համարեցաք գրել, Իսկ ունի մայրաքաղաք զնախիջեւան: Եւ արդ՝ այս այսքան տեղեկութիւն քեզ բերոց պարարտութեանց և սահմանաց և բերդից և գաւառաց Սիսական աշխարհիս:

Դ.

Սակս Սիսական տոհմին նախակարգութեան իւրոց որպէս կարգեցաւ ի վաղարշակայ՝ թագաւորէ Հայոց:

Փափագելի է մեզ այժմ թողուլ զամենայն անոտիապատում վէպս հնոցն, և բուռն հարուլ միայն զերջանկաւէտ բարեբաստութեանց և նախագահ նախակարգութեանց վեհափառ տէրանցն Սիւնի և ցեղին Սիսակայ. քանզի երկք աշխատութեանց յոլովք են, և շահ օգտութեան և ոչ մի ինչ. յորմէ ի բաց տարեալ զձգտումն մտացս՝ պիտանիքն միայն ի մէջ անցեալ արձանացցին մեզ:

Արդ՝ սկսեալ նահապետութիւնս այս ի նախ-

նուոյն Սիսակայ երևելի հարազատութեամբ պայազատեն զտէրութիւնն որդիք ի հարց երկայն և բազում ժամանակօք։ Բազում և մեծամեծ քաջութիւնս ցուցեալ ի պատերազմունս թագաւորացն Հայոց. և բազում և մեծամեծ պարգևօք և գահիւք պատուեցան ի թագաւորացն Պարսից և Հայոց նաև Յունաց իսկ։ Եւ այնքան անուանիք եղեն, մինչ հրամայեցաւ նոցա գահոյս ունել արծաթի, և վարսակալ ածել մարգարտեայ և մատանի ունել վարազագիր։ Նաև կօշիկ կարմիր և մական ոսկի՝ ունելով ի վերայ գրեալ զանուն և զպատիւ ցեղին։ Եւ այսպէս հասեալ մինչև զՎաղարշակ, զոր թագաւորեցոյց Արշակ՝ եղբայր իւր, ի վերայ Հայոց ի սկիզբն թագաւորութեան ցեղին Արշակունեաց ի վերայ Հայոց, որ էր առաջին Վաղարշակ։ Սա ոչ կամեցեալ խառն կարգօք և անազգի մարդկամբ վարել զթագաւորութիւն իւր. զի ցայն վայր ոչ էր եղեալ ումեք փոյթ յառաջնոցն կարգի և գեղեցիկ յարմարման օրինի թագաւորութեան. այլ ըստ յառաջադիմութեան և պատահման ամենայն ոք բարձրանայր և ամենայն ոք խոնարհէր։

Կարգէ սա գեղեցիկ յօրինուածով և դովելի կարգօք. նախ՝ ի գլխոյն սկսեալ հրամայէ բագրատունեացն թագադիր լինել, և անուանէ զնոսա ասպետս, և շնորհէ ունել զնախնականն բարձ ի վերոյ քան զամենայն։ Եւ ապա կարգէ ընդ

սմա զՋեռէս ի զաւակէ Քանանացւոց, ի ցեղէն Ննթունեաց զզեցուցանողս ինքեան. և դնէ ի վերայ արքունի հանդերձից: Ըստ սոցա և զայլսն ևս ըստ պիտոյից տանն արքունի: Իսկ յարևելից կողմանէ կարգէ մեծ և առաջինն նահապետութիւն զՍիսակեան տոհմ. ընդ սմա և զԿադմեանն: Եւ հրամայէ Սիսականացն հրամանատար լինել ի վերայ ամենայն արքունի զօրացն, և երկրորդ թագաւորութեան իւրոյ. և ընդդէմ կալ հանապազ պատերազմաւ զրանն Հոնաց. որոյ անուն առաջնոյն Սիսակ կոչիւր: Իսկ ի զաւակէ սոցա ընտրեալ այր մի յոյժ արի և զեղեցիկ և քաղցր բարուք՝ զԵռան (Առան) անուն. և կարգէ նահապետ ի վերայ մեծ դաշտին Առանայ, յերասխայ մինչև ցՀունարակերտ: Եւ վասն քաղցր բարուցն աղու ձայնէին զնա. որ և աշխարհն յանուն նորա Աղուանք (Աղվանք) կոչեցաւ: Ահա այս սակաւ մի տեղեկութիւն քեզ զի գիտասցես զսոսա ոչ միայն Սիւնեաց, այլ և Աղվանից գոլ նախնի նաև երիցագոյն քան զնոսա:

Ը.

Սակս յաւսաւորութեան աշխարհիս Սիւնեաց Աստուածգիտութեամբ եւ հաւատոյոյ իշխանացն ընդ Տրդատայ ի ձեռն սրբոյն Գրիգորի լուսաւորչին մերոյ, ի Քրիստոս Աստուած. եւ աւերելոյ զմեհեանս եւ շինելոյ եկեղեցիս. եւ ձեռնադրելոյ եպիսկոպոսին Սիւնեաց. եւ այլ զոյցք պիտանիք:

Անտանելի լեալ խնդութեամբ հրաշանան

միտք իմ ի վերայ սքրալի պատմութեանս որ առաջի կայ: Զի ցայս վայր իբր զժանահոտ մեռելոյ ուրուք ճառեցաք զբանս որք ի հեթանոսական մոլորութեանցն էին յափշտակեալք, միայն մարմնոյ և եղծական փառաց հաղորդեալք. զուրկ և ունայն ի ճշմարիտ գեղեցկութեանցն և յանկողոպտելի փառացն: Իսկ այժմ զերկուց իրաց ուներիմ գրել փառաւորութիւնս՝ զոգևոր և զմարմնաւոր, զնիւթականն և զմշտնջենաւորն իբր զգեղեցիկ և անուշահոտ կենդանւոյ, որք պայծառացան յանբաւածաւալ ճառագայթից արեգականն արդարութեան. և երկու աշխարհաւ վայելչացեալ զարդարեցան: Եւ արդ՝ ըստ կարգի և հարազատութեան նահապետացն և իշխանացն Սիւնեաց ոչ ունիմ ինչ ասել զանուանց և զծննդոց նոցա մինչև ցայս վայր. զի և առաջնոց պատմագրացն անյայտ էին իրքն. և մեք թէև բազում անգամ չանացաք, այսքան միայն գտաք զոր վերագոյն կարգեցաք. նմանապէս և յառաջիկայսդ է իմանալ: Եւ թէ ջր աղագաւ. ասացից զպատճառն, զի և դու մի՛ պահանջեսցես յինէն կարգս և շարս իշխանաց և թիւս շարեալ ժամանակաց, որպէս ի սկզբան պատմութեանս ցուցաք թէ՝ ոչ գտաք առաջնոցն փոյթ եղեալ զայսմանէ և զբրեալ ուրոյն առանձին զգրոյցք և զորպիսութիւն այսմ աշխարհի և տէրանց, որպէս զայլոցդ տեսաք՝ զՄամիկոնեանն և զՏարօնոյն, զԲագ-

A II 3418
1069

բառունեացն, զվասպուրականացն, որք յետոյ թագաւորեցին, զվրացն, զՕղվանիցն։

Վասն այնորիկ ոչ երևին կարգ իշխանացն և թիւ ժամանակացն. այլ ցիր և ցան գտաք յառաջնոցն վիպագրութիւնսն աստ և անդ ընդ ազօտ նշանակեալ։ Եւ այս վասն զի յորում ժամանակի երևելի գործ ինչ ցուցեալ է յիշխանացն Սիւնի ուրեք, հարկ է եղեալ պատմողաց ժամանակին զայն ևս յիշել. իսկ զաննշանիցն և անյայտ գործոցն հասարակաբար ոչ ինչ փոյթ լեալ, որպէս օտարի ուրուք։ Յայտգս որոյ և մեք ոչ հետևեցաք կարգի և ժամանակաց, այլ քաղեալ ըստ պիտանիսն որ ըստ աւուրց աւուրց հանդիպեալք են՝ յառաջնոցն բանից շարայարեացուք ըստ կարի։ Սրդ ի ծագել իմանալի ճառագայթից արեգականն արդարութեան յաշխարհիս Հայոց և ի ծաւալել յորդառատ քարոզութեան աւետարանին յարևելս և հիւսիս ի ձեռն բազմաչարչար նահատակին առաքելական առնն սրբոյն Գրիգորի, ի մկրտել զաստուածապսակ թագաւորն Տրդատ ամենայն նախարարօք Հայոց և խառնիճաղանճ ամբոխիւք յՅփրատ գետ, առնու և անդ զկնիք լուսաւոր մկրտութեան մեծ իշխանն Սիւնեաց իւրով գնդիւն, որ և գնացեալ էր ընդ սրբոյն Գրիգորի ի կեսարիա.

Եւ ի դարձին մտեալ ի Տարօն գաւառ, և բազում և մեծամեծ գործս քաջութեան ցուցեալ

անդ ի պատերազմի քրմացն Գիսանեան կռոցն, զոր պատմէ Թուղթն Զենոբայ եպիսկոպոսի տարօնացւոյ։ Եւ բազում գանձիւք և չանիւ գործակից լինի շինուածոյ հանգստարանի սրբոյ կարապետին, և կանգնէ անդ ի վանսն Գլակայ արձան գնշանն տէրունական յիշատակ իւր։ Իսկ ի գալն և ի հանդիպիլն մեծ արքային Տրդատայ, հրամանն առեալ ճանապարհորդ նախարարացն գնալ յիւրաքանչիւր գաւառս և հանգչել, և մատակարարել զշինուածիւն աշխարհաց իւրեանց։ Եւ զի դեռ ևս կային կռոցն և մեհենիցն բազմութիւնք ի գաւառս նախարարացն՝ հրամանն առեալ ասպա և իշխանն Սիւնեաց յարքայէ՝ խնդրէ և ի սրբոյն Գրիգորէ վարդապետս և ուսուցիչս զի և աշխարհի իւրոյ ուսուսցէ զՔրիստոսեան աւետարանն և կործանեսցէ զբազինս կռոցն։ Եւ շնորհէ նմա գոհն յԱստուծոյ անտի զոր բերեալ էր։ Եւ անցեալ մեծաւ ուրախութեամբ եկն յաշխարհ իւր և զամենայն ընտանիս իւր մկրտեաց աւազանին լուսաւորութեամբն. և կործանեաց զամենայն բազինս կռոցն. և դարձոյց զաշխարհն ամենայն ի քրիստոնէութիւն, և զտեղիս բազնացն նուիրեալ ի շինութիւն եկեղեցեաց և տան Աստուծոյ։ Եւ դարձեալ միւս անգամ գնաց սա ընդ արքային Տրդատայ և սրբոյն Գրիգորի ի հանդիպումն կոստանդիանոսի. իսկ ի դառնալն ի Հռոմոց և ի գալն յաշխարհս Հայոց, այնուհետև ոչ զադարէր

ի շրջելոյ սուրբն Գրիգոր և յուսուցանելոյ և կանգնելոյ եկեղեցիս։

Երթեալ ի Վիրս, և անտի յԱղվանս մինչ ի Մասգութս և ի պահակն Հոնաց. և հաստատեալ զամենայնան ի հաւատս՝ գայ ի փոքր Սիւնիք. և մտեալ յԱմարաս՝ շինէ եկեղեցի և թողու անդ սպասաւորս։ Եւ ելեալ անտի՝ գայր ի սահմանս Սիսական աշխարհիս։ Որում ընդ առաջ ելեալ մեծ նախարարն Սիւնի՝ բերեալ յաշխարհ և ի տուն իւր. և մեծաձախ ընծայիւք և արքունական պատարագօք պատուէ զնա, և շրջեցուցեալ ընդ գաւառն ամենայն՝ հաստատէ ի հաւատս. և ի պատշաճաւոր տեղիս շինէ եկեղեցիս և կանգնէ ըզնշան տէրունի։ Ապա այնուհետև մինչ յանկ ել, կատարեցաւ մենայն շնորհօքն Աստուծոյ, խընդութիւն ոչ սակաւ ինչ լինէր ամենեցուն. վասն որով առաջի անկեալ սրբոյն Գրիգորի՝ հայցէր տեսուչս և առաջնորդս աշխարհին, զոր և փութով և յօժարութեամբ յանձն առնու շնորհել։ Եւ եկեալ ի Վաղարշապատ ձեռնադրէ զոմն յիւրոց մերձաւոր աշակերտաց, այր ճշմարիտ և լաւ, լի ամենայն հմտութեամբ, երիտասարդ հասակաւ, որոյ անունն Գրիգորիս. և տայ ցիշխանն տանել վիճակեցուցանել յեպիսկոպոսութիւն աշխարհիս Սիւնեաց։ Աստանօր եղև սկիզբն եպիսկոպոսութեանս Սիւնեաց. որ և եկեալ՝ մեծաւ ջանիւ հաստատէր ի հաւատս զնորածին քրիստոնեայսն ոչ

դադարելով յուսուցանելոյ զճշմարիտ վարդապետութիւնն սրբոյ աւետարանին:

Զ.

Զոյցէ հին ժամանակաց որ վասն գալոյ սուրբ Առաքելոյն Բարդուղիմէի յաշխարհս Սիւնեաց, եւ վասն շինելոյ նկեղեցի ի գաւառին Գողթն. եւ դարձուցանելոյ ի հաւատս զմանս, եւ հաստատելոյ սեղան եւ ձեռնադրելոյ եպիսկոպոս:

Նախքան զամենայն կարևոր և յոյժ պիտանի էր ինձ զայս իսկ ցուցանել թէ՝ քան զՀայաստանեայս նախահաւատ երևեցան սոքա, և եկին ի հնազանդութիւն սրբոյ աւետարանին ի ձեռն սուրբ առաքելոյն Բարդուղիմէի. զոր և ոչ է անտեղի այժմ կարգել՝ ի դառնալն Բարդուղիմէոսի ի Պարսից անցեալ ընդ Ատրպատական՝ գայ իւրովք աշակերտօքն. և անցեալ ընդ գետն Երասխ՝ մտանէ ի սահմանս Սիսականու, և սկիզբն արարեալ քարոզութեան յՈրդվատ գեօղ և յԱրևիս գաւառ և ի տունն Բաղաց և ի Գողթն: Որք ընկալեալ զքարոզութիւնն աւետարանին, լուսաւորեցան մկրտութեամբ աւազանին ի ձեռն սուրբ առաքելոյն Բարդուղիմէի: Իսկ սուրբն առաքեալն շինէ եկեղեցի ի Գողթն յարևմտից եզերըն ի վերայ վիմի միոյ յիւրեանց հանգստեան տեղւոջն, ուր վանքն էին կալեալ. և անուն կոչեցին Տեառնընդառաջ. և արարին նշանս մեծամեծս: Քանզի էր ջուր ճնասակար ի յՈրդվատ

գիւղ, որ ոտոգանէր յամենայն ամի զամենայն անդաստանս և զայգիս։ Եւ աղօթեցին յանկարծակի, և կորուսին զջուրն. որ և տեղին յայտ է մինչև ցայսօր։

Եւ էր իշխան գաւառին Շար և որդի իւր Յոսրով և թոռն իւր Վահան և կին իշխանին Նշնա։ Ապա կացուցանէ նոցա տեսուչս. զի մի վերստին մոլորեսցին ի կռապաշտութիւն, զոմն յաշակերտաց իւրոց Կումսի անուն, ձեռնադրեալ զնա եպիսկոպոս։ Եւ ինքն յանձն արարեալ զնա սուրբ Հոգւոյն՝ գայ ի Վանանդ գիւղ. և մի յաշակերտացն անդ վախճանեցաւ Լուսիկ անուն, զոր ի նմին տեղւոջ եդին ի հանգստի և շինեցին փոքրիկ մատուռն մի ի վերայ. և կատարին մեծ սքանչելիք և բժշկութիւն մինչև ցայսօր. և զամենիս յոյժ հնազանդեցուցանէ հող գերեզմանին։ Էր և անդ բազին մի, կործանեաց և զայն, և շինեաց ի տեղին խրթին եկեղեցի, և կոչեաց յանուն սրբոյն Թովմայի. և անդ լինին բազում նշանք։ Իսկ սուրբ առաքեալն ելեալ անտի՝ գընաց ի մայրաքաղաքն Հայոց Դվին։ Յետ այսորիկ վախճանեցաւ Կումսի. և նոքա ոչ կամեցան առանց առաջնորդի մնալ. և այլ ուրեք ոչ ունէին ակնկալութիւն։ Ապա կացուցանէին իւրեանց առաջնորդ զխուժիկ ոմն Բաբելաս անուն։ Զկնի սորա քաջալերեալք ի սուրբ Հոգւոյն՝ առաքեն առ սուրբն Թադէ զոմն մի Մուշէ անուն. որ և

ոչ կարաց անդրէն դառնալ. այլ սոքա կային միայն անտերունչք բնակեալ այսր և անդր. և ոմանք զօղեալք ի լերինն Գարուայ միայնաւոր րութեամբ զկեանս իւրեանց վարէին զբազումս ուսուցանելով յոլով ժամանակօք՝ մինչ ի գալ մեծի լուսաւորչին ի Հայս, և ի լուսաւորելն զամենայն աշխարհս Հայոց: Ապա զնացեալ սոցա խնդրեցին իւրեանց առաջնորդ. և եւս այր մի տարօնացի Մովսէս անուն. և յետ սորա Սահակ տարօնացի. և ապա զԶրուանդատ. և ապա զՍտեփաննոս. և ապա զՅովհաննէս:

Եւ այսպէս ի կարգ անկեալ՝ մի զմի վոխանորդելով մինչև ցայժմ. Բայց գիտեա զի ոչ եթէ հաւուրս ածեալ էին սոքա ի Սիւնեաց, այլ յառաջն մինչդեռ ոչ էին հաւատացեալ, և ոչ էին կարգած յաշխարհս Հայոց եպիսկոպոսք, սոքա առանձին ունէին տեսուչս: Իսկ ի լուսաւորել սրբոյն Գրիգորի զՀայս. և ի կարգաւորել զբարձ և զաստիճան եպիսկոպոսացն և զոսոս յանձնեաց եպիսկոպոսացն Սիւնեաց զի նոցա հրամանաւ և ի ներքոյ կացցեն հնազանդութեամբ. որում վկայ առաջին կաթողիկոսացն շրջաբերական թուղթք և հին գաւազան գաւառացն որ վասն հարկաց եկեղեցւոյն, զի լիով ունի գրեալ յինքեան զբովանդակ գաւառն Գողթան. նմանապէս և իշխանք Գողթանն ոչ եթէ յայլմէ տոհմէ էին, այլ ի նոյն Սիսական ցեղէ, ըստ մասին ի ժառանգութիւն առեալ էին զայս գաւառ,

որպէս ցուցանէ քեզ Մովսէս Խորենացի։ Եւ թէ որպէս է պատիւ և բարձ եպիսկոպոսացն Հայոց՝ ցուցից քեզ ի միւս ճառիս։

Լ.

Ցաղագս եպիսկոպոսաց եւ իշխանաց Հայոց. եւ երէ ո՛յր են գահերէցք եւ գահագլուխք կարգեալ ի մեծին Տրդատայ եւ ի սրբոյն Գրիգորէ եւ յորդւոց եւ ի թոռանց իւրոց. եւ վասն առանձին պատուոյ եւ աստիճանի եպիսկոպոսին Սիւնեաց։

Նորոգեալ նորածին շնորհօք զՀայս առաքելագործ այրն Աստուածոյ՝ սուրբ քահանայապետն Գրիգորիոս, հրամայէ մեծին Տրդատայ կարգել զթագաւորութիւն իւր ըստ սահմանի կայսերացն Յունաց, և տալ ըստ իւրաքանչիւր պատշաճի գահ և պատիւ իշխանացն յաջմէ և յահեկէ։ Որ և գեղեցկապէս յօրինեալ ի ժամ ճաշուն նստել բարձս 400 իշխանաց. որոց գահագլուխք՝ բդեաշխն Գուգարաց և իշխանն Աղձնեաց, իշխանն Անգեղտան և իշխանն Կորդուաց, ասպետն Բագրատունի և իշխանն Արծրունեաց, իշխանն Սիւնեաց և իշխանն Մամիկոնէից։ Սոքա էին գահագլուխք ամենայն իշխանացն Հայոց։ Իսկ զօրացն և աշխարհին չորս միայն կացուցանէ իւրոյ թագաւորութեանն երկրորդ հրամանատարս ի վերայ ամենայնին։ Արևելեան կողմանն՝ իշխանն Սիւնեաց 21 իշխանօք. հիւսիսային կողմանն՝ բդեաշխն Գուգարացւոց 22

իշխանօք. արևմտեան կողմանն՝ Կորդուացին 21 իշխանօք. հարաւային կողմանն՝ իշխանն Անգեղտանն 22 իշխանօք: Զայս այսպէս ի գահ նամակի իշխանացն Հայոց զոր Ղևոնդ գրեաց. և սակաւ մի ցուցանէ Ագաթանգեղոսին և Ներսիսին:

Իսկ մինչ այս այսպէս կարգեցաւ. ապա կարգէ և սուրբն Գրիգոր զեկեղեցական դասս, զգահ և զպատիւ եպիսկոպոսացն. և հրամայէ բազմել ընդ ինքեան աթոռով և ոսկենկար բարձու 36 եպիսկոպոսաց՝ 18 յաջմէ և 18 յահեկէ. յաջմէ առաջինն Հարքայ եպիսկոպոսն. և յահեկէ առաջինն Բասենոյն, իսկ զՍիւնին յաջ կողմանն յեօթներորդ գահուն նստուցանէ. և ցուցանէ զայս Սամուէլ կամբջաձորեցի: Իսկ ի թագաւորելն Արշակայ և ի նստուցանել յաթոռ հայրապետութեան զմեծն Ներսէս՝ մինչ յուղարկեցին զնա ի ձեռնադրութիւն ի կեսարիա առ Եւսեբի հայրապետն, յայնժամ յուղարկեցին ընդ նմա զԱնդոկ՝ իշխանն Սիւնեաց, գլուխ այլոց իշխանացն Հայոց, և զԳրիգորիոս՝ եպիսկոպոս Սիւնեաց, գլուխ եպիսկոպոսացն Հայոց: Եւ հրամայեաց Արշակ ոչ միայն ձեռնադրել զՆերսէս եպիսկոպոսապետ Հայոց. այլ և պատրիարք ինքնագլուխ. զի ոչ է պարտ, ասէ, Հայոց ի ներքոյ լինել եպիսկոպոսապետին կեսարու. զի թէ առաքեալն մեր Թադէոս անդ միայն եկեղեցի շինեալ է և յիւրոց աշակերտացն

ձեռնադրեալ եպիսկոպոս. եւ վասն այսր պատճառի առնուամբ անտի ձեռնադրութիւն. քանի՛ ևս առաւել՝ նոյն ինքն առաքեալ առ մեզ այլ ևս երիւք առաքելովք. որոց հանդիսա և աթոռ և եկեղեցի և ձեռնադրեալք աստ են բովանդակ. ընդէ՞ր կարօտանամք յայլմէ կրսերագունէ առնուլ օրհնութիւն. և սակս այսր պատճառի նստուցանեն զնա պատրիարք Հայոց։ Եւ զի հարկ է ամենայնիւ ի ներքոյ լինել պատրիարքին և մետրապոլիտ, զի լրացեալ լինի լինն դաս եկեղեցւոյ որ ըստ վերնոյն։ Ապա թագաւորն հրամայէ մեծաւ ժողովով սահմանել զբովանդակ կարգս եկեղեցւոյ անթերի։ Կացուցանեն պատրիարք զտուրբն Ներսէս, և ի ներքոյ նորա արքեպիսկոպոս զԱղվանից, որ է կաթողիկոս. և մետրապոլիտս՝ զՍիւնեաց եպիսկոպոսն եւ զՎրացն և զՄարզպետականն, և յետոյ այլ ևս մետրապոլիտս կացուցանեն զՄելիտինեայն և զՄեբաստիոյն։

Իսկ Գրիգորի՝ Սիւնեաց մետրապոլտի, աւելի պատիւ արարեալ սուրբն Ներսէս, վասն երթալոյն ընդ նմա ի կեսարիա, տայ նմա բազմական ոսկեթել. և կարգէ զՍիւնիք նախաթոռ պատրիարքին որ կոչի ի հոռոմ լեզուն պռոտոֆրաւնտես Հայոց մեծաց։ Իսկ յետ ոչ ինչ բազում աւուրց՝ յաւուրս Սահակայ և Մեսրոբայ կրկին պատիւ առեալ Անանիայի՝ եպիսկոպոսի Սիւնեաց, յեսվաղէն՝ թագաւորէն Աղվանից, զի

պարգեւէ նմա զիւր թագաւորական դրօշն կարմիր և ոսկետառն վառիւ՝ ունելով ի գլուխն գունդ ոսկի և ի վերայ խաչ պատուական. և հրամայէ հանապազ առաջի կրել եպիսկոպոսացն Սիւնեաց. զորոյ զպատճառն և զորպէսն յիւրում տեղւոջ ասացից: Ահա այսպէս կարգեցաւ և պատուեցաւ եպիսկոպոսութիւն Սիւնեաց. և սկսաւ ի սրբոյն Գրիգորէ, և յորդւոց և թոռանց իւրոց, որք կոչին մեծապօլիտք: Եւ գործ է սոցա ձեռնադրել եպիսկոպոս գաւառաց. վասն որոյ երկոտասան եպիսկոպոսաց գլուխ կարգեցաւ. և առանց սոցա ոչ ձեռնադրի պատրիարք Հայոց և ոչ լինի ժողով. այլ գլուխ և հրամանատար ժողովոյ սոքա լինին. և նախաթոռ վարդապետութիւն և հրաման մեկնութեան և թարգմանութեան սոցա միայն շնորհեցաւ ի մէջ Հայոց ի սրբոյն Սահակայ և յերանելւ վարդապետէն Մեսրոբայ: Այլ և յետ ժամանակաց յոլով և՛ս եղեն վիճմունք յաշխարհիս Հայոց վասն պահերէցութեան սոցա և վասն գունակ գունակ բաժանմանց և մեծաբանութեանց. զորս յիւրում տեղւոջ եդից ղչափաւորն և ղյոյժ պիտանին:

Ը.

Վասն վախճանին Գրիգորիսի՝ մեծապատիւ Սիւնեաց. եւ փոխանորդելոյ զաթոռն սրբոյն Մաշտոցի։

Որպէս և գտաք աստ և անդ մանաւորաբար ի գիրս հնոցն. զնոյն և ճշդիւ քննեալ կարգեցաք ի սմա, որ և այսպէս ցուցաւ. զի ի գալն մեծին Ներսիսի ի կեսարիոյ, և յարդարելն զկարգս գովելի աշխարհիս Հայոց. յայնժամ յետ սակաւուց վախճանի Գրիգորիս՝ եպիսկոպոս Սիւնեաց, կացեալ յեպիսկոպոսութեանն ամս 46։ Եւ խնդրէ Անդոկ՝ մեծնահապետն և նախարարն Սիւնի, ի սրբոյն Ներսիսէ առաջնորդ և տեսուչ իւրոյ աշխարհի։ Եւ նա կատարեալ զհայցուածս նորա՝ ձեռնադրէ զերանելի այրն Մաշտոց և նստուցանէ յաթոռ մեծապատուութեանն Սիւնեաց՝ երկրորդ զկնի Գրիգորիսի։ Որ և եկեալ առաքինաջան վարուք զարմացուցանէր զամենեսեան, և յոլով կարգս բարեպաշտութեան ուղղէր յաշխարհիս յայս. և ոչ դադարէր զցայգ և զցերեկ յուսուցանելոյ զհօտն. և այնպէս բարի քաղաքավարութեամբ և ճշմարիտ առաքինութեամբ կեցեալ յաթոռ մեծապատուութեան ամս ինչ՝ փոխի ի կարգս հրեշտակաց։ Եւ լինի խափանուած աթոռոյն ամս բազում. զի խանգարեցաւ իշխանութիւնն Սիւնեաց ի Պարսից թագաւորացն. և մնաց երկիրն անիշխան, ապալերկ, ամայի յամենայն շինութեանց

ի մարդոց և յանասնոց զամս 25. զորոյ զպատճառն և զորպէսն այժմ կարգեցից։

Թ.

Վասն Անդոկայ՝ Սիւնեաց իշխանի, թէ զինչ գործ գործեաց. եւ թէ ո՛րպիսի անցք անցին ընդ աշխարհս Սիսականի ի Տապիոյ՝ Պարսից արքայէ. եւ երբ նորա առ կայսրըն Յունաց՝ առ մեծն Թէոդոս. եւ անդ վախճանիլն՝ յաստացուածոց արբոյն Պետրոսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի։

Ստուգիւ քննեալ իմացաք զի բան անիծից սըրբոյն Ներսիսի ի վերայ Արշակայ կատարեցաւ։ Քանզի կամաթող եղեալ Արշակայ ի թագաւորութենէն Հայոց՝ գնայ առ Շապուհ, և իւրովի մեռանի անդ յԱնուշն բերդի։ Եւ թագաւորութիւն նորա նման Ռոբովամայ յերկուս ճեղքեալ՝ կէս աշխարհիս լինի ընդ Պարսից իշխանութեամբ և կէսն՝ ընդ Հռոմոց։ Յաղագս որոյ և Սիւնեաց աէրութիւնն անկանի ի բաժինն Պարսից։ Իսկ այս Անդոկ այլովք նախարարօք Հայոց լինէր հանապազ ի դրանն արքունի. և սա էր ճոխ և փառաւոր ի մէջ իշխանաց Հայոց. և խառնեալ էր խնամութեամբ ընդ Արշակունիսն զի զդուստր իւր զարմանագեղ զՓառանձեմ տուեալ էր ի կնութիւն Գնելայ՝ եղբօրորդւոյն Արշակայ, զոր յետոյ ինքն էառ. և ծնաւ ի նմանէ ժառանգ թագաւորութեան իւրոյ զՊապ, որ թագաւորեաց Հայոց յետ հօր իւրոյ։

Եւ ապա լինէր օր մի պարապուրդ. և Շապուհ՝ որդի Որմզդայ, արքայից արքայ Պարսից, Արեաց և անթիւ աշխարհաց, կամեցեալ խրախանալ. և ճաշ արարեալ ամենայն մեծամեծաց իւրոց, ամենից ամենայն տոհմից ազատատոհմ Պարսից նախարարացն և Արեաց գնդին, ըստ նախադասութեան նախապատիւ արարեալ բաժակօք և ուռուվք առաջի իւր զիւրաքանչիւր ուրուք նախամեծարս ցուցանէր: Իսկ զմովպետէն մովպետան ի սեղան արքունի մեծապատիւ մեծարէր: Եւ խորհուրդ բերեալ թագաւորն Պարսից Շապուհ՝ խօսիլ սկսաւ առ նախարարսն Հայոց և ասէ «զՊարսից, զՊարթևաց զբնական պահլաւիկս և զազատագունդս զազատ արանց զԱրեաց աշխարհի նախամեծար դասապատիւ քաջ գիտեմք զորպիսութիւն. բայց զԱրմենու զազատատոհմ և զնոցին նախապատիւ, զնախադաս նախագահութիւնս ոչ կարացաք գիտել ո՛չ ի նախնեացդ մերոց հարցն հարանց թագաւորաց և ո՛չ այլ ուսաեք յամենիմաստ մատենագրաց: Եւ արդ՝ մի յերկուց առաջի կայ ձեզ նախարարացն Հայոց ազատ արանց կատարել զբնդիրս մերոց Արեաց աշխարհաժողով ազատազարմ կուսակալաց. ցուցանել ձեզ զնախնական զգիր ըստ իւրաքանչիւրումն ըստ տանց ազատազարմն եկացն ձերոց զնախաստիճանն և զնախանիստ պատիւն. և դարձեալ մեծագոյնն ունել զքեղաշուք մեծարանս ևս քան

զևս։ Եւ եթէ ոչ կարէք ակն ի յայտ Արեացս գընդի ժողովոյ ցուցանել զգիր նախագահութեան՝ զպատիւ և զտուն, զհող և զջուր և զստացուածս ձեր Արեացս աշխարհի ազատ արանցս շնորհեցուք. և զձեզ ապաշնորհ և ունայնս արձակեցուք։ Եւ ստացուածք գիւղից և ապարանից ձերոց Արեացս ազատ արանցս ի ծառայութիւն լիցին։

Եւ նոյն ժամայն խորհուրդ արարեալ իշխանացն և իշխանապետացն Հայոց մեծաց՝ մատուցին առաջի թագաւորին զցանկալին ամենայն տառից՝ զհրաշաբանականն զտպաւորուածն, զգրաւորականն զգիրս ցանկալւոյն սրբոյն Գրիգորի որ Ագաթանգեղն կոչի։ Եւ հրամայեալ թագաւորին Պարսից ընթեռնուլ և թարգմանել ի պարսիկ գիր և ի լեզու. և իմացեալ եթէ սկիզբն յԱրտաշրէ առնու՝ յիւրոյին նախնւոյ, առաւելագոյն ևս զուարճացեալ բերկրեցաւ առաջի աշխարհաժողով Արեացըն գնդին։ Եւ առեալ զգիրս սրբոյն Գրիգորի՝ եդ ի վերայ աչաց իւրոց. և զուարճացեալ Պարսից թագաւորն՝ համբուրեր զգիրս սրբոյն Գրիգորի, և պէսպէս պարսկական լեզուաւ գգուանս խանդաղատանացն ներբողումն արարեալ. ասէ զի զիւրականն և զազգային զԱրտաշիր գոլ սկիզբն գրոյն գիտէր։ Եւ գտեալ ի նմա զգիր տանն և եօթն բարձի ազատացն Հայոց իշխանացն՝ սկսաւ ըստ այնմ գրոյ նախապատիւս յարդարել յար-

քունական տաճարին զնիստս իւրաքանչիւրոց ի սեղանս ուրախութեան: Իսկ տանուհչորրորդ բարձրն եհաս Անդոկայ՝ Սիւնեաց տեառն: Եւ նա հրպարտութեամբ խրոխտացեալ՝ ոչ ինչ ճաշակեաց յայնմ ուրախարար արքունական ընդունելութենէն:

Եւ զգացուցեալ սպասաւորացն արքունի թագաւորին զարիւնռշտութիւն խռովութեան երեսացն Անդոկայ՝ Սիւնեացն տեառն: Եւ Շապհոյ՝ Պարսից արքային, ոչ ինչ փոյթ զայնմանէ լինէր: Յայնմ ժամանակի փոյթ ընդ փոյթ զգացումն եղև ի դուռն արքունի թէ Խազիրք բազմամբոխ զընդօք հասին՝ արտաքս ելեալ ընդ դրունսն Զողայ յաշխարհս մեր: Եւ ժողով անթիւ արարեալ Շապհոյ՝ Պարսից արքայի, Ասորւոց, Խորասանի, Խորազմայ, ևս առաւել քաջացն Պարսից Ատրպատական նահանգին, Հայոց, Վրաց, Աղվանից, երկոտասան լեզուաց խուժադուժ ազգաց լերինն Կովկասու բարձրաբերձ կոհակացն սառնամանեաց: Եւ ել, զնաց անհամար բազմութեամբ պատերազմաւ ի դիմի հարկանիլ նոցա: Իսկ Անդոկայ հազար և եօթն հարիւր արամբք ընտրելովք ժիր և քաջ տաճիկ նժուգօք զինքն կողման տուեալ. և ապա զզօրսն ասա և անդ նկանախոր դաւաճանութեամբ թաքուցեալ շուրջ զարքայանիստ շահաստանաւն զՏիսբոնիւ, որ է յԻստահր դաւառի ի Պարսից աշխարհին: Եւ պակաս ինչ վաշ-

կօք արամբք ընտրելովք, քաջակորով հեծելովք ընդ դրունս արքայաբնակ քաղաքին մտեալ՝ հարցանէր յանգէտս և ի չքմեղս եղեալ «եթէ ես առ Շապուհ արքայ եկի»: Եւ քաղաքացիքն ըստ Պարսից խրատու հրահանգի տեղիս իջևանի նմա պատրաստեցին պէսպէս բաժակօք և ընդունելութեան ուճկօք՝ բազմախորտիկս համեղաճաշակս յարդարեալ մեծաշուք շքեղութեամբ պատուով: Եւ իբրև գիշեր լինէր՝ Անդոկ դաւաճանութեամբ ազդ արարեալ զօրուն իւրոյ. և իբրև առաւօտն զլոյսն մերկացաւ, և դրունք քաղաքին բացան. և յանգումանիս (անակնկալ) և յանպատրաստ զօրքն Անդոկայ ի ներքս դիմեցին ընդ դրունսն, և առին զգանձս ոսկւոյ և արծաթոյ անհամարս, և գոհարս ականց և մարգարտաց զշահաւորն բազմագին և ոսկեթել հանդերձից և թագաւորական ծիրանի, մարգարտայեռն պատմուճանաց ի տանէ թագաւորին և յամենայն տանց իշխանացն Պարսից առին. և որ ինչ կարէին բառնալ: Եւ բերեալ զանթիւ զաւարն զամենայն հաւաքեցին ի Բաղաբերդ: Եւ զամենայն գաւառացն զհամբարս զհացի, զխոտոյ, զյարդի և զբազմութիւն գինւոյ, իւղոյ և զղենլեաց և զմեղուի, զպէսպէս մրգոց համբարս անթիւս ժողովեցին ի Բաղաբերդ, և զկազմածս հեծելոց, զզէն, օճառս:

Եւ հրաման տուեալ Անդոկայ՝ Սիւնեաց տեառըն, ամենայն Սիւնեաց փախչել, և զտունս և

զհամբարանոցս համբարօք հանդերձ այրել։ Իսկ բազմութիւն ամենայն գաւառացն Սիւնեաց՝ ժողով արարեալ եկեղեցեացն պատուիրանաց, կարգաւորանաց և սրբոց խաչից ոսկւոյ և արծաթոյ անթիւ, և նշխարաց սրբոց պատուական և սուրբ մարտիրոսաց։ Եւ հաւաքեցին զամենայնն ի Շաղատայ եկեղեցին, քարկոփ գմբէթաւոր. ոմանք յորմս եկեղեցւոյն պատուհանս գործեալ երկաթով զքարկոփ զեկեղեցին՝ դնէին զիւրաքանչիւր սուրբ ի ներքս յորմս եկեղեցւոյն։ Եւ ոմանք ի ներքոյ եկեղեցւոյն ընդ բեմաւն գարանս գործեալ քարկոփս՝ լցին, և ոմանք՝ ի միջի եկեղեցւոյն։ Եւ ոմանք ի ներքոյ եկեղեցւոյն արկեղօք ի վայր իջեալ, և համբուրէին լալով և արտասուելով զիւրաքանչիւր զխաչս և զսուրբ վրկայիցն զնշխարս և զկտակարանս սուրբ աւետարանաց, մարգարէից և առաքելոց՝ յանձն արարեալ սրբոյ եկեղեցւոյն սուրբ Ստեփաննոսի։ Եւ զուռն օր խնդրուածոց ցայգապաշտօն արարեալ ի նմին եկեղեցւոջն ամենայն Սիւնեաց, և կունձամբ թաղեալ բազմութեանն, և հոդաբուր արարեալ ի վերայ սուրբ եկեղեցւոյն Շաղատայ որ է ի Ծղուկս գաւառի, փախուցեալ ցրուեցան ընդ ամենայն երկիր. և ոչ ոք իշխէր ասել զանուն Սիւնեաց։ Զի զքսան և զհինգ տարի ապալերկ աւերակ եկաց աշխարհն ցանկալին Սիւնեաց։ Եւ եկեալ Շապուհ՝ Պարսից արքայ, ի վճարմանէ պա-

տերագմին Ռազրաց. մեծաւ ցասմամբ հրամայէր ամենայն զօրաց իւրոց ելանել յաշխարհն Սիւնեաց, գերել զմարդ և զանասունն ի ծառայութիւն։ Եւ հասեալ յաշխարհն՝ ոչ ինչ գթին ամենևին, բայց զսրբութեանցն տեղիս, զսուրբ զեկեղեցիսն, զոր քանդեալ աւերէին և հրակէզ առնէին յամենայն աշխարհին Սիւնեաց։ Եւ հասեալ զօրն անաստուածն պարսկական ի Ծղուկս գաւառի Շաղատ գիւղաքաղաք. և անցեալ յեկեղեցաբլուրն, ընդ որով սուրբ եկեղեցին թադեայն էր, իմացեալ թէ ընդ բլրովն լինի ինչ ի ներքոյ չարիմաց և չարահնար ազգն Պարսից։ Եւ ոմանք ի պարսկական պայիկացն ի վեր յեկեղեցաբլուրն ելեալ, և յանկարծօրէն թնդիւն որոտման շարժուցին եղև, և յեկեղեցաբլրէն արտաքս ձգեալք վերելեակքն Պարսից սատակեցան։ Եւ Աթաշխոդա՝ ինքն պարսկական գնդովն իւրեանց ի փախուստ դառնային ի սաստիկ յահի եղանելով։ Եւ դարձեալ ժողով առեալ ամենայն բազմութեան գնդին Պարսից և Աբեաց աշխարհին որ է Խորասան Շապուհ Որմզդեան անց տալ պատերազմ ընդ Բաղաբերդի, և ոչ ինչ կարացեալ առնել ամրութեան տեղւոյն, զի վէմս գլեալ ի տեղւոյն զառ ի վայրն՝ զամենեսին առհասարակ սատակէին։ Եւ հրամայեալ Շապուհ արքայի բազում քան զնոյն կրկնապատիկ զօրք գալ ի Պարսից. և վերջապահս թողեալ՝

հրամայեաց սաստկացուցանել զպատերազմն ընդդէմ ամրոցին։

Եւ դարձեալ որպէս յառաջնումն, նոյնպէս յերկրորդումս պարսաքարիւք և վիմապլմամբք զանհուն բազմութիւնն պարսկական զօրուն զամենեսեան դիաթաւալ կացուցանէին։ Եւ դարձեալ երեքկին քան զնոյնն այլ զօր բովանդակեալ Շապուհ. և հրամայէ սաստկացուցանել զպատերազմն, և վերջապահս հրամայեաց թողուլ, և ասաց եթէ որ ի վերջ ոք դառնայ՝ սպանէք։ Եւ սոքա նոյնգունակ վիմօք և պարսիւք կոշկոճեալք՝ առ հասարակ սպառեցան. որպէս յառաջնումն և յերկրորդումն, նոյնպէս և յերրորդումս։ Եւ դարձեալ զայրագին լի ցասմամբ եղեալ Շապուհ՝ արքայն Պարսից, ընդ եղմունս իրացն՝ կամ եղև այլ զօրս անթիւս բովանդակել առ ի սաստիկ ևս տալ պատերազմն ընդ Բաղաբերդի։ Եւ նոյնժամայն իշխանքն մեծամեծ նախարարացն ի ծունր իջեալ առաջի արքային Պարսից Շապհոյ, աղաչեցին մի՛ ևս պատերազմել ընդ անպարտելի ամրոցին Բաղաբերդի. և մի՛ տալ կոտորել զԱրեացն գունդս։ Եւ ասացին շուրջ զամրոցաւն յաւեր դարձուցանել, նոյնպէս և զամենայն զիշխանութիւն գաւառացն Սիւնեաց։ Հրաման եւ յարքունուստ եթէ մարդ և անասուն ձեզ Արեաց աշխարհի զօրաց ի ծառայութիւն լիցին։ Իսկ Անդոկայ՝ Սիւնեաց տեառն, օր պարապորդ գտեալ. և ելաւ յամրոցէն Բա-

զաբերդի մեծաւ աւարաւն, անցանէ յաշխարհն Հոռոմոց առ մեծ ինքնակալն Թէոդոս՝ արքային Յունաց. և ի նմանէ պատիւ մեծագոյն գտեալ, այսինքն պատրկաց պատրիկ արարեալ զԱնդոկ, վախճանի անդէն յաշխարհին Հոռոմոց։

Ժ.

Վասն գալոյ Բաբկայ ի Հոռոմոց առ Շապուհ. եւ բաջութեանն զոր եցոյց. եւ վերստին տիրելոյն սեպհական հայրենեացս իւրոց Սիւնեաց աշխարհիս եւ շինութեան սուրբ. եւ նախագահ պատուելոյն ընդ Բագրատունիս՝ ի ցոյն ձառիցն Տեառն Պետրոսի. եւ այս ի վախճեռոդ ուրեռոդ ամի թագաւորութեանն Պարսից Շապհոյ Որմզդեան։

Իսկ ի վախճանելն պատրկաց պատրկին Անդոկայ ծնաց որբ և անմխիթար միայնակ որդին իւր Բաբիկ։ Եւ զի թէպէտ բազում և մեծամեծ ունէր պատիւ յաստուածապսակ և ի սուրբ թագաւորէն Թէոդոսէ մեծէ. այլ ոչ հանդուրժէր արտաքոյ բնիկ տէրութեան իւրոյ՝ փափագեալ սաստիկ կարօտութեամբ յաշխարհ իւր ըստ ասացելումն Դաւթայ թէ ի հողս իւրեանց գթասցին. և դարձեալ ըստ իմաստնոյն բանի, եթէ չիք ումեք քաղցրագոյն քան զծնողս. և ոչ քան զգաւառ իւր։ Եւ գնացեալ յաշխարհէն Հոռոմոց առ արքայն Պարսից առ Շապուհ, հասանէ ի դուռն արքունի, և ումեմն (գուցէ՝ անդ ուրեմն կամ ուրումն) ի զօրականաց արքային հեշտ պաշտակութեամբ

(ընկալեալ), և բազում արուեստիւնս պէսպէս յոլոմպիադան Պարսից ցուցեալ. և ոչ ումեք զինքն յայտնեալ եթէ ով և կամ ուստի ոք իցէ։ Եւ նոյն ժամային յայնժամ ելեալ Հոնն ի Հոնաց Հոնագուբ անուն՝ աւար առեալ զամենայն աշխարհս Պարսից, ասէ «զի է հեղումն արեան և վատնումն զօրաց բազմութեան. եկ, և մենամարտեսցուք ես և դու միով միակաւ»։

Եւ վառեալ Հոնին, որոյ Հոնագուբ անուն ճանաչէր յիսնանիւթեայ զրահիւն զանհնարին բարձր և զլայն հասակն, և երկաթագամ և բևեռապինդ սաղաւարտիւն զահեղակերպ գլուխն և զճակատն պղնձեայ և տախտակամած յօրինուածով ամրացուցանէր, և զանհեղեղ զեղարդան զբունն ի բարձրամայր փայտից, և զսուսերն բոցանշան և զարիւնահեղ յօրինէր ի յինքեան՝ ահաբեկեալ զամենայն զզօրս Մարաց և Պարսից և Արեաց աշխարհին, որպէս զեկոյց մեզ ի ներբողմանն իւրում երանելին Պետրոս՝ Սիւնեաց եպիսկոպոս, քերթողահօրն Մովսիսի աշակերտ։ Եւ դարձեալ զեկուցանեն արքայիցն արքային Պարսից վասն Բաբկայ թէ՝ գոյ այր մի ի դրան քումմ, որ գործ պատերազմիդ նովաւ վճարի։ Եւ արքայիցն արքայն կոչեցեալ զԲաբիկ. և թագաւորութեան պատուի վճիռ կնքեալ վարազգիր մատանեաւ. և ասէ «եթէ վրիժուց նախանձու քինուս այսորիկ յանգուցին արասցես՝ մեծամեծ խոստմանցս

ասացելոցս հասցես»: Եւ նորա ձեռն յանձին հարեալ առ արքային առ ի կատարել զհրամանն արքունի. և նոյնժամայն ապաւինեալ ի վերին օգնութիւն. և առեալ զիւրոյ զօրութեան զգէնն յօրինէր ինքեան: Եւ ճաճանճաւոր և մարգարտակապ զրահիւն արքունական զվայելուչն հասակ (զինէր), և վազրակերպեան սաղաւարտաւն՝ ըզդեղեցիկն գլուխ. և զսուսերն սեաւ պողովատիկ զսէգն միջով. և զվահանն զոսկիակապ և զականակապ ի յահեակ ի յուսն ընկեցեալ: Եւ զգեղարդն՝ զսուրն քաջամուխ ի յաջ բազուկն ընկեցեալ հաստատեալ աշտանակէր ի սեաւն քաջ երիվար:

Ախոյանանայր ընդդէմ թշնամւոյն, յարձակէին ի միմեանս. ի տուր և յառ գեղարդացն ճայթիւն որոտման ելանէր յառաւօտէ մինչև ցիւնն ժամն: Անդ գատապարտեալ լինէր անհնարին հսկայն Հոնագուր, յաղթողանայր քաջն Բաբիկ. աճապարէր ի սուրն միասայրի, որով անդէն սատակէր զմարդախոշոշ և զվիշապազօր գազանն:

Եւ դարձեալ, որպէս վերագոյնն ասացաք, յերանելւոյն Պետրոսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, ի ներբողմանէն առաք, զոր արարն ի վեհն Բաբիկ, զոր և Պարսիկք յիւրեանց լեզուն լաւ կոչէին գնա: Եւ յետ այսր եղմանց սխրալեաց հրաշուքեանց կոչեաց զԲաբիկն Շապուհ՝ արքայն Պարսից, մեծաւ ցնծալից ուրախութեամբ առ ի կատարել առ նա զխոստացեալն զմեծ խոստմունս:

Եւ նորա բան խնդրեալ յարքայից արքայէն առ ի բառնալ զսանդն լի մոխրով հնոցի զոր ի դարապասին եդեալ կոփելով վերակոփմամբ յիշելով ի վերայ մոխրոյն ասէին «եթէ Սիւնեաց տէրանցն նախագահութիւն տէրութեանն ընդ այս մոխիրս ի վայր լիցի, և որպիսութիւն նոցին խորհրդոց և կենաց»: Եւ արքայիցն արքայի մեծաւ զարմացմամբ եղեալ՝ հրամայեաց բառնալ զսանդն ի տեղւոջէն յայնմանէ: Եւ խընդրեալ Բաբկայ յարքայիցն արքայէ զի միայն զսեպհական աշխարհն իւր՝ զընիկն, զնախնական տէրութիւնն իւր ազգին իւնա դարձուսցէ: Եւ ընդ որհեալ նմա արքայիցն արքայի Շապհոյ՝ առաքէ զնա մեծաւ պատուով յաշխարհն իւր Սիւնեաց. և աւանդէ նմա նախագահ լինել ընդ Բագրատունւոյ և ընդ Մամիկոնէի համապատիւ եղանիլ:

Եւ անցեալ ընդ Երասխ գետ՝ շինէ գեղաքաղաք մի՝ կոչելով զանուն տեղւոյն Նախկորզան, որ թարգմանի նախ զնա կորզեալ առ յինքն յիւր հայրենեացն: Եւ դարձեալ, որպէս վերագոյնն ասացաք, եթէ ի վաթսներորդ ութերորդ յամի Շապհոյ՝ Պարսից արքայի՝ որդւոյն Որմզդի, և յերկրորդ ամին Խոսրովու՝ Հայոց թագաւորի, Բաբիկ Սիւնեաց տէր լինի. և ի նմանէ առնու զտէրութիւն: Եւ Հոռոմի թուականն լինի 124. զոր ասոյգ պիտացաք. և 138 ամաւ յառաջ քան զթուականն Հայոց:

ԺԱ.

Ցայցնուրիւն եկեղեցւոյն Տաղաւայ. եւ գիւս այնչափ արբոցն որ ի նմա. եւ հաւատալն Գոռայ եւ Գազանայ եւ այլ Պարսից. եւ սմանչելիքն Տիրոն երիցուն։

Եւ բաղձալի ի կենցաղս ոչ այլ ինչ բայց միայն սեպհականութեան ժառանգութիւն առն, յորում ծնեալ և սնեալ լինի, և վայելել խորհիցի. որպէս զսահինս մօր և զգուխ հօր, այնպէս քաղցր թուեցեալ լինի ի միտս ժառանգորդին։ Վասն որոյ միշտ կարօտի շրջիլ տեսանել, զբօսնուլ, խնդամտիլ ի վերայ նորա, որպէս և գովելի և քաջուղէշ մանուկս այս Բաբիկ, որ յետ տիրելոյն ընիկ ժառանգութեան իւրոյ՝ յորս ելեալ խնդալով, խաղալով ի վերայ սովորական թաւերացն և խնջոյից խրախաբանացն ի լերինս որսասուն և բազմաջոլիր վայրացն Սիւնեաց, նաև ի տես որպիսութեան գաւառացն յառաջին ամին իւրոյ տէրութեանն։ Որ և գրեա զայս ոչ աշխարհագրօս ինչ դատարկութեան գործ. այլ ի Հոգւոյն շարժեալ։ Եւ մինչ յայս իսկ յառաջեալ՝ տեսանէր ապա ողորմելի տեսակաւ ըզցանկալի աշխարհս այս ապալերկ ի մարդոյ և յանասնոյ, և հիմնախիլ արարեալ զգեղեցկայարմար աւանս շինից, գիւղից և ագարակաց, վատնեալ զամենայնն և յաւեր դարձուցեալ։

Իսկ ի տեսանելն զայս ողբալից և աշխարելի տեսակս, ապա անցեալ ի գաւառն Ծղկաց՝ հա-

սանէ յաւանն ի շինանիսան Շաղատայ. և ելանէ յարևելից կողմանէ ի հանդիպակաց բլուր մի: Եւ նոյնժամայն ի բլրոյն ելանէ եղջերու մի, և խուճապեալ ի փախուստ դառնայր էրէն դինքն եկեղեցաբլրոյն եղեալ: Եւ Բաբկայ տաճիկ երիվարաւն դհետ մտեալ և ելեալ զկնի եղջերուին յեկեղեցաբլուրն: Եւ անդ երիվարին ոտքն խրեցան ի բլրին. և եղջերուն ի բլրին անհետացեալ եղև: Եւ Բաբկայ՝ Սիւնեաց տեառն, ի վայր իջեալ յերիվարէն ի վերայ եկեղեցաբլրին՝ հրամայեաց բազմութեանն քարշել զխրեալ ոտն երիվարին ի վերայ բլրոյն: Եւ իբրև քարշեցին ուժգնակի բազմութիւն գնդին Բաբկայ՝ Սիւնեաց տեառն: Եւ դարձեալ սխրալի զարմանք յահի կալաւ զամենայն բազմութիւնն. զի ընդ ոտնատեղիս երիվարին անուշահոտութիւն բուրման զանազան գրեթէ զամենայն զփորակ գաւառին ելից: Եւ հրամայեաց Բաբիկ՝ Սիւնեաց տէր, բազմութեանն պեղել զհող բլրին. և տեսին ի ներքոյ եկեղեցի քարկոփ չքնաղաշէն որ ոչ ուրեք էր այնպիսի հրաշաքարտար շինուած, գմբէթին և խորանքն չորեքկուսի, մի յարկ, մի տանիք և ոչ ուրոյն ուրոյն որպէս և այլ գաղատոսաշէն եկեղեցիք:

Եւ բացեալ զդրունս սրբոյ եկեղեցւոյն Նախավկային Ստեփաննոսի. և տեսին բազմահոյլս բազում խաչս ոսկիս և արծաթիս բազում գրեանս պատուիրանաց և այլ սպասս ամենայն ե-

կեղեցեացն Սիւնեաց իւրաքանչիւր գրով գիւղաքաղաքացն։ Եւ նշխարք սուրբ և պատուական մարտիրոսացն անհամար, անթիւ որ յորմս եկեղեցւոյն ճնաց։ Եւ յայտնութիւն և գիւտ սրբոյ եկեղեցւոյն Շաղատայ (եղև) ի հոռի ամսոյ որ օր մի էր ամսոյն։ Յայնմ ժամանակի յամենայն տարւոջ ժողով արարեալ Սիւնեաց տեառն հանդերձ եպիսկոպոսիւն՝ զօր երևման սուրբ եկեղեցւոյն տնանախմբէին իբրև զմայր եկեղեցեաց աշխարհին ամենայն Սիւնեաց։ Եւ դարձեալ յայնմ աւուր աղօթայարդարքն ցայգապաշտամամբ, որ ինչ և խնդրուածս առնէին յԱստուծոյ, նոյնժամայն ներկատարումն հրաշիցն եղանիւր։ Եւ դարձեալ զայն տեսեալ զերևումն հրաշիցն, որ եղեն ի սուրբ եկեղեցւոյն սրբոյն Ստեփաննոսի, զի բազում բժշկութիւնք պէս պէս ցաւոց լինէին, որք ի ժամուն յայնմիկ հանդիպեցան, հաւատացին և մկրտեցան Փոր և Գազանն՝ երկու եղբարք, հանդերձ պարսկական բազմութեամբ գընդիւն իւրեանց, որ եկեալ էին ի Պարսից զհետ Բաբկայ՝ Սիւնեաց տեառն։

Եւ դարձեալ վիճակ արկեալ Բաբկայ՝ Սիւնեաց տեառն, Փորայ և Գազանայ. Փորայ՝ աւագ եղբօրն, հասանէ աւանն Ծոտայ և քաջարի արիացելոյն քաջամարտիկն Գազանայ հասանէ վիճակաւ գիւղաքաղաքն Շաղատայ հանդերձ սուրբ եկեղեցեաւն, որ յայնմ ժամանակի մայր եկե-

ղեցեաց անուանէին։ Եւ Բաբիկ՝ Սիւնեաց տէր, վանական կացոյց և սպասաւոր ընծաեալն Տիրոտ՝ հաւատարիմ, սուրբ և ներանձնաւոր քահանայ, որ յայնմ ժամանակի ոչ ոք գոյր նման նմա վարուք առաքինութեան, Եւ դարձեալ աքանչելագործ հաւատովք, զոր սուղ ինչ յիշեցուք, զի յորժամ գայլ յայծեաց ուլ, կամ գառն յաւիշատակէր. և ձայնեալ ոմանց առ նա, և նորա արարեալ սուրբ աղօթիւ իւրով զնշան խաչին ընդդէմ գազանին, և ասէր «Քրիստոսիւ ասեմ չիշխես տանել». և գազանի գայլուն ի վայր եդեալ զուլն կամ զգառնն՝ զնայր հանդարտութեամբ։ Եւ դարձեալ թագք մի Շաղատայ (էր) ի լերինն ծովուն յեզր ծովակի միոջ. և երանելին Տիրոտ նստէր ի միջի ոմանց. և գորտքն ի ծովուն ըստ սովորութեան իւրեանց բարբառոյ ընուին յաւէժ աղաղակելով. և երանելին Տիրոտ զչարեալ նոցա ասէ «ոհ խլացէք ձեր անհեդեդ բարբառովդ». և զբազում աւուրս կարկամեցան գորտքն, և ոչ կարացին բարբառել։ Եւ եղև ի միում յաւուրցն սուրբն և երանելին Տիրոտ եհաս ի նոյն տեղի. և ընակիչք տեղւոյն զգացուցին վասն գորտոցն. և նա ասէ «հրամայեալ եմ նոցա լուծանիլ ի նոյն անուտի բարբառն վերաձայնել»։ Եւ նոյնժամայն գորտքն զաղաղակ կալեալ իբրև զառաջինն յաւէժաբար մեծաձայնէին բարբառել։

Եւ դարձեալ՝ ի միում յաւուրց ընդ երե-

կոյսն եռեաս որայն լուցեալ հրով, ձգեաց զգաւազանն և ընկեաց ի մէջ որայի հրոյն։ Եւ ընդառաւօտն յորժամ զարժանաւոր զաղօթսն ի յանկուճն կատարելութեանն հասեալ՝ հրամայեաց բերել զգաւազանն իւր. և մարդիկն զաղաղակ բարձին և ասեն «որայն սաստիկ այրեալ է. և արդ գաւազանին ոչ իւր խնդիր առնես քաղեակ (կամ քաջեակ) տէր՝». և նորա սաստեալ նոցա ասաց բերել. և երթեալ մարդկանն՝ տեսին զգաւազանն սրբոյն Տիրոտի անվնաս ծնալով ի մէջ հրոյն շնորհօքն Աստուծոյ. և բերեալ մեծաւ զարմացմամբ զգաւազանն կարմրագունեալ իբրև գհուր առ երանելին Տիրոտ։ Եւ առեալ առ ինքն զգաւազանն և նայեցեալ ի գոյն գաւազանին և ասէ «այսպէս արիւնագոյն կսկծելով իբրև հրացեալ այրի սիրտ որային տեառն։ Եւ դարձեալ յաւիտենից անողորմ, անշէջ հրովն դատելոց են արարողք արկածից վնասուն այնորիկ։ Եւ երանելւոյն Տիրոտի էր ոմն (մշակ), և ժնդակ և չարաչար վնաս ցործեաց. և սուրբն զչարեալ ցասմամբ ասէ «գնա, չտամ զվարձն քո». և նորա գաղտնի խորամանկութեամբ փայտատ մի առեալ գնաց. և եհաս ի խոռս Անձնատուս, որ է յարևմտից կոյս եկեղեցւոյն իբրև ձայնընկէց մի. պարաւանդեցան ոտքն. և ոչ կարաց գնալ։ Եւ առ սուրբն Տիրոտ դարձեալ զղջախոհ մեղայիւ՝ եդ գերկաթն առաջի նորա. և դալձեալ հեղն և բա-

բեպաշան, սուրբն և ցանկալին Տիրոտ եւ զվարձքն, օրհնեաց և արձակեաց յիւրմէ։

Եւ դարձեալ՝ գետոյ միոյ (որ է գետն Որոտնայ) յայնմ կողմանէ էր ջրաղացք մի. և երանելին Տիրոտ ի գետավարարան հանապազ զնշան խաչին արարեալ՝ անցանէր ընդ գետն աներկեղաբար։ Եւ եղև ի միում յաւուրց եւս ցանկալի և գեղեցկատեսիլ քոռակ էշ մի, և ասաց ի մտի իւրում երթայց, անցից իշովն այնուհիկ ընդ գետն. և ելեալ յէշն և մտեալ ի գետն. և ի միջի գետոյն դարձեալ էշն առ նա՝ և եցոյց փայլատակմամբք զերկաթի զպայտիսն (նալ) իւր և ասէ «քո այսպէս իշոյ պայտիս տեսեալ է». և նորա հանեալ ի թափուցն զփոքրիկ զդանակիկն իւր՝ եցոյց և ասէ «և քո այսպէս իշոյ մարակ տեսեալ է. զիս ի գետէս բաց անցո եթէ ոչ՝ հարկանեմ և վիրաւորեմ զքեզ». և անցուցեալ զսուրբն ընդ գետն՝ աներևոյթ եղև չարն սատանայ։ Եւ այլ բազում ինչ նշանագործութիւնք, որ յերանելոյն լինէին, և պէսպէս ցաւոց ևկանաց անդորրութիւնք. և այսահարաց նորին աղօթիւք բժշկութիւնք։ Եւ վախճանեալ սրբոյն՝ եղաւ ի դիր յարևելից կողմանէ սրբոյ եկեղեցւոյն. որ և բազում այցելութիւնք լինէին ի սուրբ գերեզմանէ նորա հիւանդաց։ Եւ դարձեալ՝ կանանց ոչ հրամայեցաւ ի նմանէ ի սուրբ եկեղեցին մտանել. և այսու կարգաւորութեամբ կրօնիւք եկաց

(ուխտ) սուրբ եկեղեցւոյն Շաղատայ մինչև յամս 300. և ոչ դարձեալ կանամբի քահանայի սպասաւորութիւն առնել սրբութեան տեղւոյն:

ԺԲ

Վարձեալ ի նոյն ձառից Տեառն Պետրոսի. յետ բազում ժամանակաց զոյցի վասն գիւտի նշխարաց սրբոց որ ի Շաղատայ եկեղեցին. եւ որ յաւուրս Յովակիմայ եպիսկոպոսի վիճմուծի. եւ սակս նախադասութեան տանուտէրաց եւ գիւղից Սիւնեաց, եւ թէ ո՞ որ նախապատիւ եւ գահակալ սահմանեցաւ:

Արդ յետ բազում ժամանակաց ինչ Յովհաննէս՝ կուսակրօն քահանայ և սպասաւոր սուրբ եկեղեցւոյն, առանձինն աղօթս մատուցանէր ի նմին սուրբ եկեղեցւոջն ի գիշերին: Եւ յանկարծակի շարժումն եղև անուշահոտ բուրմամբ: Եւ յարևելից կուսէ խորանին յեկեղեցւոջն աղիւսաձև քար վազեաց յորմոյն. և գյատակն եկեղեցւոյն էառ ի վերայ բեմին: Եւ քահանային ելեալ ի բեմն մեծաւ երկիւղիւ՝ տեսանէր պատուհան մի բացեալ. և ի ներքս բազում նշխարք սրբոց գրով իւրաքանչիւր անուանք եղեալ ի կողոբալի անուշահոտ ցանկալի բուրմամբ. և փոյթ ընդ փոյթ ընթացեալ պատմեաց աստուածապահ տեառն Յոսրովայ, որ էր ի զարմից Գագանայ: Եւ եկեալ և տեսեալ զերևեալ սուրբսն մեծ՝ գոհաբանելով աղօթիւք գոհանայր զԱստուծոյ: Եւ հրամայեաց

նոյն քարիւն աղիւսաքրտարով ծածկել զտեղի հանգստարանի սրբոցն։ Եւ դարձեալ՝ երանելւոյն տեառն Բաբկայ՝ Սիւնեաց տեառն, հրամայեալ զի նախաթոռ լինիցին յամենայն Սիւնիս սպասաւոր քահանայք և հաւատացեալ ժողովրդականք պաշտօնեայք սրբոյ եկեղեցւոյն Շաղատայ իբրև մայր եկեղեցեաց և մայրաքաղաք ամենայն աշխարհին Սիւնեաց։ Եւ դարձեալ՝ յաստուածապատիւ և ի հոգևոր Տեառն Յովակիմայ՝ Սիւնեաց եպիսկոպոսի, յիշատակի պատարագին ներհակ հակառակութիւն սաստիկ եղև վասն նախագահ նախադասութեան նախապատիւ լինելոյ դիւղաքաղաք աւանացն թէ ո՛վ ոք է լինելոց։

Եւ Յոսրով Շաղատայ ի զարմից Գագանին, զտպաւորումն գրաւորական տառիցս առաջի եդեալ աստուածապահ և բնիկ տեառն Ատրներսեհի՝ Սիւնեաց տեառն և Հայոց իշխանի։ Եւ հրամայեցաւ Շաղատնեցեաց իբրև մայրաքաղաքացեաց յառաջանիստ լինել վեհագոյն պատուով։ Նոյնպէս և զվարդապետութեանն Սիւնեաց զնախագահութեանն զնիստ հրամայեցին Գէորգեայ՝ Շաղատայ վարդապետի։ Ընդ որ յոյժ զչարեալ Փանոսի ոյծեցւոյ՝ Սիօնի վանականի, ակամայ գնաց. և ոչ ինչ ումեք ի ժողովոյն փոյթ զայնմանէ լինէր։ Եւ ապա դարձեալ ընդ Ոյծ և ընդ Աղխիտու սաստիկ հակառակութիւն եղև։ Իսկ հնա-

դիտակք Աղխիտուացեաց զՈյծեցեացն հաստատեցին ի վրաց աշխարհէն լինել պանդուխտ և նժդեհ գոլ ամենայն Սիւնեաց։ Եւ դարձեալ՝ Շաքուոյ և Աղխիտուայ հրամայեցաւ զկնի Շաղատայ զնախադասութեան ունել զվեհագոյնն զերկրորդականն զպատիւ։ Եւ զքառորդ նախադասութիւնըն Աւան գիւղաքաղաքին Մրենոյ ընկալեալ վասն ազատազարմ լինել գոլոյ հնոյն։ Եւ ապա զհինգերորդ զգահն հրամայեցաւ Ոյծեցեաց ունել։ Եւ ապա յայնմհետէ իւրաքանչիւր ոք իւրեանց քահանայիւք։ Եւ զայս դարձեալ սուղ ինչ յիշելով ապառնեացդ սակս վերահասու լինելոյ յայտնեցաք զի մի՛ նեհակ հակառակութիւն ինչ լինիցի յետնոցն։

Գ.Ժ.

Դարձեալ վասն իշխանացն որ զկնի Բաբկայ։

Սօսաստրան և տիրասուն պերճապաճոյճն և գեղանին այն Բաբիկ՝ որդի Անդոկայ, գործով գովելի և հաւատով գերազանց բնաւից, յետ առնելոյ զսեպհական տէրութիւնն Սիւնեաց. և շինելոյ զամենայն աւերեալ գաւառսն կրկնապատիկ քան զառաջինսն, ստանայ ուսար մի վասակ անուն. և ի զարգանալ հասակին ընծայեցուցանէ զնա ի դուռն արքունի վասն՝ Պարսից արքայի։ Զի յետ 72 ամի թագաւորութեանն Շապհոյ՝ վախճանի սա. և առնու զթագաւորութիւն

որդի նորա Արտաշիր ամս 3. ապա կրման որ է Վռամն՝ ամս 11: Ոչ է սա նա որ պատերազմեցաւ ընդ Հայոց: Ապա Յազկերտ՝ ամս 11: Իսկ Բաբիկ առեալ զտէրութիւնն Սիւնեաց ի վաթսներորդ ութերորդ ամի Շապհոյ՝ Պարսից արքայի, և վարեալ զիշխանութիւնն ամս 21, փոխի յաստեացս յանփոփոխ իշխանութիւնն և յանդրաւոր ուրախութիւնն յերկինս: Իսկ Սամ Գնթունի՝ սենեկապետն նորին, գնայ ի դուռն արքայի. և ծանուցանէ զբօթ գուժին. սակս որոյ արտմեալ Վռամայ և աղէկիզեալ ի վերայ մանկանն որ ի դրանն կայր, խորհի ընդ սենեկապետի իւրում տալ զիշխանութիւնն ի ձեռս Վասակայ. և առաքել գնա յաշխարհն իւր: Եւ զայս իմացեալ նորա՝ գայ առ Վասակ և աւետիս մատուցանէ նմա զխորհուրդ արքային: Իսկ նա չար և չոր մտօք հոծ լի գոլով, ոչ եթէ աւետչեայ ինչ շնորհէ նմա. այլ ցուրտ և ապաշնորհ պատասխանի առարեալ նմա, ասէ բայց եթէ զիս առնէ տէր մինչ բնական իմ հարցն է ժառանգութիւն Սիւնեաց: Եւ երթեալ սենեկապետին ծանոյց զայս արքայի: Իսկ Վռամայ խոժոռեալ ընդ բանսն Վասակայ. և հրամայեալ զսենեկապետն Բաբկայ ի ներքըս ածել զՍամ Գնթունի. և կացոյց զնա տէր Սիւնեաց: Սա կալեալ զտէրութիւնն ամ մի՝ վախճանեաց զմոլեխինդն արբուցեալ դաւաճանութեամբ: Իսկ յետ սորա վաղինակ ի բնիկ ցեղէ

իշխանացն Սիւնի՝ ամս 9։ եւ ապա յետ սորա Վասակ՝ որդի Բաբկայ, առնու ի վռամ-Շապհոյ գտէրութիւն իւր, և վարէ ամս 39։ Այլ զգրոյցք և զգործ զոր ինչ եղեն առ սոքօք, ոչ է պարտ զանց առնել. այլ ըստ պատշաճին կարգեացուք զպիտանին։

ԺԴ.

Պարգ իշխանացն Սիւնեաց, որ ի Բաբկայ մինչեւ ցՓռոսդոյ։

Այլ զի պատշաճ համարեցաք ասա նախ դնել զկարգ իշխանացն, և ապա անդրէն դառնալով վերստին ցուցանել զգործս և զբանս որ յիւրաքանչիւր ժամանակս եղեն, վասն որոյ և ճառելի է։ Արդ՝ Բաբիկ առնու գտէրութիւնն Սիւնեաց ի Շապհոյ. և կեցեալ ամս 21, վախճանի։ Սենեկապետ նորին Սամ Փնթուռնի՝ մի ամ։ Վաղինակ՝ 9. Վասակ՝ 39 ամ. Վարազ-Վաղան՝ փեսայացեալն Վասակայ՝ 25։ Ընդ մէջ 5 (ամ)։ Գդեհոն՝ 17։ Այս երեքս ելին յաստուածադրոշմ ուխտէ եկեղեցւոյ՝ յիմարեալք չարութեամբ և պատրեալք ի հրապաշտիցն։ Վռամ՝ 7 ամ։ Ընդ մէջ՝ 1։ Միւս Վասակ՝ 11 ամ։ Աչիր՝ 9 ամ։ Ընդ մէջ՝ 3։ Բաբգէն՝ 10 ամ։ Ընդ մէջ՝ 11 ամ. զոր ի Շապհոյ միւս կալաւ Յովհան 18 ամ։ Վասդուղ՝ մի ամ։ Գրիգոր՝ 10 ամ։ Միհր-Արտաշիր 23 ամ։ Ընդ մէջ՝ 3։ Պիրան՝ 1։ Ընդ մէջ՝ 2։ Սարգէս՝ 2 ամ։ Ընդ մէջ՝

3, Սահակ 10 ամ: Ընդ մէջ՝ 13. զոր Պարսիկք կա-
լան: Գրիգոր որ վասն առաւելութեան և առոյգ
և ուժեղ հասակին քաջաց նուիրակ կոչեցաւ,
16 ամ: Հրահատ՝ 16 ամ. Յովհան՝ 27 ամ. Բուր-
դոյ՝ 18 ամ:

Ահա այսոքիկ ի Բաբկայ հետէ մինչև ցայժմ
կալան զիշխանութիւնն որդի ի հօրէ պայազատե-
լով, թուով 20՝ ամս 332: Ասէ զԳրիգորոյն որ
քաջաց նուիրակ կոչեցաւ, ցուցից քեզ զբան,
զի գիտասցես զսոսա ոչ միայն Հայկազունիս.
այլ և խառնեալ ի թագաւորական ցեղն Պահլաւ-
կաց և Արշակունեաց. և յայսմհետէ իմասցիս
զսոսա ճետ Արշակունի և զաւակ Պահլաւունի. և
այնքան բարձր և փառաւոր դոլ. զի հաւասար
էին խնամութեամբ ընդ Պարսից թագաւորու-
թեանն և ընդ Հայոց: Արդ՝ եղև օր մի յաւուրց.
և Խոսրով՝ արքայ Պարսից, որդի Որմզդայ, զոր
ոմանք շահնշահ անուանեն, այսինքն թագաւո-
րաց թագաւոր, նստոյ դարապաս արարեալ ազա-
տաժողով Արեաց գնդին. և կամեցաւ ի ճաշս
խրախանալ: Իսկ Թռչնաքաշտ որ մեծամեծ են
և սևաթոյր, սլացաւ ի վերուստ ի վայր, և եկն
ի սեղան թագաւորին, և կամեցաւ ինչ յափշտա-
կել ի սեղանոյն: Եւ թագաւորն խրոխտացեալ լի
եղև ցասմամբ, որպէս թէ գուշակումն ինչ հա-
մարելով: Եւ յայն ամենայն բազմութենէն ոչ
ոք շարժեցաւ զկնի նորա: Ապա Գրիգոր առեալ

գնասատաբեսա աղեղն իւր. և լայնալիճ գրկօք կո-
րովակի փրթուցեալ գնեան ի վեր յօդն յօյժ բարձ-
րագոյն՝ ընկէց գթուչունն ի վայր առաջի թա-
գաւորին առ սեղանոյն: Իսկ թագաւորն լցեալ
խնդութեամբ՝ կոչէ յառաջ զԳրիգոր. և հրամայէ
նմա զծանրագոյնն խնդրել խնդիր. և Գրիգոր՝
Սիւնեաց տէր, ասէ տէր իմ արքայ՝ մինչ հրա-
մայեցեր խնդրել՝ տացի գուսար արքայի ինձ ի
կնութիւն: Եւ առ ժամայն կատարեցաւ խնդիրն
բազում և մեծ պարգեօք և բարձրագոյն փառօք.
և խնդացին ամենայն տունն Սիսականու:

ԺԵ

**Վասն գալոյ սուրբ վարդապետին Մեսրոբայ ի Սիւնիք եւ
ի Գողթն. եւ երջելոյ ընդ գաւառսն. եւ զղօղեալ կռա-
պաշտութիւնսն ի տեղիս տեղիս արթելոյ օգնութեամբ վա-
ղինակայ իշխանին եւ շաբիրայի:**

Յուզից և զկրկին լուսաւորութիւն այսմ աշ-
խարհի որ ի ձեռն սուրբ և յոգներանեան առնն
Մաշտոցի Մեսրոբ կոչեցելոյ: Ի նուազել թագա-
ւորութեանն Հայոց համարձակեցաւ ամենայն ոք
ըստ իւր բարուց ընթանալ, որպէս և աստ. զի
աղանդն հեթանոսական դեռ ևս զօղեալ կայր
ուրեք ուրեք ի գաւառն Սիսական և ի Գողթն,
այժմ համարձակեալ երևեցուցին: Իսկ երանելին
Մեսրոբ էր դպիր դիւանի դրանն արքունի. որ
և կամեցաւ թաքուցանել զինքն ի խռովարար

կենցաղոյս առեալ զձև միայնակեցութեան՝ փութայր ի նաւահանգիստն։ Եւ եկեալ ի Սիսական կողմն՝ հաճեցաւ բնակիլ ի գեղեցիկ գաւառն Գողթան, և խստամբեր ճգնութեամբ բազում աւուրս առաքինացեալ, ծանեաւ զկրկին երևեալ աղանդն կռապաշտութեան. և սկսեալ ի քարոզութիւն՝ մեծամեծ և անագին նշանօք ոչ ինչ ընդհատ քան զբերոյն Գրիգորի, ի հաւատս ածել զաշխարհս Սիսական հրամանաւ և օգնութեամբ բարեպաշտ իշխանին Սիւնեաց Վաղինակայ, սրբել զկռապաշտութիւնն և խորտակել զկուռսն թաքուցեալ։ Նմանապէս և զԳողթն սրբեալ ի ձեռն իշխանին իւրեանց Շաբիթայի։

Եւ այնքան հալածեաց զբազմութիւն դիւացն, որք մարմնաւոր տեսլեամբ իբր զծուխ ծառացեալ՝ գունդ գունդ բարձրացեալ վայիւ և աղաղակաւ գնային վախստեայ. և անցեալ ընդ Երասխ՝ անկանէին ի կողմն Մարաց, Իսկ սուրբ այրն Աստուծոյ՝ թողեալ անդ յաշխարհին Սիւնեաց թարգման և ուսուցիչ յընտրեալ աշակերտաց իւրոց զԲենիամին և զԱնանիա, որ և ձեռնադրեցաւ յեռոյ յեպիսկոպոսութիւն աշխարհին զի մի վերստին (անկցի ի մոլորութիւն). և ինքն գնայ առ. սուրբն Սահակ։

ԺԲ.

Վասն նորոգ եպիսկոպոսութեան Սիւնեաց Տեառն Սահակայ. եւ երթն յԱղվանս. եւ պատուիրն յՆավնդէն քաղաւորէ նոցուն։

Եկն, եհաս մեզ ճառել զգանկալի և զլաւագոյն իրաց, այսինքն զնոր նորոգութենէ խաւարեալ և խոպանացեալ եկեղեցւոյս մերոյ և աթոռոյս մետրապօլտութեանս Սիւնեաց։ Քանզի ի վաղուց հետէ ոչ գոյր տեսուչ և ուսուցիչ այսմ աշխարհի, յաւերմանէն Անդոկայ մինչև ցտէրութիւնն Վասակայ իշխանին։ Իսկ ի հայրապետութեան մեծին Սահակայ. մինչ կրկին նորոգեր զՀայաստանեայս, և յամենայն տեղիս շըրջէր և ուղղէր և ընոյր զկարգս եկեղեցւոյ. ձեռնադրեաց և զԱնանիա աշակերտ Մեսրոբայ, թարգմանիչ և լի ամենայն առաքինութեամբ յեպիսկոպոսութիւն Սիւնեաց, նստել ի գահ մետրապօլտութեան և կոչիլ նախաթոռ Հայոց պատրիարքին։ Որ և եկեալ նորոգեաց զերկոտասան գաւառս մեծավիճակ գաւազանի իւրոյ։

Իսկ ի բանալ դպրութեանս Հայոց վերին պարգևօքն ի ձեռն սրբոցն Սահակայ և Մեսրոբայ՝ եղ դպրատունս յաշխարհին Սիւնեաց, և կարգեաց ի վերայ զաշակերտակիցն իւր զԲենիամին։ Եւ փութապէս զամենեսեան ուսոյց հայերէն դպրութեամբ. և արար գիտող աստուածային կտա-

կարանաց։ Եւ յետ դայս յարդարելոյ առեալ ընդ ինքեան զԲենիամին՝ գնաց յաշխարհն Աղվանից առ թագաւորն Եսվաղէն ի խնդրոյ Մեսրոբայ. և արարին ի միասին գիր ազգին այնմ ըստ խեցբեկագոյն լեզուի նոցա։ Եւ զմնացեալ կռապաշտութիւնն սրբեաց, և աստուածային վարդապետութեամբն լուսաւորեաց զաշխարհն կրկին անգամ. և եթող զԲենիամին անդ ի վերայ թարգմանութեան և դպրոցաց մանկաւոյն. և ինքն Անանիա կամեցաւ անդրէն դառնալ։

Իսկ թագաւորն Եսվաղէն Աղվանից, որ էր առաջին Շապհոյ Արտաշրեան՝ Պարսից թագաւորի, թոռն քուէր, պատիւ արարեալ նմա, եբախտահատոյց լինի, և պարգեւէ զիւր նշանակն թագաւորական ոսկեհատուն վառիւ և ի գլուխն գունդ ոսկի. և ի վերայ խաչ պատուական։ Եւ հրամայէ զայն հանապազ շրջեցուցանել ընդ իւրեանս եպիսկոպոսացն Սիւնեաց ի յիշատակ թագաւորացն Աղվանից։ Ահա դայս ցուցանէ մեզ առաջ ինչ Մովսէս քերթողահայրն, և զբովանդակն ճշգրիտ՝ աշակերտ նորին Պետրոս՝ եպիսկոպոս Սիւնեաց։ Այս Անանիա, ի հասանել նեղութեանն ի Յազկերտէ ի վերայ քահանայից և իշխանացն Հայոց, էր ընդ նոսա։ Սա յետոյ գընաց ի ժողովն Շահապիվանի, ուր էր Յովհան Մանդակունին. և արարին կանոնս եկեղեցւոյ։ Կացեալ սա յաթոռ մետրապօլտութեան Սիւնեաց

որ պռօսօ ֆրօնտէս Հայոց մեծաց, ամս 22. և կատարի ի Քրիստոս:

ԺԲ.

Գործ ամառի եւ վաս իշխանին Սիւնեաց Վասակայ. եւ պատճառ ցաւին կորստեան:

Աւաղ բանիս և եղերվկ է սկսմանս, զի ոչ խնդամտաբար ինչ կամիմ ճառել վէպս, այլ լի երկամբք և սգով, յոգնահոծ և թանձրատարափ մթացեալ ողբովք. քանզի բարձաւ պսակն ոճոյ մերոյ, և պակասեաց թագաւորութիւնն ի ցեղէն Արշակունեաց, և քահանայապետութիւնն ի ցեղէն սրբոյն Գրիգորի. և քայքայեալ խանգարեցաւ ամենայն կարգ իշխանաւորութեանց. ի փախուստ դարձաւ բարին. և տեղի ետ խաղաղութիւնն. եկն խռովութիւնն. և թագաւորեաց չարն:

Յետ բառնալոյ թագաւորութեանն Հայոց որ էր վերջին Արտաշէս, եկաց մարզպան ի տեղի Արտաշիսի վեհ Միհր-Շապուհ ամս 13: Իսկ սրբոյն Սահակայ խնդրեալ ի Վռամ-Շապհոյ՝ կացուցանէ զթոռն իւր զՎարդան՝ որդի Համազասպայ, սպարապետ Հայոց. և ինքն վճարեալ յաստեացս փոխի ի կարգս հրեշտակաց: Իսկ յետ վեհ Միհր-Շապհոյ մարզպանութեան կացուցանեն ի տեղի նորա զՎասակ՝ Սիւնեաց տէր, մարզպան Հայոց: Եւ էր Վասակ մարզպան, և Վարդան Մա-

միկոնեան՝ սպարապետ Հայոց։ Իսկ յետ Վռամ-Շապհոյ թագաւորէ Պարսից Յազկերտ ամս 19։ Եւ էր Յազկերտի հազարապետ մի յոյժ խորհրդադէտ Միհր-Ներսէհ անուն. և կայր յԱտրպատական աշխարհի, յոյժ չարահնար և մեքենաւոր բարուք. և ի վաղուց հետէ կամէր հնարս գտանել առ ի բառնալ և շիջուցանել զքրիստոսեան աւետարանն։ Եւ Վասակ էր շքեղ և բարձր ի մէջ աշխարհիս Հայոց. և յոյժ մեծարգոյ և երևելի ի դրան արքունի. և ունէր երկուս որդիս՝ Բաբիկ և Ատր-Ներսէհ անուն, և դուստր մի, որում փեսայացուցեալ էր զՎարազ-Վաղան, ի նոյն տոհմէ Սիսականացն։ Որ և սատանայական արկածիւ անկաւ աւերութիւն ի մէջ նոցա, և առեր Վարազ-Վաղան զկին իւր։ Վասն որոյ մախացեալ Վասակայ՝ կամէր սպանմամբ խնդրել զվրէժ քինուն. զոր և իմացեալ նորա՝ փախստեայ անկանի առ Միհր Ներսէհ. և վասն չար և սաստիկ նախանձուն առ ի հաճել զկամս նորա ելանէ յաստուածադրոշմ ուխտէ քրիստոնէութեան և երկիր պագանէ կրակի և արեգական. և հանապազ գըրգռէր զՄիհր-Ներսէհ՝ հազարապետ արքայի, ի վերայ Հայոց զի թերևս լցուսցէ զխորհուրդ իւր չար քինուն որ ընդ Վասակայ։

Իսկ Միհր-Ներսէհ մատուցեալ զսա առաջի Յազկերտի. և ծանուցանէ նմա զխորհուրդ նորին. և նա մեծարեալ զՎարազ-Վաղան յաստուա-

ծոց լմին համարեցաւ զպատահումն զայն. և խորհէ ընդ մովսեսան մովսեսն և ընդ այլ աւագանին դարձուցանել զաշխարհս Հայոց ի կրօնս իւրեանց. (ընդ որ) հաճեցան ամենեքեան: Եւ հրամայեաց թագաւորն հրովարտակս գրել առ իշխանսն Հայոց, և ընդ նմին ատրուշանս և փուշտիպանս և քուրմս առաքեալ ի ձեռն մեծամեծաց իւրոց. որք եկեալ հասեալ յաշխարհս Հայոց՝ մատուցին զնամակն մեծամեծ նախարարացն. որոց լուեալ՝ սուգ անհնարին պատեաց զամենեսեան: Եւ փութանակի ժողովեալ զեպիսկոպոսունս և զվանականս աշխարհին ի մի վայր և զսեպուհս և զաւագ տանուտեարս, որոց գլուխ ժողովոյն Յովսէփ որ եկաց գկնի սրբոյն Սահակայ տեղապահ աթոռոյն, և Անանիա՝ եպիսկոպոս Սիւնեաց, և Ղևոնդ երէց, և խորհեալք ի միասին՝ գրեն պատասխանի յոյժ բիրտ և պինտ վասն օրինաց իւրեանց առ թագաւորն: Եւ դարձեալ անդրէն դեսպանացն՝ մատուցին զպատասխանին արքայի: Ընդ որ յոյժ ցասուցեալ ահագին եռանդմամբ սրտին իբրև օձ թաւալգլոր լինէր. և փութանակի հրաւիրակս հանեալ կոչէր զամենեսեան ի կամաց և յակամայ զիշխանսն Հայոց. և տայր ածել զառաջեաւ. և ի մէջ առեներն սաստիւ հարցեալ զնոսա՝ ընտրել զմի յերկուցն՝ կամ ապրել և յանձն առնուլ զօրէնս մոգութեան, և կամ զարմիւք և զաւակօք մեռանել խսպառ: Որոց

առ ժամայն ոչ ինչ պատասխանեալ՝ ելեալ արտաքս խորհեցան. և ընտրեցին առ ժամ մի վերին երեսօք յանձն առնուլ զհրամանս արքունի, և երթալ յաշխարհն իւրեանց և հրնարել պատերազմաւ և կամ սիրով զփրկութիւն աշխարհիս և զգիւտ անձանց. զոր և արարին իսկ. և մեծաւ պարգեւօք արձակեցան յաշխարհն իւրեանց ածեալ ընդ ինքեանս ատրուշանս և վարդապետս օրինաց։

Բայց կասկածեալ թագաւորին եթէ խաբի, պատանդ առեալ զբղեաշին Վրաց զԱշուշա և զերկու որդիսն Վասակայ՝ զԲաբիկ և զԱտրներսէհ։ Իսկ իշխանքն Հայոց նախ ուխտեալ էին միմեանց և աւետարանին երդմամբ կնքեալ զիւր ուխտին՝ մի միաբանութեամբ կեալ և մեռանել ի վերայ քրիստոնէական հաւատոյն։ Որք եկեալ, հասեալ յաշխարհ իւրեանց, ի գաւառն Արարատու՝ երևեցուցին զծածուկ ուխտ պայմանին. և զոմանս ի մոգուցն սպանին և զայլսն փախուցին. և զկրակն ցրուեալ արկին ի ջուր։ Ընդ որ խոժոռեալ Վասակայ՝ վարանէր ի մեծի տրտմութեան, մի՝ զի բոց ծնողութեանն չեռոյց զփորոտիս նորա վասն որդւոցն որ կային անդ ի պատանդի. և խելացնորեալ ափշեցուցին զնա. և մի՝ զի երկիւղ թշնամւոյն Վարազ-Վաղանայ, որ կայր առ արքայի, և սպասէր Վասակայ մահու. և մի՝ զի զրկուեցաւ մեծ և երևելի փառացն և հայ-

բենի տէրութեանն։ Յայսց երից անհնարին տա-
րակուսանաց տագնապեալ խուճապէր միշտ. և
ոչ ունէր քուն ի գիշերի կամ հանգիստ ի տուն-
ջեան։ Եւ զի սահման է մարմնոյ ի կենցաղումս
հանապազ սխալիլ և գթիլ. սակս որոյ և սա սխա-
լեաց յերդումն սուրբ աւետարանին. և զայս հա-
մարձակիմ ասել եթէ միով բանիւ զմեղայ էր
խոստովանեալ ի վերջոյ. ոչ էր թողեալ գնա ի
կորուստ անսահման գթութիւնն Աստուծոյ։ Բայց
այս ծնունդ էր չար յուսահատութեան, զորոյ
զորպէսն ի դատաստանին Աստուած միայն գի-
տէ և ոչ այլ ոք։

Արդ սակս այսր պատճառի խաբեալ ի չար
դիւէն՝ ապաշխարութեան յուսով ատեաց ուխտին
առ ժամ մի (գի) թերևս զերծուսցէ յեկեալ, հա-
սեալ չարէն զորդիսն իւր և զինքն։ Եւ յղեալ
զվարպան զօրօքն Հայոց ի պատերազմ յԱղվանս
առ Պարսիկքն որ եկեալ էին անդ. և ինքն ծա-
նուցանէ զխորհուրդ իւր միամտութեան, որպէս
թէ հաւատ պահելով թագաւորին, Միհր-Ներսէհի
հազարապետի ի ձեռն նամակաց, նա և զօրագլ-
խացն Պարսից որ յԱղվանս. զայս ևս օրէն հա-
մարելով որպէս ասէ աստուածային գիրք հնա-
զանդ լերուք մարմնաւոր տէրանց որպէս Աս-
տուծոյ։ Եւ ապստամբեալ սա ի վարդանայ և ի
կամսարականացն և յայլ ազատացն որ ընդ նո-
սա. այլովք իշխանօք Հայոց՝ իշխանաւն Բագրա-

տունի Տիրոցաւ, Խորխոռունի Գադիշոյիւ, Վահևունի Փիւռիւ՝ Պալունի Վարազ-Շապուհիւ, Գաբեղենի Արտէնիւ, Ուրծայ Ներսէհիւ և այլովք բազում ոստիկանօք և սեպհօք տանց և տոհմից, որք երկուցեալք յահէ Պարսից՝ կամեցան շնորհուկս առնել թագաւորին. և զամենայն բերդս և ամրոցս Հայոց ընդ իւրեանց ձեռամբ արարին. և զամենայն մանկունս Մամիկոնեան տոհմին և կամսարականացն և այլ ազատացն եւս ածել վասակ առ ինքն և ամրացոյց յանառիկ ամուրս աշխարհիս Սիւնեաց: Եւ մինչ այս այսպէս եղև, ապա լուեալ Վարդանայ զգառն գոյժ մահարար բօթին. և մեծաւ յաղթութեամբ եկեալ ի պատերազմէն որ առ Աղվանս. այլովք ազատօքն խորհէին ի միասին զաւուրս բազումս հնարս լինչ: Եւ մինչ թափեցան յամենայն յուսոյ՝ զմահ ընտրեցին լաւ քան զկեանս. և անցեալ յԱրտազ գաւառ յետ ամսօրեայ աւուրց եղև խմբումն մեծ պատերազմին յորում պսակեցաւ սուրբն Վարդան այլովք ընկերօք. զոր լուեալ զայս Յազկերտ՝ ի մեծի և յանհնարին սուգ դառնութեան վարանէր:

Իսկ Վասակայ հաւատարիմ և մեծավաստակ զինքն համարեալ՝ առեալ զկալանաւոր մանկունսն և զսուրբ քահանայսն՝ խաղաց, գնաց ի դուռն արքունի, յորում առեան մեծ լինէր և հարց և փորձ կալանաւորացն ընդ Վասակայ: Եւ ամե-

նայնիւ պարտեալ և յիմարեալ լինէը անօրէնն Վասակ. և ըստ արժանաժառանգ իւրոյ թոշակին առնոյը զփոխարէնն։ Եւ ի նմին դրան ի դիպահոջ կացեալ լինի մինչև անդրէն առնու զվախճան, զորոյ և զորպէսն լիով պատմեն քեզ Եղիշէ և Ղազար Փարպեցի։ Իսկ զիշխանութիւնն Սիւնեաց առնու ուրացողն Վարազ-Վաղան, որ էր դիւաբախ, և յետոյ ի դիւէն խեղդամահ եղև։ Եւ յետ նորա նոյն չարութեամբն անհեդեդ հսկայն Գդեհոն որ անպարտելի էր զօրութեամբ և միշտ պատերազմէը ընդ Տնացորդս Հայոց, զոր և Վահան՝ եղբօրորդի Վարդանայ, վերին օգնութեամբ հարեալ սատակեաց ի պատերազմի զբուրգն ահագին զԳդեհոն ի դաւառին Շիրակայ մերձ ի գիւղն որ Ըշահ անուանի։ Եւ ծառայից իւրոց թափեալ զփոր նորա՝ պատեցին եղեգամբ և բերեալ եդին ընդ հարս իւրեանց ի դամբանի։

ԺԲ.

Վկայութիւն սուրբ եւ փառաւորեալ սեպուհին Սիւնի, երանելւոյն Ազգայ, որ ի ձեռաց Միհրսնայ ի մէջ Պարսից հանդիսի։

Լաւագոյն և խրախալի թուի ինձ այժմոյս վիպաբանութիւն քան գերասացելոց. զի թէ միով իւիք պարտեալք ամաչեցաք և կորագլուխ եղաք վասն ամօթալի գործոց իշխանացն Սիւնի. սակայն միւսովս բարձր ի գլուխ պարծիմք. և իբր

պատակ զարմանահիւս ի գագաթ մեր եդեալ՝ բըժշկիմք յառաջին խոցուածոց. և համարձակ շքեղութեամբ պերճապաճոյճ պայծառանամք: Բանզի թէպէտ ցցուեալ ոստոց Սիսական տոհմին՝ երբեմն փուշ և դժնիկ ընծայեցին մեզ. այժմ անա վարդ և շուշան անուշահոտ և պտուղ գեղեցիկ և քաղցրահամ մատուցին մեզ. յորմէ հոտոտեցաւ Տէր ի հոտ անուշից:

Արդ թէպէտև տեարքն երևելի Սիսական պետութեանս պատրեալք ի հին խաբողէն՝ հետևեցան կամաց թագաւորին. և առին ժառանգութիւն զփառս աշխարհականս, զառօրեայս և զեղծականս. սակայն ոմանք ի նոցանէ եղբարք ըստ մարմնոյ և արեանառուք իմաստնացան զվերին իմաստութիւնն և լուսով հաւատոյն ոչ գնացին ընդ մոլար շաւիղն որ հայի ի վիհն կորստեան. այլ հրաժարեալք յամենայն աշխարհական իրաց՝ թողին զփառս և զմեծութիւն. և գնացին զհետ երանաւէտ ձայնին, որոց անուանքն Բաբգէն և Բակուր և Ազգ: Սոքա եղեալք ի գնդէն Սիւնեաց գնացին զհետ ուխտապահացն Հայոց, որոց գլուխ և սպարապետ էր երանելին և քաջն Վահան Մամիկոնեան՝ եղբօրորդի Վարդանայ: Եւ ի բազում պատերազմունս մեծամեծ քաջութիւնս ցուցանէին: Իսկ ի գալն Միհրանայ բազում զօրու ի վիրս պատերազմել ընդ Վախթանկայ՝ թագաւորին Վրաց, գնաց և Վահան Հայոց զօրօքն յօգնութիւն

վախթանկայ՝ զի ուխտակիցք էին միմեանց։ Եւ իջեալ ի դաշտն Ճարմանու մերձ Գուբ գետոյն՝ ճակատեցան ընդ Պարսիցն և գամ մի յաղթեցին։

Իսկ վրաց երկուցեալ ի բազմութենէ Պարսկացն՝ ի փախուստ դարձան։ Եւ Վահան՝ զայս իմացեալ դարձաւ անդրէն իւր գնդաւն, յորում տեղւոջ էառ զնահատակութիւն Վասակ՝ կրսեր եղբայր Վահանայ։ Իսկ Միհրան զհետ մտեալ զօրացն՝ կալաւ զՀրահատ Կամսարական՝ եղբայր Ներսէհի Շիրակայ տեառն, այսու պատճառաւ զի երիվար նորա վազս առեալ սաստիկ՝ ընկէց զնա. ապա և պնդեալ զկնի կալան և զպովելի սեպուհն Սիւնի զԱզդ. և մեծապէս խրախացեալ Միհրանայ՝ դարձաւ անդրէն. իսկ Վահան գաանէ զԲաբգէն՝ Սիւնեաց պայազատ, կարեվէր խոցեալ և անկեալ ի տեղի մի, հեծուցանէ զնա յերիվարն. և հանեալ անտի ապրեցուցանէ, որ և վասն խոցուածոյն այլ ոչ շրջեցաւ ընդ Վահանայ. այլ անց, գնաց յանքոյթ տեղիս։

Այլ պիղծն Միհրան առեալ զերկու սեպուհան շրջեցուցանէր ընդ ինքեան, և հետամուտ լինէր Վահանայ. և զնոսա օր ըստ օրէ զառաջեաւ ածեալ կապանօք՝ դառն տանջանօք նախատէր և չարչարէր և հնարէր դարձուցանել յիւր կրօնս. յորմէ աներևոյթ օգնութեամբ ազատեալ լինէր կամսարականն Հրահատ. վասն որոյ սաստկապէս զչարեալ Միհրանայ՝ դարձեալ և երկուցեալ (թէ)

մի գուցէ նոյնգունակ և Սիւնին Ազդ զերծցի՝ հրամայէ զորոճն անմեղ և զգառն տարևոր զառաջեաւ ածել զի լիցի պատարագ անուշահոտ Տեառն իւրոյ։ Եւ զի առաւելապէս զրգռեալ լինէր սա յանօրէնն և ի կայենատիպ եղբօրէն Ազդայ ի Դրեհոնէ՝ Սիւնեաց տեառնէ. և սակս այսր սաստիկ զրգեալ լինէր բռնաւորն ի ցասումն։ Ասել սկսանի ընդ Ազդայ մեծամեծ պատուհասիւ. և ահարկու խրոխտմամբ հնարէր զանազան հեթեթանօք խախտել ի քրիստոսական հաւատոյն. և ընդ պատժոյն խոստանայր և պարգևս մեծամեծս՝ եթէ արասցէ զկամս նորա. իսկ երանելին այն լուռ միայն ունկն դնէր բանից նորա. և ապա հրաշադիտակ տեսակաւն յերկինս հայեցեալ առ անձկալին իւր՝ կոչէր զնա յօգնականութիւն. և պնդեալ զսիրտն և զմէջն անճառելի յուսովն՝ պատասխանի տայ Միհրանայ և ասէ «Թէ զժամանակեայ կեանս մարմնոյ եթէ վաճառէր ոք, և հնար էր ինձ գնել և կեալ, յաղագս ցաւոց մարմնոյս և սիրոյ կենցաղոյս տայի արդեօք զամենայն ինչ զոր ունէի, և գնէի. բայց զյաւիտենից պատուհասն և զանշէջ գեհենին զսպառնալիսն գնել ընդ կարասւոյ յոյժ անմտութիւն է, մանաւանդ զի և անյայտ է երևումն վաճառոյն, քանզի ոչ ոք գիտէ զկեալն իւր գհեռին և զմօտեալն. գուցէ գնեալ խնդայցէ, և ի վաղիւն վախճանեալ՝ յուղարկեսցի ի խաւարն արտաքին։

Այլ զայդպիսի աղաեղի և կորստական վաճառ թէ սիրեցեալ էր իմ՝ ընդէ՞ր այժմ գնէի դա վասն կելոյ. այլ վաղ իսկ առնուի հանդերձ փառօք և մեծամեծ պարգեւօք. այլ զայս ընտրեցի յորում եմս, և զսոյն համարեալ լաւ և պատուական՝ ուրախ եմ և խնդամ մեռանել վասն Քրիստոսի, քան թէ զհազարս ամաց կեալ մեծամեծաց փառօք յուրացուքեան, և անվախճան պատուհասին լինել ժառանգորդ»:

Եւ լուեալ զայսպիսի բանս անօրէն Պարսկացն ի սրբոյն յԱզդայ՝ իբր զանգառագեղ գազան յարձակեցան ի վերայ, և կամէին կենդանւոյն հաղորդիլ ամենեքեան յարիւն նորա: Եւ առեալ սպանողացն տարան մերձ մատրանն սուրբ և առաքելանման նահատակին Գրիգորի, ի գեօղն որ կոչի Բագաւան, ի գառառին Վաղարշակերտու, ի նահանգին Բագրեւանդայ, ի լանջակողման լերինն որ կոչի Նպատ՝ մօտ ի սուրբ տեղի մատրանն իբրև երկու քարընկէցօք: Եւ անդէն հատին զսուրբ գլուխն, զոր բարձեալ քրիստոնէիցն տարեալ հանգուցին ի սուրբ մատրանն Գրիգորի: Կատարեցաւ սուրբ սեպուհն Սիւնի՝ երանելի նահատակն Ազդ, յամսեանն հոռի, որ օր վեց և տասն էր ամսոյն. յորոյ վերայ եղեն նշանք մեծամեծք, և լինին բժշկութիւնք ամենայն ախտաժէտաց. որ է բարեխօս վասն մեր և աշխարհիս այս առ Քրիստոս, որում փառք յաւիտեանս:

ԺԹ.

Վասն վկայից որ կան ի հանգստի ի Վայոց ձոր գաւառի աստ եւ անդ. եւ վասն վկայարանին որ շինեցաւ ի գետամիջին Ծղեգեաց եւ Մոզանի մեծ բլրին ուր ամրոցն էր:

Յետ աւերման աշխարհիս Հայոց, և կատարածի սրբոց Վարդանանց՝ զամս 23 ոչ դադարեաց սուրն պարսկական ի ճարակելոյ զսեռս արամեան: Քանզի յետ Յազկերտի թագաւորեաց անիծեալ արեանաբբուն Պերոզ 22 ամ. և խըստացոյց զանողորմ կոտորուածն և գերուածն, այրուածն և քանդուածն աշխարհիս Հայոց: Իսկ ի սատակիլն նորա ի Հեփթաղացւոց թագաւորէն և ի բնաջինջ լինելն տամբ և զաւակօք, ապա թագաւորէ Պարսից խաղաղասէրն Վաղարշ. որ և յառաջին ամին իւրոյ տէրութեանն արար հաշտութիւն ընդ Վահանայ և այլ նախարարաց Հայոց. և եդին զնա մարզպան աշխարհիս. և կնքեցին ուխտ երդման և հաստատեցին զխաղաղութիւն ընդ Հայս:

Ապա յետ սրբոյն Վարդանայ շրջէին ընդ ամենայն տեղիս զօրն Պարսից. ոմանք զկնի փախստէից, ոմանք ի վերայ բերդից և ամրոցաց. և չանային և խնդրէին ի սպառ ի սպուռ չնչել և արմատախիլ առնել զազգ Հայոց: Սուրն վաղակաւոր կայր մերկացեալ ի վերայ ամենայն հայ զին-

ուորի, և միայն խնդրէին բանիւ միով ուրանալ զՔրիստոս. և զլուխ կորացուցանել արեգական. և թէ ոչ՝ մեռանել առ ժամայն: Վասն որոյ լի եղեն վկայիւք ամենայն առաքարք և խորհուրդք, հովիտք և բլուրք աշխարհիս Հայոց. և իբր զկաճառս աստեղաց, որ ի մէջ գիշերի փայլեն թանձրախիտ ընդ երեսս երկրիս: Որպէս և աստ է տեսանել յաշխարհիս Սիսական ի գաւառս Վայոց ձորոյ. ուր եկեալ ի զօրացն Հայոց փախստեայ կամէին անցանել յամուր աշխարհն Արձախայ. որոց զկնի պնդեալ անիծեալ Ազթաշխուդային չարահնար զօրօքն Պարսից. և հասեալ ի գաւառամէջն Վայոց ձորոյ մերձ ի բլուրն որ մեծամեծ վիմօք պատեալ էր վասն ամրութեան ի գետամիջին Եղեգեաց և Մողանի. և մատուցեալ եղին արեան ճապաղիս. և կոտորեցին զբազումս և գեղեցիկս որ էր յազատ տոհմէ Հայոց վասն անուանն Քրիստոսի: Յորոց վերայ եղեն նշանք գարմանալիք ի վերուստ: Եւ ինքեանք պնդեցան զհետ այլոցն. և հասեալ կիսոց յատորոտ բերդաքարի միոյ ի նեղ ձորակի անդ՝ կոտորեցին, ուրոց գլխաւորին անուն Մարտիրէ. որ և տեղն կոչեցաւ Անգեղձոր: Եւ անդ ասպատակ եղեալ հասին և 300 արանց ի Ջրկիցն որ Ոստինք կոչի և Արտաբոյնք. և անդ զնոսա խողխողեցին. որոց վերայ յետոյ շինեցաւ եկեղեցի ի բնակչաց տեղեացն:

Եւ անտի սակաւ մի անցեալ Պարսկացն ի ձորադուռն որ ի ձախ կողմանէ որ հայի ի վեր յուխտն սուրբ Յաղագքար կոչեցեալ, որ ի վերայ բարձրաւանդակին ի մէջ սահմանաց երկուց գեղջն, որ վերոյ ասացաք. և անդ կոտորեալ յոյժ բազմութիւնք սեպուհ արանց և ընտիր զօրաց։ Եւ ինքեանք եկեալ ի շինամէջն բնակեցան խորանօք՝ լքեալք և վաստակեալք ի կոտորածէն, կամեցան գիշերօթ առնել։ Իսկ ի մէջ գիշերին պարսիկ մի, որ էր գուշակ զօրացն, տեսանէր զերկինս բացեալ և լոյս սաստիկ հեղեալ ի վերայ սպանելոցն, և կառք մի ոսկեզէն բարձր յոյժ, յորոյ վերայ նստէր կին մի ծիրանազգեստ թագաւորակերպ, և ամբոխք ահագին զօրաց լուսեղինաց շուրջ զնովաւ։ Եւ նա հայէր ի վերայ կոտորածին, և լայր ողբով, և մի մի գգուէր ի նոցանէ։ Իսկ պարսիկն այն զարհուրեալ կամեցաւ ազդ առնել զօրացն, և կապեցան ոտքն և լեզուն. ապա մերձենայր ի նա մի ի սրբոց զօրացն։ Եւ նա հարցանէր «ո՞վ է այդ». ասէ հրեշտակն «այդ մայրն է երկնաւոր թագաւորին. և իջեալ էառ զվկայսն և սիրելիսն որդւոյն իւրոյ. և մի մի կամի փառաւորել զնոսա»։ Կացեալ տեսլեանն մինչև յառաւօտն և աներևոյթ լինէր։

Իսկ ի լուսանալ առաւօտուն կամեցան զօրքն գնալ ի տեղւոյն. և գտին զայրն թալացեալ, անկեալ. և հարցանէին ցնա զպատճառն. և նա այլ

ինչ ոչ կարէր պատասխանել. միայն մատամբն ցուցանէր և լեզուաւ ասէր «մայր անդ այ, մայր անդ այ» վասն որոյ և անուն տեղւոյն մինչև ցայժմ Մարանդ կոչի։ Եւ գնացեալ պարսիկն այն անկեալ զսրբովքն և բժշկեալ՝ ինքն լինէր քրիստոնեայ. և զամենայն աւուրս իւր սպասաւորէր սրբոցն. որ և յետոյ երթեալ քրիստոնէիցն՝ ամփոփեցին զսուրբսն. և շինեցին մատուռն ի վերայ։ Իսկ զառաջին սուրբսն, որ կատարեցան առ բլրաւն, ի ժամուն ամփոփեցին ոմանք քրիստոնեայք։ Եւ յայնժամ կաթողիկոսն երանելին Գիւտ, զոր լուեալ հրամայէր շինել վկայարան մեծ ի վերայ սրբոցն։ Եւ ժողովեալ զոսկերսն նոցա ի վկայարան. ապա ձեռն ի գործ արկեալ Յրև և Շահիրէտ և Արշէն երէց և Աբդիու՝ հիմնարկին սրբոյ կաթողիկէին յիններորդ ամի Գիւտոյ երանելւոյ՝ Հայոց կաթողիկոսի, յամարան ամսամբաւին, որ օր հինգ էր ամսոյն։ Եւ կատարեալ զնա մեծաձախ գանձիւք կանգնեցին ճեմարան իմն երկնանման հրաշագարտար շինուածովք երկադմբեթս և եռախորանս. և յերկուց կողմանէ գաւիթս և սրահակս, վերնատունս սեամբք և աքանչելի յօրինուածովք շինեալ։ Եւ վայրն ամենայն ի մեծ գետոյն մինչ ի վեր ի լեռնակողմն որ Սբրկղօնք կոչի, ընծայեցաւ ի ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն պաշտօնէիցն։

Իսկ ի կատարման գործոյն գան երանելի կա-

թողիկոսն Գիւտ և Անանիա՝ Սիւնեաց եպիսկոպոս, և բազմամբոխ ժողովով փոխեն ի հանդիստ զսուրբսն, և առնեն նաւակատիս սուրբ եկեղեցւոյն 8 օր ի փառս Քրիստոսի Աստուծոյն մերոյ օրհնելոյն յաւիտեանս: Բայց այժմ յետ աւերման տեղւոյն եղև շինանիստ գեղջկաց, և կոչեցաւ տեղին Ստորաւեզ: Եւ ահա զայս ամենայն ծանեաք յիւրոց արձանագրութեանցն, և այլն՝ էր որ ի գրոց, և էր որ ի տեղեացն և ի վկայից և յանուանցն և ի հաւաստի աւանդութեանց հնոցն ծանեաք. և տեղեկացեալ ամենայնի ստուգիւ՝ աւանդեցաք ձեզ:

Ի

Վասն եպիսկոպոսացն Սիւնեաց որ յաջորդեցին վկնի Սահակիայ. եւ վասն Տեառն Երիցակայ սքանչելի օծմանն:

Յետ աստուածարեալ սուրբ եպիսկոպոսին Սիւնեաց Տեառն Անանիայի յաջորդէ զաթոռն Տէր Նուն՝ այր բարի և լաւ, ամս 8. և յետ նորա Գադատ՝ ամս 17: Եւ յետ սորա Մուշէ՝ ամս 36: Եւ ապա բռնաբարեալ զսուրբ հայրն Երիցակ Երիցուվանից մեծ էգոնոմոս, խարազնազգեստ և խստակրօն ճգնաւոր, բերեալ կացուցանեն եպիսկոպոս Սիւնեաց. որ և եկաց ամ մի, զորոյ զորպէսն և զվարդն ասելի է սակաւուք: Յամս կաւատայ՝ արքայի Պարսից, ի մարզպանութեանն

Հայոց վահանայ Մամիկոնենոյ, և ի հայրապետութեան Տեառն Մուշէի կաթողիկոսի վախճանի երանելի եպիսկոպոսն Սիւնեաց Մուշէ կալեալ զաթոռն ամս 36։ Եւ զի պակասեալ էր իշխանն Սիւնի. և էր նորա կին մի մեծահաւատ, լի ամենայն բարեպաշտութեամբ Սահակիա անուն. և ոչ ունէին տեսուչ հոգւոց։ Յայնժամ բողոք բարձեալ ամենայն ազատաց և տանուտերաց և քահանայից աւագաց աշխարհին առ մեծ բարեպաշտուհին Սահակիա. և խնդրէին իւրեանց առաջնորդ։

Իսկ նորա պատրաստեալ դեսպանս ի մեծ և պատուաւոր արանց և յընտիր քահանայից՝ բազում ընծայիւք և պիտանի պատարագօք յուղարկէ առ սուրբ կաթողիկոսն Հայոց Մուշէ. և թախանձեցուցանէ զնա գալ յաշխարհ իւր և ընտրել արժանաւոր այր և կացուցանել յաթոռ մեծապօլտութեան Սիւնեաց։ Եւ նորա ախրաբար խոնարհեալ գթալով ի հօտն իւր՝ ոչ ինչ վերջացաւ ի գալոյն. այլ պատրաստել հրամայեաց ըստ հայրապետական ճոխութեանն զճանապարհն՝ հեծեալ ի սպիտակ ջորւոջ ոսկեզօծ թամբօք, եպիսկոպոսօք և բազմամբոխ պաշտօնէիւք զառաջեաւ ունելով զոսկիափայլ նշանն աստուածընկալ առըեգակնակերպ նշուլիւք՝ ընթանային զճանապարհաւն սաղմոսիւք և քաղցրաձայն եղանակօք։ Եւ այն ինչ հասանէին ի սահմանս Սիւնեաց, ի գաւառն Վայոց ձորոյ՝ տեսին երաշտացեալ ի բա-

զում աւուրց և ողորմ տեսակաւ թարշամեալ ամենայն բոյսք։ Ապա արտասուագոչ պաղատանօք ձեռս ի վեր ամբարձեալ հայրապետին՝ խընդրէր ի Տեառնէ այցելութիւն, որ և ի ժամուն ցօղեաց Տէր զցօղ քաղցրութեան. և զաւուրս երիս զցայգ և զցերեկ ոչ դադարեաց ի տեղալոյ. և ամենայն երկիրն զարմացեալ փառս ի վեր առաքէին մեծաւ զոհութեամբ։

Իսկ ի մերձենալն ի գահ իշխանաց ի Սիւնիս՝ աւետաւորքն առաջի ընթանային։ Եւ ել տիկինն որդւով իւրով ամենայն ազատագունդ հեծելովքն և բազում ամբոխիւք քահանայիւք և տանուտէրօք ընդ առաջ կաթողիկոսին. և մեծաւ խնդութեամբ պատահեալք՝ իջանէին ամենեքեան ի վերայ ծնկաց և երկիր պագանէին. կէսք հետևակք կէսք հեծեալք ընթանային յաջմէ և յահեկէ. և մեծաձայն աղաղակաւ հնչէին, գոչէին զերգս օրհնութեան այնքան, մինչ լի լինէր փորակ գաւառին իբրև յորոտմանէ ամպոց։ Եւ այնպէս փառաւորութեամբ տարեալ իջուցանէին ի խորանն արքունական. և նստուցանէին ի վերայ ոսկեթել և մարգարտաշար բազմականին, ի գահ իշխանացն, ի տեղին որ կոչի Կից վտակաց։ Եւ անդ հանգուցեալ զաւուրս երիս՝ հրամանէ հայրապետն ժողովոյն ընտրել իւրեանց առաջնորդ զի ձեռնադրեսցէ։ Ապա ամենայն բազմութիւն զաղաղակ բարձին ի մի բերան և ասեն «խընդ-

բեմք մեք տեսուչ հոգւոց հոգւոց մերոց զհայր Երիցակ. և բաց ի նմանէ ոչ պիտի մեզ այլ ոք»: Հրամայէ հայրապետն պատրաստել երիվարս զի երթիցեն փութանակի ի վանս նորա. և իշխանին ասէ «դու գնա պատճառաւ որսոյ և պահեա զդրունս վանիցն զի մի իմացեալ ելեալ փախիցէ. և ընդունայն լիցի աշխատութիւնս մեր»:

Իսկ տիկինն Սահակիա ընծայէ նմա զվրանն արքունի ամենայն կահիւքն և բազմականօքն. և հեծուցանէ զնա յոսկիապատ կառս սպիտակ ջորւոց. ընդ որում և ամենայն բազմութիւնն գրոհ տուեալ գնացին զկնի. Եւ այն ինչ հասեալք ի դուռն Երիցու վանիցն որ է ի Բաղք գաւառի որ Քաշունիք կոչի, և այժմ Բարկուշատ, կամեցաւ սուրբն Երիցակ իջանել պարանօք ընդ պարիսպն և փախչել. և ոչ թողացուցին պահակքն: Եւ էր վանքն այն տեղի գեղեցիկ և զարմանատիպ ի վերայ բարձրաւանդակի միոջ շինեալ եկեղեցի յանուն սրբոյ Նախավկային նորին Երիցակայ ձեռամբ, և պարսպեալ մեծամեծ քարամբք, և ի ներս ի պարսպին խցկունք թուով միայն 40. մշանջենաւորք, խարազնագեաստք, լուռք, որք իբր զկանթեղունս մշտավառս և անշէջս յիւրաքանչիւր խղի հանապազ ոքնութեամբ վառեալք լինէին բոցով շնորհաց Հոգւոյն:

Իսկ Երիցակս այս անեալ էր նախ բազում

ամօք ի Բաղք գաւառի, ի տեղի մի քարանձաւ. և ապա գնացեալ ի վանս երանելւոյն Գիւտոյ. և անդ անցուցեալ բազում աւուրս անտանելի ճգնութեամբ. և ապա օժանդակութեամբ և հրամանաւ սրբոյն Տեառն Գիւտոյ եկեալ ի տեղին յայն երկոտասան կրօնաւորօք և բազում ընչիւք, զոր պարգևեալ էր հայրն Գիւտ. շինեաց զեկեղեցին որ կոչեցաւ Նոր Երուսաղէմ: Բայց ուրուուկքն որ ի ժամանակին հալածեալ լինէին յանվայր տեղիս, բնակեցուցեալ էր սուրբ հօրն Գիւտոյ յայնմ վայրի, որք հակառակ էին շինութեան Երիցակայ զոր լուեալ սուրբ հօրն՝ եկն և համոզեաց գնոսա ի խաղաղութիւն. և սահմանեաց զպէտս ընձեռել ի վանից ըստ չափոյ: Եւ ինքն օր ըստ օրէ գործակից լինէր շինուածոյն, և զճաշ շինողացն յղէր: Եւ այսպէս շինեալ տուն Աստուածոյ և կանգնեալ տեղի փառաբանութեան՝ յարդարէ զնա ի բնակութիւն հրեշտակակրօն արանց:

Իսկ երանելի հայրապետն Մուշէ մտեալ ի վանն՝ ողջունէ զեկեղեցին, և բազմեալ յղէ պատգամաւոր զորդի այրւոյն ի Յովհաննու վանից Ամրագածոտանէ, որ էր սարկաւագապետ եղբայր հայրապետին, նմանապէս և իշխանքն և այլ ժողովք, և ոչ կարացին հաւանեցուցանել զնա: Ապա երթալ կաթողիկոսին առ հայրն Երիցակ ի սրահ նորա, և լի սրտմտութեամբ

ցասուցեալ՝ կնքեաց նշանաւ խաչին և ասէ «ընդէ՞ր այդպէս յամառեալ կաս, դև գոյ ի քեզ, սատեսցէ Աստուած ի չարն և հալածեսցէ»։ Յայնժամ ընդ բան սրբոյն ել ծուխ թանձր իբր գիւթորիկ հոտմոյ և վերացաւ ի տանէն. և ապա եկեալ երամբ սպիտակ աղաւնեաց իջանի ցուս սրահին. և մին ի նոցանէ սլացեալ եկն ի-ջաւ ի վերայ կաթողիկոսին. և վերացեալ ի նը-մանէ իջաւ ի վերայ Երիցակայ. և շրջէր ի վերայ խոշոր քուսիթային, և նուազ ձայնիւ խօսէր մարդկօրէն «արժան է, արժան է։ Իսկ բազ-մութիւնն տեսեալ զայն՝ մեծապէս գոչէին միա-բան» արժան է, արժան է։

Զայն տեսեալ սուրբ հայրն՝ այլ ոչ ինչ իշ-խեաց ընդդիմաբանել. այլ ի գուռս անկեալ ա-ռաջի կաթողիկոսին արտասուաթոր կականմամբ ասէր «կամք տեառնդ լիցի և ոչ իմս». ապա ա-ռեալ Տեառնն զձեռանէն տանի յեկեղեցին. և հանեալ ի բեմն օծանէ զնա մեռրապօլիտ Սիւ-նեաց. և բերեալ նստուցանէ յաթոռն. և ինքն մե-ծարանօք և անչափելի շքեղութեամբ հրաժարեալ յամենեցունց՝ գնայ ի հայրապետական աթոռն ի Դվին շահաստան բազում փառս և գոհութիւն Ամենատեառնն առաքելով։ Իսկ երանելին Երի-ցակ կալեալ զաթոռն ամ մի՝ փոխի ի վերինն Երուսաղէմ, ուր ժողովք սրբոցն են, և քաղա-քապետ նոցա՝ Յիսուս Քրիստոս Աստուած բո-

լորից։ Այլ և ասի զնմանէ բան աւանդութեամբ եթէ երթեալ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ և յամեալ անդ մինչև յօր մեծի ճրագալուցին սրբոյն Յայտնութեանն, և ի դրան սուրբ այրին որ ի Բեդղեհէմ ի միոս ածեալ զսուրբ մենաստանն իւր և զեղբարսն՝ լայր զառնապէս ի սաստիկ կարօտոյն, և խնդրէր ինքն յայնմ ժամու լինել ընդ եղբարսն իւր. զոր իմացեալ կնոջ մի կախարդի զրեաթէ ի Հոգւոյն սրբոյ ազդմանէ հարցուկ լինէր. և ասէր ցհայրն «ասա ինձ վանորոյդ զառնապէս արտասուես»։ Եւ նա յայտնեալ նմա զպատճառն. ապա հայցէր» ով սուրբդ Աստուածոյ՝ խնդրեա ի Քրիստոսէ թողութիւն անչափելի յարցանացս. և ես յայսմ ժամուս ցուցից քեզ զփափագելին քո»։

Զայս լուեալ հօրն, և համարձակեալ ի փարթամ զթութիւն Աստուածոյ, նաև յանձկոյն բըռնադատեալ՝ յանձն առնու զխնդրելին։ Եւ նորա կազմեալ անօթ ինչ լի ջրով. և նիւթեալ ըստ իւրում աղանդութեան՝ անցուցանէ զսուրբն ի վերայ նորա. որ և իսկոյն գտաւ ի վանան յԵրիցու առ դրան եկեղեցւոյն մինչ չև էր կատարեալ փրկական խորհուրդն։ Ապա մինչ իմացաւ, ոչ երևեցոյց եղբարցն մինչ ժողովեցան ի սեղանն մարմնաւոր. և անդէն ծանօթութիւն առեալ ողջունէր զամենեսեան, և զանհաւատալի բանն պատմէր նոցա, և զնշանն զոր բերեալ

էր՝ ցուցանէր, այսինքն խաւարտս և կանաչս, նարինջս և թուրինջս. և այնու հաւաստեցուցանէր զբանն։ Իսկ յետ սեղանոյն յարուցեալ ընթացան ի դուռն եկեղեցւոյն, և զայն զիշեր հրակմամբ խնդրեցին զթողութիւն կնոջն այն։ Որում լուեալ մարդասէրն Աստուած՝ շնորհէ նմա թողութիւն. և յայնէ տեսլեամբ սուրբ հօրն, որ և այնպիսի մարդասիրութեանն բիւրապատիկ օրհնութեամբ գոհութիւն և փառք այժմ և յանվախճան յաւիտեանս։

ԻԱ.

Պատմութիւն հատառօս հօրն Գիւտոյ եւ Գրիստոսասիրին. եւ ծիւութիւն վանիցն որ յեզերս Երասխայ։

Որպէս գիւտոյ արար լինչ (մի) վարկեալս զառաջի եղեալս բան, և աւելախօյզ գիս ծանիցես. այլ պատշաճ և ի դէպ մերում ձեռնարկութեան զի զՍիսակեան աշխարհի սկսաք ճառել զվէպս։ Վասն որոյ հարկ է ամենայնիւ զեղեալսն ի սմա գործս և հրաշս ցուցանել ձեզ. որ և ոչ յայսչափ լաւագոյն իմն իր երևեալ եղեն յայսմ աշխարհի որպէս զայս զոր ասել սկսաք։ Էր ի գաւառին Գողթան իշխան մի հաւատացեալ որոյում անուն էր Շաբլիթայ. և էին նորա թոռունք երկու՝ որդիք որդւոյ նորա. որոց անուանք Վասակ և Շապուհ։ Էարկ սատանայ աղմուկ և նախանձ մեծ ի մէջ նոցա վասն բաժնի ժառան-

դուքեան հայրենեաց իւրեանց. և կոուէին ի վերայ գեղեցիկ գեղջն Որդուատայ։ Եւ ի ճակատեն զօրօք ընդ միմեանս եհար վասակ սրով զեղբայրն, և խողխողեաց մերձ ի մահ. և ապա զղջացեալ եղբայրական գթով՝ գնաց առ եղբայրն և անկաւ ի վերայ նորա և լայր սաստկագին, և աղիողորմ ողբով հառաչէր և ուխտադրէր Աստուծոյ, զի թէ բժշկեսցի եղբայրն՝ հրաժարեսցէ ինքն յամենայն աշխարհական իրաց. որ և բժշկեցաւ։

Յայնժամ ողորմեալ վասակ հոգւոյ իւրում՝ յեղակարծում ժամու անյայտ եղև ի միջոյ, և ծածկեցաւ յընտանեացն. ել և գնաց ընդ կողմն Բաղաց։ Եւ մինչ ի բարձրաւանդակ լերինն եհաս՝ յանձնեաց զինքն շնորհաց Հոգւոյն. և ի բերան առեալ զսաղմոս զայս՝ ասէր անդադար «զճանապարհս իմ ուղիղ արա ինձ Տէր՝ ըստ բանի քում. և մի՛ տիրեսցեն ինձ ամենայն մեղք»։ Եւ անցեալ ընդ գաւառօքն յեզր գետոյն Աղաւնւոյ, անդ վճարեալ զձմեռնային եղանակն՝ անց ընդ միւս վտակն ի կողմն բերդոյն ի գաւառն Քաշունիք որ այժմ Բարկուշատ կոչի, յորմէ բլրին գամս երեք և գամիսս վեց ի խղի միում։ Եւ էր երկիրն այնվայր, աւերանի, լի անտառախիտ ծառօք. և ի ներքոյ՝ դաշտ անհուն լայնութեամբ մինչ յեզր Երասխայ։ Իսկ ընտանիք նորա ոչ գիտելով (թէ) ուր յափշտակեաց հոգին՝ դեսպանս

ի Հայս և ի Հոռոմս և ի Պարսս հանէին, և անհնարին ագով ողբային. և ոչ ինչ ծանեան զհետս նորա։

Ապա օր մի (իբրև) պարապէր սուրբ հայրն յերեկոյեան աղօթիցն, և կամէր հանդչել՝ լսելի եղեն նմա ձայնք երգոց և խաղուց. յորմէ զայրացեալ ասէ «ոչ կարացի այնքան փախչել յաշխարհէ զի զձայնս նորա ոչ լսէի»։ Ի նմին ժամու յարուցեալ գնայր ի տեղւոյն. և անկեալ ի դաշտն առաջնորդութեամբ հրեշտակի գնաց մինչ ի ծագել արեգականն. և հասեալ յեզր երասխայ՝ եգիտ ձորակ մի և ի միջի՝ վէմ մի մեծ և ի ներքոյ՝ քիւ փոքրիկ. անդ արարեալ զբնակութիւն իւր զամս 10։ Եւ էր կերակուր նորա ուննդք և պտուղք ծառոց զի երկիրն նման է Եգիպտոսի զամառն և զձմեռն։ Ապա ըստ բանին թէ՝ ոչ լուցանի ճրագ և դնի ընդ գրուանաւ, կամեաց կամք Տեառն յայտ առնել զծառայն իւր սուրբ զԳիւտ որ յառաջն կոչէր Վասակ։ Եւ ել որդի թագաւորին Պարսից յորս ի մերձակայ լերինն որ դիտէը ի դաշտն Մուղանայ։ Եւ երևեալ առաջի նորա էրէ մի, և ի մէջ եղջերուացն խաչ լուսեղէն. և ջոկեալ զմանուկն ի զօրացն նման Եւստաթէի՝ եկն, եբեր մինչ յեզր երասխայ ի տեղին որ կոչի Քարավազ որ յերիս ճղէ զջուրն։ Եւ եղև խաչն ի կերպարանս լուսեղէն մարդոյ, և վազեաց ընդ վտակն. զոր տեսեալ մանուկն

և թանձրացեալ աչօք ի լուսոյն՝ անկաւ ի գետին երկու ծառայիւք և անց. և առաջնորդեալ եղ Ջերուին յատորոտ վիմին. և անդէն աներևոյթ լինէր։

Ապա ի վեր նայեցեալ տեսին արջ մի ահագին կերպարանօք նստեալ. և միոյն թաթն ի ձեռն սրբոյն դի բժշկէը ի վիրաց։ Անդէն զարհուրեալ մանկանն երկեաւ. և դի ի տեսլեան իմացեալ էր սուրբ հայրն զգալն նորա՝ ձայնեաց «մի՛ երկնչիր, ես առ իս». և նա ասէ «զինչ ես դու». և ասէ «մարդ իբրև զքեզ». ասէ «և զինչ են դոքա որ ընդ քեզ». ասէ Գիւտ «շունք իմ են». ասէ «հրամայեա դոցա ի բաց գնալ». և հրամայեաց։ Եւ յարուցեալ ինքն՝ էջ ի վիմէն և քարոզեաց զաւետարանն և ուսոյց զՔրիստոսի հաւատն։ Եւ նա յոյժ սիրեաց, և խնդրէը կնիք, որ և իսկոյն հրամանաւ առեալ սուրբն ի Տեառնէ՝ մկրտեաց զմանուկն և զերկու ծառայսն. և կոչեաց զանուն նորա Քրիստոսասէր։ Եւ բազում աւուրս կացեալ մեծամեծ ճգնութեամբ՝ ասէ Քրիստոսասէրն «հայր՝ կարօտ եմ եկեղեցւոյ և լուսաւոր կարգաց նորա դի տեսից. ոչ է մեզ բարւոք միայն բնակիլ ի վիմիս յայս. այլ հրամայեա դի ես երթամ և բերեմ արծաթ, և շինեցից եկեղեցի և հաստատեցից ուխտ և ժողովեսցին եղբարք»։ Եւ հրամայեաց նմա երթալ. և գնացեալ՝ եբեր արծաթ բազում. և կոչեցին արհեստաւոր և շինե-

ցին եկեղեցիս և ժողովեցին եղբարս բազումս։

Իսկ թագաւորն Պարսից խնդիր արարեալ որդւոյն իւրոյ բազում դեսպանօք ընդ ծով և ընդ ցամաք. և մինչ ոչ երևէին հետք նորա, զցայգ և զցերեկ ողբայր դառնապէս. և ոչ մխիթարէր երբէք։ Ապա ի գիշերի մի տեսլեամբ ծանեաւ ի հրեշտակէ եթէ որդին քո յայս նիշ տեղի է քրիստոնեայ ձևով։ Ընդ որ յոյժ խնդացեալ՝ դեսպան փութանակի առաքէր ածել զորդին. որք եկեալ գտին զնա, և ոչ կարացին քակտել։ Դարձան ուրնայն և ասեն «ոչ եկն. այլ աղաչէ զքեզ թոյլ տալ նմա. ասէ, է իմ հայր որ վերատին ծնաւ զիս լուսաւոր և անապական ծննդեամբ. ես ոչ կամիմ թողուլ զսա. և խոստացեալ է ինձ թագաւորութիւն որ բիւրապատիկ է քան զքոյդ»։ Յաղթուցեալ այնուհետև թագաւորն ինքնին եկն ի տեղին, և ոչ զոք գտաւ բայց միայն հիւանդ մի. եհարց ցնա «ուր է որդին իմ». և նա ասէ «ծանեան ի հրեշտակէ զքո գալդ և փախեան»։ Ապա հրամայէ սպանանել զնա, և զտեղին այրել և քանդել։

Եւ ինքն դառնայ անդրէն յաշխարհն իւր. և անկանէր ի սաստիկ ախտ հիւանդութեան ի կաթոտութենէ որդւոյն. և դարձեալ առաքէր դեսպանս, և աղաչէր խնդրել զոր լինչ պիտոյ իցէ։ Եւ նա հայցէր գանձս բազումս և արուեստաւորս զի շինեսցէ զաւերեալ տեղիսն։ Եւ առաքեցաւ

առ ժամայն հազար այր, հինգ հարիւր քարգործ և հինգ հարիւր փայտագործ. և փոխեցին զտեղին ընդ վէմն ի վեր և հարթեցին զվիմարդեանքըն, և շինեցին եկեղեցիս երիս յանուն սուրբ Երրորդութեանն։ Եւ ել համբաւս այս ընդ ամենայն աշխարհ. և գային բազմութիւնք եղբարց և ընոյր տունն Աստուծոյ։ Եւ ընդ երեկս սկսան հակել. և ահա ի մէջ գիշերին եկն այր մի լուսաւոր և ի ձեռին խաչ, և ասէ «հայր՝ թագաւորն երկնից օծ զքեզ ի հայրապետութիւն տանս որ է երկրորդ Երուսաղէմ. և բարձրաւանդակ տեղին քո Գողգոթայ, և նոյն անցք որ ընդ Երուսաղէմ անցին՝ անցանելոց են և ընդ տեղիս. և քնակութիւն սորա հանապազ ի չարի. և կրօնաւորք սորա առաւել օրհնեսցին քան զայլ աշխարհաց. դու ել և օրհնեա զեկեղեցիդ»։

Զայս ասացեալ և ինքն եղև աներեւոյթ. և ընդ առաւօտն աքօղեալ հայրն սուրբ ել ի բեմն և օրհնեաց զսեղանն և զտաճարն. և ընդ օծանելն դասք հրեշտակաց ի խորանին թևաքօղեալ գոչէին զամէնն. յորմէ զարհուրեալ ժողովոյն՝ ելանէին արտաքս։ Եւ այնպէս փառաւորեաց Աստուած զտեղին զայն ի ձեռն երանեալ հօրն Գիւտոյ և Քրիստոսասիրին։ Կարգեցին ի նմա եղբարս հինգ հարիւր, 200՝-ի վանքն և 300՝ ընդ քարանձաւան և անտառան անապատաւորս, որք անտանելի ճգնութեամբ և անդադար աղօթիւք իբր

սիւն հրեղէն կանգնեալ էին յերկրէ յերկինս։ Իսկ նախանձոտն սատանայ ոչ կարացեալ տանել այսմ ամենայնի զրգռէ զթագաւորն Պարսից ի չարաչար նախանձ։ Եւ յարուցեալ 150,000 հեծելովք գայ, հասանէ ի տեղին սուրբ. և սպանանէ ի նոցանէ 10 կրօնաւոր. և այլքն փախչին։ Ըմբռնի և իւրովի հայրն Գիւտ. զոր հանեալ ի վէմն ընկեցին. և ոչ ինչ վնասեաց շնորհօքն Աստուծոյ. և բուռն հարեալ կամեցան ևս ընկենուլ. և հարան կուրութեամբ. և կէսքն մեռան. զոր և տեսեալ զօրացն ի փախուստ դառնային և պնային անդրէն։

Ապա ժողովեալ սրբոցն յեկեղեցին լալով և համբուրելով զսպանեալսն ամփոփեցին յարևելից կուսէ եկեղեցւոյն ուր աւազ դուռնն է։ Յայնժամ յղէ յեղբարցն սուրբն Գիւտ առ եպիսկոպոսն Գողթան Անաստաս և առ ընտանիս իւր, և կոչեաց զնոսա ի տես. որք խնդացեալ մեծապէս ընդ անյուսալի իրսն՝ եկին ի վանսն Գիւտոյ. բայց մայրն դեռ ևս կայր կուրացեալ. և առեալ զգիրկ որդւոյն եդ ի վերայ աչացն, և լուսաւորեցան. և մեծապէս գոհանայր զԱստուծոյ։ Ելեալ սուրբ հօրն եղբարբքն հանդերձ ընդ յառաջ. և ածեալ յեկեղեցին մեծաւ գոհութեամբ յանձնէր նմա զեկեղեցին. և տայր ընձայ ամ յամէ ուրն օր կէտ ի գետոյն Երասխայ։ Զայն ընտանութիւն ցուցեալ Գողթան և անդէն դարձուցեալ

ի տեղի իւր զեպիսկոպոսն։ Դարձեալ յետ աւուրց մկրտեցին և զեղբօրորդի նոյն թագաւորին Պարսից Աբլ-Աբաս անուն. և փեսայացուցին Վաչագանայ՝ Աղվանից արքայի. և շինեցին բերդ յեզր գետոյն զի անդ բնակեալ պահեսցէ զեղբարսն։ Իսկ Աբլ-Աբաս և Վաչագան խնդրեալ յիշխանէն Սիւնեաց՝ սահման հատին վանիցն և ետուն հինգ գիւղ սկիզբն արարեալ ի Սևաւսարէ ածեն ի Բոթիբոթեր ի վար և վար. ուր ի ջուրն Թղենւոյն և յայգեստան ուրկանոցին. և անտի գնայ, հասանէ մինչև ի շրջանս գետոյն Աղաւնւոյ, հանդէպ եկեղեցւոյն Նակորզանու, և անտի մինչև ցտունն Աստուածոյ, գեօղք հինգ այսու սահմանօքս։ Եւ փարթամացեալ էր տունն զի էր նորա արջառ 1000, ոչխար 12,000, ուղտ 700, ձի 600. էշ 400 և այգեգործս կատապանս 170։

Ապա մեռանի Բարկուշատ թագաւորքն Վաչագան և Աբլ-Աբաս։ Եւ լուեալ Թոռն Վռամ-Շապհոյ՝ գայ բազում զօրօք և յանկարծ մտանէ ի վանքն յառաւօտուն, և կոտորէ զկրօնաւորսն. և զաւազակսն կապեն, քանզեն զեկեղեցին և յատակեն, և զքարն արկանեն ի գետն։ Եւ ի մէջ գիշերի էջ հրեշտակ և արձակեաց զկապեալսն. և նոքա զարհուրեալ փախեան։ Ապա ընդ առաւօտն ժողովեալ եղբարցն մեծ ողբովք լային ի վերայ եկեղեցւոյն. և փոխէին զեղբարսն ի հանգիստ. և սկսեալ այլ նոր կանգնեցին տուն Աս-

տուծոյ պայծառ քան զառաջինն. և ժողովեցան եղբարք 600. և շինեցին այլուր եկեղեցի և եռուն զմանակկայ ի ներս որ կոչի վանք Նորա. և սահմանեցին ուրկանոցս և առաս տային զպէտս նոցա ի վանիցն: Եւ հայր Յովհաննէս ի կապանէն եկն աստ և առեալ զեղբարսն գնաց յեզր գետոյն. և խնդրեաց ի Տեառնէ շնորհել ձուկն ի պէտս եղբարցն: Եւ երևեցաւ ի տեսլեան այր մի լուսաւոր զի գնայր առ գետափամբն, և զգաւազանն կախեալ ունէր ի ջուրն, և ի ծայրից գաւազանին ելանէին ջոլիրք ձկանց ամբաւ բիւրաւորք. և ինքն ուսուցանէրնմա զպատճառս որսոյն:

Եւ այնպէս պարգևեցաւ վանիցն կէտ ի գետոյն: Իսկ սուրբ հօրն Փիւտոյ լցեալ զամս կեանց իւրոց 84՝ տեսիլ եռես Քրիստոսասէրն և յարուցեալ պատմէր հօրն եթէ ագռաւք պատեցին զվանս. և թռեալ ի գագաթ իմ նստան. և յարուցեալ աստի ի քո գագաթդ իջան. և ապա սպիտակ աղաւնիք իջին յիմ գագաթս և թռեան ի քո գագաթդ: Զայս լուեալ սուրբ հօրն՝ իմացաւ զի հասեալ էր ժամ կատարման նոցա: Եւ բազում քաջալերութեամբ պնդէր և յորդորէր զՔրիստոսասէրն ոչ երկնչել, այլ փութալ հասանիլ վերին արքայութեանն: Եւ առեալ կերակուր՝ շրջեցան ընդ անապատաւորան և կերակրեցին. ողջունեցին և օրհնեցան ի նոցանէ և

գային սաղմոսելով ընդ Մախաղատափան դէպ ի վանքն. և տեսին զբազմութիւն հեծելոց զի գային: Փութացան յեկեղեցին և մտեալ յաղբիւրն լուացին զինքեանս. և մտին յեկեղեցին և համբուրէին զսուրբ սեղանն և ողջունելով լային: Եւ ահա պատեաց զօրն զեկեղեցին, և մտեալ խընդրէին զԳիւտա և զԲրիստոսասէրն: Եւ նորա յառաջ կացեալ ցուցին զինքեանս. ապա ըմբռնեալ կապեցին և տարան ի Գողգոթայն և ընկեցին ի վայր. զառաջինն ոչ ինչ վնասեաց. և յերկրորդին հայր Գիւտոյ զագաթն փեղկեցաւ, և կամէր զոգին արձակել. ձայնէր առ Բրիստոսասէրն. «Ջանա, փութա որդեակ՝ զկնի իմ». և նոքա սպանին սրով զԲրիստոսասէրն ի վերայ քարին:

Եւ կատարեցան սուրբքն ի քաղոց ամսի ի 15: Յայնժամ եկեալ ամպ հովանի. և պատեաց զվանսն վեց ժամ: Զոր տեսեալ անօրինացն և ի մեծ ահի եղեալ՝ փախեան դողալով: Իսկ ցրուեալ եղբարքն ժողովեալ՝ մեծաւ սգով լացին լալիւն մեծ և փարէին զսուրբ մարմնովք հօրն և Բրիստոսասիրին. և տարեալ հանդուցին զԳիւտա ի գաւիթ եկեղեցւոյն և զԲրիստոսասէրն յեկեղեցին. և անյայտ արարին զտեղին: Ահա աւանդեաց մեզ զայս հրաշալուր պատմութիւն Յովհաննէս՝ եկեղեցական սուրբ ուխտին, որ 25 ամ ոչ էլ արտաքոյ եկեղեցւոյն. և ոչ խօսեցաւ ընդ ումեք բայ ի պաշտամանէն: Որոց բարեխօսութեամբ հաշտեսցի

ընդ մեզ Քրիստոս. և տացէ խաղաղութիւն և շինութիւն աշխարհի։

ՀԲ

Ցաղագս Մակարայ եւ Պետրոսի, Փիլգանայ եւ Վրդանիսի՝ Սիւնեաց եպիսկոպոսաց։

Երանելին Երիցակ կալեալ զաթոռ եպիսկոպոսութեան սմա մի՝ փոխի ի վերին քաղաքն, որոյ պարիսպն յասպիս է և կարկեհան և դրունքըն՝ յականց վանեաց, և քաղաքապետ՝ Քրիստոս. յորում ժողովեալ կան ամենայն հոյլք սըրբոցն։ Իսկ յետ նորա արժանապատիւ այրն Աստուծոյ Մակար՝ ամս 28։ Եւ ապա բազմերջանիկն և անհամեմատն ի մարդկանէ Պետրոս՝ աշակերտ քերթողահօրն, քաջ հռետորն և անյաղթ փիլիսոփայն, լի իմաստութեամբ և կատարեալ առաքինութեամբ, նախաթոռ վարդապետաց Հայոց, քերթող և թարգմանիչ։ Որ արար բազում թարգմանութիւնս. և խօսեաց ճառս իմաստասէզց ի ծնունդն Քրիստոսի և ընդ դէմ Քաղկեդոնականացն և այլս յոլովս. և մեկնեաց զխրթին և զդժուարիմաց բանս հին և նոր կտակարանաց։

Զեռնադրի սա ի Ներսիսէ՝ Հայոց կաթողիկոսէ, ի մարզպանութեանն Վահանայ Մամիկոնոյ իններորդ եպիսկոպոս Սիւնեաց։ Սա հարցեալ ի Վաչագանայ՝ Աղվանից թագաւորէ, բանս բազումս, ուժեղս և զօրաւորս, և ընկալեալ զպա-

տասխանին յոյժ ի ճահ և ուղիղ լուծմամբ։ Սա գնաց ընդ այլոց վարդապետաց Հայոց Մամբրէի, Եղնակայ, Կորեան, Դաւթի իթագաւորական քաղաքն Կոստանդնուպոլիս. և հանդիպեալք ի ժողովն Քաղկեդոնի՝ յոյժ մարտուցեալ ընդ չարափառացն, պարտեալ ըմբերանեցին և յամօթ արարեալ զամենեսին՝ եկին մեծաւ ճոխութեամբ, ողջամիտ վարդապետութեամբ յաշխարհս Հայոց. և հաստատեցին զամենեսեան յուղղափառ հաւատս երից սուրբ ժողովոցն յաւանդեալն ի սրբոյն Գրիգորէ։

Սա գնաց ի ժողովն Դվնայ յառաջինն, որ եղև հրամանաւ Ներսիսի կաթողիկոսի վասն խուժկացն Նեստորականաց։ Որք ժողովեալ ի վանսն Գրիգորի Մանաճհիր Ռաժկի՝ սկսան սերմանել զգաշրջելի և զպիղծ աղանդն իւրեանց. զոր քակեալ ցան և ցիր արարին և մեծ կանոնաւ որոշեցին զմեզ յամենայն հաղորդութենէ նոցին, և սոսկալի նզովիւք փակեցին։ Սա եռես նուաղեալ զճշմարտութիւնն և քայքայեալ զաթոռ սրբոյն Գրիգորի և մերձ ի բաժանումն. քանզի երկու կողմանք Յունացն և Պարսից զհակառակութեանն բերէին զվէճ առ միմեանս, և կամէին Յոյնք հակառակաթոռ նստուցանել զոր և արարին յետ սակաւուց. զի Մովսէս նստաւ յաթոռ սրբոյն Գրիգորի ի Դվին, և Յովհան ոմն ի Թէոդուպոլիս եղև կաթողիկոս. և եկեալ եդ ա-

թոռ ի Կոտայան յԱբամօնս գիւղ, զոր յետոյ միապետեաց Աբրահամ կաթողիկոս։ Եւ սակս այսպիսի վիճմանց հրամայեաց սուրբն Պետրոս յետս կալ յաղմկէ անտի և ի խանգարմանէ, և յԱղվանից առնուլ ձեռնադրութիւն և ձէթ մինչև խաղաղասցի խռովութիւնն, զոր և արարին իսկ։

Սա կեցեալ յաթոռն ամս 10՝ վախճանի. և յետ սորա յաջորդէ զաթոռն Տէր Գիգան ամս 3. ապա երանելի աշակերտն Պետրոսի՝ սուրբն Վրթանէս, որ և վասն հրամանաց սրբոյն Պետրոսի ոչ հնազանդեաց խախտեալ աթոռոյն Հայոց. այլ գնացեալ յԱղվանս հրամանաւ տեառն Միհր-Սրտաշըրի՝ Սիւնեաց դահերէց իշխանի, առ երջանիկ կաթողիկոսն Տէր Զաքարիա. և ի նմանէ առնու ձեռնադրութիւն եպիսկոպոսութեան։ Եւ ամ յամէ անտի առնուին գիւղն օծութեան մինչև միապետեաց Աբրահամ կաթողիկոս Հայոց, և բարձաւ հակառակութիւնն ի միջոյ։ Առ սա գրեաց թուղթ վասն ուղղափառութեան և սակս զգուշութեան ի Քաղկեդոնականացն, ի պիղծ աղանդոյն Նեստորի սուրբ կաթողիկոսն և մեծ պատրիարքն Հայոց Տէր Յովհաննէս, որ ունէր օրինակ զայս։

ԻԳ

Թուղթ զոր Հայոց կաթողիկոսն Տէր Յովհաննէս եւ այլ եպիսկոպոսք առաքին առ Տէր Վրդանէս՝ եպիսկոպոս Սիւնեաց:

Քրիստոսիւ պայծառացելոյ սիրեցելոյ եղբօր և աթոռակից մերոյ Տեառն Վրդանիսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, և մեծավայելչի և փառաւորելոյ Մխիթ-Արտաշրի՝ Սիւնեաց տեառն: Ի Յովհաննիսէ՝ Հայոց կաթողիկոսէ, յԱբրահամայ Տարօնացւոյ և Մամիկոնենից եպիսկոպոսէ, ի Ներսա՝ Բասենոյ և Մարդաղոյ եպիսկոպոսէ, ի Մաշտոցէ՝ Ծորխոռունեաց եպիսկոպոսէ, ի Գիւտոյ՝ Վանանդայ, յԱբղիսոյէ, ի Բաբայ՝ Ամատունեաց եպիսկոպոսէ, օրհնութեամբ և հոգևոր սիրով ողջոյն:

Դուք լինքնին գիտէք զանհնարին վտանգն որ այժմ յաշխարհս մեր եհաս, զի յառաջագոյն երանելի հարքն մեր և զկնի նոցա մեք ընկալաք զհաւատս ճշմարտութեան զայն զոր քարոզեցին մարգարէք և առաքեալք, ուսուցին հարքն ճըշմարիտք սուրբն Գրիգորիոս սրբոյն Թադէոսի յաջորդն և 318 եպիսկոպոսքն որք ժողովեցան ի Նիկիա քաղաք, և 150քն որք ժողովեցան ի Կոստանդնուպօլիս և 200քն որք ժողովեցան յԵփեսոս. որք սրբոյ Հոգւոյն ազդմամբ ուսուցին մեզ զոր և ի սկզբանէ իսկ տէրունեան բարբառն

վարդապետեաց աշակերտացն ասելով «գնացէք, աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ»։ Որ բարձր և հռչակեալ կինիք եղաւ ի վերայ ամենայնի Զայս հաւատ ճշմարտութեան ստուգեալ ունէր միաբանութեամբ աշխարհս Հայոց. (մի) ինչ ամենևին յումեք արատութիւն յայտնի երևէր, և բնակեալ էաք ի սուրբ կաթողիկէ եկեղեցւոջ ընդ հովանեաւ սուրբ խաչին Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի խոր խաղաղութեան։ Իսկ ի ժամանակիս յայսմիկ Նեստորի անիծելոյ, որ կուրացոյց չար հերձուածովն իւրով զկողմանս Ասիացւոցն, երևեցաւ և խմոր չարութեանն յաշխարհիս մերում, որ էր ծածկեալ յանձինս անսուրբս, որք սկսան պղտորել զյստակ, ճշմարիտ հաւատ սուրբ Երրորդութեանն, պատրել զանձինս անհաստատս մարմնասէր ցանկութեամբք. և տարածեցաւ երկբայութիւնն. և հիւանդացան բազումք զախտ անհնարին։

Եւ ոչ կարացեալ մեր տանել այսպիսի չարաչար և դառն հայհոյութեան՝ փութացաք մեք և այլ աշխարհիս Հայոց եպիսկոպոսունք ընդ որս էր և երանելին Պետրոս՝ եպիսկոպոսն ձեր, և քահանայք և ուխտ սրբոյ եկեղեցւոյ և վանաց երիցունք, ազատք և համօրէն ժողովրդականք ուղղափառք ժողովեալ ի սուրբ եկեղեցիս. և միաբանութեամբ զպիղծ Նեստորիանոսս և զՓաղ-

կեդրնիտս և զայլ հերձուածողս ի մեր սուրբ եկեղեցոյս հալածականս արարաք նզովիւք. և սուրբ և փառաւորընկալ սեղանոյս և կենսատու աւետարանիս և փրկչական սուրբ խաչիս առաջի պայմանեցաք ամենևին հեռանալ ի հաղորդութենէ նոցա. և ոչ լսել բանից նոցա մահաբերից. վասն զի ի հաւատարիմ մարդկանէ լուաք եթէ պիղծ նեստորականք բազումք և ի ձեր աշխարհիդ են բնակեալ. և դուք զդոսա ի սուրբ եկեղեցի ընդունիք և ընդ դոսա հաղորդիք (ոչ) յիշելով ձեր զսրբոյն Գրիգորի զմեծ վաստակ և զջան, որ ի մեր և ի ձեր աշխարհիդ վերայ հաստարակաց, և զսուրբ ծնունդն զոր սրբով աւազանաւն վերստին ծնաք, և զլուսաւոր և զճշմարիտ հաւատն զոր մեք և դուք ընկալաք և այժմ ունիմք. և զոդևոր սէրն զոր ընդ ձեզ ունիմք առաւել քան զամենայնն:

Զայդ հոգ կալաք յանձին հեռացուցանել և ի ձէնջ զչարն որոմանն սերմանս. վասն նորին յուխտէ մերմէ զհաւատարիմ այր զՄատթէոս քահանայն առաքեցաք առ ձեզ, և աղաչեմք զձեզ Քրիստոսիւ Աստուծով մերով, որպէս ցայժըմ լեալ էք ազդ սուրբ, ժողովուրդ սեպհական Տեառն Աստուծոյ. նոյնպէս և այժմ և մինչև ցյաւիտեան դուք զաւակք և ձեր զօրացարուք տեղամբ և կարողութեամբ զօրութեան նորա. և առէք զսպառազինութիւնն Աստուծոյ և զսուրբ

և զճշմարիտ հաւատս զոր ի սրբոյն Գրիգորէ և յայլ հոգեկիր երանելի հարցն ընկալայք, հաստատուն և անշարժ պահեցէք յանձինս ձեր։ Եւ զպիղծ Նեստորիանոսդ և զայլ հերձուածողս որ յաշխարհիդ ձերում են, նոյնպէս ի սրբոյ յեկեղեցւոյ և ի ձեր հաղորդութենէ նզովիւք ի բաց մերժեցէք. և ամենայն ուղղափառաց պատուիրեցէք մի լինել հաղորդ անպաղութեան գործոց նոցա, և մի լսել հրապուրող և չարաթոյն բանից նոցա մահաբերից։ Քանզի զնոսա որոշեաց սուրբ առաքեալն մանկունս անիծից, և զնոցին կորստական վարդապետութիւնն անուանեաց ամպս անջրդիս վարեալս ի մրրկէ ի կորուստ, ծառս գօսս, պտղակորոյս, նիւթս կիզման հրոյն յաւիտենից որք յիրաւի իսկ նզովին. զի նոքա են պղտորիչք եկեղեցւոյ Քրիստոսի Աստուծոյ յայսմոյա ժամանակիս յամենայն տեղիս։

Որք և անուանեցան իսկ ի սրբոյ առաքեալն եղբարք սուտք և մշակք անօրէնութեան և նեռինք եկեալ յաշխարհ. և հրամայեցաւ մեզ ճշմարիտ հաւատացելոցս ի սրբոյ աւետարանչէն ի Յովհաննէ ոչ ընդունիլ զնոսա ի տունս և ոչ ողջունել բանիւ. այլ հեռանալ ամենևին ի նոցանէ որպէս ի թշնամեաց խաչին Քրիստոսի։ Եւ մեք աղօթեմք զի նոյն ինքն սուրբ Երրորդութիւնն խափանեսցէ և նկուն արասցէ զթշնամիս իւր, զհակառակորդսն ճշմարիտ հաւատոյ, և

զօրացուսցէ զպաշտօնեայս և զերկրպագուս առնուան իւրոյ սրբոյ. և եթէ յումեք ի հերձուածողաց գայի զղջումն, և ամենայն կամօք իւրովք գառնայցէ ի սուրբ հաւատս մեր և ոչ խաբէութեամբ՝ նզովեալ գրով զպիղծն Նեստոր և զամենայն հերձուածողս և զԹէոդորետոս և զժողովն Քաղկեդոնի, և ապա ընդունիլ զայնպիսիսն ապաշխարութեամբ. վասն զի զուարն ողորմութեանն Աստուծոյ խոստովանողաց և ապաշխարողաց հանապազ բաց է:

ԻԴ.

Ե թէ յոռում աւուր եղաւ թուականն Հայոց. եւ սուրբ Աստուած՝ որ խաչեցար, սահմանեցար:

Ի չորրորդում ամի հայրապետութեան Տեառն Մովսիսի՝ Հայոց կաթողիկոսի, և ի տաներորդ ամի մարզպանութեան Հայոց Մժէժ Գնունւոյ, մինչ էր կենարարին Թուականն 553 ի լրման երկու հարիւրեկին Անդրէասայ, յորում ամի էր լրումն զատկին ի մարտի ի 25, և սկիզբն բոլորին ի յապրիլի չորն էր՝ ոչ կարացին գնալ ի սկզբանն. քանզի յետ քսան և հնգին ի տասն և երեքն էր ապրիլի. և լինն լրմունք ի միջոցին պակաս գայր. և այնր ազագաւ սկսան շփոթիլ ամենայն տօնք տարւոյն:

Ապա հարկ եղև Թուական Հայոց կարգել զի նովաւ ուղղեսցեն զտարակոյսն զոր և ուղղե-

ցին իսկ ի տան Թուականին ի ձեռն Էաստ ի-մաստնոյ որ կարգեաց զանտարակուսելի օրինակն զհինգհարիւրեկին այլովք իմաստնովք Հայոց։ Արդ՝ ի կարգել Թուականին մեծաւ ժողովով ի Դվին քաղաքի, էր եպիսկոպոս Սիւնեաց Տէր Վրդանէս, և իշխան՝ Տէր Մհէր-Արտաշիր, որք և միաբանեալ ժողովոյն յղարկեցին զիմաստուն վարդապետս և զկատարեալ գիտնականս իւրեանց, որք էին նախաթոռ ի վարդապետան Հայոց. և ուղղեցին զանտարակուսելի տումարն. յորում ամի ինոյն ժողովն հաստատեցին «զտուրբ Աստուած՝ որ խաչեցարն» ընդ դէմ Քաղկեդոնականացն և Նեստորի իմացմանցն։ Յայսմ աւուրս կատարեցաւ խաչիւ մեծ վկայն Քրիստոսի նոր նահատակն և երանելի պարսիկն Մախոժ, որ և ի մկրտութեանն Յիզդբուզիտ անուանեցաւ որ Թարգմանի Աստուածատուր, ի Դվին քաղաքի։ Ընդ սմա և ի սոյն ազգէ Սահակ և Սամուէլ և Յըզըմխուաստ կատարեցան մարտիրոսութեամբ։

ԻԸ

Վախճան Վրդանիսի. եւ յաջորդելն Գրիգորի եւ Քրիստափորի. եւ որ ինչ զոյցք եղեն յաւուրս նոցա։

Յաւուրս Տեառն Վրդանիսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, եկին ոմանք Նեստորականք և Քաղկե-

դոնիկք, և խաբկանօք բնակեցան յաշխարհս Սիսական և յԱղվանս։ Ապա լուեալ Տեառն Յովհաննիսի ընդոստոյց թղթովք և ծանոյց զինչսան որ ընդ յարդիւ ծածկեալ կայր. յորմէ զարհուրեալ Տեառն Վրդանիսի՝ հալածական արար ի վիճակէ իւրմէ. և մեծաւ նզովիւք վակեաց զի մի՛ իշխեսցեն թողացուցանել ի սահմանս իւրեանց. և այնպէս ճշմարիտ վարդապետութեամբ և առաքինի վարուք կացեալ յաթոռն մետրապօլտութեան զամս 23՝ փոխի յաստեացս։ Եւ ապա առնու զաթոռն Տէր Գրիգոր ամս 15 յԱղվանս ձեռնադրեալ. և ապա փառաւորեալն և երանելին Քրիստափոր, ընկալեալ և սա զձեռնադրութիւնն յԱղվանից։ Իսկ յետ վախճանին Մովսիսի լինի տեղապահ ամս 3 Վրդանէս քերթող. և զի ոչ գոյր իշխան Հայոց, այլ յետ Մժէժայ տաճիկ մարզպանք ունէին զՀայս զամս 36. վասն այն խափան լինէր աթոռոյն. և Վարդ Մամիկոնեան՝ որդի Վասակայ, ապստամբեալ էր ի Պարսից և նուաճեալ ընդ Յունօք։

Ապա միաբանեալ ամենայն Հայոց երկուց կողմանցն որ ի Յունաց բաժնին և որ ի Պարսից. և ժողովեալք եպիսկոպոսաց և վանականաց ի Դվին՝ կամեցան կաթողիկոս նստուցանել. և ոչ յաջողեցաւ այն անգամ։ Վասն որոյ եկին ի միաբանութիւն ժողովոյն Քրիստափոր՝ Սիւնեաց մետրապօլիտ, և արարին կանոնս և եդին սահ-

ման եկեղեցւոյ։ Իսկ ի գալ ամին յաւուրս քառասնորդի պահոցն միաբան ժողովին ի Դվին. և նստուցանեն պատրիարք Հայոց յաւուր ողոգոմենի տօնին արմաւենեացն զՏէր Աբրահամ՝ Ռշտունեաց եպիսկոպոս· և բաժանեալ աստ ուրեմն Սիւնեաց աթոռն յօդեցաւ վերստին ի գլուխն պատուական ի սուրբ Գրիգորի աթոռն և ի յաջորդն ի Տէր Աբրահամ։ Բայց զի եղեն յայսմ ժամանակի բազում խռովութիւնք և մեծամեծ յուզմունք ի Հոռոմոց, ի Վրաց, և ի մէջ Հայոց՝ երկպառակութիւնք, բաժանմունք, վէճք, աղմուկք, շփոթմունք, նշկահմունք աստուածային օրինացն, երբեմն վասն Քաղկեդոնի ժողովոյն. երբեմն վասն ինն դասուց եկեղեցւոյ, երբեմն Վրաց մեծաբանութիւն և թևակոխումն ի վերայ Աղվանից. վասն որոյ և դառնալ Աղվանից ի Հայոց, հպարտանալ և Մարդպետական եպիսկոպոսին և անկումն ի պատուոյն։ Սակս որոյ բազում ժողով և ուժեղ քննութիւն աստուածային կտակարանաց. և հազիւ հազ ուրեմն հաւանութիւն Հայոց և խաղաղութիւն եկեղեցւոյ. զորոյ զորպիսութիւն անցից և ըզպատճառս բանիցն, որպէս վերագոյն խոստացաք, բացայայտեցից սակաւուք, որպէս հաւաստի ուսաք ի սրբոյն Ովհաննէսէ՝ Սեբաստացւոց եպիսկոպոսէ, և ի սրբոյն Սաղոմոնի՝ Մաքենոցաց առաջնորդի թղթոյն, որ կարգեալ է յԱղ-

վանից պատմութեանն ի միջին հատորն, և ի սրբոյն Մաշտոցի թղթոյն, զոր գրեալ է ի Տեառն Գէորգեայ կաթողիկոսի խնդրոյն: Յայսց երից հատատատապատում և ճշմարտախոհ վարդապետացս ցուցից քեզ զամենայն զոր խոստացայ:

ԻԶ

Յաղագս միաբանելոյն Հայոց. եւ միապետելոյն Տեառն Աբրահամու. եւ վասն մեծ ժողովոյն որ ի Դվին եւ վասն ինն կարգաց եկեղեցւոյ. եւ վասն վրաց բաժանմանն զրոյցք յոլովք եւ պիտանիք զոր հաւաքեցաք ի հին ճամակաց եւ յմուխտանէսի գրոց. եւ սակս Աղվանից արեպիսկոպոսութեան եւ Սիւնեաց մետրապոլիտութեանն. եւ վասն Սիւնեաց խաչին թէ է՛ր պատճառ տուաւ:

Յամս Խոսրովու՝ արքայից արքայի, և Յուստինոսի՝ ինքնակալ կայսեր, յիշխանութեանն Սմբատայ Բագրատունւոյ, որ կոչեցաւ Վրկան աշխարհի Մարզպան, ի տեղապահութեան աթոռոյն Հայոց Վրդանիսի քերթողի, և տէրութեան Սիւնեաց Սահակայ իշխանի, հրամանաւ Սմբատայ և կամօք այլոց իշխանաց Հայոց ժողովեցան եպիսկոպոսք Հայոց ի Դվին. ածան և նոքա որ ի բաժնին Յունաց կային հակառակութեամբ որոց գլուխ Մանասէ՝ Բասենոյ եպիսկոպոս, և Քրիստափոր՝ Սիւնեաց, և եդին ուխտ միաբանութեան: Յորոց խնդրեաց ձեռնարկ Սմբատ՝ վըր-

կանի մարզպան, և առեալ կնքեաց մատանեաւ և եդ ի սուրբ եկեղեցւոջն: Եւ ապա ընտրեալ վերին ազգմամբն աւետարանին վիճակաւ զԱբրահամ՝ զՊիշտունեաց եպիսկոպոս, կացուցանեն կաթողիկոս Հայոց: Յայնմ ժամանակի բորբոքեր չարահնար աղանդն Քազկեդոնի ի ձեռն բուռն թագաւորաց Յունաց. և կամեր իբրև զքաղցկեղ ճարակել զաշխարհս Հայոց և զԱսորւոց ուղղափառաց, ևս առաւել ի թագաւորելն Մօրկայ: Եւ դեսպանք և հրաւիրակք Հոռոմոց երբեք ոչ դադարէին յերթևեկութեանց, բազում անգամ հրամանս տային ժողովոյ, մի անգամ ի Կոստանդնուպոլիս կոչեցին և երիցս անգամ ի Թէոդուպոլիս. և դէմ յանդիման և ուժգին մեծամեծ հարցափորձութիւնք լինէին. և էր յայնմ ժամանակի Հայաստանի դպրութիւնքս նորոգ և շէն. և յոյն լեզուին և դպրութեանն յոյժ հմուտք և տեղեակք: Եւ որպէս հարցանէինն նոքա՝ առաւել ևս պատասխանի լսէին. սակս որոյ և ոմանք զրպարտեն զսուրբ հայրն Յովհան մայրագոմեցի եթէ նա ասաց եթէ Հայք պարտաւորեցան ի հաւատոյ մասին. որ և քաւ և մի լիցի. այլ ցուցանէ մեզ զատոյգն Սաղոմոն՝ հարանց հայր սուրբ ուխտին Մաքենոցաց և առաջնորդ, (որ և հարցեալ) ի կաթողիկոսէ Հայոց զպատճառս զայս, և նա գրով աւանդեաց այսպէս եթէ՝ Յովհան վկայեաց թէ Հայք ի հա-

ւատոյ մասին անպարտելի ճնացին. այլ յայսմ մասին յոյժ պարտեալք և ըմբերանեալք գտան, զի ասացին Հոռոմք եթէ՝ կարգաւորեաց Աստուած զսուրբ եկեղեցի լինն դասուք ըստ վերնոցն, և ըստ չորից աւետարանչացն մեծախորհուրդ դիտուածոյ չորս միայն սահմանեաց աթոռս ի վերայ երկրի (և) պատրիարքունս, յորոց վերայ հանգչի նոյն լինքն Բանն Աստուած՝ թագաւորն անվախճան. և ամենայն աշխարհ հնազանդիմք այսց աթոռոց. և ի ներքոյ սոցա գեղեցիկս կարգաւորեալ են ուխտն դասք եկեղեցւոյ: Արդ՝ ո՞ր է ձեր աթոռն և պատրիարքն ընդ որով դասեալ է արքեպիսկոպոսն և այլն: կամ ցուցէք զձերն, և կամ թէ ոչ ունիք՝ հնազանդեցէք միւսմն ի չորից աթոռոցս, ապա թէ ոչ՝ կատարեալ հերձուածող էք և թեբի յամենայն շնորհս աստուածայինս:

Ահա այսու բանիւս յոյժ պարտեալ գտան Հայք. և թէպէտ զառաջնոցն եդեալ սահմանս յիշատակէին. զի ցայն վայր անյայտ և ծածուկ էր լեալ ի նոցանէ. և նուազեալ խակ էր. և անփոյթ եղեալ յաթոռակալացն: Իսկ ապա դարձեալ այսբէն Հայոց՝ խորհուրդ ի մէջ առին եպիսկոպոսքն իշխանօքն և աւագ տանուտէրօքն հնարէին ելս հնարից տարակուսանաց: Եւ հրաման հանեալ ընդ ամենայն աշխարհ՝ արարին մեծ աշխարհաժողով ի թագաւորութեան Պարսից Ապրվէզ Խոսրովու

(Ա), և Հոռոմոց՝ Մօրկայ։ Եւ էր ընդ նոսա գահերէց և գահապլուխ ժողովոյն Դաւիթ՝ Սիւնեաց եպիսկոպոս, և Մանասէ՝ Բասենոյ. զի Քրիստափոր յետ 10 ամի եպիսկոպոսութեանն իւր վախճանեալ էր. և նստեալ ի տեղին Տէր Դաւիթ յԱբրահամայ կաթողիկոսէ ձեռնադրեալ։

Սոքա նախ հաստատեցին զուղղափառ հաւատս երից սուրբ ժողովոցն, միաբան նզովեցին զՔաղկեդոնին և զԼևոնին. և ամենեքեան ձեռադրեցին զնամակն հաւատոյ և կնքեցին մատանեաւ Տեառն Աբրահամու և այլոց եպիսկոպոսաց և իշխանացն։ Եւ ապա համարձակութիւն առեալ այսու պատճառաւ. զի ի թագաւորելն Յուստինոսի ժողովեալ նորա զմեծամեծ աթոռակալս և զսուրբ հարս՝ հրաման խնդրէ, և նոքօք հանդերձ փոխէ զաթոռն Յովհաննու աւետարանչի յԵփեսոսէ ի Կոստանդնուպոլիս. և բունն մնաց ի տեղին, և զԱնտիոքայն յերուսաղէմ զՄատթէոսի աւետարանչին։ Եւ յայսմանէ համարձակեալ ապա ամենայն իշխեցողք և մեծամիտք հպարտացան, և ուր առաքեալ վախճանեալ էր՝ զամենեցուն աթոռս ինքնագլուխս արարին. և պատրիարք խոստովանէին։ Յայսմանէ ուսեալ և մերոցս կացուցանեն պատրիարք Հայոց զԱբրահամ կաթողիկոս, և զՍղվանիցն՝ արքեպիսկոպոս. և զՎրացն՝ մետրապոլիտ։ Եւ զի Սիւնիք, հրամանաւ Պետրոսի, ժամանակս ինչ յետս էին կացեալ ի հա-

կառակ աթոռոցն, և այժմ միաբանեալ նորոգ։ Ապա վրաց մեծաբանեալ ի վերայ Աղվանից՝ ոչ կամէին ի ներքոյ լինել գասու. այլ զվիրս յառաջահաւատ կարդային քան զԱղվանս։ Եւ էր նոցա առաջնորդ Կիւրիոն, և սա Նեստորի աղանդովն խմորեալ էր ի ծածուկ և ոչ կամէր յայտնել. այլ ժամու և պատճառի ծնայր։ Եւ ունէր ընդ ինքեան խուժիկ եպիսկոպոս մի, զոր ինքն ձեռնադրեաց։ Եւ էր լեալ սորա փակակալ սուրբ կաթողիկէին ի Վաղարշապատ. և գնացեալ էր ի սարկաւագութեանն ի Կողոնիա և բնակեալ առ երկաբնակ երիցու մի և ներկեալ յաղանդն։

Ապա ի խնդրել վրաց ինքեանց առաջնորդ ի Մովսէսէ՝ կաթողիկոսէ Հայոց, ձեռնադրեաց զկարապետ նեռինն զԿիւրիոն և ետ նոցա։ Իբրև լուան Աղվանք զվրաց մեծաբանութիւնն՝ երևեցուցին և նոքա զառաքեալ ումն եկեալ կանխագոյն քան ի Հայս յԱղվանս Եղիշէ անուն, և շինեալ եկեղեցի և ձեռնադրեալ եպիսկոպոս։ Դարձան և նոքա առ ժամանակ մի ի Հայոց. ճեղքեցաւ և վրացն բաղբաղելով զԱղվանս զի ի խնդրելն զարքեպիսկոպոսութիւն յԱբրահամէ՝ սատեաց նմա։ Եւ թէպէտ ի ձեռն Պետրոսի եպիսկոպոսի բազում անգամ մաղթեաց, և շնորհէր զխնդրելին, ոչ հաւանեցաւ. ապա բանադրեալ եղև յԱբրահամէ։ Որոյ առեալ զկնկուղն և զփիլոնն՝ ետ Պետրոս և ասէ «ձերդ ցձեզ լիցի».

և յետոյ երկուցեալ յուղարկեաց ի ծածուկ զկնի և ետ սպանանել զՊետրոս երկու սարկաւագօք ի լերինն Կանդրաց: Բայց ապանդ սորա յայտնեցաւ ի Մովսիսէ՝ Յուբաւայ եպիսկոպոսէ, որ է Գաչեանք, զորոյ զթէմն այժմ ունի Հախպատ:

Իսկ մինչ այս այսպէս լինէր՝ եռուն զմետրապօլտութիւնն Մարդպետական եպիսկոպոսին Թէոդորոսի. ապա և նորա հպարտացեալ խնդրէր եպիսկոպոսունս ընդ ձեռամբ լինել. յորմէ երկուցեալ Հայոց ասէին մի գուցէ և այլ իմն գունակ բաժանումն լիցի. առին ի նմանէ և զայն. և տեսին զետրոսն Սիւնեաց քաջ յուսմունս և ուղղափառս և երևելիս յամենայն Հայաստանեայս, և յառաջին հարցն նոյն պատուով կոչեցեալ. պատշաճ համարեցան միաբան ժողովով տալ նոցա զմետրապօլտութիւնն, առնել և բարձակից և սեղանակից կաթողիկոսի աթոռով և բարձու ի միասին բազմել: Կացուցանեն ապա զՊաւլիթ մետրապօլիտ Սիւնեաց և տան նմա զխաչանիշ նշանն զառաջեաւ կրել հանապազ, և ոչ քարոզել զկաթողիկոսն Հայոց յիւր եկեղեցիսն ի վերայ սրբոյ սեղանոյն. այլ միայն զիւրն անուն: Եւ ի թըղթադրութեանն ոչ գրեն Սիւնիք եպիսկոպոսապետ կամ այլ անուամբ զկաթողիկոսն. այլ տէրունիք ի Սիւնիք Աստուածապատիւ և հոգևոր Տէր զրէին. և նոքա՝ ի ծառայէ. բայց (ի սակս) Նղիայի կաթողիկոսի խակագործութեանն յերի-

ցու. վանս մինչ գնայր ի հնազանդել զԱղվանս՝ ոչ զրեցին սոքա ի ծառայէ և նոքա՝ զհոգևորն։

Ահա սակս նախանձուն Հոռոմոց, որ չանային փոքրկացուցանել զԹադդէոսի վիճակն և շինուցանել զսրբոյն Գրիգորի աթոռն, այսպէս զեռեղեալ սահմանեցին զինն պասս եկեղեցւոյ, Հայոցն՝ պատրիարք. Աղվանից՝ արքեպիսկոպոսութիւն. Սիւնեացն՝ մետրապոլիտ։ Բայց Յովհաննէս պատմագիր յիշէ և զՄելիտինոյն և զԵբասոտիայն մետրապոլիտս գոլ։ Եւ զայլ աշխարհս թողին յառաջին սովորութեանն զի մի ամբոխ լինէ լինիցի։ Այլ և խնդրեցին ի Սիւնեաց մի ինչ աւելի իրս ժառել, այսինքն եպիսկոպոս ունել ընդ ինքեամբ և ձեռնադրել. այլ միայն բազմականաւն և խաչիւն մեծարեցին, և նախաթոռ կոչեցին պատրիարքին, որ է պռոտօֆրօնտէս. և անուանեցին մետրապոլիտ։ Եւ այս կրկին անգամ եղև շնորհեալ նոցա զայս պատիւ և զնշան։ Առաջին՝ յԵսվաղէն՝ թագաւորէն Աղվանից, և երկրորդ՝ ի ժողովոյն Հայոց ի Տէր Աբրահամէ։

Եւ արդ՝ ով ընթերցասէր՝ զայս փոքր ի շատէ համառօտիւք ցուցի քեզ զբաւականն միայն. և թէ զլիովն և զերկայնն կամիս լսել՝ ընթերցիր զՈւխտանէսն և զԱղվանից պատմութիւնն և ի գիրս թղթոցն տեղեկացիր, ևս և զՏեառն Մաշտոցին որ ի խնդրոյ Գէորգեայ՝ Հայոց կաթողիկոսի, գրեալ է։ Ես յետ բազում ընթերց-

ման տեսայ այլ և այլ զգրեալսն. և բազում ջանիւ գտայ զտոյդն և կարգեցի ասա. վասն այն ոչ գնկարագիրը նոցին բանիցն եղի, այլ զբնութիւնն բանին ամբողջ ունելով. և զկարգն ուղիղ շարայարեցի ասացն. և դու ամենայն ողջմտութեամբ ընկալ և մի՛ ինչ երկբայիր։

ԻՀ

Վասն ինն դասուց եկեղեցւոյ թէ ո՛րք են եւ ո՛րպէս վարին։

Արդ՝ ի զալ բանին Աստուծոյ և անճառ մարդեղութեամբ յաղագս զբնութիւնս մարդկային ի գերութենէ նախաչարին, լուսաւորեալ երկնահրաւէր աւետարանաւն. և վերստին ծնընդեամբ աւազանին որդիացոյց Հօրն երկնաւորի. և զանճառելին հրեղինաց և հողեղինաց շնորհս եառ և պարգևեաց առաւտապէս մարդկան զմարմին իւր և զարիւն ի կերակուր, որով միացեալք լինին ընդ Աստուած և աստուածացեալք։ Եւ կոչէ զազգս մարդկան յերկնաւոր քահանայութիւնն տալով իշխանութիւն աստուածաբար կապել և արձակել մինչ յերկինս և մինչ յերկրի. և անտանելի շնորհօք և անպատում փառօք զարդարեաց զբնութիւնս մեր։ Վասն որոյ կառուցեալ հաստատեաց երկին ի վերայ երկրի՝ զսուրբ եկեղեցի. զի մինչ երկրածինքս երկնաւոր եղաք կենդանի, ապա հարկ էր երկնաւորիս ի մէջ

երկրի կայանալ, և ընդ հրաբուն սեռիցն ճախրել և ճոխապէս ճեմել ի մշանջենաւոր փառաբանութեանն Աստուծոյ։

Եւ արդ՝ այս այսպէս լինէր երկին ի վերայ երկրի կառուցեալ. և երկնաւորք զերկրաւորքս ի նմա կացուցեալ. ապա պատշաճ էր երկնաւորացն դասու և սահմանաւ կարգաւորել ի մէջ եկեղեցւոյ ըստ երից քահանայապետութեանցն և ինն դասուցն, զոր Հոգին Աստուած յօրինեալ սըրնօրինեաց աստուածային տեսչութեամբն ի ձեռն առաքելոց և հայրապետաց, և որ ունի օրինակ դասս եկեղեցւոյ որք անընդմիջաբար հուպ են յաստուածայինն՝ հայրապետք, որ կոչին պատրիարքք որք բազմեալ կան ի վերայ չորից աթոռոց աւետարանչացն. և ունին սոքա ձև զառաքելականն բոլոր նախորատամբ զգեստաւորիլ և արկանել եմիփորոն հինգ կրկին. և գործ է նոցա ձեռնադրել արքեպիսկոպոս ընդ չորս բաժինս աշխարհի. և հրաման տան աշխարհագրումար ժողովոց։ Երկրորդ դաս եկեղեցւոց՝ արքեպիսկոպոսք, այսինքն եպիսկոպոսապետք որ կոչին կաթողիկոսք և սքեմ է նոցա պճղնաւոր փիլոն որ է բազմախաչն. և ի վերայ եմիփորոն չորեքկին. և գործ է նոցա ձեռնադրել մետրապօլիտս և օրհնել դաստուածագործ մեռոնն։ Իսկ ի վախճանել պատրիարքին երեք արքեպիսկոպոսք այլովք եկեղեցական դասուք ձեռնա-

դրեն պատրիարք։ Երրորդ դաս եկեղեցւոյ՝ մետրապօլիտք, որ մայրաքաղաքաց և աւագադոյն աթոռոցն լինին տեսուչք։ Եւ սքեմ է նոցա նափորա. և որքան եպիսկոպոս ընդ ձեռամբ ունի, նոյն թուովն ի վերայ խաչ թուխ կատարեայ, և եմիփորոն երեքկին. և գործ է նոցա ձեռնադրել եպիսկոպոս և օրհնել զձէթն որ յաւելուածով ունի եկեղեցի ի պէտս երախայից և հիւանդաց, և թէ խառնել կամին յառաքելական ձէթն որ է սուրբ մեռոն։ Եւ թէ հարկ լինի կամ վանն ոչ գոլոյ պատրիարքի կամ վանն այլ մեծագոյն պատճառի, հրամանաւ և կամօք մեծ աթոռոյն ձեռնադրեն երեք մետրապօլիտք այլովք եկեղեցական դասուք զարքեպիսկոպոսն իւրեանց։ Զորրորդ դաս եկեղեցւոյ՝ եպիսկոպոսք, որք կոչին այցելուք, և իշխեն ի վերայ դասառաց. և սքեմ է նոցա նափորա անխաչ սոսկ և եմիփորոն կրկին միայն. և գործ է նոցա ձեռնադրել երիցսունս և սարկաւագունս և օրհնել եկեղեցի և օծանել սեղան և աւազան. բայց զմեռոնն ի մեծագոյն աթոռոյն առնու յիւրմէ մետրապօլտէն. և մետրապօլիտն՝ յիւրմէ արքեպիսկոպոսէն. զի իբր աստիճանօք ի վերուստ իջանի աստուածային շնորհն սկսեալ ի պատրիարքէն և գայ, հասանէ մինչ ի բնաւին վերջինքն որք են ժողովրդականք։ Հինգերորդ դաս եկեղեցւոյ՝ երիցսունք որք են քահանայք. և սքեմ է նոցա շուր-

ջառ և զերկու ուսովքն ուրար, այսինքն վա-
կեղն. և բաճկոնաւ իշխեն կալ ի վերայ բեմին.
և գործ է նոցա զկենարարն և զփրկականն կա-
տարել և բաշխել արժանաւորացն, առնել մկըր-
տութիւն և օրհնել խաչ. և որ այլ ինչ կարգ է
քրիստոնէից. առնուլ խոստովանութիւն կատա-
րելոցն և թողութիւն տալ մեղաց. և զիւր հօտն
կարող է կապել և արձակել. բայց զմեռոն ոչ
իշխեն շարժել. այլ զանկատար ձէթն զոր մեռ-
րապօլիտքն և եպիսկոպոսքն օրհնեն, զի մեռոն
որ է առաքելական ձէթ, եպիսկոպոսն միայն իշ-
խէ շարժել. և ի տարւոջ միանգամ շրջելով ի
գաւառն օծանէ զձեռնադրեալսն ի քահանայից.
կարէ և առնել զմանկունս անագանոս և փսաղ-
տոս, և տայ կարգ ապաշխարողաց և սարկաւա-
գուհեաց: վեցերորդ դաս եկեղեցւոյ՝ սարկաւա-
գունք որք են սպասաւորք. և յայլ լեզու դիա-
կոնք կոչին. և զգեստ է նոցա հալաւ ագանիլ,
հոլանի կալ և փակեղն միայն զահեակ ուսովք-
քըն և բացաւ գլխով սպասաւորել սրբոյ բեմին
և սեղանոյն և քահանայիցն. և գործ է նոցա ա-
ւետարան կարդալ և քարոզել, խունկ արկանել
և սպասաւորել սրբոյ խորհրդոյն. կրել զսկին և
զմաղզմայն: Իսկ ի կանանց սարկաւագուհիք լի-
նին զի ի կանանց վանս քարոզեն. զգեստ է նո-
ցա հաւատաւորացն, փիլիոն արկանել և ի ճա-
կատն խաչ ունել և փոքրիկ ուրարն յաջմէ ի ներ-

քոյ բազկին զհանդերձէն կամ զգօտւոյն ի կախ ունելով ելանէ ի բեմն և քարոզէ և ընթեռնու աւետարան ոչ յամբոխին ի վերայ բեմին. այլ առանձինն կամ յանկեան ուրեք. բայց ի սուրբ խորհրդոյն սպասաւորութիւն բնաւ մի հպեսցի որպէս արու սարկաւագունքն։ Եօթներորդ դաս եկեղեցւոյ՝ դպիրք որք են կէս սարկաւագունք, և ունին զգեստ զսարկաւագաց. բայց ուրար յահեակ բազուկն ի վերայ արմկանն, և կան հոլանի գօտեվոյծ. և գործ է նոցա ընթեռնուլ զաւրաքելական գրեանս յեկեղեցին, և սպասաւորել տաճարին, կրել մոմեղէնս և զխաչագլուխ վարոցն, և պահել զդրունս եկեղեցւոյն։ Ութերորդ դաս եկեղեցւոյ՝ անագանոսք որ կոչին գրակարդացք. ունին զգեստ զնոյն և աղաբողոն, բայց ուրար ոչ. և արտաքոյ եկեղեցւոյն զգենուն մեկնակ կտաւիս. և կան հոլանի. և գործ է նոցա ընթեռնուլ մարգարէական և վարդապետական գրեանս։ Իններորդ դաս եկեղեցւոյ՝ փսաղտոսք որք են սաղմոսերգուք. և զգեստ և սքեմ է նոցա նոյն. և գործ է սաղմոսել և եղանակօք պաշտել յեկեղեցին զձայնաւորս և զարուեստիս ալէլուիա և մեսեդի և որ ինչ այլ ինչ են։

Ահա այս են իննդասք եկեղեցւոյ, զոր Հոգին սուրբ կարգեալ սահմանեաց ի ձեռն սուրբ առաքելոցն և նոցին հետևող սուրբ հայրապետացն, զոր պարտ է եկեղեցւոյ լրիւ ունել և

անթերի. զի ամենայնիւ ամենևին ոչ է հնար պակաս գոլ սոցա. ապա թէ պակաս լինի, ոչ հաճի Աստուած. և նոյն գունակ պակաս լինի և շնորհքն աստուածեղէն: Քանզի իմա զեկեղեցի որպէս բոլոր անդամք մարմնոյ մարդոյ յօդեալ ի գլուխն Քրիստոս: Արդ՝ եթէ պակաս գոյ յանդամոց եկեղեցւոյ, թէև ի յոյժ փոքրագունից, խեղ է մարմին նորա. և խեղ մարմնոյ ոչ հաճի Քրիստոս գլուխ լինել: Եւ դու եղբայր՝ քննեա և աճա զորքանութիւն վնասուն: Բայց այս ամենայն դասք եկեղեցւոյ բովանդակ միաբանեալ՝ ապա կարեն ձեռնադրել զպատրիարքն:

ԻԸ

Վասն Մաթեւոսեաղայի՝ Սիւնեաց եպիսկոպոսի. եւ վասն ժողովոյն Կարնոյ որ ի Հերակլեայ. եւ վասն Եզրի խմորելոյն յաղանդն Քաղկեդոնի:

Երանեալ հայրն և յոգնապատիժ ճգնաւորն Տէր Դաւիթ կացեալ յաթոռ մեծարգելութեան Սիւնեաց ամս 27՝ վախճանի: Եւ ունէր զաթոռն տեղապահութեամբ մեծ քերթողն և անյաղթ փիլիսոփայն Մաթեւոսեաղայ: Այս Մաթեւոսեաղայ էր անեալ ամենայն պարկեշտութեամբ և զարգացեալ ամենայն առաքինութեամբ. ուսեալ զքերթողութիւնն և վարժեալ ճարտասանականաւն. հմտացեալ փիլիսոփայական արհեստից, լի ամենայն իմաստութեամբ և կատարեալ գիտու-

թեամբ։ Եւ զի էր մեծարոյ և նախաթոռ ի վարդապետսն Հայոց աթոռն Սիւնեաց. զի էր ի վաղնջուց հետէ հրամայեալ զթարգմանութիւնն և զմեկնողութիւնն նոցա ունել ի սրբոցն Սահակայ և Մեսրոբայ, և զլուխ կալ և հրամանատար ամենայն վարդապետաց Հայոց։ Վասն որոյ տեսեալ յայնմ ժամանակի պայծառացեալ իմաստասէրդ ճառագայթիւք զերանելին Մաթուսաղայ, վարժեալ և սնեալ ի նոյն տան՝ կացուցանեն յաստիճան վարդապետութեան եկեղեցւոյ. և նըստուցանեն զլուխ ամենայն վարդապետացն ի վերայ բարձր և ահարկու ամբիոնի բաբունարանին, յորմէ բղխեր գետօրէն աստուածային իմաստութիւնն և փարթամացուցանէր զամենայն աշակերտեալսն։

Յայսմ համբաւոյ հրաշացեալ սուրբ պատրիարքն Կոմիտաս՝ զանց արարեալ զամենայն վարդապետօք կաթողիկոսարանին, նաև զվարդապետարանաւն Հայոց որ յԱրշարունիսն էր, յորում զմանկունսն ժողովեալ էին ճարտարք և գիտունք Հայոց, այն որ յերասխաձորին է, զոր այժմ Վարդիկ հայր կոչեն, յղէ առ քերթողն Սիւնեաց Մաթուսաղայ զիւր ձեռասուն համբակն, զոր մեծափափագ սիրով անուցանէր սրբութեամբ զԷդեսիոս՝ եղբօրորդի իւր։ Զոր առեալ նորա՝ մեծաւ. զգուշութեամբ ուսոյց և հասոյց ի գլուխ

կատարման գիտութեան զարդարեալ տեսակա-
նաւն և գործականաւն։

Ապա վախճանեալ Տէր Կոմիտաս՝ պատրիարք
Հայոց, դնի ի տապանի յիւրում շինեալ եկեղե-
ցւոջն մերձ հանգստարանի սրբոյն Հռիփսիմեայ.
և նստի յաթոռն Տէր Քրիստափոր ի յազատ տա-
նէ ամս 3. ապա ետ սորա խաւարաբերն եկե-
ղեցւոյ Եզր՝ ամս 10 որ էր ի Նիգ գաւառէ, ի
Փառաժնակերտ գեղջէ։ Ապա յերրորդ ամի կա-
թողիկոսութեան սորա, մինչ վախճանեալ էր
Դաւիթ Սահառունի. և առեալ զմարզպանութիւնն
Հայոց Թէոդորոս Ռշտունի. հրաման հանեալ Հե-
բակլեայ կայսեր ընդ աշխարհս Հայոց և Սասր-
ւոց գալ ժողովիլ ի Կարնոյ քաղաք վասն քննու-
թեան հաւատոյ։ Եւ ինքն իսկ առեալ ընդ ինք-
եան զճարտարսն Յունաց՝ եկն անդ։ Յորհուրդ
արարեալ ապա իշխանին Թէոդորոսի Ռշտունւոյ
այլովք նախարարօք Հայոց ընդ կաթողիկոսին
Եզրի, և ասեն «մեք երթամք փութապէս ի ծա-
ռայութիւն արքայի, դու ընտրեա զգիտունս աղ-
գիս, և եպիսկոպոսօք Հայոց եկ ի ժողովն. բայց
մի՛ լիցի քեզ շարժիլ ի տեղւոյս առանց Մաթու-
սաղայի Սիւնեցւոյ և Յովհաննու մայրագոմեցւոյ,
մի՛ գուցէ և փլուցանէ չարն զգեղեցիկ շինուածս
հաւատոյս մերոյ. ահա ոմն Տէր կաթողիկոս՝ օր
մարտի և յաղթութեան, ահա օր փրկութեան և
ժամանակ ընդունելի. պնդեա զմէջս քո իբրև

այր կատարեալ, սպառազինեա զքեզ ամբուխեամբ հաւատոյ զի մի ի յունական հանդիսին թուլացեալ պարտիցիս ի ճարտար խաբողացն, և կողոպտեալ զրկիցիմք մեք յուղղափառ հաւատոյս»:

Ապա յղեալ կաթողիկոսին հրաւիրակս ի պատուաւոր արանց Մաթուսաղայի, և ծանուցանէ նմա զեկեալ, հասեալ վտանդն. և կոչէ զի ի միասին հոգասցեն զարժանն: Իսկ նորա ոչ կամեցեալ խափան ածել վարժարանին և իւրոյ մեծամեծ ճգանցն զցայգ և զցերեկ՝ ոչ գնաց: Ապա կրկին անգամ հարկէ գնա գնալ. և նորա ոչ առեալ յանձն պատճառելով զակարութիւն մարմնոյ՝ արձակէ առ նա գնախաւսացեալն Թէոդորոս՝ աշակերտ իւր, եղբօրորդի Կոմիտասայ. և գրէ թուղթ վասն հաւատոյ որ է ի տօնանամակին, զոր և ասէն կարգեցաք, թէ և այդու օրինակաւ խօսիցիք. և աղաչէ անմեղադիր լինել վասն չերթալոյն. ասէ «դուք ինքնին գիտուն էք, և ընդ ձեզ ունիք զաշխարհալոյս վարդապետդ գՅովհան. և այլ գիտունք և ճարտարք յոլով կան առ ձեզ. և ի մեզնէ (ի մէնջ) յուղարկեցաւ մեր աշակերտդ Թէոդորոս, այդ բաւականասցի»:

Իսկ Եզրի ոչ առեալ ընդ իւր գՅովհան. այլ համարձակեալ ի Թէոդորոս՝ գնայ ի ժողովն առ Հերակլ. ապա հարցեալ ընդ նա Հերակլեայ

եթէ ընդէ՞ր ոչ միաբանիք ընդ մեզ ի հաւատս. ասէ Եղր «բարերար արքայ՝ եթէ կամիս, հնձատ է այդ, միայն հրաժարիր ի Բաղկեդոնի ժողովոյն և ի Լևոնի տօմարոյն, և մեք միաբան եմք»: Ապա առեալ թագաւորին զնամակն հաւատոյ ժողովոյն Բաղկեդոնի՝ դնէ ի վերայ սուրբ խաչին որ ընդ ինքեան ունէր և ասէ «ահա Տէր կաթողիկոս՝ ա՛ռ, ընթացիր և քննեա՛ եթէ գոյ ի դմա արատ կամ թիւրութիւն ինչ՝ ցոյց ինձ. և ես զամենայն Հոռոմս ի քոյդ դարձուցանեմ դաւանութիւն, և այրեմ զթուղթդ. ապա թէ ոչ՝ հաւանեցէ՛ք և դուք մեզ»: Առեալ կաթողիկոսին զթուղթն տարաւ յիջևանս իւր, և քննեցին զաւուրս երիս, և չկարացին վերահասու լինել ծածուկ և անյայտ աղանդոյ նորա. դնացին առ թագաւորն և ասեն «արքայ՝ յաւիտեան կեաց. ոչ գտաք ի սմա թիւր. այլ ամենայնիւ հաւատացեալ է հարցն սրբոց ուղղափառ դաւանութեան». ասէ թագաւորն «հաւա՞ն էք այժմ մեզ». ասէ կաթողիկոսն «յայսմ մասին հաւան եմք. բայց զայն ոչ ընդունիմք զի ձեր եկեղեցականքն համարձակ են ի պոռնկութիւն և յայլ պղծութիւն. և հաղորդին օրինաց անխտիր». ասէ թագաւորն» մեր բանս վասն հաւատոյ է և ոչ վասն գործոց քննութեան. դուք Հայքդ ունիք զանբնական պղծութիւնս ընդ արուս և ընդ անասունս և այլս յոլով, բարձէ՛ք դուք զայն ի Հայոց, բառնամ և

Ես գայդ ի Հռոմոց. զբոզանոցն և զմուճին Քաղկեդոնի ժողովն չէ կարզեալ, զոր յիշէքդ այժմ. վասն այն եղին իշխանք զի մի այլանդակ չարիք երևեսցին»:

Ել կաթողիկոսն յերեսաց թագաւորին անպատասխանի. և խորհի ընդ ասպետն և ընդ այլ իշխանսն եթէ զինչ արասցեն. ասէ «ոչ ինչ զբատանեմք պատճառ»: Ուժոռեալ ասպետին ասէ ցասմամբ «ոչ ասացի քեզ եթէ առանց Մաթուսաղայի և Յովհաննու մի՛ գար ի ժողովս. ահա քո տգիտութեամբ կորուսեր զմեզ»: Ասէ Եզր «Մաթուսաղայ ոչ եկն. և Յովհան զեկեղեցին և զկաթողիկոսարանն ոչ կամեցաւ թողուլ. և ամենեքեան ասացին եթէ մինչ Մաթուսաղայի աշակերտ ի հետս է, ոչ է կարիս մեզ այլ ոք, դա բաւական է»: Սկսաւ խօսիլ Թէոդորոս և ասէ «ընդէ՞ր վիճիք և տրամեալ էք. ոչ գոյ ի նոսա թիւրութիւն ինչ վասն հաւատոյ. այլ մի եմք մեք և նոքա, և նոքա բուն արմատք են, և մեք ոստք մի ի նոցանէ բուսեալ և առեալ զհաւատս և զամենայն կարգ քրիստոնէութեան. ոչ է պարտ ապստամբել ի նոցանէ և խլիլ յարմատոյն մեր. այլ մեք կրսերագոյնքս հնազանդիմք երիցագոյն հրամանաց նոցին. լիցի մի հօտ և մի հովիւ»:

Այսու բանիւքս մակարդեալ ի ժամուն զմիտս իշխանին և եպիսկոպոսացն. և զի Եզր ակն ունէր մարմնաւոր փառաց և ապահութեան յարքայէն,

և միաք իւր թուլացեալ էին ի ճշմարտութենէն, միայն ակն ածէը յիշխանացն և յեպիսկոպոսացն իւրովի հաւանել: Իսկ մինչ լուան ի Թէոդորոսէ զայն՝ գնացին միաբան առ թագաւորն և յանձն առին զՔաղկեդոնին, արարին պատարագ և հաքորդեցան միմեանց, և եառն ձեռնարկ միաբանութեան արքայի: Ընդրեցին և զՔաղկեդոնին զոր եւ թագաւորն ոսկեգիր մատաղթաւ պարգև եզրի զերրորդ մասն գիւղաքաղաքին Կողբայ և զաղան բովանդակ: Ո՛վ անմիտ և չար վաճառին: Եւ այնպէս մեծամեծ վաճառօք և երևելի պարգևօք հրաժարեալք յարքայէն՝ դարձան ի Դվին կապուտաք, կողոպուտաք ի ճշմարիտ հաւատոյն: Եւ անդ կամեցան ժողովով հաստատել զնոր օրէնսն զոր առին. որում ոչ հաւանեալ Յովհաննու Մայրագոմեցւոյ՝ անարգեալ և հալածեալ եղև յեզրայ. որ և ասէը «յիրաւի կոչեցար եզր զի եզը և վախճան եղեր հաւատոյ ուղղափառութեան»: Եկն և Մաթուսաղայ ի Սիւնեաց. և յոյժ որոմեցաւ ընդ եղեալ չարիսն. բայց ի ժամուն ափիբերան եղև զի յիւր աշակերտէն էր բուսեալ չարն:

Իսկ ժողովոյն և Եզրի բազում ողոքանօք պարտեալ զմիտս նորա՝ ածին ի հաւանութիւն ձեռնադրել եպիսկոպոս Սիւնեաց, և արարին իսկ. և մեծաւ պատուով արձակեցին յաթոռն իւր և ի վիճակ: Որ և եկեալ նորա՝ ամենայն Չանիւ

պղուշացոյց գվիճակն իւր ոչ խմորիլ յաղանդն Քաղկեդոնի. այլ զաւանդեալն ի սուրբ հարցն գուղղափառ հաւատոն պինդ ունել գոր ունէին ի սրբոյն Գրիգորէ մինչև ցայն. որք և մնացին շնորհօք սուրբ Հոգւոյն: Զի Հայք կացին ի նոյն յաղանդն յաւուրս 6 կաթողիկոսաց ամս 85, մինչ ի բազմերջանիկ և գովելի զաւակն զարդու սուրբ եկեղեցւոյ Յովհան օձնեցին. և ի ձեռն նորա սըրբեալ և նորոգեալ եղեն Հայք յայնմաղանդոյ: Իսկ երանելին Մաթուսաղայ կացեալ ի մետրապօլտութեան Սիւնեաց ամս 18՝ վճարի յաստեացս. բազում և մեծամեծ վաստակօք առաքինութեան գնայ առ կոչնատէրն առնուլ գիւրն ըստ արժանւոյն վաստակոցն գոյն գոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ:

ԻԹ

Թուղթ Մաթուսաղայի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, զոր գրեաց հրամանաւ Տեառն Եզրի՝ Հայոց կաթողիկոսի. եւ այլեպիսկոպոսաց Հայոց, առ բագաւորն Հերակլ վասն հաւատոյ:

Ամենաբարեպաշտ և բարեյաղթող Քրիստոսիւ պայծառացեալ և մեծամեծ բարեգործութեամբ ի սպարծանս Քրիստոնէից եկեալ յԱստուծոյ թագաւոր Հոռոմոց Հերակլէս. Եզրաս նուաստ՝ կաթողիկոս Հայոց, Յովհաննէս՝ Մարդպետական եպիսկոպոս, Մաթուսաղայ՝ Սիւնեաց եպիսկոպոս, և յամենեցունց ի նուաստից ի ծառայական աշ-

խարհէս ձերմէ Հայոց եպիսկոպոսաց Տէրամբ խնդալ։ Գիր հաւատոյ խոստովանութեան զոր մեծանձնութեան ձերոյ արարեալ առ նուաստութիւնս մեր՝ տեսանելով մեր քննութեամբ զտաք ըստ ամենայն հարցն ճշմարիտ և ուղիղ խոստովանութեամբ առ սուրբ միաանական Երրորդութիւնն բարեպաշտեալ, զոր ընկալաք և ընդունիմք։ Բայց զժողովն Քաղկեդոնի խոստովանեալ էր և կարգեալ ընդ երիս ժողովան՝ ընդ Նիկիոյ 318-ից որ յաղագս Արիոսի որ զՈրդին Աստուծոյ արարած ասէր և ոչ արարչակից. և (ընդ) 150 ից որ ի Կոստանդնուպոլիս, որ վասն Մակեդոնի որ զՀոգին սուրբ ի սպասաւորութեան կարգի ասէր հրեշտակ կամ առաքեալ. և (ընդ) երկերիւրոցն որ յԵփեսոս ուր ըզ ի Կուսէ ծննդեանն հայհոյութիւն նեստորին նզովեցին. և զկնի նոցա զՔաղկեդոնին։

Եւ պատճառ ժողովոյս Եւտիքէս եղեալ, որ խոստովանեալ զԲանին Աստուծոյ զծնունդն ի Կուսէն. բայց յետ միանալոյ Աստուածութեանն ընդ իւրում մարմնոյն ուրանայր զմարդկութիւնն, որ երկուս բնութիւնս բաժանեալ ի ներքս ածէ և սոքօք վարի այսպէս ասելով «ոչ բառնալով զբնութեանցն զանազանութիւնս. այլ ամբողջ պահելով առանձաւորապէս երկաքանչիւրոյ բընութեան», զոր ոչ ընդունին Աստուածաշունչ գիրք և ոչ վարդապետք հոգևորք և նշանաւորք

որ եղեալ են յիւրաքանչիւր ժամանակս աստուածարեալք և աստուածախօսք վկայեալք յեկեղեցեաց Աստուծոյ որ ընդ միեղերս, քանզի զերկուս բնութիւնս ի մէջ բերելով համարէին լուծանել զնեստորքէական հայհոյութիւնն։ Պարտ էր նոցա զերանելեացն հարանց ի կիր առնուլ զամենապայծառ և զհրաշափառապոյն յաղագս մարմնաւորութեանն Տեառնէն զասացուածս՝ զՄթանասի Աղեքսանդրացւոյ, զԲարսղի Կեսարացւոյ, զԳրիգորի Նազիանզացւոյ, զԳրիգորի Նէոկեսարացւոյ սքանչելագործի, զԳրիգորի Նիւսացւոյ՝ եղբօր Բարսղի, զՊրոկղի և զայլոցն նախեղեալ վարդապետացն. քանզի Աստուած կատարեալ և մարդ կատարեալ յերկուց բնութեանց մի Աստուած խոստովանեցան. որք բաւական են վեր ի վայր տապալել զնեստքէական հայհոյութիւնն։ Իսկ եթէ բաժանեալ ի միմեանց երկու բնութեամբ վարեցան՝ ընդ դէմ ուրեմն նախասացելոց վարդապետացն են. զի այլ ոմն զՔրիստոս Յիսուս ասելով և այլ ոմն՝ զԻմանն Աստուած և գործ՝ առանձին իւրաքանչիւր, և յերկուց յորդւոց հայհոյութիւնս անկան, որ ոչ երբորդութիւն. այլ մանաւանդ չորրորդութիւն, որք են վատափառ և ըստ չարահաւատ. հրէամիտ Նեստորի. քանզի և յառաջնորդն Քաղկեդոնի ժողովոյն լինել ասեն զԹէոդորեատոս և զԻբաս զզուգախառացողսն Նեստորի։

Եւ զի այս այսպէս է, թէ կամիցիք լսել՝

յայտնի է ճշմարտութեամբ։ Բանզի Յոբնաղ անուն Երուսաղէմի եպիսկոպոս ի Քաղկեդոնի ժողովումն էր. և եկեալ անտի զերուսաղէմցւոց ընթերցուածն (կարգեաց), զոր մեր (պահեալ է) մինչև ցայժմ. որք զՔաղկեդոնի ժողովն խոտեն, հերձուածողս կոչեն զնոսա. և այսպէս բամբասեն եթէ Աստուած խաչեալ ասեն և անմահ խաչեալ ասեն։ Եւ ինքեանք այսպէս զրեն առ մեզ եթէ՝ Յիսուս է որ չարչարեցաւն, Քրիստոս ասեն, խաչեցաւ. և զիրք նոցա կան առ մեզ. եւ ոչ կարեն յուրաստ լինիլ. յորմէ բազումք եւ յայս կողմանս թիւրեցան. և ոչ կամին Աստուած խաչեցեալ եւ անմահ խաչեցեալ (ասել). զի չարչարեցաւ անչարչարելին չարչարելեաւն. եւ մեռաւ անմահն մահկանացուաւն, այսինքն է անչարչար Բանն Աստուած մեռաւ իւրով մարմնովն· վասն այնորիկ համարձակիմք ասել Աստուած խաչեցեալ, որպէս տէրունականն ունի բան եթէ «այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ՝ մինչև զՈրդին իւր միածին եաւ»· եւ առաքեալն Պօղոս ասէ «եթէ էր ծանուցեալ՝ ոչ արդեօք զՏէրն փառաց ի խաչ հանէին». զոր Յովհան՝ կոստանդնուպօլսի եպիսկոպոս, մեկնէ թէ «զՏէրն փառաց մարդ սոսկ ասել և ոչ դիք յանդգնին»։ Որոյ համաձայն և ճշմարիտ հարքն բարբառին՝ Յովհան, որ Երուսաղէմի քաղաքին կացեալ եպիսկոպոս, թէ «Աստուած ի կուսէ ծնեցեալ, և Աստուած խա-

չեալ»։ Եւ Գրիգոր Նազիանզացին թէ «Աստուած խաչեցաւ. և երկիր շարժեցաւ». և զարձեալ յայլում վայրի թէ «որ զկոյսն Աստուածածին ոչ խոստովանեսցի, հեռի է յԱստուածութենէն. եթէ ոք Ծաչելոյն երկիր ոչ պագանէ, ընդ աստուածասպանն կարգեսցի». քանզի որ ոչ ասէ Աստուած խաչեալ՝ ոչ խոստովանի և զԱստուած ի կուսէ ծնեալ, և ոչ զկոյսն՝ Աստուածածին որպէս և Նեստոր. քանզի ոչ այլ ումն Յիսուս Քրիստոս, այլ ումն՝ Աստուած Բանն. այլ նոյն և մի Աստուած ծնեցեալ ի կուսէն, նոյն անչարչարելի իւրով աստուածութեամբ, նոյն անմահ և նոյն մեռեալ իւրով մարմնովն, որպէս Աթանաս՝ Աղեքսանդրու եպիսկոպոսն ասէ «յաղագս որոյ մոլորին և որք ասեն, եթէ այլ ումն է որ չարչարեցաւն, և այլ ումն է որ ոչ չարչարեցաւ. բայց ոչ այլ ոք էր քան զԲանն որ չարչարեցաւ և զմահ ընկալաւ. բայց նոյն ինքն անչարչարելի և անմարմին Բանն լինելով մարմին մարդկային՝ համարեալով զամենայնն ելից»։ Եւ Գրիգոր Նէոկեսարացի սքանչելագործն «որ ոք, ասէ, այլ որ ախտակրեալն է, և ոչ խոստովանեսցի զնոյն (ան) ախտակիր Աստուածն Բան մարմնովն ախտակրեալ, որպէս և գրեալ է, նզովեսցի»։

Արդ՝ եթէ ըստ նոցա բանիցն այլ ումն Քրիստոս Յիսուսն է, և այլ ումն՝ Բանն Աստուած. և ումն ի

նոցանէ զախտ եւ զչարչարանս կրէ՝ ծնեալ ի կուսէն, եւ ոմն ի նոցանէ պայծառանայր նշանօք և արուեստիւք, որ է Բանն Աստուած, հեռացուցանելով զնա ի անօրէնութեան խորհրդոյն, որպէս կայ ի ծամարին Լևոնի, զոր ժողովն Քաղկեդոնի ուղղափառ կոչէ, և որպէս ի վերայ խարխալեալ և շարժուն հիման զիւրն շինէ շինուած։ Եթէ այդպէս է՝ որպէս աղքատացաւ մեծատունն վասն մեր, ասասցեն մեզ՝ որ բաժանեն զմարդն յԱստուծոյ Բանէն, և զմիացեալն որոշեն որոշութեամբ բնութեանցն. որ երկուս ոմանս ասեն զԲրիստոս, եւ զմին խմացութեամբ միայն, և առատաբանութիւն բերեն։ Բանզի վասն ձեր աղքատացաւ մեծատունն, ասէ առաքեալն, զի դուք նորա աղքատութեամբն մեծասջիք. այսինքըն անմարմին Բանն Աստուած ի Հօրէ, յառաջ քան զյաւիտեանս, ծնեալ՝ էակից և բնակից Հօր և սուրբ Հոգւոյն, ի վերջին ժամանակս էջ և մարմնացաւ ի սուրբ կուսէն Մարիամայ, ըստ աւետարանչին Յովհաննու թէ. Բանն մարմին եղև, եւ բնակեաց ի մեզ մարդ եղեալ ճշմարտապէս, ամենայնիւ ըստ նմանութեան մեր առանց մեղաց. ի խանձարուրս պատեալ եղաւ ի մսուր որ ի վերայ քերովբէից չըլէր, ի գիրկս մօր գգուեցաւ, կաթն արբուցաւ, զարգացաւ հասակաւ, ճանապարհորդեցաւ ընդ ամենայն կիրս կենցաղոյս, մատնեցաւ Հրէից, չարչարեցաւ եւ

խաչեցաւ, թաղեցաւ եւ յարեաւ անապականաբար ըմի ոչ թողաւ ոգի նորա ի դժոխս, և ոչ մարմին նորա եռես զապականութիւն, որպէս առաքեալն Պետրոս ասէ. զոր և Աթանաս Ալեքսանդրացի ի հաւատոյ բանին ասէ «Եւ ած մարմին յապականացուացս զի զգեցուսցէ զանապականութիւն. էառ մարմին ի մահկանացուացս որպէս զի մահկանացուս այս զգեցցի զանմահութիւն, որպէս և այժմ ի ձեռն մահուան և յարութեան լուրոյ շնորհեաց մեզ զկեանս և զանապականութիւն»:

Արդ՝ եթէ ըստ նոցա բանիցն եղանի, ոչ թափեաց զինքն Էնն Աստուած, ոչ զկեպարանս ծառայի էառ. և ոչ կերպարանօք գտաւ իբրև մարդ. և զիարդ զտնօրէնութեանն խորհուրդ բովանդակ կատարեսցէ: Քանզի ոչ աստուածային բնութիւնն առանձինն եղեալ ի կնոջէ և մեալ ընդ օրինօք. և աղքատացեալ ի մեծութենէ, և օծումն ընկալեալ, որպէս և ոչ մարդկային բնութիւնս յատուկ որդի Բարձրելոյն գոլ, և աթոռ ունել յաւիտենական. այլ ըստ անճառ միաւորութեան երկուց բնութեանցն. քանզի յետ երկուց զմին խոստովանին ճշմարիտ քրիստոնեայք, որպէս Պրոկղոս ասէ «Թէ յորում աստուածապէս դրոշմեալ ի միաւորութեանն պատմուճան». և Բասիլիոս առ Ապողինար, յորժամ ընդդիմադրէր Ապողինար զվիճումն թէ« երկու կատարեալք՝ Աստուած

եւ մարդ մի կատարեալք ոչ լինին». նա պատասխանի տայ «առ մարդկան արդեօք անկարելի. բայց Աստուծոյ՝ կարելի (ի լուծումն Բարսղի), որպէս կուսի ծնանելն. որպէս ի վերայ ծովուն գնալն. որպէս դրօքն փակելովք մարմին թանձրամած մտանելն ի մարմնոյ և յոսկերաց հաստատեալ. զորօրինակ այն կարելիք Աստուծոյ, նոյնպէս և այս». և այսպէս Գիրք վկայեն զաստուածաւայելուչն եւ զմարդկայինն նմին Տեառնէն մերոյ Աստուծոյ, զոր եդն ժառանգ ամենայնի Հայրն վասն կամաւորութեանն, և անդրանիկ ի ներքս ած յաշխարհս բազում եղբարս, նա վկայի զյաւիտեանս արարող, որ է բացափայլումն փառաց և նկարագիր էութեան նորա. և նոյն ի կերպարանս ծառայի երևեալ, ի նմանութիւն մարդկան եղեալ. և ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ զլինելն հաւասար Աստուծոյ Յիսուս Քրիստոս՝ ի վերջինսն ի կուսէն ծնեալ, և ի սկզբանն հաստիչ աշխարհի ընդ Հօր, որպէս ասէ Պօղոս «այլ մի է Աստուած Հայր յորմէ ամենայն. և մեք ի նա, և մի՝ տէր Յիսուս Քրիստոս որով ամենայն. և մեք նովաւ»:

Նա զանօրինականսն համբերելով քաղցնոյր. և նայն կերակրէր զբազմահազար ժողովուրդսն. նա ծարաւեալ, և նոյն ինքն՝ արբուցանող ծարաւեաց. նոյն զմարդկայինսն բարբառելով. նոյն՝ զաստուածաւայելուչսն ասող առ աշակերտսն

«Հայր իմ մեծ է քան զիս»։ Եւ նոյն ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ զոլ հաւասար Աստուծոյ։ Նա ի ժամ խաչին աղաչող զԱստուած Հայր թէ «հնար իցէ, անցցէ զինեւ բաժակս». նոյն ինքն կամաւորութեամբ եկեալ ի ժամն յայն ասէ «ես անձամբ իմով դնեմ զանձն իմ, և իշխանութիւն ունիմ միւսանգամ առնուլ զնա». առաջի Պիղատոսի դատեցեալ. և ի հրեշտակաց սպասաւորեալ. բևեռեալ ի փայտի. եւ ընդ աջմէ Հօր յերկինս (բազմեալ). թաղեալ ի գերեզմանի, եւ աւերեալ զդժոխս. յարուցեալ ի մեռելոց, ի վեր երթեալ յերկինս. ուր էր զառաջինն, ըստ նորուն Տեառն բարբառոյն. զորմէ և Պօղոս ասէ «որ էջն նոյն է, և որ ելն ի վերոյ քան զամենայն, և գայ դատել զկենդանիս և զմեռեալս»։

Սա՝ Աստուած ամենայնի, թագաւոր յաւիտենական, երկրպագեալ ընդ Հօր և Հոգւոյն սրբոյ յաւիտեանս։ Վասնորոյ և նախեղեալ ճըշմարիտ վարդապետացն Դիոնիսիոսի և Պիղատոսի և Յուլիոսի՝ Հռոմայ եպիսկոպոսաց, և Դիոնիսիոսի և Պետրոսի վկայի և Թէոփիլեայ. և յետ նոցա՝ Աթանասի և Կիւրղի և Գրիգորեանց և այլոց բազմաց յերկուց բնութեանց մի Աստուած խոստովանեալ է։ Բայց զի ի Քաղկեդոնի ժողովին պատճառանօք բաժանմամբ զերկուս բնութիւնս ասացին այսպէս «ապրեցելոյ երկաքանչիւրոյ բնութեանն իւրոյ յատկութիւն»։

Ոչ ընկալան զնա ոմանք ի ձերոյ ճարտարացդ առաջնորդք Աղեքսանդրացւոց, այլ և յայտարարութեամբ ընդդիմադրութիւնս բազումս ածին: Եւ Հայոց արհեստաւորաց որ յԱղեքսանդրիա և յայլ քաղաքս բազում ժամանակօք ի հրահանգս կացին, ոչ է ընկալեալ զնոսա և ոչ հաղորդութեամբ միաւորեցան ընդ ձերում աշխարհիդ: Իսկ այժմ աւելագոյնք այսպէս առնեն թէ՝ անխաիր հաղորդութիւն առնուն, որ է անհնարին չար. զի Տէրն ասէ «ես եմ հացն իջեալ ի յերկնից. և ես եմ հացն կենաց. և մարմին իմ ճշմարիտ կերակուր է և արիւն իմ ճշմարիտ ըմպելի է. և որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցի և ես՝ ի նմա, և որ ուտէ զհացս զայս՝ կեցցէ յաւիտեան»: Եւ Պօղոս բազում երկիւղիւ զգուշացուցանէ «քննեսցէ, ասէ, մարդ զանձն իւր և ապա ի հացէ անտի կերիցէ և ի բաժակէն արբցէ. զի որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ՝ ի դատաստան անձին իւրում ուտէ և ըմպէ. զի ոչ խորէ զմարմին Տեառն»:

Եւ ես սոսկալի՝ եթէ անարժանութեամբ հաղորդեալքն պարտական եղիցին մարմնոյ Տեառն, զոր սուտեցաք հաւաստապէս կանոնն ընդհանրական, չափ ժամանակաց սահմանելով առանձինն իւրաքանչիւր յանցանաց, յոյս պնդագոյն ապաշխարութեամբ սրբեալք ի մեղաց՝ արժա-

նաւորին հաղորդութեանն։ Իսկ այժմ ընկեցեալ երևին ի բաց զաէրունական հրամանն, և զկանոնս ուղղագոյն անփոյթ արարեալ ատէպ ատէպ մեղանչելով, և լուացմամբք մարմնոյ վաղվաղակի անարժանք ի հաղորդութիւն գան. զորս Տէրն խոտէ յաւետարանի անդ ասելով ցՓարիսեցիսն «զարտաքին զբաժակին և զկաւառակին լուանայք, և ներքինն ձեր լի է պղծութեամբ»։ Եւ Պօղոս ատէպ ատէպ զմկրտութիւնն Հրէից մարմնոյ արդարութիւն կոչէ, որ յառաջ քան զժամանակն ուղղութեանցն էին։ Զակարագոյն միտս կատարեն պաշտօնեայքն. և այլ հայհոյութեան ևս բանիւք եթէ մարմին և արիւն Տեառն ի քաւութիւն մեղաց է. գեղեցիկ է թէ այդպէս է, և ոչ անարժանութիւն իսկ. և սուտ գտանիցի առաքեալն և կանոնք համաձայն որ ասեն անարժան գոլ զմեղուցեալսն և ոչ ապաշխարեալսն. և համարձակ ևս վայելել ի ճաշակմանէ մարմնոյ և արեան Տեառն և ի սեղանոյ դիւաց։ Այլ մի ոք խաբեսցի զի մարմին և արիւն Տեառն արդարև ստոյգ ի քաւութիւն մեղաց է. այլ ապաշխարելոցն և հեռացելոցն ի մեղաց. այլ ոչ միշտ թաթաւելոցն ի մեղս, զի սպառնայ այնպիսեացն Տէրն առնլով վրէժ անհնարին տանջանօք ի դատաստանին մեծի աւուրն։ Եւ ոչ պարծիմք զմեզ սուրբս լինել, այլ սակայն ոչ անխտիր ի հաղորդութիւն (դիմեմք). այլ ահացեալք՝ բազում

երկիւղիւ մեկուսանամք։ Այլ զնւտիքէս ընդ նմանիս նորա՝ առաջին և վերջին հերձուածողս, նզովեալ եմք և նզովեմք. բայց զժողովն որ զբաժանեալ բնութիւնսն պահէ, և ոչ տայ ասել Աստուած խաչեցեալ, որպէս և այլք բազումք ի Հոռոմոց, յորոց ոմանք և ի մերմէ կողմանէս թիւրեցան, ոչ կարեմք ընդունիլ, և ոչ ընդ այնոսիկ որ փոքրկացուցանեն զմարմին և զարիւն Տեառն՝ հաղորդել. զի ոչ ունիմք այպիսի սովորութիւն։

Լ

Վասն եպիսկոպոսացն Սիւնեաց, որ յաջորդեցին զկնի Տեառն Մարուսաղայի հերոդի։

Յետ երանելի առն Տեառն Մաթուսաղայի մնաց աթոռն անիշխան ամս 8 վասն հանապազ հինից և խռովութեանց, երբեմն ի Պարսից՝ երբեմն՝ ի Յունաց, երբեմն ի Հոնաց։ Ապա ընտրեն այր մի փառաւոր, յոյժ լաւ և պիտանի ի գործ եկեղեցւոյ. և կացուցանեն զնա եպիսկոպոս Սիւնեաց. որոյ անունն Աբրահամ կոչիւր։ Սա կեցեալ յաթոռն ամս 30՝ վախճանի։ Ապա յաջորդէ ի տեղին Տէր Յովսէփ հանդոյն նմին՝ այր բարի և լաւ, ամս 19. ապա Տէր Յովհան՝ ամս 22. ապա Տէր Մովսէս՝ ամս 7։

Սա անուցանէր ամենայն զգուշութեամբ զտուրքն Սահմանոս իմաստասէր և մարտիրոս.

ապա Անանիա՝ ամս 7. ապա Յովհան՝ 9։ Ապա բաղձալին բնաւից, արեգակն չահաւորեալ ի տանս Թորգոմեան, երանելի և մեծ նահատակն, պարծանաց գաւառին և անդրանիկ որդին սուրբ և երկնահանդէս աթոռոյս Սիւնեաց՝ Ստեփաննոս, ոչ ինչ ընդհատ քան զառաջինն, որ հանդիսադիրն է ամենայն մարտիրոսաց. զորոյ զհանդէս բանից և զերջանիկ բարեբաստութեանցն զհանապամանս ոչ է զանցառնլի. այլ կարգել համառօտիւ յայսմ մատենի։

ԼԱ

Վասն Տեառն Ստեփաննոսի Սիւնեցւոյ վարք եւ վախճան. եւ որ ինչ պատմի զնմանէ։

Տարփուեմն բաղձանաց գործարանի սրտիս ձգտեցուցանէ զմիտս իմ զհոմերականն առնուլ հագնեւրգութիւն յիմումս առասանութեան՝ բաւեղծուլ տաղս քաջալորակս և հիւսել դրուատս հրաշալուրս առ ի սխրացուցանել զներբողումն բաղձալուոյս բնաւից յականճս մատղիւր լսողաց, զանհամեմատն յէից՝ իմաստնոյն և սերոբէասարաս առն Աստուծոյ ասեմ զՍտեփաննոսի իմաստասիրի և անյաղթ հռետորի՝ Սիւնեացս մեծապօլսի, զորոյ զերկնահանդէս քաղաքավարութիւն և զցանկալի կատարած կենացն և զսարսափելի գործ պատուհասին որ յետ վախճա-

նին այսպէս ուսաք. և ձեզ կարճ ի կարճոյ շարադրեցաք։

Ստեփաննոս՝ սիւնն երկնի և խարիսխն հաւատոյ, վէմն անդրդուելի և ախոյեանն անվախ սուրբ եկեղեցւոյ, մարդն երկնային և հրեշտակն երկրային, հանապազ մեռեալն և միշտ կենդանին, հիացուցիչն հրեղինաց և զարմացուցիչն քերովբէից. զորոյ զգովութեանցն հոյլս ոչ է պարտիմոյ տնաս և թերաւարժ մատցս աղաւաղել բանիւք։ Այլ միայն զզրուցացն բուռն հարկանել։ Էր սա որդի աւագ երիցու մեծ մայրաքաղաքին Հայոց Դվնայ. և անանէր և զարգանայր ուսմամբ ի տան կաթողիկոսարանին Հայոց։ Եւ յետ ընկոյ հասակին ոչ կամէր թաքչել ջահն ընդ գրուանաւ մարմնոյն. այլ հրաժարէր ի բազմամբոխ քաղաքէն. և գնայր ի համբաւատենչ և մեծասքանչ հանդիսարանն, ի հրեշտակերամ կրօնաւորանն սուրբ և յաստուածաբնակ առաքինարանն Մաքենոցաց, առ աստուածազգեաց և սերովբէատիպ հարանց հայրն Սաղոմ, որ էր էգոնոմոս մեծի ուխտին. որ պայծառանայր յայնմ ժամանակի մեծամեծ ճգամբք և անտանելի խստամբեր վարուք։ Որ և յօրինեաց զպայծառացուցիչն աւոնից տերունականաց և զյիշատակս մարտիրոսաց զՏօնականն ի 150 թուին Հայոց։ Եւ անդ տուեալ զանձն ի մեծամեծ տքնութիւնս և յանըմբերելի վարս մշտաջան առաքինութեանց։

Եւ յետ ամաց ինչ, մինչ լցաւ հասակ ներքին մարդոյն գործականաւն. ապա ոչ համարեցաւ պատշաճ ընդ խաւարաւ անգիտութեան կալ ճնալ. այլ և ի գիտութիւն և ի կրթութիւն աստուածային իմաստից ջանայր հասանել. զի ոչ էանկ մխակոմանի լծով ձգել զակօս երկրագործութեան. այլ զերկուսն լծել՝ զտեսականն ասեմ և զգործականն, զի ամենայնն պատշաճաւոր լիցի: Սակս որոյ ելեալ ի մենարանէ անտի՝ փութայ, ճեպի յաղբիւրն իմաստից՝ ի վարդապետարանն Սիւնեաց, որ գլուխ էր ամենայն գիտնոց Հայոց, և պայծառացեալ գպրոցքն որ ի նմա. քանզի որպէս Աթենացիքն ի մէջ Հռոմոց և Յունաց ճոխացեալ էին և մայր իմաստից կոչեցեալ յիսպանիացւոց աշխարհին լատին և հելլէն գպրութեամբ. այսպէս և սոքա ի տանս Թորգոմայ յաշխարհիս Հայոց:

Որ և գնացեալ սորա առ երանելի եպիսկոպոսն Սիւնեաց Մովսէս՝ աշակերտի նմա. և ըստ առատ շնորհին որ ունէր, փոյթ ընդ փոյթ հմտացաւ աստուածային իմաստից. և փարթամ ճոխութեամբ զարգացաւ և հասաւ ի գագաթ տեսականն շնորհին՝ լցեալ անհամեմատ հանճարով: Եւ առեալ հրաման յեպիսկոպոսէն նստաւ յամբիոնն րաբունական. և մեկնէր զաստուածային գիրս աշակերտելոցն ի վարժարանին: Ապա հասեալ վախճան երանելւոյն Մովսիսի՝ յանձնէ նմա

զնոգաբարձութիւն աթոռոյն։ Իսկ յետ նորա եկեալ Ստեփաննոսի ի Դվին առ կաթողիկոսն. և տայ ձեռնադրել յեպիսկոպոսութիւն Սիւնեաց զԱնանիա. և ինքն դադարէ անդէն ի կաթողիկոսարանին. և ոչ դադարէր երբէք ի մեկնելոյ զդրեանան հին և նոր կտակարանաց։ Ապա եղև նմա հակաճառել վասն հաւատոյ ընդ երկաբնակ իշխանի միոյ, որ էր ասպետ Հայոց՝ Սմբատ Բագրատունի. և զի ոչ էր հմուտ արտաքին փիլիսոփայական արհեստին, ոչ հաւանեցաւ իշխանն բանից նորա. այլ անարգեաց զՍտեփաննոս ազգէ կոչելով և կամէր հալածել։ Ելեալ ապա նորա գաղտ ի քաղաքէն և վոխեալ զձևն՝ գնաց փախստեայ ի թագաւորական քաղաքն Կոստանդնուպոլիս. և բնակեցաւ յանապատի (առ) ուղղափառ միայնակեցի մի որ էր հմուտ արտաքին իմաստից։ Եւ ուսեալ անդ զգիր և զլեզու հելլէն և լատին ազգին՝ վարժեր զցայգ և զցերեկ ի գիրս և յարհեստս նոցա ըստ փիլիսոփայական ոճոյն։ Լուեալ զայն ասպետին Սմբատայ՝ ազգ առնէ կայսերն Լևոնի եթէ չարափառ ոմն՝ անարգիչ թագաւորութեան քոյ և հայհոյիչ սուրբ հաւատոյդ, հալածեալ ի մէնջ բնակի այդր առ այս անուն միայնաւորի. որոյ անունն՝ Ստեփաննոս։

Լուեալ կայսերն ցասեաւ յոյժ. և հրամայեաց ածել ի դուռն. զոր և արարին։ Իսկ նորա խրատեալ ի միայնակեցէն ասել զինքեանէ անազգի

և օտար և մուրոյ պատճառաւ եկեալ առաւ. վասն որոյ ի հարցանել կայսերն պատասխանէ զնոյն. յորմէ շիջաւ ցասումն. և հրամայեաց թողուլ: Ապա նորա համարձակ ընակեալ ի քաղաքին՝ երթայր ի սուրբն Սոփիա. և խնդրէր յարկեղէ դրոցն զպիտանին և ընթեռնոյր յարաժամ: Գնացեալ և յԱթէնս. և անդ վարժեցաւ ամենայն իմաստիւք. և դարձաւ ի նոյն քաղաք: Եւ ծանօթացեալ մեծ հիւպատոսի մի Դաւիթ անուն և թագաւորական սեղանոյն կենաւռի. և ձեռնտուութեամբ նորին թարգմանէ զգեղեցիկ գիրսն սրբոյն Դիոնիսիոսի. և զնէ ինքն զժուարագոյն և խրթին բանիցն լուծումն բան առ բան. թարգմանէ և զգիրսն քաղցրաբան Գրիգորի Նիւսացւոյ զբնութեան և զկազմութեան. ծանօթանայ և պատրիարքին Գերմանոսի. և ի տէրունական ծնունդն ընթանայր յեկեղեցին և կանգնէր ի ժամ պատարագին. որ և յաւուր միում հարկեցաւ հադորդիլ օրինացն և ոչ առ յանձն պատճառելով թէ առանց իմոյ պատրիարքին հրամանի ոչ լիշխեմ: Ընդ որ զժուարացեալ մտօք պատրիարքին՝ բազում հարց և փորձ առնէր ընդ նմա վասն հաւատոյ:

Եւ տեսեալ զանպարտելի իմաստութիւնն՝ հիանայր և զրէր թուղթ ի Հայս վասն հաւատոյ, որոյ սկիզբն է «Քրիստոս է խաղաղութիւն մեր». և տայր ցՍտեփաննոս կնքեալ իւրով մատանեաւ

տանել ի Հայս։ Իսկ համբաւ իմաստիցն նորա հասաւ յականճս կայսերն. և կոչեալ հարցանէր զնա վասն հաւատոյ. և նորա համարձակեալ ասէ «ով բարերար արքայ՝ հրամայեա զի բացցին արկեղք գրոցն զի ես գտանիցեմ անդ գիրս որ ցուցանեն զորպիսութիւն հաւատոյ ուղղափառ». և առ ժամայն հրամայեցաւ բանալ։ Եւ նա գտեալ անդ մատեան մի ոսկետուփ սուրբ հարցն վասն ուղղափառ հաւատոյ գրեալ, և մատոյց առաջի թագաւորին. որում յոյժ հաւանեալ խրախացաւ և ասէ «դուք Հայք զմեզ ունիք հաւատ» ասէ այն։ Ասէ կայսր «երթ ի Հռոմ. և տես անդ յարկեղս մեծի եկեղեցւոյն եթէ գտանես այլ ևս երիս գիրս որպէս զայդ. ապա զամենայն աշխարհ յայդ կրօնս դարձուցից»։ Եւ նորա յոյժ խրախացեալ ընդ իրն առաւածային իմն տեսչութիւն համարելով, գնաց ի Հռոմ. և գտանէ անդ այլ ևս երիս մատեանս համաբանս և միախորհուրդս նման առաջնոյն. որք էին *ալարաւժանց կիւրղի և գանձուց*, և միւսն՝ Աթանասի Աղեքսանդրացւոյ, և միւսն՝ սրբոյն Եպիփանու ասացեալ։ Առեալ զգանձն աստուածային՝ ծանեաւ հոգւովն զի ոչ լինէր խորհուրդ թագաւորին. ոչ գտնայր անդրէն. այլ նաւեալ ի Հռոմայ՝ անցանէ ընդ անհուն ասպարէզս լայնածիր գոգոյ աշխարհամած ծովուն ովկիանոսական. և հասանէ ի Դվին. տեսանէ ապա զաշխարհս աւե-

րեալ և ապականեալ ի Տաճկաց, և բարձեալ զամենայն իշխանն Հայոց զոր այրեալ էին ի Նախճաւանի ոգիք իբրև ութ հարիւր. և մնացեալ միայն սինկիքորքն: Եւ որ էր կաթողիկոս Հայոց երանելին Յովհան օձնեցին սրբեալ զաշխարհս յաղանդոյն Եզրայ. և ինքն վախճանեալ. և Դաւիթ նստեալ ի տեղին, այն որ յԱրամաւնս ես զաթոռն կաթողիկոսութեան:

Մատոյց առաջի նորա զգրեանն և զթուղթն Գերմանոսի. ընդ որ յոյժ սխրացեալ կաթողիկոսին՝ անտանելի ընոյր խնդութեամբ և առաւել քան զառաւել պատուէր և փառաւորէր զսուրբն Ստեփաննոս: Եւ հրամայեաց գրել նմա պատասխանի թղթոյն զոր ինքն եբեր. զոր և գրեաց յոյժ զարմացուցիչ բանիւք. և արար լուծումն բան առ բան թղթոյն պախարակելով զկրսեր և տգէտ իմացուածս նոցա. որ ունի օրինակ զայս «զՔրիստոսի խաղաղութիւնն առբերելով»: Եւ էր յայնմ ժամանակի վախճանեալ եպիսկոպոսն Սիւնեաց Յովհան. և էր իշխան Սիւնեաց Բաբգէն և Փուրդ որք եկեալ առ կաթողիկոսն Դաւիթ՝ խնդրեն ի նմանէ զմեծ իմաստասէրն, զերանելին Ստեփաննոս որ էր սուրբ հրեղէն ի ձեռին ամենասուրբ Հոգւոյն: Եւ ձեռնադրեալ կաթողիկոսին զնա յաթոռ մեծարապօլտութեան Սիւնեաց. և վասն մեծի երախտեացն առաւել պատուէ զնա և կացուցանէ գլուխ եպիսկոպոսաց, և աթոռն Սիւնեաց՝

գլուխ ամենայն աթոռոց. ասեն ոմանք եթէ Սիւնեացն յեօթներորդ դասուն էր եպիսկոպոսաց Հայոց. այժմ յերրորդ դասուն կարգեցին. բայց մի՛ հաւանիր զի Աղվանից միայն էր ի վեր քան զՍիւնեաց վասն արքեպիսկոպոսութեանն. իսկ Սիւնեացն վասն մետրապօլսութեան գեր ի վերոյ էր քան զամենայն եպիսկոպոսսն Հայոց. զի այլ ոչ ոք ունէր զմետրապօլսութեան պատիւն. և որքան պատրիարքն քան զարքեպիսկոպոսն է գեր ի վերոյ. և արքեպիսկոպոսն՝ քան զմետրապօլիտն. այնքան մետրապօլիտն քան զեպիսկոպոսն զի նա ձեռնադրէ զեպիսկոպոսն:

Ահա առեալ զմետրապօլսութիւն Ստեփաննոսի՝ գնաց ի վիճակն. և աստուածային օրինօք խրատէր և ուսուցանէր, որպէս սուրբ հաւատնէր զախտացեալսն, որպէս բժիշկ իմաստուն բժշկէր զվիրաւորսն, որպէս աղ ընտիր համեմէր զանհամեալսն, որպէս արեգակն պայծառ լուսաւորէր զխաւարեալսն, տղայոցն ի Քրիստոս կաթն չամբեցուցանէր որպէս ծնող. կատարելոցն զկատարեալ կերակուրն մատուցանէր որպէս անտես հաւատարիմ: Մեկնեաց և զբեանս բազումս՝ զԱբարածքն, զՅոբն, զեզեկիէլն և այլ բազումս. որոյ բանքն նշանաւոր ի մէջ այլոց մեկնչացն փայլին որպէս չահ պայծառ: Աբար և ճառս բազումս. բաժանեաց և զուարթն ձայնան և կարգեաց, շարեաց զՅարութեան օրհնութիւնսն. երգեաց և

կցուրդս քաղցրանամս, յարմարեաց և զառողջին Յինանց եօթն եղանակօք յոյժ խորհրդաւոր, և զպահոցն որ յաղուհացան երգի. մեկնեաց և զխորհուրդ դիշերային պաշտամանն։

Էր և սորա քոյր մի՝ ի մանկութենէ ատացեալ զվարս կուսութեան և առանձնացեալ ի ձորակին Գառնւոյ յայրի միոջ, և անտանելի վարս ճգնութեան կրէր յանձին. որոյ անուն Սահակդուխտ։ Սա յոյժ հմուտ էր երաժշտական արհեստին, որ և ի ներքոյ վարադուրի նստեալ ուսուցանէր զբազումս։ Եւ արար կցուրդս և մեղեդիս քաղցրեղանակս, յորոց մին՝ արքունին Մարիամ, որ իւրով անուամբն է յօրինեալ։ Եւ անդէն ի նմին վախճանեալ զնի ի հանգստի յորմէ բազում բժշկութիւնք լինին։ Իսկ երանելին Սահակ եպիսկոպոսութեան ամ մի. զոր ոմանք ութ ամ ասեն, շրջէր յամարայնի ի մէջ երկոտասան գաւառաց մեծաւիճակ գաւազանի իւրոյ. և քարոզէր զբանն ճշմարտութեան։ Որ և հանդիպեալ սորա սակս հոգևոր հարկին ի գաւառս բարելից ի ձորն Եղեգեաց յաւանն Մոզան. յորում բնակեալ էր կին մի սեղեխ արբեալ յիմարութեան ախտիւն, զոր յառաջ քան զայն երից անգամ զգուշացուցեալ էր զնա ըստ Տեառն հրամանի. և ոչ էր զղջացեալ։ Վասն որոյ այն անգամ սաստիկ ցասուցեալ սրբոյն և վճիռ հատեալ մեծ պատուհասի՝ ելանէ ի գեղջէն, և վասն տո-

թաժամուն գնայ յակն քաղցրահամ աղբերն զոր աւագ ակն կոչէին, զովանալ ի նմա. և հրամայէ հարուլ զխորանն իւր. և ինքն ի վերայ ուռոյ միոյ գնէ զմահիճան հանգստեան: Եւ ելեալ առանձինն աղօթէ ժամս յոլով. և ննջէ ի վերայ նորա:

Իսկ կինն հերաւուկ շարժեալ ի կառապի բոցոյ ցանկութեանն՝ առնու ընդ իւր զհոմանին իւր և գայ սպանանել զսուրբն զի համարձակ լիցին ի գործն: Եւ մերձեալ ի ծառն՝ հանէ ի վեր զայրն եդեալ զսուրն ի ձեռն զի սպանցէ զսուրբն: Ելեալ առնն տեսանէր զսուրբն ննջեալ, և իբր զբոց ցոլանայր շունչն ի վեր և ճախր առեալ դառնայր անդրէն. և հրեշտակ մի կացեալ ի նմարսն հովանի ունէր նմա թևօքն: Տեսեալ զայն առնն կարկեալ թուլանայր. և ամենայն յօդուածքն խաղայր, շարժէր, դողայր մեծաւ սոսկմամբ. Եւ այնչափ ուշաբերեր՝ մինչ անդրէն իջանէր ի ծառոյն և պատմեր կնոջն: Ապա կրկին յորդորեր կինն և սադրեր քաղցր բանիւք պռոնկութեան և քաջալերեալ անդրէն յուղարկէր: Եւ նորա հրաշափառագոյն իմն տեսեալ տեսիլ քան զառաջինն՝ սաստկապէս ևս թուլանայր. և անզգայ մարմնով իբր մեռեալ անկանէր ի ծառոյն: Ապա կինն մինչ եառեալ յանհնարին պատուհաս ըմբռնեալ զայրն, փոխանակ զղջման առաւել ևս զչարեալ, և սրեալ ի բանսարկուէն՝ առեալ զսուրն հոլանեալ ելանէր ի ծառն. և հարեալ զսուրն ի փորն

սրբոյն՝ հեղոյր զարիւնն ամբիծ ի վերայ փայտեղէն մահճին, որպէս զՏեառն իւրոյ ի վերայ փայտեղէն գործարանին մահու, սակս սաստիկ նախանձուն աստուածային օրինացն որպէս զՀեղիան և զՅովհաննէսեան. յորոց մին 40 օր փախստական լինէր յերգաբել՝ կնոջէն Աքայաբու, և միւսն գլխատեալ ի դասերէ Հերովդիադայ:

Ապա յառաւօտուն իմացեալ պաշտօնէիցն՝ բազում ողբովք բարձին զնշխարս սրբոյն, տանէին ի սուրբ մենարանն ի լեառնն կոչեցեալ Սիօն որ պայծառանայր ճգնաւոր արամբք յայնմ ժամանակի քան զՍինայն և զՍկիւթայն յԵգիպտոս: Զոր լուեալ Արկադան գեօղն՝ սէրամբն իւրեանց ելին ընդ յառաջ, և հաւանեցուցին զսպասաւորսն հանգուցանել ի սենեակն որ յանուն սրբոյն Քրիստափորի՝ անյաղթ զօրավարին, շինեալ էր. զոր տարեալ անդէն հանգուցին ի սենեկին: Իսկ երանեալ ճգնաւորն Աստուծոյ Նու որ էր բազում ամօք բնակեալ ի սուրբ լեառն Սիօն և հրեշտակացեալ ամենայն վարուք, տեսանէր ի տեսլեան յանմ առաւօտու զերկինս բացեալ և զհոյլս հրեշտակաց զի ելանէին գունդ գունդ ընդ առաջ սրբոյն Ստեփաննոսի. և փառեալ զմաքուր և արիւնաներկ ոգւովն նորա՝ գոչէին մեծաձայն «ծառայ բարի և հաւատարիմ՝ եկ, մուտ յուրախութիւն Տեառն քո». և այնպէս մեծամեծ գովասանութեամբ տարեալ հասուցանէին

առաջի տեղ աթոռոյ Աստուածութեանն, յորոյ վերայ մարմնաւոր տեսլեամբ նստէր Քրիստոս՝ որդին Աստուծոյ։

Ապա երկրպագեալ սրբոյն՝ և սպիտակ նափորատամբն զոր ունէր ծրարեալ զգոգն լի արեամբ, զոր մատուցեալ առաջի Տեառն ասէր «քո է վրէժխնդրութիւն և արդար իրաւունք». և այնպէս համբուրեալ առաքելոցն և հայրապետացն տարեալ հանգուցին ի կայանս իւրեանց մինչև յօրն հատուցման։ Տեսեալ զայն սրբոյն Նուի և իմացեալ զվնասն՝ ժողովեալ զմիանձանցն հոյլս՝ դիմեաց ի լեռնէն առ սուրբն և մեծամեծ ողբովք և կականալիր աղաղակաւ պատմէր զտեսիլն և զգալ բարկութեանն Աստուծոյ ի վերայ գաւառին, և հայցէր զգուշանալ և հնարել աղօթիւք զհաշտութիւնն Աստուծոյ։ Ապա յանկարծակի եհաս ի վերուստ պատուհաս Տեառն. և կալաւ խաւար շօշափելի զգաւառն ամենայն զաւուրս 40, և շարժուեաց և դղրդուեաց սաստիկ. զի եռայր երկիրն ահեղ դողացմամբ յանդնդոց և բարձրանայր մինչև ի վեր. և անդէն իսկ զալիս ծովու փլուզանիւր. լերինք տապալէին, վէմք ի հիմանց քակտէին, տունք և պարանք գեղեցիկք լինէին գերեզմանք բնակչաց. աղբիւրք խցէին. գետք կորնչէին. և ամենայն տեղի երերէր տատանմամբ. և ձայնք մարդկեղէն բարբառոյ լսելի լինէին ի ներքուստ յանդնդոց և ի վերուստ յո-

դոց «վայ ձոր, վայ ձոր». և կենդանւոյն ընկղմեցան ոգիք իբրև 10,000, զորս գիտէին և ի թիւս արկին. և զանծանօթիցն ոչ ոք գիտէր զհամարն. յաղագս որոյ կոչեցաւ անուն գաւառին վայոց ձոր:

Իսկ յետ 40 աւուր պատուհասին դադարեցաւ բարկութիւնն Աստուծոյ ի վերուստ. և ժողովեալ մնացորդք գաւառին կոչեն զկաթողիկոսն, և առնեն ժողով վանականաց. և բազում աւուրս ցայգապաշտօն կատարեալ՝ փոխեն զնշխարս սրբոյն ի միաբանակեաց վանն Թանահատի վանից, որք էին մշտապաշտօնք, հեռացեալք յամենայն փափուկ կերակրոց. վանն որոյ և Թանահատաք կոչեցան: Եւ շինեալ ի վերայ փոքրիկ մատուռ մի. զոր յետոյ յ728 թուականին շինեցին բնակիչք տեղւոյն եկեղեցի դմբեթայարկ գեղեցիկ յօրինուածովք. և եդին զտապան սրբոյն ի հիմն նորա:

Եւ էր կատարումն սրբոյն Ստեփաննոսի ի թուականութեանն Հայոց 184, ի հրոտից ի 15 և յուլիսի 21, յաւուր յիշատակի սրբուհւոյն Մարգարտայ և Սիմէոնի ազուաշին: Իսկ կինն տիրասպան անագան ուրեմն եկեալ ի սգաւորութիւն՝ մերկացեալ զհանդերձն և առեալ քարինս՝ ծեծէր զկուրծսն. և այնքան բաղխէր զի իջանէր վտակ արեանց. և մեծ ողբով և դառն աղաղակաւճչէր և խայտառակէր զչար գործսն իւր: Եւ եկեալ հան-

դէպ վանացն յարևմուտս կողս, յայնկոյս ձորակին փորեալ զաեղին, և թաղեալ զանձն մինչ յառինան՝ զամառն և զձմեռն տապակէզ և ցրտահար լինելով, վայէը և ողբայը զցայգ և զցերեկ. և զմեղս իւր խոստովանէը։ Յաղագս որոյ շարժեալ ի գութ հայրապետին՝ խնդրէր ի Տեառնէ ողորմութիւն նմա։ Եւ յաւուր միում ի ժամ պատարագին եւանէը գոչիւն ահեղ ի տապանէ սրբոյն «Թողեալ լիցին քեզ մեղք քո ոմ կին դու»։ Եւ լուեալ ամենեցուն վառս և գոհութիւն Աստուծոյ մեծի մարդասիրութեանն և անյիշաչար բարերարութեանն մատուցանէին։ Բայց կինն թէպէտ էառ զթողութիւնն, ոչ եւ ի տեղւոյն. այլ կացեալ ի նմին՝ վախճանեցաւ և թաղեցաւ յապաշխարութեան զբին իւր. և կայ հանդէպ վանացն։ Որ և այնպիսի մեծ մարդասիրութեանն գոհութիւն և վառք անհատ և անվճար յամենայն եղակաև բընութեանց այժմ և յանվախճան յաւիտեանս. ամէն։

ԼԲ

Տեսիլ սրբոյն Մերդի՝ եպիսկոպոսին Պատարայ եւ վկայէ, յաղագս անցելոյն, ներկայիս եւ ապառնեացն, ասացուածք յԱստուածաշունչ գրոց. զոր թարգմանեալ է Տեառն Ստեփաննոսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի։

Ի վերջնում դարի արմատաքի խլեսցի թագաւորութիւնն Պարսից։ Ելցէ զօրականն Իսմայէլի յանապատէն Եթրիբայ, և ժողովեսցէ զԳա-

բաւոն. անդ լիցի ասացեալն ի մարգարէէն Եզեկիէլէ «կոչեաց զգազանս անապատի և զթռչունս երկնից և հրաւիրեաց զնոսա՝ ժողովեցարուք և եկայք զի զենուիս մեծ զենցի ձեզ: կերայք, կերայք զմարմին հզօրաց և արբէք զարիւն սակայից»: Յայս Գաբաւոն ի Գաբեթ անկցին զօրաւորք Հռոմայեցւոց յորդւոց Իսմայէլի, զոր օրինակ նոքա սպանին զզօրաւորսն Եբրայեցւոց և Պարսից: Քանզի սրամտութեամբ և բարկութեամբ առաքեաց յերկիր ի վերայ մարդկան և անասնոց և գազանաց անտառի և անկոց և ամենայն պտղաբեր տեսակի. և եղիցի գալուստ նոցա խրատ անողորմ: Եւ երթիցեն առաջի նոցա չորք հարուածք՝ կործանուիս, կոխուիս և սպականութիւն և աւերուիս: Ասաց Մովսէս յորդիսն Իսրայէլի ոչ զի սիրէ զձեզ Տէր Աստուած տանել յերկիրն աւետեաց ժառանգել զնա. այլ վասն անօրէնութեան բնակչաց նորա:

Այսպէս զորդիսն Իսմայէլի ոչ զի սիրէ զնոսա Տէր Աստուած, տայ զօրութիւն աւերել երկիրս քրիստոնէից. այլ վասն անօրէնութեանն որ լինի. և վտանգ այլ այսպիսի ոչ եղև նոցա. և ոչ այլ լինիցի երբէք: Քանզի զգենուին արք հանդերձ շնացողաց. և որպէս կանայս պոռնիկս զարդարէին զանձինս իւրեանց. նոյնպէս և կանայք կային ի փողոցս և ի հրապարակս քաղաքաց յանդիման. և փոխանակեցին զբնական պէտս

յանբնականն, որպէս ասէ աստուածային առաքեալն. նոյնպէս և կանայք: Եւ մանէին առ մի կին հայր և որդի համանգամայն և ամենայն եղբայր և ազգային առ հասարակ. վասն որոյ և իմաստունն Պօղոս նախ քան զժամանակն աղաղակեաց առելով «վասն այնորիկ մանեաց գնոսա յախտ անարգութեան. զի էգք նոցա փոխանակեցին զպէտս բնականս. նոյնպէս և արուացն թողեալ զբնական պէտս իգութեանն՝ բորբոքեցան ցանկութեամբ ի միմեանս, արուք ընդ արուս զխայտառակութիւն գործէին. որ պարտ էր մոլորութեան նոցա յանձինս իւրեանց ընդունէին:

Արդ՝ վասն այսորիկ մատնեաց զնոսա Աստուած ի ձեռս բարբարոսաց, որոց անկցին ի մեղս և ի ժահահոտութիւն, և պղծեսցին կանայք նոցա ի պղծոց. և արկցեն վիճակս ի վերայ նոցա որդիքն Իսմայելի: Եւ մանեսցին պարսք յապականութիւն. և ի սուր անկցի կապուտիկիա և յաւերումն և բնաւին ի գերութիւն. Սիկիլիա եղիցի անապատ. և բնակիչք նորա՝ ի գերութիւն և ի սպանումն: Եղիցի Յուդայ յապականութիւն և ի գերութիւն. Հոռոմք ի փախուստ դարձցին. և կղզիք ծովու՝ յաւերումն, և բնակիչք նորա սրով և գերութեամբ կորիցեն: Հայք ի փախուստ դարձցին. և բնակիչք նորա՝ ի գերութիւն. Եգիպտոս և Արևելք և

Ասորեստան ընդ լծով և ընդ նեղութեամբ անկցին, ծառայեցուսցեն անխնայաբար և պահանջեսցեն յանձանց նոցա կշիռ ի վեր քան զզօրութիւնս նոցա, և եղիցին յանձկութեան և ի նեղութեան առաւել քան զորս ի գերութեան: Եւ լցցի երկիրն աւետեաց մարդով ի չորից հողմոց երկնից, որպէս մարախոյ բազմութեամբ: Եւ եղիցի ի նոսա ապականութիւն և սով. և բարձրասցի սիրտ սատակչաց նոցա. և յամբարտաւանութիւն ամբարձցին ի վեր քան զարժանն մինչև ցսահմանեալ իւրեանց ժամանակ. և կալցին մինչ ցելս հիւսիսոյ, մինչև ցարևմուտս. և եղիցին ամենեքեան ընդ լծով նոցա մարդ և անասուն, և թռչունք և ջուրք ծովուն լուիցեն նոցա. և անապատք դատարկացեալք ի բնակչաց նոցա՝ եղիցին յանձկութեան և ի նեղութեան առաւել քան զորս ի գերութեան: Եւ իւրեանց գրեսցեն գլերինս և զձկունս ծովու և զփայտ անտառի և զհող երկրի. և քարինք անպտուղք և երկք և քըրտունք երկրագործաց և ամենայն շահեմարանք նոցա եղիցին. և բարձրասցի սիրտ նոցա պահանջել զմեռեալս ըստ հաւասարութեան կենդանեաց. որբոց և այրեաց ոչ ողորմեսցեն, զտնանկն և զաղքատն անարգեսցեն և զամենայն ծեր խոտվեցուսցեն և ոչ գթասցին ի տնանկս. և անզգայ այսպն արասցեն և ծիծաղեսցեն զնոքօք որք իմաստութեամբն են պայծառացեալք. և ամենե-

քին լուսթեամբ ըմբռնեսցին և ոչ կարասցեն յանդիմանելիկամ շրջել ինչ. այլ եղիցին ամենեքեան յահէն զարհուրեալ. և խրատ նոցա չարաչար. և ոչ ոք իցէ որ կարիցէ այլայլել կամ պարսաւել զբանս նոցա. և եղիցի՛ ճանապարհ նոցա ի ծովէ մինչև ի ծով, յարևելից մինչև յարևմուտս, ի հիւսիսոյ մինչև յանապատն. և կոչեսցի՛ ճանապարհ նոցա անձկութիւն:

Եւ գնասցեն ընդ նա ծերք և պառաւունք, տնանկք և մեծամեծք, քաղցեալք և ծարաւեալք և կապեալք երանելով զմեռեալս. քանզի ասացեալն յառաքելոյ խրատ ապստամբութեան այս է: Քանզի ասէ, եթէ ոչ եկեսցէ նախ ապստամբութիւնն եւ յայտնեսցի մարդն անօրէնութեան՝ որդին կորստեան. արդ՝ ապստամբութիւն խրատ է: Եւ վասնզի էշ վայրի կոչեաց Աստուածգիրս մայել. վասն այսորիկ և իշավայրիք և այծեմունք անապատի և ամենայն տեսակք գազանաց ձեռընդելք եղիցին և ընտանասցին. սովեսցին և ապականեսցին և հալածեսցին մարդիկ. և գազանք սատակեսցին. և կոտորեսցին ամենայն փայտք անտառի. և դեղեցկութիւն լերանց ապականեսցի՛. և աւերեսցին քաղաքք. և եղիցին սահմանք նոցա անկոխք զի պակասեսցին մարդիկ. և պղծեսցի երկիր արեամբ և արգելցէ զպտուղ իւր. քանզի որ բռնապէս ունին զնոսա՝ չեն մարդիկ. այլ բարբարոսք և որդիք անապատի. և յանապատա-

ցուցանել եկեսցեն. ապականեալ և յապականեալք առաքեսցեն. և ծայրիւ սրոյ իւրեանց հարցեն զյղիս. և ի գրկաց մարց յափշտակեսցեն զմանկունս և հարցեն զգետնի. և եղիցին ի կերակուր գազանաց:

Եւ զքահանայսն ի ներքս ի սրբութիւնս ապանցեն. և ննջեսցեն ընդ կանայս նոցա ի տան սրբութեան, ուրանօր աստուածային խորհրդականութիւնն մատչէր. և զպատմուճան սրբութեան սպասու զգեցցին կանայք նոցա և սրդիք նոցա և դստերք նոցա. և զիցեն զայն ի վերայ երիվարաց իւրեանց. և կապեսցեն զգրաստս իւրեանց ի հանգստարանս սրբոցն. և եղիցին սպանողք և ապականիչք իբրև զհուր փորձիչ ազգի քրիստոնէից՝ քանզի ասէ սրբազան առաքեալն «ոչ ամենեքեան որ յիսրայէլէն են Իսրայէլացիք են»: Ապա ուրեմն ոչ ամենեքեան քրիստոնեայք են, որպէս ասէ գիրն, եօթն հազար ապրեցան յորդւոցն Իսրայէլի որք ոչ կրկնեցին ծունր Բահաղու. և ամենայն Իսրայէլ ապրեցաւ ի ձեռաց նոցա: Այսպէս և ի ժամանակի ապստամբութեան և խրատու որդւոցն Իսմայէլի սակաւ գտցին ճշմարիտ քրիստոնեայք. որպէս և ինքն Փրկիչն մեր ի սուրբ աւետարանին ասէ «արդեօք և Որդի մարդոյ եկեալ՝ գտցէ հաւատս յերկրի»: Նուազեսցի ի ժամանակին յայնմիկ հոգին. և բազումք ուրացցին զճշմարտութիւն և զկենարար

խաչն և զսուրբ խորհուրդն և առանց բռնութեան չարչարանաց ուրացեալն զԲրիստոս և երթիցեն դհետ ապստամբացն. քանզի յառաջադոյն առաքեալն քարոզեաց ասելով թէ ի ժամանակս յետինս ապստամբեսցին մարդիկ ի հաւատոցն առ ունայն հոգի մոլորութեան. և ի վարպապետութիւն դիւաց, ի կեղծաւորութիւն ստաբանից սաեալք իւրեանց խղճի մատց:

Եւ զարձեալ նոյն ինքն՝ «յաւուրս յետինս եկեսցեն ժամանակք չարք. զի եղիցին մարդիկ անձնասէրք, արծաթասէրք, հպարտք, ամբարտաւանք, հայհոյիչք, անհաւանք ծնողաց, անշնորհք, անսուրբք, անմիտք, անապրոյնք, մատնիչք, յանդգնունք, անժոյժք, վէնք, անբարեսէրք, որք ունին զկերպարանս աստուածպաշտութեան, և ի զօրութենէ նորա ուրացողք»: Եւ ամենայն տկարք հաւատով ի խրատուն յայնմիկ յայտնեցին, և ինքեանք զինքեանս որոշեսցեն ի սրբոց եկեղեցեաց իւրեանց յօժարութեամբն. նոյն ժամանակն կոչեաց զնոսա ի մոլորութիւն. քանզի խոնարհամիտք և լռինք, ճշմարիտ քրիստոնեայք և ազատք տանն Թորգոմայ և ոչ իմաստունքն և ընտիրքն ոչ խնդրեցին ի ժամանակին յայնմիկ զճշմարտութիւնն. այլ վոխանակ նորա խնդրեցին ինքնասէրքն, արծաթասէրքն, հայհոյիչքն, ամբարտաւանքն, յափշտակողքն, սրբեցողքն, պոռնիկքն, շունքն, անողորմքն, դողքն, ապստամբ-

քըն, անագորոյնքն, բանսարկուքն, անժոյժքն, վէսքն, մատնիչքն, հպարտքն, ցանկասէրքն, ծառայաբարոյքն, որք ունին զկերպարանս բարեպաշտութեան և ի զօրութենէ նորա ուրացողք: Այսպիսիքս եղիցին սպասաւորք աւուրցն այնոցիկ. և զամենայն զոր լինչ և հրամայեսցէ նոցա՝ խնդութեամբ կատարեսցեն: Եւ երկիւղածն ի Տեառնէ յոչ ինչ համարեսցի առաջի նոցա:

Եւ եղիցին մարդիկ ի խրատու որդւոցն Իսմայէլի ի կարիս մինչև անյուսալի մտաց իւրեանց. և բարձցի պատիւ քահանայից և պակասեսցէ պաշտօն ի տան Աստուծոյ. և լռեսցեն ամենայն պատարագք եկեղեցւոյ. և եղիցին քահանայքն որպէս ժողովուրդն և եղիցին յորժամ լցցի ժամանակ նեղութեան նոցա. բազմասցի նեղութիւն մարդոյ և անասնոյ. և ապականեսցին մարդիկ և անկցին յերկիր. և յաւելցէ այլ միւս ևս հարուած մարդկան: Ննջեսցէ այր յերեկորին և յարուցեալ ընդ առաւօտն գտցէ առ դուռս իւր պահանջող ոսկւոյ և արծաթոյ. և մաշեսցի ամենայն տուրևառ ոսկւոյ և արծաթոյ. և վաճառեսցեն զամենայն պիտանիս իւրեանց. Յայնմ ժամանակի վաճառեսցեն մարդիկ զորդիս իւրեանց. արդ էր աղագաւ, ասեն, անառիկ առնիցէ Աստուած զհաւատացեալս կրել նեղութիւնս. զի երևեսցին հաւատացեալքն և անհաւատքն, և որոշեսցի որոմն ի ցորենոյ.

վասն զի հուր փորձիչ է ժամանակն այն, և երկայնամտէ Աստուած զի երևեսցին ընտրեալքն. ըստ որում ասէ «երանի է ձեզ յորժամ նախատիցեն և չարչարիցեն և ասասցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ, ցընծացէք և ուրախ լերուք զի վարձք ձեր բազում են յերկինս»։

Իսկ ի յետին նեղութեան որդւոցն Իսմայէլի, ի վտանգել մարդկան և ի չունելն յոյս փըրկութեան ի ձեռաց որդւոցն Իսմայէլի, յայնժամ յանկարծակի յարիցէ ի վերայ նորա թագաւորն Յունաց, այսինքն Հռոմոց սրամտութեամբ մեծաւ, և զարթիցէ որպէս այր ի քնոյ, զոր համարէին մարդիկ մեռեալ և յոչինչ պէաս։ Սա ելցէ ի վերայ նոցա ի ծովէն Եթովպացւոց, և արկցէ սուր և աւերուած յԵթրիբն՝ յաշխարհն նոցա. և գերեսցէ զկանայս և զմանկունս նոցա։ Եւ ի բնակիչս երկրին իջցեն որդիք թագաւորին սրով. և հարցեն զնոսա և արկցեն ի վերայ նոցա ահ. քանզի ամենայն բանակք նոցա տացին ի ձեռս թագաւորին Հռոմոց. և եղիցի լուծ թագաւորին ի վերայ նոցա։ Եւ հասցէ ի վերայ նոցա անձկութիւն, քաղց և ծարաւ և նեղութիւն. և եղիցին ծառայք ինքեանք; և կանայք և որդիք նոցա ծառայեսցեն որոց ծառայեցին նոցա. և եղիցին ի ծառայութիւն նոցա չարագոյն և դառնագոյն հարիւրապատիկ. և խաղաղասցի

երկիրն աւերեալ ի նոցանէ: Եւ ելցեն իւրաքանչիւր ոք յերկիր իւր և ի ժառանգութիւն իւր. Հայք, Կիլիկիա, Սուրիա, Ափրիկէ, Գաղատիա, Սիկիլիա. և մնացեալքն ի գերութենէ մի՛ ելցեն յաշխարհացն յիւրեանց յերկիր. բազմացին յերկրին որպէս մարախ, և աւերեսցի Արաբիա և ծովեզերք խաղաղասցին. և բորբոքեսցի բարկութիւն և սրտմտութիւն թագաւորին Հոռոմոց ի վերայ ուրացողացն զՏէր մեր Յիսուս Քրիստոս:

Եւ եղիցի խաղաղութիւն մեծ, որպիսի ո՛չ եղև և ո՛չ եղիցի. զի ի յետինս և ի վախճանի եղիցին յուրախութիւն յերկրի, և շինեսցեն զքաղաքս, և ազատեսցեն զքահանայս ի վտանգէ իւրեանց և հանգիցեն մարդիկ ի ժամանակին յայնմիկ ի նեղութենէ իւրեանց: Այս է խաղաղութիւն զոր աստուածային առաքեալն անուանեաց, եթէ յորժամ ասիցեն խաղաղութիւն և շինութիւն և ուրախութիւն, յայնժամ յանկարծակի ի վերայ նոցա սատակումն (եկեսցէ): Եւ դարձեալ Տէրն յաւետարանն ասէ, եթէ որպէս յաւուրսն Նոյի ուտէին և ըմպէին, կանայս առնէին և արանց լինէին, այնպէս եղիցի և յաւուրն յետնում: Եւ յայնմ խաղաղութեան նըսատցին մարդիկ խնդութեամբ յուտել և յըմպել, ի ցնծալ և յուրախ լինել, շինել շինուածս որպէս զի ոչ գոլ նոցա երկիւղ կամ հոգք:

Յայնժամ ըստ մարգարէութեանն Եզեկիէ-

լի որ ասէ, եթէ յաւուրս յետինս ի վախճանի աշխարհիս ելցեն Գոգ և Մագոգ յերկիրն Իսրայէլի, բացցին դրունք հիւսիսոյ. և ելցէ զօրութիւն ազգացն զորս արգել Աղէքսանդր ի ծագս հիւսիսոյ՝ Գոգ և Մագոգ, Անիպ և Ագիպ, Աքիազ, Դիփոր, Փորինացիք, Աղբենացիք, Հոնք, Փարզիացիք, Դեկղիմացիք, Սարմատք, Թեթղէացիք, Զարմեատացիք, Կաքոնացիք, Ամազարդք, Գարմադացիք, Մարդակերք, Թարփացիք, Ալանք, Փասկղինկացիք, Արգնէացիք, Սատաուէացիք: Այսոքիկ 22 թագաւորութիւնք որք են արգելեալք ընդ ղրամբքն զոր կանգնեաց Աղէքսանդր, Եւ տեսցեն մարդիկ և զարհուրեսցին. և փախիցեն և թաքիցեն ի լերինս և յայրս և ի գերեզմանս. և սատակիցին բազումք, և ոչ ոք իցէ որ կարիցէ թաղել. քանզի ազգքն որ ելանեն ի հիւսիսոյ, ուտեն զմարմինս և ըմպեն զարիւնս գազանաց. նոյնպէս և զամենայն պիղծ և զկարիճս, զսողունս և զմեռելոտիս, զվիժածս կանանց. զենցեն զմանկունս և տացեն ուտել մարց իւրեանց:

Եւ ապականեսցեն զերկիր. և ոչ ոք իցէ որ կարիցէ կեալ առաջի նոցա. և յետ եօթն և կիսոց ամաց հասցեն ի քաղաքն Յոպպէ: Առաքեսցէ Տէր զզօրավար իւր և հարցէ զնոսա ի վայրկենոջ միում: Եւ յետ այնորիկ իջցէ թագաւորն Յունաց, և բնակեսցէ Երուսաղէմ եօթն և

կէս (ամ). որք են ամք 10 և կէս: Եւ ի կատարել ամացն տասանց և կիսոց երեսցի որդին կորստեան: Սա ծնցի ի Բորազին և անցի ի Բեթասայիդայ, և թագաւորեսցէ ի Կափառնայում. և ուրախասցի Բորազին զի ի նմա ծնաւ. և Բեթասայիդայ՝ զի ի նմա անաւ. և Կափառնայում՝ զի ի նմա թագաւորեաց: Վասն այսորիկ և յաւետարանն Տէրն երիցս վայ տայ ասելով վայ քեզ Բորազին և Բեթասայիդայ՝ և դու Կափառնայում՝ մինչև յերկինս բարձրացար, մինչև ի դժոխս իջցես:

Եւ յորժամ երեսցի որդին կորստեան, ելցէ թագաւորն Յունաց ի Կագաթան տեղի ուրանօր կանգնեցաւ կենարար փայտ խաչին. յորում բեւեռեցաւ Տէրն մեր Աստուած, և զկամաւորն վասն մեր կրեաց զմահ: Եւ առցէ թագաւորն Յունաց զպատակն իւր. և դիցէ ի վերայ խաչին. և տարածեսցէ զձեռս իւր յերկինս: Եւ տացէ զթագաւորութիւնն իւր ի ձեռս Աստուծոյ և Հօր. և համբարձցի խաչն յերկինս հանդերձ թագիւն. վասն զի խաչն յորում բևեռեցաւն վասն հասարակաց ամենեցուն փրկութեան, նախ նա հանդերձցի երևիլ ի գալստեան նորա ի յանդիմանութիւն անհաւատից: Եւ աւանդեսցէ թագաւորն Յունաց գհոգի իւր. և յայնժամ խափանեսցին իշխանութիւնք և պետութիւնք. և լցցի մարգարէութիւնն Դաւթի որ ասէ «լերինք ցըն-

ծասցեն առաջի Տեառն. զի գայ և գայ նա ի դատել զերկիր»։

Արդ՝ որդին կորսեան ի ցեղէն Դանայ է, ըստ մարգարէութեան նահապետին Յակոբայ, օձ դարանակալ ի ճանապարհի նստեալ սպասելով խածանել զգարշապար երիվարի և ընկենուլ ըզհեծեալն յետս մնալով փրկութեան Տեառն։ Արդ՝ հեծեալ է ճշմարտութիւն և արքայութիւն արդարոց. իսկ գարշապարն են սուրբքն ի ժամանակին յայնմիկ հեծեալ յերիվար ճշմարիտ հաւատոյն, խածցին յօձէն, յորդւոյն կորսեան ի գարշապարի յաւուրն յետնում ի ցնորս և ի սուտ նշանս անզօրս և անբարտաւանս, քանզի կոյրք տեսցեն. և կաղք գնասցեն. խուլք լուիցեն. և դիւահարք բժշկեսցին. և փոփոխեսցէ զարեգակն ի խաւար և զլուսինն՝ յարիւն։ Այսոքիւք սուտ նշանօքս իւրովք և ցնորիւք մոլորեցուսցէ զհաւատս և զընտրեալս։ Որպէս և զայս հայրապետին Յակոբայ մատց ակամբն եառս զհանդերձեալ լինելոց նեղութիւն ի վերայ երկրի, և մարդկան անձկութիւն ի սատակիչ յօձէն՝ յորդւոյն կորսեան՝ ասաց յայսպիսի դէմս մարդկան արարեալ զօձն, ասէ «փրկութեան քում սպասեցո՛ւք Տէր»։ Իսկ Տէրն յառաջագոյն ասաց եթէ հնար ինչ իցէ մոլորեցուցանել և զնտրեալսն. քանզի մատչէ յերուսաղէմ, և նստցի ի տաճարին Աստուծոյ, հաւասար Աստուծոյ, մարդոյ տեսակով մարմ-

նաւորի ի սերմանէ առն և յարգանդէ կնոջ ի ցեղէն Դանայ՝ Յուդայ Իսկարիովտացի որ մատնեաց իսկ զՏէրն. և նա ի ցեղէն Դանայ էր:

Իսկ ի բազմանալ անօրէնութեան որդւոյն կորստեան ոչ կարէ անտես առնել Աստուած զկորուստ ազգի մարդկան զորս գնեաց իւրով արեամբն. առաքեաց վաղվաղակի զմաերիմ ծառայս իւր զՆովք և զԵղիա ի յանդիմանութիւն հակառակորդին. առաջի ամենայն ազգաց յանդիմանեցան զնա սուտ գոլ և խաբեբայ, և առաջնոցն եթէ վասն մոլորութեան և կորստեան բազմաց եկն: Եւ տեսեալ զնա ազգացն յամօթ եղեալ, և զմոլորութիւն նորա յանդիմանեալ, թողին զնա, և փախիցէն ինքեանէն, և յարեցին ի սուրբսն յայնոսիկ: Իսկ նա տեսեալ զինքըն չարաչար յամօթ եղեալ և յամենեցուն արհամարհեալ՝ սրտմտութեամբ և բարկութեամբ բորբոքեալ սպանանէ զսուրբսն Աստուծոյ: Յայնժամ երևեցաւ նշան փառաւոր գալստեան Որդւոյ մարդոյ Աստուծոյ յերկնից. և եկեաց ի վերայ ամպոց երկնից փառօք երկնայնօք, և ամենայն հրեշտակապետօք և հրեշտակօք իւրովք. և սատակեսցէ զչարն Հոգւով բերանով իւրով: Եւ աստ առաքելականին յայտնաբանութիւն՝ յայնժամ ծագեսցին արդարքն որպէս լուսաւորք. և ամբարիշտք դարձցին ի դժոխս և ի կորուստն յաւիտենից:

ԼԹ.

Վասն գալոյն Մրվանայ՝ տաճիկ զօրավարին, ի Սիւնիս. եւ փեսայանալոյն Բաբանայ պարսկի Սիւնեաց տեառն Վասակայ. եւ այրելոյն զՄաճենոցն. եւ կոտորելոյն զՊեղամուսի եւ զԲաղատականն։

Ի լինուլ 176 թուականին Հայոց ելանէ անիծեալն և աշխարհաւերն Մրվան բազում զօրօք Տաճկաց ի Հայս. և իբրև հուր սաստիկ այրեաց և հրդեհեաց զգեղեցկութիւն աշխարհիս որոյ անուն իսկ աւարանշան ճանաչիւր։ Եւ բազում աւարաւն եկեալ ի Սիւնիս՝ ամրանայ ի բերդաքիւղն Շաղատու. և կամէր զայն ևս ապականել զգեղեցիկ աշխարհն Սիսական. և կուտեալ զզօրսն ի գաւառին Ծղկաց ի նմին տեղւոջ։ Ապա Վասակ՝ Սիւնեաց Տէր և իշխանաց իշխեցող, գնայ փութանակի և ածէ զԲաբան պարսիկ բազում զօրու յԱտրպատականէ, և եհար զՄրվան սաստկապէս, և փախստական արարբայց ինքն Վասակ ի նմին ամի վախճանի։

Եւ նոյն ժամայն առնու Բաբան զդուստրն նորա ի կնութիւն իւր. և առնէր ընդ ձեռամբ զգաւառն։ Ի սոյն ամի և Տէր Ներսէհ Սիւնի՝ որդի Փիլիպպէի, սպանանէ վասն ոխութեան ինչ զՎարազ-Տրդատ՝ որդի Ստեփաննոսի՝ Աղվանից իշխանի, և զորդին ևս ի գոգ մօրն սատակէ. և զամենայն ինչս նորա յաւարի առնու։ Այս Վարազ-Տրդատ ի Միհրական տոհմէն էր, որ ու-

նէր զսեպհական տէրութիւնն Աղվանից։ Յետ այսր անհնազանդ եղև գաւառն Բաղասականայ հրամանի և օրինաց Բաբանայ, որոյ եկեալ ձեռնտուութեամբ Աբլ-Ասադայ Աղվանեցւոյ, կոտորեաց սասպիկ և անողորմ զգաւառն Բաղասականայ. և մաշեաց մինչ ի կանայս և մատաղ մանկտիս. որք վասն անմեղ խողխողմանցն պսակելոց են ի Քրիստոսէ։

Իսկ-ի գալ ամին գնաց Բաբան ի գաւառն Գեղաքունեաց և էարկ ի սուր սուսերի զբնակիչսն ոգիք իբրև 15,000, և զյոգնապայծառ մենարանն և զհռչակելի ուխտն Մաքենոցաց յաւարի առեալ զամենայն ստացուածն՝ այրեաց և քանդեաց զամենայն շինուածն. բայց կրօնաւորքն նախիմաց եղեալ և յերկուս բաժանեալ՝ կէսքն գնացին ընդ հօրն Սաղոմի, ոչ առաջնոյն որ հարանց հայր կոչեցաւ, այլ ընդ նորին աշակերտին, ի գաւառն Շիրակայ, ի սուրբ ուխտն Զրեսկ. յորում պայծառանայր սոյն այս Սաղոմոն ճգնութեամբ սիւնամուտ լեալ։ Եւ կէսքն գնացին ի յԱղվանս առաջնորդ կալեալ զմի ոմն յեղբարցն՝ բնակեցան ի Միհր-Ներսէհեայ վանքն որ է Զրվշտիկ։ Եւ տեղին անբնակ մնայր. ապա յաւուրս Գրիգորի՝ Սիւնեաց Տեառն, որ Սուփան կոչեցաւ, վերստին նորոգեցաւ և շինեցաւ մեծ եկեղեցին. և պայծառացոյց առաւել քան զառաւել։

ԼԴ.

Վասն Թանահատի վանիցն. եւ հոն Մխիթարայ։

Յայնմ ժամանակի պայծառանայր սուրբ և երկնահրաշ կարգօք դերափառ և հռչակելի ուխտն Թանահատի վանից. որ կայ ի վերոյ Սիւնեաց յառորոտ լերինն ի բարձրաւանդակի միոջ ի մէջ անտառին։ Եւ էին սահմանաւորք, մշտապաշտօնք հեռացեալք յամենայն փափուկ կերակրոց, միայն աշտուճ հացիւ և լոկ ջրով վճարէին պէտս իւրեանց, և զայն յաւուրն միանգամ ընդ երեկս. լուիկք, հեզաշարժք, որք իբր կանթեղունս անշէջս կախեալք լինէին յաղօթս գոյգ և գոյերեկ. և պաշտօնք իւրեանց երբէք ոչ խափանէին գոյգ և գոյերեկ։ Եւ բայց ի սպասաւորացն ընդ դրունս վանից ոչ ոք ելանէր արտաքս. և թէպէտ բազում անգամ հարկեցան յիշխանացն և յեպիսկոպոսաց Սիւնեաց՝ ոչ առին յանձն ի կիւրակէքն ի թան կամ ի պանիր կամ յիւղ խթիլ, այլ բանջարօք և ընդուվ շատանային. վասն որոյ թանահատաք կոչեցան։ Եւ ի գլխաւոր տօնսն ի ձկթոյ ճաշակէին և սակաւ բաժակօք. և գայս ծանոյց մեզ պատմութիւնն երանելւոյն Մաշտոցի որ ի Սևան։ Բայց գտաք յիւրոց արձանագրութեանցն եթէ 400 ամաւ յառաջ շինեցաւ եկեղեցին քան զհայ թուականն, յիշխանացն Սիւնեաց յանուն սրբոյ նախավկային Ստեփաննոսի։

Եւ էր եղեալ հայր վանիցն որոյ անուն Մխիթար. որ անցեալ էր ճգնութեամբ ընդ բոլոր հոյլս առաքինեաց, և զգազանս վայրենիս, զարջս և զգայլս ածէր ի հնազանդութիւն սուրբ եկեղեցւոյն և ծառայեցուցանէր վանիցն, զոր և արձանն եցոյց եթէ արար հարկատու մեքորայ, այսինքն եկեղեցւոյս: Գայլքն զՂոլիբս հօտիցն պահպանէին զգուշութեամբ և զանդեայս արջառոցն. և արջքն քամակօքն բեռնակիրք լինէին: Եւ հանապազ երթայր յանտառն սուրբ հայրն Մխիթար. և նաեէր հանդէպ վանիցն. և ժողովէին ամենայն գազանքն և վայրիքն առաջի նորա, և որպէս զգայունք խնդրէին ի նմանէ աղօթս և ողորմութիւնս ըստ իւրաքանչիւր պիտոյից: Իսկ սուրբ հայրն կարգեալ սահմանաւ զվանն. և յետ բազում ամաց փոխի ի կարգս հրեշտակաց. և զնի սուրբ նշխար նորա վայտեայ արկղօք մերձ եկեղեցին ի փոքր բլրակի միոջ, յորում շինեալ վիրապ գեանափոր և սրբաշէն՝ հանգուցին զնա անդ. որ մինչև ցայսօր կայ և կատարէ մեծամեծ սքանչելիս ի հիւանդս և յախտաժէտս: Որոյ բարեխօսութեամբն զթասցի Քրիստոս յաշխարհս այս և ի մեզ յետին թշուառացեալս:

ԼԸ.

Վասն եպիսկոպոսացն Սիւնեաց, որ վկնի սրբոյն Ստեփանոսի յաջորդեցան ի տեղին։

Կացեալ յաթոռ եպիսկոպոսութեան սուրբն Ստեփաննոս՝ քառներորդ երկրորդ եպիսկոպոս Սիւնեաց, վախճանի վկայական մահուամբ։ Ապա վկնի նորա յաջորդէ ի տեղին Տէր Յովսէփ՝ այր ճշմարիտ և լաւ վկայեալ յամենեցունց, ամս 17. ապա Տէր Յովակիմ՝ ամս 17. Տէր Սադովկ՝ ամս 32. Տէր Յովհաննէս՝ ամս 2. Տէր Սաղոմոն՝ ամս 7. Տէր Եղիա՝ ամս 8։ Տէր Թէոդորոս՝ ամս 18. Տէր Գէորգ՝ ամս 8. Տէր Դաւիթ՝ ամս 17։ Սա էր յաւուրս Փիլիպպէի՝ իշխանի Սիւնեաց, և Գրիգորի Սուփանայ՝ մեծ նահապետին Սիւնեաց, որդւոյ Սահակայ. որ հաստատեաց զաթոռ եպիսկոպոսութեանն ի Տաթևոյ վանս. և ընդարձակեաց զսահմանս նորուն զոր յիւրում տեղւոջ ասացից կարգաւ։

Յետ սորա ունի զաթոռն Տէր Յովհաննէս՝ ամս 10. ապա՝ Տէր Սաղոմոն առաքինին, որ էր զարդարեալ ամենայն ներանձնական առաքինութեամբ, և պայծառանայր իբրև արեգակն ի կամարն երկնից. և բազում իսկ ճոխացոյց վարքմամբ զեպիսկոպոսարանն։ Սա կեցեալ յեպիսկոպոսութեանն ամս 17՝ վախճանի։ Ապա երանելին և բազմաշխատն, արքայակերպն Տէր Յովհաննէս՝ ցան-

կալին հրեշտակաց և մարդկան, ամս 38. որ կանգնեաց զերկնակառոյց քաւարանն ի Տաթև գորոյ զհանգամանս գովելի գործոցն ճոխագոյնս կամիմ ճառել. բայց այժմ յետ բերելոյ զկարգ եպիսկոպոսացն և բազում բանիւք ճառելոյ զգանազան գործս նոցին, պարտ վարկանիմ անդրէն դառնալ և զիշխանացն ցուցանել հանգամանս և զգրոյցս ըստ կարի իմում, պատերազմաց, զշինութեանց և զխաղաղութեանց և զարմացուցիչ գործս և շինուածս տանց Սատուծոյ, որ ի տեղիս տեղիս սեպհական աշխարհիս իւրեանց կանգնեցին արձան անջնջելի և յիշատակ անմահ։

Ձ.Զ.

Վասն Շահանդխտոյ՝ արեւելից աղջկանն. եւ վասն մեծ եւ սահմուռ հրաբխոյն որ եղեւ յաշխարհիս Սիւնեաց։

Կամիմ պատմել ձեզ ոմ[ի] եղբարք՝ հրաշս զարմանալիս որ եղեն յայնմ ժամանակի աստուածային իմն տեսչութեամբ. քանզի էր գուսար մի վարազ-Տրդատայ՝ Աղվանից գահերէց իշխանի, որոյ անուն Շահանդուխտ. և ունէր պատկեր նոր և օտար. և զեղ նորա յոյժ չքնաղ և զարմացուցիչ տեսողաց. որ և ոչ ումեք նիւթեղէն կարծիւր. այլ իբր ի լուսատարը օդոյ և յանօսր շողից կերպացեալ։ Որ և խնդրեցին հարս ի տանէ Թորգոմեան։ Եւ էլ նա յաշխարհէն իւրմէ ի հայ-

բենի տանէ. և գնայր ի կնութիւն հայկազուն իշխանացն. և մտեալ ի Բաղաց սահմանն՝ երթայր ի ճանապարհն յանքոյթ տեղիս յառապարի մի յորում էր փրթուած քարի մի անագին խորութեամբ, որ իբր յանդունդս հայէր հանդէպ մեծի հայրապետանոցին Տաթևոյ: Եւ անա անդ դողեալ, ծուարեալ կային բազմութիւնք լեզեոնաց խումբ զօրաց սուսերամերկաց, որք վասն սըխրալի գեղոյ նորա եկեալ էին ի Պարսից, և պահէին զանցս և զկիրճս ճանապարհացն զի չափշտակեսցեն զաղջիկն:

Եւ նոքա անիրաւեկ էին բանին. յանկարծակի յարեան ի վերայ նոցա. և սուր ի վեր կալեալ սկսան յանխնայ կոտորել զբիւտոնեայսն: Ապա տեսեալ զայն մեծահաւաս օրիորդին՝ զիտաց զպատճառն, և կնքեալ զինքն տէրունեան նշանաւն, մտրակեաց զերիվարն և թռեաւ ընդ փրթուածս քարին: Եւ զի զայս դառաք ի հնացեալ նամակի գրեալ իւրով իսկ ձեռամբն, որ էր այսպէս. «Ես մեղուցեալ աղախինս Քրիստոսի Շահանդուխտ՝ դուստր Վարազ-Տրդատայ, երթայի հարսն ի տունն Թորգոմեան. և եկեալ ի սահմանս Բաղաց, ի գլուխ քարիս ընդ որ անցանէ ճանապարհն: Եւ անա յանկարծակի պատահեցան ինձ Իսմայելացիք որք վասն համբաւոյ գեղոյ իմոյ կամէին յափշտակել զիս. և սուր ի վերայ եդեալ կոտորէին զհեծելազունդն որ

ընդ իս. ապա լաւ համարեցայ քան ի ձեռն այլ-ազգեացն գայլապատառ կորնչիլ, վասն Քրիստոսին իմոյ գահավէժ մեռանել. և յիշելով զսուրբ Աստուածածնինն և զսուրբն Հռիփսիմէ՝ յանձնեցի զիս սուրբ երրորդութեանն. և կնքեցի զողորմելի անձն իմ սուրբ խաչիւն. և դարձուցեալ զերասանակ երիվարին՝ թռեայ ընդ քարս. և ապա յահագին շնչմանէ հողմոյ և աներևոյթ զօրութեամբ իջայ իբր կառօք ի խորութիւն ձորոյս ես և երիվարն իմ անվնաս: Եւ դադարեալ անդէն՝ մեծաւ հիացմամբ զոհութիւն մեծ վերառաքեցի այնպիսի փրկողին զիս. և իջեալ ի հեշտավայրն՝ նուիրեցի զանձն իմ Քրիստոսի. և ուխտեցի այլ ոչ ելանել աստի մինչ ցվախճանն իմ:

Իսկ Իսմայելացւոցն տեսեալ զայն՝ մեծաւ զարմացմամբ թողին անվնաս զզօրն իմ և գնացին. և ես աստէն ի տեղւոջս շինեցի մատուռն մի և խցիկ մի. և կրօնաւորեցայ ի տեղւոջս զամենայն ժամանակս իմ. թէպէտ բազումս թախանձեցայ ի ծնողացն իմ և ի հարանածուս իշխանացն, ոչ շարժեցայ ի տեղւոյս: Եւ կոչեալ զերանելի եպիսկոպոսն Սիւնեաց՝ յանձնեցի նմա զիս, և զամենայն ինչս իմ եաւս ի ձեռս նորա՝ զկէս մասն բաշխելի կարօտեալս և զկեսն տալի սուրբ եկեղեցին Տաթևոյ: Նա և զտեղիքս զայս աւանդեցի սուրբ եկեղեցւոյն ամենայն ձորովս, որ ի

Շնհէրոյ սահմանէն ի վեր մինչ ի Գինական գետն»։ Ահա այս իսկ իւրով ձեռամբն էր գրեալ Շահանդրխտոյ։ Եւ կացեալ ինքն անդէն՝ այլ ևս կուսանաց ժողովեաց առ ինքն. և մեծամեծ ճգնութեամբ կեցեալ ամս 30՝ վախճանի։ Եւ երթեալ եպիսկոպոսին՝ դնէ ի հանգստի ի նմին տեղւոջ զերանելի նշխարս սրբոյն. որոյ բարեխօսութեամբ խնայեսցէ Քրիստոս ի տունս յայս և ի վիճակեալ տեղիական հաւտս սորա։

ԼՀ

Յաղագս իշխանացն Սիւնեաց Սահակայ եւ այլոցն. զործ եւ վախճանի նոցին որ չերկերիւր եւ չեօթանասուն թուականին ընդ այս. զոյցի եւ համառօտ ցեղակարիւճ բանից եւ գործոց նոցա։

Ի հայրապետութեան Հայոց Տեառն Դաւթի կաթողիկոսի, և յազարապետութեան Սմբատայ Բագրատունոյ էր իշխան Սիւնեաց մեծ նահապետն Սահակ որ արքունական ճոխութեամբ վարէր զտէրութիւն իւր. և յոյժ միաբան և միախորհուրդ գնայր ընդ Սմբատայ՝ ազարապետի Հայոց, յամենայն գործս պատերազմաց և յօգտակարութիւն աշխարհիս Հայոց։ Յաւուրս յայսոսիկ ունէր ի ծառայութեան զաշխարհս Հայոց մեծ ամիրապետն Մայմուն. որ և առաքէ ոստիկան ի Հայս փոքր գնդաւ Հաւլ անուն։ Եկեալ նորա յաշխարհս՝ հաստանէ ի դուռն Դվին քաղաքի. և կամէր մտանել

և բնակել ի նմա: Էր և անդ այր ոմն ի կայսերական տոհմէ Սևադայ անուն, որ առեալ էր իւր կին ի Բագրատունի տանէ զԱրուսեակ. և սակս այնր բռնացեալ ունէր դյոլով մասն աշխարհիս Հայոց:

Սա ընդվզեալ և խանդացեալ ընդ Հաւլն միաբանութեամբ Սմբատայ Բագրատունւոյ և Սահակայ՝ Սիւնեաց տեառն, դուժարատակ պատերազմի խմբեալ կամէր կռուել: Եւ թէպէտ հայրապետն Դաւիթ բազում միջնորդեաց՝ ոչ կարաց համոզել. ապա յարուցեալ Հաւլն իբր 2000 աւ խմբեաց ի պատերազմն ահագին յարձակմամբ յեզր Հուրապդան գետոյն հանդէպ կաւակերտի. փախոյց զնոսա. և անդէն հարեալ զզեղեցկադիտակ իշխանն Սիւնի Սահակ՝ դիաթաւալ յերկիր ընկեցոյր. և Սևադայն և Սմբատ հազիւ մազապուր ճողոպրեալք եղեն: Իսկ երանելի հայրապետն Դաւիթ լուեալ և անհնարին ողբովք հեծեծէր. և ընթացեալ բազմամբոխ պաշտօնէիւք՝ կազմէր զդագաղն արքայակերպ. և բարձեալ զմարմինն մեծահանդէս պաշտամամբք, սաղմոսիւք և օրհնութեամբ բերեալ ի կաթողիկոսարանն ի Դվին. և անդ դնէ ի քնարանի մերձ սուրբ քաւարանին: Իսկ զկնի սորա պայազատէ դիշխանութիւն սորա որդին իւր Գրիգոր որ փաղաքշական անուամբ Սուփան յորջորջիւր, այր մեծանձնեայ և բազմախել և հնարաւոր յամե-

նայն իրս կենցաղոյս. որ առաւել քան զնախնիս իւր կարգեր զգահ իշխանութեան իւրոյ. և տնօրիներ զչինութիւն աշխարհիս:

Բայց յետ Դաւթի յաջորդէ ի հայրապետութիւն Հայոց Տէր Յովհաննէս ի Կոտայից, ի գեղջէ Ովայից. և վասն խստամբեր վարուցն և ահարկու սաստից ի վերայ անզգամաց քրիք ոմանք ի նոյն տանէ երևեալ ատելօղ բանիւք պատերեցին զԲագարատ Իշխան Հայոց, և զայլս ևս. և հրապուրեցին յաքսորումն կաթողիկոսին: Զոր իմացեալ իւր՝ կամաթող լինի աթոռոյն, և բնակէ միայնիկ ի վանս Այրից: Զոր լուեալ մեծին Սուփանայ Սիւնեաց՝ ոչ ժուժեաց մեծի վնասուցն և զրպարտութեանն. այլ գնացեալ առ սպարապետն Սմբատ խորհի ընդ նմա. և լինին վրէժխնդիր սրբոյ առնն Աստուծոյ: Եւ անդրէն ածեալ վերսաին հաստատեն յաթոռն զՏէր Յովհաննէս: Իսկ չարակեզուքն ամենայն ի վերուստ մեծամեծ պատուհասիւք սատակեցան: Յետ այսր գործոյ մինչ վարէր զիշխանութիւնն ճոխաբար Գրիգոր, ոչ ժուժացեալ չարին. այլ արկ նախանձ չար ի սիրտ Բաբգենի՝ եղբօր Փիլիպպէի, որդւոյ Վասակայ, միւս նահապետին Սիւնեաց, որ և ինոյն ցեղէ. և խանդացոյց և զրգռութիւն չար ի մէջ նոցա զարթոյց զօրէն կայենի և Հաբելի: Որք և գումարտակ ի վերայ իրերաց կարգեալ պատերազմեցան. և սպան Բաբգէն զԳրիգոր. և ինքն

յետս կործանեցաւ չարաչար գայթակղութեամբ ի սիրաւանդ օրինաց սիրոյն։ Ապա մինչ այս այսպէս լինէր՝ բարձեալ ընտանեաց նորա մեծակական որբովք՝ տարեալ հանգուցին ընդ հարս իւրեանց։ Եւ պայազատէ զաէրուքիւն նորա վասակ՝ որդի իւր, որ ըստ գգուանաց փաղաքշականին, Գաբուռ կոչիւր։

Սա փեսայացաւ Աշոտոյ Բագրատունոյ՝ որդւոյ Սմբատայ, որ թագաւորեաց իսկ Հայոց, և էառ զդուստրն նորա Մարիամ իւր ի կնութիւն։ Որ և ի սիրելն Աշոտոյ յոյժ հպատակ էր սա գործոց և կամաց իւրոյ աներոյն. և նա յոյժ մաերմաբար հոգայր վասն վասակայ. սակս որոյ և անցեալ եղև փառօք և իշխանութեամբ ընդ նախնիս իւր խառնեալ ի թագաւորեալսն Բագրատունի. Ահա յայսմ ժամանակի էր ամիրապետ Պարսից զոր սուլտան կոչեն այժմ, անիծեալն Ջաֆար. և առաքեալ էր ի Հայս ոստիկան մի Աբուսէճ անուն որ եկեալ ի Տարօն կալաւ զԲագարատ իշխանն. և եդ ի կապանս։ Վասն որոյ յարուցեալ ի վերայ բնակիչք Տօրոս լերինն՝ սպանին զԱպուսէճ և փախստական արարին (զզօրսնորա)։ Լուեալ զայն ամիրապետին և յոյժ զչարեալ՝ առաքէ զոմն չարագոյն Բուղայ անուն ծանր զօրու, և հրամայէ զամենայն իշխանս և զլխաւորս Հայոց ածել կապանօք առ ինքն. և զայլսն ի սուր սուսերի մաշել։ Որ և եկեալ կալաւ զիշխանսն

Հայոց զԱշոտ և զԴաւիթ՝ որդիս Բագարատայ ի Տարօն, և զԱշոտ՝ մեծ իշխանն Արծրունեաց ի կապանս եդեալ։ Եւ Սմբատ սպարապետն իւրովի դնաց առ Բուղայ։ Եւ զայլսն ի սուր սուսերի մաշէր յանխնայ. իսկ զդեղեցիկսն ընտրէր և պահէր զաղատագնեայսն յանօրէն օրէնս իւրեանց դարձուցանել, որք մեծապէս վկայեցին վասն Քրիստոսի՝ Ատամ եօթն ընկերօք և կոնն Սահիաննոս և այլ 150 արք որոց ոտն կարգէր սուրբ հայրապետն Յովհաննէս ի մեհենիկի 25. և այս լինէր յ302 թուականին Հայոց։

Ապա մինչ զայս ամենայն տեսեալ Բուղայի յաջողուած իւրոյ չարութեանն՝ խնդիր առնէր բազում հրոսակօք մեծ իշխանին Սիւնեաց Վասակայ Իշխանիկ կոչեցեալոյ և եղբարց իւր, որք էին որդիք Փիլիպպէի՝ որդւոյ Վասակայ, Սիւնեաց տերանց. որոց պակուցեալ ոմանք ամրացան յանառիկ ամուրսն Բաղաց. և Վասակ ոչ հաւատացեալ յամրութիւն բերդիցն. այլ խոյս տուեալ անց գնաց զկողմամբք Կոտայք գաւառի։ Զոր իմացեալ Բուղայի՝ զօրս գնեաց արձակէր, որոց հասեալ կամեցան ըմբռնել. ապա նորա դարձեալ զվաղակաւորն ի գործ սկսաւ ածել. և զամենեսեան թաւալգլոր առնէր. և ինքն գնաց ընդ արևելս ի գաւառն Գարդմանի, առ իշխանն նոցա կարիճ Թերևս օգնութիւն գոցի ի նմանէ, որ և ոչ ինչ եդիտ ըստ յուսոյն։ Այլ իշխանն այն

խաբեալ ի դիւէն դաւաճանեաց նմա. և կալեալ կապանօք առաքէ առ Բուղայ թերևս վասն այնորիկ զերծեալ լիցի ի ցասմանէ նորա. որ և ըստ ուղղակշիռ իրաւանցն Աստուծոյ ըմբռնեցաւ յետոյ ի նմանէ. և չարի մեծագունի պատահեցաւ: Իսկ չարն այն և անիծեալն Բուղայ ընկալեալ խնդութեամբ զվասակ եւ ածել առպատակաւ հինից և զեղբայր նորա զԱշոտ և զմեծ տիկինն՝ զմայր նոցունց ի Դվին, զորս երկաթի կապանօք դնէ ի դիպահոլ: Այսպէս ածեալ ըզբռամբ զամենայն իշխանս Հայոց և Աղվանից՝ չու արարեալ գնայ ի դուռն արքունի. և յանդիման առնէ մեծ ամիրապետին: Իսկ չարագլխին Զաֆարի տեսեալ գնոսա և սաստիկ ցասմամբ հարց և փորձ եդեալ վասն հաւատոյ՝ մեծամեծ և ազգի ազգի տանջանօք և պէսպէս նեղութեամբք տայր չարչարել գնոսա զաւուրս բազումս. և խախտեալ զոմանս ի հաւատոց տայր թլփատել:

Իսկ մեծահաւատն վասակ և եղբայրն իւր Աշոտ ոչ ինչ հաւանեալ բանիցն և ոչ թուլացեալ ի հաւատոցն Քրիստոսի՝ առ ժամ մի վերին երեսօք յայնն առնուն կատարել զկամս ամիրային. բայց արին և քաջն Սմբատ նովին խոստովանութեամբ ի մէջ կապանաց և արգելանոցի կատարիւր բարւոք մահուամբ. և դի նորա տարեալ հանգուցաւ ի վկայարանի մեծ մար-

գարեէին Դանիէլի։ Եւ պայազատէ գաէրութիւն նորա (Աշոտ), որ և թագաւորեացն իսկ։ Ապա և զերծեալ մեծին Վասակայ Սիւնւոյ մարքն իւրով և եղբարքն և այլովք իշխանօք ի գերութենէն Բուղայի ի գառն կապանացն՝ գայ, մտանէ ի սեպհական աշխարհ իւր Սիսական. և ընդ անհուն ուրախութեամբ զամենայն աշխարհս։ Եւ ի բաց մերկացեալ նորա զառուեր մահածին խոստմանն որ վասն անօրինին Մահմետայ՝ զգենոյր զհայրենի զգեստն մաքրութեան մեծամեծ զղջմամբ և ապաշաւանօք, խոստովանութեամբ և առատաձիր արտովք աննակաց միջնորդ ունելով առ Աստուած զերջանիկ եպիսկոպոսն Սիւնեաց զՏէր Սաղոմոն։ Եւ այսպէս ճոխացեալ երևելի փառօք՝ բազումս ցուցանէր գործս արութեան յայսմ ժամանակի ի ձեռնտուութենէ նոյն Աշոտոյ իշխանի որ և թագաւորեացն։ Իսկ մեծ սեպուհ իշխանն Սիւնեաց Վասակ Գաբուռ՝ տղայ հասակաւ յերիտասարդութեան տիս վախճանի. և թողու երիս որդիս, որոց երէցն՝ Գրիգոր որ և սա Սուփան կոչեցաւ, և Սահակ և Վասակ։

Ապա առեալ երանելի տիկնոջն Մարիամայ զդի նորա զարդարեալ թագաւորական զարդուք, անհուն ամբոխիւ և անչափ ազազակաւ և ոգբերգական պարուք փողոց և քնարահարաց հանդերձ կաթողիկոսիւն Զաքարիայիւ տարեալ հանգուցանէին ի քնարանի ընդ հարս իւրեանց։ Եւ

պայազատէ գտէրութիւն նորա որդի իւր Գրիգոր Սուփան։ Սա յարդարէր զեղեցիկս զկարգ իշխանութեան իւրոյ. և ևս առաւել ծախէր զամենայն փարթամութիւն իւր և զկեանս ի գործ աստուածապաշտութեան և ի շինութիւն պայծառակերտ քաւարանաց որ դեռ ևս կան և վկայեն իրքն։ Յայսմ ժամանակի պայծառանայր երանելին Մաշտոց ի Սևան կղզին մեծահանդէս առաքինութեամբ. որ էր որդի աշխարհիկ երիցու մի Գրիգոր անուն Եղիվարդեցի. և եկեալ էր ի Սոթք գաւառ և պանդխտանայր անդ. որ և ետ զՄաշտոց յաշակերտութիւն սուրբ հօրն Մաշտոցայ Ստեփաննոսի. յորում զարդացեալ ներքին հասակաւն՝ ձեռնադրի ի քահանայութիւն ի Տէր Դաւթայ՝ Սիւնեաց եպիսկոպոսէ։ Եւ անտի երթեալ յանապատն Արտաւազդի Ապարանք. և անտի գնայ, մտանէ ի Սևան կղզին։ Եւ յետ բազում ճգանց հրաման առնու ի տեսլեան շինել եկեղեցի յանուն երկոտասան առաքելոց, և սահմանել միաբանակեացս. յաղագս որոյ և գային առ նա երկոտասանքն ի վերայ ծովուն յանուրջս. և նշանէին զտեղի եկեղեցւոյն։

Ահա սոյն երևմամբ վերին ազդեցութեամբ շարժեալ մեծ թագուհին Մարիամ՝ ամուսին վասակայ Սիւնւոյ, գայ առ սուրբն Մաշտոց. և բազում թախանձանօք ի հաւան ածեալ զնա ձեռն ի գործ արկեալ շինեն զգեղապաճոյճ եկե-

դեղիան յանուն սուրբ առաքելոց, և զմիւսն, յանուն սիրուհւոյ Աստուածածնին. և զարդարեալ մեծամեծ սպասուք կանգնեն զնա սուն Աստուծոյ և բնակարան աստուածազգեաց արանց յ323 թուականին Հայոց: Բայց Մաշտոց եղիր սահման վանիցն, և պայծառացոյց երկնաքաոտակ կարգօք. յորմէ համբաւոյ միաբանեալ Աշոտոյ՝ իշխանաց իշխանի, սուրբ ուխտին՝ գայ ի տեսութիւն սուրբ հօրն. և ընծայէ զփրկական նըշանն աստուածընկալ խաչին. և տայ ի ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն գեօղս՝ զՎարսերն, զՅամաքաբերդ, զԳոմաձորն, զԲերդքն, զՈւռեաց տափ և զորան կռակծին, և այգիս ի Գառնի և յԵրևան և յայլ տեղիս. և բազում նզովիւք հաս. տատեցին: Յարձեալ՝ սոյն Մարիամ շինէ զմեծապայծառ եկեղեցին ի Շողուագայ յանուն սըրբոյ առաքելոյն Պետրոսի. և կարգէ ի նմա կրօնաւորանոց, դասս բազմահոյլ քահանայից վասն հոգեաց տեառն իւրոյ Վասակայ՝ իշխանի Սիւնեաց: Եւ գնեալ ի հազարացի մարդկանէ զգեօղն Շողուագայ ընդ 60,000 դրամի ազատ յամենայն աշխարհական հարկաց՝ ընծայէ ի սեպհական ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն. նմանապէս և գեօղ մի ի Մազազ գաւառի ընդ 3,000 դահեկանի գնէ և տայ ի սուրբ եկեղեցին. որոյ անուն գեղջն Գնէր. և հաստատէ արձան անջինջ յիշատակի առաջի Գէորգեայ կաթողիկոսի և Յով-

Յովհաննիսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, և Գագկայ՝ Սիւնեաց տեառն. և Հրահատայ՝ եղբօր Վասակայ, և Աբասավղդայ Շաղատնեցւոյ և այլ բազում ազատաց և իշխանաց։

Իսկ ապա յայնմ ժամանակի խորհուրդ ի մէջ առեալ աստուածային իմն տեսչութեամբ Գրիգորի Սուփհաայ և Վասակայ Իշխանիկ կոչեցելոյ՝ տէրանցն Սիւնեաց, ընդ Գրիգորի Դերենիկ կոչեցելոյ, որ էր իշխան տանն Արծրունեաց, և ընդ այլ իշխանաց Հայոց, խնդրեն յամիրապետէն Ամիր-Անմահայ և կացուցանեն զԱշոտ Բագրատունի թագաւոր Հայոց. որ և նորոգապէս զարդարեցաւ աշխարհս Հայոց ի շինութիւնս և ի խոր խաղաղութիւնս. զոր էօծ Տէր Գէորգ՝ Հայոց կաթողիկոս, և Տէր Յովհաննէս՝ Սիւնեաց եպիսկոպոս, այլովք եպիսկոպոսօք ի 334 թուականին Հայոց։ Բայց յետ այսր մեծ իշխանն Վասակ որ և Իշխանիկ կոչիւր, փոխի յաստեացս և դնի ընդ հարս իւր։ Եւ եղբայր նորին Աշոտ պայազատէ զտէրութիւն նորա, այր հեզահամբոյր և խաղաղասէր և բարեպաշտօն և երկիւղած Աստուծոյ. և ամենայնիւ յամենայնի շինութեան պարապեալ հայրենի տէրութեան իւրոյ։

Իսկ թագաւորն Աշոտ յետ 5 ամի թագաւորութեան իւրոյ վախճանի. և պայազատէ զթագաւորութիւն նորա որդին իւր Սմբատ, զոր հրա-

մանաւ Ափշնի օծանեն զնա թագաւոր Հայոց կաթողիկոսն Գէորգ և եպիսկոպոսն Սիւնեաց Յովհաննէս, բդեշխն Վրաց Ատրներսէհ, և իշխանն Սիւնեաց Աշոտ և իշխանն Արծրունի Գագիկ այլովք իշխանօքն։ Ապա յետ բազում անցից ընդ աշխարհս Հայոց գնայ Ափշինն անդ (Բաղդատ). և զօր բազում դումարեալ կամէր գալ ի Հայս և բնաջինջ առնել. զոր և կամքն վերին առ ժամայն սատակեաց. և խափան եղև չար առաջարկութեանն։ Բայց փոխանակէ զտեղի նորա եղբայր իւր Յուսուփ. յորոյ ձեռն կրեաց յետոյ Հայք զհատուցն կործանումն և զանպատմելի չարիս։ Գայ այնուհետև Յուսուփ յամիրապետէ անտի ոստիկան ի Հայս. և զառաջինն յոյժ մեծարգոյ մեծարեալ զՄմբատ թագաւորն և զամենայն իշխանս մեծամեծ պարգեւօք. նմանապէս և ինքն մեծարեալ ի նոցանէ կրկնապատիկ ընդունի պատիւս. և այն ինչ ժամանակս յոլով խաղաղութիւն բերէր ընդ բոլոր Հայաստանեայս. սակս որոյ ամենեքեան շինութեան եկեղեցեաց պարապէին. և առաւել որդիքն Վասակայ՝ Սիւնեաց տեառն, և Գրիգորի Սուփանայ՝ Սահակ և Վասակ, և մայրն իւրեանց Մարիամ ի գաւառին Գեղաքունեաց. զի այն իսկ գաւառ շուրջ զծովակովն նոցա էր հասեալ ի բաժին ժառանգութեան։ Իսկ բուն գահ իշխանացն Սիւնեաց էր Բաղք, Վայոց ձոր և այլ շրջակայքն՝ Վասա-

կայ և Աշոտոյ և որդւոց Աշոտոյ՝ Սմբատայ, Սահակայ և Բաբգենի և Վասակայ, և որդւոյն Վասակայ Փիլիպպէի։

Եւ արդ, որպէս վերագոյն ասացաք, չինէ Մարիամ զԱևանայ եկեղեցին. և յետոյ՝ զՇողուագային. չինէ և Սուփան զզարմանակերտ փառքան բանաւոր հօտի ի գիւղաքաղաքին Կոթայ յանուն սուրբ Աստուածածնին. և զարդարեալ մեծամեծ սպասուք կարգէ ի նմա դասս պաշտօնէից և պարապէ մեծամեծ վիմօք. և մեծաւ ժողովով արարեալ նաւակատիք՝ խնդրէ ի կաթողիկոսէն և յեպիսկոպոսացն և յիւր եպիսկոպոսէն Տէր Յովհաննիսէ յիշատակ իւր յամենայն եկեղեցիս զերեք քառասունս՝ գնեղութեան կանոնն խաղաղական ժամուն և զառաւօտուն սաղմոսն. զոր և սահմանեցին իսկ վասն մեծամեծ և բազում երախտեաց նորա։ Եւ կարգէ յիշատակագիր արձանի ի վերայ սուրբ եկեղեցւոյն որ ունի օրինակ զայս. «Ինձ Սուփանայ յիշատակարան հաստատեալ հոգևոր ի Քրիստոս ի քաղաքագիւղս Կոթայ՝ ի կացուածի իմոց նախնեացն, զոր նախքան զայս պարսպափակ շրջապատեալ էին ի բազմածախ գանձուց յոլով աշխատութեամբ։ Յետ այսր ապա իմոց նախնեացն խորհրդակցեալ կամօքն Աստուծոյ շինեցի տուն Տեառըն և յարկ Աստուծոյն Յակոբայ անուանակոչութեամբ Սրբոյն Տիրամօր Աստուածածնին,

վիմասաշ, կոփածոյ քարամբք. և ի սմա սեղնեակս 8 ի վերոյ և ի ներքոյ. և ապա ի սմին սուրբ քաւարանիս կարգեցի քահանայս և զարդարեցի. զՍաուսածածնի քահանայքն նախնեաց իմոց և այլ սպասաւորս բազումս ազատ արարի յարքունական ծանրութենէ և իբեկարէ. և սահմանեցի հողս և ջուրս. և եառ միոյ միոյ քահանայի 50 դրամ ի տարւոջն. որ լինի հնգեցիկս. և սահմանեցի չորիցս քառասունս և սաղմոս զնեղութեան կանոնն և զառաւօտուն սաղմոսն, զի որչափ ես եմ ի մարմնի, յաղագս կենացս յաջողման լիցի, և յետ վախճանի կենացս մեղուցեալ հոգւոյ իմոյ կատարեն: Եւ յամենայն ամի իւրաքանչիւր ոք ի քահանայիցս չորիցս քառասունս առնիցեն վասն իմ: Եւ արդ՝ եթէ ոք ձեռնարկէ յայս և յափշտակել չանայ զիմ հոգեցատուր հողոյդ և զայլ ընծայսդ ի քահանայիցդ. և կամ զքահանայ իչար ընկենու զոր ազատեցի ես յամենայն ուրեք, կամ ի զարմից իմոց կամ ի ժառանգաւորաց կամ յայլ աւագաց գկնի մեր, այնպիսւոյն բարձցի անունն յերկրէ և յիշատակն, և զատապարտեալ և ամօթալից եղիցի յահեղ հրապարակին Քրիստոսի, և մեղաց իմոց համարս տայցեն յաւուրն զատաստանի. և ժառանգեսցէն զհուրն անշէջ և զտանջանսն յաւիտենական: Եւ եթէ քահանայքդ երբեք սուղանիցէք և մոռացումն առնիցէք կարգեալ շար-

դրութեանցդ և կամ ծուլանայք յեղեալ քառասներորդ, Տէր Աստուած դատապարտեսցէ զձեզ զաւակօք և զարմիւք. և բաժին ձեր ընդ սիրասպան քահանայիցն լիցի»։

Դարձեալ շինէ և զերկնաճեմ խմբարանն ի հրաշագան մենարանին, ի փառաբնակ ուխտն Մաքենոցաց, զգմբէթայարկ եկեղեցին յանուն սրբոյ Աստուածածնին, և պարսպէ վիմօք. և այլ բազում շինուածս յօրինեալ զարդարէ զնա անխնայ գանձիւք և փարթամացուցանէ բազում ընչիւք. նա և գեղօք և ագարակօք և այգեստանօք ի Գառնի և յԵրեւան և յայլ տեղիս։ Եւ կարդէ ի նմա արձան յիշատակի հարստայոյս արդեանցն իւրոց, որ ունի օրինակ զայս «Կամաւն Աստուծոյ ես Սուփան՝ Սիւնեաց իշխան, շինեցի զՄաքենոցաց եկեղեցիս և անխնայաբար զարդարեցի պատուական սպասուք և աստուածային կտակարանօք. և եթող զսեփական տեղն մեր ի սա որ ըստ անուան եկեղեցւոյս Աստուածածին ասի, իւր ամենայն սահմանօք, լերամբ և դաշտիւ, և եթող որս ձկանց զԲողաշէն սեղանոյն, և 700 դրամ ի Դեղձանագետոյ դապալէն, 200 դրամ ի Կաթկայ, 350 յԱնմեռէն, որ լինի 1250 դրամ. եթող և 5 կուղպակս ի յԱնի և 5 այգի յԵրևան և 500 առու այգի ի դիւղաքաղաքն Գառնի, և 2 այգի յեղեգիս, և զամենայն պէտս սուրբ եղբայրութեանս լցի առատապէս և փար-

թամացուցի ներքոյ և արտաքոյ. եաու և Չոլիրա եղանց և Չոկս գուարակաց և անդեայս և հօաս ոչխարաց։ Եւ արդ՝ մաղթեմք զամենայն աստուածածացելոյ սուրբ ուխտիդ պաշտօնեայսդ, որում Աստուած է միշնորդ, կատարել վասն մեղուցեալ հոգւոյս զերկու քառասունսն ապերունի պատարագ ինձ. և անխափան երգել զերեկոյին սաղմոսն՝ զնեղութեան կանոնն և զառաւօտուն սաղմոսն զոր կարգեալ եմ յամենայն եկեղեցիք։ Եւ Տէր Յովհաննէս՝ Հայոց կաթողիկոսն, ի տանէս մի իշխեսցէ պատ կամ փայքար հանել, և մի յիմ որդեայ կամ ի ժառանգաւորաց. այլ որ ընծայիս հակառակէ կամ հանել չանայ և որ հակառակ անուանեսցի՝ նզովս չարաչար ընկալցի յԱստուածոյ և յամենայն աթոռակալաց սրբոյն Գրիգորի, և մասն ընդ Յուդայի մատնչին եղիցի։ Եւ դարձեալ խօսիմ ընդ ձեզ Առաջնորդք և կրօնաւորք վանացս՝ հաստատուն կալ մինչ ի գալուստն Քրիստոսի, և վարդապետեն և սաղմոսէն վասն իմ անխափան եղիցի. և եթէ ոք ծուլացի ի քառասնեակ աւուրսդ ամ յամէ կատարել զմեղսաքաւիչ սուրբ խորհուրդն յետ ելից իմոց ի կենցաղոյս, ի Քրիստոսէ որոշեալ եղիցի, և մասն ընդ Սիմոնի կախարդի ընկալցի. և ի սուրբ ժողովոյն նզովեալ եղիցի։ Շինեցի և զեկեղեցին ի գիւղաքաղաքին Կոթայ. և ի նմա՝ 8 սենեակ. և արարի պատիւ ի տան Տեառն, զոր

շինեցաք. և զԱստուածածնին քահանայքն ա-
ղաւտ արարաք յամենայն արքունի չարէ. ընդ
նոսին և զայլ պաշտօնեայս եկեղեցւոյ որք ի
քահանայական կարգէ»:

Ահա այս իսկ էր արձան Մաքենոցաց, բայց
վասն հնութեանն և խախտելոյ քարանցն ոչ կա-
րացաք զբովանդակն իմանալ. այլ բազում բանք
և տուրք իշխանացն պակասին. զայս փոքր ի
շատէ եդաք զի մի՛ բնաւին չնչեալ կորիցէ յի-
շատակ նոցա. և այս ամենայն գործեալ եղև
յ300 թուականէն մինչև յ350ն: Իսկ եղբայր
Գրիգորի Սահակ շինէ պանծալի յարկն մեծա-
ծախ յօրինուածովք ի Նորատուս գիւղ. և կար-
գէ ի նմա բազմութիւն քահանայից. յորոյ դրան
և ինքն հանգուցեալ կայ ի տապանի: Նախան-
ձեալ ընդ այս բարւոք մոլութեամբ Շապուհ Բագ-
րատունի՝ եղբայր Մարիամայ, և ի ձեռն քեռն
իւրոյ շինէ զփառաւոր տունն Աստուծոյ յա-
նուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ի ձորակին
վանէվանաց որ այժմ կթանոց կոչի. և պայծա-
ռապէս զարդարէ զնա. և բազում տուրս ընձե-
ռէ ի պէտս եղբարցն և հաստատէ տուն կրօնա-
ւորաց. որոյ յիշատակագրութիւն արձանին ունի
օրինակ զայս «Յանուն Աստուծոյ ես Շապուհ
Բագրատունիս՝ Հայոց ասպարապետ, տէրանց
տէր, որդի Աշոտոյ՝ Հայոց թագաւորի. ի ժա-
մանակս Հայոց թագաւորի մեծին Սմբատայ՝ հա-

բազատ եղբօր իմոյ, և վերադիտողի Հայոց հայրապետի Տեառն Յովհաննիսի, իմացայ և ծանեայ թէ ամենայն վտառք և մեծութիւն սպառելոց են և վաղիւ կորնչելոց. և մեծափափագ սենչանօք վերակացու և տեսուչ առնելով զքոյր իմ Մարիամ Սիւնեաց տիկին, յիմումս իշխանութեան ի վանէվանս տուն Աստուածոյ կանգնեալ վիմատաշ կոփածովք, շատածախ գանձիւք և մեծաչան վաստակովք կատարեալ. թերևս լիցի ինձ ողորմութիւն յայնմ աւուր յորժամ բանքն սպառին և գործքն թագաւորեն։ Եւ տուաք ի քեզ վանէվանուց վանական հայր Աբրահամ՝ աղօթել և վայելել, և որ այլք յետ քո յաջորդեն. և պաշտօնեայք խորանին՝ յորժամ ժողովիք միաբան յաղօթս, և կերակրիք յանմահական կերակրոյն, յիշեսջիք զիս և զիմն զի արասցէ ողորմութիւն ողորմածն Աստուած։ Եւ ետուհինգ գեղոց սահման՝ Կոթաքարն, Աղաբոյ վանսն, Շաւառնահովն, Գետամէջն, Կթանոցն, Գետավանաց ծովն, 260 դրամ ի Կոթաքարէն, 530 ի Բրաենեացն, 660 յԱղաբոյ վանացն ծովէ, 990 ի Կարբին գետերէն և ի նաւերէն։ Որում մի ոք իշխեսցէ հակառակել։ Եւ թէ յանդգնի ոք՝ յ318 հայրապետացն նզովեալ եղիցի, և մասն և բաժին զՅուդային առցէ. ի թուիս Հայոց 352»։

Աստ կան ի շիրմի աստուածազգեաց Տէր Սաղոմոն և Տէր Աթանաս և Սմբատ և Բագրա-

տունի։ Դարձեալ և յետ ամաց ինչ նորոգէ Գագիկ՝ որդի Աշոտոյ շահանշահի, զիրաշակերտ եկեղեցին վանէվանաց՝ զսուրբ կաթողիկէն, և տայ զԴեղձանագետ ի նա. և պարապէ շուրջ զեկեղեցեաւն. և զրէ արձան անիծից ոչ յափշտակել զայն ի սուրբ եկեղեցւոյն։ Արդ՝ այս այսքան տեղեկութիւն քեզ գովելի գործոց իշխանացս, և շինուածեան եկեղեցեաց և ժառանգութեան նոցին. որ և ոչ միայն այս, այլ և բազում էին շինեալ եկեղեցիք ի Սիսական աշխարհի և յԱրարատեան գաւառի։ Բայց մեծ իշխանքն գահագլուխք Սիւնեաց տէրութեան Աշոտ և որդի իւր՝ Սմբատ և այլք յոլով և մեծամեծ երևեցուցին գործս ի շինուածս եկեղեցւոյ, զարմացուցիչ ամենայն տեսողաց, զորոց զինանգամանս յետոյ պատմեցից կարգաւ։ Այժմ անդրէն դարձեալ ճառեցից զկարգ իշխանացն և զմեծամեծ անցս ազատից որ ընդ մեր աշխարհս յանիծեալ նեռնէն Յուսիայ։

ՀԸ

Գալն Յուսիայ ի Սիսական աշխարհս. եւ գերումն եւ կոտորումն գաւառացս. փախուստ իշխանացն. տիեզերահռչակ տագնապն հրակէզ հրդեհումն եկեղեցեաց բարկութեանն. վկայական մահն Սմբատայ թագաւորին. եւ կրկին դարձ գերելոցն եւ փախստէից. զոյցէ որ յ358 բուակութիւն Հայոց ընդ այս ածեալ ձգի։

Յայնմ ժամանակի ապստամբեալ Յուսիայ

յիւրմէ ամիրապետէն՝ կամէր ի դիմի հարուլ նմա. վասն որոյ յղէ ամիրապետն առ Սմբատ թագաւորն՝ զօրու ծանուց գնալ ի վերայ Յուսփայ յԱտրպատական: Զոր և կամեցաւ կատարել իսկ Սմբատ. և զօր գումարեաց: Եւ ի ծածուկ ծանոյց զիրսն Յուսփայ. բայց նա ոչ հաւատաց մտերմութեանն. այլ ծածուկ ի սրտին նիւթէր, նօթճէր զդառն ոխութիւն. և ակն առեալ սպասէր դիպող ժամու: Ապա հնարեալ հրնարս և հաշտեալ ընդ ամիրապետին՝ առնուընդ ձեռամբ և զհայս. և զօր գումարէր, պատրաստութիւն կազմէր՝ իդալ գարնան ելանել յաշխարհս Հայոց. յորում աւուրս մեծ նախարարն Սիւնեաց գահերէց իշխանն Աշոտ յետ բազում քաջութեանց և մեծամեծ երևելի գործոց, այնչափ բարեպաշտութեանց և շինութեանց աշխարհի և եկեղեցեաց և վանորէից փոխէ յաստեացս:

Իսկ մեծ բարեպաշտուհին և անհամեմատն ի կանայս Շուշան՝ կին նորա, զարդարեալ զդէմ նորա արքունական ձևով. և աշխարհաժողով ամբոխիւ, դամբանական փողովք և ողբերգական քնարահարիւք տարեալ հանդուցին յեպիսկոպոսարանին Տաթև ի ղրան սուրբ եկեղեցւոյն զոր իւր հրամանաւ շինեալ էր Տէր Յովհաննէս: Յորոյ ի սուգ եկն Սմբատ թագաւորն ամենայն իշխանօք Հայոց. և լացեալ զլալիւն մեծ՝ մխիթարեցին զաւիկինն և զորդիսն՝ զՍմբատ,

զՍահակ, զԲաբգէն և զՎասակ։ Եւ կացուցանեն զՄբատ գահագլուխ իշխան Սիւնեաց և տէր ի վերայ ամենայն Սիսական աշխարհին։ Իսկ և իսկ ապա ի բանալ դրանն գարնայնոյ շնչեաց հողմ դառնութեան և ցոլացաւ բոցն հարաւային յաշխարհս մեր. եկ յորջից իւրոց գազանն անդառագեղ և շունն կատաղի՝ Յուսուփ. և կամէր կլանել զամենայն Հայաստանեայս։ Եւ հասեալ ի Նախջաւան քաղաք յաւուրս սուրբ պասեքին, և առպատակ սփռեալ կամեցաւ չնջել զգաւառն Սիւնեաց և զբռամբ ածել զիշխանսն։ Իսկ գահերէց իշխանն Սիւնեաց Մբատ ժողովեալ զեղբարս, զազգայինս իւր և զազատագունդ զօրս ամենայն իւրոյ իշխանութեանն՝ եկ ընդ յառաջ Իսմայելականացն. և կալաւ զանցս և զկիրճս ճանապարհացն. և զբազումս սատակեցին։

Բայց զի խնամք վերնոյն հեռացեալ էր, և կամէր մատնել զմեզ, ոչ ինչ օգտեցան և ոչ կարացին զդէմ ունել. այլ զմայրն իւր զՇուշան և զկին իւր Սոփի, որ էր դուստր Դերենկին՝ քոյր Գագկայ թագաւորելոյն ի Վասպուրական, փոքրիկ սանդեայ տղայով միով, և զկինն Սահակայ՝ եղբօր իւրոյ, որ էր (դուստր) բդեշխին Գուգարաց, տարեալ ամրացուցանեն յանառիկ ամուրն Երնջակայ. և ինքեանք փախստեայ լինին։ Մբատ գնայ առ աներն իւր Գագիկ ի Վասպուրական. և Սահակ՝ առ իւր աներն ի Գո-

դարս. բայց Բաբգէն և վասակ մնացին անդէն. և Գրիգոր Սուփան և եղբարք իւր մնան յիւրեանց տեղիս ամրացեալք ի կատարս լերանց և ի ծորձորս ծերպից վիմաց: Իսկ անիծեալն Յուսուփ տեսեալ զայն, և ասպատակ սփռեալ ընդ գաւառն ամենայն՝ ժողովէր զառ և զաւար և զբազմութիւն գերեաց զորս միանգամ եգիտ. և ինոցանէ ընտրեալ զպիտանիսն և զգեղեցկազոյնսն՝ ի գերութիւն վարեաց. և զայլսն սրոյ ճարակ առեալ կոտորեաց. և ահա լինէր այս յաւուրս ածնի սուրբ զատկին: Եւ խառնեցաւ անբաւապանելոցն արիւն յարիւնն փրկական Փրկչին մերոյ Յիսուսի, որ յայնմ աւուր հեղաւ ի վերայ խաչին. որոյ պահի պսակն մարտիրոսաց. և եղև այս յ358 թուականին Հայոց:

Իսկ անիծեալն Յուսուփ գործեալ զայս ամենայն ոճիրս, և երկոտասան օր երեկօթս ապրեալ՝ անց, գնաց ի Դվին քաղաք. և նստաւ անագին բանակօք առ եզերբ գետոյն Երասխայ: Ապա այն ինչ ամենայն հնարք փրկութեան վճարեալ լինէր. և ոչ գոյր ուստեք ակնկալութիւն, Գրիգոր Սուփան՝ Սիւնեաց իշխան, գայր, հասանէր առ Յուսուփ անձնատուր լինելով, թերևս այնու հնար լիցի գերծանիլ յեկեալ, հասեալ չարէն. զոր և տեսեալ Յուսփայ՝ խնդաց մեծապէս և առ ժամայն ընդունի զնա պատուով վերին դիմօք: Տեսեալ զայն և համազգւոյն նո-

բա՝ մանկանն վասակայ, և լուեալ թէ պատուեցաւ Գրիգոր և ոչ ինչ վնասեցաւ. ել և նա յամրոցէն իւրեանց և գնաց առ Յուսուփ անձնատուր լինելով. զոր առժամայն ընկալեալ և յետ սակաւուց դնէ ի դիպահոջ ի Դվին քաղաքի. որ եկաց անդէն ամ մի։ Իսկ անիծեալն Յուսուփ բազում մարտս ընդ թագաւորին Սմբատայ յարդարեր զամն ողջոյն առ ի որսալ գնա, և ոչ կարէր։ Եւ այս եղև յապստամբութենէ իշխանացն որք ճեղքեցան ի մի միաբանութենէ անոտի յուսով, և ածին խաւար մեծ ինքեանց և աշխարհիս Հայոց, զի գկայ ասեմ Արծրունւոյ որ թագաւորեաց վասպուրականի. և միաբանեաց խորհրդեամբ ընդ Յուսփայ զոյգն ինչ պատճառաւ, զի խնդրէր ի Սմբատայ թագաւորէն առնուլ զնախնջաւան յիշխանէն Սիւնի Սմբատայ և տալ նմա. զոր ոչ կամեցաւ վասն բնական հայրենեացն. սակս որոյ ապստամբեալ գնաց առ Յուսուփ. և թագ կապեալ ինքեան՝ կամէր թագաւորել ի վերայ Հայոց։ Գայ ապա և առ Յուսուփ Աշոտ՝ եղբայր Սմբատայ արքայի, և հնազանդի նմա. ըմբռնէ և ի պատերազմի զՄուշեղ՝ որդին Սմբատայ։

Եւ այսպէս խրոխտացեալ, հպարտացեալ մեծամեծ փքանօք՝ գայր ի Դվին ընդ իւր ունելով զԳրիգոր Սուփանն։ Ապա վասն կասկածանաց ինչ յայտնի ոչ կարէր նենգել մեծ իշ-

խանին Սիւնեաց. և հանապազ զմահ խոկայր՝ վասն որոյ դեղ մահու զանխլաբար մատուցանէ նմա. և ողողեալ որովայնի նորա՝ մեծաւ տագնապաւ արձակէր զոգին։ Զոր սպացեալ Գագկայ թագաւորի և Աշոտոյ Բագրատունւոյ ընդ մօր նորա Մարիամայ և ընդ եղբարցն Սահակայ և Վասակայ՝ բարձեալ տարան և եդին ի տապանի յիրումն ձեռակերտ սրբարանին ի սուրբըն Շիմոնեայ։ Սապէս և Մուշեղայ ևս արբոյց զնոյն դեղ մահու. զոր տարան ի Տարօնս և եդին ընդ նախնիս իւր. նմանապէս և զՍմբատ՝ եղբօրորդի թագաւորին Սմբատայ, սպանին։ Իսկ դեղուղէշ պատանին մանուկն Վասակ՝ եղբայր Սմբատայ, Սիւնեաց տեառն, որ վասն ոչ հպատակելոյ չար կամաց անիծելոյն Յուսփայ եպեալ էր ի բանտի աւելի քան զամ մի, յաւուր միում ի նսեմանալ երեկոյին կոչեալ յօգնութիւն զվերինն կամս և կնքեալ զինքն ասէ «օգնեցէք ինձ Սիւնեաց եկեղեցիք». և առեալ գսուրն պողովատիկ և ի գործ ածեալ՝ զպահապանսըն դիաթաւալ կացոյց. և ինքն վազեալ հասուստ մի՝ գնաց և կախեալ ընդ պարիսպն իջաւ. և զի ունէին ծառայք նորա ձի պատրաստական՝ ել յերիվարն և փախեաւ։

Ապա մինչ ճիճ պահապանացն և ձայն հրոսակացն զկնի զօրացեալ լինէր, մինչ այս մինչ այն՝ նա ի փողոցս այգեստանւոյն անկեալ՝ ընդ

այլ և այլ ճանապարհս անց, գնաց յամուրս աշխարհին իւրոյ: Յայսմ վայրի ապա և հայկազուն իշխանքն Սիւնեաց՝ եղբարք Գրիգորոյ, որ Սուփան յորջյորջէր, Սահակ և Վասակ հանդերձ մարբն իւրեանց երանելի տիկնաւն Մարիամաւ, գկեանս անձանց հնարեալ և փոյթ պընդուխթեան յանձինս բերեալ՝ կամեցան ելանել ի ձեռաց անօրինին և փախչել, անկանիլ յամուրս աշխարհին իւրեանց, և ոչ տարաշխարհիկ լինել մինչև անցցէ բարկութիւն Տեառն: Ապա գնացեալ արագավար նաւակօք ամրացան ի Սևանկըղզին: Զոր լուեալ Յուսփայ՝ զօրս զկնի արձակէ. որք եկեալ նստան ընդդէմ կղզւոյն. իսկ նոցա երկուցեալ մի գուցէ և ի հնարել չարացն ի մէջ անպնդապատոյտ զընտանին ըմբռնիցին, ելեալ անտի ևս ի գիշերի բազում նաւակօք անցին յայն կողմն, և գնացին յամուր գաւառն Միափորոյ: Իմացեալ և զայն զօրացն՝ զկնի պընդէին. բայց նախ մտեալ ի կղզին կողոպուտ առնէին զամենայն: Տեսեալ ապա իշխանացն զեկեալ հասեալ հրոսակն՝ դարձան, և մեծապէս քաջութեամբ զբազումս սատակէին և զայլսն փախստական առնէին. և ինքեանք անցեալ գնացին յամուր աշխարհն Գարդմանայ և Արձախայ. և ծայրին անդէն վերին այցելութեանն ակնկալեալ: Որ և անդէն իսկ ի թափառական պանդխտութեանն հասանէը վախճան երանելի տիկ-

նոջն Մարիամայ՝ մօրն իւրեանց, զոր խնկեալ և զմռսեալ եդին ի փայտեայ տապանի և պահեցին մինչև յօրն այցելութեան և դարձի իւրեանց ի հայրենի իշխանութիւնն, հանգոյն ոսկեբացն Յովսեփայ որ յԵգիպտոս ընդ Իսրայէլացիսն, զոր բերին յերկիրն Աւետեաց: Ապա ի ժամ դարձին բերեալ շքեղագոյն պատուով ըզմայրն իւրեանց, և աշխարհաժողով հանդիսաւոր եդին ի հանգստի մերձ առ ձեռակերտ եկեղեցւոյն իւր ի Շողուագայ:

Իսկ անիծեալն Յուսուփ ելեալ ի Դվնայ յետ սակաւ մի աւուրց, կրկին անգամ սկսաւ որսալ զարքայն Սմբատ. և նա ամրացեալ էր ի ձորն Աշորնեաց յամուրն Կապոյտ կոչեցեալ. հնարիւք և երդմամբ հանէ զնա Յուսուփ. և առեալ գայ ի Դվին և արկանէ ի չար կապանս երկաթիս բարձեալ բնաւին զքօղ պատրուակի չարութեան իւրոյ: Եւ առեալ զնա գայ ի մարտ ընդ անառիկ ամրոցին Երնջակու, յորում կային պատուական տիկնայքն Սիւնեաց Շուշան և Սուփի և այլ բազում ազատ կանայք և ազատ որեար: Եւ մարտ սաստիկ յօրինէ ընդդէմ բերդին բազում աւուրս. և օր աւուր զանազան հնարիւք խատացուցանէր զմարտն, և ոչ ինչ օգտէր: Յորմէ զչարեալ տայր բերել զթագաւորն հանդէպ բերդին. և զանազան կատանօք չարչարէր, և հրամայէր. «ասա զի տայցեն ի դուրս զբերդն»: Եւ նորա իմացեալ

պանդերձանելի գչարն՝ ոչ ինչ խօսէր. զոր և անդէն սարսափելի չարչարանօք ի վեր քան զբնութիւն մարդկան կատարեցին զսուրբ թագաւորն Սմբատ. և հրամայեցին տանել ի Դվին և զփայտէ կախել զմեռեալ մարմինն։ Որ և ճանճաւոր նշուլիւք վկայեցաւ ի բարձանց. և բժշկութիւնք մեծ լինէին. և բազումք հաւատացին ի Քրիստոս։ Եւ եղև այս ի թուականին Հայոց 362։

Ահա գայսպիսի մեծ և գյանդուդն ոճիրս գործեալ անիծելոյն՝ ոչ յագեցաւ չարեօքն. այլ և անդէն կամէր թիւնաթափ լինել ի գաղթականան որ ի բերդին. վասն որոյ ոչ հեռացաւ ի տեղւոյն մինչև ի գիշերի գողութեամբ էառ զբերդն անձաւամուտ և քարագնաց արամբք, որք երկաթի ճանկօք ընդ ժայռս գժուար վախից արուեստակեալ ընթանան։ Բայց թէպէտ և էառ, ոչ ի մարդկան հնարից. այլ Տէր եղծանելով եղծանել կամէր, և մատնեաց։ Ապա բացեալ զդուրս բերդին՝ հանին զփառաւորեալ տիկնայսն բազում մթերեալ գանձիւքն. և զբնակիչս բերդին ի սուր սուսերի մաշեցին։ Իսկ զմեծ բարեպաշտուհի տիկինն Շուշան՝ կին Աշոտոյ և մայր Սմբատայ և այլոցն, և զՍոփի՝ կինն Սմբատայ՝ քոյր Գագկայ թագաւորի, միով տղայիւ, և զկինն Սահակայ այլ տղատ կանամբք էառ, խաղացոյց գերութեամբ և գնաց ի Դվին. և եդ ի նեղ յորջի

խաւարչտին բանտի։ Եւ անդ էր տեսանել զաղիողորմ տեսակ փափուկ և արքայազուն կանանցն, որք չուր անգամ և աշտուճ հաց ոչ զտանէին յագ. նա և ոչ խոտեղէն անկողնոց խշտի փոխանակ փետրալի հեշտացան և ոսկեթել զահոյիցն։

Լուեալ զաննմարին գոյժս զայս Սմբատայ որ ի Վասպուրական, և Սահակայ որ ի Գուգարս, թէպէտ գուն գործեալ բազումս չանացին գերեթիափ լինել. ոչ կարացին։ Ապա անդանօր ամենաբարեպաշտ և մեծահաւատ իմաստուն տիկինն Շուշան բազում գոհութեամբ վախճանի ողորմատեսակ մահուամբ ի բանտի անդ՝ ընդ նմին և փոքրիկ դիեցիկ մանկիկն Սուփիոյ և Սմբատայ։ Եւ հանեալ ի բանտէն պահապանացն ընկճեցին արտաքս. զոր առեալ քահանայիցն և ժողովրդականացն իբր պանդխտի ուրուք տարեալ հանգուցին ի դրան սուրբ եկեղեցւոյն զոր ի քաղաքին յանուն Սերգեայ վկային կանգնեաց Ներսէս շինող։ Իսկ զերկոսին կանայսն Սմբատայ և Սահակայ առեալ տարան ի Պարսս, յԱտրպատական և եդին ի դիպահոլ յամուրս լերեանց։ Յետ այսքան անցից էր յասպարապետութեան Աշոտ՝ եղբօրորդի Սմբատայ. և որդին Սմբատայ Աշոտ կայր ի փախստի առ կայսրն Յունաց։ Որում թագ կապեալ Ռոմանոսի կայսեր՝ յուղարկէ ի Հայս. ընդ որ զչարեալ ասպարապետն Աշոտ կամէին պատերազմել ընդ միմեանս սաստիւ.

զոր համոզեալ մեծ կաթողիկոսն Յովհաննէս եւ խաղաղացոյց. և սակաւ մի կազդուրեր աշխարհն ի հինից ցուսփայ:

Յայնմ ժամանակի եկն ի վասպուրականէ մեծ իշխանն Սիւնի Սմբատ առ արքայորդին Աշոտ թագաւոր, զոր մեծաւ պատուով ընդունէր. և ազգի ազգի փառօք շքեղացուցանէր: եկն և վասակ՝ եղբայր Գրիգորոյ Սուփանայ, զնա ևս ընկալաւ խնդութեամբ Աշոտ և վիճակեցոյց իւրոյ տերութեանն: Յետ սակաւուց եկին և փախստականքն Սահակ՝ Սիւնեաց տէր, և Բաբգէն և Վասակ՝ եղբարք Սմբատայ ի քնիկ աշխարհս իւրեանց ի Սիւնիս: Լուեալ ապա զայն Սմբատայ՝ հրաման առնու յարքայէ և դառնայ յԱրագած լեռնէ, և գայ, գտանէ զեղբարս իւր. և խնդութիւն ոչ փոքր լինէր ի մէջ նոցա. տեսանէին նոքա քակեալ զարքունական ապարանսն իւրեանց, աւերեալ զեկեղեցիս և անբնակ անապատացեալ զմեծամեծ աւանսն, և զեղեցիկ դաստակերտն, ունայնացեալ զամբարս ցորենոյ և խորտակեալ զգուբս գինւոյ: Ոչ փոքր լինչ սուգ և արտմութիւն և թորումն արտասուաց լինէր ի մէջ նոցա. ևս առաւել վասն զերեալ տիկնացն: Ապա մինչ յայս վարանեալ կային՝ գան և կանայք նոցա ազատեալք աստուածային խնամօքն ի գառն գերութենէն Յուսփայ: վասն որոյ մեծապէս խրա-

խացեալք գոհութիւն մեծ մատուցանէին Աստուծոյ պարգևողին գնոսա. և այնուհետև փոխանակ ողբոցն և աշխարանացն ցնծութիւն մեծ լինէր ի մէջ նոցա։ Եւ աւերն ամենայն փութապէս յառաջին լրութիւն շինութեան հասեալ լինէր յապարանս նոցա։ Բայց եկն և Սահակ՝ եղբայր Գրիգորոյ և Վասակայ, ի հայրենի ժառանգութիւն իւր ի Գեղամ. և սակաւ ինչ կեցեալ վախճանի և պնի ի քնարանի յիւրում ձեռակերտին առ դրան մեծ եկեղեցւոյն, որ ի Նորատուս։

Իսկ Վասակ՝ եղբայր սորին, յետ աւուրց ինչ երկեաւ յերկփեղկ թագաւորութենէն Հայոց, զոր երկու Աշոտքն ունէին և միշտ գըրգռէին ընդ միմեանս ի պատերազմ. և կասկածեալ յարքայորդւոյն Աշոտոյ՝ ոչ գնայր առ նա. մի՝ զի սիրէր զսա միւս Աշոտն՝ որդին Շապհոյ, և մի՝ զի փեսայ էր Գուրգենայ՝ վրաց բդեշխի. և Գուրգէն ընդ հակառակս բերէր Աշոտոյ։ Ապա ի մէջ ձգեալ զկաթողիկոսն Յովհաննէս՝ հայցէր կատակ ուխտի և երդման զի համարձակ լիցի առաջի նորա և անկասկած. զոր և տուեալ Աշոտոյ թագաւորի՝ հաստատէ զկամս նորա առ ինքն։ Առեալ զայն յետակար Վասակ ի ձեռաց կաթողիկոսին՝ գնայ առ Աշոտ. և միամիտ մատերմաբար ընդունի ի նմանէ որպէս համամիտ սիրելի։ Իսկ զկնի ապա հրապուրեալ յոմանց Աշոտ,

որք ասէին եթէ թուղթ առ նա գրեալ գտեալ եղև ի միւս թագաւորէն Աշոտոյ և ի Գուրգենայ՝ աներոյ իւրոյ, ի ձեռն սուրհանդակի միոյմ, լի ամենայն չար խորամանկութեամբ վասն քո։ Սակս այսր կալեալ զվասակ և երկաթի կապանօք դնէ յամուր բերդին Կայենոյ. և թէպէտ կաթողիկոսն յոլով հնարիւք չանայր առ թագաւորն ազատել զնա, ոչ լսէր պատճառելով պատճառս ինչ։ Ապա յետ աւուրց ինչ ազատեալ եղև բռնութեամբ յիշխանէն Զորոյգետին և Գարդմանայ ի Սահակայ, և առաքեալ ի տուն իւր ի Գեղաքունի գաւառ. զի այն իսկ էր մասն ժառանգութեան սոցա ի Սիսական աշխարհիս։

Յետ այսց բանից ուրեմն ապա և մեծ իշխանին Սիսակայ Սմբատայ երիւք հանդերձ ցասմնական իմն սրտիւ գժդմնեալ ընդ ամիրային Գողթան, որ յայնժամ զգաւառն Գողթան բռնակալեալ ունէր. խնդրէին ի բաց զսեպհական հայրենիսն իւրեանց զամուրն Երնջակայ և զշրջակայ գաւառսն, զոր Յուսուփ ի նա հաւատացեալ էր, զոր ամիրայն Գողթան ոչ կամէր տալ. այլ ասէր յարքունուստ ինձ իսկ պարզևեալ է։ Լուեալ ապա զայն Սմբատ, և զօր գումարեալ ի պատերազմ անագին իմն սաստկութեամբ, ընդ իւր բերեալ և զՍկիւթացի Թուրքն որք խորանօք բնակեալ էին յաշխարհի նորա։ Ելանէ ընդ առաջ և ամիրայն. և ի խառնիլն

ընդ միմեանս՝ յաղթահարեալ լինէր Հագարացին։ Անդ ապա զօրն Թուրքաց որ ի ձախ կողմանն յետուստ թիկանցն վասակայ կային, խորհուրդ իմն դիւաբախ ի մէջ առեալ, և միաբան ի վերայ վասակայ յարուցեալ՝ դիաթաւալ յերկիր ընկենուին. և ինքեանք դէմ եդեալ փախչէին զկողմամբքն Նախջաւանու։ Իսկ զդիակ գեղեցիկ երիտասարդին բարձեալ եղբարցն ի տեղւոջէ ճակատուն անբաւ ողբով և բարձրակառաչ ապաղակաւ՝ տարեալ եդին ընդ հօրն իւրում Աշոտոյ արարեալ կոծ մեծ ի վերայ նորա։

Բայց ասացից այժմ և վասն Յուսիայ. յետ զայս ամենայն ոճիրս անցուցանելոյ նորա ընդ աշխարհս Հայոց գնաց զԱրտաշատական. և սկսաւ ապստամբել յամիրապետէն։ Եւ նորա իմացեալ զխորամանկութիւնն Յուսիայ՝ զօր բազում գումարէ ի ձեռն հաւատարմի ուրումն և առաքէ առ Յուսուփ. որք ըմբռնեալ՝ չարաչար կապանօք ածին առաջի ամիրապետին. և նորա բազում գանեալ՝ կապանօք եւ արկանել ի մթին, նեղ և նուրբ և տգմուտ բանտ։ Եւ անդ կացեալ ամս ինչ, ապա ի սաղրելոյ ուրումն յիւրեանց չար օրինացն գլխաւորի արձակեալ եղև ի կապանաց. և վերստին ի նոյն գահ իշխանութեան յուղարկեալ՝ յանձնեալ նմա զհարկս Հայոց. որ և եկեալ ի վաստուրական՝ զնաց յԱրտաշատական. և կացոյց ի վերայ Հայոց ոստիկան

մի յիւրոց ծառայիցն Նոր անուն որ և Սբբբքի կոչէին։ Եկեալ անիծեալն և կրկին չարն և շնաբարոյն քան զՅուսուֆ՝ բնակէ աւուրս ինչ ի Նախջաւան. և դի հարթ և հաւասար վայելչութեամբ կային իշխանքն Սիւնեաց Սմբատ և Սահակ, և բաժանեալ էին գհայրենի ժառանգութիւնս աշխարհին, աւագն Սմբատ զաւագագոյն մասն Սիւնեաց ընդ արեւմուտս կողմն և զբոլոր վայոց ձոր ունէր ի բաժնի. իսկ Սահակ՝ ընդ արեւելս մինչ ի Հակարի. բայց փոքրիկն Բաբգէն սակաւ ինչ ունէր մասն ի բաժնի։ Սակս որոյ խանդացեալ ի չարէն՝ զրկութիւն իւր համարի ի Սահակայ զմեծ տէրութիւնն՝ կարծիք իմն անոտի յուսոյ ի միտս իւր բերեալ, և ի չար մարդկանէ յորդորեալ՝ ելանէ և գնայ ի Նախջաւան առ Նորն այն, և ուխտ ընդ դժոխոց կռեալ դաշինս դնէ նմա, և ցուցանէ զզրկութիւն իւր ի Սահակայ։

Իսկ նա չար և խորամանկ մտօք առ ժամայն ընկալեալ գնա՝ խոստանայր կատարել զխընդիրն, ակն ունէր և եղբօրն գալոյ. ապա խընդրակս հանեալ կոչէ զՍահակ սիրոյ աղագաւ։ Լուեալ զայն Սահակայ՝ և ցնորեալ և նա ի խելացց հաւատալով նմա խնդութեամբ գնայ ի կոչըն որպէս յարքունիս, բազում և մեծամեծ ընծայիւք։ Եւ հանդիպեալ նորա ի Նախջաւանի՝ խնդութեամբ գնա ևս ընդունի, հեշտացեալ խոր-

հրդովքն ընդ դիւրադաւ դիւտ մեծի որսոցն. և առ ժամայն Սահակայ ևս դաշինս կռեալ ընդ նմա վասն հաւատարմութեան, ասէ Նարն երթիցուք մեք ի Դվին. և անդ ապահով լեալ խորհեսցուք զմիմեանց օգուտ: Եւ առեալ զՍահակ և զԲաբգէն՝ գնայր ի Դվին. և իբրև եմուտ ի քաղաքն և հանդեաւ յապարանսն որ ի բանտին, եբաց զքօղ չարութեանն. և կալեալ զՍահակ և զԲաբգէն երկաթի կապանօք եդ ի բանտի զիբմբեալսն ի խելացս և զանզգայացեալսն ի մտաց, որք իւրովի կամօք անձնատուր և անձնամատոյց եղեն:

Զայս արարեալ շնաբարոյն Նար՝ ինքն յետ սակաւ աւուրց ելեալ և սփռեալ զգօրսն ընդ ամենայն երկիր՝ ասպատակ եղեալ իսպառ ջնջեաց զամենայն աշխարհս Հայոց ևս և զԱրտաշատեան երեք գաւառսն. և լցեալ աւարօքն և գերեօքն բնակէը ի Դվին: Ապա հրաման հասանէը ի Յուսիայ առ Նարն գնալ յԱտրպատական: Եւ առ ժամայն կացուցեալ զմի ոք ի հաւատարիմ ծառայիցն Բզը անուն ի վերայ կապելոցն ի Դվին Սիսական իշխանացն. և ինքն անց, գնաց ի Պարսս յԱտրպատական: Եւ անդ հոգացեալ զամենայն հոգս արքունի. և յետ բազում աւուրց դառնայ այսրէն մեծ սպայակոյտ զօրու. և խորհի ի միտս իւր գնալ զՍիսական կողմամբք և յաւարի առնուլ զաշխարհն. և թէ

հնար գոյէ՝ ըմբռնեացէ և զմեծ գահերէց իշխանն Միւնեաց զՍմբատ կամ յանկարծօրէն աւազակաբար. և կամ մարտօրէն առաքուր հարուլ, գերել և աւերել զտուն նորա, և զինքն տանել առ եղբարսն ի Դվին: Իսկ մեծ և ամենիմաստն Սմբատ ի սեպհական գաւառին իւրում դարեալ, դադարեալ նստեր ի վայոց ձոր: Լուեալ ապա զնամբաւ գալոյ նորա, և ամրացուցեալ զտուն իւր և զամենայն գաւառն յամուրն Վայոց ձորոյ. և ինքն հորդան տուեալ զօրացն ամբոխս բազումս սպայակոյս զօրու շուրջ զիւրեաւ կացուցանէր յիւրում արքունական յապաւարանն որ ի գիւղաքաղաքն Յեղեգիս: Եկեալ ապա Նարն. և տեսեալ զնա այնպէս պատրաստութեամբ և անվանելի զօրութեամբ զդուշացեալ՝ ոչ ինչ կարաց յայտնել յիւրայոց անտի. այլ ի խաղաղութիւն խօսեցեալ ընդ նմա. և բազում պատգամաւորօք ուխտ հաշտութեան և խաղաղութեան ընդ նմա հաստատէր. խնդրէ և Սմբատ զեղբարսն իւր որք կային ի Դվին ի կապանս. և նա զայնս ևս խոստանայ արձակել: Եւ ապա եկեալ առ միմեանս՝ խնդութիւն մեծ առնէին և բազում օժիտս և պարգևս ընկալեալ Նարն ի Սմբատայ՝ չուէ և երթայ, մտանէ ի Դվին. և իսկ և իսկ առեալ զտարապարտ սակ գնոյ անձինն ի Բաբգենէ՝ արձակէ զնա. բայց զՍահակ արգել անդէն զի ոչ ուներ զծանր սակ

դահեկանին զոր գերեզին խնդրէին։

Ապա յետ սակաւուց ինչ և նա զիւրն վճարեալ տուգանս բազում կշիռս ոսկւոյ և ազատեալ՝ եղ ի կապանացն և եկն ի սեպհական տէրութիւն իւր, և խնդութիւն բազում լինէր ի մէջ եղբարցն և աշխարհին։ Եւ կային միաբան խաղաղութեամբ պարապեալ շինութեանց և գովելի գործոց։ Պայծառանայր և յայն աւուրս հռոմայեցւոյն իշխանացս ի Սիսական տոհմէ Զագիկ՝ մեծ իշխանն, ամենայն բարեպաշտութեամբ. որ ունէր ի բաժնի զԲաղաց գաւառն և զկապան քաղաք, որ և յետ բազում բարեկարգութեանց վախճանի. և զնի ընդ հարս իւր. և թողու ժառանգ զքաջազօրն Զևանշէր և զՎահան։ Որ և պայազատէր գտերութիւն նորա Զևանշէր բազում ժամանակօք։ Իսկ եղբայր նորին Վահան յանկարծակի ի չար գիւէ բախեալ եղև և լլկեալ. և վասն այնր հրաժարեցաւ յաշխարհական կարգէ և գնեցաւ զձև կրօնաւորական. և բազում ժամանակօք ճգնեալ ի սուրբ առաքինարանին Տանձափարախու, և ի խաւակրօն, մեծահռչակ մշտանջենաւորանոցին ի Շատանեայ վանքն. և սրբեալ ի պիղծ ոգւոյն կամեցաւ շինել վանս յիւր անուն, և կացուցանել ի նմա բազմութիւն կրօնաւորաց զոր յետոյ ասացից։ Իսկ երջանիկ և փառաւորեալ իշխանն Սմբատ յետ բազում աստուածավայելուչ բարեպաշտութեանց փոխի

յաստեաց և դնի ընդ հօր իւրոյ Աշոտոյ. և թո-
ղու զաւակ ժառանգութեան իւրոյ զարի և դհան-
ճարեղ իշխանն Վասակ։

ԼԹ

**Վասն եպիսկոպոսարանին Տաթեւոյ. եւ վասն սուրբ խա-
չին եւ այլ սրբոց. եւ վասն ժառանգութեան հայրապե-
տացն։**

Եւ արդ յետ զկարգ իշխանացդ բերելոյ և
երկայն բանիւ զնոցա ճառելոյ զարձցուք անդրէն.
և զոր ինչ, վասն եպիսկոպոսացն են բանք և գործ
և շինութիւն սրբոյ եպիսկոպոսարանին Տաթեւոյ
և հոգեցատուրք իշխանացն, ճառեցից սակաւուք։
Արդ՝ նախ և յառաջն էր սահման եպիսկոպոսաց
բնակիլ ի քաղաքս և ի շինամէջս. զի հովուին
պարտ է ի մէջ հօտին լինել և ոչ յանկեան ու-
րեք կայանալ. և հանապազ ներքին ակամբն վե-
րահայեցիկ լինել ի վերայ հօտին զի մի խորա-
մանկ խաբողն մտեալ անդր՝ գողացեալ զոչի ան-
մեղացն և ի բաց տարեալ օձառեցէ ի հօտէն։
Իսկ յետոյ ըստ նպերտ բարուց ոմանց, որպէս
թէ ճգնազգեացք և անապատասէրք գոլով, կու-
սութիւն աչաց և ականջաց խոկացեալ՝ պատշաճ
համարեցան բնակել ի վանս, և ի պատշաճաւոր
ժամու ելանել առ հօտն և խրատել, որպէս եւ
մերոյ աշխարհիս եպիսկոպոսք Սիսականս գրոնի,

որք յառաջ ժամանակօք շրջէին ի մէջ գաւառաց և ի տունս իշխանաց՝ միշտ և անդադար ուսուցանելով զբանն կենաց. և գահ արկեալ էր նոցա ի Սիւնիս: Իսկ յետոյ ըստ առաքինի և պարկեշտ բարուց իւրեանց ոչ ժուժեցին վանն ամբոխի և հրապարակաց հանապազ կալ և դեդերիլ ի թէատրօնս. այլ գտեալ զայս տեղի յոյժ պատշաճաւոր և ի ճահ, և դրեամբէ վերին ազդմամբն առաջնորդեալք՝ եկին և բնակեցան աստէն ի դեղեցկավայր տեղւոջ որ իբր բարձր դիտանոց հայի ընդ արևելս ի բաղում գաւառս հանդէպ լերանցն Դիպափայտու, ուր բազմութիւնք սուրբք վկայիցն հանգուցեալ կան, յոյժ առողջաստն, և վայրն հարթայատակ, շրջապատեալ բարձր և սուր լերամբք իբր կարակնակերտ կիսաբոլոր:

Առաջոյ վանիցն ձորք և խոխոմք խորագոյն, յոյժ ընդարձակագոյն և դեղեցիկ. ընդ որ անցանէ ահագին դղնչմամբ գետն Որոտան, և ձորն այն լի այգեստանեօք, և դրախտացեալ զանազան բուրաստանօք: Եւ էր ի տեղին՝ ի վերայ բարձրագոյն քարին եկեղեցի խրթին անտաշ վիմօք կրաշաղախ ձուլեալ՝ յոյժ ի հին ժամանակաց՝ յաւուրց անտի սրբոցն Ներսիսի և Սահակայ. և սակաւ կրօնաւորք մշտաջան ճգնութեամբ բնակէին ի նմա. և էր տեղին հեռի յամենայն հինից թշնամեաց. զի միջոց էր աշ-

խարհին յանքոյթ և ի զառանց տեղի և ամրացեալ ի մէջ երկուց արքունական գահոյիցն Սիւնեաց և Բաղաց։ Եւ արդ խնդրեալ յիշխանացն եպիսկոպոսացն Սիւնեաց զտեղիս զայս՝ եկին և բնակեցան ի սմա. բերին և զաստուածամուխ սուրբ նշանն որ էր ի կենարար փայտէն, բերեալ ի յունական աշխարհէն և ընձեռեալ եպիսկոպոսացն Սիւնեաց ի պահպանութիւն վիճակելոցս սոցա առաջին իշխանացն. և հանգուցին ի սուրբ եկեղեցւոջս. եդին աստ և զաստուածընկալ խաչն Բաբգենեան որ ի Վասակայ՝ որդւոյ Բաբկայ, որդւոյ Անդոկայ, կազմեալ էր յարծաթոյ ի չափ հասակի առն միոյ. և ունէր յինքեան մասն ի փրկական փայտէն։ Բերին զնշխարս առաքելականս և հայրապետականս և մարտիրոսականս ի զխաւոր և յերևելի սրբոցն, զորս հաւաքեալ էին անթիւ բազմութեամբ իշխանքն Սիւնեաց, որք ընդ սրբոյն Գրիգորի և ընդ սրբոյն Ներսիսի գնացին ի կեսարիա և ի մեծն Հռոմ, և յայլ և այլ ժամանակս որք բազում փափագանօք ժողովեալ էին։ Ընդ որս էր և նշխար մեծին Յովհաննու և Ստեփաննոսի նախավկային և մեռաւսան առաքելոցն և սրբոյն Գրիգորի և այլ սրբոյն Հռիփսիմեայնոյն մարմնովն, և այլ բազումք որոց ոչ գոյր թիւ. ևս և զերազանց մարդկային բնութեանս հերք սրբոյն Աստուածածնին։

Զայս ամենայն բերեալ հանգուցին ի սուրբ

եկեղեցւոյն և կամեցին զսա փարթամ դանձաբան Աստուածածնութեանն. բայց զերբն և զառաջինն եպիսկոպոսն որ սաս եկն ոչ ծանեայ. միայն ի Տէր Գէորգեայ և այսը գտայ նշան և կացի ծանօթ ամենայն որպիսութեանց նոցա. այլ զառաջինն ոչ գիտեմ զի ոչ գոյր յիշատակ ինչ, բայց գիտեմ զի բազում ժամանակօք բնակեալ էին անդ: Եւ արդ՝ կացեալ զկնի Տեառն Գէորգեայ՝ եպիսկոպոսին Սիւնեաց, երանելի այրն Աստուածոյ Դաւիթ. և էր սա յաւուրս Գրիգորոյ՝ Սիւնեաց գահերէց իշխանի, և միւս Գրիգորոյ՝ որդւոյ Սահակայ, որ Սուփան յորջորջիւր, որ զԳեղաքունի ունէր, առաջին Սուփանն, և աստուածապատ Տեառն Փիլիպպէի՝ որդւոյ Վասակայ, նահապետի բոլոր ազգին Սիսականու. Եւ էր հայր մեծ իշխանացն Վասակայ որ Իշխանիկ կոչիւր, և Աշոտոյ՝ հօր Սմբատայ՝ Սիւնեաց մեծ և գահագլուխ իշխանացն:

Եւ վասն զի յոյժ նեղ և անձուկ էր սահմանն վանից Տաթևոյ, և ոչ էր բաւական պիտոյից աթոռոյն. ապա հայցեալ Տեառն Դաւթի յաստուածապատ Տեառնէ Փիլիպպէէ՝ իշխանէն Սիւնեաց, ընդ գնոյ տալ զմերձակայ ագարակն. զոր և լուեալ կատարէ զխնդիրն. և առեալ 10,000 դրամ որ լինի ի մէն մի 6 դանկ. և տայ ի ձեռս նորա զԱրծիւ գիւղ և զԲերդկաներէչ որ ի վերոյ վանից, բոլորն ընդ չրթափովճ՝ ազատ յա-

մենայն աշխարհական հարկաց և ի նեպակաց։ Եւ գոեցին կտակ յաւիտենական և հինքեցին իւրեանց մատանեաւ, որ ունէր օրինակ զայս «Ես Տէր Դաւիթ՝ շնորհօքն Աստուծոյ Սիւնեաց եպիսկոպոս, ի 288 թուականիս Հայոց գնեցի զԱրծիւ ի տէր Փիլիպպէէ՝ վասակայ որդւոյ, Սիւնեաց տեառնէ, իւր ամմանօք, լերամբ և դաշտիւ, դոստին և գՋրաբբին և զարօտ երկիր, զարտ և զմարգ։ Եւ այս են ամմանք. յարևելից կողմանէ ուղեկիւցդ, որ ի Հարժեաց և ի Բերդկաներէչոյ ի գետդ հատանի, և անտի ի բլուրդ որ ի շինագլխիդ. և անտի ջրթափաւն յԱտերջաց գաւակ, և բնատեուդ ի վարդանայ մարգի խոռն, և անտի յԱրծիւակատար. ի յարևմտից կողմանէ Լորաձորդ բնատարաւդ. և ի հարաւոյ կողմանէ Հարժիք, որ ի ճանապարհէդ ի խուդդ ելանէ ձորովդ ի վայր ի Սևաջուրդ և ի վեր ի սարն՝ Վանաց ձորոյ սեռիւդ։ Ես տէր Փիլիպպէ առի զգանձըս ի Տէր Դաւիթ՝ Սիւնեաց եպիսկոպոսէ, 10,000 դրամ, և ապառաւրեցի զդիւդդ ի տուրբ խաչդ այդ ամմանովդ որ ի վճիռս դրեալ է. վկայութեամբ Աարներսէհի՝ Սիւնեան տեառն, Վասակայ որդւոյ, և տեառն Հրահատայ՝ տեառն Սահակայ որդւոյ, և տեառն Աարներսէհի՝ տեառն Վարդանայ որդւոյ, Արշակայ՝ Վահանայ որդւոյ, Թաբբէի՝ Սարգսի որդւոյ, հօր Սարգսի և հօր Գէորգայ և Մարկոսի՝ աւագ երիցու։ Եաու ես տէր Փիլիպպէ

զԲերդկաներէչոյ զկէսդ Սառնաքարին փոխան, և զկէսդ սուրբ եկեղեցւոյդ. և չիշխէ ոք հեռացնել՝ ոչ եղբայր և ոչ որդի և ոչ յիմ խոստակղարաց։ Եւ թէ ոք պայքարի այդ սահմանացդ՝ դատապարտեալ լիցի յԱստուծոյ. և զիմ մեղս Աստուած ի նմանէ խնդրեսցէ. և դաւին մի յաղթեսցէ։

Եւ այս է սահմանն՝ Ծիրանահողովդ ի վայր ի գետդ. և ի վերի կատարն գետոյդ ի սենեակդ, սենեկաւդ ի ձոր. և աստի ի Գաւակ։ Եւ կնքեցաք զվճիռս Տէր Դաւիթ և տէր Փիլիպպէ մեր մատանեօք»։ Եւ այս է ձեռագիր նորին «ես Փիլիպպէ՝ որդի Վասակայ, Սիւնեաց տեառն, կամեցայ իմ ձեռագրովս հաստատել զայս վճիռս»։ Դարձեալ յետ հինգ ամաց այս Փիլիպպէ, ըստ իւրում մեծահաւատ և մեծախորհուրդ բարեպաշտութեանն, կամէր վարձամատուցանել զվանս Տաթևոյ. և կենսատուցանէր զամենայն արտաքին գոյսն իւր յիմանալին և յանեղծն. միաբանեալ սուրբ եկեղեցւոյն և յանձնեալ զոգի իւր ի սուրբ խաչն և ի Տէր Դաւիթ՝ ընծայէ զմեծագոյնն պարգև՝ զսեպհական գիւղն իւր զՏաթեւ ի սուրբ եկեղեցին հաստատուն և անխախտ պայմանաւ մինչ ի գալուստն Քրիստոսի. և է այսպէս գիր վճռին։ «Յերկերիւր և իննսուն երեք թուականութեանս Հայոց որպէս կամ եղև ինձ Փիլիպպէի՝ որդւոյ Վասակայ, Սիւնեաց տեառն, եառ զՏաթև վանն

իմ հոգեացս ի ձեզ ի Տէր Դաւիթ՝ Սիւնեաց եպիսկոպոս. յիմ հօրէն յիս հրիտակ հասեալէր. անխուէչքարէ ամենայն սահմանօք, լերամբ և դաշտիւ, այգօք և ընկոյզեօք, մարգաւեանովք և ջաղացանով և որ ինչ համօրէն սահմանք են. և մի ոք իշխեսցէ յետ իմ անցման, իմ որդիք կամ եղբարք կամ այլ խոստակդարք հեռացուցանել զայդ զիւղդ յայդ եկեղեցւոյդ և ի սուրբ խաչէդ. եթէ ոչ՝ նզովեալ լիցի յԱստուծոյ և ի սուրբ եկեղեցւոյդ և ի սուրբ խաչէդ. և ի հոգևոր Տեառնէդ անէծս կրեսցէ: Ես եառ ամենայն սրտի մտօք ի ձեզ ի Տէր Դաւիթ՝ Սիւնեաց եպիսկոպոս, վայելել խաղաղական կենդանութեամբ, և որ յետ ձեր այլք նստին յաթոռդ վայելեցէք մինչև ցգալուստն Քրիստոսի. եթէ կան՝ այդպէս եղիցին. ապա թէ գնան, զգիւղդ սահմանաւդ յեկեղեցւոյդ մի իշխեսցեն հեռացուցանել, մի վաճառել, մի փոխել, մի գրաւականն դնել. այլ որ եկեղեցւոյն սպասաւորքն լինին, իշխան լիցին ամենայն սահմանացն: Եւ վկայք լիցին աստուածապահ տէր Գրիգոր՝ Սիւնեաց տէր, տէր Ատրներսէհ՝ Վասակայ որդի, Սիւնեաց տեառն, տէր Գրիգոր՝ Սահակայ որդի, տէր Հրահատ և տէր Արուման՝ Սահակայ որդիք. տէր Հրահատ և տէր Գագիկ՝ Գրիգորոյ՝ Սիւնեաց տեառն որդիք, տէր Վահան՝ Վարդանայ որդի. նոյնպէս և յիմ ազատաց Հուռ, Քուր-

դոյ, Յոսրով՝ Շապուհոյ որդիք, Ջևանշէր՝ Թէոդորոսի որդի, Աշնակ՝ Վահանայ որդի, Զապիկ՝ Վահանայ որդի, Վարդան՝ Զանազայ որդի, Սահակ՝ Վասակայ որդի, Միհրան՝ Թուրքայ որդի, Յովհան՝ Ներսէհի որդի, Մուշեղ՝ տէր Տիրոցի որդի, Հասան՝ Շապուհոյ որդի, Վահան՝ Մխիթարայ որդի, տէր Մուշեղ՝ Սմբատայ որդի, տէր Վահան՝ Բաբգենի որդի, տէր Բաբգէն և տէր Վասակ և տէր Աշոտ՝ իմ Փիլիպպէի որդիք. և ի կրօնաւորաց Ահարոն՝ Երիցու վանական, և Գրիգոր քահանայ, Ստեփաննոս՝ Մաքենոցաց վանական, Յակոբ՝ Ուչծայ աւագերէց, Մանկիկ՝ Ծղկաց քորեպիսկոպոս, Ստեփաննոս՝ Ծիծառնոյ վանական, Գրիգոր՝ դրան երէց, Սիմէոն՝ Շաղատոյ վանական, Գրիգոր՝ Սիւնեաց վարդապետ: Եւ վասն առաւել հաստատութեան գիմ սովորական մատանիս ի վերայ եդի և գիմ որդեաց և դայլ ազատաց:

Եւ ահա գրեալ գայս և կնքեալ իւրեանց մատանեաւ՝ եդին ի տուրբ եկեղեցւոջս. և մատանեան որ կայր ի վերայ մագաղաթի, ունէր վեց կնիք գմեծամեծ իշխանացն վասն առաւել հաստատութեան: Ապա տեսեալ և գայս մեծ իշխանին Հրահատայ՝ Սահակայ որդւոյ, և Գրիգորի՝ Արուճանայ եղբօր, Հայկազնի՝ ի նոյն Սիսական տոհմէ, որ ունէր ի բաժնի ժառանգութեան գկովսական գաւառ և գԲաշունիք, մոլեալ գբա-

բիոք մոլութիւն. և եկեալ առ Տէր Դաւիթ և յիւրոց հայրենեացն սեպհական ընծայէ զգիւղն Նորաշինիկ և կովսական գաւառի. և զբէ նամակ վճիռ անխախտ պայմանաւ որ է այսպէս. «ի յերկերիւր ինննսուն և երեք թուականիս Հայոց, ի ժամանակս աստուածապատիւ և հոգևոր Տեառն Դաւթի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, ես Հրահատ բազմամեղ՝ երանելի տեառն Սահակայ որդի. վասն իմ չար և անիրաւ գնացից որ որսացեալ էի ի սատանայէ բազում և ազգի ազգի յանցանօք, և լցեալ իբրև զծով անթիւ չարեօք ոչ ունելով ակնկալութիւն փրկութեան յահեղ աւուր դատաստանին, զմտաւածեալ զանզաւակութիւնս իմ, և զի ոչ գոյր յոյս ապաւինի հոգալոյ զփրկուածն հոգւոյս իմոյ, և գիտելով զի մահկանացու է ազգ մարդկան, զաստուածընկալ սուրբ խաչդ ապաւէն ինձ արարի և փոխանակ որդեաց։ Եւ գեօղ մի ի կովսական գաւառի Նորաշինիկ անուն, որ ոչ ի յափշտակութենէ և ոչ ի զրկանաց ուրուք և ոչ յայլ ինչ անիրաւութեանց. այլ միայն յարդար վաստակոց ստացեալ զնոց արծաթոյ, վասն իմ հոգեացս ի սուրբ խաչդ ապաստարեցի իւր բոլոր սահմանօք, լերամբ և դաշտաւ, ջերմաւ և ցրտով, ծառով և անկով՝ որոյ սահմանքն են այսոքիկ. յարևելից կողմանէ Տորուանոտ սահման, և ի հիւսիսոյ՝ Ծոբի, և յարևմտից՝ Տրի և Աբատաւազուց. ի հարաւոյ՝ կերեն և Բերքնի. և յայսմ-

հետէ իշխան ես դու Տէր Դաւիթ՝ Սիւնեաց եպիսկոպոս, և որք յետ քո այլ հայրապետք յայդ յաթոռդ յաջորդին մի ըստ միոջէ, զայդ շէնդ ուտել և վայելել, պահել և ունել, գնոյ տալ և գրաւական դնել և զինչ կամք են՝ առնել մինչև յաւիտեանս ժամանակաց։ Եւ այսուհետև ոչ ես Հրահատ և ոչ իմ եղբարք կամ իւրեանց որդիք չունիմք իշխանութիւն բանս և պայքար առնել. և եթէ ոք յանդգնիցի և զսուրբ խաչիդ պաշտօնեայսդ ընդ աշխատ ոք ածէ՝ յԱստուածոյ նզովեսցի եղիցի և ի սուրբ խաչէդ դատապարտեալ. և հողն օրհնութեան նմա մի բաւեսցէ, և ինքն դատին մի յաղթեսցի։ Եւ եառ զայս հաստատ նամակս ես տէր Հրահատ՝ տեառն Սահակայ որդի, քեզ Տեառն Դաւթի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, վկայութեամբ հօր Յակոբայ՝ վարդոյ վանականի, և Յովհաննայ և Մմբատայ՝ Ներսէհի որդեաց, և Յովհաննայ՝ Բաբկայ որդւոյ, և Սահակայ և Մուշեղի՝ տեառն Տիրոցի որդեաց, և Վիժանայ՝ Վարազաիրոցի որդւոյ, և Ըռանձարայ՝ Գրիգորի որդւոյ, և Խուդափայ՝ Յովհաննի որդւոյ, և Համազասպայ՝ Սահակայ որդւոյ, և Բարսղի՝ Մառաքատայ երիցու, և Սագոկայ՝ Մխիթարայ որդւոյ, Ղուկերծոյ երիցու, Համայեկի՝ Վանանդայ երիցու, և Սահակայ և Ահարոնի՝ Նորեաց քահանայից, և Մաթոսաղայի՝ Յակոբայ որդւոյ, Ուչծայ աւագ երիցու։ Եւ կնքեցի զայս վճիռս

եա տէր Հրահատ իմ սովորական մատանեաւս. և վասն առաւել հաստատութեան գրոյս գաստուածապահ տեառն Գրիգորոյ՝ Սիւնեաց տեառըն, մատանին ի վերայ եդի. տացէ Աստուած վայելել յաւիտեանս ժամանակաց»:

Բայց երանելի և փառաւոր իշխանն Փիլիպպէ շինէ եկեղեցի մի գեղեցկաշէն մերձ հին եկեղեցւոյն ի հարաւոյ կողմանէ, յանուն սուրբ լուսաւորչին Գրիգորի. և ինքն վախճանեալ դնի անդէն ի դրան. որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի. և անունն գրեալ ի դպրութեան կենաց: Եւ այս լինէր յ297 թուականին Հայոց: Իսկ եպիսկոպոսն Դաւիթ կամեցաւ մեծապէս կարգել յիշատակ մեծի երախտեաց նորա ամ յամէ. և արձանացոյց գրով զոր և մեք հարկ ի վերայ ունիմք զնոյն գրել: Թէպէտ և բազում ժամանակօք քայքայեալ և այլայլեալ են ապականեալ ամենայն տուրք նոցա և կարգ և որպիսութիւնք եպիսկոպոսարանիս, միայն զի մի՛ չնչեսցի մեծ յիշատակ նոցա. և այժմ ևս նորոգապէս ըստ կարի յիշեսցուք. և է գրեալն այս ինչ:

«Այսպիսի ինչ կամ եղև ինձ Դաւթի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, յաղագս աստուածապահ տեառըն Փիլիպպէի հոգեացն փրկութեան և լուսաւորութեան, և մշտնջենաւոր և անմահական կենացն արժանի լինելոյ. վասն զի նա զիս առ նոյն կատարեալ մօտք ապաւէն, և օգնական իւր

արար առ Աստուած վասն հանդերձեալ կենդանութեանն։ Եւ թէպէտ և ամենայն ազգ մարդկան ընդ մեղօք փակեալ է ի կամս իւր, ըստ իմաստնոյն բանի թէ՝ չիք մարդ որ ոչ մեղանչէ. քանզի ոչ ոք ի հողածնեցելոցս կարաց հաստանել ճշմարտապէս սրբութեան և կատարեալ արդարութեան, թէպէտ և բազումս գործեցին գառաքինութիւնս. թողում ասել զայնոսիկ որք ի կամակատար հեշտութիւնսն են հանապազորդեալ վայելչութեամբ. սակայն նորա մանն ինչ հրամանակատար եղեալ իմում բանի՝ բազում ինչ բարեպաշտութիւնս գործեաց. յաղագս որոյ ակն ունէի կատարեալ իսկ թողութեան հասանել ի Տեառնէ. իսկ հասարակացն ժամանեալ վախճան կենացս այսորիկ՝ ոչ եթ ժամանել, բոլորովիմբ մաքրութիւնս գործել ի ձեռն զղջմամբ ապաշաւանաց և այլ ինչ պէսպէս հոգևոր շինողութեան. այլ ամենայնցն խափանումն գործեցաւ սկզմանցն բարեաց։ Եւ մեծապէս տարակուսանք նեղասրտութեան շրջապատեաց զիս յաղագս այսորիկ։ Իսկ ապա աստուածային իմն ազդեցութեամբ, մանաւանդ զի արժանի իսկ էր, ըստ իւրում կատարելապէս երախտագործութեանցն առ սուրբ եկեղեցիս, սահմանօք և ընչիւք և այլ բազում պայծառութեամբք. հաստատեցի ի սուրբ տեղիս յայսոսիկ բարւոյ յիշատակ զկնի նորին հաստուցումն վոխարինի բարեացն, զի յամենայն տարւոջ

դուք որ ի սուրբ եկեղեցւոջս էք բնակեալ ի Տաթևոյ վանս, զմին քառասունս հարկաւորաբար կատարիցէք վանն նորա հոգեացն փրկութեան, և զերանելի ում թողութիւն եղև մեղաց սաղմոսդ յորում տեղւոջ կարգեալդ եմ՝ յամենայն աւուր անխափան ասասջիք, և Տէր՝ ողորմեա 60 ի վերայ։ Եւ զօր մահուան նորա հանգուցելոյ պաշտամամբք յիշատակ առնելով որ է ի քաղաց հնգետասանին, թերևս ապրեսցի յահագին պատուհասից։ Եւ որք կատարիչք լինին հրամանիս մերում և մաերմաբար սիրով հատուցանեն զհոգևոր վաստակն, ի ձեռն նոցունց սուրբ և առաւածահաճոյական աղօթիցն զաստուածապահ տեառնն զհոգին արժանի արասցէ Քրիստոս մշանջենաւոր և անվախճան ուրախութեանցն թողութիւն գտանելով յահաւոր աւուրն։ Եւ զկատարողսն ասացելոցս առ ի մէնջ Քրիստոս օրհնեսցէ, և աճեցուսցէ զամենայն վաստակս առաքինութեան ի հոգևոր անդաստանի ձերոյ. և ամենայն կատարեալ բարեպաշտութեամբ յայսմ աշխարհիս կեցեալ՝ անճառ և անապական հանդերձեալ բարութեանցն Աստուած արասցէ հաղորդս ընդ ամենայն սիրեցեալ կամակատարս իւր հանդերձ անթառամ պսակօքն ի լուսեղէն խորանան բնակելով։ Իսկ որք հակառակող լինին բարեպաշտաճառ հրամանիս մերում, և իբրև զոչ ինչ իմն ի թեթևս բերելով՝ առ ոտն հարկանեն քամահելով,

և ոչ հաստուցանեն զպարտս ասացելոցս առ ի մէնջ. ամենայն ծանրութիւնք բեռանց նորա, զոր ունէր ի մեղանչականութենէ մարմնականացս, ի նոցանէ խնդրեսցէ Քրիստոս. և զաղօթս նոցա ի մեզ համարեսցէ ըստ գրեցելոյն. և փոխանակ բարի հաստուցման ակն ունելոյ յահաւոր և յամպախտաց զատաստան Բանին Աստուծոյ, հակառակ նորին, զանելանելի և զանվախճան պատուհասն ընկալցի: Եւ կնքեցի զայս գիր յիշատակի առ ձեզ սրբասէր քահանայք և ճգնազգեաց կրօնաւորք՝ վասն առ յապազայիցն հաստատութեան իմով սովորական մատանեաւ յ297 թուականին Հայոց»: Ահա յետ այսպէս փարթամացուցանելոյ զաթոռս և զեղեցիկ կարգաւ սահմանելոյ վախճանի Տէր Դաւիթ. և նստաւ ի տեղին Տէր Յովհաննէս. և յետ նորա՝ Տէր Սաղոմոն:

ՂՍ

Վասն Տեառն Սաղոմոնի. եւ որ ինչ նովաւ եղեւ ի սուրբ եկեղեցին Ժառանգաւորին:

Եւ արդ երանելիս այս Սաղոմոն անցեալ էր առաքինութեամբ ընդ ամենայն հոյլս ճգնաւորաց. և (էր) հալածիչ դիւաց և ողջացուցիչ ամենայն ախտաժետաց: Վասն որոյ կացուցանեն յաթոռս եպիսկոպոսութեանս Սիւնեաց ձեռնա-

դրեալ ի Տէր Զաքարիայէ՝ Հայոց կաթողիկոսէ. որ և մեծաչան ճգնութեամբ զարդարեաց զսուրբ աթոռս զանազան կարգօք։ Եւ էր հանդիպեալ սմա մանն ինչ յաստուածաբարձ խաչէն որ ունէր յինքեան նիշ ներկուածի արեամբն Յիսուսի, յորմէ ահագին և մեծամեծ նշանք լինէին։ Տայ կազմել խաչ յոսկւոյ ի մեծարհեստ ճարտարաց. և զարդարէ մեծագին ակամբք և մարգարտով. և դնէ ի նմա զփայտն. և զրէ ի վերայ զիւրն անունն. և ընծայէ ի սուրբ եկեղեցին։ Եւ դնէ այլ ևս սուացուած. և տայ ի սուրբ խաչն. և զրէ ինքեան յիշատակ կտակաւ այսպէս։

«Շնորհիւն Աստուծոյ այս իմ ձեռին գիր է Տեառն Սաղոմոնի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, որ յառաջ ժամանակաց գՄոսոյ կոռավարն Տեառն Գէորգեայ սուրբ նշանին հոգեցատուր էր արարեալ, զինչ պատճառօք և էր՝ այլ յափշտակեալ էին։ Յորժամ յաղօրդեցայ ի սուրբ յաթոռս, ստացայ ինձ զաստուածընկալ սուրբ նշանս յաղագս առաւելեալ հոգւոյս իմոյ փրկութեան. և առի զԴարատափ ի Հրահատայ՝ Սիւնեաց տեառն, ի Գրիգորոյ որդւոյն, յիշխանաց իշխանէ, ի հալալ վաստակոց իմոց, ոչ հոգեցատուր և ոչ յերախայրեաց. այլ գնեցի ընդ հազար և երկերիւր դրամի. և սուրբ նշանիս հայրենիք արարի։ Սրդ որք յաղօրդիք ի սուրբ մայրաքաղաքս՝ զիս Սաղոմոն ի սուրբ յաղօթս յիշեցէք, և Աստուած

վայելել տայէ։ Սահմանք Դարատափոյ այս են որ յիւր ձեռնագրիւդ գրած են. և Աղբնոյն շինին առաջև էր 3 դուր երկիր. և արդ Յոտոյ տէրս Գրիգոր՝ վասակայ որդի, վկայ եմ. ես Վարդիկ՝ Թադոսի որդի վկայ եմ. ես Աբաս՝ Շէրանկին որդի, վկայ եմ. ես Գրիգոր երէց ի Տաշուայ վկայ եմ. և Վարդ դէհմէթար վկայ եմ, Աբիսաղամ ի Բերդկանեբէչոյ և Սարգիս յԱրիտայ և Պետրոս երէց վկայ եմք. Ղազար ի Տաթևոյ և Մրջմիկ ի Քարատնեայց վկայ եմք, Սմբատ ի Յուրայ գետոյ, Տէրունականին Պօղոս երէց, Տիրանուն երէց, Ահարոն երէց Աստուծոյ միջնորդութեամբ վերոգրեալ անուանքս վկայ են այս վճռիս։ Արդ՝ որ այս հաստատուն վճռիս Դարատափոյ և Աղբնոյն հակառակ ելանէ՝ ի յԱստուծոյ և ի սուրբ նշանէդ դատապարտեալ եղիցի. զիւր կեանքն և ժառանգութիւնն մի վայելեսցէ, և ընդ Յուդայի աստուածավաճառին եղիցի. իսկ հաստատիչքն օրհնեալ են յԱստուծոյ և ի յէնջ. յ330 թուին էր։

Յայսմ ժամանակի իշխան մի Սիսական Զեւանշէր անուն՝ որդի Սահակայ՝ Սիւնեաց տեառընն, գայ առ Տէր Սաղոմոն. և խնդրէ ինմանէ զգիւղն Բեխ որ ի Կովսական գաւառի, որ էր սեպհական ժառանգութիւն սուրբ խաչին և եպիսկոպոսացն ի հին ժամանակաց. և փոխանակէ զիւր սեպհական գիւղն Արուքս որ ի Բաղք

գաւառի. որ հաւանեալ եպիսկոպոսին՝ տայ զԲեխ և առնու զԱրուքս գիւղ. և գրեն զվճիռ պայմանին այսպէս. «յ320 թուականութեանս Հայոց, ի ժամանակս աստուածապատիւ և հոգևոր Տեառն Սաղոմոնի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, կամ եղև ինձ Ջուանշէրի՝ աստուածապահ տեառն Սահակայ Սիւնեաց տեառն, որդւոյ, զիմ զշէն մի որ ի Բաղք գաւառի Արուքս անուն, որ յիմ հօրէն և յեղբարց յիս հրիտակ հասեալ. և իմ հայրենի ժառանգութիւն էր անհամիմատ տեղի, փոխանակել ընդ Բեխոյ շինոյն որ ի Կովսական գաւառի էր. և շէնն բնական սուրբ խաչին և հոգևոր Տէրանցն Սիւնեաց եպիսկոպոսացն ժառանգութիւն էր լեալ. միմեանց կամաւ և յօժարութեամբ փոխանակեցաք ես և Տէր Սաղոմոն: Վասըն զի մեր երկոցունցս մէջաւոր էր փոխանակեցաք. և զայս հաստատութեան գիր կանգնեցաք: Արդ իշխան էք դուք Տէր Սաղոմոն՝ ուսեալ և ժառանգել զայդ շէնդ զԱրուքսէ իւր սահմանօքն բոլորովիմբ, ծառօք և այգեօք, գետով և ցամաքով, արտավարօք և մարգօք, ջրաղացովք և պարտիզովք, եկեղեցեաւ և այլ շինուածովք, դու հոգևոր Տէր Սաղոմոն՝ և ով ոք յաջորդի ի տեղիդ ձեր ի յաթոռդ և սուրբ խաչիդ պաշտօնեայքդ մինչև յաւիտեանս ժամանակաց: Եւ յայսմհետէ մի ոք իշխեսցէ հակառակել այսմ անխախտ վճռիս կամ ի մէնջ և կամ յօտարաց.

ապա թէ ոք յանդգնի՝ զաւրին մի յաղթեսցէ. և յերից սուրբ ժողովոցն նզովեալ եղիցի, մանն զՅուդայիւն առցէ և մեր մեղացն պարտական եղիցի. և թէ տաճիկ աւազ լինի և յափշտակել ջանայ. յիւր Մահմետէն ապիրատ լիցի և յիւր օրինացն հազար հազար նալաթ նորա վերայ եղիցի, և ինքն դենակորոյս և անեբես լիցի յիւր Աստուծոյն։

Եւ սահմանքն այս է Արուքսայ. յարևելից կողմանէ կշմատուք է սահմանակից. և յարևմտից կողմանէ հման դրախտ է նոյն սուրբ խաչիդ սահման. և ի հարաւոյ կողմանէ հին ջրատենացովդ է մինչև ի Բեխոյ սահմանն, և ընդ հիւսիսոյ կողմանէ կաւարատոյ սահմանովն է։ Առաք զԲեխ իւր սահմանովն և արքունի նեպակովն եւ առաք զԱրուքս իւր սահմանովն և արքունի նեպակովն որ էր 12 դրամ. և է վկայք վճռիս վասակ՝ Սիւնեաց տէր, և իմ եղբայրն Արուման, և իմ որդի Տիգրան, և այլ բազաց տանուտէրք և սուրբ խաչին պաշտօնեայք. կնքեցաք մերով մատանեաւ»։ Գայ և Քուպղիդուխտ առ Տէր Սաղոմօն, անորդի գոլով. որ էր դուստր Վասակայ՝ Սիւնեաց տեառն, և քոյր Փիլիպպէի և կին Հրահատայ իշխանի. և զիւր հոգեժան բաժինն ընծայէ ի սուրբ խաչն և ի Տէր Սաղոմօն. և զրէ պայման վճռի զայս օրինակ։

«Ես Քուպղիդուխտ՝ դուստր Վասակայ՝ Սիւ-

նեաց տեառն, մերձեցայ ի ժամանակս ծերութեան, զմտաւ ածելով զերկրաւոր կենաց ոչնչութիւնն ցանկացայ յաւիտենական կենացն. և վասն զի ի մարմնաւոր կենացս զրկեալ էի ի զաւակէ մասանց, զսուրբ խաչդ և զաստուածապատիւ և զհոգեւոր Տէր Սաղոմոն՝ Սիւնեաց եպիսկոպոս, ինձ հոգեաց զաւակ ատացայ. և յոյս և ապաւէն մեղուցեալ ոգւոյս իմոյ. և շէն մի Մաճանուն ի Բաղաց գաւառի, որ նախ տեառն Ատրներսէհի՝ Սիւնեաց տեառն և իմ եղբօր, ինձ էր տուեալ, և յետ այնորիկ Հրահատայ՝ իմ տեառնն, գնեալ էր յիմ եղբօրէն, և ինձ վաճառեալ և հոգեցատուր արարեալ: Եւս ես Պուպիդուխտ զայդ շէնդ լերամբք և դաշտով: մարգով և արտով, գետով, ջրով և ցամաքով, ծառովք և տընկովք ի սուրբ խաչդ և ի Տէր Սաղոմոն՝ Սիւնեաց եպիսկոպոս: Ես զիմ հոգիս ի քեզ յանձն արարի. արդ իշխան ես դու Տէր Սաղոմոն՝ ևս որ յետ քո այլ յաջորդի ոք ի սրբոյ խաչդ ուղղ Սիւնեաց, եպիսկոպոսունք, ուտել և վայելել զայդ շէնդ բոլորովիմբ իւր սահմանօքդ մինչև յաւիտեանս ժամանակաց: Եւ մի ես և մի իմ եղբօրորդիք և այլ խոստակղարք պայքարել եւ համիմաղ կալ մի իշխեսցեն. ապա եթէ յանդգնի ոք բանս առնել յիմ արարածիդ և կամեսցի խախտել զիմ զաւրսդ՝ յԱստուծոյ և ի սուրբ խաչէդ դատապարտեալ եղիցի. և ի հոգևոր տէ-

բանդն նզովեալ. և զիմ և զիմ ծնողաց և զաեաուրն Հրահատայ, որ իմ կենաց կցորդն էր, զամենայն զմեղս և զյանցանս Աստուած ի նմանէ առաժեսցէ. և ընդ սատանայի և ընդ հրեշտակաց նորա յանշէջ հուրն տանջեսցի։ Եւ զրեցի յ316 թուականութեանս Հայոց վկայութեամբ իմ եղբօրորդեացս՝ տեառն Վասակայ և տեառն Աշոտի և տեառն Գրիգորոյ և տեառն Սահակայ իւրեանց ազատաց և ամենայն Շնհէրեցեաց։ Եւ վասն առաւել հաստատութեան գրոյս զաստուածապատիս և զնոգևոր Տեառն Սաղոմոնի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, զվաւերական մատանին ի վերայ եդի։ Եւ եթէ տաճիկ աւազութիւն փոխի և յափշտակել ջանայ, հազարէն հազար նալաթ ի վերայ նորա պայ. և յիւր փեղամբարէն ապիզար լինի։»

Եւ ապա յետ բազում և մեծամեծ վաստակոց ընու զկէտ կենաց իւրոց սուրբ և երանելի եպիսկոպոսն Տէր Սաղոմոն փոխեալ յաստեացս. և յաջորդէ ի տեղին հոգևոր և աստուածապատիւ, արքայաշնորհ եպիսկոպոսն Տէր Յովհաննէս, զորոյ զգովութիւն և զանհամեմատ գործս գովութեանցն յուսոյց ձեզ։

ՃՄԱ.

Վասն Տեառն Յովհաննիսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի. եւ վասն շինուբեան մեծ կաթողիկէ եկեղեցւոյն որ յեպիսկոպոսարանին անդ ի Տաթեւ եւ վասն այլ շինուածոցն:

Երիցս երանելի և բազմերջանիկ հայրապետս այս Տէր Յովհաննէս, որ երկրորդ գկնի Տեառն Սաղոմոնի կարգեցաւ յաթոռ մեծարգելոյ տուբեան տանս Սիւնեաց: Ասի զամանէ որդի գոլ առն միոյ այրւոյ և մուրացիկ աղքատի ի Նորեաց շինոյն. և առեալ էր յետոյ կին մի անզգամ որ պահէր զերամս ընտանի թռչնոց տեառն գեղջն. և վարէր խորթուբեամբ, ոխաբար ընդ որդւոյն իւրոյ փոքր պատանեկին Յովհաննու. և հանապազ գանալից և սովամահ առնէր զնա: Եւ յաւուր միում կորուսեալ մանկանն բազում ձագս ի թռչնոցն՝ ոչ իշխեաց մտանել ի տուն անդր, այլ վախստական գայ Հոգւոյն առաջնորդութեամբ ի վանս Տաթևոյ. և ընակեալ առ կրօնաւորի մի զարգանալ ուսմամբ և հասակաւ. քանզի էր լի աստուածեղէն շնորհիւ, հարուստ խոհականաւն և փարթամ յիշողականաւն. և արժանաւորեալ աստուածային օծմանն առնու ձեռնադրութիւն քահանայութեան ի Տէր Դաւթէ՝ եպիսկոպոսէ Սիւնեաց. և վարժեալ աստուածային գրովք հասանէ ի կատարեալ չափ գիտնականին և գործնականին: Եւ յաւուրս Տեառն

Սաղոմոնի առնու զփակակալութիւն եկեղեցւոյն. և լինի գլուխ ամենայն կղերիկոսաց տանն, և աւագ եկեղեցականացն:

Ապա հասեալ վախճան առաքինւոյն Սաղոմոնի և ժողովեալ տէրանցն Միւնեաց և ամենայն ազատաց նոցա, և վանաց երիցունք աշխարհին, նա և աւագ տանուտեարք ըստ գաւառաց գաւառաց, և ամփոփեալ զսուրբ մարմինն եպիսկոպոսին՝ առնեն ընտրութիւն նորոգ հայրապետին. եւ ամենայն ժողովոյն զաղաղակ հարեալ՝ զՅովհաննէս փակակալն խնդրէին ինքեանց առաջնորդ. ընդ որ հաճեալ ամենայն բազմութեանն յուղարկեն զնա մեծապատիւ փառօք առ կաթողիկոսն Հայոց Տէր Գէորգ. և ձեռնադրեալ զառնայ մեծաշուք պատուով ևնստի յաթոռ վերապօլսոյ թեան տանս Սիսական: Տեսանէր ապա երանելիս այս զեկեղեցին նեղ և խրթին և հնացեալ ի բազում ժամանակաց, նա և ի շարժմանէ իսկ խարխալեալ. և զի անպատշաճ էր այնպիսի մեծի մայրաքաղաքի և աշխարհադումար ժողովրանի սուրբ հայրապետանոցին առանց մեծ կաթողիկէ եկեղեցւոյ լինել, վասն որոյ հանապազ մտախոհ լինէր ի սրտին և ոչ ինչ գտանէր հնարս, մի՝ զի ոչ իշխէր քակել զառաջին սրբոցն հիմնարկեալ տաճարն. և մի՝ զի անձեռնհաս թուէր յանհուն ծախս պիտոյիցն: Ապա ի տեսլեան հրամանի առնու ի հրեշտակէ զինն ի բաց դնել և

նոր առնել սկիզբն շինուածոյ եկեղեցւոյն, և այն ինչ երկրորդէր և երրորդէր տեսիլն, մինչ քնաւին հաւաստեցուցանէր հրեշտակն զիրն. զի մի երևոյթ երազական ինչ կարծիցի. և իւրով մականաւ ծրագրէր զտեղին և հրամայէր շինել յանուն սուրբ և գլխաւոր առաքելոցն՝ վիմին Պետրոսի և առաքելոյն Պօղոսի. և քաջալերէր ի գործըն ասելով. ոչ ի մարդոց կատարի դա. այլ Տէր կամի կանգնել զդա տուն փառաց իւրոց։

Զարհուրեալ եպիսկոպոսին, ապա և զարթուցեալ ի քնոյն՝ յոլով ժամս ափշեալ լինէր։ Յարուցեալ եկն ի տեղին և ցուցանէր եղբայրութեանն զծրեալն ի հրեշտակէն. ազդէ և զայս մեծի և գահերէց իշխանին Սիւնեաց Աշոտոյ՝ եղբօր Վասակայ, որդւոյ Փիլիպպէի և հօր Սմբատայ և Սահակայ և Բաբգենի, և ամուսնոյ նորա երանելի և մեծահաւատ տիկնոջն Շուշանայ, և միւս իշխանին որ ի Գեղամ գաւառի լինէր, Գրիգորի՝ Սուփանայ որդւոց՝ Գաբուռայ և Սահակայ, և միւս իշխանին որ ի Բաղս՝ Զագիկ կոչեցելոյ՝ հօր Զաքարիկ կոչեցելոյ՝ հօր Զաքարիկ կոչեցելոյ՝ հօր Զաքար

նուաճոյն. բայց գլխովին իսկ մեծ իշխանն Աշոտ և եպիսկոպոսն Տէր Յովհաննէս մեծամեծ ծախիւք և աշխատութեամբ կային ի վերայ գործոյն. և աստուածային կամակցութեամբն սկիզբն առնեն շինուածոյն, և արկանեն հիմն յ344 թուականին Հայոց, ի թագաւորութեանն Սմբատայ Բագրատունւոյ խոստովանողի՝ որդւոյ Աշոտոյ թագաւորի, յիշխանութեան Սիւնեաց Աշոտոյ՝ որդւոյ Փիլիպպէի, ի կաթողիկոսութեանն Հայոց Տեառն Գէորգեայ Գառնեցւոյ, հրամանաւ և կամօք Աշոտոյ, ձեռամբ Տեառն Յովհաննիսի, զոր և իւր իսկ գրեալ էր ի վերայ եկեղեցւոյն այսպէս. «Յամին յորում թուականն Հայոց 344 էր, և զատիկն ի նաւասարդի ի 4, ես Տէր Յովհաննէս որ երկրորդ կարգեցայ եպիսկոպոս Սիւնեաց գկնի Տեառն Սաղոմոնի, արարի սկիզբն շինուածոյ եկեղեցւոյս»:

Եւ այսպէս կատարեալ զեկեղեցին կամար երկնանման գմբէթայարկ, ճեմարան իմն հրեշտակաց և քաւարան մարդկան, ի տաշածոյ վիմաց և ի քերածոյ քարանց, գաղատոսաշէն իմն յարմարեալ ակնախաիղ տեսողաց ի 100 կանգնոյ բարձրութիւն նորա և ի 48 կանգնոյ երկայնութիւն նորա և ի 24 կանգնոյ լայնութիւն նորա. ունելով չինքեան չորս խորանս բաց յաւագ խորանէն: Եւ ըստ Սաղոմոնեան յարկին և կամ Զօրաբաբէլեանին կառուցեալ ի մէջ տանն երկուս սիւնս

հրաշակերտս՝ զբոյս և զյաքում, որք հաստատեղոյս խարսխօք և զեղեցկադիր և բարձրաբերձ թաղադաղօք պարաբարձեալ ունին զահագին թանձրութիւն երկնաձեղուն քարակարկառ յարկին. և այս ի խորհուրդ երկուց գլխաւոր առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, յորոց նշխարացս եղան ի ներքոյ սեանցս, և բազմութիւնք սրբոց նշխարաց անդ դումարելոց առաքելոց, հայրապետաց, մարտիրոսաց եղան ի հիմունս և յանկիւնս եկեղեցւոյն: Ահա զայս իսկ աւարտեալ զամս մեռասան՝ կանգնէ և մերձ եկեղեցւոյն հանդէպ զրանն հարաւոյ սիւն մի զարմանալի յանուն սրբոյ Երրորդութեանն ի մանր քարանց պատուածեալ ի չափ 30 կանգնոյ. պարսպէ և զեկեղեցին սրբաքարով. և ապա զվանսն՝ կոփածոյ քարամբք. և զի էր նիստ տեղւոյն անյարմար՝ հարթէ զթանձրութիւն լեռնոյն, և զխորութեան վայրսն բարձրացուցանէ կրաշաղախ որմովք. շինէ և զաղտանոցս լեռնափորս ի ներքոյ վանիցն ծածուկ երկրաւ՝ բազում տունս և դարանս ի պէտս եկեղեցւոյն. և հարթեալ հաւասարեալ զվայրն՝ շինէ և սրբաշէն տրապէզս և գործատեղս, համբարանոցս և սրբատունս և զրատունս. և ի զրան եկեղեցւոյն տուն աղօթից և տեղի դամբանի իշխանաց և եպիսկոպոսաց Սիւնեաց:

Ահա զայս ամենայն կազմուածս յօրինուածի մեծի տանն հայրապետութեան հոգացեալ և

աւարտեալ՝ արար ցանկալի հեռաւորաց և մերձաւորաց բոլոր Հայաստանս աշխարհիս. և ջահաւորեալ իբրև զարեգակն ի մէջ աստեղաց՝ երեւելի էր ի մէջ ամենայնի ոչ միայն շինուածովք. այլ և պայծառանայր քահանայական և կրօնաւորական դասուք ի չափ 500 եղբարց. լի էր և ծովամատոյց փիլիսոփայիւք երաժշտական երգոց, ճոխ էր և վարժարանն վարդապետական կրթութեամբն. նա և արհեստաւորք նըկարչացն և դրոշոց անհամեմատք։ Վասն որոյ յայսպիսի համբաւոյ հրաշացեալ թագաւորք և իշխանք և եպիսկոպոսունք գային ի տեսութիւն և ընծայաբերք լինէին սուրբ և երկնահանդէս աթոռոյն։ Բայց յորժամ աւարտէր զշինուածն եկեղեցւոյն և այլ ձեռակերտացն եպիսկոպոսն Տէր Յովհաննէս. ապա ի խնդիր լինէր աշխարհախումբ հանդիսի առ ի կատարել զնաւակատիս մեծի և աստուածահրաշ տաճարին. կոչեն զթագաւորն Սմբատ Հայոց այլովք իշխանօքն և զկաթողիկոսն Տէր Յովհաննէս որ զկնի Մաշտոցի ի Սևան կղզւոյն յաջորդեցաւ, այլովք եպիսկոպոսօք Հայոց. գայ և Գագիկ Վասպուրականի որ և թագաւորեցաւն իսկ, իւրով եպիսկոպոսօք և իշխանօք և ազատօք։ Գայ և Աղվանից կաթողիկոսն Տէր Սիմէոն իւրոյ աշխարհին եպիսկոպոսօք և մեծամեծ իշխանօք. ժողովին և համազգի հայկազունն իշխանքն Սիւնեաց զորս յիշեցաք. և այլ

վանականք և աշխարհականք Սիսական աշխարհիս. յորոց մինչի արդարև էր տեսանել ըստ իւրուքն անսուտ հրամանին գԲրիատոս Հարբ և ամենասուրբք Հոգւովն և ամենայն երկնային զօրօքն. նա և առաքելական և մարգարէական գնդիւք. և հայրապետախումբ և մարգարէական և մարտիրոսաջոկ երամօքն, զորս և տեսանէր ի ցայգապաշտամանն սուրբք եպիսկոպոսն Յովհաննէս գՊետրոս, և ի ձեռին բանալի երկաթի, և գՊօղոս, և ի գիրկն իւր առաքելական գիրքն, որ մտեալ յեկեղեցին պատրաստէին աթոռ երկնաւոր թագաւորին. և տային գբանալին և գգիրքն ցեպիսկոպոսն և ասեն. հաճեցաւ Տէր բնակել ի սմա. և մեք պատրաստեմք տեղի հանգստեան նմա. և մեզ իսկ հրամայեցաւ աստէն ՚ի մալ մինչ ի միւսանգամ գալուստն թագաւորին մեր. այդ բանալի արքայութեանն է, կացցէ յեկեղեցւոջս. զի աստ բանալոց է դուռն դրախտին ամենայն մեղուցելոց հաւատով դիմելոցն ի սա. և այս գիրք կացցէ ի սմին, զի աստի բղխելոց է շնորհ վարդապետական և ողջամիտ քարոզութիւն սուրբք գրելեացս աստ ՚ի մալոց է անապակ և անխառնուրդ։

Զայս տեսեալ, և զարթուցեալ՝ մեծաւ գոհութեամբ փառս ի վեր առաքէր. և ոչ ինչ յայտնէր ումեք։ Ապա ընդ լուսանալ առաւօտուն զգեստաւորեալ սուրբն հայրապետացն և ամենայն եպիսկոպոսացն ելին ի բեմն. և կատարեալ գՀոգևո-

բական օրհնութիւնն օծանէին աստուածազործ իւղովն. և ի յասելն «օրհնեացի, օծցի» ամենայն բազմութիւնն այնքան հնչեցուցանէին զամէնն. մինչ թուէր լսողացն անագին որոտմունք և ճայթմունք յամպոց հրեղինաց ելեալ. և դղրդեր երկիրն, և շարժէր վայրն. որ և այսպէս կարծեցեալ թուի լինձ եթէ անմարմին ձայնք խառն լինէին նոցա, որ այնպէս անարկու թուէր, և ոչ միայն սոսկ մարդոյ: Եւ այսպէս կատարեալ զօրհնութիւնն՝ ելին օր նաւակատիս առնեն ի փառս Աստուծոյ: Եւ իբրաքանչիւր որ դառնայ ի տեղի իւր. բայց թագաւորն և իշխանքն Սիւնեաց տեսեալ զայնպիսի հանդէս և զայնքան չքնաղագոյն յօրինուած՝ առաւելապէս սիրեն և պատուեն զտեղին. և մեծ արօք վարժամացուցանեն. և յայժ ընդարձակեն զսահմանն տեղւոյն զոր և ասելի խակ է:

ԼՍԲ

Վասն ժառանգութեան եկեղեցւոյն Եւհայրապետացն, զոր նուէր թագաւորին և իշխանին. Եւ սահման վանիցն զոր զտաք գրեալ ի վերայ մագաղաթի Եւ կիմեալ արմատական մատենիս:

Ընդայէ թագաւորն ի սուրբ եկեղեցին զմեծ աւանն կարճաւան յԱրխիք գաւառի, ի Մեղրաձորի ընդ գնոյ ատացեալ, գնէ և զՀարժիս ի տէրանցն Սիւնեաց և զայն ևս ընծայէ ազատ

յամենայն հարկաց, տայ և ի Գեղաքունի, ի Սոդից գաւառի զՄորատանկիբակ. և ի Գառնոյ ձորի զԳոտող վանս։ Տայ և Աշոտ՝ գահերէց իշխանն Սիւնեաց, զՅօղունի գիւղ ի Հաբանդ գաւառի և զԻնուանիք ի Սիւնիս, ի Ծղուկք գաւառի, շնորհէ և զՅուր բերդովն և ապարակօքն և զգեան Յուրայ և զվանքն, զՏանձատափ և զԴեղձաձորն. տան և Բաղացիքն զՏաշու փոխեալ ընդ այլ գեղոյ յԱշոտոյ. տան և զեղէգս գեօղ ի Բաղք գաւառի. տան և Սուփանեանք զԱրիտ գեօղ սահմանակից Հարժէից և Տամալեկուց. տան և յեոտոյ ի Գեղաքունի զկակոյս գիւղ ազատ յամենայն հարկաց. շնորհէ և մեծ բարեպաշտուհի տիկինն Սիւնեաց զԾածարդ և զԲարատանիս։ Եւ գրեն այսմ ամենայնի կտակ առաջի մեծ ժողովոյն և կաթողիկոսին, և ահագին նզովիւք փակեն սոսկալի և սարսափելի դաշամբք. և կնքեն զթուղթն վարազագիր մատանեաւ Թագաւորին և կաթողիկոսին և իշխանացն. և աւանդեցին ի ձեռն Տեառն Յովհաննիսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի։

Զոր և տեսեալ մեր զայս ամենայն նամակ վճռի ձեռագիր իւրեանց իսկ շնորհողացն հնադեալ և ծայրատեալ, զոր ի բազմացն զսակաւն կարացաք ընթեռնուլ. և վասն երկարութեանն ատպկութիւն համարեցաք լսողացդ (և ոչ) եղաք ի մատենիս։ Բայց զմեծագոյն սիգէլն որ զշրջակայ սահմանն ցուցանէ, զրեցից աստ։ Դարձեալ

և կին մի բարեպաշտոն Համասպրուհի անուն՝ դուստր Բաբգենի իշխանի, տայ նախ զայգին մեծ որ ի Հալիսից գետառին և յետոյ՝ զգիւղն իսկ զՀալիս իւր ամենայն սահմանօքն. և զրէ կտակ հաստատութեան մեծամեծ դաշամբք զի մի իշխեսցեն խախտել: Բայց թէպէտ զայս ամենայն տուրս արարին, զբնակիչս բերդին Յուրայ ոչ կարացին հանել ի տեղւոյն. զի հին հայրենի տէրք էին և բարբարոսք և պիղծ մարդիկ. այսպէս և ոչ զՏամալէկս որ մերձ վանիցն էր ի հանդէսն, կարացին սեպհականել. զի և նոքա նոյնպիսիք էին: Էր և աւազականոց մի Բերդ անուն հանդէպ վանիցն, յայնկոյս մեծի գետոյն յափն քարոյն որ Առաւելապաշան կոչէն ի ներքին Ուսակին. և զայն ևս ոչ հալածեցին. յորոց վտանգ ոչ սակաւ հասանէր եղբայրութեանն: Յետոյ թէպէտ յայլ և յայլ ժամանակս զայնս ևս սեպհականեցին հայրապետքն. բայց յետոյ ի խանդարել հայրապետանոցին և յաւերիլ տանն քակեցան այս հոգեցաւուր ժառանգութիւնք. և ի բառնալ հակառակութեանն դարձեալ մի մի վերատին անդրէն հաստատեցին:

ԼՕԳ.

Գիր վճռի երջանկայ սահմանին Տարեւոյ:

Ի ժամանակս աստուածազօր թագաւորին մերոյ Սմբատայ, և աստուածազգեաց կաթողի-

կոսին մերոյ Տեառն Յովհաննիսի, և աստուածապատիւ և հոգևոր Տէր Յովհաննիսի՝ եպիսկոպոսի Սիւնեաց, մեք նուաստ ծառայքս Աստուծոյ հայկազնի իշխանքս Սիւնեաց՝ տէր Աշոտ՝ որդի Փիլիպպէի, և որդիք իմ Սմբատ, Սահակ և Բաբգէն, և տէր Գրիգոր Սուփան և եղբարք իւր Սահակ և Վասակ, և տէր Զաքիկ և որդի իւր Զևանշէր, և այլ ազատք և համազգիք մեր, առաջի աստուածապահ թագաւորիս և սուրբ կաթողիկոսիս և Աղվանից հայրապետիս և իշխանացս, և տեառն Գագկայ և Գուրգենայ՝ վասպուրականի իշխանացս, և այլ եպիսկոպոսաց և քահանայից և ազատաց և տանուտերաց արարեալ զայս գիր պայմանի հաստատուն և անխախտ վճռի վասն շրջակայ սահմանի մեծի, սուրբ և առաքելական աթոռոյն Սիւնեաց՝ մայրաքաղաքին Տաթևոյ, յաւուր յորում ժողովեցաք ի նաւակատիս սուրբ եկեղեցւոյս. և առատաձեռն պարգևօք փարթամացուցաք զտունս, զոր մեք յայսմ աւուր և զոր ի հին ժամանակաց նախնիքն մեր՝ առաջին իշխանքն Սիւնեաց:

Եւ ընթերցաք զհին նամակն զոր մեր հարցն և հաւուց գրեալ էին. և ծանեաք զժառանգութիւն սուրբ խաչիս և հոգևոր տէրանցս որ ի մեծում իշխանութեանս, և զսահման տեղւոյս զոր և մեք վերստին հաստատեցաք և ընդարձակեցաք աստուածընկալ սուրբ խաչիս, և ամեն ժողովով

գնացաք ոտիւք մերով, կարեցաք զսահմանս շըրջակայ որք են այսպէս: Յարևմտից կողմանէդ սկսեալ ի մեծ դիտաւոր սարէդ Գազբոյլայ չրաթափումն մինչ ի խոռին ճանապարհն որ Լորաձորին սահմանն է: Եւ ի հիւսիսոյ դեհաց բնաւռումն ի վայր ի գետն հանդէպ Ծոտայ, և գետովն ի Ծոտանան և անցեալ ընդ գետն՝ փոքր ձորակումն որ ելանէ յԱւազեաց խոռ ի խոզաց բլուրկումն, նորին բարակ ճանապարհումն բացանորինն, նուրբ, անչուր ձորակումն ի վայր ի Դեղնաձորն և ի կարմունչն, և ի կարմնչէն ի Բարաձորն. և Բարաձորին մեծ բնաւռումն ի սարն և ի բուն ճանապարհն որ գայ սարովն ի Հարսնավադն, և Հարսնավադին ձորակումն զառ ի կողմն յեկեղեցին որ ի պառակոչ ճանապարհին, և սալքարումն հատեալ զմեծ ձորովն ի միաւոր քարն որ կայ հանդէպ ի յայն կողմն մեծ ձորոյն. և հատանելով զմեծ տափն ի յերկայն խաչն և չրաթափումն ի մեծ խոռն և ի ճանապարհն որ գայ ի Բաղաց ձորոյ, և անտի ի նոյն լեառնն Գազբոյլ:

Ահա այս իսկ են սահմանք զոր մեք ոտիւք մերովք կոխեալ և աչօք մերովք տեսեալ և ձեռօք մերովք նշանեալ, առանց զրկութեան և յափշտակելոյ գրեցաք և կնքեցաք մատանեաւ մերոյ արքային և կաթողիկոսին և մեր իսկ: Եւ յայսմհետէ մինչև յաւիտեան այս լիցի սահման Տաթևոյ սուրբ ուխտին. և մի ոք իշխեսցէ այսմ

հակառակել մի Բաղացիք և մի Որոտնեցիք և մի Վաղանդացիք, մի Շնհէրացիք և մի Նորեցիք: Եթէ ոք ընդ հակառակս ելանէ ի մերոց կամ յօտարաց, յաւագաց կամ ի ձեռնաւորաց և ի խոստակղարաց կամ ի տանուտէրաց, ի սուրբ Երրորդութենէն որոշեալ լիցի, և յերից սուրբ ժողովոցն նզովեալ եղիցի: Ընդ Յուդայի և խաչահանուացն և այլ չարագործացն պատժեալ դատեսցի: Եւ թէ ի Տաճկաց աւազութիւն փոխի, և կարեն լինել իշխեցող. և յափշտակել ջանան՝ յիւրեանց հաւատոյն ապիզաը և դենակոլոյս լիցին, և ի փեղամնարէն հերքեալ եղիցին, զէյն ալահն և մոլայիք ալթահոյն ուրացեալ եղիցին, և զնատիվնապին անարգեալ լիցին. հալալն հարամ եղիցի. և մինչ ի 1000 ամն նոյանմնամայն ի վերայ նորա ճնասցէ. երկինք նորա մի ցօղեսցէ. և երկիրս նորա մի պալաբեսցէ»: Ես Յովհաննէս՝ շնորհիւն Աստուծոյ կաթողիկոս Հայոց, վկայ եմ այսմ անխախտ և անխափան վճռոյս որ աւանդեցաւ ի մեծ իշխանացս Սիւնեաց. և կնքեցի իմով սովորական մատանեաւս: Ես Սմբատ Բագրատունի՝ թագաւոր Հայոց, հաստատեցի իմով ձեռամբս զայս վճիռս և եդի ի վերայ զիմ թագաւորական մատանին ի ատորև: Ես Գագիկ՝ Վասպուրականի և Արծրունեաց տէր, որդի Գրիգորոյ Դերենկի, վկայ եմ այս ընծայից և սահմանադրութեանց աթոռոյս Սիւնեաց: Ես նուաստ ծա-

ռայ Աստուծոյ և Աղվանից արքեպիսկոպոս Տէր Սիմէոն, վկայ եմ այսմ վճռիս. և իմով մատանեաւ կնքեցի զսա։ Ես Գրիգոր Սուփան՝ Սիւնեաց իշխան, վկայ եմ և հաստատիչ այսմ վճռի զոր մեր եղև սահմանեալ։ Մեք Գրիգոր և Եսայի և Աարներսեհ՝ Աղվանից իշխանք, վկայ եմք այսմ վճռի։ Մեք Զագիկ և Հրահատ Սիւնի վկայ եմք այսմ վճռի։ Մեք Սահակ Գարդմանայ տէր, և Աշոտ և Վասակ Գնթունի վկայ եմք այսմ։ Ես Յովհաննէս՝ Սիւնեաց եպիսկոպոս, հաստատեցի զվճիռս իմով ձեռամբս և կնքեցի իմով մատանեաւս. Աստուած շնորհաւոր արասցէ սուրբ խաչիս և սուրբ եկեղեցւոյս և աստուածարեալ հայրապետացս որ առաւ նահին։ Եղև այս ի թուականութեանս Հայոց 355։

ԼՍԴ.

Վասն հոտակերաց վանիցն որ կոչեցաւ Քարկուի, կործանմանցն ի ժամն. եւ վերսին շինելոյն ի Շուշանայ տիկնոջէ եւ ի Տէր Յովհաննիսէ։

Յառաջ քան զայս՝ ի բազում ժամանակաց բնակեալ էին խոտաճարակ և խարազնազգեստ մարդիկ յատորոտն վայոց ձորոյ, ի սահմանին Հրասեկայ բերդոյ մերձ յԱրաստամուխ գեօղ, որ իբր դիտանոց բարձր հայէր ի վերայ դաշտին Շարրոյ. և էին յոյժ բազմութիւնք հեռացեալք

ի հանդերձից և ի մարմնաւոր կերակրոց, և ցրուեալք ընդ քարաժայռս և ընդ խորաձորս վայրիցն՝ մշանջենաւոր աղօթից պարապէին. և ի կիւրակէիցն առ միմեանս ժողովէին և երկնաւոր զեմանն (հաղորդէին). և այն լինէր նոցա վայելումն ի հաց և ի գինի։ Զայլ աւուրսն բնակէին ոմանք ի ծերպս, ոմանք՝ ի նեղագոյն խղի, ոմանք՝ բացօթեայք, լուռք և անմռունչք, և սակաւ ոգեպահումն ի հնդոյ կամ ի բանջարոյ շատանային. ոմանք շինէին մատուռն ի նեղ ձորակի մի առ քաղցրահամ աղբերն և անդ բնակէին. որ այժմ Ուռոյ քար անուանի, յորում կան զերեզմանք նոցին, և մեծամեծ բժշկութիւնք լինին. ոմանք ի միւս արձակ ձորին շինեցին խորան, և անդ բնակէին, զոր հին վանքն կոչեն. և այլքն աստ և անդ ցան և ցիր, և բուն տունն իւրեանց և եկեղեցին էր մերձ յԱրտաւամուխ գեօղ, ի պատշաճաւոր տեղի յորում բնակեցուցեալ էին զահարկու և զաստուածահրաշ սուրբն նշանն որ Խոտակերաց խաչ կոչեն։ Եւ յաւերմանէ աշխարհիս ցրուեցան կրօնաւորքն այն. և տեղին աւերակ և անբնակ մնաց մինչև յաւուրս տեառն Աշոտոյ՝ Սիւնեաց իշխանի։ Ապա զգացուցանէ նմա զիրն մեծ եպիսկոպոսն Սիւնեաց Տէր Յովհաննէս. և նա հրամայէ վերստին շինել զեկեղեցին և զվանքն և ժողովել զկրօնաւորսն,

և տայ զգեօղն Արտաւամուխ ի ժառանգութիւն եկեղեցւոյն. որ եղեւն իսկ:

Եւ ապա վախճանի բարեպաշտ և արքայաշուք իշխանն այն Աշոտ. և ի սաստիկ շարժմանէ տապալին եկեղեցիքն և ամենայն շինուածք վանիցն. զոր և վերստին ծանուցանէ եպիսկոպոսն երանելի սիկնոյն Շուշանայ. և նա առաւել աստուածասէր գոլով և բարեպաշտօն՝ հայցէ յեպիսկոպոսէն փութապէս ձեռն ի գործ ածել և շինել զեկեղեցին և զտեղին պայծառ քան զառաջինն, զի մի կորիցէ, ասէ, յիշատակ տեառն իմոյ Աշոտոյ. զոր և անյապաղ փութով կատարեաց երջանիկ եպիսկոպոսն Տէր Յովհաննէս: Եւ կոչեն ի նաւակատիս զմեծ կաթողիկոսն Հայոց զՏէր Յովհաննէս. և պայծառապէս զարդարեցին զվանքն առաւել քան զառաւել, և զրեն արձան յիշատակի ի վերայ եկեղեցւոյն Աշոտոյ և Շուշանայ. որում էր օրինակ զայս. «Նախ և առաջին իսկ լեալ էր վանքն Ծոտաւերաց. և վասն զի աւերեալ էր կրօնաւորանոց ուխտս և քաւարանս որ ի սմա ի վաղնջուց հետէ իսկ. ապա տէրն իմ երանելին Աշոտ աշխատութեամբ շինեալ էր զտուրբ եկեղեցիքն՝ միանգամայն իսկ նորոգապէս զարդարեալ զամենայն շինուածսն կրօնաւորական դասիւք: Իսկ և իսկ եղև Տեառն իմոյ Աշոտի ելանել ի մարմնոյ ասի փոխելով առ Տարսն իւր. սահմանեցին որդեակքն մեր զգեօղս Արտաւամ-

մուխ ի սուրբ ուխտս սահմանօքն իւրեանց (զոր) հարքն կերեալ էին, վասն երանելի իշխանին Աշոտի և ինձ Շուշանայ՝ Սիւնեաց տիկնոջ, հոգեաց արձան և յիշատակ մեզ և յարևշատութիւն որդեկաց մերոց։ Եւ եղև պի հիմնաշարժ լինելով աւերեցան եկեղեցիքս. և իմ տեառն իմոյ Աշոտի կենաց հաղորդ կամելով լինել, (առ ի) նորոգել զյիշատակ նորա փոխելոյն առ Քրիստոս, նոր շինեցի զսուրբ եկեղեցիս կրօնաւորանոց շինուածովք յանուն սրբուհւոյ և միշտ կուսին Մարիամու Աստուածածնին. և վասն փրկութեան երանելի տեառն իմոյ Աշոտի՝ Սիւնեաց իշխանի, և իմոյ մեղուցեալ ոգւոյ և որդւոց մերոց Սմբատայ և այլոցն երկարաձիգ կենաց և յաջողման իւրեն գնոյն գիւղն Արտասամուխ ամենայն սահմանօքն նորա զոր կերեալ էին մինչև ցայսօր ժամանակի, ի ձեռս վանացս առաջնորդիս հաստատեցի անխախուտ պայմանաւ ի սուրբ Աստուածածինս, ի վանս Ծոտակերաց մինչև յաւիտեան ժամանակաց՝ կամակցութեամբ որդեկաց իմոց։

Եւ զայս պայման հաստատեցի ի սուրբ կրօնաւորանոցի աստ, ի հինգ եկեղեցիսդ այդ զոր ես շինեցի. մին եկեղեցիդ որ է Աստուածածինդ՝ տեառն իմոյ Աշոտի և յիմ անուն լիցի. ի տարին երեք քառասունք կատարեն մեղուցեալ հոգւոց մերոց, թերևս գացուք ողորմութիւն յահեղ

աաենին Քրիստոսի. այլ ևս չորս եկեղեցիքդ լինին որդեկաց մերոց յարևշատութիւն և հոգեացն փրկութիւն և ի պէտս վանացս։ Արդ մի ոք իշխեսցէ այսմ անսուտ վճռիս և պայմանիս ընդդիմակաց լինիլ և խափանող. ապա թէ ոչ՝ այնպիսին Յուդայի մասնչին մասնակից լիցի. և մեղայ մերոց համարս տացէ յաւուր ահեղ աաենին Քրիստոսի»։ Եւ մեք Տէր Յովհաննէս՝ Հայոց կաթողիկոս, մերովք եպիսկոպոսօք և կղերիկոսօք և Տէր Յովհաննէս՝ Սիւնեաց եպիսկոպոս, վկայ եմք այսմ գրոյ և վճռի։ Գրեցաւ յիշատակ կտակիս այս յ359 թուականիս Հայոց ի կամս ամենակալին Աստուծոյ, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ՀՕՇ

Շինութիւն Յովհաննու վանից ի Վահանայ՝ որդւոյ Զագկայ։

Որպէս ի վերագոյնն ասացաք, Վահան ոմն՝ որդի Զագիկ իշխանի, եղբայր Զևանշէրի, վասն դիւրաբախ մոլեգնելոյն եղև կրօնաւոր, և կամեցաւ շինել վանս և հաստատել կրօնաւորական դասս մշտապաշտօն քահանայից։ Եւ յետ բազում և մեծամեծ ճգնութեանց եկեալ ի ստորոտ բարձր լերինն յորում անառիկ ամրոցն կայ Բաղաբերդու՝ հանդէպ Աճանանու. և գտեալ տեղի մի հարթ և յոյժ ի

ճահ՝ նախ խնդրէ աղօթիւք ի Տեառնէ յաջողել գործս ձեռաց իւրոց. և ապա հրաւիրէ զեղբարսն իւր ի նոյն գործ. և սկիզբն առնէ շինուածոյ եկեղեցւոյն և կանգնէ տուն փառացն Աստուածոյ՝ յոյժ գեղեցիկ յօրինուածովք, գմբէթայարկ և եռախորան, հաստահեղոյս և տաշածոյ վիմօք. և կարգէ զնա տուն կրօնաւորաց:

Եւ մեծամեծ և թագաւորական ապաւէնք զարդարէ զնա. և ժողովէ եղբարս սրբակրօնս աւելի քան զ100. և հաստատեն մասն ժառանգութեան եկեղեցւոյն, որ յանուն սուրբ լուսաւորչին Գրիգորի, զձորն գեառվն յայս դեհս և յայն յանդաստանս և յայգեստանս վանիցն, և զլեռնակողմն մինչ ի վեր ի ծայր բարձրաւանդակին ուր հօրանք հօտիցն լինէին. և բնակեաղ խաշանց. և ի քաղաքին կողմանէ մինչ ի պատուար պարսպի արտաքին որմոյն որ ի լեռնէն սկսանի. և ի Տանձափարախոյ կողմանէն մեծ բնաձորն որ ի լեռնէն սկսանի և իջանէ ի գետն, և զգեղանն որ ի հանդէպ վանացն՝ զՍչաղու և զՍչաղուայ, զԳետարավայր և զՇէկք և այլ բազում տուրս և ժառանգութիւնս եկեղեցւոյն հաստատեն անխախտ վճռաւ: Կոչէ Վահան զվանսն յիւր (անուն) Վահանու վանք. և այնուհետև և օր ըստ օրէ հանդիսանայր նա իբրև քաղաք բազմաժողով: Եւ ինքն իսկ Վահան յետ բազում ճգանց և աշխատութեանց վախճանի, և դնի ի

դրան սուրբ քաւարանին: Եղև շինութիւն սուրբ ուխտին յ360 թուականին Հայոց, ի թագաւորութեան Սմբատայ Բագրատունւոյ, յիշխանութեան Սիւնեաց գահերէց իշխանին Սմբատայ՝ որդւոյ Աշոտոյ, ի Բաղաց Ջևանշէրի, յեպիսկոպոսութեան Սիւնեաց՝ Տեառն Յովհաննիսի:

Բայց յետոյ միւս Վահան՝ եղբօրորդի սորա, այսինքն Ջևանշէրի որդի, անեալ և ուսեալ ի մանկութենէ, վարժեալ աստուածային իմաստիւքն ի սոյն տան, քահանայացաւ և եղև առաջնորդ սուրբ ուխտին: Սա յաւել բազում շինութիւնս և զարդարեաց զվանսն հանդիսական կարգօք, շինէ զմեծ աղօթարանն ի դրան եկեղեցւոյն վիմարդեան մահարձանօք, յորում հանգուցեալ կան ի շիրմի բազում թագաւորք և թագուհիք Աղվանից և Բաղաց, և բազում իշխանք փառաւորք Սիսական աշխարհիս: Շինէ և գեղեցիկ յօրինուածով զգաւիթ եկեղեցւոյն մեծամեծ քերտածոյ վիմօք 30 կանգնոց չափ, կանգնէ կամար ի դրան վանիցն և ի վերայ՝ երկու խորան յանուն Պետրոսի և Պօղոսի սուրբ առաքելոցն: Շինէ և ի ձուլեալ կրաշաղախ քարանց տրապէզ մի մեծ, և բերէ փողովք զՂուրն ի դուռն նորա. այսպէս գեղեցկացուցեալ զնա զանազան յօրինուածօք: Եւ ինքն յետոյ կոչեցաւ յեպիսկոպոսութիւն Սիւնեաց որ զկնի Տեառն Յակոբայ. և անտի յիս ի ծայրագոյն փառս՝ ի կաթողիկոսութիւն Հայոց,

որ զկնի Տեառն Անանիայի Մոկացւոյն: Եւ կացեալ ի կաթողիկոսութեան ամս 5, վախճանի ի Վասպուրական աշխարհի ի Տոսպ գաւառի, ի Զորոյվանքն որ է մերձ Բերկրոյ. և դնի ի դրան քաւարանին: Բայց յետ բազում ժամանակաց յաւուրս Գրիգորի՝ թագաւորի Բաղաց, ի Շահանդխտոյ թագուհւոյն և ի կայսայէ և ի Սենեքերիմայ թագաւորէ բազում և զեղեցիկ շինուածովք առաւել զեղեցկացուցին զվանսն Վահանու՝ կանգնեալ կամարս մեծամեծս, և ի վերայ՝ եկեղեցիս և սրահս բազմասիւնս բարձրաբերձ, հովանի և խրախարան իշխանացն. յորոց աւուրս և եկն երջանիկ կաթողիկոսն Աղվանից Տէր Սահականոս և անդէն բնակեալ աւուրս ինչ՝ հանգեաւ ի տեղւոջն, և եդաւ ի նմին սրբարանի:

ՀՏԴ

Վասն Տեառն Գէորգեայ բահանայի, որ էր որդի իշխանին Սիւնեաց:

Յաւուրս իշխանին Սիւնեաց Վասակայ տեառն՝ որդւոյ Փիլիպպէի, մանուկ մի ի Սիսական տոհմէ Գէորգ անուն՝ յոյժ գեղեցիկ տեսլեամբ և առոյգ հասակաւ, առեալ էր իւր կին և հասեալ ի չափ երիտասարդութեան: Ապա ըստ աստուածային երկիւղին նեղէր զնա բան աւետարանին՝ այն որ ասէր. եթէ ոչ թողցէ այր

գնայր իւր և գմայր կամ զկին կամ զորդի և առնու զխաչն և գայ զկնի իմ՝ չէ ինձ արժանի։ Եւ երբեք ոչ հանդչէր և ոչ հեշտանայր ի մարմնական փառս և ի ցանկութիւնս. և զի կուսութեամբ և սրբութեամբ հասեալ էր նա յարդար ամուսնութիւն, ապա օր մի յեղակարծում ժամու անյայտ լինէր յիւր ապարանիցն և չընտանեացն. և գնայ ի ծածուկ ի վանս ուրեք, և փոխէ գհանդերձս իւր ի մաշկեղէնս և յայծեայս. և անծանօթ կայր անհանգիստ աքնութեամբ։ Ապա ճիչ բարձեալ մօր նորա Համամունեայ՝ մեծահասատ տիկնոջն, և կնոջ նորա և եղբարց և ծառայից՝ և շրջէին խնդրել զԳէորգ և ոչ գտանէին։

Եւ յետ սակաւուց ծանեան զտեղին. գնացեալ բռնութեամբ ածին յապարանսն իւր. և պատառեալ զգծուծ հանդերձն այծեայ և զխոշոր ցփսին՝ զգեցուցին գհայրենի հանդերձն յարքունական մեռաքսէից։ Եւ թէպէտ բռնութեամբ պահէին. այլ նա ոչ խառնէր ընդ նոսա. այլ իբր արբեալ և թմբրեալ ի սիրոյն Քրիստոսի՝ կայր անդրադ և լուռ՝ միշտ աղօթից և ընթերցմանց պարապեալ. որ և յաւուր միում դարձեալ աներեւոյթ լինէր. և զգեցեալ մազեղէն խոշոր և գբլղլէնս պատառոտունս՝ գնայր ի մեծ առաքինասրանն Երիցու վանից առ աստուածազգեաց և սրբափայլ ճգնաւորն՝ մեծ Էգոնոմոսն Թէոդորոս քահանայ. և նա յոյժ ուրախութեամբ ընկալաւ

գնաս: Իսկ իմացեալ մօր նորա և կնոջն և առեալ գհամագգի իշխանան Սիւնի՝ դիմեցին ի վանսն Երիցու. և բազում և զանազան մաղթանօք չանացին և ոչ ինչ կարացին գնա շարժել յայնմ կամաց. ապա իմացեալ զանխախտելի սէրն որ առ Քրիստոս՝ թողին գնա ի կամս իւր և գնացին: Իսկ նա յետ բազում ճգնութեանց և խըստամբեր կրօնից վափագէր քահանայական կրօնից շնորհին. և յայնմ ժամանակի փայլէր ճգնութեամբ մեծ եպիսկոպոսն Սիւնեաց Տէր Սաղոմօն և երանելին Մաշտոց ի Սևան. և զի ոմանք խանդային ընդ Գէորգեայ և մախանօք զկծեցուցանէին գնա խիստ բանիւք ի վարդապետաց և յաշխարհականաց. ապա առեալ գնա Թէոդորոսի տարաւ առ Տէր Սաղոմօն, զոր յոյժ սիրով ընդունէր և յորդորական խրատու հաստատէր գնա. և հրամայէր հեռանալ անտի և գնալ առ Մաշտոց և ի նմանէ ուսանիլ և կրթիլ յամենայն վարս առաքինութեան, զոր և արարն իսկ:

Եւ յուղի անկեալ Թէոդորոսիւ հանդերձ գնաց ի Սևան. և բազում աւուրբք կեցեալ ընդ նմա. վարժեալ և խրատեալ ի նմանէ ամենայն բարեձևութեամբ. և դառնայ անդրէն ի տեղի իւր. և գտանէ վախճանեալ զեպիսկոպոսն. և յաջորդէ ի տեղին Տէր Յովհաննէս: Գնայ յողջոյն նմա. և բազում ևս գտանէ յորդորումն մխիթարական խրատուց ի նմանէ. և բնակեալ յԵրիցու վանս՝

կանդիսանայր ի մեծամեծ ճգունս հանդերձ Թէոդորոսիւ: Ապա յետ աւուրց ինչ դարձեալ գնայ առ Մաշտոց ի Սևան հրամանաւ Տեառն Յովհաննիսի. և թախանձեցուցանէ զնա վասն իւր քահանայանալոյ. զոր և յուղարկէ մաղթողական թղթով առ կաթողիկոսն Հայոց Գէորգ և ծանուցանէ նմա զամենայն որպիսութիւն նորա և հայրապիր եղեալ Գէորգեայ երաշխաւոր լինի նմա: Տեսեալ ապա կաթողիկոսին զԳէորգ և ընթերցեալ զթուղթն՝ ընդունի զնա յոյժ պատուով և հրամայէ ձեռնադրել զնա քահանայ. և յուղարկեն անդրէն ի տեղի իւր. և լինէր խնդութիւն բազմաց. բայց Մաշտոց վասն երաշխաւորութեանն անդադար յորդորական թղթով և հոգևոր խրատու զգուշացուցանէր զնա, Իսկ ի կաթողիկոսութեանն Մաշտոցի հանապազ ընդ նմա լինէր Գէորգ մինչ ի վախճան նորա: Եւ յետ վախճանին Մաշտոցի գայր և բերէր զշուրջառն և զկնկղուն խոյրակերպ և զպարեգօտ երանելւոյն նշան յանուն Սիւնեաց. և ինքն բնակէր յԵրիցու վանս ընդ Թէոդորոսի հրեշտակակրօն վարուք. և անդէն վախճանեալ՝ եդաւ սրբատեալ մարմին նորա ընդ երիցս երանեալ սուրբ հօրն Երիցակայ, ի նմին սրբարանի. որոց բարեխօսութեամբ խնայեսցէ Քրիստոս ի տունս յայս և յաթոռս և ի հաւատացեալ հօտ սորին:

ԽԷ

Վասն շինութեան Տաճարաձից որ ի գաւառին Ռշենոյ։

Երանելի սուրբ հօրն Գէորգեայ էր հարազատ մանկիկ մի ի նոյն Սիսական տոհմէ Ստեփաննոս անուն, զոր հատեալ յատենէ ծնողացն նուիրեցին Աստուծոյ. և ետուն յուսումն մանկութեան առ ոսս աստուածարեալ ծերոց. որ և անեալ զարգացաւ ամենայն կատարելութեամբ ներքին մարդովն և արտաքին, գիտնականաւն և գործնականաւն. և կոչեցաւ յաստիճան քահանայութեան ի Տէր Յովհաննիսէ՝ Սիւնեաց եպիսկոպոսէ։ Ապա ցանկացեալ այնուհետև աստուածային իմն գործոյ՝ կամեցաւ շինել եկեղեցի և հաստատել ի նմա տուն կրօնաւորաց և դասս պաշտօնէից. զի որ զառաջնորդութիւն ստացցի, գնացցէ նա ի զօրութենէ ի զօրութիւն և երեւեսցի Աստուծոյ հրեշտակաց ի Սիոն։ Գնացեալ ապա ի թիւիկանց կուսէ կատարոյ վանից. և գտեալ տեղի մի յոյժ գեղեցիկ և վայելուչ՝ ի մէջ երկու ձորոց ի վերայ հարթ ոստոյ միոյ, սկսանի շինել եկեղեցի օժանդակութեամբ Հրահատայ իշխանի. և կատարէ գնա, և այլ ևս գաւիթս և սրահս եկեղեցւոյն և քնակութիւն կրօնաւորաց։

Եւ կոչեալ ի նաւակատիս զՏէր Յակոբ՝ Սիւնեաց եպիսկոպոս, սահմանեն գնա եղբայրանոց,

և զվայրն ամենայն շրջակայ՝ ժառանգութիւն եկեղեցւոյն, և զնեն զոզեառունս հանդէպ վանիցն. և ժողովեալ ուրուկս բազումս անդ զարմանէին. և այսպէս պայծառացուցեալ ամենայն սպասուք և կարգաւք զվանան յ385 թուականին Հայոց. ինքն երանելին և անդամեմատն ի մարդկանէ Ստեփաննոս կեցեալ բազում ամս առաքինաջան վարուք և հրեշտակակրօն առաքինութեամբ զանմարմնոցն ի մարմնի բերելով զկեանս, մեռեալ մարմնով և կենդանի հոգով, վոխի չիմանալի կայանս ի կարգս հրեշտակաց. այրն երկնաքաղաքացի զնայ առ քաղաքապետան իւր Քրիստոս ի 419 թուականին Հայոց, ի նաւասարդի ամսոյ ի 17, յաւուր հինգշաբաթիոջ, ի սուրբ պէնտեկոստէին. և զնի ի քնարանի առ սուրբ եկեղեցւոյն: Եւ յաջորդէ զառաջնորդութիւն ուխտին Նորավանից հայր Հրահատ, և յետ նորա եղբօրորդի նորին Ստեփաննոսի Քրիստափոր՝ աշակերտ սուրբ հօրն, յամենայնի նմանեալ վարդապետին իւրոյ:

Բայց յետ սակաւուց և շինեցաւ եկեղեցի յոյժ զեղեցիկ յօրինուածօք, և ի զրանն կամարք զարմանալիք ի սքանչելի ճարտարաց յարմարեալք մեծամեծ վիմօք և խարխաւոր սեամբք ի հայր Գէորգեայ և ի Յովհաննիսէ քահանայէ:

ԽԸ

Վասն Յուրայ բերդին աւերելոյն. եւ ցղովիցն որ այլ ոչ ելին:

Ի ժամանակս Սմբատայ՝ որդւոյ Աշոտոյ, Սիւնեաց դահերէց իշխանի, և յեպիսկոպոսութեանն Տեառն Յովհաննիսի շինողի սուրբ եկեղեցւոյն, բազում և մեծամեծ վիշաս հասուցանէին սուրբ ուխտին Տաթեւոյ բնակիչք Յուրայ բերդին, որք էին անաստուածք, ժպիրք և ելուզակք: Եւ յաւուր միում եկեալ ի դիշերի յեղակարծ ժամու, սկսան կողոպտել զեկեղեցին և զդրծատներն և զյարկան կրօնաւորաց. և խնդրէին զեպիսկոպոսն զի սպանցեն, և ոչ գտին. ապա զոմանս ի ծերոցն սրով հարին և զայլսն փախստական արարին. զոր ինչ գտին ինքեանք՝ առեալ գնացին ի բերդն (Յուրայ). տարան և արծաթի սափորով զմեռոնն և վայթեցին ընդ քարն: Իսկ ընդ լուսանալն եկեալ եպիսկոպոսին և տեսեալ զայն ամենայն վընաս, ի վեր առին զսուրբ խաչն և զայլ սրբութիւնսն և նզովեցին անդադին նզովիւք զբերդն և զբնակիչս նորա. և առ ժամայն շարժեալ դեռնոյն, քարն յերկուս ճեղքեալ և ամենայն շինուածքն փլեալ. և բազումք ի բնակչացն անյայտ կորեան: Իսկ եպիսկոպոսն ոչ իշխեաց բնակիլ ի տեղւոջն. այլ առեալ զխաչն և ամենայն պաշտօնեիւքն եւ գնաց յօտար աշխարհ:

Ազդ լինի ապա այս փառաւորեալ իշխանին Սմբատայ, և յարուցեալ այլովք ազատօքն դնաց դկնի եպիսկոպոսին և սուրբ խաչին. և բազում թախանձանօք էած անդրէն ի տեղի իւր՝ ի մեծ հայրապետարանն Տաթեւ. և հալածական արարեալ դանիծեալ բնակիչս Ցուրայ քարին, զոմանս ի մեծամեծ պատիժս և պատուհասս արկանէը, և առ հասարակ չնչեալ հեռացոյց յաշխարհէս. և զտեղին իւր սահմանովն ետ ի սեպհական ժառանգութիւն եկեղեցւոյն. և աւանդեաց ի ձեռս Տէր Յովհաննիսի. և հրամայեաց գրել վճիռ ազգին նզովիւք և կնքել և դնել ի սուրբ եկեղեցւոյն զի մի ոք յանդգնեսցի շինել դնա. զոր և գրեացն իսկ. և է այսպէս:

«Ես Յովհաննէս՝ շնորհիւն Աստուծոյ եպիսկոպոս Սիւնեաց, դրեցի զայս վճիռ իմով ձեռամբս հրամանաւ աստուածազօր իշխանին Սիւնեաց Սմբատայ. զի եհաս մեզ վտանգ տագնապի ի չար և յանաստուած ելուզակացն որ բնակեալ էին ի Ցուրայ բերդ անուն քարին, որք յանկարծակի յարուցեալ ի վերայ յոգնաժողով եղբարցն ի գիշերի՝ կողոպտեցին զյարկս ամենայն, և զոմանս սպանին ի ծերոցն: Իսկ մեք տեսեալ զայնպիսի աղէտս՝ առեալ զսուրբ խաչն հալածական եղաք յայլ աշխարհ. և կրօնաւորքս ամէն ցան և ցիր եղեն: Ապա ազդ եղեալ աստուածապահ տեառն Սմբատայ, և եկեալ դար-

ձոյց զմեզ այսբէն. և ըստ քաջ սրտին և մեծա-
յոյս հաւատոյն, իբրև զառիւծ մրմռեալ ի վե-
րայ չարացն՝ ցան և ցիր կացոյց զամենեսեան,
գիտելով ըստ մեծի իմաստութեան իւրոյ զանօ-
գուտ քարն զի չէ ումեք շահ ինչ և ոչ նեղէ
զոք՝ ոչ ի բազացեաց, և ոչ յայլ կողմանց բայց
միայն՝ զսուրբ եկեղեցիս և զիւր իշխանութիւնս
առձնապաւ վշտացուցանէ, զորս իւր և իւր հա-
րանցն բազմառատ և անչափելի ծախիւք և աշ-
խատութեամբ պայծառահրաշ վայելչացուցեալ
էին և ցանկալի յօրինեալ. և զերծուցեալ հան-
գոյց զսուրբ նշանս և զեկեղեցիքս և զմեզ. և
եհան յանդորր ի զառն նեղութենէ. և աւանդեաց
ի ձեռս մեր զտեղին, զոր հաւուսցէ սմա նախ
ի մարմնի Տէր Աստուած ձիզ ժամանակօք և խա-
ղաղական թագաւորութեամբ, զաւակօք և զար-
միւք վայելել. և յաւիտենական կենացն և ար-
քայութեանն լինել արժանի ընդ սուրբ թագա-
ւորացն:

Այլ հրամանաւ նորին Սմբատայ՝ Միւնեաց
իշխանի, գրեցի իմով ձեռամբս կատակ յաւիտե-
նական. և կնքեցի իմով սովորական մատանեաւս,
և եղի յեկեղեցւոջս զի յետ ժամանակաց մի ոք
յանդգնեսցի զնոյն ոճիրս գործել: Արդ՝ եթէ ոք
հրամանիս մերոյ հակառակի. և առնու զծուր ի
սուրբ եկեղեցւոյս. և կամ կամի զսուտ քարդ
բերդ անուանել և շինութիւն խորհիլ, և կրկին

հալածումն յարուցանել սուրբ եկեղեցւոյս, այնպիսին նզովեալ եղիցի յԱստուծոյ ամենակալէ և յամենայն սրբոց և ի մէնջ. և մի հասցէ ողորմութեան. այլ եկեսցէն ի վերայ նորա անէծք ցաւագինք, և եղիցին որդիք նորա ի սատակումն, և յազգէ չնչեսցի անուն նորա. և յետ այսր ինքն չնչեալ լիցի ի դպրութենէն կենաց. և մանն ընդ սատանայի առցէ յանշէջ հուրն: Իսկ ժամանակին աւազն որ հաստատուն կայ այս պայմանիս, որպէս Սմբատ սատուածասէր իշխանս, զնորին օրհնութիւն և զվարձս ժառանգեսցէ, ապա թէ մոռացեալ անփոյթ արասցէ՝ զիւրն մի վայելեսցէ. և ամենայն նզովից որ ի գրիս է պարտապան եղիցի»: Եղև այս ի թուականիս Հայոց 364. ահա այսպէս եղև:

Բայց յետ բազում ժամանակաց մինչ խանդարեալ էր հայրապետանոցն. և ցրուեալ ժառանգութիւնք եկեղեցւոյն, զայս տեղիս առին ոմանք և վերստին շինեցին. և յարուցին մեծամեծ հալածումն եկեղեցւոյն յաւուրս Վասակայ թագաւորեցելոյն և Սհակայի և Շահանդխտոյ՝ մօր նորա. և կրկին աւերեցին զվանսն. և եպիսկոպոսն Տէր Յակոբ երթեալ էր ի Բաղս. և դարձեալ գայր անտի, իսկ շնաբարոյքն գաղտ պահեալ զճանապարհն որ անցանէ ընդ խոռն Յուրայ, յարեան ի վերայ և սպանին զեպիսկոպոսն, որ և թաղեցաւ ի յիշատակ չար գործոյն.

և մինչև ցայսօր բժշկութիւնք լինին ի տեղւոջն ի բորոտս, ի պիսակս և յայլ ախտաժէտս: Ապա յետ նորա յաջորդի ի տեղին Տէր Գրիգոր որ և հայցեալ ի թագաւորէն Վասակայ զտեղին, ցուցանէ և զառաջին թուղթ անիծիցն որ գրեալ էր ձեռամբ Տէր Յովհաննիսի. և նորա հրամայեալ նմա զտեղին՝ տայ պատուէր քակել և յատակել և բնաւին ի բաց չնչել զտեղի բերդոյն. զոր և արար իսկ անյայտ զտեղին. և գրէ կտակ կրկին այսպէս:

«Շնորհիւն Աստուծոյ կամ եղև Վասակայ՝ աստուածատէր և բարեպաշտ թագաւորի, և Սեւադայի՝ իշխանաց իշխանի, և մօրն իւրեանց Շահանդխտոյ, ըստ քաջահաւատ յուսոյն և երկիւղած բարուցն հաստատել զվերոյգրեալ վճիռդ երանելոյ Տեառն Յովհաննիսի՝ շինողի սուրբ եկեղեցւոյս, և չարաչար նզովիւք փակել յայժմոյս և ի հանդերձեալ կեանսն վասն Ցուրայ քարիդ շինողի: Արդ անփոյթ եղեալ անյուսից և աներկիւղից՝ ակսան և շինեցին բերդ վասն առժամանակեան օգտի. և ոչ ինչ շահեալ որդնալից աստակեցան, պակասեցան, կորեան վասն անօրէնութեան: Իսկ ի ժամանակս մեր հրամայեցին աւերեալ յատակել: Որ այլ յանդգնի շինել նզովեալ լիցի ի Հօրէ և յՈրդւոյ և ի սուրբ Հոգւոյն. որդիք նորա մուրծղք եղիցին և ելցեն ի բնակութենէ իւրեանց, և մի հասարակեսցեն

զաւուրս իւրեանց. և թէ ի տաճիկ աւազութիւն փոխի և յափշտակել չանայ զՅուր և կամ շինել զբերդաքարդ՝ յԱստուծոյ անիծեալ լիցի, և յիւր Մահմետէն ապիզաը եղիցի, հալալնամա հարամ. և յիւր ղուրանէն յամօթ և սևերես լիցի»: Գրեցաւ այս կտակ իմով ձեռամբս Տեառն Գրիգորի. և կնքեցի իմով սովորական մատանեաւս ի կամս Աստուծոյ:

ԽԹ

Վախճան Տեառն Յովհաննիսի. եւ յաջորդելն Տեառն Յակոբայ. եւ որ յաւուրս նորին եղեն յաւելուածք ժառանգութեան եկեղեցւոյն:

Երանելի և աստուածազգեաց հայրապետն մեծ Տէր Յովհաննէս, յետ բազում բարեկարգութեանց և մեծամեծ և երևելի գործոց, վախճանի. և դնի առ սուրբ եկեղեցւոյն ի հանգստի յ367 թուականին Հայոց: Բայց բազում ինչ ի բանից նորա և ի ժառանգութեանց որ փարթամացոյց զսուրբ ուխտն, ոչ գրեցաք զի մի՝ ի հնացեալ նամակացն ոչ կարացաք ճշդիւ վերծանել. և մի՝ զի տաղտկութիւն համարեցաք լսողացդ: Իսկ յետ սորա գահերէց իշխանն Սիւնեաց Սըմբատ խնդրէ ի մեծ և յաշխարհակալ կաթողիկոսէն Հայոց ի Տէր Յովհաննիսէ եպիսկոպոս և առաջնորդ Սիւնեաց: Ապա էր ի տան կաթողի-

կոսարանին սենեկապետ և գործակալ կաթողիկոսին և աւագ ամենայն կղերիկոսացն Յակոբ անուն, որ էր ի Դվնայ՝ որդի եղբօր նորին Տեառն Յովհաննիսի կաթողիկոսին, այր բարձրահասակ և գեղեցկատեսիլ, հանճարեղ և իմաստուն, քաղցրաբարոյ և հեզամիտ, լի ամենայն առաքինութեամբ. զնա պատշաճ համարեալ այնմ մեծի և առաքելական աթոռոյն. և վկայութեամբ և ընտրութեամբ բազմաց ձեռնադրէ և առաքէ զՅակոբ եպիսկոպոս Սիւնեաց. որ եկեալ բազում և երևելի կայիւք պայծառացոյց զսուրբ եկեղեցին, և փարթամացոյց առաւել քան զառաւել. և ամենայն քաղցր վարդապետութեամբ միշտ ուսուցանէր զվիճակեալսն և հոգայր վասն հօտին։

Սա յաներևոյթ ինն զօրացեալ ի բանէն Աստուծոյ՝ գանձագին առնէ զՂուրն Զագէձորոյ, որ Վարարակն կոչի, ի Տեառն Փիլիպպէէ՝ որդւոյ Վասակայ Սիւնեաց իշխանի, ընդ երկոտասան 1,000 դրամի և մի լուսաւոր շաւահիրի, որում գինն և հանգամանքն բազմաց անգիտելի էին։ Եւ բազում աշխատութեամբ և մեծամեծ ծախիւք ածեալ էր (Ղուր) ի լեռնէն Զագէձորոյ և բերեալ ի Ցաքուտն որ հանդէպ վանիցն յայնկոյս գետոյն. և արար զամենայն վայրն առապար և փշալից վարդուտ և անկալից. անկեաց բազում այգիս և որթս սորեկս, էարկ տունկս ի զանազան պտղաբերաց ձիթենիս և թզենիս և նռնենիս. և յամենայն մըր-

գաբերաց արար դրախտս զարմանալիս. և զարդարեալ զբոլոր վայրն ընդարձակագոյն թանձրախիտ ծառովք և քաղուղէղ որթովք ի վայելումն եղբայրութեանն և ի պէտս ամենայն կարօտելոց և աղքատաց։ Եւ ապա տեսեալ բլուր մի գեղեցիկ ի մէջ դարաստանաց, և հարթեալ զգլուխ նորա՝ արար պարսպափակ և ելից զմէջն իբր քաղցը զիտանոց որ հայէր ի վերայ ամենայն այգեստանոյն. և շինէ ի վերայ նորա զբմբէթայարկ խորան մի յոյժ հրաշակերտ յօրինուածովք, և զորմ և զձեղուն նորա եւս զարդարել նկարչաց զանազան երանգօք, նկարել զամենայն անօրինական և տէրունական պատկերս և զառաքելոց և զհայրապետաց, և բոլոր շուրջ զեկեղեցեաւն սրահակս գաւթաց, և զրե ինքեան արձան յիշատակի այսպէս։

«Ես Յակոբ՝ շնորհիւն Աստուծոյ Սիւնեաց եպիսկոպոս, գնեցի զվարարակ ջուրն յաստուածապահ տեառն Փիլիպպէէ՝ Սիւնեաց տեառնէ, ընդ 12,000 դրամի և մի պատուական գոհարի, և բազում ծախիւք և մեծածեծ աշխատութեամբ վերին օգնականութեամբն ածի զջուրն ի լեռնէն Զագէձորոյ և բերի ի վարդուս, և անկեցի որթս սորեկս և այգիս վայելուչս և դրախտս բազմածաղիկս և պտղալիցս ի վայելումն սուրբ հայրապետացն որ ի սուրբ աթոռս հաստատին և սուրբ ժողովոյս և ամենայն հաւատացեալ Քրիստոսիս։

Եւ արդ Աստուած ի վայելչութիւն արասցէ հասարակաց ամենեցուն. և աղերս մատուցանեմ հասարակաց անմոռաց յիշման արժանի առնել ի սրբամատոյց յաղօթս ձեր զտառապեալ հոգիս իմ։ Եւ չկայ յայս ջրոյս հաշիւ ոչ Նորեցեաց, ոչ Յոտանանեցեաց, ոչ Շնհէրացեաց կամ Հալեցեաց, ոչ այլ մարդոյ, ոչ յարտ կտրել և ոչ ի մարգ և ոչ պարտիզի չուր տալ զատ ի մատակէդ ըմպելոյ մարդոյ և անասնոյ։ Եւ թէ ոք յանդգնի և զայս չուրս կտրէ, այնպիսին նզովեալ լիցի Աստուծոյ և սուրբ նշանէս և յ318 հայրապետացն որ ի Նիկիայն գումարեցան, և յամենայն սրբոց և ի մէնջ. և բաժին նորա ընդ ուրացողս և կախարդս լիցի յաւուր ահեղ առենին Քրիստոսի. և ընդ սատանայի և հրեշտակաց նորա ճարակ լիցի անշէջ հրոյն տանջանաց. ուր հուր նոցա ոչ շիջանի և որդն նոցա ոչ վախճանի»։ 3381 թուականին գրեցաւ վճիռս այս իմով ձեռամբս և կընքեցաւ մեր սովորական մատանեաւս ի կամս Աստուծոյ։

Գտաք զայս իւրով ձեռամբն գծագրեալ ի մագաղաթի, ընդ սմին և զմիւս վճիռ գին ուծախ վաճառին գրեալ ձեռամբ նոյն իշխանին Փիլիպպէի՝ որդւոյ Վասակայ, որ Իշխանիկ կոչէր, որդւոյ մեծ Փիլիպպէին, որ էր այսպէս։ «Կամաւն Աստուծոյ ես Փիլիպպէ՝ որդի տեառն Վասակայ, Սիւնեաց տեառն, իմ կամաւորու-

թեամբ վաճառեցի զվարարակն Ջուրն սուրբ Գրիգորին որ իմ պապուն տէր Փիլիպպէին շինեալ էր ի սուրբ եպիսկոպոսարանն Տաթեւոյ. և գնեաց Յակոբ՝ Սիւնեաց եպիսկոպոս, ընդ 12,000 դրամի և մին մեծագին գոհարի, և վճարեաց զամենայն գինն ոսկեամբ. և ես առեալ եմ զգանձս և զմին գոհարն ի Յակոբայ՝ Սիւնեաց եպիսկոպոսէ. և ապիզաս եմ ես և իմ զաւակք և այլ ազգայինք յայդ Ջրոյդ յայսմհետէ մինչև յաւիտեանս ժամանակաց. և չկայ Նորեցեաց կամ Խոտանանեցեաց կամ Շնհէրայ և Հալեցեաց յայդ Ջրոյդ հաշիւ ոչ շատ և ոչ սակաւ, ոչ յարտ հատանել և ոչ ի մարգ զատել, որ մարդ եւ անասուն Ջուրն ըմպեն ի մատակէդ։ Եւ թէ ես կամ իմ զաւակք յայս պայմանէս սուեմք. և կամ յայդ Ջրէդ կըտրել խորհիմք յարտ կամ ի մարգ կամ յայլ ինչ՝ յԱստուծոյ և ի սուրբ նշանէդ նզովեալ եղիցիմք, և զվերոյգրեալ անէծսդ Տեառն Յակոբայ անմահ կենօք ժառանգեսցուք»։ Աստուած շնորհաւոր ապասցէ սուրբ ուխտիդ և սուրբ և աստուածազգեաց հայրապետացդ։ Այս Յակոբ եւս ածել նկարիչս և զաւտախս որ է պատկերագործ ի հեռաւոր աշխարհէ Ֆռանգ ազգաւ. և գլուսաճեմ յարկս աստուածաբնակ տաճարիս բազում և անհուն ծախիւք եւ նկարել զբովանդակն ի վերուստ մինչև ի վայր. և գփրկչական պատկերն յոյժ աշխատաւոր տեսլեամբ եւ նկարել հանդիպակշիռ

աստուածագործ սեղանոյն ի վերոյ՝ զբոլոր երկինն աւագ կամարին. և ի ներքոյ նորա շուրջ զսեղանովն՝ զմարգարէական և զառաքելական և զհայրապետական կենդանագրութիւնս յոյժ խորհրդաբար, նմանապէս և զբոլորն համակ զարդարեաց այնքան, զի տեսողաց տեսարանքն շլանային ի նայելն, և երբեք ոչ թուէը ի դեղոց և յերանգոց յօրինեալ. այլ համայն կենդանիք, յորոց զարհուրելիք խուսափէին տեսողքն:

Եւ արար զայս ի թուականին Հայոց 379: Եւ ապա մեծաժողով հանդիսիւ կոչեաց զկաթողիկոսն Հայոց բազում եպիսկոպոսօք և զիշխանսն ի նաւակատիս օրհնութեան և արբագործութեան պատկերացն ոչ ինչ ընդհատ քան զառաջին հանդէսն որ վասն օրհնութեան տաճարին: Զարձեալ յայնմ ժամանակի աւագականոցն, որ հանդէպ վանիցն կայր ի վերայ ուսոյն որ Աւելադաշտն կոչեն, զոր վերագոյն ասացաք, լի էր ելուզակ մարդովք որք բազում ոճիրս գործէին և յոլով նեղութիւնս հասուցանէին եղբարցն և այլ շրջակայ սահմանացն. յայնժամ խնդրէ եպիսկոպոսն յիշխանացն Սիւնեաց. և հրաման առեալ՝ հալածական արար զարսն. և քանդեալ աւերեաց զապաստամբանոց նոցին և հիմնախիլ արար. և զտեղին սահմանովն սեպհականեաց եկեղեցւոյն, և մեծամեծ և անագին նզովիւք փակեաց զի մի

ոք այլ իշխեսցէ անդ բնակիլ կամ շինուիլն առնել:

ՃՂ.

Շինուիլն եկեղեցեաց եւ վանորէից ի ձեռն Տեառն Յակոբայ եւ Սմբատայ իշխանին որ ի վայոց ձոր գաւառի. եւ վասն սրբոյն Գամառայ:

Ի ժամանակս թագաւորութեանն Հայոց Աբլ-Աբասայ՝ որդւոյ Սմբատայ թագաւորի, և ի տէրութեանն Սիւնեաց Սմբատայ և եղբարց իւրոց և որդւոց, ի թուականութեանն Հայոց 378, երանելի եպիսկոպոսն Սիւնեաց պատահեալ ի տեղի մի յեղեգեաց ձորի ի վերայ ոսկին գեղջն. և յոյժ հիացեալ ընդ նա վասն առաւել գեղեցկութեան վայրացն և յոյժ զառանց և ապահով գոլոյն. և շարժեալ ի տեսչութենէն սկիզբն առնէ շինուածոյ հրամանաւ Սմբատայ իշխանի և Սոփիայ կնոջ նորա, և Սահակայ՝ եղբօր նորին: Եւ կանգնէ ի նմա տուն Աստուածոյ ի քերածոյ վիմաց, և զանազան երանգօք զարդարէ զնա ի նկարս գեղեցիկս, և կոչէ զՍմբատ զՍահակ ի նաւակատիս տաճարին: Եւ սահմանեն ժառանգութիւն նմա զամենայն լեռնակողմն և զառ ի ներքոյն նորա ի գետ անդր բուրաստանս բազումս և արտորայս. և հաստատեն զնա տուն կրօնաւորաց ի վառս Աստուածոյ:

Դարձեալ և յ385 թուականին աստուածազօր իշխանն Ամբատ ելեալ յաւուր միում յարքունեաց իւր, որ էր յԵղեգիս գիւղաքաղաքի. և երթայր ի զբօսանս որսոց, և պատահեալ խոտակերաց և աստուածազգեաց ճգնաւորաց ղօղեալ ի ծերպս արձանականգ վիմացն որ ի վերոյ Եղեգեացի ձորն, բարձրահայեցիկ ի վերայ գետոյն, որոց տեղիքն Քարէվանս կոչիւր։ Եւ զարմացեալ ընդ ներքևեալ և ընդ անշքացեալ տեսիլս նոցա՝ հարցանէր ի նոցանէ զկեանս նոցա. և նոքա հեգիկ պատասխանեալ ասեն. «Հալածեալ վախճատական եղաք յաշխարհէ Թերևս կարասցուք ապրել ի դառն ալեկոծութենէ սորա»։ Ապա այնուհետև խնդիր առնէ իշխանն եպիսկոպոսին իւր Տէր Յակոբայ. և հրամայէ ձեռն ի գործ ածել և փութապէս շինել եկեղեցի ի պատշաճաւոր տեղի զի անդ բնակեցուսցէ զսուրբ ճգնաւորսն։

Եւ նորա եկեալ առ սուրբ հարսն հարցանէ զկամս նոցա. և նոքա ցուցանեն տեղի մի տափարակ ի ներքոյ քարոյն ուղղորդ ի վայր. յորում տեղւոջ սկիզբն առնէ կոփածոյ քարամբք և շինէ եկեղեցի գմբէթայարկ յանուն սրբոյն Գրիգորի. և բերէ զաւագագոյն ծերն որում անունն Ահերմոն, և զաշակերտն իւր զԱզարիա այլովք եղբարբքն և բնակեցուցանէ անդէն։ Եւ եկեալ իշխանին օրհնէ (գուցէ օրհնել տայ) զեկեղեցին. և բարեպաշտ տիկինն Սոփիա գնէ

գգիւղն Հաւուս որ հանդէպ վանիցն կայ իւր սահմանովք. և տայ ի ժառանգութիւն եկեղեցւոյն, և այլ ևս այպիս և ծաղկոցս յեղեգիս: Եւ զարդարէ զնա բազում սպասուք, և փարթամացուցանէ ամենայն պիտոյիւք. և մեծամեծ նզովիւք հաստատէ զՀաւուս գիւղն որ ոչ հանեն ի նմանէ: Եւ կատարեն ընդհանուց յիշատակ զոհն սրբոյն Գրիգորի, և քառասուն մի պատարագ զվարդավառին. և կոչեն զեկեղին յանուն ծերոյն Աներմոնի վանք:

Դարձեալ և յետ ամաց ինչ երանելի և բարեպաշտ տիկինն Սոփիա գնայ ի խորաձոր վայրն որ Գնդեվանս կոչի ուխտի պատճառաւ առ միայնաւորսն որ կային անդ բնակեալ. յորում տեղւոջ էին բազմութիւնք նշխարաց սրբոց վկայից ի վաղ ժամանակաց, զորս ոչ ծանեաք եթէ որք էին և կամ ուստի. և բազում և մեծամեծ բժշկութիւնք լինէին: Տեսեալ տիկնոջն և յոյժ հաճեալ ընդ տեղին և մտախոհ լինէր շինել եկեղեցի և բնակեցուցանել ի նմա դասս կրօնաւորաց. վասն որոյ և ի դիշերին երևեալ վկայիցն՝ խնդրէին կատարել զնոյն խորհուրդ. ապա յարուցեալ տիկնոջն եւ ածել վաղվաղակի արուեստաւորս ի ճարտար քարատաշաց. և սկիզբն առնէ շինուածոյն՝ կացուցեալ ի վերայ վանացդ երէցն գհայր Սարգիս, և գործակալ զեղիշա երէց և նկարիչ. և յանձնէ գնա Տեառն Յակոբայ մեծաւ հոգա-

բարձութեամբ ի կատարուածն ածել։ Փայլէր և անդ մեծամեծ ճգնութեամբ հայրն Սուփան Գընդունի կոչեցեալ։ Կանգնէ զաւուրն Աստուծոյ և նկարակերա յօրինուածօք զարդարեն զառաստաղս և զորմունս նորա. և արարեալ նաւակատիս՝ մեծահանդէս ժողովով օրհնեն զնա և անուանեն անուանակոչութեամբ սուրբ վկայիցն. և կացուցանեն ի նմա դաս պաշտօնէից և բազմութիւն կրօնաւորաց։

Նա և զձորն ամենայն ի պատշաճաւոր տեղիս ընուն անապատօք. և կացուցանեն ի նոսա արս ճգնաւորս և խստակրօնս, յորոց առաւել փառաւորեալ լինէր Աստուած քան ի Սինէական հարանցն։ Եւ երանելի տիկինն անուանէ զվանսն Գնդեվանք. և շինէ զդիւղն ի վերոյ վանիցն ի գլուխ քարին. և տայ ի ժառանգութիւն եկեղեցւոյն ազատ յամենայն հարկաց. նմանապէս և ի միւս կողմանէն զԱտչար գիւղ. և մեծամեծ նղովիւք փակէ յետ ժամանակաց ոչ հանել ի տեղւոյն։ Եւ այս լինէր ի թուականին Հայոց 385։ Իսկ զձորն ամենայն ի վեր և ի վայր մինչ ի Գոլոշուին քարն, հրամայէ առնել անկախիտս ի մրգաբերաց ծառոց և յանուշաճաշակ պտղոց. և անկեալ այգիս վայելուչս յոյժ բարութեամբ ի վայելուչս առատապէս սուրբ եղբայրութեանն և ամենայն կարօտելոց։ Գրէ արձան յիշատակի սակաւաբան այսպէս. «ես Սոփիա տիկին՝ կին

Ամբաստայ աստուածապահ տեառն Սիւնեաց, և դուստր Գրիգորը Դերենկի, շինեցի զեկեղեցիս ի յիշատակ հոգւոյ իմոյ և յարևշատութիւն իշխանաց իշխանին Ամբաստայ և որդեկաց մերոց, և զարդարեցի զսա մեծաձախ սպասիւք. և եառ զերկու գիւղս ի ժառանգութիւն սմա, զոր մի ոք իշխեսցէ խախտել կամ հանել ի սուրբ եկեղեցւոյս, ապա թէ ոչ՝ անլուծանելի նզովիւք անիծեալ լիցին յԱստուծոյ և յաստուածպտումար սրբոցս. մատանի էր անակն վայոց ձոր, շինեցի զսա ի եղի ակն ի վերայ»:

Զարձեալ յետ սմաց ինչ, ի 448 թուականին Հայոց սուրբ հայրն Բրիատափոր շինէ զդաւիթեան եկեղեցւոյն. ունի և բազում յիշատակ ի տանն յայն երանելի և սուրբ հայրն Գուրգէն: Բայց յետ բազում սմաց, ի կաթողիկոսութեան Հայոց Տեառն Սարգսի, և ի թագաւորութեանն Գագկայ՝ որդւոյ Աշոտոյ, իսկ ի Սիւնեաց և Բագրատունոց թագաւորութեանն Վասակայ, կացեալ յառաջնորդութեան տանն այն հայր Սարգիս միւսն, և արարեալ բազում արդիւնս, և ածեալ զՂուրն ի լեռնէն ի մեծ գիտաւոր սարէն, ուր ակունքն են քաղցրահամ գետոյն որ Զկնարած կոչեն, աներևոյթ հրեշտակի առաջնորդութեամբ, բազում չանիւ և մեծամեծ ծախիւք բերեալ յանդաստան վանիցն, և զանհուն առատարն անջրդի արար ջրարբի և զամենայն լեռնակողմն. յորում

ոչ զոյ ումեք հաշիւ՝ ոչ Պրակեցեաց և կեչուտեցեաց և ոչ այլ սահմանակից դիւղօրէից և ոչ այլ ումեք. և այս ի թուականին 457. յեպիսկոպոսութեան Սիւնեաց Տէր Յովհաննիսի:

Եւ զրէ ինքեան արձան ի վերայ եկեղեցւոյն սևադեղով. և անդին և մեծամեծ նզովիւք վակէ վան ջրոյն զի մի ոք իշխեսցէ կարել զնա և կամ հարակաշ զոլ և բաժինս առնուլ, բայց միայն թէ ըմպեն ի մատակէն մարդ և անասուն. և կարգեալ յիշատակ զօր յիշատակի մեծ զօրավարին Սարգսի ամ յամէ, և կատարել ուխն քառասունս միանգամ. և թէ ծուլասցին զատաստանս մեծամեծս ընկալցին:

Յարձեալ պատմեցից ասացանօր և սակաւուք վանն մեծ և յոգներանեան նահատակին սրբոյն Մամասայ, զոր հին և հարուստ ժամանակօք բերեալ էին յաշխարհս յայս և հանգուցեալ ի գաւառիս վայոց ձորոյ, ի սահմանս անառիկ զրեկին Սուլեմայ: Ի ժամանակս թագաւորութեանն Հայոց ցեղին Արշակունեաց, մինչ շէն էր աշխարհս այս և խրոխտ իշխանութեամբ ճոխ, և եռային ի սէրն Աստուծոյ վանն նորանաւատ զոլոյն, և չերմ բոցով վառեալ լինէին ի զանազան բարեգործութիւնս՝ և առաւել ի սէր վկայիցն Աստուծոյ. և ամենայն ոք ի խնդիր լինէին անչափ աշխատութեամբ և անհուն ծախիւք թերևս կարասցեն գտանել ի նշխարաց սրբոց և բեր-

ցեն յիւրաքանչիւր գաւառս և յիշխանութիւնս. զի նովաւ պարապեալ ամրացին յամենայն հինից թշնամեաց և պատահմանց չարաց. և լիցին մշանջենաւոր բարեխօս առ Քրիստոս:

Որպէս և իշխանքն Սիսական որք գնացեալէին յարաժամ (թերևս՝ յորժամ) ի կեսարացւոց քաղաքն ընդ սրբոյն Գրիգորի և ընդ սրբոյն Ներսիսի և յայլ ժամանակս, որք ի խնդիր լեալ մեծածախ գանձիւք և անհուն աշխատութեամբ ևս առաւել բազմաժամանակեայ աքնութեամբ աղօթից և պահոց պնդութեամբ սուրբ և աստուածազգեաց նշխարաց երանելի համեծ ճգնաւորին Մամասայ որ բնակեալ էր ի լերինն մերձ կեսարիոյ. զորոյ զմեծամեծ հանդէս ճգնութեանցն և վկայական մարան ուսուցանէ մեզ պրեալ ճառն ի մարտիրոդոզի անդ, և պզովութիւնն հրապարակագոյժ դրուատէ Գրիգոր Աստուածաբանն որ ի նոր կիւրակէի ներբողմանն: Եւ ըստ մեծահաւաս յուսոյն իւրեանց արժանի գտան աստուածային պարգևացն, և վերին տեսչութեամբ առեալ զանկշռելի գանձն զկէս նշխարաց սրբոյն Մամասայ ի միջոյն ի վեր գըլխովն և բազկօքն հանդերձ, և զայլն թողին յիւրում սուրբ եկեղեցւոյն ի նմին տապանի. և կապմեցին կառս ի սպիտակ ջորւոց. և կողբս աջմաթիս արարեալ՝ եդին ի նմա զնշխարս սրբոյն և բարձին սաղմոսիւք և օրհնութեամբ. և տաճիկ նժուգօք՝ սրավար երիվարօք իբր օդա-

պարիկ թևօք թռուցեալ անցին ընդ լայնածիր ասպարէզ երկայն ոտին, և հասին ի բնիկ սահմանս իւրեանց սէրուբեանն ի Մազազ գաւառ. և անցեալ ընդ Գեղամ մտին ի Վայոց ձորզի դէմ եդեալ էր տանել ի Սիւնիս յարքունական գանձս իւրեանց:

Այլ կամքն վերին ոչ թողացուցին ի կամս նոցա. այլ ակնարկմամբ Հոգւոյն՝ ուր ինքն կամեցաւ կապեաց զոտս ջորւոցն. և զտեղի առին կառքն ի հարթ տեղւոջ մի ի ձորին Սուլեմայ, որ Դեզպանատ կոչի: Իսկ նոցա լցեալ տրտմութեամբ ժողովեցին զգաւառն և մեծաչան ազօթիւք ցայգապաշտօն կատարեալ՝ խնդրեցին երթալ ի տեղւոյն. և հազիւ ուրեմն յարուցեալ ըզկառսն վարեցին իբր ձայնընկէց երկու. և անդէն դարձեալ զտեղի առին ջորիքն ի պատշաճաւոր տեղի մի, ի սահմանս գիւղին որ Խարաշկօնք կոչի. և այլ ոչ ելին անտի: Ապա կոչեալ զեպիսկոպոսն Սիւնեաց, և ժողովեալ բազմութիւն հարց վանականաց՝ փոխեցին ի հանգիստ եդեալ ի քարեայ տապանի. և շինեցին մերձ նմին վկայարան կրաշաղախ քարամբք, և եռուն զվայրն շրջակայ ի սահման անդաստանի վանից. և բնակեցուցին ի նմա արս կրօնաւորս սպասաւորել սրբոյն:

Իսկ ի ժամանակս յետինս յաւուրս անիշխանութեան աշխարհիս, ի բռնակալութեան Ա-

թաբակ Իւանէի, երկու եղբարք ճգնաւորք և քաջակրօնք, առաջնորդք սուրբ ուխտին Սէթ և Պօղոս կոչեցեալք, բազում աղօթիւք և խնդրուածօք հանեն զտապան սրբոյն և շինեն խորան մի փոքր. և հանդուցանեն յայտ երեակի տեսողաց զկափարիչն ի թուականին Հայոց (պակասի)։ Բայց ի շարժելն ի տեղւոյն բանան զտապանն և առնուն ի նշխարացն զաջն. և մեծամեծ բժշկութիւնք լինին յայնմ աւուր. և մի ոմն յեղբարցն ի ծածուկ առնու առաքն մի, և առ ժամայն հարեալ ի դիւէ՝ փրփրեր և դոչէր զծածուկ գողոնան, և հազիւ ուրեմն բժշկեցաւ։ Իսկ զաջն եւս առնուն ի սուրբ ուխտն Այրիվանից։ Բայց զառաջին բերողացն ոչ գիտացաք զանուանս և ոչ զթիւ ժամանակին. և արդ կայ և ճոխ սա ի պարծանս և ի բարեխօսութիւն այսմ աշխարհի մեծ հրաշս գործելով օր ըստ օրէ յամենայն նեղեալս և յախտաժէտս և ի դիւահարս։ Որոյ բարեխօսութեամբ Քրիստոս Աստուած խնայեսցէ յաշխարհս յայս և յեկեղեցիս և յիս յոգնամեղ պարտաւորս. և Քրիստոսի փառք յաւիտեանս. Ամէն։

ԾԱ

Վասն ժառանգութեանցն որ տուաւ ի սուրբ եկեղեցին Տաթեւոյ ի ձեռն Տեառն Յակոբայ եպիսկոպոսի։

Ըստ ժամանակի լինէ հանդիպման հասին աստուածապատ և բարեպաշտօն իշխանն Սմբատ՝

որդի Աշոտոյ, թոռն Վասակայ, ի սուրբ աթոռն. և աղօթեալ առաջի սուրբ խաչին՝ կամեցան յիշատակ անմահ և անջինջ հաստատել իւրեանց հոգեացն. և եռաւն ի սուրբ եկեղեցին հոգեցաւսուբ ժառանգութիւն դիւրեանց հայրենի և սեպհական դիւղն գկակոյս որ ի Գեղաքունեաց գաւառին. և անխախտ վճռաւ աւանդեցին ի ձեռն Տեառն Յակոբայ, որ ունէր օրինակ գայս։

«Յանուն Աստուծոյ կամ եղև ինձ Սմբատայ իշխանի՝ որդւոյ Աշոտի, թոռին Վասակայ, աստուածապատ տէրանց Սիւնեաց, տալ գկակոյս դիւղ ի Գեղամայ գաւառին, գիմ հայրենի բաժինն իւր ամէն սահմանօքն շրջակայ, ի Սիւնեաց եպիսկոպոսն ի Տէր Յակոբ, ի մեր սուրբ խաչն և ի լուսաճեմ և յաստուածաբնակ սուրբ եկեղեցիսն վանն հոգեաց մերոց։ Արդ՝ չկայ այլ ուրուք իշխանութիւն, ոչ մեր և ոչ զաւակաց մերոց և այլ ումեք իշխել ի վերայ դեղոյս այս, և կամ հանել գաեղիս գայս ի սուրբ խաչէս և ի սուրբ աթոռոյս. ապա թէ ոք ընդ հակառակն ելանիցէ՝ այնպիսին գատապարտեալ լիցի յԱստուծոյ ամենակալէն. և բաժին նորա ընդ Յուդայի և ընդ այլ խաչահանուացն, և գատին մի յաղթեսցէ, գիւրն մի ժառանգեսցէ, այլ որդւովք իւրովք ելցէ ի խաւարն արտաքին։ Եւ արդ դուք էք իշխան Տէր Յակոբ՝ Սիւնեաց եպիսկոպոս, և այլ հայրապետք որ գկնի ձեր յաջորդին ի սուրբ յաթոռդ յայսմ-

հետէ մինչև յաւիտեանս ժամանակաց։ Եւ մեր մեղուցեալ հոգիք ձեզ յանձն եղիցին և սուրբ խաչիդ, հաստատ է կամաւն Աստուծոյ։ Գրեցի զայս վճիռ ես Սմբատ իմով ձեռամբս, և կնքեցի իմով սովորական մատանեաւս, եղի ի վերայ և զտիրական մատանիս Տեառն Յակոբայ ի Թուականիս Հայոց 369։ Ես Տէր Յակոբ հաստատեցի իմով ձեռամբս զվճիռս զայս. և վկայ եմ հոգեցառուբ պարգևացս տեառն Սմբատայ՝ որդւոյ Աշոտի Սիւնեաց տեառն, որ եր ես զիւր սեպհական գիւղն զԿակոյս ի սուրբ եկեղեցիս. և մի ոք իշխեսցէ հակառակ կալ այսմ այժմ և կամ յետ ժամանակաց։ ապա թէ յանդգնի՝ նզովեալ լիցի յԱստուծոյ և յամենայն սրբոց և ի սուրբ հայրապետացն և ի մէնջ. և դատապարտեալ զոցի առաջի ահեղ աթենին Քրիստոսի, և բաժին նորա ընդ անհաւատս լիցի յանշէջ գեհենին։ Եւ որ գինի մեր կարգիք յաթոռդ պարտական էք անմոռաց կատարել զյիշատակ տեառն Սմբատայ և հայցել թողութիւն մեղաց նորա. և ամ յամէ մին քառասունս առնել նմա։ Գրեցաւ այս վճիռ իմով ձեռամբս և կնքեցաւ իմով սովորական մատանեաւս ի կամս Աստուծոյ։

Գարձեալ յետ ժամանակաց ինչ եկն Փիլիպպէ իշխանն ի սուրբ յաթոռն առ Տէր Յակոբ։ Այս Փիլիպպէ որդի էր վասակայ՝ թոռն մեծ Փիլիպպէի, որ զՀուրն վաճառեաց Տեառն Յա-

կոբայ. Եւ յիշեալ նորա գունայնութիւն վայրկենի կենացս՝ կարդէ ինքեան յիշատակ և քառասունս, և ընծայէ երկու գիւղ ի սուրբ Գրիգորն զոր մեծ Փիլիպպէին էր շինեալ ի Համբանդ գաւառի, զԱղուերծ և զՅուբականխոռ. և գրէ ինքեան արձան անջինջ և անմահ յիշատակի յ392 թուականին. և էր այսպէս:

«Անուամբն Առաուծոյ, ի ժամանակս աստուածապատիւ և հոգևոր Տեառն Յակոբայ՝ Սիւնեաց եպիսկոպոսի. և տէր Փիլիպէ՝ որդի Վասակայ որդւոյ աստուածապատ տեառն Փիլիպպէի՝ Սիւնեաց տեառն, իմացայ և ծանեայ զի վաղն թառամելոց է ամենայն մարդ իբրև պիտոյ, և թօթափելոց է ամենայն փառք մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ. և սարսափմամբ սասանեալ դողայց անձն իմ եթէ իբր փրկեցայց: Ապա յոյս եդեալ յայս աստուածաբնակ ուխտս. սաստայ զսուրբ խաչս յիշատակ հոգւոյ իմոյ, և ընձայեցի լիապտուղ հաւատով յիմ հալալ հայրենեացն զՅուբականխոռ, զոր գնեալ էի ի յԱրտաւազդայ՝ Սակռի որդւոյ, և զմիւս շէնն զԱղուերծ զոր գնեալ էի ի Մոտանանեցեացն ի յԱբլաշաբայ որդեացն և ի Վահանկայ որդւոյն և յեղբօրորդւոյն. յաղագս իմ սուրբ եկեղեցւոյդ ապսպարեցի ի Տէր Յակոբ՝ Սիւնեաց եպիսկոպոս, և ի սուրբ մայրաքաղաք եկեղեցիդ Տաթևոյ, ի սուրբ Գրիգոր զոր իմ պապուն տէր Փիլիպպէի շինեալդ է, և ի մեր

սուրբ նշանդ ի փրկութիւն հոգւոյ իմոյ և ի թողութիւն մեղաց իմոց: Եւ եառ իւր սահմանօքդ բոլոր՝ լերամբ և դաշտովք, հողով և ջրով, այգօք և ընկուզօք, ջրացայովք և ամենայն մըտիւք: Եւ արդ՝ յայսմհետէ իշխանութիւն ունիք դուք ուտել և վայելել զայդ տեղերդ, վաճառել և զբաւականն տալ մինչև յաւիտեանս ժամանակաց, և ազատ են դոքա յամենայն արքունի հարկաց: Եւ եթէ այլ ոք հակառակի այսմ և կամ խանգարել և խափանել ջանայ՝ եթէ ի մերոց և կամ յայլ աւազաց, ի սուրբ Երրորդութենէն և յամենայն սրբոց նզովեալ եղիցի, ընդ Յուդայի և Արիոսի զաւեսցի, և յերից սուրբ ժողովոցն ընդ կապանօք լիցի. և թէ ի տաճիկ աւազութիւն հասանի և յափշտակել ջանայ՝ յԱստուածոյ և յիւր փեղամբարձն սպիզաք եղիցի, և բիւր 1,000 նալմ եղիցի. և ի վերջին աւուր դատաստանին յիւր դաղողէն սևերես լինի: Եւ արդ՝ հայդեմ ի ձէնջ սուրբ հարք՝ զիմ Փիլիպպէի զյիշատակս կատարել ամ յամէ. և յիմ եկեղեցիդ ի սուրբ Գրիգորդ ի Վարդկվառի աւուրսն մի քառասունք առնեն անխափան. գրեցաք և կնքեցաք մերով մատանեաւս ի կամս Աստուծոյ յ392 թուականիս Հայոց»:

Էր և հանդէպ վանիցն տեղի մի ապատամբանոց, որ Տամալէկս կոչէին. և բազում և մեծամեծ վիշաս և նեղութիւնս հասուցեալ էին

վանիցն, զոր Տէր Յովհաննէս, թէ և բազում անգամ չանաց, ոչ կարաց հալածել զբնակիչսն և սեպհականել զտեղին: Ապա ի ժամանակս աստուածապատիւ և հոգևոր Տեառն Յակոբայ եկն մեծ տիկինն Սոփիա՝ կին Սմբատայ, յերկրպագութիւն սուրբ խաչին. և լուեալ զվշտալից դառնութիւնն եղբարցն ի նոցանէ՝ գուն գործեալ ի վերայ և հաղիւ ուրեմն ածեալ ընդ բռամբ զտեղին ընդ գնոյ հազար դահեկանի. և տայ ի ձեռն Տեառն Յակոբայ և բառնայ զայն խոչ ի նոցանէ. և այնուհետև լինէին յապահով: Եւ հրամայէ եպիսկոպոսին շինել ի նմա եկեղեցի և բնակեցուցանել անապատաւորս. և զրել արձան անիծից ղի մի ևս բնակեցուսցեն ի նմա աշխարհական ոք, զոր և փոյթ ընդ փոյթ կատարեալ երջանիկ եպիսկոպոսին, զրէ արձան վճռի զայս օրինակ. «Այս իմ ձեռին գիր է Տէր Յակոբայ՝ Սիւնեաց եպիսկոպոսի. բազում չանիւ և աշխատութեամբ թափեցի զՏամալեկս որ բազում նեղութիւն էին հասուցեալ տանս. և Տեառն Յովհաննիսի չանացեալ էր և չէր կարացեալ թափել: Արդ՝ հնազանդեալ մեր հրամանացս տէր Սմբատ և Սոփիա տիկին՝ առին ընդ գնոյ 1000 դահեկանի, և ետուն ի սուրբ նշանս. և հոգւով և մարմնով զինքեանս մեզ յանձնեցին: Եւ մեք առաք և եկեղեցի շինեցաք, և միաբնարան հաստատեցաք: Արդ՝ զայս տեղս որ մեր մեծ չանիւ

թափեալս եմք և զհայրենաւէրսն հանեալ, և անապատ հաստատեալ, և մտածէ ոք գնա ի հայրենաւերսն տալ կամ կանամբի մարդ ի սմա բնակեցուցանել կամ մին ծառայ և մին թափոյ աէր առնել. նզովեալ եղիցի ի միաբանական սուրբ Երրորդութենէն և ի սրբոց հրեշտակաց և յ318 հայրապետացն, ի սուրբ նշանէս և ի մէնջ ի մահ և ի կեանս. և բաժին նորա ընդ Յուդայի եղիցի. և չարաչար ցաւօք զիւր աւուրսն մի հատարակեսցէ, ճարակ լիցի անշէջ հրով պեհենոյն, և մի գայցէ ողորմութիւն ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ»:

Դարձեալ էր գիւղ մի ի Գեղամ գաւառի ի Սոդից սահմանին, Վաղաւեր անուն, զոր տուեալ էր վաղ ժամանակօք Տիգրան՝ մեծ նահապետ ի Սիսական տոհմէ, ի սուրբ եկեղեցին Տաթևոյ, Աստանօր վաճառէ և փոխանակէ Տէր Յակոբ տեառն Զաքկայ՝ իշխանի Սիւնեաց՝ որդւոյն Զեւանշէրի վասն հեռաւորութեան. և առնու զՏաշտակերտ գիւղ հաստատուն և անխախտ վճռաւորունէր օրինակ զայս. «կամաւն Աստուծոյ ես Տէր Յակոբ՝ Սիւնեաց եպիսկոպոս, արարի փոխանակս ընդ աստուածապահ տեառն Զաքկայ՝ Սիւնեաց իշխանի, տուաք զՎաղաւեր գիւղ, զոր յիշեալ տեառն Տիգրանայ իւր հոգւոյն ընձայեալ էր ի սուրբ նշանս, և առաք զՏաշտակերտ գիւղ իւր ամենայն սահմանօքն բոլորովին: Եւ հաս-

տատեցաք յամէն տարի քսան օր պատարագ անխափան մինչ ի գալուստն Քրիստոսի. և զերանի ում թողութիւն սաղմոսն երգել ի նմին աւուրսն։ Եւ թէ ոք յետ մեր՝ յիշխանաց կամ յառաջնորդաց հակառակ կայ այսմ, և զայս տեղիս յափշտակել խորհի, նզովս չարաչար ընկալցի յԱստուածոյ և յամենայն սրբոց, և յայսմ աթոռոյս և յամենայն առաքելական եկեղեցեաց և ի սուրբ հայրապետաց որոշեալ և անիծեալ լիցի, և Տիգրանայ մեղացն պարտապան եղիցի. ի թուիս Հայոց 374 հաստատ է կամաւն Աստուածոյ»։

Եւ ես Զաքիկ իշխան իմ կամօք արարի զայս վաճառս, և փոխեցի զՏաշտակերտ ընդ Վաղաւերսոյ, և իմ ձեռօքս հաստատեցի զվերագրեալ վճիռդ։ Եթէ որ խափանէ՝ զնոյն նզովսդ ժառանգեսցէ որ կայ ի դմա։ Եւ մեք Զևանշէր և Վասակ՝ որդիք տեառն Զաքկայ վկայ եմք այս արարուածիս. և ես կարիճ իշխան վկայ եմ այս վերագրելոցս։ Գրեցաւ գիրս և կնքեցաւ հայրապետական մատանեաւս Տեառն Յակոբայ. եղաք և մեք ի վերայ զմեր կնիքս։ Ահա զայս ամենայն հոգացեալ և պայծառապէս շքեղացուցեալ զանապատն գոյիւք և ստացուածովք. այլ ևս յոլովս ստանայ ընդ գնոց արծաթոյ ագարակս և անդս, հողս և մարգս և այգիս. նա և բազում տուրս յիշխանաց և յազատաց, զոր թէ ընդ գրով էաք արկեալ՝ բազում տաղտկութիւն լինէր լսողաց և

ծախումն անհուն հիւթոց։ Բայց մեք ընտրեալ և փոքր ի շատէ կարգեցաք ասա զոյժ պիտանին։ Բայց աւադ իմում բանիս, որ այժմ ոչ կարեմ բարեբոյս բանիւք բովանդակել զլրումն կենաց այսպիսւոյ անհամեմատ և աստուածավայելուչ, քաղցր և արքայաշուք առնս երջանկի և բարեբաստի։ Այլ հարկիմ զդանազան և զվայրենաբարոյ բանից բուռն հարկանել։

ԾԲ.

Վախատմբութիւն Յակոբայ. եւ կատարած կենաց նորա. եւ գալն Սահակայ՝ Հայոց կաթողիկոսին, երից անգամ ի Միւնիս. եւ ձեռնադրել զվահան եպիսկոպոս. եւ հնազանդել բնդ նմին եւ զՍղվանս։

Էր կաթողիկոս յԱղվանս Սահակ անուն, որ հոգևորական սիրոյ կապակցութեամբ յարակից եալ էր Տեառն Յակոբայ. և էին միմեանց համախոհ և յոյժ մերձաւոր։ Եւ յետ Սահակայ առաջնորդէր Գագիկ՝ եղբայր նորին. և սա առաւել հաստարձակեալ էր ի սէր միաբանութեան ընդ Յակոբայ՝ Միւնեաց եպիսկոպոսի։ Եւ զի կաթողիկոսքն Հայոց հեռացեալ էին յայնմ ժամանակի զի վասն հանապազորդեան հինահարութեանցն Իսմայէլացւոց թողեալ էին զաթոռն որ ի Դվին և շրջէին այսր և անդր ընդ թագաւորացն Հայոց։ Երբեմն բնակէին առ Գագկայ թագաւորին ի Վաս-

պուրական աշխարհի, ի վանս Զորոյ, ուր կայր սեղանն և աթոռն և գաւազան սրբոյն Գրիգորի. երբեմն բնակէին ի Շիրակ գաւառի առ Շիրակավանին ի վանսն Արգինայի. և այսպէս տարաբերեալք լինէին: Եւ զի վախճանեալ էր կաթողիկոսն Հայոց Տէր Թէոդորոս. և յաջորդեալ էր ի տեղին Անանիա մոկացին յ390 թուականին: Եւ այս Յակոբ վասն հեռաւորութեան ոչ կարէր ամ յամէ երթալ առ կաթողիկոսն Հայոց և առնուլ մեռոն. ապա հարկ եղև խնդրել զմեռոն ի կաթողիկոսէն Աղվանից: Եւ այս լինէր նմա մեծ գայթակղութիւն և անկանգնելի գլորումն ըզ սխալեաց ըստ դիւրախաբ բնութեանս մարդկային, ըստ ասացն Սաղմոսին թէ գոյ և քուն իմասանոյն:

Եւ գայս արար անձնահաճ կամօք. քանզի էր այր անձնեայ և սէգ, բարձրայօն և մեծաբարոյ, բնութեամբ ազատ և բանիւ ճոխ, հանճարով պայծառ և շրթամբք յոյժ քաղցր. սակս որոյ ինքեան հաւանեալ հպարտացաւ սակաւիկ մի: Իսկ կաթողիկոսն Անանիա կոչէր նուիրակօք զՅակոբ և զՄահակ. և նոքա յիւրաքանչիւր յաթոռոցն ոչ շարժեցան. այլ բաղբաղեցին զգնալն: Եւ զի լուեալ էր կաթողիկոսին ըզնատանի մերձաւորութիւն նոցա առ միմեանս և զխնդիրը մեռոնին յԱղվանից և զայն ևս թէ բազում ամք են Յակոբայ զի ոչ ելն ի սուրբ Գրիգորի յա-

թոռն. ապա այնուհետև ի նախանձ ահագին դրդուեալ, և սաստիկ ցասմամբ շարժեալ եկն ի խնդիր Յակոբայ զի կամ հնազանդեսցէ և ըստ կամի արասցէ, և կամ մեծագոյն պատիժս ընկալցի: Եւ անտի դէմ եդեալ երթիցէ յԱղվանս և զայն ևս հնազանդել. քանզի արքեպիսկոպոսքն Աղվանից ի Հայոց կաթողիկոսացն առնուին ձեռնադրութիւն. և սակաւ մի ամօք յառաջ քան զայս յետս էին կացեալ ի վախճանէն Գէորգեայ կաթողիկոսին մինչ ի ժամանակս այս Անանիայի, յաւուրս հինգ կաթողիկոսաց՝ Մաշտոցի և Յովհաննիսի, Ստեփաննոսի և Եղիսէի և Թէոդորոսի:

Ապա եկեալ, հասեալ յաշխարհս Սիսական, ընդ առաջ ելանեն նմա իշխանքն Սիւնեաց աստուածապահ աէր Սմբատ և Զևանշէրն որ ի Բաղս. և բերեալ յեպիսկոպոսարանն Տաթև հանդուցին մեծաշուք պատուով. եկն ապա եպիսկոպոսն Յակոբ. և անկաւ առաջի նորա և զմեղայ խոստովաներ «ով մեծապատիւ Տէր կաթողիկոս՝ որովհետև աստուածաբար ի մեզ խոնարհեցար և զմեր յանդգնութիւնս անտես արարեր. հնազանդիմք ձեզ և սուրբ աթոռոյն Գրիգորի լուսաւորչին իբրև Աստուծոյ, մեղաք յերկինս և առաջի քո. և դու ներելով թող մեզ զյանցանս մեր»: Տեսեալ զայն կաթողիկոսին և մեծապէս օրհնէր զնա և շնորհակալէր և կամէր երթալ յԱղվանս. ապա դուժկան հասանէր ի թագաւորէն

Աբասայ վասն փոխման թագուհւոյն. և դարձուցանէը զնա յայնմ յառաջարկութեանց: Վասն որոյ մեծամեծ պարգեօք և առատաձեռն ընծայիւք յուղարկեցաւ յաթոռն իւր ի Սմբատ իշխանէ և ի Յակոբայ եպիսկոպոսէ:

Իսկ ամենաչարն, որ հանապազ խանդայ ընդ բարին և դրգռե զմարդիկ ի խռովարար չարութիւն, ոչ ետ թոյլ այսմ արարուածոյ. այլ մտեալ ի սիրտ չար հնախանձոտ արանց, սկսան քսել վերստին զՅակոբ առ կաթողիկոսն, եթէ կրկին ապստամբեաց ի ձէնջ. և նա չտայ թոյլ հնազանդել Աղվանից ընդ ձեռամբ քով. և զԽոսրով՝ Անձևացեաց եպիսկոպոսն նա շեղեաց թըղթով ի ձէնջ. նաև հերձուածս ևս յօդէին եթէ քօղաբորբեալ ունի և զՖաղկեդոնին. և այնպէս խռովութիւն և պատերազմ մեծ զարթուցին ի մէջ եկեղեցւոյ: Զոր և ես իսկ զրպարտանք հաբիմ զայսպիսի բանս և ոչ ճշմարտութիւն զրադատ եպիսկոպոսին Յակոբայ, զի զինչ փառք էր և պարծանք նմա թողուլ զմեծ աթոռն սրբոյն Գրիգորի լուսաւորչին և ծառայել իւրում ծառայակցին որք և անկատար և թերի ունէին զօծուճն շնորհին: Բայց թողցուք զայս քննել արդարադատին Աստուծոյ:

Ապա կաթողիկոսն Աղվանից Սահակ մեռանի, և յաջորդի ի տեղին հարազատ նորին Գագիկ նովին անկատար օծմամբ. զոր և լուեալ

Տեառն Անանիայի՝ զրէ թուղթ առ իշխանն Աղուանից ըստ իւրում իմաստասիրաց բանից, և հրամայէ ի բաց կալ յանուանեալ և ի նանրափառ կաթողիկոսէն Գագկայ: Որք և արարին իսկ. և ոչ ոք հաւանեցաւ նմա, բայց միայն մի յիշխանացն Սենեքերիմ անուն: Իսկ այլքն միաբան առաքեն զոմն մի Յովնան անուն առ կաթողիկոսն Հայոց զի ձեռնադրեսցէ նոցա արքեպիսկոպոս, զոր և ընկալեալ սիրով և պատուով Տեառն Անանիայի՝ ձեռնադրեալ առաքէ յԱղվանս: Իսկ ապա մինչ այս լինէր, ըստ նախանձու հակառակութեան ոմանց, սկսան բարդել բանս բամբասանաց ի վերայ Յովնանու ունայն. և ոչ սակաւ լինէր խռովութիւն ի մէջ երկոցունցն Գագկայ և Յովնանու, և երկոքինքն խոտեալք լինէին:

Լուեալ զայս ամենայն Անանիայի՝ վարանեալ տարակուսէր ի մտի իւրում վասն գունակ գունակ բաժանմանց և ապստամբութեանց եկեղեցւոյ. և ժողովեալ բազմութիւն եպիսկոպոսաց և գլխաւոր հարց՝ խաչընդուս նահատակութեամբ գայ ի խնդիր օձառեալ և պառակտեալ անդամոց եկեղեցւոյ, և դէմ եղեալ երթայր յԱղվանս: Եւ հասեալ ի գաւառն Ջաչենոյ՝ ընդ առաջ ելանէր նմա իշխանն Գրիգոր. և տարեալ իջուցանէ ի տան իւրում: Եւ ժողովէ զամենայն իշխանս աշխարհին և զեպիսկոպոսունս և զվանականս ի տեղին որ Արդախն կոչի. գան և Գագիկն և Յո-

նանն։ Ինդրեր ապա կաթողիկոսն Անանիա պատմութիւնն Աղվանից զի գիտասցեն զորպիսութիւնն Աղվանից աթոռակալացն. և նոքա թաքուցեալ ամենևին ոչ ցուցանէին։ Ապա ըստ վերին խնամոցն, ի գիշերի պաշտաժանն դնէ եկեղեցապանն Գանձասարու զիրք մի որպէս թէ Յովհաննու Ոսկեբերանի է. և մեծարեն զկաթողիկոսն յընթեռնուլ. զոր և բացեալ եդիտ զոր խնդրէրն, զի էր պատմութիւնն Աղվանից. և էր ի նմա գրեալ ամենայն ճշդիւ զի առաջին եպիսկոպոս յԱղվանս ի սրբոյն Գրիգորէ՝ Հայոց լուսաւորչէն, լիներ ձեռնադրեալ ի խնդրոյ Ուռնայրի՝ Արքային Աղվանից. և կացեալ ի հնազանդութեան Հայոց աթոռակալացն զամս 440, ի Հայոց առին ձեռնադրութիւն Աղվանից կաթողիկոսքն, զի Հայոցն պատրիարք էր. և Աղվանիցն՝ արք եպիսկոպոս. և այս ի ժամանակս քահանայինդ կաթողիկոսաց Հայոց մինչ ի Տէր Աբրահամ։ Ապա մինչ ազմուկ լինէր ի մէջ աշխարհիս. և Յովհան ոմն ի բաժնին Յունաց հակառակաթոռ էր նստեալ, և վասն լինն դասուցն ի Յունաց խնդիր լինէր առ Հայս. և կիւրիոն՝ վրաց կաթողիկոս, վասն փառամոլ ախտի ի բաց եկաց ի Հայոց և քաղկեդոնիկ եղեւ։ Այնուհետեւ բաժանեալ ի բաց եկաց Աղվանիցն պատճառելով ևնա պատճառս ինչ։

Իսկ ի վախճանելն Աբրահամու և Յովհան-

նու նստի պատրիարք Հայոց Կոմիտաս. վախճանի և Աղվանից. ապա դարձեալ հնազանդին Աղվանք Հայոց և խնդրեն կաթողիկոս ի Կոմիտասայ զոր և ձեռնադրեացն իսկ յերկրորդ ամի հայրապետութեան իւրոյ։ Եւ այսպէս կացեալ ի հնազանդութեան զամս 85, ի ժամանակս եօթն կաթողիկոսաց Հայոց մինչ ի Տէր եղիա։ Ապա յաւուրս սորա էր կին մի ի տիկնութենէ Աղվանից Սպրամ անուն, առնէ իւր մերձաւոր և սիրող մի՝ Բակուր անուն, և խոստանայ նմա տալ պատիւ կաթողիկոսութեան. և ոչ իշխեաց առաքել ի Հայս զի մի խոտեսցեն. առնէ ժողով ի Պարտաւ և տայ ձեռնադրել զնա կաթողիկոս. որ և անուանեցաւ Ներսէս, և ունէր ի ծածուկ զԲակուրն։ Վասն որոյ երթեալ եղիայի կաթողիկոսի յԱղվանս արքունի հրամանաւ, և կալեալ զտիկինն և զԲակուրն, մերկացուցանէ և կապէ ընդ միմեանս և հեծուցեալ յէշ շրջեցուցանէ ընդ փողոցս Պարտաւայ. վասն որոյ անաւաղ լեալ Բակուր աւուրս ութ մեռանի։

Իսկ կաթողիկոսն եղիա ձեռնադրէ նոցա արքեպիսկոպոս, և առնու երդումն և դաշինս և ձեռնարկ գրոյ մեծամեծ նզովիւք յիշխանաց և յեպիսկոպոսաց և ի գլխաւոր վանականաց և յաւագ տանուտէրաց աշխարհին Աղվանից զի մի այլ ևս հետեսցեն և յետս կացցեն յաթոռակալաց արբոյն Գրիգորի. և ինքն գնաց յաշխարհն Հայոց։

Եւ այս այսպէս եկաց միաբանութեամբ զամս 137 յաւուրս չորեքտասան կաթողիկոսաց Հայոց մինչ ի Տէր Գէորգ Գառնեցին: Ապա ի գալն Բուղայի ամիրայի ի Հայս, և ի գերելն զՏէր Գէորգ կաթողիկոս եղև դառն և ազգի ազգի պղտորումն յաշխարհիս Հայոց և Աղվանից. և վախեաւ դրան եպիսկոպոսն Տեառն Գէորգեայ և եկն յԱղվանս Յօնան անուն: Եւ եղև վախճանել արքեպիսկոպոսին Աղվանից. և կաթողիկոսն էր ի գերութեան: Ապա միամտութիւն համարեալով նմա՝ ժողովեալ ձեռնադրեն զդրան եպիսկոպոսն զՅօնան կաթողիկոս Աղվանից: Իսկ ի դարձին Գէորգեայ ի գերութենէ ի ձեռն Համամայ՝ թագաւորի Աղվանից, տեսանէ զՅօնան՝ նոցին արքեպիսկոպոս, և հրամայէ կողոպտել ի բաց զզգեստս և զձև կաթողիկոսութեանն. վասն որոյ առաջի անկեալ Համամայ հայցէր զներումն:

Լուեալ ապա նմա վասն մեծի երախտեացն, և կրկին ձեռնադրէ զՅօնան արքեպիսկոպոս Աղվանից. և թողեալ անդէն դնայ յիւր սեպհական աթոռն: Իսկ ի վախճանելն Գէորգեայ, վասն դառն և ազգի ազգի անցից աշխարհիս յիմայէլականացն, ոչ կարացին հասանել առ հայրապետաքն Հայոց յԱղվանից. նմանապէս և անփոյթ լինէր ի Հայոց կաթողիկոսացն. զի ամենայն ոք միայն զանձին հնարս հայթայթէր գերծման յիմայէլական սրոյն: Ձեռնադրեն ապա կաթողի-

կոս Աղվանից յետ Յօնանու գնորին հարաւային Սիմէոն անուն, ապա գԴաւիթ, ապա գՍահակ, ապա գԳագիկ զայս, որ լինէր ամք 69 ինքնաձեռն և անձնիշխան թերակատար օծմանն նոցա: Ահա զայս ամենայն ընթերցեալ և իմացեալ և ծանուցեալ կաթողիկոսին Անանիայի, և այսու բանիւք սա լուեցուցեալ զդրաբան բերանս խոտորախօս արանց. և պապանձեցուցեալ զլեզու փառասիրակ և անձնահաճ մարդկան՝ յամօթ արար զամենեսեան: Եւ ծանեան իշխանքն գհաստատութիւն իրին, և ամենայնիւ հաւանեալ հնազանդեցան նմա: Իսկ նորա քննեալ զարժանն, նախ՝ ելոյծ ի պատուոյն գՅօնան իւր ձեռնադրեալն վասն բամբասանացն զոր յօգեալ էին, և ապա գԳագիկն: Բայց Գրիգոր իշխանն մեծաւ մաղթանօք հայցեր գԳագիկ կրկին ձեռնադրել, զոր ոչ պատշաճ համարեալ ուղղադատս և ճշմարտաքննին հայրապետին. զի կրկին ծնեալն վիժեալ լինի. և կրկին պսակեալն՝ անվաւեր կոչեցի:

Ապա հայցեցին դառնալ անդրէն ի Հայս. և մեք (ասեն) աստէն ընտրեցուք պատշաճագոյն այր և առաքեսցուք առ ձեզ զի ի քէն ձեռնադրեսցի առաջնորդ մեզ: Հաւատացեալ ապա հայրապետին՝ եկ ի տանէն Աղվանից և եկն ի տունն Սիսական ի քնակութիւնս սուրբ հայրապետանոցին ի Տաթև: Զոր և լուեալ եպիսկոպոսին Յակոբայ՝ գնայ յամուրն Բաղաց թաքուցա-

նելով զերեսս իւր, ըստ այնմ թէ փախիր և թաքիր առ ժամանակ մի մինչև անցանէ բարկութիւն Տեառն: Քանզի գիտէր զանիրաւաբարձ բարդուածն պէսպէս բասրանացն որ զօդեալ էին ի վերայ ինքեան, իբր զերկաթ ընդ փայտի, կամ զնդիկ ընդ ոսկւոյ: Իսկ իբրև եառս զայն Տէրն Անանիա՝ բազում աւուրս օթեալ անդր. և յոլով թղթովք և պատգամաւորօք հայցէր ի դուրս դՅակոբ ի ձեռացն Ջևանշիրի. և ոչ տայր ի դուրս: Ապա ոչ կարացեալ տևել ի տեղւոջն զի ձմեռնային էր ժամանակն. սաստիկ ցասմամբ բարկացեալ սուրբ կաթողիկոսին աւերեաց զտեղին և քանդեաց և չարաչար նզովիւք կապեալ կաշկանդեալ խառնեաց ի տուռւնս կապանաց զիշխանն և զեպիսկոպոսն. և անց, գնաց յիւր աթոռն:

Եւ ապա անդէն կալով՝ միշտ թղթագնացութեամբ ոչ կարաց հաւանեցուցանել զալ ի ծառայութիւն ինքեան Գագկայ Աղվանեցւոյ. վասն որոյ միայն ազօթիւք խնդրէր յԱստուծոյ զելս իրին: Եւ այս լինէր ի թուականին Հայոց 398. իսկ ի 407 թուականին Հայոց, իբր վերին ակնարկմամբն, վախճանեալ լինին երկոքինքն՝ Յակոբ՝ Սիւնեաց մետրապոլիտ և գլուխ ամենայն եպիսկոպոսաց Հայոց, և Գագիկ՝ Աղվանից արքեպիսկոպոս, որ և յետ գառնալոյն Անանիայի և սա ապաստամբեաց անզգամաբար և ստեաց յիւր ուխտէն: Վասն որոյ գուժկան հասեալ առ կա-

թողիկոսն ազդէր նմա. զոր և համարեալ նորա զայն ի սպրդելոյ պօղթիցն իւրոց լեալ՝ զոհանայր մեծապէս զՏեառնէ. և ոչ պատշաճ համարեցաւ զառ ի յիւրմէ աւերեալ աթոռոն առաքելական խափանել ի հայրապետական գլխոցն։ Այլ յուղի անկեալ գայր ի Սիսական աշխարհս յանբնակ տեղի եպիսկոպոսարանին Սիւնեաց. և հրամայ տայր ժողովիլ կրօնաւորացն և շինել զտեղին, և ինքն գնայր ի Կապան քաղաք։ Ընդ որում առաջ ելեալ բանագրեալ իշխանն Զևանշէր՝ մեծաւ զղջմամբ զմեղայ խոստովանէր. նմանապէս և եկեալ գահերէց իշխանն Սիւնեաց Վասակ՝ որդի Սմբատայ՝ որդւոյ Աշոտոյ. և նա գեղեցիկ խոստովանութեամբ զմեղայ կարդացեալ՝ ի միասին գթողութիւն յանցանացն (գտին). և տարեալ մեծապէս շքով հանգուցին յարքունական գահոյս ի Կապան քաղաքի։

Եւ ժողովեալ զամենայն արս խաչակրօն և ճգնազգեաց վանականաց՝ խնդրէին վերստին առաջնորդ ինքեանց, որոց լուեալ կացոյց յեպիսկոպոսութեանն Սիւնեաց զՎահան՝ որդի Զևանշիրի, որ էր առաջնորդ մեծի ուխտին Վահանու վանից։ Առնու ձեռնարկ և վճիռ պայմանի ի Վահանայ և յիշխանացն զի այլ ոչ ևս շեղեալ հեռասցեն ի սուրբ Գրիգորի աթոռոյն և ոչ արասցեն ընտանութիւն ընդ Աղվանից արքեպիսկոպոսացն. զի մի ծնանիցի սոյնգունակ զայթակ-

դուքիւն. և դյեակար մեծապայման վճռին փակեցին անագին և սոսկալի նզովիւք զի մի ոք իշխեսցէ յեպիսկոպոսաց գՅակոբայն գործել կամ խոկալ կամ խորհիլ ոճիրս. և յիշխանաց զի մի ոք իշխեսցէ այնպիսւոյն թեկն ածել և օգնական կամ ջատագով լինել. և թէ յանդգնի ոք յեպիսկոպոսաց՝ փուքթապէս ի ձեռս տայցեն կաթողիկոսին Հայոց. և մի լիցին դարան և ասպնջական նմա: Եւ կնքեալ զայս վճիռ իւրեանց մատանեաւ՝ եառուն ի ձեռս կաթողիկոսին զորս աւելորդ համարեցաք գրել. զի կան լիով գրեալքն ի գիրս թղթոցն, զոր ժողովեալ է սուրբն Անանիա, որ Հաւատոյ նամակ անուանի: Բայց էառ առ ժամայն զպատիւն ի տանէն Սիւնեաց, այսինքն զխաչն որ գառաջեաւ տանէին, և զգաւազանն բազմածախ և մեծագին և զբազմականն ոսկեթել զորս ընդ ինքեանց շրջեցուցանէին, զսահմանեալսըն առաջին թագաւորացն և հայրապետացն Հայոց: Եւ բարձեալ լինէր այս և պակասեալ մինչ ի Տէր Յովհաննէս՝ Սիւնեաց եպիսկոպոս, և ի Տէր Սարգիս՝ Հայոց կաթողիկոս:

Իսկ ի ձեռնադրութեանն Տէր Յովհաննէսի վերսաին եղև նորոգեալ ամենայն պատիւ և իշխանութիւն Սիւնեաց աթոռակալացն ի Տէր Սարգսէ՝ Հայոց կաթողիկոսէ, զոր յիւրում տեղւոջ ասացից: Իսկ ապա յետ այսր իրագործութեան գնայ կաթողիկոսն յԱղվանս ի հաստատել

զնոցայն աթոռակալութիւն. զկնի որոյ և գուժական հասանի ի թագաւորէն վասպուրականի և Արծրունի Գրիգոր կոչեցեալ եթէ վախճանեալ՝ ճնայ զին նորա քեզ. և դարձուցանեն անդրէն:

Լուեալ ապա զայն տէրանցն Աղվանից՝ Իշխանկայ և Սենեքերիմայ և միւս Սենեքերիմայ՝ որդւոյ Գրիգորոյ, զոր կանխաւ յիշեցաք, և Ջեւանշիրի և Գուրգենայ. և մեծաւ զղջմամբ զմեզայ կարդացեալ՝ առաքեն առ նա զԴաւիթ կրօնաւոր որ ի Մոտակերայ վանից, ձեռնադրել ինքեանց առաջնորդ. զոր և ընկալեալ Տեառն Անանիայի մեծաշուք պատուով ձեռնադրէ, և վարթամ ընծայիւք և առատաձեռն պարգեւօք յուղարկէ անդրէն յաշխարհն Աղվանից: Վասն որոյ գոհութիւնս և փառս վերառաքեցաւ յամենայն լեզուաց բարերարին Աստուծոյ որ այսպէս խափանեաց զմեծ պատերազմն եկեղեցւոյ, և արար խաղաղութիւն կեղեքեալ և տառապեալ ազգիս Հայոց. և զպատուական անդամն եկեղեցւոյ որ օձառեալ էին՝ վերստին միացոյց ի գլուխն գովելի ի մեծ պատրիարքն Հայոց, որ սրբոյն Գրիգորի են աթոռակալք:

Եւ արդ՝ յետ այսց պատերազմաց եթէ ոք խորհի կամ մտաբերէ ընդ այն կորստական շաւիղս ընթանալ և ի բաց կալ ի Հայոց կաթողիկոսացն, կամ Սիւնեաց եպիսկոպոս կամ Աղվանից արքեպիսկոպոս, զինչ և իցէ պատճառաւ բաց

ի հոգևոր վշասուց, եթէ հերձուած ինչ կամ անպատշաճ նորաձևութիւն երևեսցի, այնպիսին ի սուրբ երրորդութենէն նզովեալ լիցի, մասն և բաժին նորա ընդ հերձուածողսն և ընդ ուրացողս եղիցի. և ընդ սատանայի դատապարտեսցի: Ապա եթէ վշաս ինչ լմասցեն ի հաւատս կամ յեկեղեցի. և ճշմարտիւ սուտգեսցեն ի վերայ կաթողիկոսացն Հայոց. և կամ այլ արատ ինչ մեծագոյն և վշասակարութիւն, որ բազմաց խմորման և կորստեան պատճառ լինին, ինքեանք գիտասցեն զարժանն մինչև ուղղեսցի թիւրութիւնն և մաքրեսցի ամենևին:

ՃԻ.

Վասն Տեառն Վահանայ. եւ կատարածի կենաց նորա:

Զեռնադրեալ Տեառն Անանիայի զվահան ի վանան Յովհաննու եպիսկոպոս Սիւնեաց, էր և ի հրամանս նորա մեծ եպիսկոպոսարանն Տաթևի, որ և սակաւ մի անդ բնակէր և զայլ աւուրսն յիւր սեպհական տանն: Եւ վասն աւերման տեղւոյն բազում պայծառութիւնք շինեալ լինէին և բազում բարեկարգութիւնք խափանեալ ի բազում աւուրս. և յոլով ժառանգութիւնք պակասեալ և յափշտակեալ յեկեղեցւոյն՝ ի մեծ մայրաքաղաքէն Տաթևոյ, զոր և առ սակաւ սակաւ անդրէն դարձուցանէին իշխանքն ի ժամանակս

(ժամանակս)։ Որպէս և աստուածասէր տէր Սմբատ՝ Սիւնեաց իշխան, որդի Սահակայ՝ որդւոյ Աշոտոյ և եղբայր մեծ Սմբատայ, զարձոյց անդրէն զգիւղսն Ծածարդ և զՀաժիս ի սուրբ եկեղեցիսն ի ձեռն Տեառն Վահանայ. և զրէ զվճիռ պայմանին իւրով ձեռամբն այսպէս։

«Յանուն Աստուծոյ վասն արարեալ հաստատութեան առաւել առաջին գրոյն որ մեր հարցն առեալ էին աստուածապատիւ և հոգևոր եպիսկոպոսացս Սիւնեաց, ես Սմբատ՝ որդի տեառն Սահակայ, եառ զՀաժիս և զԾածարդ որ սակաւ մի յափշտակեալ էին ի տանէս, յաստուածապատիւ և հոգևոր Տէրս Վահան և յաստուածաբնակ, ի լուսաճեմ եկեղեցիս Տաթևոյ յայս պայմանիս որ զառաջնոցն յիշատակն նորոգեն. և զիս ևս յիշեն ի սուրբ և ի մաքրափայլ յաղօթս իւրեանց և մեր մեղացն թողութիւն խնդրեն։ Եւ յետ մեր մի ոք այլ յանդգնեսցէ յափշտակել զոսա ի տանէն, մի ի մերոց և մի յօտարաց. և թէ յանդգնին՝ Յաստուծոյ ամենակալ բերանէն ընդ սատանայի և ընդ օձին նզովեալ եղիցին. և մասն և բաժին ընդ Յուդայի և Կայենի և Արիոսի եղիցի»։ Գրեցաք և կնքեցաք մերով մատանեաւս ի թուականիս 412։ Իսկ Վահան կեցեալ յեպիսկոպոսութեանն ամս 6. ապա հասանէ վախճան կաթողիկոսին Հայոց Տեառն Անանիայի. փոխեն զնա ի հանգիստ ի վանսն Արգինայի. և թագա-

ւորն Աշոտ՝ որդին Սմբատայ, առնէ ժողով եպիսկոպոսաց և հարց սրբոց ի թագաւորանիստն Շիրակվանա կոչէ և պվահան ի Սիւնեաց. և հրամայէ ընտրել զմի ոք յեպիսկոպոսացն և կացուցանել յաթոռ հայրապետութեան Հայոց:

Ապա ամենայն ժողովոյն ընտրեալ զվահան վանն առաւել սրբութեանն և իմաստութեանն՝ դնեն ձեռն ի վերայ բազմութիւն եպիսկոպոսացն և օծանեն զնա կաթողիկոս Հայոց. որ և կեցեալ ամ մի՝ սկսաւ պատկերս բերել ի վրաց և դնէր ի վերայ սեղանոյն. և հրամայէր յամենայն եկեղեցիս զնոյն առնել, ըստ Հոռոմոց սահմանին կաւնիւք զարդարել եւ առանց կաւնի ոչ առնել պատարագ: Վասն որոյ կարծիս իմն առեալ ամենեցունց եթէ դաշնապիր է ընդ Յոյնս. և կամի սպրդել յեկեղեցի զաղանդ նոցին, բողոք բարձին առ թագաւորն. և նա հրաման տայր ժողովոյ յԱնի քաղաքի զի քննեսցեն զարժանն: Իմացեալ զայն վահանայ ոչ եկաց ի ժողովն. այլ եւ, գնաց յաշխարհն Վասպուրական, առ Համազասպ՝ որդի Գագկայ թագաւորի. և հաւանեցոյց զնա ինքեան, և զրպարտեալ առէ զինքն ի նախանձաւոր արանց. և բնակեցաւ ի վանսն որ կոչի Զորոյ վանք:

Իսկ նոքա որ յԱնի ժողովեցան, իբրև գիտացին զերթն նորա. ապա հրամանաւ Աշոտոյ թագաւորի կարգեցին ի տեղի նորա զայլ ոմն

կաթողիկոս և լուծին զվահան։ Եւ այսպէս կեցեալ քաւրեշ ի տեղի քաւրեշի՝ Ստեփաննոս յԱնի, և վահան ի վաստուրական զամպ երկու. և լցին նզովիւք զմիջոց աշխարհիս մինչև վերին ակնարկմամբն ի միում աւուր երկոքինքն բարձան ի միասին. և վահան եդաւ անդէն ի վանան Զորոյ, առ պրան եկեղեցւոյն ընդ այլ կաթողիկոսունքն որք կային անդ։ Իսկ յաթոռն Հայոց զարժանաժառանգ այրն զՏէր Յակիկ՝ հարազատ արեան տեառն Անանիայ, նստուցին հայրապետ։

ԾԴ

Եպիսկոպոսք Սիւնեաց որ կարգեցան զկնի Տեառն Վահանայ։

Յետ վահանայ նստուցանեն ի տեղին եպիսկոպոս զայրի երէց մի Աշոտ անուն վանն առաւել ճգնութեանն և խոհեմութեանն. զի էր սիրեցեալ յաչս իշխանացն և երևելի ամենայն գաւառին, զոր և ձեռնադրեաց նոյն վահան կաթողիկոս։ Եւ ունէր այս Աշոտ եպիսկոպոս որդի մի Յովհաննէս անուն զոր անուցանէր մեծաւ զգուշութեամբ։ Եւ հասուցեալ յարբունս այրուժեան հասակին, պարկեշտ և սրբակրօն, պատշաճագեղ և հանճարեղ. զոր և եառն ձեռնադրել եպիսկոպոս Սիւնեաց։ Եւ հայրն նորին Տէր Ս-

շոտ կալեալ զաթոռն ամս 17՝ յանձն արար որդ-
ւոյն իւրոյ Տեառն Յովհաննիսի. և ինքն աղօ-
թից պարապեաց։ Իսկ Յովհաննիսի կացեալ ամս
վեց և կէս՝ վախճանի, և բռնադատեալ գհայրն
նորին զՍիւնոտ կացուցանեն ի նոյն աթոռ, որ և
կեցեալ ամս հինգ և կէս՝ վախճանի։ Զկնի սորա
զՏէր Սամուէլ՝ այր հեզ և բարի որ և եկաց ամս
հինգ և փոխեցաւ մահուամբ։

Ապա ընտրեն զայր մի լաւ և յոյժ պիտա-
նի անեալ սրբութեամբ և կուսութեամբ Յակոբ
անուն, և կացուցանեն զնա յաստիճան եպիսկո-
պոսութեան Սիւնեաց։ Յաւուրս սորա վախճա-
նի Սմբատ՝ Սիւնեաց տէր, որդի Սահակայ, եւ
դնի ի հանգիստ յեպիսկոպոսարանին Տաթև։ Այս
Սմբատ թագ կապեալ ինքեան թագաւորեաց. և
բարեպաշտ կին սորա սուրբ թագուհին Շահան-
դուխտ և որդիք իւր Վասակ և Սևադայ եառն
ի սուրբ եկեղեցին 6000 դրամ և զգիւղն Տեղ
որ ի Համբանդ գաւառի, զոր իւր իսկ Շահան-
դըխտոյ ի կորդոյ ընեալ էր, վասն հոգեաց բա-
րեպաշտ և աստուածասէր թագաւորին Սմբա-
տայ։ Եւ մեծամեծ նզովիւք գրեցին զվճիռն զի
մի իշխեսցէ ոք խախտել, որ է այսպէս։

«Յանուն Աստուծոյ կամ եղև ինձ Շահան-
դըխտոյ՝ դստեր Սևադայի, տալ ի Համբանդ գա-
ւառի զանուանեալ շէնդ զՏեղ իւր ամենայն բո-
լոր սահմանովք, լերամբ և դաշտիւ և այլ մտիւք,

դոր իմ թադաւորին Սմբատայ ինձ տուեալ էր, և իմ ի կորդոյ շէն դրեալ. և ես յետ ելից երանելի թադաւորին իմոյ յաստեացս՝ իւր հոգւոյն ի Տաթև ի սուրբ մայրաքաղաքն և ի սուրբ նշանն հաու ի ձեռն Տեառն Յակոբայ՝ Սիւնեաց եպիսկոպոսի. և յայսմհետէ անիշխան եմք ես և իմ որդիքս վասակ և Սևադայ, զի ի ձեռն Աստուծոյ եմ տուեալ և ի սուրբ նշանս. և պարտական են յամենայն տարի իմ թադաւորի հոգւոյն զվարդավառին քառասունսն պատարագ առնել և յամենայն օր զերանի ում թողութիւն տաղմոսն տալ ի նոյն քառասունսն: Արդ՝ սուրբ հայրապետք՝ որ յաթոռ յաջորդիք, պարտական էք զայդ անխափան կատարել, և զշէնդ ազատ յամենայն հարկաց ուտել. Աստուած ընդունելի արասցէ: Արդ՝ թէ ոք ի մեր զաւակաց կամ յայլ օտարաց կամ յաւագաց, ինչ և իցէ պատճառաւ, զկնի մեր անցման զայդ շէնդ գՅեղ հանել խորհի ի Տաթևոյ և կամ հակառակ կալ մեր հոգւոյս և կամ չար և կամ այլ ինչ արքունի հարկ ի վերայ դնել, այնպիսին զիւրն մի վայելեսցէ, եւ ամենայն չարագործաց մեղացն պարտական եղիցի, ընդ Յուդայի և ընդ Պիղատոսի դատեսցի. ընդ նեռին անիծեսցի, յանշէջ հուրն տանջեսցի, և յ318 հայրապետացն նզովեալ եղիցի: Եւ (եթէ) տաճիկ աւազութիւն լինի. և յափշտակել ջանայ, յիւր հաւատէն և յիւր վերադարձէն, որ յառա-

ջին մարդէն մինչ ի յեաինն լեալ են և լինին, նալաթ եղիցին. երկինքն նմա հուր ցօղեսցէ, և երկիրս նմա փուշ և տատասկ բուսուսցէ, և անուն նորա և որդւոց և սիրողաց իւրոց կորիցէ և չնչեսցի յերկրէ. և յիշատակ նորա այլ մի՛ ևս երևեսցի:

Եւ վասն առաւել հաստատութեան գրեցի իմ ձեռօքս զայս վճիռս ես Վասակ՝ որդի Սմբատայ թագաւորի, հրամանաւ իմ մօրս. Աստուած շնորհաւոր արասցէ. ի թուիս Հայոց 447. և կնքեցաւ մերով մատանեաւս: Այս պատուէր հրամանի է իմ Յակոբայ ի տունդ Սիւնեաց առ նախագահ աթոռդ և լուսաճեմ տաճարդ Տարեհւոյ յոր յոյս եդ երանելի թագաւորն մեր՝ զի պարտիք անխափան կատարել զեղեալ յիշատակս և քառասունս նորա որ վասն շինոյն Տեղայ. որում և մեք վկայեալ մերով ձեռագրովս՝ կապեցաք անլուծանելի կապանօք զհակառակողսն այսմ, և կնքեցաք մերով մատանեաւս ի կամս Աստուծոյ: Շնորհիւն Աստուծոյ և ես Գրիգոր՝ Սիւնեաց եպիսկոպոս, հաստատեցի զայս վճիռ որ վասն Տեղոյ շինոյն էր տուեալ սուրբ թագուհւոյն Շահանդխտոյ ի սուրբ եկեղեցիս և որդւոյ իւրոց յաղագս խաղաղարար և վայելուչ թագաւորին իւրեանց Սմբատայ. զի մի ոք իշխեսցէ խախտել ի սուրբ աթոռոյս. և որ հակառակի, ընդ Սիմոնի կախարդին գիշամահ սատակեսցի.

և յԱստուծոյ և յամենայն սրբոց նզովեալ եղիցի. և զյիշատակ նորա որ կարգեալ են ի տօնս անխափան կատարեսցեն:

Եւ արդ այս Յակոբ կեցեալ ամս սակաւ վախճանի. զսա կարծեմ ապանեալ դաւաճանութեամբ Յուրացեացն ի վերայ խոռոյն Յուրայուր կայ դերեզման նորին, յորում բժշկութիւնք լինին: Յետ Յակոբայ յաջորդի ի տեղին Գրիգոր որ էր ամենայնիւ պայծառացեալ ըստ ներքին մարդոյն և ըստ արտաքին. սա և բազում արար գործ երևելի ի տան հայրապետանոցին, և քակեաց զանիծաբնակ քարն Յուրայ և բնաջինջ յատակեաց. սա էառ հոգեցատուր ի Փարաջոյ՝ Զագիկ իշխանի որդւոյ, զիոլորաքարն իւր ամեն սահմանովն բաց ի Նորեաց վանից բաժնոյն, զոր յետոյ էառ միւս Տէր Գրիգորն ի Դլենէ՝ Խաղբակայ որդւոյն. և է վճիռն Փարաջոյ այսպէս:

«Յանուն Աստուծոյ այս իմ ձեռին գիր է Փարաջոյ՝ որդւոյ Զագկայ իշխանի, որ կարգացաք զառաջնոց գիրն և վերստին հաստատեցաք զիոլորաքարն իւր սահմանօքն որ էր իմ սեպհական ժառանգութիւն, ի Տաթևոյ սուրբ եկեղեցիքս և ի Տէր Գրիգոր. զի յառաջն նոցա հաստատած հայրենիք էր. և սակաւ ժամանակօք հեռացեալ էր վանն խանգարման եպիսկոպոսացն. մեք վերստին հաստատեցաք զնոյն այգւով և

ծառով և անկով, հողով և ջրով ի Տաթևոյ սուրբ մայրաքաղաքս, ի սուրբ նշանս և ի սուրբ առաքեալս ի ձեռն Տեառն Գրիգորի՝ Սիւնեաց եպիսկոպոսի: Եւ եառ զայս իմ կամաւորութեամբ, ոչ ի հարկէ, ոչ յաւազակ բռնութենէ, ոչ յարբեխութենէ. այլ երկուցեալ յառաջին հայրապետացն և իշխանացն ի սոսկալի նզովիցն՝ եառ իմ սրտի սիրով վանն իմ յոգւոյս փրկութեան. և դուք աստուածարեալ աեարք և սուրբ ժողովք՝ զիմ անառէր և զմեղուցեալ ոգիս ալ մոռանայք, այլ յիշման և աղօթից արժանի արարէք: Եւ թէ ոք այս արուցս խափանման կամ խանգարման պատճառ լինի և զիմ հոգիս զրկէ, և ոչ պատկառի յառաջնոցն նզովից և ի մեր՝ նզովեալ լիցի նա յամենասուրբ Երրորդութենէն և ամօթալից ելցէ յիւրում դատաստանէն. և ման զՅուդայինն առցէ» Եւ վանն հաստատութեան սորա եդաք ի վերայ զմատանի աստուածապսակ թագաւորին վաստակայ և զսուրբ հայրապետիս մերոյ զՏէր Գրիգորի:

Յետ այսր և կեցեալ Տեառն Գրիգորոյ սակաւ ժամանակս՝ փոխի յաստեացս. և յաջորդի ի տեղին բազմերջանիկ և յոգներանեան այրն Աստուծոյ, կրկին լուսաւորիչն և երկրորդ նորոգողն նուաճեալ տանն այնմ և բոլոր աշխարհիս Սիսական Տէր Յովհաննէս, որ եկաց բազում աշխատութեամբ և երևելի փառօք ի սուրբ աթոռն

աւելի քան զ50 ամ, յարենառու ազգակցութենէ անտի Տեառն Սարգսի՝ Հայոց կաթողիկոսի. զորոյ զգործս և զբանս յիւրում տեղւոջ ասացից. բայց այժմ պարտ վարկանիմ դառնալ անդրէն և սակաւ մի ցուցանել և զիշխանացն հանգամանս:

ԾԲ

Համառօտ գրոյցք. եւ կարգ իշխանացն. Սիւնեաց եւ բազաւորել նոցին ի վերջին ժամանակս:

Առաջին սկիզբն Սիւնեաց իշխանացն, զորս ըստ կարգի ծանեաք և եդաք ի մատենիս, Յանդոկայ սկսաք մինչ ի վերջինն Քուրդոյ, և ապա անծանօթ մնացաք երկուց կամ երից իշխանաց. իսկ դարձեալ եղեն գահակալ իշխանք Սիւնի, առաջին՝ Վասակ որ էր մեծ նահապետ Սիւնեաց. և ապա երկու որդիք նորա Փիլիպպէ և Սահակ և միւս իշխանն Գրիգոր ի նոյն ցեղէ, որ ունէր ժառանգութիւն ի սեպհական հայրենեացն: Եւ զի ի ցեղէ հայկական յոլովք էին զարմք և ազինք. բայց մեզ վայթ զգլխաւոր գահակալ իշխանացն միայն էր. վասն որոյ և տարժանեալ գտաք և կարգեցաք ասացն:

Յետ վասակայ բաժանեն զհայրենի ժառանգութիւն իւրեանց երկու որդիքն՝ Փիլիպպէ եւ Սահակ. եւ լինի Փիլիպպէ գահերէց իշխան Սիւ-

նեաց. և առնու Սահակ բաժին զգաւառն Գեղամայ բոլոր։ Մեռանի Փիլիպպէ և թողու երիս որդիս՝ զԲաբգէն, զՎասակ և զԱշոտ։ Յետ սակաւուց մեռանի և Սահակ ի պատերազմի Հալ ամիրային յեզր Հուրազդան գետոյն մերձ Կաւակերտոյ աւանին. և թողու ժառանգ ինքեան զԳրիգոր՝ որդի իւր Սուփան կոչեալ։ Իսկ յետ աւուրց վանն գոյզն պատճառի ի վերայ հայրենեացն՝ պատերազմին ընդ իրեարս Բաբգէն՝ երէց որդի Փիլիպպէի, և Գրիգոր՝ որդին Սահակայ. և հարսանեալ Բաբգէնի զԳրիգոր դիաթաւալ կացուցանէ. վասն որոյ և զկայենին ժառանգելով բաժին, և նա փութապէս չնչի ի կենաց թողլով որդի մի վահան անուն։ Եւ Փիլիպպէ պայազատէ զտէրութիւնն. իսկ Գրիգոր թողեալ երկուս որդիս զՎասակ, որ Գաբուռ կոչիւր, և զՀրահատ։ Բայց էին և նորա երկու եղբարք՝ Հրահատ և Գագիկ։ Պայազատէ զտէրութիւն նորա Վասակ Գաբուռ, որ և փեսայացաւ Աշոտոյ Բագրատունւոյ որ առաջ և թագաւորեաց Հայոց. եւ առ կին զդուստր նորա զՄարիամ։ Իսկ Փիլիպպէի վախճանեալ՝ թողու ժառանգ զԲաբգէն որ և մեռաւ, և զՎասակ որ և Իշխանիկ կոչիւր, և Աշոտ։ Մեռանի և Վասակ. և պայազատէ զտէրութիւն նորա Աշոտ՝ եղբայր իւր։ Սա կեցեալ բազում աւուրս՝ մեռանի և թողու չորս որդիս՝ զՄմբատ, զՍահակ, զԲաբգէն, զՎասակ. և բա-

ժանեալ զժառանգութիւնս իւրեանց՝ առնու Սմբատ զվայոց ձոր բոլոր և զՇահապաւնան որ է Ճահուկ գաւառ։ Իսկ Սահակ և այլքն՝ զՍիւնիս և զԲաղս և զայլսն։ Եւ ապա էր մեծ վասակայ որդի մի Փիլիպպէ անուն, որ ունէր զՇնհէր և զՀամբանդ։

Մեռանի և վասակ Գաբուռ՝ որդի Գրիգոր Սուփանայ և թոդու երիս որդիս՝ զԳրիգոր որ և Սուփան կոչեցաւ, և զՍահակ և զՎասակ. և պայազատէ զտէրութիւն նորա Գրիգոր Սուփան որ և աստուածային լիմն տեսչութեամբ պարապէը շինութեան եկեղեցեաց և հոգևոր գործոց։ Իսկ Սմբատայ եղբայրն կրսեր վասակ մեռանի ի պատերազմին Գողթան ամիրային առ ամրոցին Երնջակայ. և ինքն Սմբատ առեալ զդահեբէց իշխանութիւնն՝ բազում ցուցեալ գործ գովելի հոգևոր և մարմնական վախճանի և թոդու ժառանգ իւրոյ պայազատ տէրութեան զորդի իւր Վասակ։ Իսկ Սահակայ՝ եղբօր Սմբատայ, էր որդի Սմբատ անուն. մեռանի Սահակ և առնու զիշխանութիւնն իւր Սմբատ՝ որդի իւր։ Էր եւ ի Բաղս իշխան մի ի սոյն ցեղէ Ջեւանշէր անուն՝ որդի Զագկայ իշխանին։ Իսկ Գրիգոր Սուփան յետ բազում քաջութեանց և երեւելի գործոց մեռանի զեղակուր ի Նորայ. և պայազատէ զտէրութիւն նորա Վասակ՝ եղբայր իւր։ Մեռանէր և Սահակն. զնէր ի գրան Նորատուսայ եկե-

ղեցւոյն: Իսկ վասակ՝ որդի Սմբատայ, յետ բազում իշխանութեանց և գովելի գործոց մեռանի. և տիրեր համագունդ աշխարհիս Սիսական Սմբատ՝ որդին Սահակայ, գահերէց իշխանութեամբ:

Այժմ լուր ինձ և պատմեցից քեզ ոմ պատուական ընթերցող՝ զպանծալի բանից լուրսդի սեռս Սիսակայ որ ի Հայկայ, երբեմն խառնեալ էր ընդ թագաւորական ցեղն Արշակունի և Պահլաւիկաց, և երբեմն ընդ Խազրաց թագաւորութեանն, և հուսկ յետոյ՝ ընդ Բագրատունիսն, բայց երբեք ոչ ըմբռնացան ի հայրենի տէրութեանցն: Իսկ յետ յոլով ժամանակաց մինչ դուռն բացին նախ՝ Արծրունիքն, և թագ կապեցին ընդդէմ Սմբատայ՝ Հայոց թագաւորի, թագ կապեաց և Աար-Ներսէհ՝ վրաց բդեաշխն. թագ կապեաց և Աղվանին Համամ: Մեծարէ Ափշինն զվասակ Սիւնի թագ կապեալ. և նա ոչ կամեցաւ ապստամբական անուն ժառանգել: Ապա ի նուազել տէրութեանն Բագրատունեաց, և ի զօրանալ ձեռինն իսմայէլականի՝ հաստեալ, բարժանեալ եղեն ամենայն գահք գլխաւոր նախարարացն Վասպուրականին և Վրացին եւ Աղվանին և Զորոյգետացիքն որ Կիւրիկեանքն կոչին, նաև կարուցն և Վանանդայն որ Բասեանք կոչի:

Ապա Սմբատ՝ որդի Սահակայ՝ որդւոյ Աշոտոյ, որ ունէր կին զդուստր Սևադայի՝ մեծ և

փառաւորեալ իշխանին Աղվանից, Շահանդուխտ անուն. և առեալ էր զթոռն իւր՝ զդուստր վասակայ, որդւոյ իւրոյ որ զկնի իւր թագաւորեաց, զկատարամիզէ կին Գագկայ թագաւորի՝ որդւոյ Աշոտոյ, որ և շինեաց զսխրատեսիլն և զհրաշաձև եկեղեցին ի յԱնի զմեծ կաթողիկէն, յարեալ իմեծ Աթաբակն որ էր ի Թավրէժ յԱտրպատական աշխարհի, նաև յՈհնայ ամիրային, որ իշխէր և դրանն Դարբանդու, ևս և Աղվանից տէրանցն, որք վասն առաւել սիրոյ ծանուցանեն մեծի սուլտանին Մորասանու, և հրաման առեալ ի նմանէ թագ կապեն դեղեցկահասակ և վայելչադիտակ առնն հայկազնոյ Սմբատայ՝ Սիւնեաց տեառն։ Եւ զի յայնմ ժամանակի բագրատունիքն իշխէին միայն Շիրակայ և Այրարատու մինչ ի Դեղամ և մինչ ի յՈւխտիսն և մինչ ի կարին և մինչ ի վասպուրականի սահմանն և մինչ ի Զորոյ գետն և մինչ ի Գարդման. և Սիւնիք կարեալ էր ի նոցանէ. վասն որոյ ոչ ինչ քրէական մեղս համարեցաւ Սմբատ. զի թէ բագրատունիքն (որք) գերութեամբ լինն ածեալ էին Հրաչէէ՝ այնմ արժանի գտան, ապա քանզի և առաւել սոցա անկ էր որ ի Հայկայ երևելի հարազատութեամբ որդիք զհարս փոխանակելով՝ ընդիկ տէրութեամբ եկեալ, հասեալ էին մինչև ցայժմ։ Արդ՝ թագ կապեալ Սմբատայ ճոխ և երևելի փառօք յարդարեր զարքայութիւնն ըստ

օրինի ինքնակալ թագաւորաց։ Եւ յետ բազում ճոխութեանց և երևելի արքունական գործոց վախճանի, և դնի դին նորա ի մեծ սրբարանին և յաստուածաբնակ աթոռին Տաթևոյ, բազում և աշխարհագումար հանդիսիւ։

Եւ պայազատէ զտէրութիւն նորա մանուկ որդին իւր Վասակ, որ և սա մեծահանդէս ժողովով և ազատակոյտ բազմութեամբ օծանի թագաւոր Սիւնեաց և Բաղաց ձեռամբ Տեառն Գրիգորի՝ Սիւնեաց եպիսկոպոսի։ Եւ զեղբայր իւր զՄեւադայ կացուցանէ իշխան իշխանաց ազատակոյտ զօրաց իւրոց։ Բայց մայր սոցին երանելի թագուհին Շահանդուխտ կայր կենդանի։ Ապա սա շարժեալ աստուածային ին ակնարկմամբ շինէ զգեղեցկայարմար և զվայելչադիտակ վանն Վաղատնոյ որ էր ի վաղուց հետէ տեղի ուխտական արանց, զի եկեղեցի մի էր անդ ի հին ժամանակաց յանուն սրբոյն Գրիգորի լուսաւորչին, զոր և կարծեմք նորին հիմնարկեալ, եւ յետոյ շինեալ ի Սահականնոսէ հօրէ և ի սուրբ ճգնաւորէ. և առնէր բժշկութիւն խածելոց ի թիւնաւոր օձից, որպէս Փարբւոյն որ զկատաղի ցաւն անբժշկելի բուժէ ի մարդոց և յանասնոց։ Զսորայս և այժմ իսկ տեսանեմք անպատմելի հրաշս. զի զհարեալսն ի թիւնաւորաց և զսեւացեալսն և զուռուցիկսն մերձ ի պայթել, հանեն ի բարձրաւանդակ լերինսն և ցուցանեն զվանսն.

և կամ սակաւ մի հող եկեղեցւոյն հասուցանեն, առ ժամայն լուծումն առնէ մակարդեալ թիւնիցն, և փութապէս բժշկէ։

Վասն որոյ շինեալ մեծ բարեպաշտուհւոյն Շահանդխտոյ կռփածոյ քարամբք եկեղեցի յանուն սրբոյ նախավկային Ստեփաննոսի ի 449 թուականին Հայոց. և կարգէ ի նմա տուն կրօնաւորաց և բազմամբոխ պաշտօնէից։ Շինէ եւ տուն աղօթից կրաշաղախ վիմօք ի դրան եկեղեցւոյն, և համբարանոցս և գործատունս. և շուրջ պարսպէ զվանքն. և որոշէ նմա անդաստանս ի վաղատնոյ և տայ զԻոմեր ագարակ ի վանսն. և պայծառապէս զարդարէ զեկեղեցին զանազան զարդուք։ Եւ ինքն վախճանեալ դնի ի դրան այնր սրբարանի։ Ապա յետ ամաց ինչ ի 455 թուականին Սեւադայ՝ որդի նորին Շահանդխտոյ՝ եղբայր Վասակայ Թագաւորի, շինէ և մեծածախ աշխատութեամբ եկեղեցի մի յոյժ պայծառ և գեղեցկայարմար, զմբէթայարկ յանուն սրբոյ կարապետին, և գաւիթ ի դրան նորին. որք և կան հանգուցեալ ի դրան նորին. որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի. և վարձս բիւրապատիկ ի Քրիստոսէ Աստուծոյն մերոյ։

ԺԲ.

Վասն եպիսկոպոսութեան Տեառն Յովհաննիսի եւ գործոց նորին։

Յետ վախճանին Տեառն Գրիգորոյ՝ Սիւնեաց եպիսկոպոսի, ընտրեն զերջանիկ և զփառաւորեալ այրն Աստուծոյ զՅովհաննէս, որ կարծեմք ի զարմից գոլ Տեառն Սարգսի՝ Հայոց կաթողիկոսի։ Եւ բարեպաշտ և աստուածասէր թագաւորն Սիւնեաց և Բաղաց աշխարհիս վասակ առաքէ զնա ազատ արամբք և մեծամեծ պատուագօք յԱնի առ սուրբ հայրապետն Հայոց Տէր Սարգիս զի ձեռնադրեսցէ եպիսկոպոս Սիւնեաց. և հայցէ ի նմանէ շնորհել վերատին զաստիճան մեթրապօլտութեան և զպատիւն զոր ունէին՝ զխաչն որ առաջի ընթանայր և զգաւազանն եւ զբազմականն զոր բարձեալ էր Տէր Անանիա վասն գայթակղելոյն Յակոբայ։ Եւ թագաւորն Գագիկ փեսայացեալ էր սմին վասակայ թագաւորի. և էր թագուհին կատարամիդէ դուստր սորա, որ և հանդիսանայր շինութեամբ երկնաճեմ առագաստին սրբոյ կաթողիկէին։ Յուղարկեալ էր և նոցա արքունի ընծայս, և գրով ծանուցեալ զխնդիրն ի կաթողիկոսէն. վասն որոյ և թախանձեալ Գագկայ և սուրբ թագուհին կատարամիդէ զհայրապետն՝ տան ձեռնադրել մեծահանդէս շքեղութեամբ զՏէր Յովհաննէս մետրա-

պօլիտ Սիւնեաց։ Եւ ընձեռէ նմա հայրապետն դահպհական խաչն Սիւնեաց և գոսկէտառն վառն և զմեծագին զաւազանն և զպատուական գահոյս բազմականին, զոր պահեալ էին ի սենեկին արքարանի հայրապետանոցին։ Եւ նորոգեն զասաիճան և զպատիւ մեծի և առաքելական աթոռոյն Սիւնեաց ըստ առաջնոյն օրինի։

Եւ ապա արձակեն զնա մեծապատիւ ճոխութեամբ և երևելի փառօք յիւր աթոռն՝ ընկալեալ և բազում պարգևս ի թագաւորէն և ի թագուհւոյն, նաև մասն ի փրկական փայտէն պնդեալ յոսկւում զոր առաքեալ էր նոցա ինքնակալ կայսրն Յունաց Վասիլ ծիրանածին, որ ունէր յինքն նիշ ներկուածի արեանն Յիսուսի, յորմէ անագին զօրութիւնք և մեծամեծ հրաշք երևէին։ Եւ այնպէս եկեալ անկշիռ պարգեւօքն ի սեպհական աթոռն Սիւնեաց։ Ընդ որում ընդ առաջ ելեալ թագաւորն վասակ իշխանակոյտ բազմութեամբ և մեծարգոյ շքեղութեամբ ընդունէր. և ոչ սակաւ լինէր խնդութիւն ի մէջ նոցա։ Իսկ սուրբ մեծապօլիտն առատ վարդապետութեամբ եւ քաղցր բանիւ լուսաւորէր և մխիթարէր զիւր հաւատացեալ հօտն։ Ապա այնուհետև սկսաւ փարթամանալ և պայծառանալ տունն այն (առաւել) քան զառաջինն. և զամենայն յափշտակեալ ժառանգութիւնսն անդրէն դարձուցանէին. քանզի Մաքենոցացիքն զԳեղաքունի էին յափշտա-

կեալ, և ումն մի զվայոց ձոր, և եպիսկոպոս նստեալ. և ումն մի՝ զերկնչակայ գաւառն, և անդ նստեալ եպիսկոպոս յերկնչակայ վանքն. և Գողթնացիքն՝ զբոտեձորն և զԲուսա և զՕրդուսատ: Նմանապէս և իշխանքն զդեղանն էին բաշխեալ ազատաց իւրեանց, զորս շրջաբերական թղթովք Տեառն Սարգսի, որ ահագին նզովիւք փակեալ էր զի մի ոք իշխեսցէ յանդգնիլ ի հերքուածն յայսմ վիճակիս. այլ զբովանդակն ի սեպհական աթոռն դարձուսցեն ի սուրբ նշանն և ի Տէր Յովհաննէս, դարձոյց անդրէն և հնազանդեցոյց ինքեան եւ հերքեալ հալածեաց զօտար և զդայլայեալ հովիւսն:

Որում աջակցեալ բուռն զօրութեամբ բարեպաշտ թագաւորն Վասակ դարձուցանելով անդրէն զյափշտակեալ հոգեցատուրսն զգեօղն Յաւդունի և զԳողեվանն, նաև զբոլոր վիճակն իւրոյ տէրութեանն. եւ գրէ իւրով ձեռամբն նամակ վիճակիս այսպէս. «յանուն Աստուծոյ այս իմ հրամանք է Վասակայ թագաւորիս որ գրեցի ի 468 թուականիս. և եառ իմ Աստուծոյ փոխանիս Տեառն Յովհաննիսի զի յորժամ ընդարեաց Աստուած զսա յորովայնէ որպէս զմեծ կարապետն. և շնորհեաց մեզ այցելու որ և լուսաւորեաց զամենեսեան այնքան զի երանեցաք ամենայն վիճակեալքս սորա յամենայն աշխարհաց. ապա դարձուցաք զՅաւդունի գիւղն և զԳողեվան

ի սուրբ քաղաքն Տաթև զոր յառաջ յետս էաք առեալ վասն խանգարման և խափանման հայրապետանոցին. և այժմ վերստին հաստատեցաք. ընդ նմին և զբոլոր վիճակս որ ըստ երկոտասան գաւազանացն անդրէն դարձուցաք և հաստատեցաք զՎայոց ձոր, զԳեղաքունիք, զՓորակն, զՀամբանդ, զՋուղայ, զերկնչակ։

Յայսմհետէ մինչև յաւիտեան չունի ոք հրաման յԱստուծոյ ամենակալէն և յամենայն սրբոց հակառակ կալ այսմ աթոռոյ կամ յափշտակել չանալ զայս շէներս և զգաւառքս. և թէ յանդգնին՝ յԱստուծոյ և ի սուրբ հայրապետացն հոգւով և մարմնով նզովեալ եղիցին»։ Գրեցաք և կնքեցաք մերով արքունական հրամանաւ և մատանեաւ ի կամս Աստուծոյ։ Ես Սմբատ իշխան վկայ եմ իմ քեռւոյս աստուածապսակ թագաւորիս հրամանացս զոր չը կարէ ոք խախտել. և ես Գրիգոր՝ որդի Աշոտի իշխանաց իշխանի, վկայ եմ իմ քեռւոյս աստուածապահ թագաւորիս հրամանացս. Աստուած շնորհաւոր (արասցէ) սուրբ աթոռոյն։ Դարձեալ տայ թագաւորն վասակ զգիւղն Գրուակս. և գրէ վճիռ այսպէս։ «Կամաւն Աստուծոյ ես վասակ՝ որդի Սմբատայ թագաւորի, զգրուակ գիւղ որ յառաջ տուեալ տէրանցն ի սուրբ նշանն, ես վերստին հաստատեցի իւր բոլոր սահմանովք ի Տաթև իձեռն աստուածապատիւ եպիսկոպոսին Սիւնեաց Տեառն

Յովհաննիսի, աղաւ յամենայն չարէ և հարկաց զի կատարեսցեն զառաջնոցն յիշատակն և զմերս։ Եւ արդ թէ ոք խափանել չանայ՝ յամենակալէն յԱստուծոյ և յամենայն սրբոց նզովեալ եղիցի, և մասն զկայենին առցէ. և թէ տաճիկ իշխանութիւնն փոխի. և յափշտակել չանայ՝ յԱստուծոյ և յիւր փեղամբարձն ապիզաը լինի, և հազար հազար նայաթ եղիցի». ի թուին 465։ Հաստատ է կամաւն Աստուծոյ։

Տեսեալ զայս ամենայն նախանձին և իշխանք ոմանք զնախանձ բարի. և տան զգիւղն Շուռթն ի Տաթև. և գրեն կտակ պայմանի այսպէս։ «Յանուն Աստուծոյ այս գիր վճռի է մեր Ղարբի, Արտաւազայ, Սուփանայ, Սակռի որդեացըս, որ կամ եղեւ մեզ տալ զմեր հօր արեան զին զիւղն զՇուռթն ի Տաթևոյ սուրբ մայրաքաղաքս ի ձեռն Տեառն Յովհաննիսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, ի ժամանակս Թագաւորիս մերոյ վաստակայ, մեր հօրն հոգւոյն. և կարգեցին մեզ յիշատակ զսուրբ Սարգսին օրն ամեն եկեղեցիք վանիցս պատարագ Սակռի. ի թուականիս Հայոց 475։ Արդ՝ թէ ոք խափանել և խախտել չանայ զայս տուրս՝ յԱստուծոյ ամենակալէ եղիցի որոշեալ. և ի սուրբ առաքելոցն և մարգարէիցն և յ318 հայրապետացն և յամենայն սրբոց նզովեալ լիցի. և մեր մեղացն պարտական եղիցի. ամէն»։ Եւ ես վաստակ Թագաւոր իմով ձեռամբս հաստա-

տեցի և եդի զիմ կնիքս արքունական. և ես Յովհաննէս եպիսկոպոս հաստատեցի իմ ձեռին գրովս և կնքեցի իմ սովորական մատանեաւս. մի ոք իշխեսցէ խախտել զայս վճիռս. և թէ տաճիկ աւազակ լինի և յափշտակէ՝ Աստուծոյ և յիւր փեղամբարձն որոշած լինի և յամենայն սրբոց նզովեալ և 100,000 նզովեալ։

ԾԸ

Շրջաբերական Տեառն Սարգսի՝ Հայոց կաթողիկոսի, Սիւնեաց բոլոր վիճակին։

Շնորհօք ամենակալին Աստուծոյ Հօր, եւ զթութեամբ միածնի Որդւոյ նորա, և նախախնամութեամբ ազատիչ սուրբ Հոգւոյն, այս գիր հրամանի և օրհնութեան է իմ նուաստ ծառայի Աստուծոյ Տէր Սարգսի, և ողորմութեամբ նորին կաթողիկոսի ամենայն Հայոց, զոր գրեցաք նամակ շրջագայական առ նախագահ և յաստուածամեծար տունդ Սիւնեաց, յաստուածապսակ թագաւորդ վասակ և յաստուածապահ իշխանդ Սեւադայ և Աշոտ առ այլ ազատսդ և յընդհանուր ժողովրդականդ ըստ երկոտասան կարգեալ գաւազանացդ։ Որոց նախ օրհնութիւն և պահպանութիւն ժամանեսցէ ի սուրբ Գրիգորի աթոռոյս, և յաստուածանեղկ եւ յայլ աստուածագուսմար սրբոցս և ի մէնջ. որովք փրկեալք լինիք յամե-

նայն պատահարաց և ի տարաժամ դիպուածոց։

Գիտութիւն ձեզ հոգևոր որդիք մեր՝ որ թէպէտ յառաջ քան զմեզ ի կաթողիկոսացն ի Տէր Թէոդորոսէ և ի Տէր Անանիայէ վասն իրիք ինչ պատճառի խախտեալ էր առաքելադիր աթոռդ Սիւնեաց. և օձտեալ և բաժանեալ վիճակ գաւառանիդ այդորիկ. այլ մեք ի գալ ընտրեալ առնս Աստուծոյ Յովհաննիսի՝ ձեռնադրեցաք զսա ըստ առաջին աթոռակալացն մետրապօլիտ Սիւնեաց. և հաստատեցաք վերստին զնոյն վիճակ երկոտասան գաւազանին յաթոռդ նախագահ և ի տունդ Սիսական ի Տաթև ի ձեռն աստուածարեալ եւ բազմերջանիկ սուրբ եպիսկոպոսիս և ընտրեալ մետրապօլիտիս ձեր Տէր Յովհաննիսի. և վերստին աւանդեցաք զմա զնախնական պատիւն իւրեանց՝ զխաչն և զբազմականն։ Եւ այս ոչ եթէ մերով ձեռնեղեց իշխանութեամբ. այլ զի եբեր առ մեզ զմեծափառ նամակս և զվճիռ պայմանի գրեալ ձեռամբ նախնի հայրապետացն Հայոց, սկսեալ ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէ և յորդւոց և ի թոռանց իւրոց որոց նամակին մինչ ի սուրբն Սահակ յունարէն գրով էր գրեալ. և իւրաքանչիւր մատանի կապարեայ կնքով եդեալ ի վերայ. և անտի հայերէն գրով մինչ յԱնանիա. և յետ Անանիայի գրեալ մինչև ի մեզ բայց միայն յԱնանիայէ։

Եւ սա էր գրեալ վասն Վահանայ եպիսկո-

պոսի. բայց ոչ ըստ այլոցն կարգի. և էր բովանդակն 55 նամակ հրջատայական թղթի իւրաքանչիւր հայրապետի կնքով. և այն երկար բանիւք եւ հրահոսան նզովիւք գրեալ ի մի ոք իշխեսցէ պակասեցուցանել ի սահմանադրեալ վիճակէ սոցա և կամ նուաստացուցանել և բառնալ ի պատուոյ և յաստիճանէ սոցա: Վասն որոյ և մեք երկուցեալ յայնպիսի առաքելական հարցն հրամանէ. և պատկառեալ ի ծերացեալ, բազմաժամանակեայ աթոռոյն Սիւնեաց՝ անդրէն դարձուցաք զբոլոր սահման վիճակի նոցա. եւ վերստին հաստատեցաք զեղեալ պատիւ նոցա՝ զխաչըն, զբազմականն և զգաւազանն: Եւ այս իսկ են գաւառք վիճակեալք հօտի նոցա. Սիւնիք, Բաղք, Արևեաց տունն, Որդուաց, Արքուլիք, Վանանդ, Երնջակ, Նախիջաւան, Ջուղայ որքան Երասխայ գետն հաստանէ, Ճահուկ, Վայոց ձոր խաչերոյ խոռոմն, Գեղաքունի կոզայ բակովն, Երիշատ, Ջաղացաձորն, և Փորակն իսկ բոլորովին, յորում բազում հակառակութիւնք լեալ էին. և մեծամեծ նզովիւք ամրացուցեալ էին կաթողիկոսքն Հայոց:

Հաստանէ և զսահման Աղվանից Ըմբի խոռն, Ծար գաւառ, Աղահէճ, ընդ որ Աղունոյ գետն հաստանէ մինչ ի քարավաճին կամուրջն, և Հաբանդ գաւառ. և յերնջակայ սահմանին Բոսի ձոր զոր Գողթնացիքն էին առեալ, նաև Վանանդ

և Գողթն բոլորովին. որոց թէպէտ եպիսկոպոս լեալ էր և կայր սակաւ վայրացն. այլ ի ներքոյ Սիւնեաց նուաճեալ էր: Եւ արդ դուք գաւառք Սիսական՝ ամենայն մտերմութեամբ հնազանդ լերուք Սիւնեաց աթոռոյն, և ընկալարուք զաոաքեալդ ի մէնջ դեպիսկոպոսդ ձեր զՏէր Յովհաննէս որպէս զհրեշտակ Աստուծոյ և զառաքելական այր. և ամենայն հպատակութեամբ ծառայեցէք դմա որպէս Աստուծոյ. և թէ ոք հակառակել կամի այդմ աթոռոյ և կամ խանգարման պատճառ լինի այդմ հայրապետապիր սահմանի պատուոյ և վիճակի և ժառանգութեանց եկեղեցւոյն՝ զանբաւ հրահոսան անէծն ժառանգեսցէ որ յառաջին սուրբ հայրապետացն կարգեալ էր և կրկնապատիկ ի մէնջ իսկ: Իսկ կատարիչք հրամանիս օրհնին յԱստուծոյ ամենակալէ և ի սուրբ հայրապետացն և ի մէնջ և ի սրբոյն Գրիգորոյ աթոռոյս: Եւ արդ գրեցաւ գիր հրամանիս մերոյ մերով ձեռամբ ի թուականիս Հայոց 455. և վասն առաւել հաստատութեան կնքեցաք մերով սովորական մատանեաւս ի փառս Աստուծոյ, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ԾԸ

Գալն Իսմայէլացւոց. եւ կոծանիլն զնկեղեցին եւ այրելն զվանսն Տարեւոյ. եւ նոքազ օինուբիւն եկեղեցեացն եւ վանացն ի Տէր Յովհաննիսէ։

Այս բազմերջանիկ եպիսկոպոս զարդարեալ զեպիսկոպոսարանն՝ զմեծ նախագահ տունն Սիւնեաց զՅաթիկ զանազան զարդուք և մեծամեծ սպասուք և զեղեցիկ կարգօք աստուածայնօք. և ելից բազմութեամբ կրօնաւորօք, անյապճի վիլիսոփայիւք և աննման երաժշտօք և բանիբուն վարդապետօք և աստուածազգեաց ճգնաւորօք, նաև յոգնապատիկ արհեստաւորօք։ Եւ էր այնուհետև տեսանել զտունն զայն իբր զմայրաքաղաք բազմաժողով. քանզի և չինեալ կայր բազմութիւն երդոց և ամբոխութիւն իբրև հազար տրանց, որոց մշտաչան ազօթքն բարձրացեալ էր առաջի Աստուծոյ. և կայր կանգուն յերկրէ յերկինս իբրև սիւն հրեղէն։ Յորոց ազօթից խազաղացեալ էր աշխարհս Սիսական յամենայն հինից թշնամեաց զամս 50. և ի վերուստ անպատուհաս լինէր յամենայն պատժոց և ի պատահարաց և ի տարաժամ դիպուածոց։

Ապա խանդացեալ ընդ այս չարին ոչ կարաց տանել. այլ մտեալ ի սիրտ Իսմայէլական զօրագլխացն որ ի Մովկան և ի Թալիշ, յԱհր և յԱրտաւէլ և յԱտրպատական. և գրգռեալ շարժեաց վասն համբաւոյ երևելի տանն։ Որք ձայն

տուեալ միմեանց ժողովեցան ի միասին բազում ղօրօք, և խորհուրդ արարին գալ գաղտագողի ի վերայ վանացն, և յաւարի առնուլ զանհուն կարասիս նորա, այսինքն զկահ ոսկւոց և արծաթեանց եկեղեցւոյն: Եւ յարուցեալ անցին ընդ Երասխ, և զանխլաբար եկեալ հասին յանկարծակի ի վերայ սրբոյ ուխտին, և իբր զհուր սաստիկ հեղան ի մէջ վանիցն. և որք կարացինն թափեցան ի վայր ի խրամն, և զերծեալ փախեան. և եպիսկոպոսն Տէր Յովհաննէս ոչ պատահէր ի տեղին: Իսկ զայլսն ամենայն սրոյ ճարակ տային, և զեկեղեցին որ յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին էր՝ լցին փայտիւ, և հուր հարեալ հրդեհեցին զզեղեցկայարմար շինուածն, և քանդեալ կործանեցին. կամեցան և զսքանչելի սիւնն կործանել զմեծ Տէր Յովհաննիսին որ երկու ամաւ յառաջ քան զմեծ եկեղեցին էր կանգնեալ. և տեսեալ հրաշս ինչ ոչ իշխեցին հպել. նմանապէս և ոչ ի մեծ եկեղեցին. այլ զամենայն շինուած վանացն այրեցին և քակեալ յատակեցին զգործատներն և զարապէզն մարմնաւոր սեղանոյն և զամենայն յարկս կրօնաւորացն և այլ բնակչացն. և զոր ինչ գտին՝ յաւարի առեալ զնացին ուսաւ եկին:

Ապա լուեալ զայն եպիսկոպոսին եկն ի տեղին, և տեսանէր զայնքան մեծամեծ վնասն և անհնարին աղէտսն, անտանելի սգով և անչափե-

լի ողբովք լայր և կոծէր դառնապէս, ևս առաւել, վասն կործանման եկեղեցւոյն. և յանմխիթար տրտմութեան վարանէր. տայր հրաման եւ զսպանեալսն խնկել և պատուել մարտիրոսական օրինօք և փոխել ի հանգիստ: Ժողովեալ ժամանեցին և ամենայն ազատք և գաւառակալք Սիսական աշխարհիս, և տէր Սմբատ և տէր Գրիգոր. և բազում մխիթարանօք սփոփեցին զեպիսկոպոսն, և յորդորեցին ի վերստին շինութիւն տանն ինքեանք օժանդակելով ամենայն պիտոյիւք: Իսկ ապա երանելի եպիսկոպոսն ըստ խոհեմ իմաստութեանն իւրոյ պնդեալ իբրև այր գմէջ իւր՝ ձեռն ի գործ ածեալ սկսանի ի շինութիւն կործանեալ տաճարին սրբոյն Գրիգորի զոր յառաջ Փիլիպպէ իշխանն էր շինեալ. եւ կանգնէ գնա զեղեցկայարմար շինուածով, եւ գնէ ի նմա զգանձն հոգևոր զանհամեմատն ի յէից գաւրբ Լուսաւորչին զպատուականն եւ զերջանիկ նշխարն միակողմն գլխոյն և զմիւս բազուկն յաջակողման աւազ կամարին ի գլուխ սեանն ամփոփեալ անյայտ ի մարդկանէ, զոր յետ ժամանակաց գտեալ եղև ի նմին տեղւոջ մերոյ նուաստութեանս նորին կապարեայ կնքովքն:

Կանգնէ և սա կամարս ի վերայ աւազ դրանն վանացն որ հայէր ընդ արևմուտս, և շինէ ի վերայ նորա երկու խորան յանուն սրբոյ կարապետին ի քերեալ քուաքատակեայ քարանց. շի-

նէ և զամենայն տունս հասարակաց և զյարկս կրօնաւորացն յոյժ վայելուչ քան զառաջինն զայրեալն և զքանդեալն յայլազգեացն. շինէ եւ յետոյ գաւիթս սրբաքարով ի հարաւոյ դրան մեծ եկեղեցւոյն սրան յոյժ յարմարս ի հանգիստ եղբայրութեանն, եւ ժողովեալ զցրուեալ եղբարսն պայծառացոյց քան զառաջինն. շինէ և խորան մի ի վերայ փոքր դրանն ընդ որ մտանեն ի գաւիթ եկեղեցւոյն։ Իշխան մի Դլեն անուն՝ որդի Ապղբակայ, տայ յիւր հայրենի ժառանգութեանցն գՈտա գիւղն և զՈտաձորայ մեծ այգին, եւ ի վիճանիս գՕաղկիկ որ է տեղի բազում անդաստանաց, վանն իւր հոգւոյն ի Տէր Յովհաննէս և ի սուրբ նշանն. և գրէ ինքեան կտակ վճռի. եւ խնդրէ առ յամէ հինգ օր պատարագ յԵղիսական պահոց շաբաթ օրն. և չարաչար և մեծամեծ նզովիւք վակէ ոչ ումեք յափշտակել զայն հոդեցատուր ի սուրբ եկեղեցւոյն. և դնէ գՏէր Յովհաննիսի կնիքն վաւերական ի վերայ։

Եւ արդ՝ մի ոք իշխեսցէ այսմ հակառակել եւ կամ զնորա յիշատակն խափանել. ապա թէ ոչ՝ նզովս առցէ յԱստուծոյ և ի սուրբ հայրապետաց, ի թուիս Հայոց 495։ Դարձեալ եւ երջանիկ եպիսկոպոս Տէր Յովհաննէս կազմէ ի համակ ոսկւոյ զսխրալին բնաւից զահարկու եւ զմեծաքանչ սուրբ նշանն զսիեզերատրաշ եւ զաստուածաներկ սուրբ խաչն որ էր իբր արե-

գակն Յահաւորեալ յաշխարհիս Սիսական. եւ հրահոսան ճառագայթիւքն հիացուցանէը զամենայն մարդիկ: Եւ խորհրդապէս յօրինուածովք զարդարեաց զնա եդեալ ի վերայ պատուական քարանց թուով 24. և ընդելուզեալ մարգարտայեռ գեղեցկութեամբ. և եդեալ ի նմա զկենսաբաշխն արարածոց, զփրկական և զաստուածընկալ սուրբ փայտն յորոյ վերայ պնդեալ էր բեւեռօք Բանն աստուած. և ունէը յինքն յայտնի տեսողաց զկաթուած արեանն Յիսուսի Քրիստոսի. յորմէ ելանէին զօրութիւնք և նշանք ահաւորք: Եւ էր այս փայտ խաչանիշ ձևեալ. և կայր ի ներքոյ միջի ականն որ էր ի սպիտակափայլ բիւրեղանման յակնդաց. ընդ որով թափանց երևէր փրկաւէտ սուրբ նշանն:

Եւ ետ գրել փորուածով ի թիկանց կուսէ յիշատակ բանի զայս «Տեառն Յովհաննիսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, է սուրբ նշանս. ի թուականիս 466 կազմեալ զսա կանգնէ ի տանն Սիսական առ ի յոյս հաւատացելոց և ի փրկութիւն բոլոր վիճակելոցս» Եւ արդ՝ այսպիսի մեծահանդէս բանիւք և երևելի գործով պայծառացուցեալ զտունն զայն բազմերջանիկ և յոգներանեան եպիսկոպոսս այս Տէր Յովհաննէս. և յետ 50 ամի մեռրապօլտութեան իւրոյ, ի թուականին 507 գնայ զկնի կոչողին ի քաղաքն անդրանկաց յերուսաղէմ վերին, ուր ժողովք սրբոյն են և քա-

դաքսպեա Քրիստոս. զի ըստ մեծավաստակ իւրոյ արդեանցն և ճգանցն առնու զվարձն հպատրաւորս և բիւրապատիկս: Եւ դուք աստուածապրեալ հայրապետք և սրբազան եղբարք՝ որք յաջորդիք ի սուրբ յաթոռս, և լինիք ժառանգաւորք տանս, անմոռանալի և անխափան պարտիք կատարել զյիշատակ բազմերախտ սուրբ հօրս հանապազ աղօթիւք և կենդանարար խորհրդեամբն: Եւ աղօթիւք և խնդրուածովք սորա և ամենայն սուրբ հայրապետացս դուք և մեք ի միասին փրկեալ լիցուք յամենայն վտանգաւոր կրից հոգւոյ և մարմնոյ. և անխախտելի մնասցէ սուրբ տունս և ամենայն վիճակեալք սորա, զորոյ զամէնն սուրբքն և սիրելիքն Աստուծոյ ասասցեն:

ԽԹ.

վասն թագաւորացն Սիւնեաց:

Արդ առաջին թագաւորեաց ի Սիսական աշխարհս արին և քաջն, հզօր և բարեպաշտ արքայն Սմբատ՝ որդի Սահակայ՝ եղբօրն Սմբատայ, որք էին որդիք բարեպաշտին Աշոտոյ՝ եղբօր մեծին Վասակայ որ իշխանիկ կոչիւր. և սոքա որդիք երանելւոյն Փիլիպպէի՝ եղբօր Սահակայ որ ի Դվին սպանաւ ի պատերազմին Հաւլայ ամիրային, որդիք Վասակայ՝ մեծ նահապետին Սիւնեաց: Իսկ յետ Սմբատայ թագաւորէ որդի նո-

րուն վասակ՝ այր քաղցր և աստուածասէր և յաջողած յամենայն գործս։ Որ առեալ էր զքոյրն կին Աշոտոյ ի նոյն Սիսական տոհմէ որ էր իշխանաց իշխան ամենայն թագաւորութեանս. և ունէր երկուս որդիս՝ Սմբատ և Գրիգոր։ Ապա վախճանի վասակ թագաւոր և դնի ընդ (հօր) իւրում Սմբատայ. և ոչ ունէր ժառանգ տէրութեանն. վասն որոյ թագաւորեցուցանեն զՍմբատ՝ որդի Աշոտոյ. և կարգեն ի տեղի հօր իւրոյ զԳրիգոր՝ եղբայր սորա, իշխան իշխանաց Սիսական աշխարհին։ Բայց Սմբատ առաւել էր քաղցր և հեզահամբոյր և անարկու յամենայն շրջակայ ազգսն. որ և կալեալ զթագաւորութիւնն ամս ինչ՝ վախճանի, և դնի ի Յովհաննու վանս առ դրան տաճարին։ Եւ առնու զթագաւորութիւն նորա եղբայր իւր Գրիգոր. և սորա երկոքեան որդիք մեծին Աշոտոյ որ ասաց Աշոտեանք կոչին։

Իսկ Գրիգոր առեալ էր իւր կին զամենօրհնեալ և մեծահաւասո բարեպաշտուհին Շահանդուխտ ի տանէն Ապվանից՝ դուստր նոցին թագաւորապին մեծին Սևադայի. և էին անզաւակ. և կամէր ինալ թագաւորութիւն նոցա անժառանգ. ապա խորհեալ ի միասին ընդ իշխանան՝ աճեն յԱպվանից զՍենեքերիմ՝ եղբայր նոցին Շահանդխտոյ թագաւորազն մանուկ, յոյժ գեղեցիկ տեսլեամբ և առոյգ հասակաւ՝ հանճարեղ և իմաստուն, նաև երկիւղած յԱստուծոյ։ Եւ ստա-

նայ զսա ժառանգ իւրեանց թագաւորութեանն ամս ինչ. և վախճանի և սա։

Եւ յայնմ ժամանակի էր բարձրացեալ և զօրացեալ տէրութիւնն Տաճկաց. և ամենայն աշխարհ ի ներքոյ հարկի նոցա նուաճեալ կայր. վասն որոյ և յոլով գաւառս շորթեալ հանին ի Սիսական աշխարհէս իձեռաց ընիկ տէրանցն. և էր յաթոռ սուլտանութեանն Մելիք շահն՝ այր բարեբարոյ և խաղաղարար, յորմէ մեծարեալ լինէր Սենեքերիմ ի պատիւ թագաւորութեան. և յոյժ երևելի փառօք թագաւորեաց ի տանս Բաղաց, և ընդարձակեաց զամենայն սահմանս տէրութեան իւրոյ, և բազում ամօք վարեալ զթագաւորութիւնն քաղցր և խախաղական կենօք մինչև ի մահ Մելիք սուլտանին որ մեռաւ ի 541 թուականին։ Եւ ապա սկսաւ քայքայիլ խաղաղութիւնն և ապականիլ ամենայն շինութիւնք աշխարհիս զոր յիւրում տեղւոջ ասացից։ Եւ էին Սենեքերիմայ երեք որդիք՝ Գրիգոր, Սմբատ, Սևադայ և դուստր մի։ Բայց մահ Սենեքերիմայ եղև այսպիսի պատճառաւ. զի յետ Մելիք շահին ամենայն ոք գլուխ ի վեր առեալ՝ եղև անձնիշխան և զմիմեանսք ելեալ ո՛ք որ կարողանայր, աւերէր զերկիրը գերփմամբ և յափշտակութեամբ։

Սակս որոյ խանդացեալ անիծեալ Իսմայէլականացն ընդ գեղեցիկ և ամուր թագաւորութիւնս Բաղաց զոր խոչ մեծ համարէին ին-

քեանց. և եղեալ ամիրային Պարտաւայ և Ռանայ և Գանձակայ բազում զօրօք գայ ի պատերազմ ընդ Սենեքերիմայ, ընդ որում էր Շիրակայ իշխանն Գրիգոր Ապիրատեան: Իմացեալ զայն Սենեքերիմայ և ամրացուցեալ զամենայն աշխարհն յանառիկ ամուրսն. եկեալ ապա անիծեալ ամիրային. և տեսաւ զի անհնարին էր ի մարդկանէ, յուղարկէր զԳրիգոր իշխանն Անեցի, որ պատճառաւ ինչ կայր առ նմա, առ Սենեքերիմ արքայն և ասէ. երդմամբ հաւանեցո զնա գալ առ իս և առնեմք ընդ միմեանս սէր. և մեծամեծ պարգևօք արձակեմ զնա. ապա թէ ոչ հաւանեցուցանես, և զքոյդ գլուխ ասասէն հատանեմ: Գնացեալ ապա Գրիգորին այն դէպ ճանապարհն, և մտեալ առ Սենեքերիմ, և մեծամեծ երդմամբ հաւանեցուցանէ զնա գալ առ ամիրայն. որք և եկինն ի միասին:

Իսկ տեսեալ զնա չարաթոյն գազանին և սատեաց ուխտին, և յարձակեալ մոմոանօք ի վերայ՝ եսպան զթագաւորն. և ինքն անց, գնաց յաշխարհ իւր: Անա այսպէս շինաւ ճրագն քրիստոնէից որ կայր ծնացեալ յամուրսն Բաղաց: Զոր և եկեալ մեծամեծացն և որդեացն իւր՝ կոծ մեծ արարին ի վերայ և բարձեալ տարան ի սուրբ ուխտն Վահանու. և անդ եդին ի շիրմի ընդ այլ թագաւորան: Եւ յետ նորա էառ զտէրութիւն նորա որդի իւր Գրիգոր՝ նուազ և ընդաղօտ թա-

գաւառեալ: Բայց այս Սեւնեքերիմ և քոյրն իւր Շահանդուխտ բազում արարին արդիւնս և շինուածս երևելիս ի վանսն Յովհաննու. նաև բազում պարգևս և ժառանգութիւնս ընծայեցին ի սուրբ մայրաքաղաքն աթոռ ի Տաթեւ, զոր եւ կարգեցից ասել:

Կ

Վասն եպիսկոպոսին Սիւնեաց Տիառն Գրիգորի որ զկնի Տիառն Ցախուցնիսի. եւ գործոց նորին:

Իբրև կատարեցաւ երանելի մեծապատիւն Սիւնեաց Տէր Յովհաննէս. ապա աստուածապսակ թագաւորն Սմբատ ընտրէ այր մի պատշաճաւոր, վկայեալ յամենեցունց, զարդարեալ ամենայն առաքինութեամբ և լի գիտութեամբ Գրիգոր անուն, յուղարկէ առ կաթողիկոսն Հայոց յԱնի, և տայ ձեռնադրել զնա եպիսկոպոս Սիւնեաց: Որ եկեալ բազում չանիւ, մեծավաստակ առաքինութեամբ քաղաքավարեր ի մարմնի, տուեալ զանձն օրինակ ամենայն բարեաց, տեսեալ ձիգ ժամանակօք մինչև ամս 58: Սա արարեալ զարմանալի շինուածս յեպիսկոպոսարանին Տաթեւ, զի կանգնեաց կամարս ի վերայ դրան վանացն որ հայէր ընդ յարևելս. և մերձ նմին տուն սրբաշէն. և իվերայ սոցա եկեղեցի մի գմբեթաւոր գեղեցկայարմար յանուն սրբուհւոյ

Աստուածածնին: Եւ էր նա իբր դիտանոց բարձր որ հայէր ի վերայ վանացն. և ի չորեսին կողմանցն յօրինեաց գաւիթս. բայց յառաջի կողմն բարձրաբերձ սեամբք շիներ սրահս վայելուչս իբր քաղցր հովանոց. և գրէ ինքեան արձան յիշատակի ի վերայ եկեղեցւոյն. և հաստատէ քառասուն մի՝ ամ յամէ կատարել անխափան ի յիշատակ իւր:

Սա առնոյր և զԲոլորաքարն Նորեաց բաժինն ի Դլենէ՝ որդւոյ Ծաղբակայ. և հաստատեր նզովիւք ի սուրբ եկեղեցին: Ի ձեռն սորա աւանդեաց երանելի և սուրբ թագուհին Շահանդուխտ և բարեպաշտ թագաւորն Սենեքերիմ եղբայր նորին, զԱրիան աւան որ է մերձ և սահմանակից սրբոյ և մեծի աթոռոյն Տաթևոյ. և գրեն զվճիռ պայմանին ահագին և սոսկալի նզովիւք՝ ինքն իսկ թագաւորն իւրով ձեռամբն որ էր այսպէս «կամաւ կարող հզօրին Յիսուսի ես Սենեքերիմ՝ թագաւոր Հայոց, կացեալ ի Սիսական և Բաղաց աշխարհիս, ընթերցեալ զառաջին հայրապետացն և զիշխանացն հաստատագիծ նամակ՝ կամեցաք վերստին նորոգել և անդրէն դարձուցանել. եւ գրեցաք զայս վճիռ պայմանի իմ սրտի յօժարութեամբ և հրամանաւ բարեպաշտ և քրիստոսազգեաց քերցս իմոյ թագուհւոյս Շահանդխտոյ և սրբանունդ օրիորդիս Կատայիս. որք լքին զերկրաւոր փառս աշխարհիս և դէտ երանաւէտ

ձայնին Քրիստոսի ընթացան ճգնազգեստ առաքինութեամբ։ Եւ եռու զԱրիտ իւր ամենայն սահմանօքն շուրջանակի, հողով և ջրով և արտավարօք և գամենայն որ ինչ իւրն էր, ի Տաթևոյ սուրբ եկեղեցիքն՝ ի հայրապետանիստ մայրաքաղաքն, ի սուրբ առաքեալքն և ի սուրբ Գրիգորն, ի հայրապետութեան Տեառն Գրիգորոյ՝ Սիւնեաց եպիսկոպոսի, և իւրեանն որդիացելոյ Տեառն Ստեփաննոսի։ Եռու անհաշիւ, անհամեմատ, առանց զոք զրկելոյ, առանց զուրուք յափշտակելոյ, առանց ումեք սրտնչելոյ. քանզի մեր սեփական (էր) և ոչ այլ ումեք զոր ընծայեցի սուրբ ուխտիդ Տաթևոյ յաղագս փրկութեան հոգւոյ իմոյ և քաւութեան մեղաց իմոց և հարցս ազատաց իմոց քերց, և որդեկաց իմոց կենաց, և փրկութեան Գրիգորոյ, Սմբատայ և Սևադայի և մօր իւրեանց և քեռն։ Եւ կարգեցի քառասունքն մի՝ որ ամ յամէ կատարեն ի սուրբ եկեղեցիքն ի տէրունի քառասունքն՝ զքսան օրն Թագաւորին Գրիգորոյ՝ որդւոյ Աշոտոյ, և զքսան օրն՝ իմ մօրն Սոփիայ որչափ մեք կենդանի եմք, և յետ ելիցն մերոց՝ զքսան օրն իմ քուերն Շահանդխտոյ առնեն, և զքսան օրն՝ ինձ Սենեքերիմայ։

Արդ եթէ ոք ընդ հակառակս ելանէ կամ խանգարել մտածէ կամ յափշտակել յանդգնի կամ քսէ ումեք, կամ ի բանսարկութիւն մտա-

բերէ շորթել զմեր արդիւնսդ ի սուրբ եկեղեցեացդ, այնպիսին մի գտցէ ողորմութիւն յԱստուծոյ մի յայսմ աշխարհի և մի ի հանդերձեալսն. այլ անէծք յափշտակողացն եկեսցէ ի վերայ նորա, և մեղք մեղսապարտիցն և նզովք չարագործացն, որպէս Կայենին և Յուդային եւ Արիոսին և հոգեմարտին Մակեդոնին և Նեստորի երկաբնակին և Լևոնի հռոմայեցւոյն և որ այլ նմանիք նոցա. և հաստատիչքն օրհնեալ եղիցին յԱստուծոյ ամենակալէն և յամենայն սրբոց: Գրեցաւ իմով ձեռամբս Սենեքերիմայ՝ որդւոյ Սևադայի ի կամս Աստուծոյ. ես Շահանդուխտ վկայ եմ իմ եղբօրս Սենեքերիմայ հաստատուն արարածիս և վճռիս. որ ետուն ի Տաթևոյ սուրբ առաքեալքն. Աստուած շնորհաւոր արասցէ սուրբ եկեղեցեացն. որ խանգարել մտածէ՝ զրկեալ անէծքն ժառանգեսցէ: Եւ հաստատիչքն օրհնեալ եղիցին. ես Գրիգոր՝ Սենեքերիմայ որդիս ու իմ եղբարքս վկայ եմք այս անսուտ և հաստատուն տրոյս և հրամանացս ի թուին 534 ի կամս ողորմութեան բարերարին Հօր Աստուծոյ և օծեալոյ նորա Յիսուսի բանին բարձրելոյ և կենդանարար սուրբ Հոգւոյն. ես Գրիգոր ամենանուաստ ծառայ Քրիստոսի և ողորմութեամբ նորին եպիսկոպոս Սիւնեաց և որդիացեալս իմ Ստեփաննոս ընկալաք զընծայս յԱստուծոյ օծեալ և պահակեալ թագաւորիս Սենեքերիմայ և զհոգեցաւորս զորս

արարին անխախտելի և հաստատուն վճռաւ ի մայրաքաղաքս Տաթև՝ ի սուրբ Գրիգորս եւ ի կենսաւէտ սուրբ նշանս, յիւրեանց արեանգինք դաւառացս ի Ծղուկ նահանգի զԱրիան աւան. և կարգեցին յիշատակ իւրեանց զոր կատարեն ի սուրբ եկեղեցիքդ ամ յամէ անխափան ըստ գրեալոցդ իւրեանց՝ ի կեանս իւրեանց և զկնի հանգստեան իւրեանց ի Քրիստոս:

Եւ արդ եթէ մեք և եթէ որ զկնի մեր յաջորդին ի սուրբ յաթոռս հայրապետաք, և կամ տանս այլ առաջնորդք վանական, աւագ երէց, եկեղեցական և այլ կարգաւորք՝ յեղեալ քառանոցդ ծուլանան, և զինչ և իցէ պատճառաւ՝ միով աւուրբք պակասուցն առնեն՝ թող թէ այլ աւելորդ խափանեն՝ անիծեալ լիցին ի Քրիստոսէ Աստուծոյ, և չնչեսցին անուանք նոցա ի դպրութենէ կենաց. և մի կատարեսցի յիշատակ նոցա առաջի սուրբ սեղանոյ զենմանն Քրիստոսի և անթողութիւն լիցի յարդար դատաւորէն յանկաշառ աթենին: Եւ որ զԱստուծոյ պատկեալ թագաւորին արարածդ և զհոգեցաւորդ խափանել չնայ և յափշտակել ի սուրբ առաքելոցդ և ի սուրբք նշանէդ, եթէ ի մեծամեծաց և եթէ ի փոքունց, եթէ յաւագաց, եթէ յազատաց, եթէ յօտարաց, եթէ ի ծանօթից՝ զինչ և իցէ պատճառաւ ընդ հակառակս ելանէ և խափանման և յափշտակելոյ պատճառ կամի ինչ (լինել), եւ

յափշտակէ՝ անիծեալ լիցի անձն այն ի բերանոյն յորմէ օձն անիծաւ, եկեսցեն ի վերայ նորա անէծք ցաւագինք, և օրհնութիւնքն անէծք դարձցին. և յամենայն երկնային և յերկրաւոր դասակարգութեանց սիրոյդ երրորդութեանն անիծեալ լիցին հոգիք նոցա, զիւր կեանքն և զժառանգութիւնն մի վայելեսցէ, զարդի կեանքս ցաւագին կատարեսցէ և յելս վախճանի իւրոյ հողն օրհնութեան մի բաւեսցի նմա. իսկ հաստատիչք օրհնին յԱստուծոյ և յամենայն սրբոց իւրց»։

Տեսեալ ապա զայս բարեպաշտ և մեծ իշխանին Հասանայ՝ որդւոյ Գրիգորոյ, յազատացն Սենեքերիմայ, և շնորհէ նա զդիւղն Նորաշինիկ և Զեռատիվանս որ ի Կովսական գաւառի ի տուրբ եկեղեցիս. որք և վաղ ժամանակօք տուեալ էին ժառանգութիւն տուրբ եկեղեցւոյն Տաթեւոյ. զնորաշինիկ տուեալ էր Հրահատ իշխան ի Տէր Դաւիթ, և զԶեռատիվանս տուեալ էին յաւուրս Յակոբայ մեծապօլիտի. վասն որոյ և սա դարձուցանէ անդրէն ի ձեռն Տեառն Գրիգորոյ։ Եւ գրէ կտակ հաստատուն վճռի առաջի թագաւորին որ էր այսպէս «Յանուն Աստուծոյ այս իմ գիր է Հասանայ՝ Գրիգորկայ որդւոյ. այս օրս որ Աստուած ինձ յաջողութիւն երեւ. և ես զիմ բերդն ի Մշատաքսթենէն առի և զկովսական գաւառ իմ արեամբս յամիրայ Փատլնոյ թափեցի, զնորաշինիկ և զԶեռատիվանս այլ ի Տաթևոյ

սուրբ նշանս դարձուցի իմ թագաւորիս Սենեքերիմայ հրամանաւ, ի ժամանակս աստուածապատիւ և հոգևոր Տեառն Գրիգորոյ՝ Սիւնեաց եպիսկոպոսի, և ամեն ազատացս առաջի տուի զայս, սոցա ամենեցուն վկայութեամբ ազատ յարքունի հարկաց. որ չկայ ի հետ այս գիւղորէից ումեք հաշիւ կամ շատ և կամ սակաւ. և մի ոք իշխեսցէ այլ կալ սմա հակառակ կամ համիմատ յայսմհետէ մինչև յաւիտեան, կամ ի մերոց կամ յօտարաց, կամ յաւազաց, կամ ի ձեռնաւորաց։ Ապա թէ յանդգնին՝ անէծք և հայհոյութիւնք և մեղք և հերձուածք ամենայն չարագործացն ի վերայ նորա եկեսցեն և գիւր կեանքն մի վայելեսցէ. և ի սուրբ Երրորդութենէն որոշեալ եղիցի։ Իսկ հաստատիչքն օրհնեալ լիցին։

Եթէ տաճիկ աւազութիւն փոխի և յափշտակել խորհի՝ յիւր հաւատէն ապիզան եղիցի. եւ գիւր փեղամբարն թողեալ և անարգեալ լիցի. 1000 նալաթ ի վերայ նորա ճնասցէ»։ Ես Սենեքերիմ թագաւոր իմ ձեռովս հաստատեցի զՀասանայ վճիռս որ զայս շինարիս որ ի Տաճկաց թափեալ էր իւր արեամբն, այլ ի Տաթև երեսս իմ հրամանաւ. և ես իմ որդւովքս և ազատովքս վկայեմ, որ որչափ այս եկեղեցիքս ի հաստատութեան կան՝ մի իշխեսցէ յանդգնիլ և ձեռնարկել ոք վասն յափշտակելոյ զայս տուրս։ Եւ ես եառ

ընդ սմին և գՅոհաստաց տափն. արդ՝ թէ ոք հակառակի այլ՝ զվերոյգրեալ անէծսդ ժառանգեսցէ. և ես Ռահիբս վկայ եմ այս արարուածիս զոր մի ոք իշխեսցէ հակառակ կալ. ի թուականիս Հայոց 535։

Յետ այսր դարձեալ գայ թագաւորն ի սուրբ ուխտն առ հոգևոր Տէրն Գրիգոր, ի տես և յաղօթս։ Եւ էր գիւղն Հարժիս և Բերդկաներեչի և Յուրայ գետ յափշտակած ի սուրբ եկեղեցւոյն, և առ ազատացն Սենեքերիմայ մեծ իշխանին Մահեւանայ և միւս ազատին Գէորգեայ. վասն որոյ ծանուցանէ եպիսկոպոսն թագաւորին զգրկանքն եկեղեցւոյն. և առաջի արկանէ գՅին նամականին որ տուեալ էր առաջին թագաւորացն անխախտ պայմանաւ. զոր ընթերցեալ նորին՝ զարհուրեցաւ ի սոսկալի նզովից. զի երեք անգամ հաստատած էին այս գիւղօրայքս ի սուրբ աթոռն. առաջին՝ ի Սմբատայ՝ թագաւորէ Հայոց, և յԱշոտոյ՝ մեծ իշխանէն Սիւնեաց. և Բերդկաներեչի գանձագին էր Տէր Դաւթի. երկրորդ՝ ի Սմբատայ՝ թագաւորէ Սիւնեաց՝ որդւոյ Սահակայ, հաստատեցաւ ի ձեռն տեառն Վահանայ Բաղացւոյ, և ի Վասակայ՝ որդւոյ նորին. երրորդ՝ Հասան ոմն իշխան՝ որդի Կորայ քրդին, յազատաց մեծ իշխանաց իշխանին Վասակայ. որ էր իշխեցող և վրաց, որդւոյ մեծին Սմբատայ՝ Սիւնեաց գահերէց իշխանի, գնոյ

առեալ էր զգիւղն Հարժիս և ի հայրենեաց իւրոց փոխան տուեալ։ Սա հրամանաւ մեծին Վասակայ և որդւոց իւրոց Սմբատայ և Գագկայ, տայ գայս գիւղս ազատ յամենայն հարկաց ի վանսն Տաթևոյ։

Եւ գրեն կտակ մեծամեծ դաշամբք և հաստատեն նմա մի քառասունք ամ յամէ զՅայտնութեանն։ Ահա գայս ամենայն ընթերցեալ և ծանուցեալ բարեպաշտ թագաւորին Սենեքերիմայ, ըստ հաւատոյ երկիւղին հրամայէ գարձուցանել անդրէն իւրոց իշխանացն. և գրեն կտակ յաւիտենական անխախտ պայմանաւ, ինքն եւ իշխանք իւր այսպէս «այս ձեռագիրը է իմ Սենեքերիմայ թագաւորի՝ որդւոյ Սնաղայի, որ մինչ Աստուած անյիշաչար եղև առ իս, և ողորմեցաւ ինձ. և կրկին հաստատեաց ի յիս զհայրենի տէրութիւն իշխանութեան իմոյ որ խախտեալ էր ի ձեռն Իսմայէլականացն։ Ես ընթերցայ զառաջնոցն զգրեալսն և գյափշտակեալ ժառանգութիւնսն սուրբ եկեղեցւոյս և երկնահրաշ աթոռոյս Սիւնեաց, գարձուցի անդրէն ի մայրաքաղաքս Տաթև. և կրկին հաստատեցի իմով ձեռամբս անխախտ հայրենիք սմա զՀարժիս, զԲերդկաներեչի, զՅուրայ գետ. և էր այս չորրորդ անգամ հաստատութիւն։ Եւ աւանդեցի զսոսա իմ ձեռագրովս յաստուածարեալ և ի սուրբ հայրապետս մեր Տէր Գրիգոր։ Եւ արդ չէ ոք կա-

բող զիմ գիրդ և զնաստատեալ պայմանդ ի սուրբ առաքելոցդ խախտել կամ յափշտակել յայմհետէ մինչև յաւիտեան, և կամ խանգարման պատճառ լինել։ Եւ թէ յանդգնի ոք և մտածէ զայդ՝ յԱստուծոյ և ի սուրբ առաքելոցն նզովեալ եղիցի. և Յուդայի եւ Արիոսի մասնակից լինի. եւ ընդ սատանայի դատեսցի. և զիւր կեանքն մի վայելեսցէ. և թէ տաճիկ իշխանութիւն փոխի և խլել և խեռալ և ապականել խորհի, նա յԱստուծոյն, որ արար զերկինս և զերկիր, նզովեալ եղիցի և յամենայն ընտրեալ սրբոց նորա. և ի մարգարէից զոր փեղամբաը կոչեն ապիզմն եւ անիծեալ լիցի, և յիւր օրէնսդիր Մահմետէն որոշած և նալմէթ եղիցի յազգաց յազգս»։ Գրեցաւ ի թուականիս Հայոց 540։ Յանուն Աստուծոյ և ես Մահևան և ես Գէորգ հրամանաւ աստուածապահ թագաւորիս մերոյ Սենեքերիմայ զարձուցաք զՀարժիս, զԲերդկաներեչի, զՅուրայ գետ ի Տաթևոյ սուրբ առաքելքս որ զբրկեալ էին յաւերման եւ ի նեղ ժամանակի, եւ այժմ կայր առ մեզ։ Եւ արդ ոչ մերոց եւ ոչ ումեք չկայ իշխանութիւն և հաշիւ հետ այս շինորէիցս, ոչ չարի, ոչ Տաճկաց հարկի, ոչ բերդաչարի, ոչ գունդգահի և ոչ այլ իրաց. այլ միայն սուրբ խաչիս և հոգևոր տեառնս է իշխանութիւն։ Եւ թէ ոք յանդգնի՝ զվերոյգրեալ նզովդ ժառանգեսցէ։ Եւ Ռահիբս վկայ եմ թա-

գաւրիս անսուտ հրամանացս և հաստատութեանս, և չմարթի ոք խանգարման պատճառ լինել. այլ հաստատ է կամաւն Աստուծոյ:

Դարձեալ և այլ բազում ժառանգութիւնս եառն ի սուրբ ուխտս զոր աւելորդ համարեցաք գրել աստ. եառն և այգի մի մեծ ի Մեղրոյ ձորի՝ զբերդ Աւագեանց այգին Աբուսահլ ոմն՝ տէր Մեղրոյ բերդին, ի թուականին 532. եառն և գեղ ի Բարկուշատի. եառն և գՈղովանի գեղ ի Վանանդայ ձորի. եւ և իշխանն Աշոտ գԱմբրաւաքար ի սուրբ նշանն. և գրէ կտակ այսպէս «յանուն Աստուծոյ ես Աշոտ իշխան՝ որդի Կապային, եառ զիմ հայրենի ժառանգութիւնն գԱմբրաւաքար ի սուրբ նշանն ի Տաթև ի ձեռն Տեառն Գրիգորոյ՝ Սիւնեաց եպիսկոպոսի, հրամանաւ աստուածապսակ թագաւորին Սենեքերիմայ. և կարգեցին մեզ պատարագ անխափան զօր Համբարձման Տեառն: Եւ արդ՝ չունի ոք հրաման խախտել զայս, եթէ հակառակի և կամ չար և հարկ ի վերայ դնէ՝ ի սուրբ Երրորդութենէն նզովեալ լիցի և յամենայն սրբոց նորա. և մանն ընդ Յուդայի առցէ. և թէ տաճիկ աւազ փոխի, և հանել չկարայ՝ հարիւր հազար նալմէթ լինի և յիւր հաւատէն ապիզար եղիցի. ի թուիս Հայոց 538: Աստուած շնորհաւոր արասցէ. ես Սենեքերիմ թագաւոր և իմ որդիքս Գրիգոր և Սմբատ հաստատեցաք: Նմանապէս և այլ բազումս որոց

արիտուր փոխարինին հազարապատիկ և բիւրապատիկ լիցի յամենատատ Տեառնէն յանանցական վայելմանն և յանդրաւական յուրախութիւնան։

ԿԱ

Պատճառ. աւերման Կապալիւ եւ առման բերդից. եւ բնաջինջ սպառումն թագաւորութեանն Բաղաց. եւ վախճան կատարածի Սիսական ազգին։

Յամի յորում էր թուականն Հայոց 552, եղև սկիզբն աւերածոց կապան գաւառի և ամուր աշխարհին Բաղաց, և սպառելոյ տէրութեան նոցա թագաւորաց և իշխանաց, զոր լուաք և ընթերցաք ի թղթոյն Տեառն Ստեփաննոսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, զոր գրեալ էր ի հոյակապ քաղաքն Անի ի խնդրոյ սուրբ քահանային Մխիթարայ՝ աւագերիցու քաղաքին և փակակալի սուրբ կաթողիկէին։ Եւ էր պատճառ մեծի կատարածին այսպէս։ Գնաց Սենեքերիմ թագաւորն ի տեսութիւն Մելիքշահ սուլտանին ի մայրաքաղաքն Պարսից յԱսպահան. և հանդիպեալ նմա՝ մեծապեալ լինէր բարձրագոյն փառօք և նստուեցեալ ի գլուխ բազմականին։ Եւ էր ծառայ մի սուլտանին յոյժ սիրեցեալ որ առաջի իւր բաժակ մատուցանէր՝ Զորթման անուն։ Սա յոյժ նեղէր գինեաւ ի ժամ ճաշոյն զթագաւորն. և թէ բա-

դում պարգևս խոստանայր՝ ոչ անսայր. ապա խոստանայր տալ Զորթմանին զդուստր իւր. վասն որոյ ըստ իւրեանց սովորութեանն հանդոյց դնէ ի վերայ գօտւոյն Սենեքերիմայ որպէս թէ նշան լիցի այնմ բանի. եւ տարեալ ցուցանէր սուլտանին: Եւ այնուհետեւ զկատակեալ բանսն պահէր ի սրտին խորամանկութեամբ ի ծնունդս ապականութեան:

Իսկ յորժամ եհաս ի պատիւ և ի կարգ իշխանութեան՝ խնդրէր ի Սենեքերիմայ զխոստացեալ աղջիկն. և նորա խիստ բանիւք պատասխանեալ անարգէր զնա ծաղր առնելով զխնդիրն: Յայնժամ իբրև գիտաց Զորթմանն զկամս թագաւորին զի անհնարին էր այնմ բանի, սկսաւ դառն տառապանօք և ազգի ազգի նեղութեամբք կեղեքել և աւերել զամենայն իշխանութիւն նորա: Բայց ի 525 թուականին շէն էին գաւառք Կապանին և պայծառացեալ վանորայքն ի պաշտաման և ի լուսաւորութեան. իսկ ի 541 թուին մինչ մեռաւ Մէլիքշահ սուլտանն՝ զամ մի ողջոյն ասանեցան առ հասարակ: Եւ սակաւ մի խաղաղացեալ ամս եօթն ի տէրութեան Բէկի-Արուխին՝ որդւոյ Մէլիք-Շահին: Ապա ի 548 թուին մինչ մեռաւ Բէկի-Արուխն՝ դարձեալ վերստին ասանեցան դառնապէս: Իսկ ի լնուլ մեռանն յոբելենին և երկուց թուոց որ է ի 552 թուին՝ օր մի յանկարծակի մինչ կային յանհոգութեան

քաղաքացիքն, մանաւանդ Տէր զանազանիչն ի մարդկանէ զկապան քաղաք. և անիծեալ Զորթման վասն քինուն իւր յեղակարծում ժամու հեղաւ ի վերայ քաղաքին: Նախ՝ բազում հետևակազօր մարդիկ սորամուտք և քարապնացք ելին ի գլուխ ապառաժուտ լերինն. և իջին ընդ մեծ աւարի հեղեղատն ի քաղաքն, զի այն վայր ոչ էր պարսպափակ վասն անհնարին գոլոյ մթից մարդկան. և սկսան կոտորել ի Ջհատթադոյն. և ապա բացին զդուռն քաղաքին որ ի խնձորոյ գլուխ հայէր. և մտին զօրքն ամենայն և հարեալ սատակեցին զամենեսեան առ հասարակ. բայց ի բերդն ոչ ինչ կարացին ձեռնարկել. այլ դնացին անդրէն ի տեղի իւրեանց:

Ահա այս իսկ եղև սկիզբն աւերման աշխարհին, և օր ըստ օրէ սկսաւ նուազիլ և պակասիլ իշխանութիւնն այն որ ունէր ընդ ձեռամբ բերդս 43. և անուանիքն ի նոցանէ 12. և վանորայս 48, և գիւղս 1008. եւ մայրաքաղաք զկապանն. այս Բաղաց իշխանութիւնն է: Դարձեալ յետ մի ամի, ի 553 թուականին առաւ Որոտն. և ի 554 ին առաւ Բղեն. և գերեցաւ Խոսրովիկ իշխանն. եւ ի սուր սուսերի մաշեցան բազմութիւնք քրիստոնէից, և բնաւին յաւեր անցաւ տունն Բաղաց. և լռեցին ամենայն ուխտք վանորէիցն ի պաշտամանէ. և խաւար թանձրամած կալաւ զազգս Հայաստանեայց. և սուգ անհնարին զգեցան ա-

մենայն քրիստոնեայք և եկեղեցիք Հայոց. բայց ինացին Բաղաբերդ և Գեղի, Կաքաւաբերդ, Շլորուան, Կարճևան, Մեղրի, Գրհամ առ Գրիգորոյ Թագաւորի և Սմբատայ՝ Թոռանց Աշոտոյ որք էին անզաւակ. բայց միայն մի դուստր ունէր Գրիգոր կատայ անուն: Իսկ ի 565 Թուին կատարեցաւ մեծաւ ճգնութեամբ սուրբ Թագուհին Շահանդուխտ՝ քոյրն Սենեքերիմայ Թագաւորին: Ի սոյն ամի եւ վախճանի յոգներանեան այրն Աստուծոյ և սուրբ եպիսկոպոսն Տէր Գրիգոր:

Ի 575 Թուականին եկն ամիր Հարոնն և բնաջինջ արար զտուն Կապանին և զԱրևիք գաւառ. և էառ զբերդն Կաքաւու և զքարն Բաղակու որ էր վանք, յորում մթերեալ կայր բազում սրբութիւնք, խաչ և վկայարանք ոսկի և արծաթի և կտակարանք որ գաղթեալ էին ի գաւառացն. և ամենայնն ի գերութիւն մատնեցան: Ապա ի լնուլ Թուականին 600 ամին և ի սկսանել զառաջին աճն, զՇլորուտն բերդ գողացան հնարաւոր ազգն Թուրքաց. և ի 606 Թուին զՄեղրի գողացան. և ի 619 Թուին կրկին բարկացաւ Աստուած Բաղաց աշխարհիս և Սիւնեաց նահանգիս. և զապաւէնն ամենեցուն և զտեղի ապաստանի զանառիկ ամուրն զԲաղաբերդ մատնեաց ի ձեռս Իսմայէլի անիծեալ և գիշախանձ առն, որ բազում զօրօք եկն և ոչ կարաց հնարել ինչ: Ապա պատրող բանիւք խաբեաց զպար-

դամիա արս քրիստոնեայս Աչաղուացիս. և նոքօք նախ առ զքարն կկոյց. և ապա ի գիշերի՝ այնու արամբք գողացաւ զԲաղաբերդ. և առեալ կոտորեաց սաստիկ. և զի վասն անառիկ ամրութեանն յամենայն վանորէիցն անդ էին կուտեալ զարբուքիւնս և զգրեանս և գսպաս եկեղեցւոյ. ևս առաւել՝ զանհամար և զաննման արբուքիւնս և սպաս եկեղեցւոյն Տաթևոյ՝ փարթամ և հարուստ աթոռոյն, խաչ և վկայարանք յոսկւոյ և յարծաթոյ, և անգին ականբք և անհուն մարգարտով զարդարեալ, և կտակարանք յոլովք որք թուով աւելի քան զ10,000 գրոս ամբարեալ էին անդ, Ամենայնն առ հասարակ գերի վարեցան, եւ ցան և ցիր եղեն ընդ երեսս աշխարհի: Աւաղ և եղկ է մեզ զի առաւել եղեւ մերս կորուստ և ապականութիւն քան զերուսաղէմին ի Նաբուգոդոնոսորայ արքայէ. քանզի նմա երբեմն եղև դարձ և նորոգութիւն որ ի կիւրոսէ. իսկ մեզ վերջինն տիրեաց թշուառութիւն անդարձ և յաւիտենական:

Ապա մինչ մատնեաց զմեզ Տէր, և օր ըստ օրէ եղծանելով կամէր եղծանել, զայլ բերդերն և զամուրսն իւրեանց կամաւ եառն Ջելաքուզ աթաբէկն. և ընդհանրական տիրեաց Տաճիկն. և ժամանակ դառն և դժնդակ հասաւ. և առ հասարակ ամենայն երկիր և շինանիստքն յաւեր դարձան և անմարդաբնակ եղեն: Բայց Գրիգորն

որ իշխէր Բաղաց, եւ ածել ի Աչէնոյ իշխանացն մանուկ մի Հասան անուն ի Գեռաքարեցեացն. և եւ զդուստր իւր կատայն նմա ի կնութիւն. և կացոյց ժառանգ թագաւորութեան իւրոյ. և ինքն եւ եղբայր իւր Սմբատ յառաջքան զառնուլ բերդին մեռանին ի 615 թուին: Մինչ զբերդն կամէին առնուլ՝ Հասան կացոյց բերդապահս, և ինքն առեալ զկին իւր և զընտանիս՝ ի դիշերի ել ի բերդէն և անց, գնաց ի գաւառ իւր և ի տուն ի Աչէն:

Իսկ մնացեալ ազատքն Զուրջն եւ Խոսրովիկն տղայ հասակաւ մեռան ի Նախջաւանի. և թաղեցան ի Ճահուկ. և եղբօրորդի մի Զուրջին գնաց վախստական ի քաղաքն Անի Մահևան անուն. և միւս իշխանն Համտուն որ էր որդի մեծ իշխանին Բաղաց Հասանայ, և Թոռն աւագ Համտունայ, գնաց ի վայոց ձոր առ փառաւորեալ եղբայրն իւր Տէր Յովհաննէս, որ բնակէր ի խորաձոր անապատին որ Նորավանս կոչի, մերձ Հրաշկաբերդոյն. և անդ կրօնաւորեալ՝ ի նմին վախճանի ի նմին 680 թուականին: Ահա զայսօրինակ բարձաւ տէրութիւն Սիւնեաց և Բաղաց. և եղև վախճան տոհմին Սիսակայ և նախարարութեան Սիւնեաց. քանզի ամենայնքն որ կային յառաջագոյն յաւուրս Սմբատայ և Սահակայ, իւրաքանչիւրքն՝ էր որ անգաւակ մնացին. և էր որ կիսօրեայ փոխեցան, էր որ սպա-

նան և դերեցան եւ ծնացեալ էին միայն այս Գրիգոր և Մարտա որք այսու օրինակաւ բարձան:

ԿԲ

Վաճառայք եւ ուխտ եկեղեցւոց թէ ըռնի էին յայսմ ասխարհի:

Առաջին՝ գլուխն ամենեցունց վանօրէից և աղբիւր շնորհաբաշխութեան տանն Սիսական Տաթև, և մեծ առաքինարանն Թանահատի վանք, Սիւնի վանք որոյ եկեղեցին չքնաղ և նորակերտ ձևով կանգնեալ գմբէթայարկ խորան երկնանման, ի մեծ բարեպաշտուհւոյն Վարազդխտոյ՝ Սիւնեաց տիկնոջէ յառաջ քան զհայ թուականն, յանուն սրբոյ Հուսաւորչին: Եւ առաջև վանացն ի մէջ քաղցրահայեաց մէյդանին դնեն իշխանքն տուն արքունի և ապարանք իշխանանիստ, եւ յամենայն աւուր ասեն գային ի ժամ պատարագին: Ապա կնէվանք զորմէ ասեն մանկունք անդէորդք արածէին Չոլիբս եզանց, եւ սկսան խաղալ. եւ կարեալ կնիւն մի և արարին խաղ և եդին ի վերայ քարի մի և սկսան երկրպագել և ասել «զոր ինչ երէցն ասէ և ընթեռնու, այն ի վերայ քո եղիցի. և յայսց եզանցս այս երեքս քեզ մատուցանեմք եղիցի»: Եւ զոր նոքա ընդ խաղս արկին՝ Հոգին Աստուած իջեալ տնօրինէր նոյնպէս:

Ապա ի ժամ երեկոյին սկսան գնալ. և թէ-

պէտ չանացին՝ զայն նուիրեալ մատաղան ոչ կարացին յարուցանել ի տեղւոյն. զնացին եւ ազդ արարին տէրանցն. և նոքա եկեալ ոչ կարացին շարժել. և հարցեալ զպատճառն ի մանկանցն՝ խոստովանեցին զուղիղն: Կոչեալ այնուհետև քահանայս օրհնեցին զխաչն և զենին զերկինան և պատուեցին զտեղի կնիւնին: Ազդլինէր այս իշխանացն Սիւնեաց. և գային ի տեսութիւն. և հրամայեցին շինել եկեղեցի ի տեղւոջն, եւ սահմանեցին զնա տուն կրօնաւորաց. բայց զտեղի կնիւնին թողին ի մէջ եկեղեցւոյն փոս մի դուռնաքեայ. և մինչ յաւեր տեղւոյն ձէթ բղխէր ի փոսոյն այնքան՝ զի օտար ձիթոյ ոչ կարօտանային. այլ եկեղեցւոյն կանթեղունքն նուաւ կերակրիւր. և դեռ ևս կայ եկեղեցին և տեղի կնիւնին, և խաչ ևս որք վկայեն անսուտ գոլ: Ապա վաղատնին վանքն. Նորավանք, Երիցու վանք որք էին մշտապաշտօնք. Շատանեայ վանք. և սոքա մշտնջենաւորք. Գողորեայ վանք. Վահանու վանք. Տանձափարախ. և սոքա խարազնազգեստք և սահմանաւորք. Լուսակէ վանք. Լհէ վանք. Քրաւնից վանք. Թադէի վանք. Կուռափաձորոյ վանք. Ծիծառնոյ վանք. Աչաարոյ վանք. Զիւնաբուս վանք:

Ի վայոց ձորոյ կողմանն Աստակերից վանք որ Քարկոփ կոչի. և սոքա մշտապաշտօնք. Նորավանք որ յետոյ եղև եպիսկոպոսարան. միւս

Նորավանք. Ցաղաց քար՝ բարձրահռչակ և սուրբ առաքինարան յորում ի 490 թուականին ի թագաւորութեանն Գագկայ, հայր ոմն վանից Վարդիկ անուն շինէ պայծառ եկեղեցիս երկու ի հանգստարանի առաջին սուրբ հարցն, զմին զմբէթայարկ յանուն սրբոյ Կարապետին, և զմիւսն սագաշէն, հրաշալի յօրինուածովք։ Ապա Հերմոնի վանք. Թանատէի վանք յորում կայ նշխարք սրբոյն Ստեփաննոսի. Գնդայի վանք։ Իսկ ի Գեղամայ մեծ մենարանն Մաքենոցն և վանաց վան և միւս Վանէ վան. Շողուագայի վանք։ Ահա այս ամենայն վանեաւր յականէ և յանուանէ ի գլխաւորագունից, յորոց բազումք ամայի և թափուր են ի շինութեանց, և սակաւքն ի լուսաւորութեան այժմ, որք են թուով 30. բայց այլ ևս բազումք կային զորս ոչ թուեցաք։

ԿԳ

Եպիսկոպոսք որք կարգեցան զկնի Տեառն Գրիգորի։

Վախճանի Տէր Գրիգոր կեցեալ ամս 58. և յաջորդէ զաթոռին Տէր Ստեփաննոս ամս 27։ ի սորա աւուրս եղև շարժն Գանձակայ ի587 թուականին, և զողաց երկիր ի հիմանց. և զմբէթն մեծ եկեղեցւոյն ի Տաթև բոլորապոյր շրջեկաւն թռեաւ և անկաւ ի վերայ սուրբ Գրիգորոյն եւ գաւթին որ ի դրանն կայր. և փլոյց առ հասա-

բակ։ Իսկ ի592 թուին կաթաբեցաւ սուրբ եպիս-
կոպոսս այս. և ժամանակ դժնդակ եհաս զոր
լեզու ոչ կարէ պատմել. և ամենևիմբ չնչեցան
մարդ և անասուն. և անբնակ եղև բոլոր աշխարհս
Սիսական. միայն թէ ի ծերպս քարանց սնացեալ
էին ուրեք ուրեք երկու կամ երեք արք։

Յետ Տեառն Ստեփաննոսի առնու զաթոռն
Տէր Բարսեղ. եւ սակաւ ինչ կեցեալ անկանի
պատահմամբ ինչ ի գետն Երասխ մօտ յԱստա-
պատ գեղ չորեքտն հանդերձ յոր հեծեալ կայր։
Եւ մտեալ լեղորդաց հանին յայն կողմն. և լոյս
մեծ ճառագայթեաց ի վերայ չրոյն. և տարեալ
թաղեցին ի Մաղարթոյ վանք որ ի սրբոյն Բար-
դողիմէէ շինեցաւ. և պահեցաւ յորմ եկեղեցւոյն
ի մանանայէն Իսրայէլացւոց երեք հատ, զոր
հաստատէ Միխայէլ պատմագիրն։ Ապա ամայա-
ցեալ էր աթոռն ի քննակչաց. և ոչ գոյր տէր և
կամ իշխեցող զի հոգայր վասն եկեղեցւոյս կամ
վասն սուտ մնացորդաց հօտին և ի խնդիր լինել
առաջնորդի։

Էր աւագ երէց մի ի մեծ աւանին Մեղրոյ
Գրիգոր անուն. այր ճշմարիտ եւ լաւ. որ էր
եղբայր Տեառն Բարսղի, սա յերիւրեալ ի սրբա-
սէր և ի մեծահաւատ տիրուհւոյ իւրմէ Ծամամ
կոչեցելոյ, որ ասէր. ոմ երէց՝ ամայացաւ աթոռն
Սիւնեաց, փութա, եւ լեր քահանայապետ զի
եւ որդեակս մեր լիցի որդի քահանայապետի։

տես զսուրբն Գրիգոր և զորդիս և զթոռունսիւր զի էին և նոքա կաննամբիք։ Յորմէ հաժարձակեալ գնայ առ Տէր Գրիգորիս՝ եղբայր Ներսիսի՝ Հայոց կաթողիկոսի. եւ անդ ձեռնադրեալ եպիսկոպոս՝ դայ ի վիճակս Սիւնեաց. և տեսեալ ամս 20 մեռանի ի Վայոց ձոր ի Յարձայ գիւղ. զի շրջէր ընդ վիճակեալսն, ի թուականին 617։ Եւ սաբեալ ի սուրբ ուխտն Նորավանս եդին ի հանգիստ ընդ երանելի եւ սուրբ եպիսկոպոսին Տէր Յովհաննիսի կապանեցւոյն. Եւ յաջորդէ զտեղին որդի Նորին Ստեփաննոս մանուկ տիօք, լի ամենապատաւիկ շնորհօք, սիրեցեալ և մեծարեալ յաչս աւագաց որք էին ի ժամանակին իշխեցողք՝ Ելիկում Աթաբէկին և որդւոյ նորա Փալհաւանին և Ազիլ Ասլանին և Բուբաք Աթաբէկին, որք և զգուական անուամբ Ֆախրելմսեհ կոչէին, որ թարգմանի սիրող Քրիստոսի, և պատուէին զնա տուղրայիւ գրոյ և փարմանաւ և մանշուրաւ զոր մեք սիգէլ կոչեմք։

Ի սորա աւուրս էին Թամարն և Լաշա Գօրգին՝ թագաւորք Վրաց, և մեծ ամիրսպասալարն Զաքարէ և եղբայր իւր Իվանէ աթաբէկն որք և մեծապէս սիրէին և պատուէին զնա։ Եւ եւտուն ի կայեն տեղի հանգստեան նմա զգերահռչակ ուխտն Հաղարծին և գիւղն զԱբասաձորն։ Սա նորոգեաց զխախտեալ եկեղեցին ի Տաթև զսուրբ առաքեալքն, և եդ զնել զգմբէթն ի ձեռն հօրն

Յակոբայ Ճանկեցւոյ: Սա ձեռնադրեաց եպիսկոպոս ի Հաբաատ զտէր Գրիգորիս՝ քեռորդի Զաքարէի և Իվանէի, և տեսեալ յեպիսկոպոսութեանն ամս 46՝ վախճանի ի վայոց ձոր յԱռիայ գիւղն. և տարեալ զնի ընդ հօր իւրում ի նոյն Նորավանս, ի 665 թուականին: Ապա առ կենօք սորին էր ձեռնադրեալ եպիսկոպոս Տէր Սարգիս՝ քեռորդի սորա հրամանաւ քեռւոյն իւրոյ յԱղվանից կաթողիկոսէն: Եւ յետ ժահուան Տեառն Սահակայ միւս այլ հօրեղբօրորդի նորին Յովհաննէս անուն գնացեալ յԱղթամար, և անդ ձեռնադրեալ եպիսկոպոս. և նա նստէր ի Տաթև: Եւ այս Տէր Սարգիս բնակէր ի վայոց ձոր, ի Նորավանս մենաստանի. և բաժանեալ զթէմ վիճակին՝ զվայոց ձոր բովանդակ առնոյր սա. եւ զայլն թողոյր ի Տէր Յովհաննէսն: Եւ յայսմ հետէ և առ յապա հաստատեցաւ և այն ուխտ աթոռ եպիսկոպոսութեան. զի էր տուն և տեղի ապաստանի յաւերժան ժամանակին տանն Սիւնեաց, տեղի հանդստեան և շիրիմք գերեզմանաց բազում եպիսկոպոսաց. զորոյ զորպիսութիւն շինուածքեան և զպատճառ հանդիսանալոյն յետոյ ասացից:

Տէր Յովհաննէսն կեցեալ ամս 38՝ վախճանի ի Նորավանս մեծահռչակ ուխտի. և դնի ի գաւթի Նորակերտ եկեղեցւոյն յ700 թուականին: Եւ առնու զաթոռն եղբօրորդի նորին Տէր

Հայրապետ և միւս ազգականն Տէր Սաղոմոն։ Իսկ Տէր Սարգիս հիմնարկեալ զեղապաճոյճ եկեղեցւոյն ի Նորավանս հրամանաւ և օժանդակութեամբ մեծ իշխանաց իշխանին Լիպարտի՝ որդւոյ Ելիկումին ի ցեղէ մեծի նահապետութեանն Օրբէլեանց որ ի վրաց աշխարհէն, ի թուականին 665. և կատարէ հրաշազան յօրինուածովք յանուն սրբոյ Նախավկային. և ի նմին խորանս խորհրդաւոր ուխտ՝ զամս եօթն (աշխատեալ)։ Եւ ինքն յետ բազում արդեանց և երևելի արարուածոց գնայ ի Կիլիկիա առ բարեպաշտ արքայն Հայոց Հեթում. և պատիւ յոլով ընկալեալ ի նմանէ, և տեղի հանգստեան՝ զաւազ Մէլիճին. եւ բազում ճգնեալ անդ՝ գնաց ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, ի գերեզման Աստուծոյն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի. և երկրպագեալ աստուածաւկոխ տեղեացն՝ գտանէ զանկշիռ պարգևն՝ զալն սրբոյ Նախավկային Ստեփաննոսի. և առնու ի Փռանգէն, զի յայնժամ Փռանգք տիրէին սուրբ քաղաքին։ Յորոյ վերայ գրեալ կայր փռանգ եւ հռոմ և ասորի գրով եթէ սրբոյն Ստեփաննոսի է նախավկային. և առաքէ ի սուրբ ուխտն Նորավանից. որ եւ կայ անդէն ի սուրբ եկեղեցւոջն։

Եւ ապա առեալ Խորազմին զերուսաղէմ ի Փռանգէն՝ կոտորեաց սաստկապէս. և ելից գտաճար Տեառն արեամբ. և գտեալ զերանելի եպիս-

կոպոսն զՏէր Սարգիս ի վերայ գերեզմանին Տեառն ի սաղմոսերգութեան այլ ևս երեք ընկերօք՝ հատին զգլուխն և հեղին զարիւնն ի վերայ գերեզմանի Տեառն կափարչին. և այսպէս մարտիրոսական արեամբ պսակեցաւ ի Քրիստոսէ Աստուծոյն մերոյ։ Եւ յաջորդեցաւ ի տեղի նորա քեռորդի իւր Տէր Ստեփաննոս ամս 20. և ապա յետ նորա Տէր Սարգիս՝ եղբօրորդի Տեառն Ստեփաննոսի եւ որդի Վահրամայ ճգնաւորի, այր իմաստուն և արդիւնաւոր և վարդապետ ընտիր և բազմաշխատ, որ և բազում արար արդիւնս ի տանս ի գործս երևելիս, և զարդարեաց զեկեղեցիքն պատուական սպասուք. և առաւել հանդիսացոյց զդերափոխ սուրբ մենաստանն քան զնախնիսն իւր։ Իսկ Տաթևացիքն շինեցին զվանքն որ ի բազում (ամաց հետէ) աւեր և ամայի ճնացեալ էր, զոր և փարթամացուցին ամենայն պիտոյիւք մեծ և փառաւորեալ իշխանաց իշխանքն Սմբատ և Տարսայիճն՝ որդիք Լիպարտի. և ինքեանք կեցեալ ի միասին՝ նախ վախճանի Տէր Սաղոմոն անդէն, և ապա կեցեալ Տէր Հայրապետ ամս 40. և զի առ կենօք սորին էր ձեռնադրեալ եղբօրորդի իւր Յովհաննէս անուն. և յետ սորա կեցեալ բազում հակառակութեամբ ամս երեք՝ վախճանի և դնի ընդ հօրեղբօր իւրում Տէր Հայրապետին։

Յետ որոյ և մեր ապիկար և թարմատար

անձին յաջորդեալ ի կրկնանորոգ գահ մետրապօլտուքեան տանս Սիսական, և զերկու գահերէց աթոռքս և աշխարհախուժք հանդիսարանքս միապետեալ՝ զՅաթեն և զնորավանքս հանդերձ բոլոր վիճակելովքս, այժմ կամք կանգնեալ ի կամար երկնահանգէտ լերինս մինչ ի սահմանեալ կէտ իմ, ուր Տէր սպառեսցէ։

ԿԴ.

Սկիզբն եւ պատճառ ծինուբեան եւ նախապատիւ գահերիցութեան սուրբ եւ գերահռչակ եւ փառաւոր ուխտին եւ աբեղարհայրիս խմբարանին Նորավանից։

Յառաջ քան զայս բազում ժամանակօք, վաղաւուրբք և հնագոյն ամօք, ի նեղ և անձուկ ձորակին այնմ, ի պատշաճաւոր տեղւոջ էր շինեալ եկեղեցի մի կրաշաղախ վիմօք յանուն սրբոյ կարապետին՝ յոյժ սքանչելագործ և ահարկու և անուանի մերձակայ սահմանացն։ Եւ բղխէր մերձ նմին աղբիւր քաղցրահամ. և ձորն ամենայն գեղեցկացեալ էր այգեօք և թանձրախիտ ծառօք մրգաբերօք։ Նաև ի թանձրամած կաշկաւուտին, ի նոյն ձորին կայր եկեղեցի մի յանուն սրբոյ հայրապետին Փոկասու շինեալ. և ի մէջ եկեղեցւոյն բղխէր չուր սակաւ ինչ ներքոյ

բեմին. և ընդ չքոյն ելանէր և ձէթ բժշկարար. զորմէ լուաք ի հնագոյն աւանդութեանց եթէ բերեալ եղև ի նշխարաց սրբոյ հայրապետին Փոկասու, և անդ հանգուցեալ. յորոյ անուն եւ տեղին Փոկաս կոչեցաւ: Եւ առնէր հրաշս զարմանալիս զի ամենայն անբուժելի ցաւք և անհնարինք ի մարդկանէ՝ գոդութիւնք և բորոտութիւնք և վէրք բազմաժամանակեայ նեխեալք և ապականեալք, ի ժամանելն ի տեղին յայն հաւատովք, և ի լուանալ ի ջուրն, և յօծանելն ձիթով, բժշկեալ լինէին. և թէ մահացու լինէր՝ առժամայն վախճանէր: Եւ վասն այսր մեծապէս լինէր հնչեալ համբաւ տեղւոյն ընդ ամենայն աշխարհ:

Ապա ի նուազեալ ժամանակիս, մինչ եհաս աւեր ամենայն աշխարհի և բարձաւ թագաւորութիւնն Բաղաց. և սպանաւ թագաւորն Սենեքերիմ, եւ բնաջինջ եղև տէրութիւնն Բաղաց. եւ խափանեալ լուեցին ամենայն ուխտք պաշտօնէից. ի 554 թուականին էր եպիսկոպոս ոմն ի վանսն Յովհաննու Յովհաննէս անուն, լցեալ ամենայն առաքինութեամբ. և բոլորովին զգեցեալ զԲրխատոս, յազգէ ազնուական, որդի մեծափառ իշխանին Բաղաց Հասանայ, որ ունէր ընդ ձեռամբ զամենայն ազատս թագաւորութեանն այնմ. եւ էր որդի մեծին Համատունայ: Այս Յովհաննէս յետ աւերման իւրոյ աշխարհին, բազում ալէ-

կոծեալ այսր անդր, եկն ի վայոց ձոր գաւառ. և կամեցաւ բնակել ի խորաձոր անապատին Նոբրավանից, մերձ անառիկ դղեկին Հրասեկայ բերդոյն, առ հիւսոզր եւ մեծասքանչ եկեղեցւոյն սրբոյ կարապետին։ Եւ երթեալ յանդիման լինի մեծի արքային Պարսից Մահմուտ սուլտանին, ծանօթանայ նմա և առնու ի նմանէ փարման և մանշուր վասն տեղւոյն այնմ։ Համարձակ բնակէ ի նմա ժողովեալ սրս կրօնաւորս և ճգնազգեացս, և հեռացուցանէ ի վայրէին զամենայն սրս աշխարհականս. եւ շրջապատիւ սահմանէ զվայրն ամենայն կանգնելով ըղնշանն տէրունի զի մի՛ անցանիցեն ընդ այն կանայք և լկտի մարդիկ։ Եւ առնու ի սահմանակցացն հողս եւ անդաստանս ի ժառանգութիւն եկեղեցւոյն՝ ի Գանձակեցեացն և ի Տխարբեցեացն։

Սա նեղեալ յանիծեալ և խպիղծ բերդապահէն Հրասեկայ, որ էր Ղազրիկ Ծորասանի, եւ որսայր սպանանել զսուրբ եպիսկոպոսն, և աւերել զկրօնաւորանոց տունն սուրբ ուխտին, փոխէ զձևն ըստ պարսկական օրինի զի հմուտ իսկ էր նոցին լեզուի, և գնայ փախստեայ առ սուլտանն յԱսպահան քաղաք։ Եւ էր նորա որդի միամօր, և հիւանդացեալ էր անհնարին ցաւօք. և էր մերձ ի վախճան. և ամենայն հնարք բժշկաց հատեալ էր. և էին ծնողք մանկանն և մայր սուլտանին ի մեծ սգի եւ արտմուտեան։ Ապա տեսանէ ի

տեսլեան մայր սուլտանին եթէ այրն օտար, որ եմուտ ի քաղաքս, եպիսկոպոս է, եւ անունն՝ Յովհաննէս. նա բժշկեսցէ զմանուկդ. վասն որոյ վազվազակի ի խնդիր լինէին նմա. և գտեալ ածին առաջի մեծ սուլտանին։ Իսկ նորա լուեալ զնմանէ եւ ծանեաւ, ընդ յառաջ եղև նմա եւ երկիր եպազ հայցելով զի թէ հնար ինչ իցէ՝ բուժեսցէ զցաւ մանկանն։ Եւ մտեալ սուրբ եպիսկոպոսին, ըստ մեծայոյս հաւատոյն, առ կիսամեռ մանուկն, և առաքելական զօրութեամբ ի բաց հերքեալ զցաւն՝ աստուածաբար հրաման տայր կանգնել ի մահճացն մահացեալ մարմնոյն։ Յաղագս որոյ հիացեալ մեծաւ զարմացմամբ սուլտանին՝ հարցանէր ի նմանէ զպատճառ գնալոյն. և նորա ծանուցեալ զդառն ալէտս ամիրային Հրասեկայ բերդոյ, և զմիւս խուլամին որ յԱնապատ բերդի։

Ընդ որ յոյժ ցասուցեալ՝ երախտահատոյց լինի նմա և տայ զՀրասեկայ բերդ մանշուր գրով ի ձեռն եպիսկոպոսին. և առաքէ ընդ նմա արս հաւատարիմս սատակել զբերդապահն իւրովք ընտանեօք, եւ տալ զտեղին յեպիսկոպոսին։ Ընդ նմին և շնորհէ մայր սուլտանին զԱնապատ բերդն երկոտասան ագարակօք նմին Տեառն Յովհաննիսի, և անսուտ սիգելաւ և անանցական մանշուրաւ շնորհէ ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն Նորավանից. զորոց արքունական նամակս և մեք

իսկ ընթերցեալ ճշդրտեցաք. և ըստ տաճիկ օրինին էր անհուն երդմամբք հաստատեալ զգիրն՝ նայաթք և ասիզաղք բազում կարգեալ ի նմա: Գալ ապա մեծաւ խնդութեամբ եպիսկոպոսն ի տեղի իւր հանդերձ հրոսակօքն, և ըմբռնեալ զամիրայն ընտանեօք իւր ի Հրասեկայ բերդ՝ քառավէժ սատակէ. և զտեղին քանդեալ աւերէ: Եւ զմիւսն որ յԱնապատի հալածեալ՝ զբերդն ազատրակօքն հանդերձ ոչսհականէ եկեղեցւոյն:

Բայց յետոյ Հրասեկայ բերդն շինեցաւ, և բնակեցան ի նմա Պարսիկք, զոր և վերստին առին յաւուրս Աթաբէկ Իվանէին ի ձեռն Առփայեցի Աթաբամարին և վասակայ իշխանի Մաչենեցւոյ որ էր հայր Պռոշայ՝ բարեպաշտ և մեծարգի իշխանի, հրամանաւ և ուժով Իվանէի. իսկ Անապատն միայց առ սուրբ եկեղեցւոյն մինչև ցայսօր: Բայց ինքն իսկ եպիսկոպոսն էր լցեալ ամենայն առաքինութեամբ. և կայր մեծամեծ ճգամբք. և բազում սքանչելիս երևեցուցանէր այնքան՝ զի զորատանց հրամայէր լռել՝ և լռեցին մինչև ցայժմ: Եւ կին մի և մանուկ ատնտեայ անկեալ պատահմամբ ընդ մեծ քարն որ հանդէպ վանիցն, ի Տխաբրայ շինոյն: տեսեալ սրբոյն և կնքեալ նշանաւ խաչին հանդէպ՝ անվնասաք միացին եւ ամբողջ զարձան անդրէն ի տուն իբրեանց՝ և ասէին «Տէր Յովհաննէս կայր ի յատակ քարիս և երկու ձեռամբ ըմբռնեալ

ապրեցոյց զմեզ»։

Եւ այսպէս կեցեալ բազում ամս՝ վախճանի ի թուին Հայոց 663. և դնի յիւրում աղօթարանին ի մէջ երկուց վիմացն ի նմին ուխտի. և զօրութիւնք մեծամեծք ելանեն ի գերեզմանէ նորա. զի սատակէ զմուկն եւ զթրթուռ եւ բժշկէ զամենայն պատահարս ի մարդ և յանասուն և յանդաստանս։ Եւ ապա յետ նորա մինչ էառ ելակուզն զմայր սուլտանին. և տիրեաց արքայական գահոյիցն, եկն Տէր Ստեփաննոս շնորհազարդն, որ և Փախրըլմսեհ կոչեցաւ յԱթթաբէկէն, և բնակեցաւ ի սուրբ ուխտն Նորավանից. զի հին աթոռն աւերեալ էր և ապականեալ. և հայր սորին Տէր Գրիգոր անդէն կայր ի շիրմի։ Եւ հասատատեալ զնա առն աթոռոյ եպիսկոպոսութեան՝ առնու փարման եւ սիգէլ ի մեծ Աթաբէկէն վասն վիճակիս այսր զի ի նմա ժառանգեսցեն ժառանգորդք սուրբ եկեղեցւոյն։ Նմանապէս և խնդրէ թուղթ շրջաբերականի ի մեծ կաթողիկոսէն Հայոց ի Տէր Գրիգորէ զի լիցի սեպհական վիճակ ժառանգութեան այս գաւառք սուրբ ուխտին Նորավանից։

Եւ ապա յետոյ գնացեալ առ աթաբէկն ելակուզ՝ յուցանէ զնամակ սուլտանացն. և ի նմանէ ևս առնոյր մանշուր հաստատուն գրոյ ամենայն ժառանգութեանց եկեղեցւոյն Նորավանից. և խնդրէ ևս զԱգարակի ձոր գիւղ, զոր և քաղցր

կամօք և զայն ևս ընծայէ հաստատուն եւ անսուտ մանշուրաւ սուրբ եկեղեցւոյն, և զամենայն որ ինչ էր վանիցն արար ազատ յամենայն աշխարհական հարկաց՝ գհող եւ զջուր, զայգի, զգիւղ և զադարակ և զբերդն իսկ Անապատայ։ Ապա կեցեալ բազում ամս՝ վախճանի անդէն, և դնի ընդ հօր իւրում ի 665 թուականին։ Եւ յաջորդէ զտեղին Տէր Սարգիս որ մարտիրոսացաւն յերուսաղէմ։ Սա առ կենօք սորին (իմա Ստեփաննոսի) եղև եպիսկոպոս, և բնակէր ի Նորավանս։ Եւ էր Տեառն Ստեփաննոսի եղեալ գրաւական զաստուածամուխս սուրբ նշանն, զՏէր Յովհաննիսի զաւագ խաչն և զթիթեղնակապն և զկամարակապն. թիթեղնակապն ունէր թիթեղունս ոսկի ի վերայ երեսացն. և կամարակապն՝ կամար ականաձև թևէ ի թև, առ եպիսկոպոսի մի յԱծոպոյ վանս, ի Շահապօնս, Պետրոս անուն։ Զոր և իմացեալ կողմնակալի այսմ կողմանց վասակայ իշխանի՝ հօր Պռոշայ, առնու բռնաբար զերիս զայս առտուածացեալ սուրբ նշանքս. և տարեալ զաւագ խաչն ընծայէ Աթաբէկին Իվանէի, և զերկուսս՝ զթիթեղնակապն և զկամարակապն տարեալ դնէ յիւրում վանսն ի կեչառուս ուխտի։ Ապա ի 665 թուականին մինչ կայր աթաբէկն Իվանէ ի խասար (պաշարումն) ի վերայ բերդոյն որ Զարէքն կոչի, գնայ Տէր Սարգիս հրամանաւ և գրով քեռւոյն իւրոյ Տէր

Ստեփաննոսի առաջի Աթաբէկին ի խնդիր առուծընկալ սուրբ խաչին։ Եւ զի էր նորա դրծակալ եւ հրամանատար ի վերայ ամենայն իշխանութեանց իւրոց, և աւագ հէջպաց մեծ և բարեպաշտ իշխանն Բուպակ կոչեցեալ. և էր սա աներ Լիպարտի՝ որդւոյ Ելիկումին, և Լիպարիտն յոյժ սիրեցեալ էր յաչս Իվանէի. և խաչն կայր ի պահեստի ի Պղնձահանքն։

Յանդիման առնեն զեպիսկոպոսն Աթաբէկին և մատուցանեն զդիրն. և ինքեանք մեծապէս հոգ յանձին կալեալ չանացին թափել զգերեալն. և բազում դանձս ծախեալ ի մեծամեծան և ի ներքին խորհրդականսն։ Բարեպաշտն Լիպարիտ 500 դահեկանի չափ ընծայէ, և աղերս Աթաբէկին 500 դահեկան կարմիր յաղնուականն ոսկւոյ, և այնպէս իբր գնոյ առնելով հաճեցաւ զմիտս նորա դարձուցանել անդրէն։ Ապա հրամայէ կոչել զեպիսկոպոսն և դնէ պայման նմա և ասէ «եթէ ոք կամի զսրբոյ նշանին անդրէն դառնալն՝ տացէ վաղիւն զբերդս զայս ի ձեռս իմ, և ես տամ զնա ի ձեռս քո, ապա թէ ոչ՝ դառնաս ունայն»։

Իսկընդ լուսանալ առաւօտուն՝ զօրութեամբ սուրբ խաչին, բերեն բերդացիքն ինքնայօժար կամօք զբանալի բերդին և դնեն առաջի Աթաբէկին։ Բերեն ընդ նմին այլ ևս երիս բանալիս

բերդից, և դնեն առաջի: Ընդ որ յոյժ խնդացեալ և զարմացեալ ընդ սքանչելիսն՝ հրամայէ աւագ ծիկնաւպարին իւրոյ դիւանին Աւնաւֆրէ անուն գնալ ընդ Տեառն Սարգսի և տալ զիաչն ի նա ի պղնձահանքն ուխտի. որ և առ ժամայն կատարեցաւ: Եւ նորա գնացեալ առնու զիաչն խնդութեամբ, և անցեալ փութանակի գայ, հասանէ ի Նորավանս ուխտ. եւ բնակեցուցանէ անդէն զսուրբն Ղազարոս. որ և եգիտ վախճանեալ զքեռին իւր Տէր Ստեփաննոս, բայց առաւ ի գինս գերեալ խաչին ի Լիպարտէ 1000 դահեկան կարմիր, որպէս ասացաք: Իսկ թիթեղնակապն և կամարակապն ձնացին անդէն ի կեչառուս:

ԿԸ.

Վասն շինութեան եկեղեցւոյն Նորավանից եւ հոգեցաւոր ժառանգութեանց նորա. եւ այլ շինութեանց եւ արդեանց որ եղեւ ի Լիպարտէն եւ յիշատակաց Օրբէլեանց:

Այս բազմերջանիկ եպիսկոպոս Տէր Սարգիս, յետ վախճանին Տեառն Ստեփաննոսի՝ կամեցաւ շինել եկեղեցի եւ հանդիսացուցանել զսուրբ ուխտն: Եւ էր այլ ոմն թեկն ածեալ սմա, եւ կամէր լինել աթոռակալ Սիւնեաց՝ Յովհաննէս անուն՝ հօրեղբօրորդի Տեառն Ստեփաննոսի. եւ երթեալ յԱխթամար ձեռնադրի անդ: Վասն ոչ սիրելոյ զհակառակութիւն և զօձառումն եկեղեցւոյ երջանիկն ի հայրապետս Տէր Սարգիս թողու

զամենայն վիճակն ի Տէր Յովհաննէս, և առնու զվայոց ձոր գաւառ, զՃահուկ և զնախջաւան սեպհական ժառանգութիւն սրբոյ ուխտին իւրոյ Նորավանից. և զայլն թողու ի նա:

Եւ գնացեալ ինքն առ կաթողիկոսն Հայոց Տէր Կոստանդին, և առնու ի նմանէ վիճակ հաստատուն անխախտելի դաշամբ, և թուղթ շրջաբերական վասն այսց գաւառացս զի լիցի հաստատուն վիճակ ժառանգութեան սուրբ եկեղեցւոյն Նորավանից. և անբաւ հրահոսանն նզովիւք վակեալ ամրացուցանէ զի մի ոք ի կաթողիկոսացն կամ յիշխանաց կամ յեպիսկոպոսաց իշխեցէ հակառակել կամ խանգարել զայս սահմանադրեալ վճիռ: Նաև լինի աղմուկ վասն սուրբ խաչին. և գնան երկոքին եպիսկոպոսքն և Լիպարիտն և որդի իւր Ելիկումն ի դատաստան առ Ամբաբէկ Իվանէն ի Դվին: Եւ նորա նստուցեալ զմեծամեծս իւր, հրամայէր քննել՝ զԲուսպակն և զմարծուանն, զԻվան դպէլն եւ զմեմնաշաղէլն, զմեծ ճղաւնդիտէլն՝ որ եկեալ էր ի թագաւորութենէն, զծիրամ ծղաւրն Վարձէոյ և զծիրամ ծղաւրն Պղնձահանից և զմեծ մամբաւարն Գարշատէուցն, զԳագեցին և զՄածնաբերդեցին և այլ բազում ղէղեպուլք ևս և զղատին Տփղեաց և զղատին Անւոյ և զղատին Դվնայ և զանուանի շեհին Սուրմարւոյ. ընդ որոց և զմեծ եպիսկոպոսն Անւոյ և զեպիսկոպոսն Բջնւոյ և զեպիսկոպոսն Հախ-

բատայ. որք և քննեալ իրաւունք դատեցան այսպէս «եթէ մեռեալն և գերեալն զմի ունին օրինակ. որ ոք զմեռեալն յարուցանէ՝ ոչ է ծնողացն ծնունդ, այլ նորոգողին գնա. և որ ոք գգերեալ թափէ. ոչ է առացողին յայնմհետէ. այլ գերեթափին:

Արդ՝ որպէս աշխարհս այս առմամբ սրոյ և ձեռին սեպհական կոչի ժառանգութիւն վրաց թագաւորութեան, այնպէս և այն խաչ սեպհական էր Իվանէի, և ի տալն գնա ի Լիպարիտ և ի Տէր Սարգիս բազում ծախուք մինչ ի 1000 դահեկան, Լիպարտի և իւր եկեղեցւոյն է պարտ լինել յաւիտենական ժառանգութիւն»: Ապա այսմ դատաստանի յոյժ հաճութեամբ հաւանեալ Աթաբէկին եւ ամենայն բազմութեան ազատակոյտ իշխանացն՝ հրամայեցին ունել զխաչն անդային և անհամխմաղ Լիպարտի և իւրոցն:

Իսկ եպիսկոպոսն Տէր Սարգիս խորհեալ ընդ մեծ Լիպարտի՝ սկսանին միաբան մեծավաստակ աշխատանօք և անչափ ծախիւք շինել զգեղեցկայարմար եկեղեցին ի Նորավանս. և աւարտեն գնա ամս 7՝ ուր խորանօք, ի թուականին Հայոց 672. եւ մեծահանդէս ժողովով եպիսկոպոսօք, վարդապետօք, գահագլուխ իշխանօք, ազատօք և տանուտէրօք առնեն նաւակատիս սրբոյ տաճարին. ընդ որում էր և մեծ իշխանն Բուսպակ որ և ընծայէ սուրբ և նորակերտ քաւարանին յիւ-

րոց հալալ արդեանց և հայրենեաց պատուղ բոլորահաւատ զգաստակեն Աղբերիս իւրով սահմանօքն, չրարբի և անչրդի վայրօք, մեծ ձորովքն որ Թմաձոր կոչի, և գնչեաց սահմանովքն մինչ ի գանձակայն որ հայրեացն տափ կոչի։ Եւ հրամայէ գրել վճիռ արձանի անխախտ պայմանաւ եւ հաստատել ինքեան յիշատակ յամեն տարի առնել տան պատարագ մօր իւրոյ. և աւանդէ գայս ի ձեռն Տեառն Սարգսի. եւ էր օրինակ վճռին այսպէս։

«Ի ժամանակի թագաւորութեանն որդւոյ Թամարին Լաշային, յամիր սպասալարութեանն Հայոց և Վրաց Շահանշահի, և յաթաբէկութեան Իվանէի հօրեղբօր նորին, ես մեզուցեալ ծառայ Քրիստոսի Բուպակ՝ իշխանաց իշխան, եկի ի նաւակատիս սուրբ եկեղեցւոյս Նորավանից առ երջանիկ հայրապետս մեր Տէր Սարգիս. և ընծայեցի ի հալալ հայրենեաց իմոց զոր իմ բազկաւս առեալ էի յայլազգեաց և իմ արեամբս թափեալ, և իմ պարոնայքն մեծ սիգելով այլ ինձ էին ուրոշեալ, զԱղբերիս գիւղ իւր ամեն սահմանաւն, ի սուրբ եկեղեցիս Նորավանից ի սուրբ կարապետս և ի սուրբ Նախավկայս տուի՝ ազատ յամեն հարկաց. և չունի ոք հրաման յայսմ հետէ մինչև յաւիտեան հակառակիլ այսմ ոչ յաւագաց, ոչ յիմոց, ոչ յօտարաց։ Եւ Տէր Սարգիս և այլ միաբանքս հաստատեցին ի տարուն տան պա-

տարագ՝ ի վարդավառին ասնին իմ մօրն հոգւոյն։ Արդ՝ թէ ոք յանգդնի եւ հակառակել Յանայ այսմ տրիցս՝ մատն և բաժին դՅուդային և զխաչահանուածդն առցէ՝ և ընդ ամենայն չարագործսն ի կայենէ սկսեալ մինչև ի նեռն դատապարտեալ պատժեսցի, և ի սուրբ Երրորդութենէն և յամենայն սրբոց ևս և յերից սուրբ ժողովոցն նզովեալ եղիցի ի մահ եւ ի կեանք. եւ իմ ապգք և զաւակք չունին ոչ ձեռն, ոչ իշխանութիւն ի վերայ այսմ տեղեաց։ Բայց թէ տաճիկ աւազակ փոխի և հատակել Յանայ՝ յիւր Աստուծոյն ապիզմր լիցի, և յիւր փեղամբարձն որոշած. և անհամար հազար նապաստ ի վերայ նորա և յորդւոց և յազգի նորա եղիցի յայսմ հետէ մինչև յաւիտեան. ի թուիս Հայոց 672»։

Եւ զի յառաջ քան զայս յափշտակեալ էին զգիւղն Ագարակի ձոր. վասն որոյ խնդրէ Լիպարիտն բազում թախանձանօք յամիր ոսլասալարէն Զաքարէէ. և տարեալ յուցանէ մանշուրն Աթաբէկ Ելտկուզին. և թափէ զգիւղն. և հրամայէ գրել ինքեան յիշատակ ի վանն Նորավանս, եւ նզովիւք հաստատել զի մի ոք իշխեսցէ հեռացուցանել զնա ի սուրբ եկեղեցւոյն. եւ ինքն գրէ իւրով ձեռամբն այսպէս. «ես մեղուցեալ Յառայս Քրիստոսի Զաքարէ ամիր սպասալար՝ որդի մեծին Սարգսին, Հայոց եւ Վրաց տսպարապետի, զարձուցի զԱգարակի ձոր գիւղն

ի Նորավանս ազատ յամենայն հարկաց. և խընդրեցի ի Տէր Սարգսէ՝ առաջնորդէ սուրբ ուխտին ի տարուսն ինձ տասն օր պատարագ զոր պարտին անխափան կատարել. և յետ մեր մի ոք իշխեացէ ի մերոց կամ յօտարաց յափշտակել զայս պիւղս ի սուրբ եկեղեցւոյն. ապա թէ յանդգնին՝ նզովեալ լիցին յԱստուծոյ ամենակալէն և յամենայն սրբոցն, և մասն և բաժին նորա ընդ Յուդայի և այլ խաչահանուացն և ուրացողացն եղիցի. եւ մեր մեղացն պարտականն լիցի»: Հաստատ է կամաւն Աստուծոյ, ի թուականիս Հայոց 660:

Յետ այսր բազում արդիւնս ցուցեալ մեծին եւ բարեպաշտին Լիպարտի ի սուրբ ուխտն, զի նմա շնորհեալ էր զգաւառն և զվանքն հայրենագիր սիգելաւ յԱթաբէկէն Իվանէէ, հրամանաւ թագաւորին և Լաշա Գէորգիին. և եդեալ ի վերայ գնիք թագաւորին անանցական ստանեաւ: վասն որոյ ի ձեռն եպիսկոպոսին Տէր Սարգսի շինէ զպայծառակերտ քաւարանն. և զարդարէ սպասուք. և փարթամացուցանէ ամենայն գոյիւք և ժառանգութեամբ՝ ինքն և որդիք իւր, զոր ըստ կարգի յիշեսցուք. և գրէ ինքեան արձան յիշատակի ի վերայ սուրբ եկեղեցւոյն այսպէս. «ի 672 թուականութեանս Հայոց, կամաւն Աստուծոյ, ես Լիպարիտ՝ որդի Ելիկումին, թոռն մեծի Օրբէլեանց, որ եւ հայրն իմ վասն մեծի քինոյն եւ ի հայրենի աշխարհէն իւրմէ և ի թա-

դաւորէն Ափխազաց. և գնաց ի տունն Պարսից, առ Աթաբէկն Ելտկուզ. և նա մեծաւ փառօք և գորովագութ սիրով ընկալաւ զնա, և պարգեւեաց նմա զմեծ քաղաքն Համիան. եւ յետ ժամանակաց եթող զիս որբ: Եւ մեք անդիտութեամբ խաբեալք ի նոցանէ՝ ծանեայ ապա զհաւատն իմ հայրենի. և ի մանկական հասակիս դարձայ վերըստին ի լուսաւոր հաւատ սրբոյն Գրիգորի. և եկի առ մեծ Աթաբէկն Իվանէ. և նորա բազում սիրով ընկալեալ զմեզ՝ ետ փոխան հայրենեաց իմոց զՀրաշկաբերդ իւր կերովս (եկամտիւք). և այլ բազում գիւղս ի վայոց ձոր, ի Գեղաքունի, ի Կոտայն և ի Կայեն: Եւ ես մեծ յուսով շինեցի զվանքս որ կոչի Նորավանս, յաւագնորդութեան Տեառն Սարգսի՝ Սիւնեաց վերապիտողի, և կանգնեցի զսուրբ եկեղեցիս բազմածախ դանձիւք. և դարձուցի զաւազ սուրբն Գրիգորի բազում ծախիւք ի տանէ Աթաբէկ Իվանէի. և բնակեցուցի ի սմա, Թափեցի և զԱգարակի ձոր իւր սահմանովն. եւս և զՏխարըբ գիւղն իւր ամեն սահմանովքն, և թաղք մի ի Համասրի գիւղ»:

Իսկ Տէր Սարգիս և միաբանքս հաստատ գրեն արձան յիշատակի իւրոց եղբարցն և ծնողացն այսպէս. «ի թուականիս Հայոց 710 այս գիր յիշատակի և արձան անջնջելի իմ Սմբատայ է՝ իշխանաց իշխանի, որդւոյ մեծին Լիպարտի որ զաղօթարանս շինեցի և զեկեղեցիքս նորոգե-

ցի վերսին, և զաստուածամուխս սուրբ նշանքս և զսուրբ նշխարքս որ հաւաքեցաք ասա, զարդարեցի ոսկի պահարանօք. եւ ետու նախ յիմ հալալ հայրենեացն երկու գիւղ՝ զԱւէշ և զԱնապատս որ յափշտակած էր ի տեղւոյս, և յԱկուռի զնորաստունկ մեծ այգին իւր կիւրակէրօվն։ Եւ Տէր Սարգիս և միաբանքս սահմանեցին յիշատակ մեզ զաւազ բեմն՝ բովանդակ տարին անխափան պատարագօք՝ զկիրակին և զշաբաթն Լիպարաի՝ զհինգշաբաթն՝ Աստային, զերկուշաբաթն և զերեքշաբաթն՝ Ելիկումին, չորեքշաբաթն՝ Իվանէին, ուրբաթն Փախրադուլային։

Դարձեալ ետու և զՀողոցմոց այգին և զՁուռոյ այգին. և հաստատեցաք յամեն եկեղեցիքդ մին օր պատարագ հանին մերոյ Խաթունին։ Յետ այսմ և տուաք զԱզատ գիւղն իւր ամեն սահմանովն, շրջակայ լերամբ եւ դաշտով՝ սկսեալ ի բարձր դիտաւոր սարէն որ Ռուռակախաղաց կոչի, մինչ ի յԵրեւանն, Հողոցմոց և Ճաւաձոր և ի գլուխն Ակուռոյ։ Ընդ սմա եւ զիմ ձեռաստունկ այգին ի Ծաղկաձոր վասն հոգեաց եղբօրորդւոյն իմոյ Բուրթէլին որ տղայ հասակաւ սպանաւ ի պատերազմի յաշխարհն Խալանդրաց ի դաշտին Խազրաց զոր այժմ Խիչախք կոչեն։ Եւ սահմանեցաք նմա պատարագ 15 օր, որ ամ յամէ անխափան կատարեն՝ զ10 օրն յԱւագ տօներին Դաւթի եւ Յակոբայ և այլոցն, և զինգ

օրն ի Նոր կիւրակէին։ Արդ՝ եթէ ոք ի մերոց կամ յօտարաց, յաւագաց կամ ի ձեռնաւորաց զմեր յիշատակս խափանել ջանայ, և ինչ և իցէ պատճառաւ հակառակել կամ յափշտակել խորհի՝ յամենասաստեղծ հրամանացն Աստուծոյ անլուծանելի անիծիւք ընդ Բելիարայ և իւրոցն և ընդ օձին նզովեալ եղիցի. և յառաքելոց և ի մարգարէից և ի հայրապետաց և ի մարտիրոսաց և ի սրբոց հրեշտակաց որոշեալ և անիծեալ լիցի. ընդ Կայենի և Քամայ, Կորխայ և Դաղանայ և Աբիրոնի, Եզաբելի եւ Գեեզի, Յուդայի և Արիոսի և ուրացեալ Վասակայ դատապարտեալ անշէջ հրովք պատժեացի ինքն։

Եւ ելցեն մեզ պատարագ յամեն շաբաթուն յաւագ խորանն երեք օր՝ կիւրակէն, շաբաթն և գինդշաբաթն. կիւրակէն և շաբաթն՝ իմ մեղապարտ հոգւոյս Լիպարտի. և գինդշաբաթն՝ իմ կենակցին Ասփային։ Արդ՝ ո՛ոք լինիք ժառանգաւորք սուրբ եկեղեցւոյս՝ խնդրեցէք մեզ մեղաց թողութիւն. և որդեկաց մերոց Ելիկումին և Սմբատայ և այլոցն՝ արեշատութիւն. և զմեր յիշատակս կատարէք անխափան։ Եւ թէ ոք հակառակի այս հոգեցատուր գիւղիս և կամ այլ արարուածիս. եւ յափշտակել ջանայ ի սուրբ եկեղեցւոյս՝ ի սուրբ Երրորդութենէն նզովեալ եղիցի հոգւով և մարմնով, և յերից սուրբ ժողովոցն եւ յամենայն սրբոց անիծեալ լիցի. ընդ

սատանայի և ընդ Յուդայի և ընդ նեռինն և ընդ ամենայն ուրացողաց դատապարտեացի յահաւոր առենին Քրիստոսի. իսկ կատարիչքն օրհնեալ եղիցին: Եւ թէ տաճիկ աւազ փոխի և շորթել չկանայ՝ յիւր հաւատէն ապիզմն եղիցի և յԱստուծոյ և յիւր փեղամբարձէն հազար հազար նզովք լինի. երկինքն նորա մի ցօղեսցէ, և երկիրըս նորա մի սպղաբերեսցէ»:

Եւ ահա մինչ այս այսպէս լինէր յաջողեալ յամենայն կողմանց. ապա և լինքն Տէր Սարգիս, յետ բազում արդեանց, դնայ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, որպէս վերագոյն ասացաք, և անդ մարտիրոսական մահուամբ կատարի: Եւ յաջորդէ ի տեղին Տէր Ստեփաննոս, որ և սա գնացեալ առ մեծ կաթողիկոսն Հայոց Տէր Կոստանդին. և վերատին հաստատէ զայն ուխտ յաթոռ եպիսկոպոսաց, և զթէեմն զոր ունէր՝ զՎայոց ձոր բոլոր և զնախջաւան և զՃահուկ գաւառովն. և առնու շրջաբերական թուղթ. յորում և էր ահագին նզովիւք փակեալ և ամրացուցեալ զի զկնի ժամանակաց մի ոք իշխեսցէ խախտել. և ունէր օրինակ զայս:

Ապա և ի սորա ժամանակս մեծ և արքայաշուք իշխանն Սմբատ՝ որդի Լիպարտի, շինէ ժամատուն մի հրաշակերտ յօրինուածովք՝ տեղի աղօթարանի ի դրան սրբոյ Նախավկային ի տաշածոյ վիմաց և ի կոփածոյ քարանց: Եւ

յաւուրս Տեառն Սարգսի, որ զկնի սորա, անման սպասուք զարդարէ զեկեղեցին մեծածախ գանձուք յոսկւոյ և յարծաթոյ և ի պատուականմետաքսէից. և շնորհէ հայրենական ժառանգութիւն սուրբ ուխտին գիւղս երիս և այգիս յԱկոռի և ի Հոդոցմոց, յԱռփայ և ի Զուայ և յԱմաղվաձորիս: Եւ ուխտիս ցուցանեն Ախթամարն և Արփասլանն. և գրեն ինքեանց յիշատակ և պատարագ: Նմանապէս և քահանայ ոմն Շնորհաւոր անուն. սա բազում հայրենիս ի նոյն գիւղ (ընծայէ) և հազար դրամ. և սահմանէ ինքեան պատարագ: Յայնմ ժամանակի զարթոյց չարն պատերազմ ի մէջ եկեղեցւոյ. և յարեան ոմանք, (որ) զՍիմէին և զԱկիտոփելին խորհելով ի վերայ սուրբ և առաքելական աթոռոյս, և սկսան օձտել և խախտել զսահման մեծավիճակ գաւազանիս Սիւնեաց, որ հին և հարուստ ժամանակօք առաքելական և հայրապետական կանոնիւ հաստատեալ կայր: Իշխան ոմն Պռոշ անուն՝ որդի Վասակայ, զիւր գաւառն և զգեղանան որ ի վայոց ձոր, կամէր յափշտակել և այլում եկեղեցւոյ ժառանգեցուցանել: Եւ աներկիւղ ոմն անզգայաբար մոլեգնեալ ի չար ախտէ անափառութեան և ագահութեան, ի գաւառին Երնջակայ Յովհաննէս անուն՝ որդի երիցու մի, Սեդրաք անուն յԱպրակունիս գեղջէ, գնայ առ երջանիկ կաթողիկոսն Հայոց Տէր Կոստանդին.

և պատրեալ գնա խաբող բանիւք՝ ձեռնադրի եպիսկոպոս, և գայ յերկնչակու վանս յօգելով պատճառս այսպիսի. եթէ և այս աթոռ եպիսկոպոսաց դի գոն աստ գերեզմանք հայրապետաց որք էին պատահմամբ եկեալ վասն ամրութեան բերդին ի ժամանակս եպիսկոպոսացն Սիւնեաց. և անդ վախճանեալ:

Եւ թիկունս արարեալ յայլազգեացն հաղարապետ մի. և բռնաբար յափշտակեաց զերկնչակ գաւառ. վասն որոյ ելեալ եպիսկոպոսացն Տէր Սարգսէ ի Նորավանից, և Տէր Յովհաննէս՝ ի Տաթևոյ, հրամանաւ և օժանդակութեամբ մեծի և բարեպաշտ իշխանաց իշխանին Տարսայիճին՝ եղբօր Սմբատայ, գնացին առ մեծ կաթողիկոսն Հայոց Տէր Յակոբ որ զկնի Տեառն Կոստանդեայ. և ծանուցին նմա զաղէտ տարակուսանացն և զպատահումն առաքելական վիճակին: Իսկ նորա լուեալ և ընդոստուցեալ՝ հրամայէ գրել թուղթ և ահագին նզովիւք կտրէ ի կենաց զեղկելին Յովհաննէս որ յերկնչակի. և հրահոսան անիծիւք փակէ մի ևս համարձակիլ ումեք ի հերքումն այնր վիճակի: Նմանապէս և առ իշխանն Պռոշ գրէ թուղթ մեղադրելով զինքըն և զորդիս իւր. հրամայէ ի բաց կալ յայնմ մտածութեանց. ապա թէ ոչ՝ անէծս ցաւագինս ժառանգեսցէ: Ահա զայս հոգացեալ եպիսկոպոսացն՝ դարձան այսրէն և եկեալ ի տեղիս իւր-

եանց. նախ մատուցին զնամակն Պռոշայ, և նա ըստ հանճարեղ մտացն և մեծայոյս հաւատոյն մեծաւ զղջմամբ զմեղայ խոստովանելով եթող զհակառակութիւնն և ձեռագիր պայմանաւ հաստատեաց ուխտ երդման զի այլ ոչ ևս մատծեսցէ կամ ինքն կամ իւրքն զայնպիսի բանսարկութիւնս. և զարձոյց անդրէն զթէմն. և օրհնեցաւ յեպիսկոպոսացն: Իսկ զմիւսն որ յերկնչակ որջացեալ՝ ըմբռնեալ ցուցին զնզովաբերն նամակըն. և հանեալ կողոպտեցին ի նմանէ զձևն եպիսկոպոսութեան և քահանայութեան. և անդրէն հաստատեցին զգաւառն ամենայն: Բայց օրինակ շրջաբերական թղթոյն Տեառն Յակոբայ զոր բերին, այս իսկ էր:

Դարձեալ և յետ աւուրց ինչ այր մի մեծազգի ի տոհմէ իշխանացն Բաղաց, Թոռն Զուրջեանց Մահևան անուն, զորոյ զնախնիսն յաւերման ժամանակին բերեալ էր Աթաբէկն Իվանէ. և բնակեցուցեալ ի վայոց ձոր և տուեալ հայրենեաց զնրբոյն բերդ այլովք ագարակօք: Եւ այս Մահևան անզաւակ գոլով՝ բաժանէ զհայրենիս իւր ընդ եղբօրորդւոյ իւրում Ամիրային. և առնու զկէս բերդին և որչափ զուրն հատանէ զանդաստանն որ ի վարդենեաց կողմանն. և եկեալ ի սուրբ ուխտն առ Տէր Սարգիս՝ ստանայ ինքեան գաւակ զսուրբ եկեղեցին և զսուրբ նշանն. և ընծայէ զիւր հայրենաբաժին զնրբոյն և զտուն

և զայգիս որ յԱռփայ և զամենայն ստացուածս իւր ի սուրբ նշանն. և զրէ ինքեան արձան յիշատակի. և անդրին և մեծամեծ նզովիւք փակէ և ամրացուցանէ զի յետ ժամանակաց մի ոք իշխեսցէ խախտել զայն հոգեցատուր ի սուրբ եկեղեցւոյն. և սահմանէ ինքեան քանի օր պատարագ ամ յամէ անխափան։

«Եւ արդ՝ եթէ ոք ի մեծամեծաց կամ ի փոքունց. յաւագաց կամ ի ձեռնաւորաց այս տրոցս հակառակ կայ, և զՆրբոյն ի սուրբ եկեղեցւոյն Նորավանից հանել խորհի զինչ և իցէ պատճառաւ. և կամ յառաջնորդաց տեղւոյն և ի ժառանգաւորաց զպատարագն ծուլանան կատարել և անհոգս առնել, այնպիսիքն չնչեալ եղիցին ի զպրութենէն կենաց, և մասն և բաժին զատանային և զՅուդայի և զամենայն չարագործացն առցեն, և յԱստուծոյ և յամենայն սրբոց նզովեալ եղիցին։ Եւ անուն և յիշատակ նորա չնչեալ եղիցի յաշխարհէ. և մեր մեղացն պարտական եղիցի. իսկ կատարիչքն օրհնեալ եղիցին։ Եթէ տաճիկ աւազութիւն փոխի, և խափանել չանայ՝ յԱստուծոյ և յիւր փեղամբարձն ապիզակը լիցի. և իւր հալալն նորա հարամ լիցի, երկինքն նորա հուր ցօղեսցէ, և երկիրս նորա փուշ բերցէ. և ինքն որդւովք և ազգով իւրով չնչեալ եղիցի ի կենաց իւրոց. ամէն»։

Բայց այլ ևս բազում արդիւնս առնեն ի

սուրբ եկեղեցին ի բնիկ ազատաց և յընտիր տանուտէրաց, որպէս Ախթամարեան զարմքն որ ի հին ժամանակաց բնակեալ էին յԱուփայ պիւղն՝ տան յիւրեանց հայրենեացն գԴայեկի քարոյ այգւոյն զվերին բաժինն:

ԿԶ

Վասն մեծի ևախարարութեանն Օրբէլեանց եթէ ուսոի էին եւ որպէս. եւ վասն գալոյ նոցա յաշխարհս յայս. եւ վասն բազում բանից եւ գործոց զոյցք յոլովք:

Ձիսկզբան նահապետութեան աշխարհիս Հայոց և վրաց և ի ցեղապետութեան մերոյինս սեռի նախնւոյն Թորգոմայ, էին նորա որդիք ութ արուազոյնք և հսկայակերպք. որոց երիցագոյնն Հայկ, երկրորդն՝ Քարթլոս, երրորդն՝ Բարդաւս, չորրորդն՝ Մովկան, հինգերորդն՝ Լեկան, վեցերորդն՝ Հերաւս, եօթներորդն՝ Կովկաս, ութերորդն՝ Եգրէս: Ապա բարժանեալ Թորգոմայ զժառանգութիւնս որդւոց իւրոց՝ տայ զՀայաստան աշխարհս բոլոր սահմանօքն Հայկայ և զծմակային աշխարհն հիւսիսային՝ Քարթլոսայ և այլոց եղբարցն:

Իսկ Քարթլոս գնաց ի լեառն որ կոչի Արմազ. և անդ շինեաց իւր տուն և ամրոց մի անառիկ ի պատշաճաւոր տեղւոջ, և կոչեաց զբերդն Օրբէթ. և անուանեցաւ աշխարհն

այն ի Խունանայ մինչև ի ծովն Սպերոյ յանուն նորա Քարթլ։ Ապա յետ բազում ժամանակաց որդիք զհարս փոխանակելով եկն նահապետութիւնն Քարթլայ մինչ ի ժամանակս թագաւորութեանն Պարսից մեծին Խոսրովու որ Քէքաւուս կոչեցաւ։ Եւ սահման էր Վրաց կոչել զգլխաւորն իւրեանց տանուտէր զի ոչ ունէին թագաւոր. և նստէր տանուտէրն ի Քարթլ ի մեծ քաղաքին Մցխիթայի, որ շինեցաւ ի Մբցխիթայէ՝ յաւագ որդւոյն Քարթլոսայ. որք եւ նեղեալ յայնմ ժամանակի ի բռնաւոր թագաւորէն Պարսից՝ կամէին զմահ ընդ կենաց փոխանակել։ Եւ կացեալ յայնմ ժամանակի պետ աշխարհին Վրաց Արդարմոս պարսիկ հրամանաւ Աբրիամոնայ որ տիրեալ էր Պարսից և Վրաց եւ Աղվանից։ Այս այն Արդարմոս է, որ շինեաց վերատին զՄցխիթայ և պարսպեաց կրաշաղախ վիմօք, և եդ պարիսպ յԱրմազ լեռնէ մինչ ցգետն Կուր։ Որ և յետ վախճանին սորա արք չորք տիրէին Վրաց. և խռովութիւն և ապականութիւն տիրէր ամենեցունց առ հասարակ. էր որ ի Քէքաւուս Խոսրովոյն, և էր որ զկնի նորա ի Քուէ Խոսրովոյն. և էին վիրք ի մեծ վշտի և կային յուսահատեալք յամենայն կողմանց։

Ահա ընդ ժամանակս ընդ այնոսիկ անկանէր աղմուկ շփոթի և խռովութիւն սեծ ի մէջ թագաւորութեանն Ճենաստան աշխարհի որ յա-

լևելս կոյս, որ անդր է քան զաշխարհն Ասիանդրաց՝ սահմանակից Ասորւոց և Հոնաց. որ և ձգի երկայնութեամբ մինչև ցեմաւոն լեառն: Քանզի ի մեռանել թագաւորին Ճենբակուր կոչեցելոյ թագաւորացունքն սկսան պատերազմել ընդ միմեանս. և զօրացեալ մի կողմն՝ փախստական լինի միւսն, որ էր այր յաջողակ և պատշաճագեղ, ուժով և անձնեայ երիտասարդ հասակաւ. որոյ առեալ զընտանիս իւր և զգունդն թագաւորական գանձուքն՝ օգապարիկ երիվարօք սրաթռիչ լեալ անցանեն ընդ բազում աշխարհօք այնքան ահագին կերպարանօք զի ոչ ոք համարձակէը ընդ առաջ լինել նոցա: Եւ անցեալք ընդ գուռն Դարիալայ՝ իբր վերին ակնարկմամբն եկին յաշխարհն Քարթլայ, առ տանուտէրն Մցխիթայ. և տեսին զնոսա նեղեալ և ի մեծ վտանգի տարակուսեալ ի Պարսկացն:

Ապա խօսին ընդ տանուտէրն և ընդ աւագագոյն արան և ասեն «մեք ի թագաւորացն Ճենաց եմք. և հատուածեալ յեղբարց մերոց եկաք աստ. և հաճեցաք ընդ ամուր աշխարհս ձեր. եւ աստուածք ձեր վասն վշտիդ ձերոյ ածին զմեզ յօգնութիւն ձեզ. արդ մեր կամք է կամ գտանել առ Պարսից թագաւորութիւնն և կամ անցանել առ ինքնակալն Յունաց. բայց թէ ձեզ հաճոյ թուիմք՝ պատրաստեցէք մեզ տեղի հանգստեան. և կամք աստէն և թափեմք զձեզ ի

նեղչաց ձերոյ. և թէ ոչ՝ երթամք զճանապարհ մեր ուր և Աստուածն մեր հոգայցէ»: Իսկ տեսեալ աւազ տանուտէրաց աշխարհին զայնպիսի արս քաջակորով և ուժեղս, և լուեալ զհաճոյական բանս նոցա՝ մեծապէս խնդացին ի վերայ եկելոցն. և արարին խրախուճիւն մեծ. և բարձր փառօք և մեծաշուք պատուով ընկալան զնոսա և սիրեցին յոյժ յոյժ. և զանառիկ ամուրն Օրբէթ, որ շինեալ էր ձեռամբն Քարթլոսայ, եւտուն նոցա տուն բնակութեան և տեղի ամրութեան. և գաւառս բազումս և աւանս մեծամեծս և բերդեարս եւտուն ի ժառանգութիւն նոցա:

Ապա միամտեալ նոցա ի տեղւոջն բնակեցան յՕրբէթն, և վասն անուան բերդոյն յեա յոլով ժամանակաց Օրբուլք կոչեցան, այսինքն Օրբէթեցիք. զի սովորութիւն է ազգին այնմ անուամբ տեղւոյն կոչել զիշխանսն, որպէս Մեթխեուլքն և Մեսխեուլք և Մրաջուլքն, և ի Հերեթոյ Հերխթավքն, և ի Ջաւախեթոյ՝ Ջաւախուրքըն, և ի կախեթոյ՝ կախեցիքն, և ի Լեխթայ՝ Լեխթիմայքն և այլ բազումք. որ և մինչև ցայսօր սակս այսր պատճառի Օրբէլք կոչի ազգն այն. որք և յառաջն Ճենեուլք կոչէին, այսինքն Ճենացիք: Եւ արդ՝ մինչ այս այսպէս լինէր՝ ապա ինքեանք ժողովեցին զտունն վրաց, և զօրս գումարեալ յարեան ի վերայ ամենայն նեղչացըն և կոտորեալ հալածական արարին ընդդիմա-

նալով Պարսից. և եղև խաղաղութիւն յաշխարհին յայնմ. վասն որոյ կարգեցին զնոսա ասպարապետ և զօրագլուխ ամենայն տանն Վրաց: Եւ ի թագաւորելն Վրաց առաջին թագաւորին Փառնավազայ առաւել պատուեցան Օրբէլքն ի նմանէ. և ի Վրաց աշխարհին ոչ գոյր ոք նման նոցա կամ հաւասար բայց միայն ի թագաւորէն:

Եւ ահա զայս ծանեաք ընդ աղօտ լինչ ի Վրաց պատմութենէն. բայց վասն նախանձուն Գէորգի թագաւորին որ ագգաւ ՉՆՉեաց զնոսա ի Վրաց աշխարհէն, ՉՆՉեցին զանունս նոցա ի պատմութենէն իւրեանց և յամենայն գրեանցն և յեկեղեցեացն: Վասն որոյ և մեք քննեալ և տեղեկացեալ ծանեաք զսակաւն ի բազմաց ի գիտող արանց և ի ճնացեալ յիշատակարանաց ուրեք ուրեք, ևս և յաւանդութեանց նախնեացն իւրեանց զոր ծանուցին հարք որդւոց մինչև ցմեզ: Այլ զի ժառեալ էր յիշատակ նախնական գրուցաբանութեանց նոցա, նա և ամենայն արուեստիւնք և գործք երևելիք ի տանն Վրաց ազգին Օրբէլեանց ի նոցին ժամանակագրոցն զոր Քարթլիս ցխորեբայ կոչեն, վասն այն մեք ոչ գիտացաք զորպէսն և զկարգ բանիցն զի և ըստ կարգի շարայարեալ էաք ի մատենիս, բայց զոր գտաք ի հայալեզու գիրս սակաւ լինչ յիշատակ՝ դիցուք, ևս և զվախճան կատարածի նոցա զոր հաւաստեաւ ծանոյց մեզ գեղեցիկ պատմութիւնն

Մխիթարայ Անեցւոյ։

Սրդ՝ ի թուականութեանն Հայոց 498 ի թագաւորութեանն Վրաց Դաւթի, և Հայոց Գագկայ շահանշահի որ ի Վանանդ, և ի կայսերակալութեանն Յունաց Մանուէմախին, տեսին նուազեալ զազգս քրիստոնէից հագարացիքն Իսմայէլացիքն. և ձայն տուեալ միմեանց ի Խորասան, ի Խորազմաստան, ի Փարս և ի Քրման, ի Բուխար և ի Մազանդարան, յԱրաղ, ի Բաղդատ և ի Բասր, յԱռան և յԱտրպատական. և ժողովեցան բազմութիւնք Պարսկաց և Խազրաց, Խորազմաց և Արաբկաց, Ասպետութեան Թուրքաստանեայց. և եկեալ բանակեցան ի դաշտին Կարնոյ, անթիւ և անհամար բանակօք. և խորհեցան զխորհուրդ զոր ոչ կարացին հաստատել, այսինքն բառնալ և չնչել զկրօնս և զանուն քրիստոնէից ի Հայոց, ի Վրաց և Յունաց աշխարհէն։

Ապա համբաւ դառնալոյր և տիեզերակործան հուչակին հասանէր յառաջագոյն առ կայսրըն Յունաց. և դողումն սարսուալի հասեալ կաչաւ զերիկամունս ամենայն մարդոյ։ Վասն որոյ յղեն այսր զկոմնենոսն Տրապիզոնոյ զօրօք. և խնդրեն միաբան օգնականութիւն ի Հայոց և ի Վրաց թերևս կարասցեն զերծանիլ յայնմ անգնդապատոյտ և ահագնեռանդ բարկութեանցն Հարաւայնոց։ Զոր լուեալ թագաւորին Դաւթի և Գագկայ՝ ոչ համարձակեցան ընդ առաջ ելա-

նել իմայելեան զօրուն. այլ մեծապատաս թա-
խանձանօք (համոզեն) զքաջն անպարտելի՝ զԼի-
պարիան Օրբելեանց գնալ և խառնիլ ի զօրն
Յունաց և ընդդիմանալ մարտին եկելոյ. և ին-
քեանք զօղեալ որչացան յամուրս աշխարհին:
Ապա յանձն առեալ Լիպարիան անվախ սրտիւ
ասէ «ես երթամ ընդ առաջ այլազգեացն և դնեմ
զանձն իմ ի վերայ քրիստոսական հաւատոյս,
և զօրութեամբն Աստուծոյ կամ պարծուցանեմ
անդրէն և կամ մեռանիմ վասն Քրիստոսի. բայց
ով թագաւոր՝ յանձն առնեմ զյետնորդս իմ
քեզ զի մի վասն նախանձոտ և չարաբարոյ ազա-
տացդ վրաց նենգեսցես ինչ սոցա և զրկես-
ցես ի պատուոյ և ի հայրենեացս մերոց»:

Զայս ասացեալ ինքն Լիպարիտ հանդէս ա-
րար ազատաց և զօրաց իւրոց, որ ունէր զկէս
թագաւորութեանն, և անցին ի հանդիպին 700
ազատք մեծամեծք, որք էին սեպհական ծառայք
նորին. և 16,000 արք պատերազմողք: Իսկ ի զօ-
րացն արքունի էառ ասան հազար այր. և գնա-
ցեալ ի Վանանդ ի դաշտն Կարուց՝ խառնեցան ի
նա զօրքն Հոռոմոց 15 հազար այր. և եղեն մի-
անգամայն 41 հազար հեծեալ: Եւ զի այլազգի-
քըն կոտորեալ էին նախ զՄըրդրու գիւղ. և ասպա-
տակեալ էին զամենայն շրջագայ գաւառսն, և
բանակէին ի նոյն դաշտի. ապա ճակատեցան
ընդդէմ իրերաց ընդ լուսանալն այգուն. և յո-

բինեցին զռազմն հանդիսին երեքկարգեան զընդովք՝ նախամարտիկս և միջնամարտիկս և վերջապահս։ Եւ զի առ անթիւ բազմութեան Իսմայելացւոցն Լիպարտեան զօրն ոչ ինչ երևէին այլ իբր չրառուս կամ զինաքաղս թևէին առ նոցա. տեսեալ զայն անպարտելի ախոյեանն քաջն Լիպարիտ՝ զօրացոյց զդուն իւր և ասէ «մի երկնչիք. այլ միայն զօրացիք անուամբն Քրիստոսի և կնքեցէք զձեզ նշանաւ խաչին. և մեր է յաղթութիւնն»։ Եւ ինքն իջեալ յերիվարէն ծունրը դնէր և կնքէր զինքն նշանաւ սուրբ խաչին և յանձն առնէր Քրիստոսի. և կապէր ի պարանոցն զմասնն որ ի փրկական խաչէն. և այնպէս զինեալ զինքն՝ հեծեալ ի տաճիկ երիվարն, և ընկենոյր զոսկենկար վահանն ի թիկունսն, և զճաւճ նիզակիկն յահեակ բազուկն, և զկայն պողովատիկ շմշիրն երկբերանի ի յայլ ձեռինն. և զվաղրն անագին ի ներքոյ բարձին իբր զուռն դարբնոց և կամ զսակր կոտյաւոր քարահատից՝ անցեալ ի մէջ ռազմաւոր հանդիսին արշաւէր սիգալով յայսկոյս և յանկոյս։ Եւ յոսկեկուռ զրահէն և ի սաղաւարտէն նշոյլք հատանէին իբր յարեգականէ։

Փչէր, գոռայր իբր զառիւծ, խնդրէր ի նոցանէ մենամարտիկս, և ասէր. ես եմ Լիպարիտն Ափխազաց, եկայք քաջք Պարսից և Արեաց՝ և նախամարտեսցուք ընդ միմեանս»։ Եւ թէպէտ

բազում անգամ խնդրեաց. ոչ ոք իշխեաց ելանել ընդ առաջ նմա. և յոր տեղ սլանայր Էլիպարիան և իբր զարծիւ խոյանայր ի վերայ նոցա. յեաս յեաս մատչէին՝ զմիմեանս առաքուր կոխելով։ Ապա գիտաց Էլիպարիան զի բեկան սիրտք նոցա. և թուլացաւ զօրութիւն նոցա. դարձաւ յիւր ռազմն, և քաջալերեալ յառաջ շարժեաց. և գոչեցին ահեղ ազաղակաւ և խառնեցան ընդ միմեանս. և խմբեցաւ պատերազմն ահագին ի՛ն դղրդմամբ. որ թուէր իբր որոտումն ամպոց և ճայթմունք փայլատակմանց։ Եւ ինքն Էլիպարիտ իբր զամպ հրախառն մտանէր և ելանէր և կայծակնահար առնէր զբազումս. և զօրէն հրոյ ընդ եղէգն փոթորկեալ՝ ճեղքէր զոտամ նոցա և անցանէր յայն կողմն. և յալ և յահեակ հոսէր գետս արեանց. և դնէր կոյտս դիականց և հատանէր յայլազգեացն գունդս գունդս և զայն իբրև զերամս նապաստակաց տապաստ արկանէր ի դաշտին։ Եւ այնպէս կոտորեալ յաղթեաց Իսմայելացւոցն. և փախստական արար զսակաւ ինացեալսն քաջն Էլիպարիտ զօրութեամբն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյն մերոյ։

Եւ ապա ի հանգարտակել աւուրն դարձան ի մեծաձայն աշխատութեանց և վաստակոց մեծաւ գոհութեամբ և բազում ուրախութեամբ. իսկ անիծեալ և տիրասպան ազատքն վրաց երկուցեալ յահագին զօրութենէ նորա. և խորհուրդ

առեալ ընդ ղէղեպոզ զօրագլուխան Լիպարտի. և յանկարծակի հասին զՋիլ երիվարինն նորա. և ընկեցին յերկիր զԼիպարիտն: Եւ ի մէջ առեալ բազմութեանն սպանին զնա ի տեղւոջն. և ածին խաւար և սուգ քրիստոնէից: Զոր և իմացեալ Իսմայէլացւոցն. և մեծաւ խնդութեամբ դարձան անդրէն և սուր ի վեր առեալ կոտորեցին զզօրսն Վրաց: Եւ ոմանք փախստական եղեալ ցրուեցան ընդ երկիր. և այն էր կատարած կորստեան աշխարհիս Հայոց և Վրաց զի տիրեաց Տաճիկն ընդհանուր գաւառաց: Առին սակաւ մի յետոյ զԱնի որ ի 513 Արփասլան սուլտանն, առին և զԿարս, առին զբոլոր գաւառն Շիրակայ և Վանանդայ և Արշարունեաց և զԱրարատեանն և զՍիսական աշխարհս և զԲաղացն և զամենայն երկիրս մինչ ի դուռն Տփղեաց:

Եւ արդ զայսպիսի դուռն մեծի կորստեան և աշխարհագրումար կործանման քրիստոնէից յայնմ աւուր բացին անիծեալ և տիրասպան զօրքըն Վրաց. բայց ես զսպանումն Լիպարտի համարիմ ոչ կորուստ անձին. այլ գիւտ մեծի փըրկութեան՝ զի եղեալ զանձն ի վերայ հօտին Քրիստոսի՝ մեծապէս հանդիսացաւ, և անպարտ սպանմամբ յիւրոցն մարտիրոսական արեամբ պսակեցաւ, և գնաց առ ամենաթագաւորն Քրիստոս զի ի նմանէ ընկալցի զվարձս և զպարգևս մեծավաստակ աշխատութեան իւրոյ: Իսկ սպա

հաւատարիմ ծառայք նորա բարձին զդիակ պե-
պեցիկ երիտասարդին և անպարտելի քաջին
մեծաւ ողբով, և տարեալ ի կարս՝ կազմեցին
դագաղ և զարդարեցին ոսկեհուռ հանդերձիւ և
արքայական ճոխութեամբ, և արեալ տարան ի
մեծ հանդիսաւոր վանսն իւրեանց ի Բեթանիա,
որ էր շինեալ նախնեացն նորա տուն զերեզմա-
նի ինքեանց։

Եւ եկեալ թագաւորն Դաւիթ ամենայն մե-
ծամեծօք, և արարեալ կոծ մեծ ի վերայ նորա՝
եդին ի տապանի ընդ հարս իւր։ Իսկ պատիւ և
բարձ ցեղին Օրբէլեանց ի տան թագաւորին էր
այսպէս. լինել սպասաւար ամենայն զօրացն և հրա-
մանատար ամենայն աշխարհին Վրաց. և ամենայն
դրծակալք տանն արքունի ընդ ձեռամբ նոցին
(էին). ունել սեպհական երկոտասան դրօշս և
յամենն դրօշ՝ հազար այր. և զի սահման էր թա-
գաւորին սպիտակ լինել վառն և կարմիր նշան
ունել, հրամայեցին սոցա կարմիր ունել զվառ
դրօշին և սպիտակ նշան ի վերայ՝ և ի շրջելն
առաջի թագաւորին և ի կանգնելն ունել ի ձե-
ռին գաւազան առիւծագլուխ, և ի ժամ ճաշոյն
առանձին նստել բազմականացն ի վերոյ քան
զամենայն ղեղեալսլ նախարարան, և ուտել հաց
արծաթի սեղանով. և սոքա էին թագադիրք
թագաւորին։

Եւ արդ յետ բազում ժամանակաց ի թա-

գաւրութեանն Դաւթի հզօրի՝ որդւոյ Գէորգիի, մեծ սպասալարն Օրբէլեան Իվանէ յոյժ արիացեալ ընդարձակեցոյց զսահմանն վրաց պատերազմեալ ընդ Տաճկաստան. զի առին գՏփղիս իՏաճկէն և զՏաւուշ, զԳագ, զՏէրունականն, զվաւուէ և զԱնի ի 572 թուականին: Վասն որոյ առաւել սիրեցաւ և պատուեցաւ ի թագաւորէն, և իվերայ հայրենեաց իւրեանց տուաւ նմա ի թագաւորէն Լաւուէ իւր գաւառովն, և Ագարակն՝ տեղի դարապասի, և Շամշոյլաէ որ էր հայրենիք նոցին, վերատին տուաւ գաւառովն: Եւ այս մեծ սիգելաւ և թագաւորական մատանեաւ հայրենիք հաստատեցաւ նոցա: Իսկ ի մեռանելն Դաւթի հզօրի առնու զթագաւորութիւնն որդին նորա քաջն Դեմետրէ որ էանց գովութեամբ ընդ նախնիս իւր. և թագաւորեաց ամս 33: Սա առաւել սիրեաց և պատուեաց զԻվանէ և զորդին իւր Սմբատ: Ի նորա աւուրս առին Իվանէ և Սմբատ զՈւնիան որ ի բազում ամաց էր առ Տաճկին, և այն ևս հաստատեցաւ հայրենիք նոցա ի թուականին 577: Յետ այսմ մեռանի Իվանէ ծերացեալ աւուրբք. և առնու զթէրութիւնն նորա որդին իւր Սմբատ: Եւ ծանիր զի սոքա խնամութեամբ խառնեալ էին ընդ թագաւորին վրաց և ընդ թագաւորին Հայոց Կիւրիկեանց որք էին Բագրատունիք. վասն այնր պատճառի առին ի նոցանէ զԲագրատունի անուանն, այս-

ինքն զԱմբատն և զԻվանէն որ է Յովհաննէս, և զԼիպարիտն և զԵլիկումն և զԲուրթէլն ունին ի հին նախնեացն որ ի ճենայ եկին. և զայլ անուանն ի վրաց առին:

Դարձեալ և առնու միւս Իվանէ՝ Աբուլէթի որդին, զԴմանիս: Եւ յետ բազում յաղողուածոց և մեծամեծ քաջութեանց մեռանի Դեմետրէ թագաւոր ի 607 թուականին: Եւ առնու զթագաւորութիւնն որդի նորա Դաւիթ՝ նման հօրն, այր հզօր և իմաստուն. և կեցեալ ամս երկու. և սա մեռանի: Եւ ի ժամ վախճանին կոչէ զկաթողիկոսն և զմեծամեծ ղէղէպոսն, կոչէ և զեղբայր իւր զԳէորգի և զփոքրիկ տղայն իւր զԴեմնայն. և դնէ առաջի իւր զաւագ խաւտըն և զփրկական խաչն և զսուրբ աւետարանն և ասէ. ահա մեծամեծքդ վրաց՝ դուք ինքնին քաջ գիտէք եթէ որպէս չանաց հայրն իմ ի վերայ ձեր, և կրկին նորոգեաց զթագաւորութիւնս զայս. և ի ժամ մահուն մեծամեծ ուխտիւ և գրով ինձ շնորհեաց զթագաւորութիւնս. եւ ես այժմ մերձ եմ ի վախճան: Եւ իմ եղբօրդ Գէորգիի ոչ ինչ հաշիւ և բան ոչ գոյ ընդ այսմ աթոռոյ. արդ՝ որպէս հայրն իմ ինձ շնորհեաց սեպհական զայս տաճտ (աթոռ) արքայութեան, նմանապէս և ես իմում զաւակիս Դեմնայիս շնորհեմ ձեր ամենեցուն վկայութեամբ: Եւ դու Գէորգի՝ եղբայր իմ, կաց ի տեղի իմ և արա զզօ-

թապետութիւն աշխարհիս, և կէր զքո բաժին ժառանգութիւնն զոր հայր իմ ետ քեզ մինչև զարգասցի մանուկս իմ։ Եւ յառաջ կոչեալ զիվանէ՝ որդի Սմբատայ Օրբէլեան, երդմնեցուցանէ զնա վասն մանկանն պահել զուխտ անդարձին։ Եւ առեալ զձեռանէ մանկանն հղ ի ձեռն Իվանէի և ապսպարեաց նմա. և զայլ ղէղէպուլսն զամենեսեան երդմնեցոյց ոչ նենգել տղային. այլ ի լնուլ հասակին օծցեն զնա թագաւոր։

Զայս արարեալ վախճանի ինքն. և դնի ընդ հարս իւր ի Գելաթ։ Եւ յայնմ օրէ և յառաջ լինէր մանուկն ի տան Իվանէի, և սնանէր և զարգանայր։ Իսկ Գէորգի յինքն յանկուցեալ զսիրտ մեծամեծ իշխանացն, ևս և զկաթողիկոսին՝ կամէր թագաւորել. և ոչ իշխէին յայտնել զխորհուրդն մեծին Սմբատայ Օրբէլեան և որդւոց նորին Իվանէի և Լիպարտի։ Ապա յետ ամսեան մի ժողովեցին զամենայն ղէղէպուլս եւ զազատս առ Գէորգի, ընդ որս և զնաց Իվանէ իւրայովքն. որում և յայտնեալ Գէորգի զխորհուրդն՝ բազում ողոքանօք հաւանեցոյց զնա ասելով թէ. ի լնուլ հասակի եղբօրորդւոյն իմոյ ոչ զրկեցից զնա. այլ ըստ անդարձի եղբօրն իմ դնեմ զնա ի տախտ թագաւորութեանս։ Վասն որոյ ամենեցուն միաբանեալ օծանեն թագաւոր. որ և էր յաջողակ յամենայն գործս արութեան և յոյժ հանճարեղ։

Եւ յաւուրս նորա եղև բազում ընդարձակութիւն ի թագաւորութեան նորա. և բազում պատերազմունս մղեաց իւրով անձամբն. եւ ի ձեռն արի և քաջ սպասալարին Իվանէի դողացոյց զամենայն տունն Պարսկաց և Տաճկաց եւ Թուրքաց։ Այս Գէորգի էառ զԱնի քաղաք ի 610 թուականին և զամենայն տունն Շիրակայ. եւ շնորհեաց մեծին Իվանէի՝ ամիր սպասալարին Վրաց, որդւոյն Ամբաւայ Օրբէլեան. և սահմանեցաւ նմա հայրենիք։ Այս Իվանէ միանգամ եհար զՇահի-Արմէնն ի դուռն Անւոյ որ եկեալ էր 40,000աւ ի վերայ քաղաքին. զի թէպէտ զայր թագաւորն Գէորգի յօգնութիւն. այլ սա իսկ էր մղող մարտին. և մի անգամ փախոյց զմեծ Ամթաբէկն Ելակուզ ի դաշտին Գագայ որ եկեալ էր 100,000աւ ի վերայ Գէորգիի. եւ կամէր կոտորել զամենայն վիրս, և ըմբռնել զթագաւորն. զոր մեծաւ հնարիւք և արիական քաջութեամբ այնքան ի նեղ էարկ Իվանէ, զի ի գիշերի թողին զվրանս և զղէնս և զանհուն կառասիս իւրեանց և զբեռնակիրս. և փախեան մազապուր։ Բայց թէպէտ զայս ամենայն առնէր, և այլ բազում երախտիս և գործս մեծամեծս առ թագաւորն. սակայն նա վերին երեսօքն ի մեծամեծ փառս և ի պատիւ բարձրացուցանէր զնա. և ի սրտին միշտ կասկածէր ի նմանէ վասն տղային որ նմա յանձնեցաւ. և խնդրէր

ժամ դիպող դաւել նմա ծածուկ հնարիւք և ոչ գտանէը. և գիտէր ի սրտին գայս ևս Իվանէ:

Ապա հայրն Սմբատ ծերացեալ աւուրբք մեռանի՝ և դնի ընդ հարս իւր. և ժառանգեն զիշխանութիւն նորա որդիքն իւր՝ Իվանէ և Լիպարիտ: Իսկ ի թուականին Հայոց 626 եղեւ աղմուկ շփոթի ի մէջ թագաւորութեանն Վրաց. և բնաջինջ կործանեցաւ տունն Օրբէլեանց. զի ի թագաւորելն Գէորգիի ամս՝ 21 և ի լնուլ հասակի երիտասարդութեան Դեմնային. մինչ նըստէր Իվանէ եղբարբքն և որդւովք իւրովք յԱ-դարակն կոչեցեալ դարպասի. և խրախանային ի միասին. գային առ նա ի մեծամեծ ղէղէպուլացն, գայր և Դեմնայն. և ասէին ընդ նմա «յիշեա Իվանէ՝ զուխանքս և զերդումն զոր երդուար թագաւորին Դաւթի. և մի ուխտազանց լինիր. ահա հասեալ է ժամանակ թագաւորեցուցանելոյ զմանուկս Դեմնայ: Եւ Գէորգի կայ նստեալ ի Սախատէ սակաւ արամբք. և մեք ամենեքեան հաստատուն եմք յայն երդմանն զոր երդուաք հօր սորա»: Ապա ասէ Իվանէ «քանւ լիցի մեզ այդ զի խորհեսցուք սպանանել զօծեալ թագաւոր. այլ վասն երդմանն մեր և ուխտին ըմբռնեսցուք զԳէորգի մինչև թագաւորեցուցանեմք զԴեմնայն. և ապա առնումք ի նմանէ ուխտ երդման և ձեռագիր զի հնազանդ կացցէ եղբօրորդւոյ իւրում. և արձակեսցուք

զնա զի կացցէ և նստցի յիւրում բաժնի ժառանգութեանն զոր հայր իւր ետ նմա»։

Եւ զայս ասացեալ հաւանեցան ամենեքեան. և սկսան զօրս գումարել փութանակի։ Լուեալ զայս խորհուրդ անարգագոյն մանկան միոյ, և երթեալ ի գիշերի ազգէր թագաւորին, և նորա հեծեալ յերիվար փութանակի փախչի և անկանի ի Տփղիս և ամրանայ անդ։ Զոր և անգիտացեալ Իվանէի հեծեալս գումարէր և զօրս կազմէր։ Եւ էին միաբան ամենայն գլխաւորք և ազատք վրաց ընդ Իվանէի և ամենեքեան համագունդ դիմեալ եկեալ էին առ նա յԱգարակն գարապաս՝ Քարթլիս Հէրիսթաւքն և Դաւրդաւրայքն և Ջաւախուրքն. կախայն և որդիք իւր և Կամրագէլն մեծ և Ջաղելմեճիայն և Տաշրացիքն և կայենեցին Հասան և Անեցին Գրիգոր Ապիրատեանց, որոց զօրքն էին թուով աւելի քան զ30,000։ Իսկ թագաւորն Գէորգի միայն առանց զօրաց կայր ի Տփղիս, և կոչէր առ ինքն զՄփչախ ոմն Մուսաասար անուն. և եգիտ արս իբր հինգ հազարս. և այլ ոչ ունէր օգնական զոք։

Ապա իբրև լուան զմուտն արքային ի Տբփղիս և զամրանալն նորա անդ՝ ոչ գնացին ի վերայ նորա. այլ սպասէին ելանել նմա անտի։ Եւ մինչ յերկարէր գործն, որպէս օրէն է մարդկային անհաստատ բարուց, ել մեծն Կամրագէլ

ի միաբանութենէ նոցա և գնաց ի ծածուկ առ Գէորգի։ Զայն տեսեալ և Գրիգորի Մաժիստրոսեանց՝ և նա գնաց ևս առ Գէորգի. նմանապէս և այլքն, մի մի, սկսան քամիլ և գաղտագողի գնալ առ թագաւորն։ Եւ այնուհետև սկսաւ զօրանալ կողմն Գէորգիի. և նուազիլ կողմն Դեմնայիին։ Քանզի որք երթային առ Գէորգի՝ մեծաւ պատուով ընդունէր և անչափ պարգեւօք խրախացուցանէր, և զամենայն հայրենիս և փարթամութիւնս Օրբէլեանց խոստանայր տալ նոցա։

Յայնժամ իբրև բազմանայր և զօրանայր Գէորգի. և գիտէր զի նաւազեալ էր կողմն եղբօրորդւոյն և Իվանէի՝ գնաց մեծաւ պատրաստութեամբ ի վերայ նոցա։ զոր և լուեալ Իվանէի՝ հորդեաց զամենայն ստացուածս իւր ի բերդն Շամշոյլտէ, յորում և կայր տուն գանձուց նոցա ի հին նախնեացն՝ ի անքաւ կարասեաւ. և կացոյց անդէն բերդապահս ի գլխաւոր արանց. և ինքն առեալ զզօրան և զմեծ իշխանսըն, որ առ նմին, և գԴեմնայն. և գնաց ի Լօռէ և ամրացաւ յոյժ։ Եւ զեղբայր իւր զԶիպարիտն երկու որդւովքն առաքեաց առ Աթաբէկն Լոռկուզ ածել ի նմանէ զօրս յօգնութիւն։ Իսկ թագաւորն Գէորգի եկեալ և ոչ գտաւ զնոսա յԱգարակին. ապա նստեալ ի վերայ բերդին խիսար զաւուրս 25. և էառ զնա և կոտորեաց զպահակսն, և էառ յաւարի զրաշմութիւնն գանձուց

նոցա և զամենայն ստացուածս. և եկեալ բանակեցաւ շուրջ զԼօռէիւ: Եւ զի յերեքտասանն Հրոտից ամսոյ եմուտ Իվանէ ի Լօռէ. և եկաց մինչև ի հինգն Մեհեկի. վասն որոյ նեղեալ բերդացեացն՝ սկսան ազաւաքն, մի մի, կախադանօք ի դիշերի իջանել ընդ պարիսպն և անկանիլ առ թագաւորն:

Ապա ի մեծամեծ ղէղէպուլացն, որք էին սիրելիք և համախոհք Իվանէի, սկսան ի ծածուկ գրել գիրս պատգամի և ընկենուլ նետիւք ի բերդն առ Իվանէ վասն հաւանութեան և հնազանդութեան զի երկնչէին ի գալատենէ Ելակուզ աթաբէկին. և էր գիրն այսպէս:

«Մեծ Իվանէ Օրբէլեցի՝
Քաջ և հզօր անպարտելի,
Որ աշխարհաւ ես ճենացի՝
Տոհմ ինքնակալ թագաւորի:
Եկեալ յաշխարհս յայս վրացի՝
Գտեալ պատիւ անկշռելի,
Պեծ և գլուխ տանս արքունի՝
Եւ սպասալար Գէորգիի:
Թէ քո հարկիքդ քեզ պիտի՝
Կեանքդ և պատիւդ ցանկալի,
Եւ հայրենիքդ անչափելի՝
Որ կէս վրաց տանս է աւելի:
Թող դու զերդումն զառաջի՝
Զուբանն և զանդարձն զայն Դաւթի,

Եւ կ, հնազանդեա Գէորգիի՝
Վրաց հզօր թագաւորի։
Բեր և մատոյ ընծայ բարի՝
Զմանուկ Դեմետրդ որդի Դաւթի,
Որ քեզ պատճառ եղև չարի՝
Նաև բազմաց յայսմ աշխարհի»։

Տեսեալ զայս թուղթ Իվանէի գրէ և նա պատասխանի և կապէ ի նեաւն յայն. և ընկենու առաքս։

Ո՛վ ղէղէպուլք իմ սիրելի՝
Մեծ և հզօր իշխանք բարի,
Ես Իվանէ Օրբէլեցի՝
Ընթերցայ զգիրս ձեր խրատի։
Բայց չեմ հաւան այս խորհրդի՝
Զոր գրեցիք յայսմ թղթի,
Մարդ որ կենօքս այս զբաղի՝
Թողու զաւանդն տէրունի։
Ուխտադրուժ ինքն լինի՝
Առնու զբաժինն ուրացողի,
Յանանց գեհենն պապակի՝
Եւ ի դիւաց գունդն դասի։
Ես անցաւոր մարդ ցնդելի՝
Վասն առօրեայ կենաց պատուի,
Զկարեմ կոխել զուխտն որ եդի՝
Ծառել զերդումն սոսկալի։
Այլ մեռանիմ յայսմ բանի՝

Երթամ առ Տէրն ցանկալի,
Առնում ստացուած անճառելի՝
Որ յումեքէ ոչ կողոպտիս։

Եւ զայս թէպէտ վրացի լեզուաւ գրէին, սակայն մեք յեղափոխեալ ի հայ բան յարմարեցաք։ Ապա իբրև իմացան զանխոնարհելի կամս նորա՝ սատակացուցանէին զպատերազմն։ Եւ Դեմետրէ անմտաբար երկուցեալ՝ ել ի գիշերին և կախեալ ընդ պարիսպն իջաւ և գնաց առ հօրեղբայրն իւր. և անկեալ առ ոտս նորա հայցէը շնորհել նմա միայն գկեանս։ Զոր և տեսեալ Թագաւորին՝ խրախանայր մեծապէս. և յղէր պատգամաւորս առ Իվանէ և ասէր «վասն որոյ մարտնչէիր դու և վրէժխնդիր լինէիր՝ եկն առ իս. արդ դու վասն ոյր ապստամբիս, ճկ առիս»։ Եւ նորա ասացեալ յիրաւի է զոր հրամայէ. բայց երդնուցու ինձ (Թէ) ոչ զնասեսցէ և ոչ յափշտակեսցէ ի հայրենեաց իմոց, և ես եկից առ նա։ Եւ երդուեալ Գէորգի և կապեալ ուխտ մեծամեծ դաշամբ ընդ նմա. վասն որոյ համարձակեալ եկն առ Թագաւորն։

Իսկ Թագաւորն խնդացեալ մեծապէս՝ զառաջինն ընկալաւ գնա յոյժ սիրով, և փառաւորեաց մեծաշուք պատուով մինչև էած ընդ բռամբ զամենայն որդիս և զազգատոհմն նորա. և ապա առեալ Գէորգի իւրում ուխտին և սոսկա-

լի երդմանն։ Եւ կալաւ զԻվանէ և փորեաց զաչս նորա. և զԴեմեայն որ էր վեսայացեալ Իվանէի ըմբռնեաց և զաչսն եդ փորել և յերանացն յապաւել զի մի լիցի, ասէ, ժառանգ ի նմանէ. իսկ զկրսեր եղբայր Իվանէի զՓաւթարն և զորդին Սմբատ և զեղբօրորդին գինայն ետ ըստանանել. և զամենայն ազգատոհմ նոցին և զարու մանուկ նաև զկանայսն ետ առհասարակ ջնջել և կորուսանել՝ զոմանս ջրասոյզ, զոմանս քարավէժ. և այնպէս եբարձ ի տանէն վրաց զանուն նոցա. և հրամայեաց ջնջել զյիշատակ ազգին Օրբէլեանց ի պատմագրոց իւրեանց նաև յեկեղեցեաց։ Եւ ետ գրել զզրոյց այսր ապստամբութեան, ոչ որպէս եղեալն էր, զիրաւացի պատճառն. այլ, ըստ իւրում բարուցն, մեծամեծ զրաբանութիւնս յօդեալ և պատուաստեալ ի վերայ նոցա և կարգեաց ի նզովս զի մի ևս յիշեսցեն զանուն նոցա, և մի թողցեն ի նոցանէ զոք ի վրաց աշխարհին. և եդ զայն կըտակ չարի յիւրում գանձարանին։ Եւ այս եղև ի 626 թուականին։

Ահա այսպէս եղև զրաւ զրկանացն և ըստանուցն և հալածուցն Օրբէլեանց ի բնիկ հայրենեաց իւրեանց. որ ի գալստենէ նոցա ի ճենաց աշխարհէն մինչև ցայն վայր, թուի թէ աւելի քան զ1000 ամ (էր)։ Ոմանք զրաբանեն գնոսա եթէ անձանց խոկալով փառս՝ կամեցան

ինքեանց առնուլ զթագաւորութիւնն. որ և ամենևիմբ սուտ են և որպէս զշուն հաջեն. այլ վասն ուխտին և երդմանն Դաւթի թագաւորի՝ ի վերայ որդւոյ նորա զկեանս իւրեանց ի մահ եդին, որպէս օրէն է ուխտապահ և տիբասէր արանց, զորոց զզրկողացն և զզրկելոցն դատաստանն Աստուած տեսցէ յիւրում անաչառ դատաստանին։ Բայց Լիպարիտն՝ եղբայր Իվանէի, որ գնացեալ էր առ աթաբէկն Ելիկուզ երկու որդւովք՝ Ելիկումանն և Իվանէիւ, շարժեալ էր զառնն Պարսից, և բազում հեծելովք գայր յօգնութիւն եղբօրն իբրև 60,000 աւ։ Ապա լուեալ զգոյժ չար պատահմանն ասէ. անմեղ քրիստոնեայքն զինչ մեղան զի երթեալ կորուսից զնոսա. և արեան պարտքն մեր զուր երևին զի զնոսա ընդ բռամբ ածից։ Դարձաւ անդրէն և դադարեաց առ Ելիկուզին, և ի դառն կսկիծոյն և ի չարաչար սգոյն սակաւ աւուրս կեցեալ՝ մեռանի յօտար աշխարհի։

Եւ որդին նորա Ելիկումն դադարէ անդէն. և եղբայրն իւր Իվանէ գնաց առ ամիրայն Գանձակայ, և անդ բազում փառս և պատիւ գտեալ դադարէ. զոր և յետոյ բազում ողոքանօք և երդմամբ յաւուրս Թամարին դարձուցին անդրէն և եառն ի հայրենեաց իւրեանց զՕրբէլք միայն։ Յորմէ ծնան որդիք և այժմ նոքա են Օրբէլք։ Այլ ի հալածելն զՕրբէլքն բաժանեաց

գհայրենիս նոցա Գէորգի, զոմանս ի թշնամեացըն և մատնողացն, և զայլսն ետ Ախչախին որ Ուռպասար կոչիւր. զոր վերագոյն ասացաք, և մատոյց զնա ի գահ իշխանութեան նոցա, և եղ սպասալար ամենայն վրաց: Բայց ինքն Գէորգի ոչ ունէր ժառանգ թագաւորութեան՝ բայց միայն դուստր մի Թամար անուն. և վախճանեցաւ ի 633 թուականին: Եւ կալաւ զթագաւորութիւնն դուստրն որում ածին այր զորգի Ըռուսաց թագաւորին որում անուն էր Գէորգի:

Սա էառ զԴվին քաղաք՝ և սակաւակեաց եղեալ մեռանի. և առնու Թամարն միւս ևս այլ այր Սօսլան անուն. և լինի նմա որդի մի Լաշայ Գէորգի անուն: Բայց յետ վախճանին Գէորգի թագաւորին Թամարն մեծարեալ զորդիսն Սարգսի՝ որդւոյ Զաքարէի իշխանի, հայ ազգաւ և ուղղափառ հաւատով, զՁաքարէ և զԻվանէ, և բարձրացուցանէ ի փառս և ի պատիւ. զՁաքարէ կացուցանէ ի տեղի Օրբէլեանց ամիրսպասալար վրաց. և տայ նմա զհայրենիսն նոցա զՀօռէ. և զեղբայրն Իվանէ կացուցանէ Աթաբէկ ի վերայ աշխարհիս Հայոց և վրաց: Որք բազում ջանիւ թափեցին զաշխարհս Հայոց ի Պարսից. և առին յԱռանայ մինչև ցներքին Բասեն և ի Բարկուշատայ մինչ ի Մժնկերտ: Առին զԿարս, զՎաղարշակերտ, զԿաղզվան, զՍուրբ Մարի, զԱնի, զԱնբերդ, զԲջնի և զԴառնի, զԴվին մայրա-

քաղաք, զԲարդման, զԳանձակ, զՋարեք, զՀերթ, զՇամքոր, զՇաքի, զՊարտաւ, զՋարաբերդ: Առին ի 660 թուին զՄիւնիս, զՈրոտն, զԲորոտան, զԲղեն, զԲարկուշատ: Եւ թէպէտ յայլ և յայլ թուականս առան. սակայն զհասարակն սոքա առին և որդիքն իւրեանց. և ազատեցին զաշխարհս ի գառն ծառայութենէ Տաճկաց:

Իսկ Ելիկումն որ մնաց ի տան Աթաբէկին, գտեալ և սէր յոլով ի նմանէ և յորդւոց իւր ի Փահլաւանէն և ի Մզլ Ասլանէն, և պատիւ և փառս բարձրագոյն ի վերքան զամենայն մեծամեծ աւագանին Անբեաց և Պարսից աշխարհին: Եւ ետ նմա աթաբէկն զմեծ քաղաքն Համիան և կոչեաց զնա որդի իւր. և հաստատեաց նմա հայրենիք ստուերային գրոյ և մանուրաւ. և կացուցանէ զնա ամիրայ և քաղաքապետ մեծ մայրաքաղաքացն Պարսից Ռէյոյ, Ասպահանայ. և Մազվինի ամս երկոտասան: Եւ նեղէր զնա սուլտանն վեսայանալ ինքեան և առնուլ զմեծ մասն աշխարհին և թողուլ զհաւատան Քրիստոսի: Եւ Ելիկումն, թէպէտ տղայ էր հպատակաւ, այլ ի էր հանճարով. ոչ տայր տեղի բանիցն և ոչ թուլանայր ի հաւատոցն. վասն որոյ նեղեալ ի Պարսկացն և երկուցեալ ինհաւատոյն զի մի բըռնադատեսցեն, խնդրէ պատճառանօք տեղի ի Նախջաւանու գաւառի. այն երկիր (ասէ) մօտագոյն է ի վիրս. և անտի հեշտ է ինձ և դիւ-

բաւ պռնուլ զվրէժ արեան հարցն և եղբարցն իմոց։

Ընդ որ հաճեալ Աթաբէկին՝ տայ նմա զբերդն Երնջակայ և զճահուկն աւան և զքալաքարանն ի Նախջաւան և այլ բազում տուրս. և կացուցանէ գործակալ և զօրագլուխ այնմ կողման։ Եւ զի բաժանեալ էր գաշխարհն իւր երկու որդւոցն. և տուեալ էր զՈորասան և զԱրաղ և զներքին բաժինն Պարսից Ոզլ Ասլանին, որ թարգմանի կարմիր առիւծ. և զվերին կողմն Պարսից և զԱրպատական և զԱռան և զնախջաւան՝ Փահլաւանին. վասն որոյ զձեռն Ելիկումին դնէ ի ձեռն նորա և ապստարէ նմա ասելով. դու դմա հայր լեր և դա՝ քո որդի։ Եւ յուղարկէ զնա բազում փարթամութեամբ և երևելի փառօք ի քաղաքն Նախջաւան։

Եկեալ ապա Ելիկումին և տիրեալ այնմ նահանգի. կոչէ առ ինքն զեպիսկոպոսն Սիւնեաց զՏէր Ստեփաննոս՝ որդի Տեառն Գրիգորի, և մեծաւ խնդութեամբ ընկալեալ զնա՝ անկանէր առաջի նորա և խոստովանէր զյանցանս իւր մեծաւ զղջմամբ և խնդրէր ի նմանէ օրէնս. և նորա հաղորդեցուցեալ զնա օրինացն եդ ձեռս ի վերայ և օրհնէր զնա։ Ապա յետ այնորիկ խնդիր լինէր Ելիկումն ամուսնութեան. և ոչ գտանէր ի քրիստոնէից զոք պատշաճ իւրոյ խնամութեան զի աշխարհս այս դեռ ևս ի ներքոյ

իշխանութեան Պարսից էր: Վասն որոյ հաւանեալ խնամութեան Սիւնեաց եպիսկոպոսին Տեառն Ստեփաննոսի զի հոգևոր աստիճանաւ բարձր էր քան զնա: Եւ խնդրէր ի նմանէ զդուստր քեռ նորա ի ձահուկ զի էր քոյր նորա կին ազատազգի և փարթամ առն միոյ Ճահկեցւոյ, որում Աբաս ասէին: Զոր մեծաւ խնդութեամբ յանձն առեալ եպիսկոպոսին՝ փեսայացուցանէ զնա ինքեան տալով զօրիորդն գեղեցիկ և մեծահաւատ Ելիկումին, որում անուն Ծաթուն ճանաչիւր: Եւ լինի ի նմանէ որդի մի գեղուղեշ պատանի, զոր անուանէ յանուն հօր իւրոյ Լիպարիտ:

Եւ այսպէս կեցեալ բազում աւուրս՝ եղև օր մի հիւանդանալ նմա հիւանդութիւն մեծ, զոր լուեալ մեծի Ամթաբէկին՝ եկն ի տեսութիւն ի ձահուկն աւան, և նստեալ մերձ նմին նեղէր զհիւանդն ասելով. ես վասն այն եկի զի ինձ մեծ տուրս արասցես. և նա ասէ. ով արքայ՝ հրամայեա եթէ զինչ է խնդիրդ քո և կամ ինչ հաճոյ թուի քեզ զի ընծայեցից քեզ. և նա ասէ. ոչ գանձք և ոչ այլ ինչ պատուականք պիտոյ են ինձ. բայց եթէ զհաւատդ շնորհեսցես ինձ և առցես զդենս իմ: Եւ մինչ կարի ստիպեաց. ապա ողորմելին այն նեղեալ և ցնորեալ ի ցաւոցն, և խուճապեալ ի յԱմթաբէկէն՝ իբր խելագար լինն ցնդեալ ընդ բանսն ասէ. եղիցի ըստ բանի քում. որ և խրախացեալ մեծապէս Ամթա-

բէկին կրկնեաց նմա ծուխը և յարուցեալ գնաց. և մեծ սիգելով և անանցական գրով եւս զՃահուկ և զՔալասրահն և ի Նախջաւան յաւագ փողոցին 30 կուղպակ ազատ և Թարխան (ապահարկ) յամենայն հարկաց փոքրիկ մանկանն Լիպարտի լինել նորայազգէ յազգ հայրենիք: Բայց ելիկուճն ողջացաւ ի ցաւոցն ըստ խնամոցն Աստուծոյ. և յոյժ զղջացեալ գնաց առաջի սուլտանին և Աթաբէկին և ուրացաւ զտաճկութիւնն. և վերստին խոստովանեցաւ զՃշմարիտ հաւատն Քրիստոսի և ասէ. ով տեարք իմ՝ եթէ կամ է ձեզ, ես կացից իմ հաւատովս, և միամիտ սրտիւ ծառայեցից ձեզ. և թէ ոչ՝ ես պատրաստ եմ ի մեռանել վասն հաւատոյս իմոյ: Եւ նոքա վասն յոյժ պիտանութեան առնն ոչ ինչ նեղեցին. այլ թողին զնա իկամս իւր:

Որ և կեցեալ սակաւ մի՝ գնաց ի պատերազմ ընդ որդւոյ Աթաբէկին ի Գանձակ. և անդ սպանաւ: Եւ Ճնաց փոքրիկ մանկիկն Լիպարիտ որք առ մօր իւրում, զոր իբրև իմացան գլխաւորք քաղաքին՝ ածին զմայրն և զմանուկն ի Նախջաւան և պահէին ի պատանդի զի մի առեալ մօրն փախիցէ: Եւ տաճիկ մի բռնաբարեալ ըզՃաթունն՝ ածէ ի տուն իւր և առնու զնա կին: Եւ անանի մանուկն ի տանն յայն անծանօթ լեալ քրիստոնէութեան աւելի քան զ10 ամ: Ապա մինչ տիրեցին այսմ աշխարհի Զաքարէ

և Իվանէ, և տկարացաւ տունն Պարսից, սկսան յոյգ առնել եթէ գոյ ոք յորդւոցն Լիպարտի ի Պարսկաստան. որոց ծանուցանէ մեծ եպիսկոպոսն Սիւնեաց Տէր Ստեփաննոս՝ անէրն Ելիկումին, եթէ կայ մանուկ մի ի քուերէն իմմէ Լիպարիտ անուն. և է ի պահեստի ի Նախջաւան։ Ընդ որ յոյժ խնդացեալ Զաքարէ և Իւանէ՝ թախանձեցուցանեն զեպիսկոպոսն հանել հնարիւք զմանուկն անտի։ Եւ զի էր եպիսկոպոսն յոյժ ծանօթ և սիրող տան Աթաբէկին և ամենայն մեծամեծացն նորա. ևս առաւել որք ի Նախջաւան էին. վասն որոյ եկեալ եպիսկոպոսին ի մօտաւոր վայրսն և ի բանի արարեալ զբարեկամս իւր՝ բազում հնարիւք ետ գողանալ զմանուկն Լիպարիտ և զմայրն իւր. զորս ի գիշերի կախաղանօք իջուցին ընդ պարիսպն. և առեալ տարաւ ի վայոց ձոր. և զմայրն ամրացուցեալ ի տեղի մի, զտղայն տարաւ առաջի Իվանէի։ Որ և ի տեսանելն զնա անտանելի խընդութեամբ լնոյր. և առ ժամայն ծանուցանէր Թամարին և Լաշային. և նոքա յոյժ խրախանային քանզի միշտ ի կասկածի էին ի նոցանէ։

Ապա մեծապէս խիլայէ զնա Աթաբէկն և բազում շուք և պատիւ դնէ նմա. և կամէր փեսայացուցանել ինքեան տալով նմա զքոյր իւր Թամթի։ Իսկ ի մեծ դէղէպսլացն ոմն Բուբա անուն, որ էր գործակալ ամենայն տանն Աթա-

քէկին, խաբեալ պատրող բանիւք՝ ի ծածուկ փեսայացոյց ինքեան տալով նմա զամենօրհնեալ և զգեղեցիկ օրիորդն զԱտիայն, ընդ որ առ ժամ մի ցասուցեալ Աթաբէկ Իվանէից: Յետ որոյ հրամանաւ թագաւորին տայ փոխան հայրենեացն Լիպարտի անանցական գրով զՀրաշկաբերդ իւր գաւառովն և այլ բազում գեղօրէս ի վայոց ձոր, ի Կոտայան զՂլտան և այլ գիւղս յոլով. ի Գեղաքունի զՀամասրի և այլ գեղօրէս բազում, ի կայեն զԱղատև իւր կերովն: Եւ զի նա եղեւ առաջնորդ առման Միւնեաց և այլ բերդերոյն, տայ և ի ձեռս նորա զՄիւնիս. զՈրոտն, զԲարկուշատ և զայլ բերդօրէսն:

Եւ կացուցանեն թագաւորն Լաշայ և Աթաբէկն Իվանէ զԼիպարիտն կողմնակալ այսմ աշխարհի, նմանապէս և զմիւս իշխանն զամենօրհնեալն զՎասակ Մաչենեցի. զհայրն քրիստոսասէր և բարեպաշտ պարոնին Գուրշայ, կացուցանեն կողմնակալ ի վայոց ձոր գաւառիս: Որ և մեծաջան վաստակօք բազումս նահատակեալ ի վերայ քրիստոնէից և եկեղեցեաց՝ օրհնեցաւ և գովեցաւ յամենայն աշխարհաց. որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի յայսմհետէ մինչև յաւիտեան: Իսկ ամենօրհնեալն Լիպարիտ մեծաւ բարեպաշտութեամբ քաղաքավարէր. շինեաց եկեղեցի ի Նորավանս և զարդարեաց և փարթամացոյց զնա,

որպէս վերագոյն ասացաք: Եւ մայր սորա մեծաւ ճգնութեամբ ապաշխարեալ բազում ամս ի նեղսագոյն խրճթի՝ վախճանեցաւ և եդաւ ի Նորավանս, ի դրան սուրբ կարապետին: Եւ եղեն Լիպարտի հինգ որդիք՝ Ելիկումն, Սմբատ, Իվանէ, Փախրադուլայն, Տարսայիճն:

Եւ ինքն յետ ամաց ինչ ի միջօրեայ հասակի առնու հարուածս ի ճանապարհի յանկարծադէպ նետից՝ ի գլուխ լերինն որ հանդէպ բերդոյն Բոլոտնայ, և եկեալ անկանի ի բերդն Գոլոշաի վանից. և կոչէ առ ինքն զեպիսկոպոսն իւր ըզՏէր Սարգիս. և հաղորդեալ՝ անդէն վախճանի. և բերեալ դնի ի Նորավանս, ի դրան սուրբ կարապետին առ մօր իւրում: Եւ կին նորա և որդիք նորա ինան որբ և անտերունչք. բայց գեղեցիկն Ելիկում փեսայացեալ էր Գրիգորոյ Մարծանեանց, որ յազգէ Մամիկոնէից համբաւի. և վերէր զտէրութիւն հօրն: Իսկ մեծ ասպասալարն Զաքարէ մեռանի ի 661 թուին. և Աթաբէկն Իվանէ յերկարեալ այլ ևս ամս հնգետասան՝ մեռանի ի 676 թուին: Եւ զասպասալարութիւնն Զաքարէի առեալ էր որդին իւր Շահանշահ. էառ և զԱթաբէկութիւնն որդին Իվանէի Աւագն, որ և էառ իւր կին զԳոնցայն, կեցեալ յիշխանութեանն ամս 23:

Բայց պատմեցից ձեզ աստանօր զրոյցս զարհուրեցուցիչս. զի նախ քան զայս հալածական

եղեալ ի Թաթարէն սուլտանն Մորազմաց Ջալալադինն՝ որդի Մորազմշահին, և գայ ընդ Պարսկաստան. և անցեալ ընդ Ատրպատական մտանէ յաշխարհս Հայոց. և յոր տեղ հասանէր՝ աւերէր, գերիէր, ապականէր ոչ խնայելով ի մարդ կամ յանասուն: Ապա եկեալ յԱրարատեան գաւառ՝ բանակ հարկանէր անդ. վասն որոյ ժողովեալ Իվանէ Աթաբէկին զամենայն զոյժ և զօրութիւն Հայոց և Վրաց՝ կամէր մարտիւ պատահելնոցա: Եւ կացուցանեն զոմանս դէտ և ազդարար ինքեանց՝ զՇալուէ ոմն և զԳրիգոր կանչող. որք տեսեալ յոյժ նուազ զզօրն Մորասանի կանչեն և ազդեն մերոց զօրացս եթէ. եկայք: Իսկ նա որ Տէրն է յաղթութեանց, կամելով կամէր եղծանել զանօրինեալ և զամբարշտեալ ժողովուրդն, փոխարկեաց զձայն ազդարարացն յականճս սոցա եթէ. փախիք: Որք և թողեալ անդէն զկարասիս իւրեանց և զվրանս՝ աճապարեալք յերիվարան փախեան և իբր խելացնորեալք, առանց սրոյ և զօրութեան նա և պատերազմի վիթեալք ընդ փրթուածս մեծ քարին որ ի խրամին Գառնւոյ, առ հասարակ հոսեալ կործանեցան. և Աթաբէկն Իվանէ 10 արամբք զերծեալ անկանի ի յամուրըն Գեղէ:

Եւ Լիպարիտն իւրայովքն գտեալ կածան մի՝ գնայ. և եկեալ ամբողջ ի տուն իւր գոհանայր զՏեառնէ. և էր այս ի 674 թուականին: Իսկ

զկնի այսը անհնարին պատուհասիւք և զանազան դիպուածովք ապականեալ եղև աշխարհս ամենայն. զի գտեալ Մորազմիկքն զաշխարհս անտերունչ՝ անխնայ կոտորեցին և գերեցին և հրդեհեցին զամենայն շինուածս տանց և յարկաց քաղաքաց, գիւղից և վանորէից. այրեցին և զվաստակս ամենայն, և հարին զայգիս և զծառս. վասն որոյ սով սաստիկ տիրեաց առ հասարակ: Եկն և օձ թանձրագին որ եռայր յամանս և յանկողինս ի տուէ և ի գիշերի: Եկեր և մարախն մեծ մինչ ի ծովն Ովկիանոս և էած սով առ հասարակ մարդոյ և անասնոյ: Եւ ա մենեքեան առ հասարակ տապաստ անկեալ լինէին լերանց և դաշտից և ձորոց. սակս որոյ և անկաւ գայլ մարդակեր. և զմնացեալսն ի սրոյն, յօձէն, ի սովոյն և ի մահուանէն նոքա գիշատեալ սատակէին:

Եւ այս երկու պատճառաւ, մի՝ զի սովորեալ էին յուտել զմեռեալս, և մի՝ զի մարդիկն ներգևեալ և նքոդեալ էին ի սովոյն: Եւ ահա այս պատուհաս տիրէ աշխարհիս ամս 7: Իսկ յետ մեռանան ամի զարթոյց Տէր յարևելից զազգն Նետողաց որ Մուղալք կոչէին, և բռնագեղչկացն Թաթարք, որ ի Ջին և ի Մաչին աշխարհէ անդր քան զԹաթաստան՝ անաստուածք և անօրէնք. բայց բնութեամբ օրինացն զարդարեալք, առեցողք ապրեղի գիշութեանց և ամե-

նայն ՚ի ժամսակաւ գործոց, արդարամիտք առ միմեանս, միամիտք և հնազանդ առաջնորդի իւրեանց, իրաւարարք և իրաւադատք, իսկ բարուք աղքատք և ընչաքաղցք, նեղիչք և կեղեքիչք մարդկան. պատկերով յոյժ զեղեցիկք և լերկք ըստ կանացի դիմաց. և ծանօթք քրիստոսեան հաւատոյ. և յոյժ սիրողք քրիստոնէից, յաղեղունս կորովիք և յամենայն պատերազմունս յոյժ հնարաւորք:

Բայց յետոյ թողին զբնական բարս իւրեանց և ելին ի հայրենի սահմանէն զոր ունէին. մինչ ընդ Մահմետի օրինօքն և ուսան զամենայն պղծութիւնս և անկարգութիւնս, և յանառակ կեանս վարէին: Ահա սոքա բաժանեալ յերիս առաջս՝ գնաց մինն ընդ արևելից հիւսիսով յաշխարհն Ղազրաց և Սուտաղաց, Ըռուսաց (Ռուսաց) և Չէրքեզաց և Բուլղարաց. և տերեցին նոցա մինչ ի սահմանն Ալամանի և Աւնկրաց (Հունգարաց) որք են Փռանդ, որոց գլխաւորին անունն Բաթու ղան: Իսկ միւս կողմն գնաց առ Հնդկաստանօք, որք տիրեցին մեծ մասին Հընդկաց. և հնազանդեցին զՈւղուրս և զՈւղուզս և զՈրազմիկս և զԴելեմիկս և առին զԱլամալեխ և զԲէշպալեխ և զամենայն կողմանան զայն, ուրոց գլխաւոր Հաւքաթայ ղան: Իսկ միւս կողմն եկին ընդ մէջ աշխարհիս անցեալ ընդ մեծ գետըն Ջահան և ընդ Ջուրն զոր ինքեանք Ամու

մաւրան (Ամուր) կոչեն։ Եւ պատուակեալ, փոթորկեալ հասին յաշխարհս մեր. և առ հասարակ սիրեալ հնազանդեցին զամենայն սիեզերս. կոխեցին, կործանեցին զամենայն թագաւորութիւնս, առին զՈրաստան, և կործանեցին ըզմայրաքաղաքն նոցա զԲալխ և Հրէ, զՄավր և զնշաւուրն, զՏուսն և զԴամղանն, առին ըզՄուժաստան, զԼաւռաստան, զՊարսկաստան, ըզԲրդաստան, զԱրաբստան. առին զԴիարբաքն որ է Ասորեստան, զՇուշտար և զԲրման, զԲաղդադ և զԲասր մինչ ի Մռմզ (Հորմուզ) քաղաք և ի ծովն Հնդկաց։ Առին և զԱտրպատական, զԱռան և զՀայաստան, զՎիրս և զՀոռոմս. մինչ ի յԱնկիւրիա և ի Գանգրա և ի Զմիւռնիա Եփեսացւոց, և զԿիլիկիա մինչ ի ծովն Ովկիանու (Միջերկրական) և ի ծովն Պոնտոսի ի Տրապիզոն քաղաք։

Առին և զտունն Շամայ, զՈւռհայ և զՄառան մինչ ի Համս և ի Համայ։ Բայց զառաջինն եկն յաշխարհս Զաւրմանն և Զաղատայն, Ասլանն և Աստւուրն և Ղատա դանն. և առին զաշխարհս ի 685 թուականին։ Եւ յետոյ եկն Հուլաւուդանն՝ թոռն մեծի Զանգղ դանին. և զմնացեալսն յառաջնոցն էառ՝ զԲաղդադ քաղաք յորում և եսպան զխալիփայն ի 707 թուին. և զՄուփարղինն էառ ի 708 թուին զամ մի պաշարեալ. և զնաց մինչ յԵրուսաղէմ. էառ զՀալպ որ է Բերիա, և

զԴըմբշխ որ է Դամասկոս, և զՊալպաք որ է Արեգ: Էառ և զմեծն Անտիոք. որք կամաւ հնազանդեցան: Էառ և զԵրուսաղէմ ի Մարացւոյն: Եւ այնպէս բազում և անհուն քաջութիւնս եցոյց: Եւ զի յոյժ սիրող էր քրիստոնէից. վասն որոյ ամենայն ազգք հաւատացելոց կամաւ հնազանդէին նմա. և յոյժ ձեռնտու և օգնական լինէին. և արդ այսքան առ այս:

Մեք դարձցուք անդրէն ի կարդ բանիս. զառաջինն մինչ եկն Թաթարն յաշխարհս յայս. մեր զաւառքս անկեալ էր ի բաժին Ասլան Նոյինին. և էր Ելիկումն ամրացեալ իւրայովքն յանառիկ ամուրն Հրաշկաբերդի: Եկն Ասլանն այն և շրջեցաւ ընդ բերդովն և ծանեաւ զի անհնարին էր ի մարդկանէ. ապա իջանի հանդէպ բերդոյն. և յղէ պատգամաւորս առ նա և ասէ. արա ընդ մեզ սէր. և եկ առ մեզ. և բազում բարութիւնս գտցես ի մէնջ. ապա թէ ոչ՝ մինչ յերբ նստցիս ի քարիդ յայդ, մեք չեմք գնալոց յայսմ աշխարհէ. այլ Աստուածծ հայրենեօք ետ զսա մեզ. երբ և է ելանես ի դմանէ, և կորուսցէ լինի քեզ և տան քոյ:

Լուեալ զայս Ելիկումին՝ ոչ ընդհմացաւ բանիցն, այլ քաղցրութեամբ պատասխանեալ խնդրեաց երդումն. և ել ընդ յառաջ նորա բազում ընծայիւք: Եւ տեսեալ զնա Ասլանին՝ յոյժ սիրեաց և ընկալաւ զնա, և արար խաղաղութիւն.

և կալեալ զնա առաջնորդ գնաց մինչև յԱնի և հնազանդէր զամենայնն։ Եաւ նա զվայոց ձոր և զեղեգիս մինչև յԵրերօն գիւղ որ է հանդէպ Գառնւոյ. և եաւ զամենայնն Ելիկումին և ասէ. Թրով առածն և ոսկւով գնածն միապէս հայրենիք են մարդոյ, արդ զոր ես սրով իմով առի՝ այս գաւառք քեզ լիցին ի հայրենիս և ազգի քո. և դու միամիտ սրտիւ տես զմեզ՝ և ծառայեա դանին մեծի որ առաքեաց զմեզ ասա։ Եւ նորա բազումս շնորհակալեալ յամենայն սրտէ ծառայէ նոցա. և յայնմ օրէ և ապա հաստատեցաւ այս լինել հայրենիք տանն և ազգին Օրբէլեանց։ Իսկ այլ զօրագլուխք հնազանդեցին զայլ աշխարհս և բերին զԱւագն ի դուրս ի բերդէն կայենոյ. զգ բռամբ ածին և զթագաւորութիւնն վրաց. և եղեն միահեծան ամենեքեան։

Ապա յետ ամաց ինչ գնաց Թաթարն. և տարաւ ընդ իւր զօրսն վրաց և զԱւագն և զՇահանշահ. ընդ որոց և գնաց Ելիկումն ի վերայ քաղաքին Մարտիրոսաց որ Նփրկերտ կոչի. և պատնէշ ածեալ շուրջանակի նոսան ի վերայ բոլոր բանակօք ամօք և ամսօք. և ոչ կարացին առնուլ զնա։ Անդէն հիւանդանայ Ելիկումն խստագոյն ցաւօք, և որպէս ասեն, դեղակուր լինի ի բժշկաց ի հրամանէ Աւագին։ Զոր և բարձեալ բերին ի Նորաւանս. և եդին ի դրան սրբոյ Նախավկային. Թողլով որդի մի Բուրթել անուն՝

յոյժ գեղեցիկ տեսլեամբ և առոյգ հասակաւ։ Ապա տիրէ իշխանութեան նորին եղբայրն իւր ամենօրհնեալն և գովելին բնաւից Սմբատ որ էր հանճարով մեծ, խորհրդովուժեղ, խելօք աննմանն, հնարիւք բազմագէտ, բանիւ առատ և քաղցր, լեզուաց հմուտ և ճարտար. ի դատարանի դիւանին անպարտելի. զի խօսէր լեզուս հինգ՝ հայ և վրացի, ուղուր և փարսի և զմուղալն իսկ։

Սա վարժեալ ի մանկութենէ առաուածային պատուիրանաւն, էր մեծահաւատ և բարեպաշտօն, սիրող սրբոց և եկեղեցեաց, շինող վանորէից, սփոփիչ և մխիթարիչ քահանայից, ողորմած աղքատաց, կանգնիչ և զօրացուցիչ վըշտացեալ ազգիս Հայոց, գերեթափ և ազատարար ամենեցուն։ Բայց յետ Ելիկումին բազում նախանձու և թշնամութեամբ վարէր տունն Աւագին ընդ տանն Օրբէլեան. ևս առաւել Գոնցայն՝ կին Աւագին. և կամէին վարատել և հալածել, կամ կորուսանել զորբ Ծիացեալ մանկունսըն՝ զՍմբատ և զեղբարս իւր. և յափշտակէին գհայրենիս նոցա։ Եւ նոքա շրջէին թաքստեամբ աստ և անդ. ընդ որ խանդաղատեալ արարչական սիրոյն կամեցաւ կանգնել և զօրացուցանել զտունն Օրբէլեան ի ձեռն Սմբատայ։ Քանզի ընդ այն ժամանակս էր զօրագլուխ Նետողացն, որպէս թագաւոր ի վերայ ամենեցուն, Բաչու

նոյինն. և նստեր ի գաւառին Հաբանդայ՝ ի գըլուխ Ջագէձորոյ. և էր ածեալ զբռամբ զփոքր թագաւորն Սոնաց զԴաւիթ. և կայր նա ի մէջ բանակի նոցա ի կալանս: Ապա ըստ վերին խնամոցն զերծեալ հնարիւք ի գիշերի՝ անց գնաց փախստեայ երեք արամբք. և ունէր առ ինքն զոհար մի պատուական յոյժ լուսաւոր, և տեսիլ նորա կարմիր, յորմէ հատանէին նշոյլք իբր ի հրոյ. և ի գիշերի լուսաւորէր զտունն որպէս ջահ. ունէր և մանն մի ի փրկական փայտէն զորս ի կշիռ եդեալ էր իւրում թագաւորութեանն բովանդակ:

Եղև սմա անցանել ընդ գլուխ գեղջն որ Գուտենի կոչի. ազդ լինի և տեառն գեղջն որ Թանկըէզուլ կոչէին, այսինքն Աստուածոյ ծառայ. և էր սա յազատացն Սմբատայ. և հեծեալ յերիվար ձիարձակ լինի զկնի, և հասեալ կամէր արգելուլ զնա: Իսկ նորա ի մեծ ահի եղեալ արձակէ ի կրծից զփոքրիկ քսակ պայուսակին, և տայ ցԹանկըէզուլն և ասէ. ուր ես դու. և նա ասէ. ես Սմբատայ եմ Օրբէլեան. ասէ. տար զայդ և տուր ցՍմբատ և ասա. թէ այդ գին է թագաւորութեան իմոյ. առ և պահեա զդա. եթէ ես ի դուրս գամ և թագաւորեմ իմոյ աշխարհիս, առ իս բերցես և տամ քեզ երկիր և քաղաք զոր դու խնդրես, ապա թէ ոչ ելանեմ ի Սոնաց աշխարհէն՝ այդ քեզ լիցի: Եւ ինքն անցեալ գնաց և եմուտ յա-

մուր և յանձուկ աշխարհն Սոնաց և այլ ոչ ել անտի մինչև մեռաւ անդէն։

Իսկ Թանկրէդուէն բերեալ զայն մեծաւ խընդութեամբ ի տուն իւր, և պահեալ աւուրս ինչ՝ ետ Սմբատայ, զոր և առեալ նորա գոհանայր զԱստուծոյ. և խորհէր ի միտս իւր և ասէր. եթէ պահեմ զսա՝ ինձ է ինձ զի ոչ ծածկի և ոչ դադարի առ մեզ. այլ տանիմ զսա առ մեծ դանն որ թագաւորաց թագաւոր է. և տիրեալ է ծովու և ցամաքի, որ կոչի Մանկու դան այսինքն սպիտակ թագաւոր, որ էր թոռն Զանգզ խանին. և խնդրեմ ի նմանէ ողորմութիւն վասն աշխարհիս այս։ Եւ յարուցեալ գնաց առ Բաչու նոյինն և ցուցեալ նմա զլուսատու գոհարն ասէ. կամ առ դու և պարգևեա ինձ զոր խնդրեմս. և կամ յուղարկեա զիս առ մեծ դանն զի տարայց նմա զսա։ Տեսեալ նորա և զարմացեալ ասէ. այդ անգիւտ և անգին ջովհար է. ես ոչ իշխեմ առնուլ զդա. այլ յուղարկեմ զքեզ առ մեծ և աշխարհակալ դանն։ Եւ ապա ածեալ պատրաստութիւն ճանապարհին ըստ պիտոյիցն՝ տայ և յիւրոցն օգնական նմա. և յուղարկէ զՍմբատ ի Չին և ի Մաչին աշխարհն Նեստորաց, որ աւազ տախտն է արքայութեան նոցա, առ Մանկու դանն՝ որդի Գայուկ դանին, որդւոյ Զանգզ դանին՝ առաջին թագաւորի նոցա։

Իսկ Սմբատ շրջեալ ի վանորայս մեր, որք

կային ի դառն հարկապահանջութեան՝ տայր աղօթս առնել դիշերապաշտամամբ. և յանձնէր զինքն սրբոցն. և ուխտէր ուխտ զի թէ դարձցի յաջողմամբ՝ զամենայն քահանայս ազատեսցէ ի հարկէ և ամենայն եկեղեցեաց ընծայատուլիցի. և զամենայն յափշտակեալ հայրենիս դարձուսցէ անդրէն: Եւ այսպէս պաշար առեալ զաղօթս բազմաց՝ գնայր զճանապարհն, և անցեալ ընդ անհուն աստպարէզս երկայն ճանապարհին՝ հասանէր յաշխարհն արևելեան ի գահն աշխարհակալ դանուէլեանն զոր Ղարաղուրում կոչէին. և զի քրիստոնեայ էր օրինաւոր Մանկու դանն, և ունէր ի դրան մեծի պալատանն եկեղեցի և քահանայս, յորում միշտ պաշտօն և պատարագ անխափան լինէր. և ինքն յոյժ սիրէր զքրիստոնեայսն զորս և ալքայուն կոչէին. և աշխարհն ամենայն կային ի քրիստոնէութեան:

Ապա տեսանէ նախ Սմբատ զամենայն մեծամեծան և զդրան աւագանին. և ծանուցանէ նոցա զպատճառ գնալոյն. որք տարեալ յանդիման առնեն մեծի արքային. և ընծայեն զգոհարն պատուական: Ընդ որ յոյժ հաճեալ գովեաց. և հարցանէր եթէ զինչ ազգ ես. և ասէ. հաւատով քրիստոնեայ եմ և ազգաւ՝ հայ: Վասն որոյ առաւել սիրեաց զնա. և զպատճառ գալոյն հարցանէր: Եւ նա զամենայնն բովանդակ ցուցանէր նմա՝ գնեղութիւն եկեղեցեաց և զգրկութիւն

իւր, և զհաւատարմութիւն եղբօրն որ առ Ասլան նոյին, և զամենայն որպիսութիւն աշխարհիս ծանուցանէր։ Որում յոյժ հաւանեալ և մտադիրութեամբ ընկալեալ զբանն՝ ապա տայ զՄբատ մօրն իւրոյ և յանձնէ նմա, որում անուն Սուրախթամբէկ կոչիւր. և ասէ. զայս մի արքայութիւնս մեզ պահեսցուք և ոչ տացուք այլ ումեք իշխել ի վերայ դորա։ Եւ անուանեցին զնա Ննչու այսինքն տէրունի. և հրամայեցին կալ ի դրանն աւուրս ինչ. և յանձնեցին գործակալացն տալ օր ըստ օրէ յարքունուստ զռոճիկն. որ և յամեաց զամս երեք. և զցայգ և զցերեկ յաղօթելոյ ոչ դադարէր։

Եւ զի ունէր ընդ ինքեան Մբատ մանն մի փոքրագոյն յոյժ նշանագործ, զոր եղեալ առաջի իւր ի գիշերի միում յիւրում խորանին. և յերեկօրեայ մինչև ցառաւօտն կայր բազկատարած առաջի նորա, և յորդաբուղխ արտասուօք հառաչէր և պաղատէր։ Ապա նշան ահեղ երևեալ լինէր յերկնից ի վերայ խորանին, զի կամար լուսեղէն կայր ի վերայ նորա և խաչ ի վերայ կամարին. յորմէ ցոլմունք և նշոյլք բոցեղէնք հատանէին։ Եւ ի սաստիկ ճառագայթիցն լայնութիւն անհուն, համատարած բանակին լուսաւորեալ լինէր. և ամենեքեան առ հասարակ գրոհ առեալ ի դուռն արքունի՝ գումարէին զարհուրեալք ի տեսլենէն։ Եւ ազդ արարեալ արքայի՝

գայ արտաքս և տեսանէ, և ի մեծի զարմացման եղեալ՝ գոհութիւն և փառս տայր Աստուծոյ. և կոչեալ զմի ի խորհրդականացն իւր քրիստոնեայ՝ ասորի ազգաւ և ասէ. երթ և նշանեա զվրանն զայն զի վաղիւն ծանիցուք թէ ուր իցէ: Եւ ինքն Սմբատ անգիտանայր այսմ ամենայնի:

Իսկ ընդ լուսանալն կոչեն զնա առ արքայ. և տեսեալ ասէ. դեռ միտ է սա. և ասեն. այո. ապա հարցանէ ցՍմբատ. զինչ էր այն զոր տեսաք յայսմ գիշերի ի վերայ վրանին քո. և նա երկուցեալ ասէ. ոչ գիտեմ ինչ. արքայից արքայ ասէ. զայն ամենայն ճառագայթն և զահեղ երևմունն ոչ իմացաբ յայնքան ժամանակս երկարեալ. ասէ Սմբատ. գիտէ Աստուածն իմ՝ ոչ եմ հասու. ասէ զանն. և զինչ ունիս ընդ քեզ ի սրբոց ձերոց. ասէ Սմբատ. ոչ ինչ բայց միայն՝ փոքրիկ նշանիկ մի. ասէ. բեր առիս զի տեսից. և եբեր փութանակի: Յարուցեալ արքայի էջ ի գահոյիցն. և ծունր կրկնեալ բացաւ գլխով համբուրեաց զնա և ասէ. յայս չափս և յայս ձևս էր խաչն լուսեղէն զոր տեսաք. սա է նա ճշմարտիւ. և յայնմհետէ և յառաջ այնքան սիրեաց և պատուեաց զՍմբատ. և հաւատաց նմա. զի բարձրացաւ քան զամենայն զրան աւազանին. և հրամայեաց տալ Սմբատայ զոր ինչ և խնդրեսցէ:

Եւ եառն նմա փայիզայ ոսկի որ էր տախտակ ունելով զանուն Աստուծոյ և զարքայի

գրեալ յինքեան. և այս էր մեծագոյն պատիւ նոցա. և գրեն եաոլեմ որ է հրաման. զոր մեք սիգել կոչեմք, և տան նմա զամենայն առածն թրով Ասլանին, և զՈրոտն իւր երկրաւն որ էր առ Բաչուին և իւր մեծամեծացն, և զբերդն Բորոտնայ իւր կերոմն, վասն սպանման հօրն նորա անդէն Լիպարտի, որպէս գին արեան լեալ: Եւ եհան զՄբատ ի դուրս յամենայն դաւթարաց ի վրաց և յայլոց. և ահա այս կրկին հաստատուեցաւ եղև հայրենեաց նոցա. զի առաջինն թրով առած էր, որպէս ծառայ, որ ի ձեռն Ասլան նոյինին. և երկրորդս՝ արքայատուր և որպէս գնոյ մեծագունի առեալ ընդ լուսատու գոհարին: Եւ հրաման էառ ազատել զամենայն եկեղեցիս Հայոց և զքահանայս. և այնպէս մեծաշուք ճոխութեամբ դարձաւ այսրէն՝ բերեալ և ընդ ինքեան այն ի գրանէ արքունի: Եւ եկեալ փութանակի հասաւ յաշխարհս յայս: Եւ ծագեաց խաղաղութիւն, որպէս արեգակն ի մէջ գիշերի. և նախ յանդիման լինի Բաչուին և այլ գլխաւորացն. և ի նոցանէ ևս առեալ օգնութիւն՝ էառ և թափեաց զերկիրն Որոտան բովանդակ մինչ ի սահմանն Բորոտնայ և Բղենոյ, յորում և կայր ընդաւեր աթոռն Սիւնեաց Տաթև:

Էառ և զեղեգիս և զամենայն գաւառն վայոց ձորոյ, զՓողտանանն, զՈւրծ և զվէդի իւր ձորովն մինչև յերերաւնս, և ի կոտայն և ի

Գեղաքունի բազում շէնս և աւանս։ Եւ ազատեաց զեկեղեցիս և զքահանայս զիւրոյ իշխանութեանն և ամենայն աշխարհիս Հայոց։ Շինեաց զվանորայս և զամենայն աւերեալ եկեղեցիս. և արար բազում խնդութիւն քրիստոնէից։ Եւ զի սքոռն Սիւնեաց կայր աւեր ի բազում ժամանակաց. և ծերացեալ էր եպիսկոպոսն Տէր Յովհաննէս. և եղբօրորդի նորա Տէր Հայրապետ հրամանաւ կնոջ Բաչուին սկսեալ էր շինել զվանքն, և կայր ի նմին աղքատութեամբ. զի յայնքան ժառանգութեանցն որ լեալ էր, ոչ տուն մի անգամ կայր եկեղեցւոյն։ Զոր և սեպհականեալ Սմբատայ ինքեան՝ սկսաւ ամենայն չանիւ հոգ տանել շինութեան և փարթամութեան եկեղեցւոյն, և զյափշտակեալ ժառանգութիւնսն մի մի դարձուցանել անդրէն։

Իսկ մինչ այս այսպէս լինէր, ապա բարիաւեացն սատանայ սկսաւ նախանձ արկանել, և գրգռել զտունն Աւագին և զմեծամեծսն վրաց. և զի Աւագն վախճանեալ էր ի 699 թուին. և կին նորա Գոնցայն ունէր դուստր մի Ծոշաք անուն. և իշխէր ամենայն իշխանութեան նորա. վասն որոյ ժողովեցան ի Տփղիս առ Արդունն որ էր վազիր և ասաղազ (տեսուչ) կարգեալ ի մեծ դանէն ի վերայ ամենայն աշխարհիս, այսինքն հրամանատար ամենեցուն և իշխեցող արքունի հարկացն և մեծ դիւանին, որ

արար աշխարհագիր գաշխարհս ամենայն յ703 թուականին: Եւ բազում կաշառօք խնդրէին կո-
րուսանել զՄմբատ և ոչ ժառանգեցուցանել
գերկիր նորա, զոր և ոչ համարձակէր Արղունն,
այլ առին ի Սմբատայ բազում տեղիս. և ըզ-
ճնացեալսն կեղեքէին սաստկապէս. վասն որոյ
հարկ եղև նմա վերստին գնալ առ Մանկու զանն:
Եւ առեալ ի տանէն Ապան նոյինին իւր օգնականս
և գնաց յաջողմամբն Աստուծոյ: Բայց զի նախ
քան զերթալն սորա կոչեալ էին զԱրղունն ի
դուռն վասն մատնութեան ինչ. և ի հասանել
սորա անդ՝ կայր նա ի կապանս. և Սևինճ բէկ
ոմն և Շարափադին՝ դիւան այսր աշխարհի, կա-
մէին սպանանել զԱրղունն և ինքեանք գալ ի
տեղի նորա. և Սևինճ բէկն թշնամի էր Սմբատայ.
և կամէր սպանմամբ դաւել գնա:

Իսկ այն ինչ ի հասանել նորա ի պալատն՝
յանդիման լինէր Մանկու զանին, Եւ նորա
տեսեալ ծանեաւ զնա. և զի յոյժ սիրէր զՄմբատ
և հաւատայր նմա. կոչէ առ ինքն և ասէ. Եկ
արքայուն՝ և ծանո՛ ինձ զամենայն որպիսութիւն
այնր աշխարհի և զօրաց իմոց: Եւ նա կարգաւ
պատմէր նմա. ապա վասն Արղունին հարցանէ
եթէ՝ որպէս աւերեաց զաշխարհն զայն և կախէ
զքահանայս և զմին սպանեալ է. պատասխանեալ
Սմբատայ արդարացուցանէ զԱրղունն. և ամե-
նևին ասէ զմատնողն: Ընդ որ ցասուցեալ

արքայի մեծամեծացն իւր եթէ ընդէ՞ր ոչ ուղիղ քննեն։ Եւ հրամայէ վաղվաղակի առեան դնել և քննել Սմբատաւ հանդերձ, զոր և ի վաղիւն առաքին իսկ։ Եւ առեալ Սմբատայ զնոսա՝ առ ժամայն սատակեցին զՍևինճ բէկն և զՇարափադինն. և զԱրղունն հանեալ ի կապանաց ածին առաջի արքայի, և մեծարեաց արքայ զնա և եղ յառաջին գործն. և կալեալ զձեռանէ Սմբատայ յանձնեաց նմա. և հրամայեաց դրել նորանոր հրամանս և առաւել պնդութեամբ հաստատեաց քան զառաջինն զժառանգութիւնն Սմբատայ։ Եւ այնպէս մեծամեծ յաջողմամբ ելեալ անտի Արղունաւն հանդերձ՝ եկին վաղվաղակի յաշխարհս։ Եւ վասն մեծի երախտեացն ոչ գիտէր Արղունն եթէ որո՞վ պատուեսցէ զՍմբատ։

Իսկ ի գալն Սմբատայ յամօթ եղեն ամենայն թշնամիք և հակառակորդք նորա։ Որ եւ սիրեաց ամենայն գաւառաց և գիւղից իւրոց. բայց յետոյ իւր կամաւ վասն սիրոյ և միաբանութեան՝ ոմանց գարձոյց և եթող յետս աստ և անդ ի գիւղից և յազարակաց. և զայլն հաստատեաց սեպհական հայրենիք իւրոյ ազգի եւ գաւակաց։ Բայց եղև առաջին գնալն Սմբատայ ի Մանկու զանն յ700 թուականին. և երկրորդն յ705 թուականին։ Սա մեծաւ փառօք պատուեալ և սիրեցեալ լինէր յաչս Հուլաւուս զանին, և կացուցեալ ի վերայ բազում գործոց իւրոց։

Սա շինեաց զհրաշակերտ ժամատունն ի Նորավանս, ի վերայ գերեզմանաց իւրոց. և արար բազում արդիւնս և փարթամացոյց զնա և զարդարեաց զեկեղեցին և ետ գեղանս և այգեստանըս, որպէս վերագոյն ասացաք: Սա գնաց ի Բասեն հրամանաւ Հուլաւուին վասն անոպար մայրափայտից զի շինէին զմեծ արքունիքն որ ի Դաւն դաշտի զոր Ալա դաղ կոչեն. և եկեալ յԱշորնիս՝ գնաց ի վանսն Թաթլոյ և բազումծախուք և մեծաւ ջանիւ էառ մասն ինչ ի գլխոյ սուրբ Լուսաւորչին Գրիգորի զի կայր անդ մի կողմն գլխոյն. էառ և զգագաթ սրբոյն Գրիգորի Սքանչելագործի զոր բերեալ և ժողովեալ էր անդ վերջին Գագիկ Թագաւորն Բագրատունի. և եղեալ ի պահեստի ի կործանման ժամանակին: Եւ բերեալ զանպատմելի գանձն աստուածայինն՝ զարդարեաց ոսկւով և արծաթով եղեալ յաղիւսաձև պահարանի և բնակեցոյց ի գերահռչակ ուխտին Նորավանից. ետ և կազմել պահարան Աւազ Սուրբ Նշանին յոսկւոյ, ի կերպ աղիւսակի ունելով զրունս երկբացիկս և գրեաց ի թիկանց կուսէ յիշատակ ինքեան:

Ընդ աւուրսն ընդ այնոսիկ վախճանի եղբայր սորա գեղեցկածաղիկն Իվանէ, և դնի ընդ Ելիկումին. Թողու զաւակ մի բարեբոյս Լիպարիտ անուն. և յետ սակաւուց մեռանի և միւս եղբայրն, քաջ սպառազէնն Փախրադուլայն. և դնի

ընդ նոսա։ Իսկ եղբօրորդին սոցա Բուրթէլն գնաց ընդ զօրս Հուլաւուլին ի պատերազմ ընդ Բերքայ դանին ի դաշտն Ազրաց որ այժմ Ափչախք կոչին. և առ մեծ գետովն զոր Թերդ (Տերեկ), կոչեն, սպանանի ի պատերազմին յ710 թուին։ Եւ յետ այսր փոխի ամենօրհնեալ մայր սոցին Ասփայն յ712 թուին, և դնի ընդ որդւոց իւր։ Եւ ինայր Սմբատայ օգնական միայն կրսեր եղբայրն իւր Տարսայիճն, որ էր այր զօրեղ և պատերազմող և յաջողակ յամենայն գործս, նաև բարեպաշտ և աստուածասէր յոյժ. որ առեալ իւր կին յԻսմայէլացւոցն՝ զդուստր տեառն Սիւնեաց՝ զԱրուզ խաթունն, որ եղև քրիստոնեայ և երևելի հաւատով և երկիւղած յԱստուծոյ. յորմէ ծնան որդիք երեք՝ Ելիկում, Ստեփաննոս, որ կոչեցաւ յեպիսկոպոսութիւն, և Փախրադուլայն։ Եւ տիրէր Տարսայիճն կողմանն Որոտան։

Սա զարդարեաց զմեծ եկեղեցին Տաթևոյ ի սպաս և ի զգեստս գեղեցիկս, և ետ ի սուրբ եկեղեցին զվաղնջուց յափշտակեալ ժառանգութիւնն՝ զՀարժիս իւր սահմանովն, զՃուր իւր սահմանովն, և զիւր ձեռաւտունկ այգին ի Խոտագետ, և ըզ-Քէթիվանս իւր սահմանովն. և գրէ ինքեան արձան յիշատակի ի վերայ սեան հարաւային որ ունէր օրինակ զայս «Այս գիր յիշատակի և արձան անջնջելի է իմ Տարսայիճիս՝ իշխանաց իշխանի, որդւոյ մեծին Լիպարտի՝ եղբօր Սմբատայ՝ մեծ

իշխանի, կողմնակալի յայսմ նահանգի, որ իշխեցող էի այսմ գաւառաց ի դրանէն Բարկուշատայ մինչև ցսահմանն Բջնւոյ, միաբանեցայ Տաթեւոյ սուրբ առաքելոցս, և ամի զիմ հոգւոյ մասն ի յիմ սեփական ուխտս ի սուրբ եկեղեցիս գիւղս 6, զոր լուեալ էաք ի հին ժամանակաց ժառանգութիւն լեալ սմին՝ զՇնհէր, զՈտան աւան սահմանօքս իւրովք, լերամբ և դաշտիւ, և ի Ոտագետ և ի Ոտ զմեր ձեռատունկ այգին, և զՅուր և զՀարժիս իւր սահմանովն, զորոյ զկէսն գանձագին էի արարեալ. և զԲորտի, զԲեթիվանս իւր սահմանովն. և եպիսկոպոսք տեղւոյս Տէր Սողոմոն հաստատեցին մեզ յիշատակ, և կարգեցին պատարագ յամենայն ամի մին քառասունք՝ զ10՝ Յայտնութեանն, զ10՝ Զատկին, զ10՝ Աստուածածնին՝ զ10 Աւագ տօներին, զ20 օրն ինձ Տարայիճնի և զ20 օրն իմ եղբօրն Սմբատայ:

Արդ՝ որ յետ մեր ի մերոց կամ յօտարաց կամ յիշխանաց կամ ի ձեռնաւորաց այս հաստատ պայմանս և անքակ վճիռս խափանել ջանայ, կամ զայն գիւղօրէքն կամ զայգին յայս եկեղեցւոյս հանել խորհի՝ բաժին ընդ Յուդայի և ընդ այլ խաչահանուացն եղիցի, և զկայենին և զամենայն չարագործացն առցէ պատիժս, և յերից սուրբք ժողովոցն նզովեալ լիցի. և թէ տաճիկ աւազակ փոքի և յափշտակել ջանայ՝ Աստուծոյ և յիւր

փեղամբարձն ապիզմը եղիցի, և ընդ սատանայի ի դժոխս իջցէ. և տամբք և զաւակօք չնչեալ և բարձեալ եղիցի. իւր հալալն լինի հարամ և հազար, հազար, հազար նալմէթ (նահլաթ) լիցի. ի թուին 723 յամսեանս Նոյեմբերի 13։

Եւ է վկայ այսմ վճռիս Տէր Սարգիս՝ Նորավանից եպիսկոպոս. և Սարգիս՝ փակակալ սուրբ եկեղեցւոյս. և յիմ ազատաց Հասան կարապետի որդի, Որոտշան՝ Լորայ թոռն, Միրան՝ Նուերայ որդի. հաստատ է կամաւն Աստուածոյ. Աստուած շնորհաւոր արասցէ սուրբ ուխտիս։ Յուսովն Աստուծոյ ես Տարսայիճս իմ ձեռագրովս հաստատեցի զընծայքս. արդ՝ որ յետ իմ յիմ զաւակացըս և թոռանց կամ յայլ իշխեցողաց զմեր հոգիս զրկել խորհի և զմեր յոյսն խափանել և զմեր սահմանեալս քակել չնայ՝ յ318 հայրապետացն նզովեալ եղիցի իմահ և ի կեանս, կորեալ և չընչեալ լիցի յայս կենացս և ի հանդերձելոյն. ամէն։

Իսկ Սմբատայ հայրապիր լեալ տանն Աւագին՝ խորհի ընդ այլ իշխանացն. և տան սպանանել ի ծովամիջի գԹոնցային, հրամանաւ Հուլաւու գանին. և ինքն իշխեր ամենայն իշխանութեանց Աւագին։ Եւ տայ զդուստր նորա գՄոշաքն ի կընոնութիւն մեծ Մօջային սահիլ գիւանին որ ունէր ի քուին զամենայն աշխարհս տէրութեան Ապաղայ գանին, որ սակ լինել ըստ մեծի դալթարի գիւա-

նին համարս 150 դումանի, և մի դումանն մի բիւր է. և նա էր դիւանի գլուխ և վերակացու ամենայնին. և էր այս յ718 թուին: Բայց մեծ և բարեպաշտ արքայն աշխարհակալ, յոյսն և ակնկալութիւնն քրիստոնէից՝ Հուլաւու դանն մեռանի ի յ713 թուին. ընդ նմին և ամենօրհնեալն Տօնդուզ խաթունն՝ կին նորա, որք դեղակուր եղեն ի բազմահնար Ջոջայէն սահիպէն. որ և գիտէ Տէր (թէ) ոչ ինչ էին ընդհատ բարեպաշտութեամբ քան զԿոստանդիանոս և զմայր իւր Հեղինէ, որք թագաւորեցին ամս 8:

Եւ ապա նստաւ ի տեղի նորա որդի նորին Ապաղայն, այր հեզ և բարի և խաղաղարար. և սա սիրող քրիստոնէից. վարեալ զդանութիւնն բարեյաղթ յաջողմամբ ամս 18. և մեռանի ի դաւեալոյ ոմանց ի Համիան, յ731 թուականին: Բայց Սմբատ անզաւակ գոլով՝ առեալ զմի յորդւոց եղբօրն Տարսայիճին և որդիացուցեալ ինքեան՝ տայ յուսումն գրոց և ի հրահանգս քահանայութեան: Եւ ինքն յետ բազում շինութեանց աշխարհաց և վանորէից և եկեղեցեաց և մեծամեծ և երևելի գործոց, որ անց ընդ ամենայն նախնիս իւր, գնաց ի մեծ դիւանն արքունի առ Արղունն և Սահիպն ի Դավրէժ շահաստան: Եւ անդ հիւանդացաւ հիւանդութիւն մեծ, որ և մեռաւ խակ: Եւ տուեալ զամենայն իշխանութիւն իւր յեղբայր իւր Տարսայիճն՝ յանձնէ զնա Արղունին

և Սահիպին. և ինքն փոխի և ի կարգս հրեշտակաց, մերձ գոլով նմին երանելին և սուրբ բաբունին Շալուէ, վարեալ զիշխանութիւնն մեծաշուք պատուով և երևելի փառօք ամս 20։

Եւ եկեալ ամենայն մեծամեծացն լացին զնա, և մեծապէս պատուով զարդարեցին զդագաղս նորա արքայակերպ ճոխութեամբ, և այնպէս բարձրացուցեալ բազմականօք, խաչիւք վառելովք, ջահիւք և մոմեղինօք, պաշտամամբք մեծաձայն, բազմութեամբ քահանայից զարմացուցանելով զաշխարհագումար մայրաքաղաքն՝ հանին հանդիսիւ ընդ դուռն նորա. և բերեալ ի հայրենի դամբարանն սուրբ ուխտին Նրսավանից, և աշխարհախումբ հանդիսիւ եդին ի տապանի ընդ հարս իւր ի թուականին 722, վասն որոյ և շինէ եղբայր իւր Տարսայիճն նմա տուն տապանի, և եկեղեցի յանուն սրբոյն Գրիգորի, և անդ փոխէ ի հանգիստ զեղբայր իւր Սմբատ։ Որոյ Քրիստոս Աստուած՝ յոյն հասարակաց, շնորհեսցէ հանգիստ և ողորմութիւն. և մաքրեսցէ զամենայն աղտեղութիւն հոգւոյ նորա, և կարգեսցէ ընդ սուրբ և փառաւորեալ իշխանացն Հայոց. և յիշատակ նորա օրհնութեամբ եղիցի։ Բայց լուր թէ զորպիսի երախտիս գործեաց սա առ ազգս իւր։

Էր թագաւորութիւնն Վրաց առ կնոջ մի Ռուսուդան անուն, և էր որդի մի Վաշային Դա-

ւիթ անուն զոր բազում հնարիւք չանայր Ռուսուդանն այն կորուսանել զնա. երբեմն դնէր ի թաքուստ և ծովասոյզ առնէր. երբեմն տայր յիշխանան սպանանել, և նոքա ի գետնափոր յարկի պահէին. երբեմն վարէր ի հեռաւոր աշխարհ զի անդ կորուսցեն, և յամենայնէ զերծեալ լինէր խնամօքն Աստուծոյ: Եւ երթեալ փախստեայ առ մեծ արքայն Մանգու զանն՝ զառնայր ի նմանէ. և եկեալ թագաւորէր յիւրում աշխարհին, և գտանէր սատակեալ զՌուսուդանն: Նա առնոյր իւր կին զՄաւանդն Նախջաւանու զեսուգանն. առեալ էր և միւս կին զԳոնցայն և ունէր ի նմանէ զաւակ մի Դեմետրէ անուն: Եւ Սմբատ ամենայն հաւատարմութեամբ հպատակէր նմա. և բազում և մեծ երախտիս ցուցանէր նմա առաջի Հուլաւու զանին և առաջի մեծամեծացն, ևս առաւել ի մեծ զրանն: Եւ այնքան սիրեաց զնա Դաւիթ թագաւոր, զի հաւասար գլխոյ իւրոյ տեսանէր. և զփոքրիկ տղայն Դեմետրէ դնէր ի ձեռս նորա և տայր նմա որդի: Եւ Սմբատ զբազում թշնամիս թագաւորութեան նորա ի մեծամեծ գոռոզանուցն տայր սպանանել ի զրան արքունի. զի այնքան լսող էր Հուլաւուն նմա. զի ում կամէր՝ մահ տայր ածել, և ում կամէր՝ կեանս շնորհէր, վասն որոյ ամենայն ոք պողայր ի նմանէ և ամենեցուն աչք ի նա հայէին:

Ապա կոչէ թագաւորն զՍմբատ ի Տփղիս, և

կամէր մեծամեծ պարգեւօք երախտահատոյց լինել նմա. հարց ցնա և ասէ. որպիսի կամք են քո զի պարգեւեցից քեզ պարգեւս մեծամեծս, զի զոր կամիս և հաճոյ թուի քեզ յիմ թագաւորութենէս՝ անխնայ է քեզ. յոտն կացեալ Սմբատայ և երկիր պագեալ նմա ասէ. ով թագաւոր՝ զոր ունիմք՝ ամենայնն քո է և նախնեացն քոց. և այս մեզ բաւական է, այլ խնդիր է իմ ի քէն բան մի թէ կամիս. և ասէ թագաւորն. երդուեալ եմ զի զոր ինչ խնդրես՝ տայ քեզ: Ասէ Սմբատ. բարձ զչար յիշատակն մեր զոր զրպարտեաց նախնին քո Գէորգի զնախնիսն իմ. և եթ գրել և նզովք կարգել զի մի թողցեն զմեզ ի հայրենիս մեր. և պահեաց ի տան գանձու իւրում. տուր զայն ի ձեռս իմ: Եւ զարմացեալ թագաւորն՝ նախաստէր զհաւն իւր թէ ընդէր զայսպիսի արս զօրեղս և յաջողակս եհան ի տանէս մերմէ: Եւ հրամայեաց սպասաւորացն յոյգ առնել և գտանել զգիրքն. որք երթեալ գտին և վաղվաղակի բերին: Առեալ թագաւորն ի ձեռն՝ յոտն եկաց և ասէ. ահա Սմբատ՝ առ զգիրքս զոր խնդրէիր. Յարուցանալ Սմբատայ երկիր պագանէր և ասէր. ով արքայ՝ մինչ այդչափ ողորմեցար, զկատարեալն ցոյց առ իս բարիս. այդ գիրք գրեալ է ձեռամբ թագաւորի, պարտ է և ընդիլ ձեռամբ թագաւորի. հրամայեա լուցանել

առաջի քո կրակ, և քո ձեռամբ ընկեաւ ի նա զգիրքդ։

Եւ առ ժամայն հրամայեաց թագաւորն և լուցին կրակ. և հանեալ գսուրն կոտորեաց զզթուղթան և ընկեաց ի կրակն և այրեաց. ընդ որ յոյժ խնդացեալ Սմբատ՝ մեծապէս շնորհակալեր նմա։ Յետ որոյ և այլ բազում և մեծամեծ պարգեւօք և թագաւորական զգեստուք պատուէր և խիլայէր զնա թագաւորն, և այնպէս դարձուցանէր ի տուն իւր։ Ահա այսու օրինակաւ եբարձ Սմբատ զնախատինս նախնեաց իւրոց. և արար զկնի եկելոցն յիշատակ բարւոյ։ Իսկ զկնի սորա սիրեալ ամենայն իշխանութեանց նորա եղբայրն իւր Տարսայիճն. որ պատուեալ և սիրեցեալ յաչս աշխարհակալացն և ամենայն մեծամեծաց՝ վարէր զիշխանութիւնն իւր բարձր և շքեղ փառօք, ահարկու ի վերայ ամենայն թշնամեաց. և այնքան յարգեալ լինէր առաջի Ապաղայ դանին որ բազում անգամ զարքայական հանդերձն իւր մերկացեալ յանձնէ՝ հագուցանէր Տարսայիճին յոտից մինչև ցգլուխն, և զկամարն ի համակ ոսկւոյ բազմագին ակամբք և մարգարտօք լցեալ՝ տայր ածել ընդ մէջ նորա։ Եւ զի այր ուժեղ և սրտեայ և պատերազմող էր, և հասակաւ ահարկու, յամենայն պատերազմունս յոր և երթայր, մեծամեծ քաջութիւնս և անպարտելի զօրութիւնս ցուցանէր, ի Խորասան,

ի Շամ, ի Հոռոմս, ի Համս և ի Համայ ընդ Մսրացւոյն, և ի Դարբանդ՝ ինն անգամ վանեալ անձամբ զպատերազմ և մղեալ մարտս. վասն որոյ մեծամեծ պարգեւօք պատուեալ լինէր յարքայէ արքայէ. և առեալ զոսկի քաղիշն որ էր տափարակաձև ի չափ թզոյ մի և կշիռ լտեր միոյ. զի այն իսկ էր յաղթութեան պատիւն։

Սա առեալ զթագաւորն Վրաց Դաւիթ՝ զնայր ի տունն Աշենոյ, առ որդի մեծ իշխանին Ջալալին Աթաբէկն. և առնոյր զքոյր նորա ի կնութիւն զՄինա խաթունն առ կենօք առաջին ամուսնոյն։ Ընդ որ ոչ հաճեցան օրէնք և վարդապետք եկեղեցւոյ։ Եւ բերեալ ի տուն իւր սատցաւ ի նմանէ որդի մի զեղեցկուղէշ. և անուանեցաւ զնա Ջալալ. և զատերս երկու, յորոց զաւագն եառ ի կնութիւն մեծի և փառաւորեալ իշխանին Աշենոյ Գրիգորոյ՝ որդւոյ Հասանայ, որդւոյ մեծի Գրիգորին, որ էր քեռորդի Աթաբէկ Իվանէի. և զմիւսն յետ հօրն եառուն եղբարքըն հարան ի տուն Վրաց թագաւորին՝ կին եղբօրն Դաւթի թագաւորի, Մանուէլին՝ որդւոյ Դեմետրէ թագաւորին, որ էր որդի Դաւթի թագաւորին. որ պակասեաց ի 719 թուականին։

Սա շինեաց եկեղեցիս. և արար բազում արդիւնս ի վանորայս. եառ և ի վանսն Ցաղացքարոյ գիւղ, ի Գեղաքունի զԳառնակերն. և այդի մի ի Մաճառակայ ձորի. և զրէ ինքեան արձան

ի վերայ սրբոյ կարապետին. և կարգէ պատարագս երիս ամ յամէ. և փակէ ահագին նզովիւք զի մի խախտեսցեն զնոգեցատուրն զայն: Նորոգէ և բազում եկեղեցիս խախտեալս և հնացեալս: Վախճանի և յաւուրսն յայնոսիկ բարեպաշտուհի կին նորա Արուզ խաթունն. և դնի ի տապանի, ի դրան սուրբ առաքելոցն ի Տաթև: Բայց յետ թագաւորութեան Դաւթի զորգի նորա Դեմետրէ բերեալ Տարսայիճի ի տուն իւր սնուցանէր, ըստ պատուիրելոյ հօրն: Եւ ապա բազում չանիւ և օժանդակութեամբ նստուցանէ յաթոռ հօր իւրոյ թագաւոր վրաց ի721 թուականին: Իսկ յետ Ապաղային որ մեռաւ ի 731 թուին նստի Թագուտարն՝ եղբօրորդի նորին, դան, ամենայն աշխարհի. որ և Ահմադ անուանեաց զինքն. և խորհեցաւ քակել զօրէնս քրիստոնէից և առնել մըսլման զամենայն ազգ: Եւ յերրորդում ամի տէրութեան իւրոյ եսպան ի Մուղան զմիւս եղբայրն զՂաւնղրաթայն և զսուլտանն Հոռոմոց զՄիաթադինն և զերկուս որդիսն Յագանին: Եւ ի գարնանային ժամանակին գնաց անհուն զօրօք ի Խորասան ի վերայ Արղունին՝ որդւոյ Ապաղայ դանին, զի սպանցէ զժառանգ թագաւորութեանն. և կալեալ զնա դարձաւ այսրէն:

Իսկ Աստուածն քրիստոնէից յայնմ զիշերի դարձոյց զսիրտ մեծամեծացն առ Արղունն, զոր

հանեալ ի բանտէ կապանացն՝ թագաւորեցուցին և առաւ ի վերայ եղեալ կոտորեցին զամենայն թշնամիս նորա։ Հասեալ զկնի սատակեցին զԱհմադն և զհամախոհս իւր՝ զՀասան Մանլի շեխն, զՄահիպ դիւանն, զԱլինախն և զայլս բազումս։ Եւ էր ընդ նոսա թագաւորն Դեմետրէ, զոր սիրեաց Արղունն, և ետ նմա զամենայն աշխարհս Հայոց՝ զտունն Աւագեան և զտունն Շահանշահեան և զԳագեցին և զորդիսն Սադուն աթաբէկին։ Եւ ինքն էր յոյժ սիրող քրիստոնէից և եկեղեցեաց։ Էր ընդ նոսա և Տարսայիճն, զոր յոյժ մեծարեաց և սիրեաց Արղունն։ Ապա դարձաւ Դեմետրէ մեծաւ խնդութեամբ և ամենայն ազատօք, և մեծամեծք վրաց և Հայոց ընդ նմա։ Եւ եկեալ ի Շարուր՝ գնաց նմա ընդ առաջ Տարսայիճն մեծամեծ պատուով, և արքունական ընծայիւք մեծարեաց զթագաւորն։ Եւ նա առեալ տարաւ ընդ իւր զնա յերկիրն Աւագեան՝ յԱյրարատ. և բազում թախանձանօք բռնազբօսեաց զնա, և եդ Աթաբէկ իվերայ ամենայն տէրութեան իւրոյ մինչև ի Տփղիս և յԱնի եւ ի Կարս։ Եւ եգ ի ձեռս նորա զտղայն իւր զԴաւիթ և զՄանուէլն սնուցանել զնոսա և պահել։

Եւ յայնմհետէ ունէր Տարսայիճն զաթաբէկութիւն աշխարհիս Հայոց, և բազում դիւրութիւն և ողորմութիւն առնէր նեղեալ ազգիս Հայոց։ Եւ գնացեալ ի Տփղիս՝ ետ բերել զդիւանն

արքունի և ընթերցաւ զամենայն դաւթարսն, եւ զի էին գրեալ ի դաւթարսն անուանք վանորէից Հայոց զի ի նեղքոյ հարկի և դիւանի կայցեն. ապա եառ բերել զծիկնաւալար աւագ դիւանադպրութեանն. և փոխեաց զդաւթարն. և եհան զանուանս վանորէիցն աւելի քան զ150. և զինն այրեաց հրով. և այնպէս ազատեաց զամենայն եկեղեցիս։ Նաև այնքան ողորմած և գթած եղև առ ամենեսեան զի ի Նեփս գիւղ, որ է ի վերայ Հուրազդան գետոյ, խաչ կանգնէին և անուամբ նորա կոչէին զնա։

Սա արար ժողով բազում եպիսկոպոսաց և վարդապետաց և վանականաց աշխարհախումբ հանդիսիւ ի գերափառ ուխտին Նորովանից, եւ եառ ձեռնադրել զորդի իւր Մաեփաննոս ի քահանայութիւն ի 729 թուականին. և յետ հինգ ամի յուղարկեաց ի թագաւորութիւնն Հայոց ի Կիլիկիա, առ մեծ կաթողիկոսն Տէր Յակոբ ի ձեռնադրութիւն եպիսկոպոսութեան։ Որ և ի հասանելն անդ վախճանեալ էր կաթողիկոսն, և բազում պատիւ և մեծամեծ փառս ընդունէր ի թագաւորէն Հայոց Լևոնէ որ և յոլով թախանձանս առնէր նմա ճնալ անդէն և նստել յաթոռ կաթողիկոսութեան Հայոց։ Եւ մինչ ոչ առնոյր յանձն՝ ապա արարեալ մեծ աշխարհաժողով և բազում ընտրութեամբ կացուցանեն կաթողիկոս Հայոց զՏէր Կոստանդին յաւուր ճրագալուցի

Զաւակին: Եւ ի մեծի աւուրբ Զաւակին ձեռնադրեն զՍտեփաննոս մետրապօլիտ մեծ աթոռոյն Սիւնեաց ի վերայ այլոց եպիսկոպոսացն որ կային աստ և անդ, ոմանք ի Վայոց ձոր և ոմանք ի Տաթեւ. որք և միաբան թղթովք և ընծայիւք յուղարկեալ էին զնա առ կաթողիկոսն վասն նորոգման սուրբ աթոռոյն հին պատուոյ և աստիճանին որ բարձեալ էր ի վաղնջուց վասն աւերման և կործանման աշխարհիս:

Եւ այսպէս պսակեալ զՍտեփաննոս ընդ սուրբ և առաքելական եկեղեցւոյն Տաթևոյ վեսայացուցանեն այսմ աթոռոյ. և գրեն շրջաբերական նամակ ոսկեգիր մագաղաթաւ, մեծարգի բանիւք և հաստատուն պայմանաւ նորոգելով զպատիւ աթոռոյն զմետրապօլտութեանն. և շքեղացուցեալ անհամեմատ փառօք զգեցուցանեն նմա զհայրապետական զգեստն ոսկեթել հիւսուածով. և դնեն թագ պատուական ի գլուխ նորա. զայս կաթողիկոսն. իսկ թագաւորն նմանապէս զգեցուցանէ ի թագաւորական զգեստուց ըստ հայրապետական ձևոյն, և դնէ կրկին անգամ թագ պատուական ի համակ ոսկւոյ ի գլուխն, որ և զանուն թագին ինքեանք միթր կոչէին. տային և զեմիփորոնն մեծախորհուրդ զերեք կրկինն, որ մետրապօլտացն է, և խոյր ոսկեթել մարգարտայեռ յօրինուածով. նաև այլ բազում պարգևս մեծամեծս. և այնպէս բարձրագոյն փա-

ոօք դարձուցանեն այսրէն ի թուականին 736։

Իսկ ի գալ նորա խնդաց հայրն իւր Տաթեւացիճն և եղբարքն և ամենայն աշխարհն։ Բայց յետ սակաւուց խանդացեալ եպիսկոպոսացն որ ի Տաթեւ՝ գնացին առ այլազգիսն և բազում ոճիրս սերմանեցին և յոլով վիշտս հասուցին եկեղեցւոյ. և մինչ ի վախճան ինքեանց երկոցունցն Տէր Հայրապետին և Տէր Յովհաննիսին ոչ դադարեաց խռովութիւնն։ Իսկ Տեառն Ստեփաննոսի գնացեալ առ մեծ աշխարհակալն Արղուն. և ցուցեալ նմա գնամակ կաթողիկոսին և ծանոյց զամենայն որպիսութիւնն։ Եւ նորա մեծապէս պատուով ընկալեալ գնա՝ յոյժ հաճեցաւ, և հրամայեաց գրել նմա ըստ իւրեանց օրինին եաուլեխ. և հաստատեաց զամենայն եկեղեցիս և զաշխարհն և զեպիսկոպոսունսն ի Տէր Ստեփաննոս. և եւս նմա այր ի գրանէն և փայիզ։. և այնպէս յուզարկեաց յաթոռ իւր։ Որ և եկեալ աիրէր ամենայնին ի փառս Աստուծոյ։ Եւ կային հնազանդութեամբ ի ներքոյ նորա Տէր Գրիգորն, որ էր ազգական Տեառն Յովհաննիսի, և Տէր Սարգիս որ ի Նորավանս։ Այս Տէր Սարգիս, որպէս յառաջն ասացաք, բազում արդիւնս ցուցեալ ի Նորավանս, ևս առաւել արար գործ մի երևելի, զի ի գիւղն Առիայ ի վերայ գետոյն կանգնեաց կամուրջ զարմանալի տաշածոյ վիմօք՝ յոյժ բարձր և ընդարձակ և լայն, հիացու-

ցիշ տեսողաց, բազում ծախիւք և անչափ աշխատութեամբ՝ հրամանաւ բարեպաշտին և մեծափառ իշխանին Տարսայիճին, որոյ վարձատրեսցէ Քրիստոս հազարապատիկ:

Յայսմ ժամանակի երկպառակեցան զօրքն դան Արղունին. և անկաւ շփոթումն մեծ ի մէջ մեծամեծացն գլխաւորաց, և հանին բազում արեան ճապաղիս. զի կալաւ Արղունն զմեծ զօրապետան զԲուղայ չինքսանն, որ կոչի աւազադաց աւազ կամ տէրանց տէր, և եսպան զնա զի խորհուրդ նենգութեան էին խորհեալ նմա. ընդ նմա և զամենայն համախոհս նորին զՂազանն և զԹուխլուխ հազարապետան զԱրուխն, զԱճանն և այլ բազումս. սակս որոյ և զրպարտեալ զթագաւորն Վրաց Դեմեարէ բաղբաղելով եղին ի վերայ բարուրս մահու և տարեալ սպանին տարապարտ ի մեծ դաշտին Մովկանայ յեզը գետոյն Կուրայ ի թուին 738: Իսկ քրիստոսասէրն և ամենօրհնեալ իշխանաց իշխանն Տարսայիճ, յետ բազում բարեպաշտութեանց եւ երևելի գործոց, լցեալ զկէտ կենաց իւրոց՝ վախճանի յիւրում դարապասին յԱրփայ. և տարեալ ի Նորավանս մեծ աշխարհաժողով հանդիսիւդնի ընդ եղբօր իւրում Սմբատայ՝ յիւրում ձեռակերտ դամբարանին, ի թուականին 739: Եւ ապա որդիք նորա վիճեցին ի վերայ տէրութեան և իշխանութեան հօրն. որք գնացեալ ի դուռն ար-

քունի՝ յանդիման եղեն աշխարհակալ դան Արղունին և ծանուցին զբանս իւրեանց։ Իսկ նորա յառաջ կոչեալ զաւագագոյն զՁելիկուճին. և կարգեալ զնա ի տեղի հօրն՝ կացուցանէ իշխան ի վերայ ամենայնին։

Բայց թէպէտ տիրեաց բոլոր հայրենեաց և իշխանութեանց հօրն. սակայն ոչ կամեցաւ զբըկութիւն առնել եղբարցն. այլ եպիսկոպոսօք եւ վարդապետօք և ազատօք բարժանեաց զամենայն ժառանգութիւնն և ետ ըստ պատշաճին զբաժին եղբօրն Ջալալին՝ ի նա, և զբաժին հօրեղբօրորդւոյն Լիպարտին՝ ի նա։ Եւ այնպէս կային միաբանութեամբ և վարէին զտէրութիւն յայսմնահանգի մեծարգոյ և շքեղաշուք իշխանութեամբ պատուեալ և փառաւորեալ յաչս աշխարհակալացն և մեծամեծացն, պահելով զաշխարհս զայս ի խաղաղութեան, և զվանորայս ի շինութեան։ Եւ զի յայսմ ժամանակի ամենայն աշխարհ աւերեալ և ապականեալ էր, և վանորայք խափանեալ ի պաշտամանէ, և ամենեքեան առ հասարակ դիմեալ ի տէրութիւն սորա, ասա զհանգիստ առեալ զառեղէին, որպէս և եկն կաթողիկոսն Աղվանից Տէր Ստեփաննոս, և բնակէր առ Տեառն Ստեփաննոսի՝ եղբօր սորա, և այլ բազում եպիսկոպոսք և վարդապետք և յազատ ազանց. և էր տեսանել շնորհօքն Աստուծոյ զտունս զայս իբր զտաճարն Նոյեան ի մէջ աշխարհա-

կործան ալեացն, զոր և Տէր Աստուած անսասանելի պահեսցէ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին և ամենայն սրբոց մինչև ի կատարած աշխարհի:

Բայց այսու յոյժ գեղեցկացան. զի ինքեանք մարմնական իշխանութեամբն պայծառանային և եղբայր իւրեանց Տէր Սահփաննոս՝ հոգևոր շնորհօք և բարձր դիտապետութեամբ շքեպանայր. և յեռեալք սիրով ընդ միմեանս կային հանդարտութեամբ, ըստ այնմ եթէ զի բարի կամ զի վայելուչ՝ զի բնակին եղբարք ի միասին: Եւ ունէին առքա բողբոջս բարեբոյս զաւակաց. Ելիկումին որդիք երկու Բուրթել և Բուղտայ անուն. և դուստր մի զոր ետ ի կնութիւն գեղեցկածադիկ իշխանին և մեծ կողմնակալին, Ֆաչոյ՝ որդւոյ Հասանայ, որդւոյն Պուռշայ՝ մեծ իշխանին, որ էր որդի Վասակայ քաջի, զոր վերագոյն յիշեցաք:

Իսկ Լիպարտի՝ որդիք հինգ, որոց երիցագոյնն Սմբատ որ փեսայացեալ էր տանն Աթաբէկի Սաղունեանց, և միւսն Յովհաննէս զոր առեալ Տեառն Սահփաննոսի անոյշ և վարժեաց ուսմամբ. և ած ի քահանայութիւն: Եւ արդ ով ընթերցողք՝ մի լիցի ինձ ոք պարսաւադէտ որպէս թէ զիւր ազգ յարգէ և պատուէ. և կամ կարծիք ինչ տարցի, եթէ աւելի ինչ բանս յօդեալ պատուաստեցաք. վկայ է ինձ Տէր, որ յիս-

կղբանէ ճառիս մինչ ի կատարած բազում ճըշդիւ քննեալ գտաք զառոյգն. և զոր մեր ականատես էր եղեալ՝ ի բազմաց զսակաւն և զճշգրիտն եղեալ կարդեցաք ասա: Եւ թէ զօտարաց ազգաբանութեանց և յիշատակաց, որք վաղ ժամանակօք անցին, փոյթ եղև մեզ, ապա ոչքան ևս առաւել զիմն և զիմոցն: Եւ զի յայս մատեան զՍիսակեան աշխարհի զրոյցս կարգեցաք. և ի վերջոյ որդիքն Օրբէլեան կացին տէր և իշխեցող սմա. վասն այսորիկ հարկ եղև մեզ և զսոցայս ճառել. և զու ընկալ անախտ մտօք և զմեզ թող առանց մեղադրութեան. փառք յաւիտեանս. Ամէն:

ԿԼ.

Վասն յիշատակի եւ միաբանութեան աստուածապատակ թագաւորին Հայոց Լեւոնի ի սուրբ, երկնահանգիստ արուռն Սիւնեաց ի Տաթեւ որ ի ձեռն Տեառն Հայրապետին՝ Սիւնեաց եպիսկոպոսի:

Պատուեալ և պատուական ծերունին Տէր Հայրապետ՝ եպիսկոպոս Սիւնեաց, յետ շինութեան սրբոյ ուխտին Տաթեւոյ նորոգէ զխախտեալ և զծակոտեալ գլուխս սրբոյ եկեղեցւոյն, որ ի շարժմանէ և ի վաղ ժամանակաց հնութենէ ապականեալ էր: Եւ ի ձեռն մեծահռչակ ճարտարաց քերածոյ քարամբք և կրաշաղախ ձուլմամբ յօրինէ զսալայարկս ծածկութի գմբէթին և սուո-

բակայ սագիցն և գաւթին որ ի դրանն: Եւ ի սրբել զինն կազմուած աղիւսաձոյլ և վիմակարկառ դերբկացն որ ի վերայ ձեղուանն՝ գտանեն ի գլուխ առաջին խորանին հիւսիսային կողման տուն գաղտանոց, և ի նմա մթերս անհուն սրբոյ թեանց և նշխարաց առաքելական, հայրապետական և մարտիրոսական, յորում և կայր աստուածընկալ խաչն Քրիստեան: Եւ մեծապէս գոհութեամբ իշուցանեն յեկեղեցին: Եւ անհուն լինի խնդութիւն եղբայրութեանն:

Ապա յետ բազում աւուրց ծերական ալեօք եպիսկոպոսն բարեբարոյ Տէր Հայրապետ յաղթեալ ի սիրոյ Տեառն իւրոյ՝ գնաց ի տեսութիւն աստուածակոխ տեղեացն Երուսաղէմի. և հասեալ փափագմանն լնու գտենչումն երանելի ոգւոյն, և գառնայ առ աստուածապատակ թագաւորն Լևոն Հայոց: Եւ նորա ի վաղ ժամանակաց ցանկացող եղեալ միաբանութեան սուրբ և դեղափառ ուխտին Տաթևոյ՝ խրախացաւ մեծապէս ընդ հանդիպումն եպիսկոպոսին. և ըստ մեծայոյս հաւատոյն կազմեալ ընծայ թագաւորական սուրբ և երկնաճեմ եկեղեցւոյն զգեստ սեղանոյն յարքունական մետաքսից զբիւզանդացին որ ի Յունաց ճարտարացն աննման կիտուածօք, և խաչ պատուական ի սպիտակափայլ և սառնատեսակ քարանց համակ կերպացեալ և պնդեալ յոսկւոմ, և սկիք պատուականք ի զուտ արծա-

թոյ. և այլ բազում պարգևս եպիսկոպոսին։ Եւ գրէ իւրով ձեռամբ յիշատակ ինքեան։

«Մարդիկ որ հոգւոյ աչօք յանվախճան կեանս հայեցան՝
Մինչդեռ ի մարմնի էին փրկութեան հոգւոյն ջանացան,
Յաղագս որոյ ես Լևոն թագաւոր ազգիս հայկազեան,
Եւ խոստովանող ուղիղ հաւատոյ համագոյ սուրբ երրորդութեան,
Յայս Աստուածընկալ սուրբ ուխտ խնդրեցի լինել միաբան,
Որպէս զի հաղորդ եղէց ի նմանէ ամենից որ աստ բարութեան,
Որ և աղերսեմ առ ձեզ աստանօր անձինք սրբբազան,
Զի մեզ և նախնեաց մերոց որք հանգեան յուսով յարութեան,
Լիցի աղօթիւք ձերովք հասանել մեղաց թողութեան,
Եւ արքայութեան երկնից արժանի լինել հանգստեան,
Ընդ որս և որդւոց մերոց և զարմից որ գան մեր փոխան,
Մնալ ի յերկրի կենօք ընդ երկայն աւուրս բարութեան».

Ի թուին Հայոց 731։

Եպիսկոպոսութեան Սիւնեաց Տէր Հայրապետայ և Տէր Յովհաննիսի, հզօր և բարեպաշտ արքայն Հայոց Լևոն տիրապետեալ արևմտականն նահանգին կիլիկիոյ, մեծագոյն յուսով և առատ պարգևօք միաբանեցաւ ի սուրբ ուխտս միեղէն եղբայրութեանս, որպէս յայտ առնեն վերոյգրեալ բանքդ։ Արդ՝ որ գկնի մեր գայք բնակիլ յայս աստուածաբնակ տեղի աղօթից. և ամենայն բարեգործութեան որ աստ կատարին, հաւրդ կալջիք զբարեսէր թագաւորն Հայոց Լևոն հանապազորդ յիշմամբ առ Տէրն մեր Փրկիչ օրհնեալ յաւիտեան։ Յաղագս այսր յուսոյ և սիրոյ աստուածազօր թագաւորին եղբայրութեամբս կարկեցաք զօր սրբոյ Զատկի Յարութեան միաշաբաթուն յիշատակ նմա, որ կատարեն զպատարագն յամենայն եկեղեցիս անխափան մինչ ի վախճան։

ԿԸ.

Վասն կաթողիկոսութեան Հայոց որ վկնի Տեառն Յակոբայ. եւ ազգի ազգի պատահմանց նոցա եւ գերութեանց եւ Հռոմկլայի եւ մայրաքաղաքացն Փռանգաց որ ի ծովեզերին։

Յետ սրբասէրն կաթողիկոսին Հայոց Տեառն Յակոբայ մեծաւ հանդիսիւ և աշխարհաժողով ամբոխիւ նստուցանեն կաթողիկոս Հայոց ի Սիս յաւագ եկեղեցին սուրբ Սոփի զկոստանդին վարդապետ, որ էր առաջնորդ սուրբ և դերահռչակ

մենաստանին Խորին կոչեցելոյ, մեծապատիւ շքով և արքունական ճոխութեամբ, ձեռամբ թագաւորին Հայոց Լևոնի՝ որդւոյ Հեթմոյ, ընդ որս և էր մեր նուաստութիւնս: Սորա կեցեալ ամս երեք յաթոռն, ապա վախճանեալ թագաւորին Լևոնի, պայազատէ զտէրութիւն նորա երէց որդին Հեթում. և սա նախանձ հակառակութեան բերեալ ի սրտին ընդ կաթողիկոսին Կոստանդեայ՝ առնէ ինքեան խորհրդակից եպիսկոպոսաց և յիշխանաց գլխաւորագոյնսն, նա և ի վարդապետաց իսկ: Եւ հրապուրեալ զամենեսեան սիրանենդ խորհրդով՝ առնէ ժողով ի Սիս մայրաքաղաք, և յառաջ կոչէ զքիւրն Չարաբանս. և դնեն բարուրս բազումս զրադատ բանից ի վերայ հայրապետին, անարժան և անպատշաճ լսողաց. քննիչ եղեալ ծառայքն Տեառն և հօտն՝ հովուին, դատափետ առնէին զվիրահանորդն Աստուծոյ: Եւ այսպէս զրպարտեալ զկաթողիկոսն, զորոյ զիրաւն և գճշմարիտն Աստուած միայն գիտէ:

Իսկ հեգն այն և հանդարտն ըստ սիրապատուէր հրամանին ոչ ինչ ընդդատանոյր. այլ զամենային յանձն առեալ ասէր. արդար են բանքըդ այդ. և ես ճշմարտիւ գործեցի զդոսա. բայց այդ յայտնիքն, իսկ գծածուկն, որում վկայ է միայն ծածկագէտն, քիւրապատիկ քան զդոյն ունիմ ամբարեալ յոգիս. և չեմ արժանի այսմ աստիճանի. արդ զոր կամ է ձեզ՝ արարէք ընդ

իս: Որում պատասխանեալ թագաւորն և ժողովն. ի բաց հան ի քէն, ասեն, զկաթողիկոսութիւնդ և տուր ցմեզ: Լուեալ զայս կաթողիկոսին և յանձն առնոյր յօժարութեամբ· և զգեցեալ զզգեստն հայրապետական զբազմախաչն և զեմիփորոնն հինգ կրկին որ պատրիարքացն է, և զթագն պատուական եդեալ ի գլուխն, և զվաւերականն մեծագին ածեալ ի մատն, և առեալ ի ձեռն զալ սրբոյն Գրիգորի՝ օրհնեաց զթագաւորութիւնն զայն և զամենայն աշխարհ, և ասէ. գոհանամ զքէն Տէր իմ Յիսուս՝ որ մատնեցեր զիս մարմնաւոր դատաստանաց և անցաւոր պատժոց և ամօթոյ, և ոչ պահեցեր յօրն մեծ յորում դատաստանքն անեղ և պատիժքն անվճար և ամօթն յաւիտենական: Բայց տուր սոցա առաջնորդ բարի և հովիւ ընտիր զի ըստ կամաց քոց հովուեսցէ զբանաւոր հօտս քո· այլ արանցս այսոցիկ որք առին զդատաստանս քո. և նախ քան զօրն իմ աստուածաբար դատեցին զիս, դու արասցես իրաւունս ընդ իս և ընդ նոսա:

Եւ ապա հանեալ զզգեստն եդ ի վերայ արծաթի սեղանոյ. նմանապէս և զսքեմն եպիսկոպոսութեան հանեալ ծալեաց և եդ ի վերայ նորա և ծածկեաց պատուական հանդերձիւ. եհան ի մատնէն և զծանրագին մատանին. և զգաւազանն և ետ զամենայնն ցպատգամաւորսն, և ասէ. ահա զոր խնդրէքդ: Եւ ինքն ետ բերել մա-

զեղէն մի սև և յոյժ խոշոր և զգեցաւ. և ի նոյն մազեղենէն քուսիթայ եդ ի գլուխն. և ողջունեալ զամենայնն՝ ել ի տանէ եպիսկոպոսարանին միայն և լռիկ, որ էր մերձ ի քաղաքըն Սիս, զոր Գլխիբացի կոչեն: Իսկ վաշուէրքըն այն և չեռեալքն նախանձու և հեռիւ ոչ շատացան և ոչ յագեցան այնու, և ոչ զղջացան ընդ առնելիս (թերևս՝ ալիս) նորա. այլ կարծիս իմն բերեալ ի միտս եթէ ելանիցէ յայսմ իշխանութենէ և երթեալ ի վերին աշխարհն յարևելից. և անդ ընկալեալ լիցի պատուով կաթողիկոսութեան. և ի բաց հերքեացի ի մէնջ: Եւ յուղարկեալ ըմբռնեն զնա և տարեալ ի բերդն Լամբրոն զնեն ի մեռադս երկաթի կապանօք: Եւ յետոյ բարձին զկապանան. բայց ոչ հանին յարզելանոցէն զամս 4: Եւ եղև այս ի թուականին 738:

Զայս այսպէս արարեալ յուղարկէ Թագաւորն և ժողովէ նուիրակ ի կողմանս արևելից յաշխարհս Հայոց, առ մեզ և առ այլ եպիսկոպոսունս և իշխանս աշխարհիս, զՍտեփաննոս վարդապետ Սկևռացի որ առ մեզ իսկ էր վարժեալ և ուսեալ, հրաւիրական նամակօք, յորում և գըրեալ էին զպատճառ աքսորման կաթողիկոսին ումպէտ բանիւք բաղբաղեալ հայթայթանս փառաբանութեանց իբր զբրթաքաղս յաղբիւսաց. և յօդեալ բանս ի վերայ Կոստանդեայ մինչև ցերեսուն, յորոց մի այս էր, եթէ յառաջ քան

պատասխանդն ըմպէ շարըաթ. զոր թէ արարեալ լինի՝ ոչ վասն ագահութեան և ոչ վասն անհրկիզութեան, այլ վասն տկարութեան մարմնոյ: Եւ երկրորդ՝ թէ առնու հարկս ի լկտանոցացն որ ի Հռոմկլայիս: Ո՞վ դատախազ՝ այդ սահման է յամենայն ընդհանրական քաղաքս Հայոց և Յունաց և ամենայն ազգաց. ի դմանէ ընդ կարգեցաւ բոզանոցն. և թէ էառ՝ ոչ եմոյծ պատարագ կամ երախայրի ի տուն Տեառն. այլ տայր ի հոդս սպայիկ բերդապահացն, և թէ վճաս է այդ, ընդէ՞ր կարգեցաւ ի հայրապետական կանոնսն՝ ի պռոնկաց և ի շնացողաց և յամենայն վճասակարաց տուգանս դահեկանաց տալ յեկեղեցին. և թէ բարեկարգութիւն խորհեցար առնել ազգիս, այդ թագաւորի է գործ. նախ՝ դու բարձ ի քումմէ թագաւորութենէդ և ապա հրամայեա ամենեցուն բառնալ: Նմանապէս և այլքն ըստ ամին օրինակի էին բանք որք երբեք ոչ տային կարծիս վճասու ինչ ի հաւատս կամ յեկեղեցի, զոր աւելորդ և անկարգ համարեցաք գրել աստ:

Եւ յետ այսց բանից հրաւիրեալ էին զմեզ մեծարանօք գնալ ի ժողովն Նորոգ ընտրութեան հայրապետի. որում պատասխանեալ ասացաք. մեք ոչ եմք հասու կամ խորհրդակից եղծման գի և նորոգմանն հաղորդեսցուք. ո՛ր որ ինքնահաճ կամօք եղծուծն արար, նոյն և զնորոգ ընտրութիւնն հոգասցէ. և կամք Արարչին յայց լիցի

իւրում եկեղեցւոյ։ Դարձեալ ապա անդրէն նուիրակին և գտանէ նախ քան զպատասխանիսն հաստատեալ յաթոռ կաթողիկոսութեան զՄատթիանոս ոմն անապատաւոր զոր Հռոմայեցի կոչէին, այր լաւ և լի ամենայն առաքինութեամբ։ Բայց ի ժամանակս յայս զօրն եգիպտական ուրոց զօրագլուխ սուլտանն Ալփի, գան բազմախուռն ամբոխիւ ի վերայ մեծ մայրաքաղաքին Տրապօլեաց որ ի ծովեզերին յորում կայր աթոռ պատրիարքին Անտիոքու և բրնձին որ կոչէր Թագաւոր։ Քանզի ի յառնուլն զԱնտիոք Փնտուխատար սուլտանին որ ի յ717 թուականին, յորում գերեաց և կոտորեաց աւելի քան զերկուտասան բիւր, և քակեաց զերկնաճեմ եկեղեցիսըն. և ծովացոյց զմէջ պարսպին. յայնժամ փոխեցաւ աթոռ պատրիարքութեանն ի Տրապօլիս։

Եւ նստեալ սուլտանին շուրջ զքաղաքաւն, սայլ դուրս զքաղաքն աստուածանենգ և անիծեալ գոնթ (լմա կոմս) մի փռանգ որ էր իշխան մեծի քաղաքին։ Եւ առնուն զնա և անողորմ սրով կոտորեն և գերեն անհուն և անհամար քրիստոնեայս. քակեն և այրեն զեկեղեցիսն, և զանձնաւոր պատկերն Քրիստոսի որ կայր յաւազ եկեղեցին պղկեալ ի վերայ խաչի՝ զոր երբեք մարդ ոչ կարէր նկատել զնա եթէ յանշունչ նիւթոյ իցէ, այլ թուէր յինքեան ունել զոգի և զշունչ. զայն ընկեցին ի վայր և տոռուն կապեալ ի պարա-

նոցն քարշէին ընդ փողոցս մինչև խորտակէը ամենայն։ Եւ եղև սուգ մեծ ամենայն քրիստոնէից. և այս էր ի թուականին 738։ Իսկ յետ միոյ ամի, ի 740 թուականին առաւ և մեծ քաղաքն Կորնթացւոց աշխարհաժողովն Աքքայիա ի նոյն ծովեզերն յորում կայր տունն և աթոռ երից թագաւորացն Փռանգաց դամփլուն եւ ըսպիթալուն եւ ալամանուն. կայր և ի նմա մեծ արծուէնքն երուսաղէմի, այսինքն արքեպիսկոպոսն. քանզի յերից թագաւորացն որ անդ էին՝ մինն էր սէր և միաբան ընդ սուլտանին Մսրայ. վասն որոյ խաբեալ ի սուլտանէն եթէ տուր ղքաղաքդ ի ձեռս իմ և ես բառնամ զայլ թագաւորան և տամ զամենայն ի ձեռս քո, և այնպէս խաբկանօք առեալ զանառիկ քաղաքն և զանմարտնչելի ամուրն՝ քակեաց ի հիմանց և վերոյ զզարմանակերտ շինուածն ամենայն. զոմանս կոտորեաց. և բազումք ընչիւք իւրեանց նստեալ ի նաւ գնացին։

Բայց ըսպիթալին որ սէր էր ընդ նոսա, ոչ ինչ վնասեցին. այլ խաղաղութեամբ հանին ի քաղաքէն իւրայովքն, որ և անց յայնկոյս ծովու ի մեծ աշխարհն Փռանգաց. վասն որոյ և անմխիթար սուգ պատեալ էր զամենայն ազգս քրիստոնէից։ Ապա յետ այսր ամենայնի բարկացաւ Տէր ի վերայ Ասքանազեան ազինս Հայոց. և վասն ծովացեալ մեղաց մերոց արբոյց մեզ

զմրուրն դառնութեան սկաւառակաւն բարկութեան. յիշեաց զզրպարտութիւնն Կոստանդեայ. և զարթեաւ ի վրէժխնդրութիւն իւրոյ եկեղեցւոյն. շարժեաց զսուլտանն Մսրայ անթիւ զօրօք և էած ի վերայ անպարտելի ամրոցին Հռոմկլային որ էր գահ հայրապետացն և աթոռ կաթողիկոսացն Հայոց: Յորում կային անպատմելի սրբութիւնք և նշխարք առաքելական և հայրապետական և ամենայն գլխաւոր մարտիրոսացն, և փառաւորագոյնն մերոյս գրոհի՝ աջ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի և գաւազանն և աթոռն և սեղանն, յորոյ վերայ պատարագէր զՔրիստոս, և հողաթափն նաև շղարշն որ է դաստառակ սրբոյն Հռիփսիմեայ, և պերեզոտն ներկեալ արեամբ: Որ և ամսօրեայ ժամանակաւ պատերազմեալ էառ նախ զքաղաքն, և ապա զներքին բերդն. և ապա զբարձրագոյն կլայն յորում կայր շինեալ գեղապաճոյճ եկեղեցին ի Գրիգորէ կաթողիկոսէ. և տուն դարապասի հայրապետին:

Ըմբռնեալ զկաթողիկոսն Տէր Ստեփաննոս երկոտասան եպիսկոպոսօք և բազում քահանայիւք և սարկաւագօք ածին առաջի սուլտանին. և առեալ յաւարի զբերդն՝ կապտեցին, կողոպտեցին զամենայն սպաս եկեղեցւոյն և զանկշռելի գանձն աստուածայինն և զամենայն ըստացուածսն, բայց զեկեղեցին ոչ քակեցին: Ապա ի մեծ ի խնդութեան եղեալ սուլտանին՝ խօսէր

բազում բանիւք ընդ կաթողիկոսն, և զայս իսկ հարցանէր. այսչափ ժամանակ է աւելի քան զ100 ամ որ դուք աստ նստէիք, և մեր սուլտանութիւնն բազում անգամ չանացեալ են պատերազմաւ՝ չեն կարացեալ առնուլ զսա, ընդէր եղև այս զի այժմ ի քո կաթողիկոսութեան այսպէս դիւրաւ առաւ ի մէնջ։ Եւ պատասխանէ կաթողիկոսն և ասէ. ոչ գիտեմ՝ Աստուածդ միայն գիտէ, մի՛թէ վասն մեղաց մերոց եղև. ասէ սուլտանն. այս չէր ի յիմ զօրութենէ. այլ Աստուածդն ձեր մատնեաց զձեզ և զբերդդ ի ձեռս իմ, զի ես երեք անգամ խորհեցայ գնալ. և Աստուածդն ձեր ոչ եթող զիս. այլ արգել և ետ զսա ինձ։

Զայս ասացեալ կացոյց բերդապահս և հրամայեաց շինել զպարիսպն որ բաբանօք էին փըլուցեալ. և ինքն յարուցեալ գնաց անդրէն և մտեալ ի Դըմբըլխ՝ (Դամասկոս) յուցանէր քաղաքացեացն զկաթողիկոսն շրջեցուցանելով ընդ հրապարակն, և անտի գնացեալ ի Մըսըր, տարաւ ընդ իւր երկաթի կապանօք. և անդ եղեալ ամ մի ի բանտի՝ վախճանեցաւ ի նմին երջանիկ և փառաւորեալ կաթողիկոսն Տէր Սահականոս։ Եւ առեալ քրիստոնէիցն հրաման՝ տարան յեկեղեցի Հաբաշի Աստրեացն. և պատուով եղին ի հանգստի. և այս կործանումն լինէր ի թուականին 741։ Եւ ամենայն սրբութիւնքն որ գե-

բեցան, կորեան անհետ և անգիւտ. և բնաւ ոչ երևեցան թէ և բազում անգամ յոյզ եղև իթագաւորէն Հեթմոյ: Բայց յետ առմանն Հռոմկլային թողին ի նա և զամուրն Բեհեստին:

Ահա տեսեր ով դատաւորդ և զրպարտիչդ հայրապետին քո՝ եթէ ուրպէս վոյթ ընդ փոյթ էառ Աստուած զվրէժ պատուհասին ի վերայ և խնդրեաց իրաւունս. զի զոր դու ի Գլխիբացի եկեղեցւոյն արտաքսեցեր. նա զքոյդն արտաքսեաց ի մեծ աթոռոյ Հռոմկլային. զոր դու քո ձեռամբդ մերկացուցեր ի զգեստուն, նա մերկացոյց ձեռամբ սուլտանին Մըսրայ զքո եղեալ հայրապետան. զոր դու ի կապանս և ի բանտ առաքեցեր ի Լամբրոն բերդ. նա զքոյն առաքեաց ի կապանս և ի բանտ անդերծանելի զընտանին Մըսրայ: Ո՞ւր են այժմ զգեստքն հայրապետական, ո՞ւր թագն պատուական, ո՞ւր աչն և գաւազանն և աթոռն սրբոյն Գրիգորի որով պարծէիք. ա՛ւաղ անմոռնեանս մերոյ. եթէ յորպիսի տուգանս և ի պատուհաս մատնեցաք:

Եւ արդ՝ այս աթոռ որ ի Հռոմկլային եդաւ, հաստատեալ էր ի սրբոյն Գրիգորիսէ կաթողիկոսէ որ և վկայասէր կոչեցաւ. զի յայնմ ժամանակի ոչ գոյր աթոռ Հայոց, այլ աստ և անդ շրջէին: Սա գանձագին արարեալ ի կնոջէ և յորդւոյ մեծ իշխանին փռանգ որ Ջաւսլին կոչիւր, զբերդս պայս. եդ ի սմա աթոռ և հաս-

տատեաց տուն հայրապետաց Հայոց, յորում նստան կաթողիկոսք տասն. առաջինն՝ Գրիգորիս, և ապա՝ եղբայր իւր Ներսէս, և ապա՝ եղբօրորդի նոցա Գրիգորիս որ շինեաց զեկեղեցին, և ապա՝ Տղայն Գրիգոր որ անկաւ ընդ քարն Կոպիտատաց, ապա՝ Գրիգորիս Ապիրատն, ապա՝ Յովհաննէս, ապա՝ Կոստանդին, ապա՝ Յակոբ. ապա՝ միւս Կոստանդին որ աքսորեցաւ. ապա՝ Ստեփաննոս որ գերեցաւ ի Մրսըր. և անդ մեռաւ: Եւ էին ամք աւելի քան զ140 մինչև ցօր առման նորա:

Իսկ յետ այսր ամենայնի դիպուածոց դարձեալ առնէ ժողով թագաւորն Հեթում և տայ ձեռնադրել կաթողիկոս Հայոց զՏէր Գրիգոր՝ Անաւարզայ եպիսկոպոս, այր գիտնական և առաքինի, սիրող եկեղեցւոյ, ուսուասէր և ուսումնախմբիչ ուսից տէրունականաց, և պայծառացուցիչ յիշատակաց մարտիրոսաց, ի թուականին 742: Գիտէր և զլեզու և զդպրութիւն լատին և յոյն ազգին: Յերկրորդ ամին սորա եղև շփոթումն Զաատից և խանդարումն լրմանց ամենայն ազգաց. զի հասաք ի տուն սխալական որ դրոշմեալ է ի հինգհարիւրեկին, որ էր լրումն ըստ Յունաց յԱպրիլէ ի 6, և ըստ Եբրայեցւոցն Նիսանի ի 16-ն. և ըստ Հայոց անշարժ տումարին յԱրեգի 23-ն. և գայր օր լրմանն ի կիւրակէի. զոր պարտ էր յառաջի միւս կիւրակէն տալ:

վասն որոյ մոլորեալ ի ճշմարտութենէն՝ կորուսին կուրապէս զհենակս շաւղացն, և տօնեցին զօր Ղազոմենին Յարութեան և արարին Զատիկ. և զպասեք չարչարանացն կերան և արբին ընդ աստուածանպատնոն խրախանալով: Իսկ Հայք կացեալ ի ճշմարտութեան ստուգապէս. և որք էին յԵրուսաղէմ ի մերոց եղբարց՝ եկեալ հաւատարմացուցին առ մեզ թէ՝ լոյսն որ իջանէր ի շաբաթ օրն ի պատիւ գերեզմանին՝ ի մերն իջաւ ճշմարտիւ ի ճրագալուցի աւուրն. որում ականատես եղեալ փառաւորեցաք զԱստուած. և կողմանք այլազգեացն զամօթի հարեալ պապանձէին:

Իսկ հայրապետն մեր Տէր Գրիգոր աստանօր սխալեաց մեծապէս և ի բաց եկաց ի ճըշմարտութենէն. զի թողեալ զընական և զհայրենի շաւիղս նախնեացն սրբոց՝ հետևեցաւ ընդ թիւր և զարտուղի ընթացս Յունաց. և հաւանեցուցեալ զթագաւորն՝ բռնութեամբ տօնեաց և ետ տօնել ամենայն աշխարհին Կիլիկեցւոց զօր Ծառզարդարին Յարութեան. և արար Զատիկ առանց ազատութեան. բայց ի պարկեշտ վաներըն ոչ ընկալան. նաև բազումք յեպիսկոպոսաց և ի վարդապետաց ոչ հաւանեցան, և ոմանք ի ծածուկ պահեցին. վասն որոյ բազումք գանեալ և աքսորեալ հալածական եղեն: Եւ յայսմ անկարգ արարուածոց բազմաց գայթակղութիւն եղև

ի կաթողիկոսէն։

Դարձեալ և եդ սահման զի մի՛ լուծցեն ըզ-ճրագալոյցն յեղ և ի թան և որ ինչ առանց մսոյ է, և մի՛ արասցէն նաւակատիս մեծախորհուրդ ծնկից։ Եւ հրամայեաց ձկէ՛ օրհնել հիւանդաց և մեղուցելոց և երեխայից. և սկսաւ առ սակաւ սակաւ զամենայն աւանդութիւնս Հոռոմոց եկեղեցւոյն սպրդեալ մուծանել ի մերս եկեղեցի. և ի մերոյս ի բաց քեցել մի մի։ Եւ բազում դեսպանս և նամակ հաւանութեան առաքէր առ պատրիարքն ի Կոստանդնուպոլիս և խոստանայր յանձն առնուլ զոր ինչ և խնդրեսցեն։ Յուղարկեալ էր և առ Աբունայն Ասորւոց որ Նեստոր կաթողիկոսն է, նմանապէս թուղթ յանձնառական միաբանութեան զոր մեք իսկ տեսաք. բայց մեզ արևելից կողմանցս ոչ ինչ ի վեր բերեալ ծանուցանէր. այլ միայն այսքան համբաւէր թէ՝ խնդրեմք զաթոռն Անտիոքու մեզ լինել. և վասն նուազեալ ժամանակիս կամիմք զմիաբանութիւն Հոռոմոց ընդ մեզ և զամենայն ազգաց։ Բայց յեկելոցն հոտ զառնադաժան մաղձից երևեալ լինէր ի տեղիս տեղիս. և ոմանք ևս ի մերոց աշխարհէս հաճեալ հաւանեցան և սկսան եպերել զնախնիսն մեր. և առնել նորաձևութիւնս. և այլաձևութիւնս։

Իսկ մեք հանապազ աղեցաւ և լերդախոց լինելով ի վերայ այսր ամենայնի՝ հաշեալ մաշէաք

ծփական խորհրդովք ի տուէ և ի դիշերի. և ոչ գոյր տեղի յուսոյ կամ ապաստանի, զի սակաւ մի ախոյեան առից ընդդէմ կալ հոգևոր մարտին: Երկնչէաք եթէ յաւուրս մեր զարթնու չարն ի պատերազմ ընդ եկեղեցւոյ. և յարուցանէ մրրիկ խռովութեան ի մէջ մեր. և ընթադրեալ կործանէ զսինկիքոր մեացուած ազգիս. յաղագս որոյ պատճառանաց ի գալ նուիրակի Նորա Կոստանդեայ՝ եպիսկոպոսին կեսարու, միաբան խորհրդով եպիսկոպոսաց աշխարհիս և իշխանաց գրեցաք մեք թուղթ մաղթանաց նաև ողջամիտ հաւատոյ և կարգաց Հայաստանիս եկեղեցւոյ առ կաթողիկոսն մեր Տէր Գրիգոր ոչ հիւանդանալ անողջանալի ցաւօք, որ իբր զքաղցկեղ ճարակէ յականն թօթափել զհասարակ անդամս եկեղեցւոյ. զոր և նուիրակին այն գիտելով զանձանց վէրս՝ ոչ կամէը յանձն առնուլ զտարուսն թղթոյն բաղբաղելով պատճառանս ինչ: Եւ էր օրինակ նամակին այս ինչ, զոր և աստէն կարգեցից:

ԿԹ.

Թուղթ վասն հաւատոյ եւ կարգաց եկեղեցւոյ Յարեւելեանց ուսխարհէն առ կաթողիկոսն Հայոց Տէր Գրիգոր, զրեալ ձեռամբ Տեառն Սեհիանոսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի. ընդ նմին եւ դաւանութիւն ուղղափառ հաւատոյն սրբոյն Գրիգորի Սմաւնէլագործի եւ Աթանասի Աղեքսանդրացւոյ:

Աստուածային անյաղթ զօրութեամբն բարձրացեալ և անեղական աչով հզօրին պարսպեալ, բարձր բազկօքն Յիսուսի զգուեալ և հիազօր շը-

նորոգ Հոգւոյն պերճացեալ, սուրբ, անբիծ, անարատ եկեղեցիս Հայոց՝ անբասիր և անշաղախ հարսնս երկնաւոր Փեսային, անկեալս և հիմնադրեալս ե սրբոց առաքելոցն Թադդէոսէ և Բարդողիմէոսէ, մշակեալս և բեղմնաւորեալս ի սքանչելի քրտանց ահարկու և անհամեմատ առնն Գրիգորիսի, նախ՝ գոհութիւն անբաւ բիւրաւորօք և օրհնութիւն անհատ և անվճար Արարչին իւրոյ վերընծայէ, որ ոչ ամենայնիւ ամենևիմբ զյեռինն արբոյց բաժակ, և զանհնարին սպառուած կորստական հրապուրանացն էարկ ի վերայ ըստ արժանաժառանգ պատուհասի տոհմին դառնացողի. այլ յետ սաստիկ պատժոցն և ահաւոր արկածիցն կրկին կենդանութիւն վհատեալ հոգւոյս, և վերստին մխիթարութիւն սգապատ և լքեալ սրտիս շնորհէ։

Նաև փոխան կնտութեանն պսակ պանծալի. և մխրոյն և քրձոցն՝ գահոյք անարուեստք և խընճոյք խրախանաց։ Սակս որոյ զԱմովսածնին առեալ զձայն՝ ի ճահ գայ ինձ գոչել մեծաձայն. ցնծասցէ անձն իմ ի Տէր. զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան և պատմուճան ուրախութեան, որպէս փեսայի եդ ինձ պսակ. և որպէս զհարսն զարդու զարդարեաց զիս։ Այլ և ընդ Դաւթայ յուսագնեալ ասացից. ոչ խոպան բարկանայ մեզ Տէր, և ոչ յաւիտեան պահէ ոխս։ Ցետ որոյ ծընրբահանգոյց գագաթամբ ողջունէ զգլուխդ իւր

պանծալի, զսքրալիդ ընաւից, զչքնաղդ և զնո-
րոգ դերանրաշացեալդ ի Հոգւոյն զԳրիգորիոս՝
հայր հանուրց սեռից Հայկայ, և կաթողիկոս ա-
եզերական ի դրանէ Հոնաց և Լփնաց, ի ծովէ
կասպից և ի լեռնէ Կովկասեաց մինչ ի սահմա-
նըս եգիպտական և ի ծովն արևմտային, ուր ըզ-
գիշերն ագանի ակն տունջենային։

Եւ ընդ ողջունիս զայս իսկ ծանուցանէ պա-
տուական գլխոյդ բերանով թարմատար և եղկե-
լի անձին Մաեփաննոսի՝ Սիւնեաց այցելուի, և
նախագահ սեղենի որ ի տանն տէրունի, ո հայր
պատուական և պետ պանծալի՝ գոն բաղայք բաս-
րանաց ի բերանս բիւրաւոր մարդկան ի բայս
և ի բանս օտարս և ի բաղայս բարբրանաց, յոր-
մէ երկուցեալ ակն ածեմք. ո գիտէ՝ յաւուրս
վերջինս տեղի գտեալ չարն՝ զոգէտ կրսերու-
թիւնս մեր ընթադրեալ ընդոտնէ, և զգեղեցիկ
սաղարթ լուսալիր ոստոց հաւատոյ և զերկնա-
հանգէտ կարգի սահմանելոյ ի սուբբ եկեղեցւոջ
որ ի սրբոյն Գրիգորէ և յորդւոց իւր. և յայլ
աստուածազգեաց հարցն սրբոց՝ նախնեացն մե-
րոց որք ամբաւ ջանիւք, արեամբ և քրտամբ
ուղղեալ հաստատեցին, բոցաթոյն արկածիւ այ-
րեալ մծրէ և ապականէ և շիջուցանէ զգեղեցիկ
պայծառութիւնն։

Եւ երկակի պատճառաւ պնեմք առաջի զայս,
մի՝ վասն ամենևին մաքրութեան և սրբութեան

հօրդ մերոյ և անեղկեցայ հաստատութեան յեցեալոյ մեզ ի ձեզ. և մի՝ վասն պարսելոյ և կոշկոճելոյ զբերանս զրաբան և ունայնախոյզ պարսաւադիր արանց որք իբրև զՍկիւթիանոս, զօրէն Գաբաւոնացեացն շրջին՝ սպրդեալք տանէ ի տուն, և շշուկս չարակարծ զամենեքումբք արկանին այսպէս յօդելով. հոռոմ է մեր կաթողիկոսն. և ընդ նոսա դաշնադիր: Զորոյ զճշմարիտն Աստուածդիտէ և դուք: Որ և ոչ միայն այժմ այլ և յայնժամ յորժամ էր մեր նուաստութիւնս առ ձեր փառաւորութիւնդ, որ և վանականք կողման կարմիր լերինն զականճս մեր խիտ առ խիտ տապտակացուցին. որ և յայսպիսի բաղբաղանաց փաստ առեալ աստուածապսակ թագաւորին և ընաւին ժողովոյն՝ ոչ օծին զընտրեալդ ի Հոգւոյն: Արդ յաղագս այսր պատճառի հայցեմք ի ձէնջ երկու իրս՝ զոմն հրաժարական և զոմն յանձնառական: Եւ այս ոչ ի մարդկանէ. այլ զբխէ Հոգւոյն ազդմամբ վասն զգայթակղութիւն բազմաց բառնալոյ և զմիաս ակարաց բժշկելոյ. յանձնառական՝ զսուրբ և առաքելական առնն Գրիգորի՝ Հայոց Լուսաւորչին և զորդւոց և զթոռանց իւրոց, որք էին համախոհք և միաբանք երից աստուածագումար Սիւնհոդոսացն, ունելանթեբի զահման հաւատոյ որ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս և ի սուրբ Աստուածածինն և ի սուրբ և ի փրկագործ խաչն. ընդ որում և զբոլոր կարգ

կանոնական ի սուրբ եկեղեցի, զոր ոչ է արժան կատարելոյդ յիմաստս մի ըստ միոջէ յիշատակել։

Եւ յետ այսր ամենայնի լրիւ պինդ ունել զկրկին նորոգեալ դաւանութիւն հաւատոյ և զճշգրիտ սահմանս որ վասն կարգաց եկեղեցւոյ ի սուրբ ժողովոյն Հայոց որք վասն չար աղանդոյն Նեստորականացն և աշխարհակործան, պիղծ ժողովոյն Քաղկեդոնականացն յոլով պատերազմաւ և մեծաջան աշխատանօք յիւրաքանչիւր ժամանակս յընձիւղիլ չարին՝ ի հարկէ սաղաւարտեալ ժողովէին ի քաղաքն Հայոց առաջնորդք եկեղեցւոյ և իշխանք ազգիս. և մեծախոյզ քննութեամբ չան եդեալ՝ ի բաց խլէին զբոյսս չար որոմանցն, և սերմանէին զճշմարիտն և զբարիոք ուղղափառութիւնն, զորոց ըզլոյսն երկանց ոչ է պարտ տապալել և շիջուցանել. այլ միշտ վառ ունել յանձին։

Եւ ժողով ասացաք. ասեմք նախ՝ զՇահապիվանին, ընդ որում էր անյաղթն յիմաստս Անանիա՝ մեծապատիւ Սիւնեաց, և աշակերտ Մեսրոբայ. որոյ գլուխ ժողովոյն ախոյեանն հաւատոյ Յովհան Մանդակունի բոլոր եպիսկոպոսօք և իշխանօք Հայոց։ Այս սակս ժողովոյն Քաղկեդոնի և այլ մասնաւոր բանից որ ի չարէն ունկեալ էր յազգս։ Բ. Դարձեալ ժողով ի Նոր քաղաքի՝ Հայոց և Ասորւոց ուղղափառաց վասն

չար աղանդոյն Նեստորականացն որ ի Խուժիկս, և վասն կարգայ ևկեղեցւոյ Բաբդենիւ կաթողիկոսիւ Հայոց. ընդ որում էր երանելին Մուշէ՝ մետրապոլիտ Սիւնեաց։ Գ. դարձեալ ժողով ի Դվին յաւուրս Ներսիսի կաթողիկոսի, որ վասն քաղկեդոնական սահմանին, և Նեստորի աղանդոյն որ ի պղծալից վանքն Գրիգորի Մանաժիհր Ըռաժկի. ընդ որում էր երանելի մետրապոլիտն Սիւնեաց Պետրոս՝ աշակերտ Մովսիսի քերթողահօրն։ Դ. դարձեալ ժողով ի նոյն Դվին Մովսիսիւ կաթողիկոսիւ վասն նոյն աղանդոյ Քաղկեդոնականաց. ընդ որում էր և մերն Պետրոս. յորում թուական Հայոց եղաւ՝ և սուրբ Աստուածծ խաչեցարն սահմանեցաւ. և Յիզդբուզիդ վկայեաց։ Ե. դարձեալ ժողով ի Դվին, երկիցս անգամ, Աբրահամաւ կաթողիկոսիւ, որ վասն բաժանման վրաց (ի ձեռն) պղծոյն կիւրիոնի, և զաւելոյն Աղվանից, ընդ որում էր սքանչելին Քրիստափոր՝ մետրապոլիտ Սիւնեաց, այլովք աթոռակալօքն Հայոց։ Յորում ամենևին բարձին զընտանութիւն և զխառնուածն քաղկեդոնականաց. և ահագին նզովիւք փակեցին մեզ անհուպ և անհաղորդ ճնալ նոցին։ Զ. դարձեալ ժողով Հայոց ի Պարտաւ առ Աղվանս եղիայիւ՝ կաթողիկոսիւ Հայոց, վասն նոյն քաղկեդոնականացն. յորում որոշեցին զներսէս ոմն, Բակուր կոչեցեալ, կաթողիկոս Աղվանից, չար անարգա-

նօք, և զթագուհին Սպրամ. և զկտրեալ հօտն խառնեալ միացուցին ընդ Հայս: Է. դարձեալ ժողով նախ քան զայս ի Թէոդուպօլիս. Հայք և Հոռոմք վասն միաբանութեան յաւուրս Եղբի կաթողիկոսի՝ հրամանաւ կայսեր Հերակլի. յորում հաւանեալ Եղբի ոգիտաբար խմորեցաւ: ԵւՍիւնիք և այլք յաթոռակալացն ոչ ընկալան զդաւանդն. այլ ճնացին ամբողջ ընորհ՛քն Աստուծոյ. վասն որոյ անարգեալ յԵղբայ արտաքսեցաւ Յովհան Մայրագոմեցի: Ը. դարձեալ ժողով ի Մանազկերտ յաւուրս Յովհաննու Օձնացւոյ. որ զխմորեալ աղանդն Եղբայ, որ յաւուրս վեց կաթողիկոսացն, մաքրեաց. և ահագին նզովիւք հեռացոյց զմեզ ի Հոռոմոց: Թ. դարձեալ ժողով սուրբք հարցն յՍնի, յորում քննեալ զհին հաւատխոհ վրաց զվահան կաթողիկոս որ ի Բաղաց, և զի պատկեր եմոյծ յեկեղեցիս Հայոց, և յամենայն սեղանոյ բարձեալ էր խաչին պայծառութիւն և կանիւք զարդարեալ. որոշեցին զնա նզովիւք. և զՍտեփաննոս ոմն եդին ի տեղին: Ժ. Իսկ յաւուրս վերջին, ի ժամանակս Զաքարիայի սպասալարի և Իվանէի աթաբէկին վրաց, դարձեալ ժողով սուրբք հարցն եպիսկոպոսաց, վարդապետաց, քահանայից ի Գետաւանն ժերձ Սևան կղզւոյն. և միանգամ յՍնի. և չարաչար նզովիւք բարձին և հեռացուցին զամենայն համախոհան վրաց և Հոռոմոց:

Արդ՝ այդ ամենայն հարք և Սիւնհոդոսք մեծաւ քննութեամբ մաքրեցին զեկեղեցին Հայոց յամենայն դանազան որոմանց. և զսահման հաւատոյ և զկարգ եկեղեցւոյ անխախտելի կատակաւ թողին մեզ։ Վասն որոյ պարտ է ամենայն հպատակութեամբ պինդ ունել զայս սահման առանց յաւելման և պակասութեան. և միշտ ընթեռնուլ զնոցա գրեալսն. և նովիմբ վարիլ և վարել զեկեղեցիս Հայոց ի դաւանութեան հաւատոյ և ի կարգս ծոնից և ի սահման կենդանարար խորհրդոյն զոր ամենեւին մաքրեցին յամենայն անպատեհ խառնուածոց։ Զորոց զեղեալ սահմանն քաջ իսկ գիտէք. և աւելորդ է ինձ երկրորդել ասա։ Այսոքիկ յանձնառականք, յորոց ոչ ունիմք հնար արեամբ և մահու չափ մասամբ միով շեղիլ. և այնքան նզովից պարտապան լինել. և ի մեր հարանցն մասնակցութենէ հեռանալ, իբրև որդիք ժանտք և խրամատիչք ցանկոյ հարցն, որոց պատիժն յայտնի է ի գրեալսն։ Իսկ հրաժարականքն՝ ի բաց կալ ամենեւին յամենայն միաբանութեանց հաւանելոյն Քաղկեդոնի, որք անդիտացեալք զնեստորին հաստատելով զաղանդ՝ ինքեանք զինքեանս նզովեցին և լուծին ի կենաց. նզովել ի բոլոր սրտէ զնոյն ժողով և զամենայն հաւանեալսն նմա, որք յերկուս ճեղքեալ զանճառ միաւորեալն Քրիստոս՝ լինին աստուածաթողք և մարդահա-

ւանք. հրաժարել և ամենևիմբ փակել յամենայն անկարգ խառնուածոց սուրբ խորհրդոյն յապականիչ խմորոյն և ջրոյն, յորում զաւազանին ուրանան զշնորհն, և եղծանեն զլուացմանն խորհուրդ. զի զոր ի ծնունդ մեզ շնորհեցաւ՝ զայն յատինան փոխարկելով առնեն ըմպելիս:

Ո՛վ թշուառք՝ անցայք գիտութեամբ և զօրութեամբ ընդ նոյն իսկ տուիչն այսմ պարգեւաց և յաւելիք ի վերայնորա զխմորն և զջուրըն. ոչ ասէր առ աշակերտան՝ ի վեր առեալ զբաժարջն և զանապակ գինին. զայս արարէք առ իմոյ յիշատակի. ընդէ՞ր ոչ յաւել զխմորն և (ոչ) ի կիր էարկ զջուրն: Բայց առ այս՝ մերթ ի վերայ ածեն զկողին հոսուածն ջրոյ ընդ արեան, և տգէտ կրսերութեամբն ոչ իմանան զխորհուրդըն եկեղեցւոյ ի կողից սկսեալ, յօրինակ նախնւոյն Ադամայ և կողին իւրոյ՝ յորմէ ծնանին ամենայն ազգք քրիստոնէից զլուսաւորն և զանախան: Զի նախ՝ օրինակաւն եցոյց զերկուսն՝ Յորդանանու լուացմամբ և վերնատան խորհրդեամբն. և ապա յաստուածային կողից աղբիւրացուցեալ պարգեւեաց մեզ զերկակի շնորհն:

Դարձեալ ի ժամ սրբոյ խորհրդոյն կատարման ոչ ամբոխիւ, իբր ի մարմնաւոր խորհուրդ քուսել, և զմի նշխարն յութ և ի տասն պատառաւ բաժանել. այլ անհիւ և դողու-

թեամբ առանձինն ընդ Աստուծոյ միանալ. և թէ պատուակիցք իցեն՝ մերձ կացցեն, և ի նմանէ հաղորդեսցին, որպէս պարգև. և թէ զԻոնխիսիոսին բերեն զթուղթ յօժանդակ ինքեանց, աւանիկ՝ ոչ ասէ նա բազմացն կաթարողապետ լինել և սրբազնագործել. այլ զմինն հրամայէ կաթարողապետ լինել նման Յիսուսի, և զայլսն որք ընդ աստուածային սեղանաւն շուրջ պարեն, սրբազնագործեալ հաղորդեցուցանել կենաց հացին: Դարձեալ զեկեղեցին Աստուծոյ ոչ առնել տեղի մարմնաւոր սեղանոյ՝ համարձակութեամբ նստել և քննել (կամ քնանել) և զդրունսն անվակ թողուլ ի կոխանս շանց և խոզից, որպէս և մենք ականատես եղաք. այլ պարկեշտութեամբ և սրբութեամբ և ամենայն զգուշութեամբ պահել, որպէս վայել է տան Աստուծոյ, յօրինակ առեալ զտունս մարմնաւոր թագաւորաց թէ՝ քանի՛ պահապանաց և զգուշութեան պէտք լինին անդ:

Դարձեալ ոչ մատանել ի հոռոմ եկեղեցին, և ոչնակից լինել կամ հաղորդիլ, և ոչ ընդ նոսա ուտել զՊնունդ կամ զԱւետիս. այլ զճշմարիտն զկարգեալն ի սրբոյն Յակոբայ, ի վեցն Յունվարի՝ զՊնունդն, և ի վեցն Ապրիլի՝ զԱւետիան: Դարձեալ, որպէս օրէն է, ամենայն պնդութեամբ Հայոց եկեղեցւոյս զՃրագալոյցն առնել նաւակատիս և նախատօնակ, և խթիլ

յեղ և ի պանիր, և յոր ինչ առանց մսոյ է։ Զի հինգ օր նաւակատիքն մեծ և պայծառ խորհրդովք լի են. և ոչ է օրէն ամենևին զնախատօնակ մեծի Յարութեանն եւ Ծննդեանն ընդ այլ աւուրս պահոցն հաւասարել։ Եւ թէպէտ բան և խորհուրդ շատ ունիմք՝ չէ պարտ մեզ երկայնել, և որպէս ոչ դիտողի ուսուցանել. այլ սակաւն իմաստնոյդ բաւականասցի։

Դարձեալ՝ թէպէտ առաքելական իմանամք կարգ զձէթ օրհնելն հիւանդաց և մեղուցելոց. ի հարցն ոչ ունիմք սովորութեամբ աւանդեալ մեզ. կարծեմ և համարձակութիւն յոյժ մատուցանէ ժրագունիցն ի մեղս՝ մեղօք ապականել զոգիսն յուսով ձիթին. և սակաւ դրամիկ մըսխել, և ձէթ օրհնել. և արդարանալ։ Այդ գիւտք շահիցն ի բաց ընկեսցի ի մէնջ. և ընդ հարցն շաւիղ անսայթաք ընթասցուք ոտիւք. բայց թէ զանկատար իւղն որ վասն երեխային սահմանէք՝ ընդունելի է։ Եւ ընդէր է երկայնել մեզ զբանս. հաւան եմք մեք ընդ մեր հարսն ի զըժոխս իջանել. և ոչ ընդ Հոռոմոց յերկինս ելանել։ Արդ այդչափ և այդքանիւք բաւականասցուք բանիւք։

Գիտութիւն լիցի աստուածային գլխոյ հայրապետութեանդ. զի թէպէտ հնազանդ եմք ամենայնիւ Տեառնդ մերոյ՝ սակայն սղաչեմք զանոտի կարծիս կրսեր և տգէտ մատցս մերոց

բառնալ և բժշկել զի զակարն յամենայնի շահիլ պարտ է: Եւ զոր խնդրեմքս, հեննետիկոն թղթովք ձեռագրեալ, առնել ձեռնարկ հաստատուն և անխախտ կտակ միաբանութեամբ սուրբ և երջանիկ եպիսկոպոսացդ. և յուղարկել առ մեզ իբր գյետակար անչինչ. զի յայնժամ առաւել հաստատութեամբ և հլու հպատակութեամբ հնազանդ լիցուք աստուածային դլխոյդ. և թագաւորեսցես յեկեղեցիս մեր չահաւորեալ որպէս արեգակն:

Ապա թէ աւելի ինչ կամ պակաս կամիք մուծանել յեկեղեցիս մեր, զոր ոչ ունիմք ի հարցն: Եւ կամ գրեալքս խոտան են առ ձեզ, յայնժամ մի աշխատ լինիք և մի զմեզ աշխատ առնէք. ըստ ձեր կամացդ լիցի աշխարհդ այդ և այլ ոք որ կամիցի. և զմեզ թողէք ի մեր սորուկ գերութեանս. և մեք կացցուք, ճնասցուք ակն ունելով վերին այցելութեան: Եւ թէ թագաւորական սաստիւ պատժէք զմեզ, մեք պատրաստ եմք ի տանջանս, յաքսորս և ի բանտ. ի մահ և ի մեռանել ի վերայ սուրբ և առաքելական հարցըն աւանդից: Ո՛ղջ լեր թագաւորական արգասիւքդ ծնողդ իմասաից և մայրդ ուղղափառութեան, աղբիւրդ հաւատոյ և անվախ ախոյեանդ սուրբ եկեղեցւոյ Գրիգորիոս՝ կաթողիկոս Հայոց: Եւ Տէրն Տէրանց հովանասցի սիրական դլխոյդ:

Ձեռնարկ միաբանութեան եպիսկոպոսաց արեւելից եւ վարդապետաց եւ իշխանաց:

Մեք Տէր Սարգիս և Տէր Գրիգոր ի նոյն վիճակէ, համախոհ և միաբան եմք այս վերոյգրելոցս հարցն աւանդից. և որք ոչ միաբանին այսմ հայրենաւանդ և հայրապետական հաստատի՛ն դաւանութեանցս, նզովեալ եղիցին որպէս Սաբէլ և Արիոս:

Ես Տէր Յովհաննէս՝ աթոռակալ Բ՛ջնոյ, միախոհ եմ և միաբան եմ այսմ վերոյգրեալ ուղղադաւան հայրենացանկ դաւանութեանս. և նզովեմ զոչ հաւանեալ հակառակողն ընդ չար հերձուածողացն:

Ես Գրիգոր՝ աշակերտ և սպասաւոր բանի, որ մակադրեալ կոչեցայ Բ՛ջնեցի, հրամանատար այսմ աթոռոյ՝ սերտ և անքակ միաւորութեամբ համախոհ եմ այսմ վերոյգրեալ դաւանութեանս սահմանիւ մահուն. և նզովեմ նզովիւք սուրբ հարցն զոչ հաւանողն:

Ես Տէր Յովհաննէս՝ շնորհօքն Աստուծոյ եպիսկոպոս Հախբատայ, համախոհ և միաբան եմ իմով վիճակելովս, այս ուղղադաւան նամակիս. և նզովեմ զոչ հաւանողն ընդ այլ հերձուածողն: Ես Տէր Մխիթար՝ Հաւուց թառայ եպիսկոպոս, անքակ միաւորութեամբ համախոհ եմ այսմ վերոյգրեալ դաւանութեանս սահմանիւ

մանուն. և նզովեմ նզովիւք սուրբք հարցն զոչ հաւանողսն։

Ես Տէր Մարգարէ՝ եղբօրորդի վանական վարդապետին, համախոհ եմ վերոյգրելոցս իւրանդարձոյ հօրեղբօրն իմոյ, որ հրամայէր թէ օձն կամի շարժել զառուեստն, ջանացարուք ոչ տալ տեղի գլխոյն. և մի՛ հաւատայք խաբողին. արդ հակառակօղք այսմ առաջինն հարցն աւանդիցս որոշեալ եղիցին ի փառաց Որդւոյն Աստուծոյ։

Ես նաւաստ եպիսկոպոս Գողթան Տէր Սարկաւագ միաբան եմ այսմ աստուածաւանդ կըտակիս. և ոչ հաւանեալքն նզովեալ եղիցին ի սուրբ Երրորդութենէն։ Ես Եսայի՝ կրսեր բանասիրաց, և յետին վարժապետ, իմով աշակերտօքս համախոհ եմ և միաբան եմ այսմ գրոյ և վերոյգրեալ արանցս. և որոշեմք նզովիւք զոչ ընդունողսն։

Ես Դաւիթ՝ նաւաստոգի քարոզ բանի և վարդապետ Հայաստանեայց եկեղեցւոյ, համախոհ և միաբան եմ այսմ ուղղադաւան թղթոյս որ ունի ճշմարտիւ զսուրբ հարցն աւանդութիւնն. և որոշեմք նզովիւք զոչ հաւանողսն և զհակառակողսն։

Մեք անպիտան ծառայքս Քրիստոսի Եփեսոս և Լիպարիտ՝ որդիք փառաւոր իշխանացն Տարսայիճին և Իվանէի, եղբարբք մերովք և որդւովք և ամենայն ազատօք հաւան եմք և

հնազանդք մահու չափ այսմ աստուածատուր և հայրենաւանդ կտակիս. և որ հակառակին, որոշեալ լիցին ի սուրբ հարցն մասնակցութենէ:

Մեք մեղուցեալ ծառայքս Աստուծոյ Պապաքս և էաչի՝ որդիք բարեպաշտ իշխանին Պռոշայ, մերովք աղաւօքս համակամ և համախոհեմք ամենայն հնազանդութեամբ սուրբ հարցն աւանդութեանց վերոյգրելոցս ի նամակի աստ. և որ ոք ոչ հաւանի՝ նզովեալ և որոշեալ լիցի ի սուրբ հարցն մերոց և յԱստուածարեալ եպիսկոպոսացս:

Սրբոյն Գրիգորի Սմբատիվագործի հաւաս, զոր ուսաւ իյուսաւար յայսնութենէ եղելոյ յԱստուածաբանէն Յովհաննիսէ ըստ ակնարկութեան եւ հրամանի աւետաւորն եւ միշտ կուսին Մարիամու Աստուածածնի:

Մի Աստուած և Հայր Բանին կենդանւոյ, իմաստութեան անձնաւորի և զօրութեան և կերպարանի էութեանն, կատարեալ կատարելոյ ծնող՝ Հայր Որդւոյ միածնին. մի Տէր միայն ի միայնոյ, Աստուած յԱստուծոյ, կերպարան և պատկեր Աստուածութեան, բան ներգործականն, իմաստութիւն պարառական բոլորից ընդ գոյացականութեամբ եղելոցս. և զօրութիւն ամենից էացելոցս արարող: Որդի ճշմարիտ ի ճշմարտէն, անտեսանելի յանտեսանելւոյն, անապական յա-

նապականէն, անմահ յանմահէն, մշանջենաւոր ի մշանջենաւորէն։

Եւ մի Հոգի սուրբ յԱստուծոյ զէութիւնն ունելով, Որդւով երևեալ և բացայայտեալ մարդկան, պատկեր Որդւոյ, կատարեալ կատարելոյ, կեանք և կենդանեաց պատճառ։ Սրբութիւն և սրբութեան բաշխիչ, որով ճանաչի Հայր, որ ի վերայ ամենեցուն և յամենեսին, և Որդին Աստուած, որով ամենայնքս. Երրորդութիւն կատարեալ փառօք և մշանջենաւորութեամբ և թագաւորութեամբ՝ անբաժանելիք և անկարօտանալիք. քանզի և ոչ ստացական ինչ և ոչ ծառայ Երրորդութեանն կամ ի ներքս ածական. որպէս թէ յառաջ ոչ եղեալ և յետոյ մտեալ. ոչ նուազեալ երբէք Որդի ի Հօրէ. և յՈրդւոյ՝ Հոգի. այլ անփոփոխելի և անայլայլելի Երրորդութիւնն միշտ։

Երանելւոյն Աբգարայ եպիսկոպոսապետին արտադրութիւն յաղագս աստուածային մարմնաւորութեան Քրիստոսի ձայնակցելով արբոյ Ժողովոյն որ ի Նիկիա։

Առաւավանիմք զՈրդին Աստուծոյ, նախ քան զյաւիտեանս, մշանջենաբար ծնեալ ի Հօրէ. իսկ առ վերջնովք յաւիտենից վասն մերոյ փրկութեան ի Մարիամայ ծնեալ ըստ մարմնոյ, որպէս աստուածազան առաքեալն ասէ «իսկ յորժամ եկն լրումն ժամանակի՝ արտաքս առաքեաց Աստուած զՈրդին իւր եղեալ իկնոջէ»։

և զոլ զնոյն Աստուած և Որդի Աստուծոյ ըստ Հոգւոյ. իսկ որդի մարդոյ ըստ մարմնոյ, ոչ երկուս բնութիւնս զմին՝ Որդի, զմին՝ երկրպագական. այլ մի բնութիւն Աստուծոյն Բանի մարմնացելոյ և երկրպագեալ հանդերձ մարմնով իւրով երկրպագութեամբ: Այլ և ոչ երկուս որդիս՝ այլ ոմն Որդի Աստուծոյ ճշմարիտ և երկրպագեալ, իսկ այլ ոմն ի Մարեմայ մարդ ոչ երկրպագեալ, որպէս և մարդիկ. այլ զի յԱստուծոյն և Աստուած, որպէս ասացի, մի որդի Աստուծոյ, և Աստուած զնոյն և ոչ զայլս, և ի Մարեմայ ծնեալ ըստ մարմնոյ առ վերջնով աւուրքս, որպէս հրեշտակին, Աստուածածնի Մարեմայ յասելն «Իբր եղիցի ինձ այս զի զայր ոչ դիտեմ» ասէր «Հոգին սուրբ վերեկեսցէ առ քեզ. և կարողութիւն Բարձրելոյն հովանասցի քեզ. վասն զի ծնեալն սուրբ կոչեսցի և որդի Աստուծոյ»:

Ծնեալն սուրբ կոչեսցի և Որդի Աստուծոյ այսուհետև ի կուսէն Մարեմայ՝ Որդի Աստուծոյ բնութեամբ և Աստուած ճշմարիտ և ոչ շնորհիւ և կցորդութեամբ. ըստ մարմնոյ միայն ի Մարեմայ մարդ. իսկ ըստ հոգւոյն՝ ինքն Որդի Աստուծոյ և Աստուած. կրեալ զմեր կիրս որպէս գրեալ է «Քրիստոսի կրեցելոյ վասն մեր մարմնով». և դարձեալ. «որ իւր Որդւոյն ոչ խնայեաց. այլ վասն մեր ամենեցուն ետ զնա».

իսկ անկիր մնացեալ և անայլայլակ ըստ Աստուածծուխեանն ըստ ասացելումն ի մարգարէէն «ես եմ Աստուած և ոչ այլայլիմ»։ Մեռանելով զմերն մահ ըստ մարմնոյ վասն մեղաց. զի զմահրն խողխողեսցէ՝ ի ձեռն վասն մեր մահուան ըստ ասողի առաքելոյն «ընկղմեցաւ մահ՝ յաղթութիւն քո. ո՛ւր մահ՝ խայթոց քո». և դարձեալ «Քրիստոս մեռաւ վասն մեղաց մերոց ըստ գրելոյն»։ Անըմբռնելի իսկ և անմահ մահուամբ մնացեալ յաղագս Աստուածծուխեանն իւր անաբաս Հօր զօրութիւն ըստ ասողին Պետրոսի «ոչ էր, ասէ, կար ըմբռնիլ նմա ի մահուանէ». վերադնացեալ յերկինս և նստեալ ընդ յաջմէ Հօր յերկրէ բարձրացեալ մարմին Բանին ըստ ասելոյն Դաւթայ «Ասաց Տէր Տեառն իմում. նիստ յաջմէ իմմէ». և ի նմանէ ի Տեառնէ հաստատեալ և յառաքելոցն. իսկ ըստ Աստուածծուխեանն պարունակելով ընդ Հօր ի յաւիտենից յաւէտակից որպէս հայրական և անճառ զօրութիւն ըստ վարդապետին Պօղոսի «Քրիստոս՝ Աստուծոյ զօրութիւն և Աստուծոյ իմաստութիւն». գալոց է ինքն Որդին Աստուծոյ և Աստուած, որպէս և խոստացաւ, դատել զկենդանիս և զմեռեալս. որպէս ասէ առաքեալն. դատիչն զծածկոյթս խաւարի և յայտնողն զխորհուրդս սրտից և զգովութիւն և զանգոնումն ըստ արժանաւորութեանն վերբերող գիւրաքանչիւրն։

Իսկ եթէ որ (առաւել) քան զայս յաստուածայնոց գրեցելոցն ուսուցանէ՝ միւս ասելով զՈրդին Աստուծոյ, և միւս ի Մարեմայն մարդ. կամ եթէ ոք զՏեառն մերոյ մարմինն ի վերուստ ասէ և ոչ ի կուսէն Մարեմայ, կամ յեղեալ զԱստուածութիւնն ի մարմին, կամ խառնեալ, կամ այլայլեալ, կամ ախտակիր զՈրդւոյն Աստուածութիւնն, կամ աներկրպագելի զՏեառն մերոյ մարմինն, որպէս մարդոյ, և ոչ երկրպագելի իբրև Տեառն և Աստուծոյ մարմին. զսա նզովէ սուրբ և ընդհանրական եկեղեցի հաւանեալ աստուածազան առաքելոյն ասողին «եթէ որ ձեզ աւետարանէ (աւելի) քան զոր առէքն. նզովեալ եղիցի. ամէն և ամէն. եղիցի և եղիցի։

Հ.

Վասն սեխարհական արմայիցն որ եղեն զկնի դան Արդուճին. եւ վասն ամենայն անցից նոցա։

Նախ և առաջին՝ թագաւորէ սէխարհիս մերում յազգէն Նեստողաց Հուլաւուն ամս 8. և ապա զկնի նորա՝ երէց որդին նորա Ապաղայն՝ ամս 18. ապա Ահմատն՝ եղբօրորդի Ապաղային, և ապա Արղունն ամս 7։ Եւ պատճառ մահու նորա եղև հարճ մի ոյժ սիրեցեալ, յորմէ դեղակուր լինի, և վճարի ի դաշտին Մուղանայ ի ոօնի Թէոդորոսին։ Որ և ի մահուան նորա լինի կոտորուած բազում մեծամեծ աւագանւոյն՝

Յովհանին որ էր դանձապետ արքայի, և Մուլտանին որ էր ի վերայ կերակրոցն և ըմպելեացն. և Զիշուին և Աւրդուղանին որք էին ի վերայ դատաստանացն, եւ մեծ դիւանին Սադադաւլին՝ բարեբարոյ Զհաին որ էր ի վերայ ամենայն հարկաց աշխարհիս: Եւ բազում և անհուն գանձք արքունի ցան և ցիր եղեն: Իսկ զօրագլխացն և մեծամեծացն եղեալ յերկիւղէկս՝ ոմանք կոչէին զԲայտուն ի Բաղդադայ՝ ազգական Արղունին, զի դիցեն ի տախտն արքայութեան, և ոմանք փութացուցանէին զեղբայր Արղունին զՓեղաթուն ի Հռոմոց: Որ և եկեալ նստաւ ի տախտն արքայութեան զան ի վերայ ամենայն աշխարհի, ի թուականութեանն Հայոց 740:

Սա ետ կտրել զբամ և զահեկան քարտիսէ ունելով յինքեան զիր և խայտուածս, և կամէր բառնալ զարծաթի զրաճն, զի այնու վաճառեսցեն. և սաստկացոյց զհրամանն ի վերայ ամենայն քաղաքաց: Եւ յետ 4 ամի տէրութեան իւրոյ անկաւ աղմուկ շփոթի ի մէջ պալատան նորա, զի կասկածեաց յոմանս վասն երկմտութեան ինչ. որք նեղեալք ի զառն և անխաիր զաղբագործութեանց նորա, կամեցան ձեռն տալ ի Բայտուն. և սկսաւ ըմբռնել զամենայն մեծամեծս իւր՝ զելչիտայն որ էր ի վերայ որսականն թռչնոց և գազանաց, զԴաւլատայն որ էր ի վերայ ամենայն կերակրոց և ըմպելեաց, զՅոն-

ճիբալն որ էր ի վերայ զօրաց բագմաց, և այլս բազումս զորս երկաթի տոռամբք խառնեալ դնէը ի պահեստի առ գլխաւոր արանցն: Եւ ինքն յառաջեալ գնայր զօրօքն ի հանդիպումն Բայտուչին. իսկ կալանաւորքն այն ի ծածուկ ձեռն տուեալ ի բիւրապետ մի Դուքալ անուն և ի թագաւորազն մի Ելդար անուն. որ միաբանեալ գան ի վերայ. և հանեն զկալանաւորսն. և գնեն ի դիպահոջ պահապանսն նոցա. յորոց մի էր մեծ հազարապետն Մուռումչի, զոր բերեալ ի վանսն մեր Տաթև՝ եդին առ մեզ ի պահեստի աւուրս բազումս· որ և յետոյ պատեցաւ և հասաւ յիւր իշխանութիւնն հրաշիւք սուրբ եկեղեցւոյն:

Եւ ինքեանք անցեալ յայսկոյս գետոյն Երասխայ եղեն զօր բազում, և սկսան գնալ զկնի Քեղաթուչին, զոր և լուեալ ամենայն զօրացն նորա և սրտաբեկեալ՝ թողին գնա. և եղեն ցան և ցիր. և ինքն Քեղաթուն միայր միայնակ. և յոչ կամաց դառնայր և գայր ի պալատն իւր, զոր առեալ պահէին զօրն ապստամբաց: Ապա տեսեալ զերծեալ կալանաւորացն և մեծ զօրագլխացն՝ Ելդարին և Դուքալին՝ ըմբռնեցին գնա և խեղդամահ սատակեցին. և սպանին առհասարակ զամենայն համախոհս նորին. և գնացեալ ընդ առաջ Բայտուչին՝ մեծաւ ուրախութեամբ նստուցանեն գնա ղան և թագաւոր ի վերայ ամենայն աշխարհի, ի դաշտին Սրաւայ:

Եւ էր սա օրինօք քրիստոնեայ, և խաբեալ ի զօրագլխաց իւրոց՝ եղև Մահմետի օրինօքն, և վարէր զարքայութիւն իւր թոյլ և վատթար և անարի ամարդութեամբ մինչև յաշնանային ժամանակն: Սա յուղարկեալ զՋալալն՝ որդի Տարասայիճին, այլ ևս մուղալ արամբք ի մեծ աթոռն Աղվանից յԱմարաս, որ ի հինան լեալ էր աթոռ կաթողիկոսաց նոցին. եւ տանել առ ինքն զգաւազան սրբոյն Գրիգորիսի՝ որդւոյն Վարդանայ, որդւոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի. քանզի և կայր գերեզման նորին անդ: Վասն որոյ և գաւազանն ի նմին եկեղեցւոջ պահեցաւ: Ընդ նմին տարան և զսքանչելի խաչն աստուածծառրաշ, որ ի հին ժամանակաց կայր անդ, կազմեալ ի համակ ոսկւոյ և զարդարեալ 36 ակամբք պատուականօք. և այս ի մատնելոյ լիրբ և անգամ երիցու մի ի նոյն վիճակէ:

Եւ վի էր անդ դուստր կայսերն Յունաց Դեսպինա անուն, որ ածեալ էր ի կնութիւն Ապաղայ ղանին. և սնուցեալ էր իւր յորդեգիրս զԲայտուն: Սա բազում թախանձանօք խնդրեաց զխաչն և զգաւազանն և յուղարկեաց ի թագաւորական քաղաքն Կոստանդնուպոլիս: Եւ այսու օրինակաւ կողոպտեցաւ աշխարհն Աղվանից ի պատուականն և յաստուածային գանձուցն: Իսկ Բայտուն այն հասեալ յաշնանային ժամանակն՝ զայ ի Խորասանայ Ղազանն՝ որդի Արղու-

նին, որդւոյ Ապաղային, ի վերայ նորա ի խընդիր հայրենական աթոռոյն, ամենայն զօրօքն Մորասանայ, զոր Ղարաւունաս կոչէին: Որոց զօրագլուխք՝ մեծն և բարեբարոյն Խութլուշահն որ թարգմանի շնորհաւոր թագաւոր, և անյաղթն ի պատերազմունս և բազմահնարն Նաւռուզ, որ թարգմանի նաւասարդ:

Եւ զի ամենեքեան առ հասարակ թողեալ էին զբնական սահման իւրեանց, և մտեալ ընդ Մահմետի օրինօք: Եւ այս Նաւռուզս էր որդի Արղունին, որ եկաց պետ և ապստամբ ի վերայ ամենայն աշխարհիս. և բազում ոճիրս գործեալ էր ապստամբութեամբ ընդ Արղունին և որդւոյ իւրոյ Ղազանին. և այժմ միաբանեալ էր ընդ սմա: Սա յոյժ ատեցող էր քրիստոնէից և թըշնամի եկեղեցեաց. որ և առաքաւակ ածեալ՝ գայր իբր զմրրիկ փոթորկեալ, նախամարտիկ լինել, զոր և մանղայ կոչէին: Եւ հարեալ սաստակեաց զօրսն որք զճանապարհն պահէին. և ապա անկաւ ազմուկ շփոթին և գոյժ աղաղակին ի պատեան արքունի, որք անդգուշաբար կային անմտութեամբ: Յորմէ երկուցեալ մեծ բիւրապետին Թաչարին՝ գնաց և խառնեցաւ ի Նաւռուզն. և յայնմանէ բեկեալ սիրտ կողմանն Բայտուային՝ ամենեքեան առ հասարակ թողին զնա և փախեան: Փախչէր և յիմարն այն Բայտուն և գայր առ Դուքաղն որ նստեալ էր իւր զօրօքն ի դաշ-

ին Նախջաւանաւ, յերր Երասխայ։

Իսկ տեսեալ զայն Դուքալին՝ բեկաւ ամենայն զօրութիւն նորա. և երկմտեցան ի նմանէ հազարապետք նորա, և ըմբռնեալ զարձուցին անդրէն զԲայտուն և յուզարկեցին առ Ղազանն. և ինքեանք փախեան այր և անդր։ Եւ Դուքալն գնաց և մտաւ յամուրսն վրացւոց, զոր յետոյ ըմբռնեալ Բէքային՝ տայր ի ձեռս Մուռուսէնի։ Եւ նորա առեալ չարամահ սատակէր. նմանապէս և Ելդարն փախչէր ի կողմն կարնոյ քաղաքի. և գնա իսկ զտան յետոյ առ շնխի միոյ. և սատակեցին։ Այսպէս և զամենայն մեծամեծան սատակեցին զբռամբ ածեալ առ հասարակ։ Ընդ որս և զբարեբարոյն քնաւից զԵլչիտայն, որ մեր նահանգի էր իշխեցող և գլուխ 12,000 արանց, ածին ի Գիլանայ. և չար մահուամբ սատակեցին։ Եւ այդպէս առանց մարտի և պատերազմի առին զաշխարհս ամենայն. և նստուցին զՂազանն ի տանխտ արքայութեան հօր իւրոյ Արղունին։

Բայց սատուածատեացն այն Նաւռուզ ի գալն՝ յառաջոյ հրաման եհան առ հասարակ քակել զամենայն եկեղեցիս, և կողոպտել զամենայն այր քրիստոնեայ, և թլփատել զքահանայս. վասն որոյ բազում վիշտս և անհնարին աղետս հասուցին քրիստոնէից ընդ ամենայն տեղիս։ Քակեցին բազում եկեղեցիս. խողխողեցին բազում քահանայս. կոտորեցին

բազում քրիստոնեայս. և որք ի սրոյն Ճնացին՝ կողոպտեցին զամենայն ինչս. գերեցին բազում կանայս և մանկտիս: Բայց ի Բաղդատ և ի Մասբլ, ի Համիան և ի Դավրէժ և ի Մարաղայ, ի Հոռոմս և ի Միջագետս սաստիկ և անպատմելի գործեցին ոճիրս ՚ի ժամուց: Իսկ ի մեր սահմանս կողոպտեցին զնախջաւանու եկեղեցիս, և գերեցին զքահանայս, և բազում չարչարանս ածին ի վերայ. քարշեցին զդրունս քաւարանացն. ընկեցին և զսեղանսն. բայց մեծ գլխաւորքըն ոչ թողացուցին քակել զեկեղեցիսն ակնածեալ ի վրաց զօրացն: Եկին և ի մեծ աթոռն Սիւնեաց. և կամէին քակել զեկեղեցին. զորս կաշառօք և բռնութեամբ ոչ թողացուցաք: Կողոպտեցին և զվաներն որ ի գաւառին Նախջաւանու. իսկ այլ աշխարհս Հայոց, զոր Երասխայ գետն հատանէ, Ճնաց շնորհօքն Աստուծոյ: Կալան և զկաթողիկոսն Աստուծոյ որ նստէր ի Մարաղայ. և բազում անարգանօք չարչարեցին մերձ ի մահ. և կողոպտեցին զամենայն ստացուածսն: Ըմբռնեցին և զեպիսկոպոսն Առաքելոյ զՏէր Տիրացուն. և ազգի ազգի անարգանօք ձաղեցին. և առին զամենայն ինչս նորա. բայց ի վանքն նորա, որ էր շիրիմ սուրբ առաքելոյն Թադէոսի, քանդեցին զշինուածս տանցըն, աւերեցին, կողոպտեցին և իսպառ կործանեցին:

Եկեալ էր և թագաւորն Հայոց Հեթում առ Բայտուն. և հասեալ յայս տագնապ չվոթի. և կայր ի Մարաղոյ եկեղեցին, որ կաթողիկոսարանն էր. և նմա իսկ հասուցին վիշտս. որ և գնաց առ Ղազանն և յանդիման եղև նմա, և նա ընկալաւ զթագաւորն մեծաշուք պատուով։ Ապա կացեալ առաջի՝ ծանուցանէր արքայի զանցըս աղեաւից քրիստոնէից. իսկ նորա ի չքմեղս եղեալ ասէր. ես ոչ գիտեմ զայդ. այլ նաւռուզն գործեաց զամենայն. և հրամայեաց առ ժամային գրել հրովարտակ ընդ ամենայն աշխարհն մի մի իշխանացն ձեռնարկել յեկեղեցիս և ի քրիստոնեայս. այլ խաղաղութեամբ բնակեսցէ ամենայն ոք՝ զիւր հաւատ և պաշտօն համարձակ ունելով։ Եւ յայսմանէ սակաւ մի խաղաղացեալ եղեն հէնք տագնապին։ Եւ ինքն թագաւորն մեծաւ պատուով և շքեղաշուք վիճակ դարձաւ անդրէն. և գնաց խաղաղութեամբ յաշխարհն իւր Կիլիկիա։

Իսկ Ղազանն առեալ զղանութիւնն յ744 թուին յաշունն՝ և վարէր ահեղ ուժով և ահարկու բռնութեամբ, հզօր և բարձր բազկաւ. և կացուցանէր նա ի վերայ ամենայն զօրաց իւրոց և աշխարհաց գՈւլթուշահն՝ այր բարի և հզօր և յաղթող ի պատերազմունս, որ էր յոյժ բարեկամ և օգնական քրիստոնէից. որ և փեսայացաւ արքայի առնլով զքոյր նորա ի կնու-

թիւն. և ի սադրելոյ սորա լինէը խաղաղութիւն մեզ և ամենայն աշխարհիս Հայոց: Բայց անիծեալ և արեանարբու գազանն Նաւռուզ գնայր ի կողմն Ծորասանայ ի հոգալ զայն աշխարհ. և խորհեալ ի միտս իւր կամեցաւ դաւել հնարիւք զՂազանն, զոր իմացեալ նորա՝ սատակեաց զամենայն ազգայինս, զեղբարս, զորդիս և զբնաւին տոհմն Նաւռուզին: Եւ ինքն Նաւռուզն իմացեալ զի յայտնեցաւ միտս նորա՝ լինի փախստական ի ներքսագոյն Ծորասան: Վասն որոյ գումարեալ զօրս բազումս Ծուխլուշահն՝ գնաց զկնի նորա, զոր Տէր Աստուած ետ ի ձեռս զանիծեալն գայն. և անհետ կորստեամբ չնչեաց զնա յերկրէ: Զի կալան մեծ հրաշիւք ի Հրէ քաղաքի որ անդր է քան զՄավր և զնշաւուր: Ընդ որում էին իշխանք մեր Լիպարիտ և Էաչի որք թուք արձակեալ յերեսս Նաւռուզին մեծ անարգանօք ձաղէին: Ահա տեսէք զեղջիւր եւ կեղեցւոյ եթէ որպէս մեծագոյն պատառեաց զթշնամին իւր և խնդրեաց վրէժ քակտելոյն իւրոյ, զի ոչ տեսեաց իշխանութիւն նորա ամ միայլ իսպառ չնչեցաւ ազգաւ, և բարձաւ անուն նորա յայսմ աշխարհէ: Գոհութիւն և փառք այսպիսի խնամողին զեկեղեցի իւր:

Այլ նախ քան զայս յարեաւ ոմն Ասլան անուն յարքունի ցեղէ. և միաբանեաց ընդ ինքեան բազում զօրս և զօրապլուխս. և սկսաւ ի դաշտին

Մուղանայ գնալ ի վերայ պալատան դանին. և անցեալ յայսկոյս Երասխայ զի կուտեսցէ այլ ևս ամբոխս հեծելոց. զոր իմացեալ նորա առաքէ ի վերայ Ասլանին զօրս բազումս, որոց զօրագլուխք Զաւփանն և Խուռումչին· որք եկեալ կռուեցան. և հարեալ զԱսլանն փախստական արարին, և ըմբռնեալ զինքն և զամենայն համախոհս իւր՝ առ հասարակ սատակեցին։ Եւ եղեն բազում արեան ճապաղիք· սպանաւ և վասն այսը պատճառի ի Խորասան Սուքային՝ եղբօրորդի Ապաղային. և այս այսքան։ Բայց մանուկ թագաւորն Վրաց Դաւիթ՝ որդի՝ Դեմեարէի, ի գալն Նաւռուզին և ի քակել զեկեղեցիս, երկեաւ և գնաց ամենայն նախարարօք և ազատագունդ արամբք ի Մեթևուլէթ. և մտաւ ի բերդն ասնաւիկ որ կոչէր Մուղէ նախէ, այսինքն ճկ և տէս։ Եւ արար թիկունս զՄեթևուլքն և զՓըխայքն և զամենայն ազգն շրջակայ։ Գրաւեաց և յինքն զդուռն Ալանաց զոր հինքն Դարիալ կոչէին և այժմ՝ Զասանին կապ։ Եւ եհան զպահակն Թաթարին. և նա է մուտն Խազրաց, Ալանաց, Օսից, Խփչաղաց, և մեծ արքայութեանն հիւսիսային աշխարհին Բերքայեանց. որոց էր այժմ դան Թաւդամանկոյն և Նուխայն՝ թոռունք Բաթուայի և Սարթախին։

Վասն որոյ բազում դեսպանօք և երդմամբ ի խնդիր եղեն, և ոչ լուաւ և ոչ եկն արտաքս։

Ասպա յարուցեալ գնաց բազում զօրօք մեծն Ռուբ-
լուշան և եմուտ ի Վիրս. և նստաւ ի դաշտին
Մուխրանայ որ էր մերձ ի բերդն Թագաւորին.
և ծանեաւ զանառիկ ամրութիւն նորա, և կոչէր
պատգամաւորօք ի դուրս գԴաւիթ, և նա ոչ գայր.
այլ խնդրէր պատանդս գրաւական ինքեան. և
ապա եկեսցէ: Ոչան որոյ առաքէ զորդին իւր
զՇիպաուշին և այլ ևս երիս արս ի մեծամեծ պա-
տուաւորացն: Իսկ Թագաւորին եղեալ զնոսա ի
դիպահոջ՝ գայ առ Ռուբլուշայն. և տեսեալ զնա
բազում ընծայիւք՝ առնու և ինմանէ պատիւ և
պարգևս մեծամեծս և ուխտ երդման ոչ նենգել
ինքեան: Եւ էր այսմ ամենայնի մէջնորդ կա-
թողիկոսն իւր: Եւ այնպէս դառնայր ի բերդն
իւր և արձակէր զպատանդսն: Եւ Ռուբլուշայն
դառնայր խաղաղութեամբ և մտանէր ի դաշտն
Ռանայ ձմերել անդ:

ՀԱ.

Վասն յետին վերջակալութեան մերոյ նուաստութեանս որ կարգեցաւ յեպիսկոպոսութիւն Սիւնեաց. եւ որ ինչ զոյցք առ մեօք:

Ես Ստեփաննոս թարմաւոր անձամբ և եղ-
կելի ոգւով, որոշեալ յարգանդէ մօր իմոյ և ըն-
ծայեալ ի տուն Տեառն, որդիացեալ մեծի և ար-
քայաշուք իշխանին Սմբատայ. ի մօրէ ծնեալ Սի-

սական և ի հօրէ՝ Օրբէլեան որ Տարսայիճ կոչի, տիրեալ ի Բաղաց մինչև ցՄայրարատ։ Իսկ հոգևոր ծննդեամբ սուրբ աւազանին որդիացեալ Տեառն Հայրապետի՝ եպիսկոպոսի Սիւնեաց։ Սնեալ և ուսեալ առ ոտս աստուածարեալ արանց, կրթեալ ի հրահանգս ընթերցման և երաժշտութեան եղէ փառաւ և անագանոս ի գաւիթս Տեառըն, կոչեցայ ի դպրութիւն և ի սարկաւագութիւն տանն Աստուծոյ. քահանայացայ և մանկական տիօք կարգեալ կղերիկոս ահարկու և աստուածընկալ բեմին անպատշաճ ոգւով և անարի անձամբ, վարժեցայ ի կրթարանի աստուածեղէն տաճից՝ սակաւ մի առեալ զճաշակ ուսանի քաղցրութեան առի հրաման յաստուածազգեաց և յաշխարհալոյս րաբունապետէն Ներսիսէ. և տհաս խակութեամբ նստայ յաթոռ վարդապետական։ Ես ինձէն խաւար գոլով՝ կամեցայ այլոց լոյս լինել. ես անմաքուր ոգի և աղտեղեալ պատկեր՝ սկսայ այլոց քաւչապետել։

Ես առանց Հոգւոյն կոչման՝ իմով յանդգնութեամբ կամեցայ յառաջ մատչել. ես պատրաստեցի զականճս իմ լսել խաւարահրաւէր բանին «եթէ հանդերձ ոչ ունէիրն». և ծառայ չար և վատ՝». նաև զսարսափելին իսկ, զեհենաժառանգ զժոխահրաւէր հրամանն եթէ «երթ»։ Եւ ի վերայ այսր ամենայնի այլ ևս յաւելի յանդգնութիւն զի ժպրհեցայ յաստիճան հայրապե-

տական։ Եւ ժողովեալ մերոց եպիսկոպոսաց առ հայրն իմ՝ հրաւիրեցին զիս ընթանալ ի թագաւորական աշխարհն Կիլիկիա, առ երջանիկ կաթողիկոսն և աստուածապսակ թագաւորն Հայոց առնուլ ձեռնադրութիւն մեծարալոտութեան ի վերայ աթոռոյս Սիւնեաց. զոր և յանձն առեալ մեր յիմարութեամբ՝ անգիտացեալ զահարկու և անտանելի լծոյս ծանրութիւն, միայն առօրեայ փառօքն հեշտացայ ախտաւոր մտօք. վասն որոյ երանեմ զչեղեալսն և բիւր երանի յարգանդէ վիժելոցն։

Գնացաք ապա և հասաք ի մայրաքաղաքն Սիս. և գտաք զհայրապետն փոխեալ յաստեացս. և սուգ մեծ եղև մեզ։ Եւ անտի գնացաք ի միւս քաղաքն Ադանայ և հանդիպեալ թագաւորին՝ գտաք պատիւ ի նմանէ ի վեր քան զարժանն մեր։ Եւ յամեալ առ թագաւորին ամիսս երիս՝ մինչև աշխարհագումար ժողովով ընտրեցին աւուրս 40 այր մի արժանաւոր՝ Կոստանդին անուն, և օծին զնա պատրիարք Հայոց ի մեծի ճրագալուցի Զատկին. և ի վաղուեան աւուրն զմեզ իսկ ձեռնադրեցին և պսակեցին ընդ սուրբ և առաքելական եկեղեցւոյն Սիւնեաց. և պատուեցին մեծամեծ պարգեւօք և կրկին թագիւ կարգեալ յաստիճան մեծարալոտութեան, և կոչիլ պռաւտաւֆրաւնդէս պատրիարքին Հայոց, այսինքն նախաթոռ լինել և գլուխ ամենայն եպիսկոպո-

սաց Հայոց։ Եւ այնպէս մեծաշուք պատուով դարձաք ի նոցանէ և հասաք յաշխարհս մեր. և բազում վիշտս կրեալ եպիսկոպոսացն որ ի Տաթև (մինչև) փոխեցան նոքա մահուամբ։ Եւ ճնացաք մեք ի դառն և վշտալից կենցաղավարութեանս միապետեալ զբարժանեալ վիճակս աթոռոյս, սահմանեցաք մի լինել տուն միաբանութեան ընդ Տաթև և ընդ Նորավանս։

Բայց վասն հրահոսան նզովից առաջին կաթողիկոսացն՝ Տեառն Կոստանդեայ և Տեառն Յակոբայ և առաջին եպիսկոպոսացն՝ Տեառն Յովհաննիսի և Տեառն Ստեփաննոսի և Տեառն Սարգսի և միւս Տեառն Ստեփաննոսի և Տեառն Գրիգորոյ և Տեառն Սարգսի, որք հաստատեալ էին զվայոց ձոր բոլոր ժառանգութիւն Նորավանից եկեղեցւոյն, ոչ խախտեցաք. այլ որպէս կալեալ էին մինչև ի մեզ, նոյնպէս կալցին. և զայլն բուն աթոռն կալցի և մի լիցի երկոցունցս սոցա եպիսկոպոսութիւնն և մի առաջնորդ և իշխեցող. և ո ոք որ լիցի եպիսկոպոս՝ մի՛ իշխեսցէ երկու ակամբ և երկու մտօք հայել ի սոսա՝ միոյն աւելի խնամ տանելով. մի՛ լիցի հեռ և նախանձ ի մէջ տանս այս. և քնակիչք սոցա մի՛ իշխեսցէն ասել միմեանց. եթէ դու Տաթևացի և կամ Նորավանեցի. այլ իբրև մի անձն և մի սիրտ եղիցին. զի և յառաջին ժամանակացն մինչ ի մեզ սոյնպէս էին կացեալ։

եւ եթէ փոփոխուիս լիցի ժամանակաց, և աւեր հասցէ Տաթևոյ՝ զժառանգութիւն այնր եկեղեցւոյ Նորավանից եկեղեցին ժառանգեսցէ. և բնակիչքն անդ բնակեսցեն: Եւ թէ Նորավանից հասցէ աւեր՝ զժառանգութիւն և զստացուածս նորա Տաթևոյ եկեղեցին վայելեսցէ. և բնակիչք նոցա անդ բնակեսցեն: Եւ թէ յետ մեր խախտեսցէ ոք զայս վճիռ և կամ խորել և դաւաճանել խորհի ի միւս կողմանէ՝ անէծս ցաւագինս ժառանգեսցէ ի մէնջ և յամենայն հայրապետաց. և նզովս առցէ ի սուրբ Երրորդութենէն, և մասնակից լիցի ամենայն չարագործաց:

Ապա եթէ այլ ինչ հակառակութիւն և շփոթումն գարթիցէ, որպէս և մեզ պատահեցաւ, հակառակողքն պարտապան լիցին անիծից. և ժամանակին իշխեցողքն տեսցեն զարժանն: Դարձեալ ի գալն մեր ի Կիլիկիոյ՝ յետ աւուրց ինչ գնացաք առաջի աշխարհակալ արքային Արղունին. և հանդիպեալ նմա՝ ընկալաւ զմեզ և յոյժ յարգեաց և սիրեաց. և մեք ծանուցաք զվիշտս մեր և ցուցաք զշրջաբերականն մեր զոր եւս թարգմանել և ընթեռնուլ առաջի իւր: Ցուցաք և զսիգէլն հայրենեաց մարմնաւոր ժառանգութեանց զոր եւս հայրն իմ. զի հանեալ էր բաժին ժառանգութեան մեզ զվանորայն իւրոյ իշխանութեանն՝ զՏաթև, զՆորավանս, զՅաղացքար, զԱրատիս և զայլսն ամենայն. զոր և տե-

սեալ հրամայեաց գրել հրովարտակ հրամանի և վերստին հաստատեաց ի մեզ զբովանդակն կըրկին իշխանութեամբ հոգևոր և մարմնաւոր. և հրամայեաց մեզ կալ և օրհնել զեկեղեցին ի դրանն արքունի զոր առաքեալ էր մեծ պապն Հռոմայ: Անդ էր և կաթողիկոսն Նեստոր երկուտասան եպիսկոպոսօք, որք և օրհնեցաք ի միասին մեծաւ հանդիսիւ: Եւ ինքն Արդունն զգեցուցանէր իւրով ձեռամբն զզգեստն հայրապետական, զոր ինքն էր սահմանեալ կաթողիկոսին և մեզ և ամենայն եպիսկոպոսացն: Եւ առեալ ի ձեռն զժամահարն շրջէր ի մէջ բանակին և հարկանէր և օրհնէր զամենայնն:

Եւ դարձեալ յետ սակաւուց եկն և եպիսկոպոս մի ի նոյն պապէն և մկրտեաց զկրսեր որդի արքային և անուանեաց Թէոդոսիոս, զոր ինքեանք Յարպանպայ (ծառայ Աստուծոյ) կոչէին. և եդ ի գիրկս Փռանդ իշխանին որ Սիրչազ ասէին: Իսկ յետ վախճանին սորա թագաւորեաց Քեղաթուն որ կոչէին երնջի Թուրնջի, այսինքն գառաք զկորուսեալն: Առ որ գնացեալ մեր, և ի նմանէ ընկալաք պատիւ որպէս յեղբօրէն. և առաք հրովարտակ հրամանի վերստին հաստատութեամբ: Ապա յետ այսր ի թագաւորել Ղազանին գնացաք և առ նա, և բարձրացոյն ի նմանէ ընկալաք վառս քան յայլոցն, զի յետ կրկնապատիկ ամրութեամբ զնոյն հրովար-

տակ, և հրամայեաց ի շրջելն մեր դխաչ դառաջեաւ ունիլ և բարձրադոյն շրջեցուցանել. շնորհեաց և մեզ փայփայ ոսկի, որ էր տախտակ ի չափ թղոյ միոյ և կիսոյ գրեալ ի վերայ զանուն Աստուածոյ և Ղանին և այլ սակաւ քանք: Եւ մեք տեսեալ զանակնկալի (անակնուննելի) ողորմութիւնն՝ փառս և գոհութիւն արարչին վերընծայեցաք. և այնպէս եկեալ ի տուն կայաք հաստատուքեամբ:

Ապա սկիզբն արարեալ մեր շինութեան տուրբ եկեղեցւոյն ի Տաթև որ յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, զի փլեալ էր և քակտեալ մինչև յատակն: Եւ այս երրորդ անգամ էր շինուքիւն սորա զի զառաջինն շինեցաւ ի Փիլիպպէ իշխանէն ի ժամանակս Տեառն Դաւթի՝ եպիսկոպոսի Սիւնեաց. և երկրորդն շինեցաւ ի Տէր Յովհաննիսէ հրամանաւ Սմբատայ թագաւորի, և երրորդս այս զոր մեք սկսաք, զոր և շնորհօքն Աստուծոյ հաստատեցոյս քարամբք և դեղեցկատեսիլ ձևով յարմարեցաք զշինուած նորա: Բայց ի քակելն մեր զսակաւ մնացորդ հիման հիւսիսային սեանն՝ գտաք զանպատմելի գանձն աստուածային՝ զնշխար սրբոյն Գրիգորի Լուսաւորչի զգազաթան մի կողմն և զբարամըն աջ բազկին եդեալ ի փոքրիկ անդուկ փայտեայ և կուպրեալ և մաստնեալ կապալեայ կնքով: Ընդ որ մեծապէս խրախայաք և բազում

դոհութեամբ փառաւորեցաք զԱստուած. և յետ շինուածոյն եղաք ի իմին խորանի ի պատշաճաւոր տեղի անյայտ ի մարդկանէ։

Եւ առեալ մեր յեղբօրէն մերմէ Յելիկուսէն վասն բաժնի ժառանգութեան զդիւղն Աբիտա, որ վաղ ժամանակօք յափշտակեալ էր ի սուրբ եկեղեցւոյն. և նորին յօժարութեամբ դարձուցաք անդրէն և տուաք ի մեր շինեալ եկեղեցին ի սուրբ Գրիգորն, և գրեցաք յիշատակ անջնջելի մեզ և ի հաստատութիւն 'գեղոյն Աբիտայ զի յետ մեր մի ոք իշխեսցէ յափըշտակել զնա ի սուրբ եկեղեցւոյն, և խափանել զմեր յիշատակն, մի փոխել, մի վաճառել, մի զբաւական դնել, մի և այլ ինչ պատճառաւ դաւաճանել ի մերոց կամ յօտարաց, յաւագաց կամ յեպիսկոպոսաց. և թէ յանդգնի ոք՝ ընդ սատանայի յանդիմնդս կործանեսցի, ընդ Կայենի և Յուդայի և Արիոսի դատապարտեսցի, ընդ Սոդոմայ և Գոմորայ տամբ և զաւակօք հրոյն անշէջ ճարակ լիցի, ընդ նեռինն աններելի դատաստանաւ պատուհասեսցի. և թէ տաճիկ իշխանութիւն փոխի, և յափշտակել ջանայ՝ յԱստուծոյ ամենակալէն նզովեալ լիցի. և յիւր փեղամբարէն Մահմեթէ և յօրինաց նորա ասիզմր եղիցի. ընդ բուտփարիստն (դիցապաշտ) և ընդ աթաշփարիստն (կրակապաշտ) կորիցէ և ի դժոխս իջցէ. իւր հալալն նմա հարամ եղիցի։ Եւ եղև այս

ի թուականիս 746։

Դարձեալ յառաջ քան զայս բերեալ էին ի գաւառէն Արձախայ գրաշագործ նշանն աստուածընկալ խաչի. որոյ համբաւ մեծամեծ հրաշից և զարմանագործ սքանչելեացն սփռեալ էր ընդ ամենայն աշխարհս։ Եւ էր նա ի կենսակիր փայտէն որ ունէր յինքեան նիշ արեան ներկեալ յաստուածային կողից հոսմանէ, և պընդեալ յոսկում դուզնաքեայ պահարանաւ։ Եւ ունէին գնա հայրենեօք թոռունքն Դլենայ իշխանի, այն որ ունին եկեղեցի և բազում միաբանութիւն ի Տաթև. բայց զպատճառ գնալոյ աստուածընկալ սուրբ խաչին ի Յաչէն այսպէս լուաք ի սուգագէտ արանց. Եթէ միայնաւոր ճգնաւոր մի յանծանօթ աշխարհէ, որ շրջէր ի պատճառս աղօթից, պատահեցաւ ի գեօղն Դլենայ ի մէջ ձմերան ունելով ի մաղախն զայն աստուածեղէն և անկշիռ գանձ։ Եւ օթեալ ի տան երիցուն տայ զմաղախն ցտիրուհին և ասէ. դիր զդա ի սուրբ տեղի մինչև երթիցեմ. և էր օրն ճրագալոյց Յայտնութեան. և մանուկ տղայ մի էրիցուն մեռեալ էր ի գիշերին, և ոչ հանին ի լոյս վասն տօնին։ Ապա տարեալ կնոջըն այն զմաղախն միայնակեցին դնէր ի անառըս մեռելոյն. և այն ինչ յետ երեկոյեան պաշտամանն կատարման մինչ սակաւ մի ննջեցին՝ կենագործեալ կենսատու փայտին զմեռեալ մա-

նուկն՝ սկսաւ աղաղակել առ մայրն։ Իսկ մայրըն զարթուցեալ ի քնոյն և զարհուրեալ՝ զարթոյց զերէցն. և գնացին ի ներսատունն։ տեսին յարուցեալ զտղայն և նստեալ խաղայր ընդ մաղախին. և բազում ժամս յահի եղեալ ապշեցան. և ոչ գիտէին զիրն։

Իմացեալ ապա ճգնաւորին՝ էառ զմաղախն ի ծածուկ մինչդեռ ասպնջականքն յիմարեալ կային. և գնաց փախստական։ Որք և ուշաբերեալ ծանեան զբանն. և ելեալ ճիչ բարձին առ տէր գեղջն և պատմեցին զեղեալ հրաշն։ Եւ անկաւ աղաղակն ի շէնն և ամենեքեան գան ի տես մանկանն։ Եւ յարուցեալ Դլենայ ծառայիւք և շինականօք պնդեցաւ զկնի միայնակեցին ի կողմն Աղունոյ գետին։ Իբրև իմացաւ նա եթէ՝ պնդեալ են զհետ իւր, ետան զփոքրագոյն մանն փայտին ի պահարանէն՝ եդ ի կրկնուածըս կնգոյն զոր ունէր. և զպահարանն ընկէց ի թուփ մի սալորի ի մէջ մացառախիտ մայրեացն. և ինքն գնայր։ Եկին ապա արքն այնոքիկ և հասին ի տեղին յայն. տեսին յանկարծակի ի մէջ ձիւնաւարած սառնամանեացն զթուփն զայն փթթեալ գեղեցիկ ծաղկօք և կանաչացեալ սաղարթօք. և բուրէր հոտ անման. և ի մեծի հիացման եղեալ՝ կարծեցին անդ պահեալ զԱստուած։

Իբրև տեսին և նշմարեցին զտեղին՝ գային

ի մէջ թիւոյն զոսկի պահարանիկն զատարկ, և պնդեցան դնետ և հասին նմա յեզր գետոյն Աղուռնոյ։ Յարձաւ միայնակեացն և տեսաւ զնոսա. և դչարեալ ի միտս իւր, եհան ի կնգղոյն զփայտն և ընկեց ի մէջ գետոյն. զոր և ըմբռնեալ առանցն տանջեցին սաստկապէս. եթէ տուր ի մեզ զփայտն. և բացեալ զմաղախն ոչ ինչ գտին, և մերկացուցեալ զխոշոր քրձիկն՝ տեղեկացան, և ոչ երևեր։ Ապա հայեցան ի գետն, տեսան յերկուս ճեղքեալ զբազմութիւն ջուրցն և զմասն ի մէջ ցամաքին, և բոց բորբոքեալ ցոյանայր ի վեր. և հոտ զարմանալի իբր ծուխ թանձր ցնդէր ի տեղւոյն։ Լցան սրքն ահիւ և խնդութիւամբ, դողային և ցնծային խայտալով ընդ գիւտ սնդին և անհամեմատ մարգարտին. և մտեալ ի ջուրն առին զփրկական փայտն. և եդեալ ի պահարանին բերին ի տուն իւրեանց։ Եւ միայնակեացն գնայր զկնի ողբալով և բաղխելով զկուրծսն. և մինչ յուսահատեցաւ՝ անէծ չարաչար զտուննդ Դլենայ, և անց գնաց։

Եւ յայնմ օրէ և յապա լինէր այն հայրենիք այնմ ազգի պատուեալ և մեծարեալ պատարագօք յիշխանաց և յաշխարհաց. և յետոյ աստուածասէր և պարեպաշտ մեծ իշխանաց իշխան Զալալշինէ եկեղեցի մի Գիշերաձոր անուն. և կազմէ պահարան յարծաթոյ. և անդ բնակեցուցանէ։ Անդ զայսպիսի աստուածահրաշ նշան

վերին ակնարկմամբն բերին յիշխանութիւնս մեր նեղեալ տեառք նորա յաւերմանէ գաւառին իւրեանց և ի դառն և վերջին աղքատութենէ։ Որք եկեալ բնակեցան առ մեօք. և սակս չարաչար կարեաց իւրեանց, որ էին պարտականն այլազգեաց և կամէին գերի վարել, և տագնապէին ի դառն և յանհնարին աղքատութեանց, ծախեցին մեզ զխաչն թոռունքն աւագ Դլենեանց, որոց աւագն Հասան անուն այլ ևս երկու եղբարբք. և առին ի մէնջ զդինն լիով և անթերի՝ հինգ հարիւր դահեկան որ լինի 5000 դրամ, և այլ բազում պարգևս ձիոց և եզանց և հանդերձից։

Զոր և մեք առեալ դարձուցաք առ տեառն զպահարանն ի 1000 դրամի հաշիւ ոչ ի գինն այլ պարգևք. և առաք զվճիռ գին ու ծախոյն անխախտ պայմանաւ և կտակ յաւիտենական բազում վկայիւք։ Եւ վերստին կազմեցաք պահարանս յոսկւոյ և յարծաթոյ, և յօրինեցաք նախ զխաչն ոսկի ընտիր սուրերական ունելով ի պատուանդանն խնձոր ոսկի ըստ քառակերպեան կենդանեացն և փողս, և եղաք ի վերայ ակունս ի յոյժ մեծագնոց թոռւոյ հինգ ի ծիրանատեսիլ շափիւղայից. և ի մէջ ականցն մարգարիտս 4 մեծագին յառաւել պատուականաց. և եղաք ի ներքոյ մէջի ականն զփայտն փրկական. որ ունի գիր մանրատեսակ շուրջ զականակապճօքն, և զրեցաք ի թիկանց կուսէ նշան բանից զայս աստուածընդ-

կալ սուրբ նշանս կազմեալ ի Տէր Ստեփաննոսէ՝ Սիւնեաց եպիսկոպոսէ, բնակեսցէ յաւիտեան ի սուրբ եկեղեցւոջս Նորավանից»: Նմանապէս եւս կազմել և զմեծագոյն պահարանն յոսկւոյ և յարծաթոյ ի ձև աղիւսակի գեղեցիկ յօրինուածովք և երկբացիկ դրամբք. և սեպհականեցաք զնա Նորավանից սուրբ եկեղեցւոյն. և գրեցաք ի նմա յիշատակարան մեզ այսու օրինակաւ:

«Յամս կործանման աշխարհիս Հայոց, ի դառն և ի դժնդակ ժամանակիս, յորում էր թուականն 743, ի 15 յոբելենիս, յաշխարհակալութեան Քեղաթու զանին, իկաթողիկոսութեան Հայոց Տեառըն Գրիգորի և ի թագաւորութեան Վրաց Դաւթի, յիշխանութեան այսմ նահանգի ամենօրհնեալ զարմից Ելիկումին և եղբարց իւր, ես յոգնամեղ պարտաւորս Տէր Ստեփաննոս՝ Սիւնեաց եպիսկոպոս, որդի մեծափառ իշխանին Տարսայիճին. առաջնորդ վսեմական և աշխարհադէտ տանցս Տաթևոյ և Նորավանից՝ վերին տեսչութեամբն պատահեալ անպատում պարգևացս աստուածընկալ սուրբ նշանիս. և տեսեալ ի սմա զներկուած արեանն Յիսուսի, զոր բերեալ էին ի գաւառէն Արձախայ եռաց յիս տարփուռն սաստիկ և գնեցի զսա ի բուն հայրենատէրանցն՝ ի թուռանցն Իլենայ 500 դահեկանի միագլուխ զատ ի յայլ բազում պարգե-

ւայն, զոր վասն դառն և չար կարեացն և պարտուցն իւրեանց մեծայօժար կամօք ծախեցին մեզ։ Եւ մեք առեալ զարդարեցաք յոսկւոյ սրբոյ և յականց պատուականաց նախ՝ զխաչն և ապա զպահարանն, ի յոյս և ի բարեխօս առ Քրիստոս վասն եղկելի հոգւոյս. թերևս գտից ողորմութիւն յանաչառատենին։ Եւ ընծայեցի զնա սուրբ և գեռափառ ուխտիս Նորավանից հայրենի դամբարանիս մեր։ Թէ ոք նենդել կամ հանել չանայ զսա ասեմ՝ ընդ կայենի և Յուդայի և Արիոսի դատեսցի. յերկնաւորաց և յերկրաւորաց և յամենայն սրբոց նզովեալ եղիցի ի մահ և ի կեանք. և մեր մեղացն պարտական եղիցի։

Արդ՝ յիշեցէք զիս և զեղբարսն իմ զարի և զնզօր իշխանսն զԵլիկում և զԼիպարիտն և զայլ եղբարսն և զբարի քոյրն իմ զՄամքանն. և դուք յիշեալ լինիք ի Քրիստոսէ Աստուծոյն մերոյ. ամէն»։

Յայսմ աւուրս էր այր մի մեծազդի Ամիրայ անուն բնակեալ հայրենեօք ի գեղն Առփայ, որդի Զուրջին, Թոռն իշխանացն Կապանեցի զոր Մահմանեանք կոչէին. զնէ զԱղթայ այգին որ յԱռփայ ի մեծ իշխանէն Տարսայիճէն, որ էր և նոցա գնուածք ի լուն հայրենատէրանցն, և տայ ի գինն 4,000 դրամ։ Եւ միաբանեալ սուրբ եկեղեցւոյն Նորավանից աւան-

դեաց ի ձեռս մեր. և ետ գրել արձան յաւիտենական զի մի ոք իշխեսցէ հանել զնա ի սուրբ ուխտէն. և կարգեաց նզովս մեծամեծս: Վասն որոյ և մեք սահմանեցաք նմա հինդ պատարագ յամենայն ամի անխափան կատարել: Էր և ի հին աւուրց տուեալ ի վանսն գԴայեկի քարոյ այդին հոգեցատուր Ալթամարեանց և այլոց ոմանց. և արձանագրով և նզովիւք հաստատեալ զի մի ոք հակառակեսցի:

Գնեցաք և մեք ի միջոցին գյոլով մասն ի հայրենատէրանցն ընդ 2,500 դրամի և բոլորեցաք գայգին ի բոլոր Ծակուտ քարէն մինչ ի վեր ի սպառուած այգւոյն որ մեծ սալն է: Ետուն և հոգեցատուր այգի մի ի կամրջայ խեչիս և այլ բազում հայրենիս հողս և տունս. շինեալ էին և երկու ակն ջրաղացս աջ կամրջին. և այս ամենայն հալալ և անխախտ հայրենիք էր և ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն Նորավանից ոչ ի գրկմանէ և յափշտակութեանց. այլ էր որ հոգեցատուր էր և էր որ գանձագին եպիսկոպոսաց և իշխանաց. զոր չունի ոք հրամանն յաւագաց կամ ի ձեռնաւորացն ոք և լիցի իշխան, ի վերայ այս գեղջս Առփայոյ, և կամ յազատաց և տանուտերաց տեղւոյս հակառակ կալ և կամ յափշտակել չանալ և կամ այլ ինչ դաւ և գրկանք խորհիլ կամ վասն ագահութեան կամ վասն նախանձու կամ վասն այլ պատճառի

յայս ժառանգութեանցս: Ապա թէ յանդգնի ոք և լրբենի դիմօք ձեռնարկէ ինչ՝ Հայրն Աստուած զհայր նորա նզովեսցէ, և Որդին Աստուած զորդիս նորա նզովեսցէ. միաւնական սուրբ Երրորդութիւնն զմարմին նորա նզովեսցէ. և ամենայն անէծք մարգարէականք և առաքելականք և հայրապետականք ի վերայ գլխոյ նորա և տան նորա եկեսցեն. չնչեսցի յիշատակ նորա յերկրէ. և ինքն անքուն որդանցն և անշէջ հրոյն ճարակ եղիցի. իսկ հնազանդքն և օգնականքն և ւանդապահքն օրհնեալ եղիցին յԱստուծոյ և յամենայն սրբոց: Եւ թէ տաճիկ իշխանութիւն փոխի. և նա նենդել և բռնաբարել և յափշտակել խորհի՝ յԱստուծոյ և յիւր Մահմետէն ապիզմր լիցի. և իւր հալալն հարամ եղիցի. և 100,000 նզովք ի վերայ նորա և ազգի նորա և զաւակաց նորա եղիցի մինչ ի 1000 ամն:

Դարձեալ՝ և այժմ զիմոյ հէգ և թշուառ անձինս կարգեցից ասա յիշատակ հոգւոյ անչինչ արձանի: Վասն որոյ մաղթեմ մեծայոյս թախանձանօք զյոյսն հաստարակաց որ Տէրն է հոգւոց և Աստուած բոլորից զի ընկալցի զսա ընդ խերևէչ այրւոյն. և ընդ շանցն մուրողաց ոչ խնայեսցէ և ինձ զսակաւիկ փշրանսն: Արդ՝ ստացայ ինձ յիշատակ զեկեղեցիքս Նորավանից, և արարի ինձ միջնորդ և բարեխօս առ Քրիստոս զաստուածակիր սուրբ նշանքս, զա-

ւագ խաչս աստուածընկալ զոր իմով ձեռամբս կազմեցի։ Եւ ընծայեցի ի սուսա զիմ հալալ հայրենիքն և զգանձագին գիւղն Զուայ իւր ամենայն սահմանօքն, հողով և ջրով և այգեստանեօք և բոլոր բնակչօք, զոր գնեալ է իմ յիմ եղբօրէն Ջալալէն ազատ յամենայն հարկաց և ի դիւանէ անդաւի (անվիճելի) և անհաշիւ յամենայն կողմանց, յեղբարց և յաւագաց. և տուեալ էաք ի գինն 21,000 դրամ. և զգիւղն Աբասաշէն և զսուրբ Սահակ, որ իմ հայրենաբաժին էր ի մեր հալալ ընչից և հայրենեաց։

Եւ արդ՝ մի՛ ոք իշխեսցէ իշխանութիւն վարել ի վերայ այս շինոյս. և կամ հարկ կամ դիւան կամ մալ կամ այլ ինչ դնել ի վերայ. այլ միայն իշխեսցեն առաջնորդք սուրբ ուխտիս Նոր Բայազիտոյ և վայելեսցեն ժառանգաւորք տանս և սպասաւորք սրբոց նշանացս, և զմեզ աղօթից և պատարագաց հանապազ հաղորդս կալցին ի սուրբ եկեղեցիս։ Դարձեալ՝ վասն տօթոյ տեղւոյս որ յամարայնի չկարէին բնակել եպիսկոպոսքն և սպասաւորքն, սահմանեցաք զԱրատեսի վանքն որ ի վերոյ Եղեգեաց. և տուաք ամենայն հասոտաոտութեամբ զվանքն և զգիւղն իւր ամենայն շրջակայ սահմանօքն և հոգեցատուր ժառանգութեամբքն ի սուրբ եկեղեցիս. զի տոքա կալցին հայրենեօք և վայելեսցեն զնա. բայց շինութեան տեղւոյն և լուսաւորութեան եկեղեցւոյն ամե-

նայն չանիւ փոյթ տարցեն որպէս այսմ տան։ Դարձեալ՝ և եաու զՔարկոփ իւր ամենայն սահմանօք ի վայելումն և ի ժառանգութիւն առաջնորդաց տանս և այլ եղբայրութեանս։

Եւ յայսմ հետէ մինչև յաւիտեան հաստատ հայրենիք լիցի նա սուրբ եկեղեցւոյս Նորավանից. և թէպէտ ժառանգաւորք սոքա լիցին. այլ զչինութենէ վանից և զուսաւորութենէ եկեղեցւոյն մի՛ անփոյթ արասցեն, այլ ամենայն չանիւ. հոգասցեն որպէս զսեպհական տանէ։ Եւ արդ՝ մի՛ ոք իշխեսցէ այսմ հակառակել, կամ ինչ և իցէ պատճառաւ խափանել խորհիլ. և քակտել զիմ ընծայեալ հոգեցաւութիւս ի սուրբ եկեղեցւոյս Նորավանից զի զեօղն Զուայ իմ գանձադին էր. և Արատէս և Քարկոփին՝ իմ հալալ հայրենաբաժին, որ ո՛չ աւազի և իշխեցողի, ո՛չ այլ ումեք ոչ ինչ հաշիւ կայր ի ներս։ Եւ թէ յանդգնի ոք՝ ի սուրբ երրորդութենէն նզովեա՛լ եղիցի ի մահ և ի կեանք. և ամենայն անէծք որ յօձէն մինչև ի նեռն կայ ի վերայ ամենայն չարագործաց, ի վերայ նորա եղիցի, ընդ Յուդայի՛ մասնակցեսցի, և ընդ ուրացող Վաստակայ որդնալից սատակեսցէ. մեր մեղացն ու խղճին պարտապան եղիցի և յաւիտենական հրոյն մատնեսցի. իսկ կամեցողք և հնազանդքն օրհնեա՛լ լիցին յԱստուծոյ և յամենայն սրբոց նորա։

Եւ թէ տաճիկ իշխանութիւն փոխի. և յա-

փըշտակել Ջանայ. ինքն յԱստուծոյ և յիւր փեղամբարձն ապիզմը եղիցի. և տամբ և զաւակօք յանդունդս կործանեսցի, 100,000 նալաթ ի նուրա վերայ եղիցի: Եւ արդ՝ մինչ կարգեցաք զայս յիշատակ, և հաստատեցաք զայս հոգեցատուրս, ապա ժառանգաւորք տանս միեղէն եղբայրութեանս համակամ սիրով սահմանեցին մեզ յիշատակ ի սուրբ եկեղեցւոջս մի քառասունք պատարագ Յինանցն. և զկնի կրկնազատկին մինչ ի Հոգեգալուստն յամենայն առաւօտու Ամբիծք և աւետարան հանգստեան յիմում դամբանի. և զօր մեծի տօնախմբութեան սուրբ Պենտեկոստէին առնեն մեզ յիշատակ հոգեհանգիստ զենմամբ զուարակաց և գառանց, և առատ ոճկօք կերակրոց և ըմպելեաց լցուցանեն զպէտս աղքատաց և կարօտելոց. և յայն օր յամենայն եկեղեցիքս պատարագ մեզ արասցեն և խնդրեսցեն յԱստուծոյ Հոգւոյն զենմամբ Փառակին թողութիւն մեր մեղաց և վիշտանս ողորմութեան, թերևս կարացից ապրել յահաւոր ամօթոյ անկ հրապարակին ուր բանքն սպառին և գործքն թազաւորեն:

Բայց թէ ոք յառաջնորդաց և յեպիսկոպոսաց տեղւոյս կամ ի փակակալաց, կամ յայլ ժառանգաւորաց տանս ծուլանան կատարել զմեր յիշատակդ կամ նախանձին. կամ պատճառեն պատճառս ինչ՝ որչափ եկեղեցիքս ի հաստատու-

թեան և ի չինութեան են, մանն նոցա և բաժին ընդ Յուդայի և ընդ աստուածասպան քահանայիցն եղիցի. ի սուրբ Երրորդութենէն ողորշեալ լիցին, և մեր անհուն և ծովացեալ մեղացն պարտապան և պատասխանատու եղիցին. իսկ կատարիչքն օրհնեալ եղիցին և ընդ ամենայն սուրբս մանն և վարձ ընկալցին. ամէն։

Եւ արդ՝ աստանօր ով եղբարք՝ յիշեմ և զխոցուած լերդի իմոյ զի սակաւ մի յառաջ քան զդծագրութիւն տառիս հասաւ մեզ սուգ անվերանալի զի կրսեր և սիրելի եղբայրն իմ Փախրադուլայն ի զարդ և ի դեղ մանկական հասակի՝ մինչ տէգ մօրուացն փաղփեալ լինէր թխատիպ տեսակաւ շուրջ բոլորեալ զպատշաճագեղ ծնօտիւքն. և սիրտ նորա զուարճ կանդամտական խորհրդօք ի վայելս քաղցրազբօս կենցաղոյս. և կամք նորա ի վազս և ի թիռս իշխանաշուք փառաց՝ յանկարծակի հասեալ օրհասն կենաց՝ խզեաց զբոյսն քաջուղէշ, և խլեաց զտունկն ծաղկափթիթ. եբարձ տարաժամ զբաղձալին ինձ։ Որ և հրաժարեալ ի մէնջ գնաց յաստեացս առանց իրիք յիշատակի. զոր և տարեալ եդին ընդ հօրն իւրում ի տապանի։ Որում Տէրն իմ Յիսուս Քրիստոս անդ ողորմեսցի և անտես արարեալ զմեղսատեսակ կէրս մարմնոյ նորա՝ զուարճացուսցէ ի վայելսն անմահական և յուրախութիւնսն անդրաւական. ամէն։ Եւ

այժմ անա ահվ ընթերցասէր՝ պատշաճ համարիմ յաւարտման մատենիս դնել նախ զանուանս և զկարգ եպիսկոպոսացն Սիւնեաց, և ապա իբր զմանեակ ոսկի ի պարանոց և կամ կնիք թագաւորական ի վերայ պատուական գանձուց, կարգել զանուանս սուրբ և երջանիկ հայրապետացն Հայոց ի գլուխ կատարման շինուածոյս մերոյ. զի յԱստուածոյ սկսեալ և յաստուածազգեաց սուրբքն պարտ է յանգեցուցանել:

ՀԲ.

Եպիսկոպոսք Սիւնեաց. աւմ եւ թիւ նոցին. առաջին եպիսկոպոս ձեռնադրեալ ի սրբոյն Գրիգորէ:

1.	Տէր Գրիգորիս՝ ամս	46.
2.	Տէր Մաշտոց՝ ամս	»
3.	Տէր Անանիա՝ ամս	42.
4.	Տէր Նուն՝ ամս	8.
5.	Տէր Գապատ՝ ամս	17.
6.	Տէր Մուշէ՝ ամս	36.
7.	Տէր Եփիցակ՝ ամ	1.
8.	Տէր Մակար՝ ամս	28.
9.	Տէր Պետրոս՝ ամս	10.
10.	Տէր Գիգան՝ ամս	3.
11.	Տէր Վրթանէս՝ ամս	23.
12.	Տէր Գրիգոր՝ ամս	15.
13.	Տէր Քրիստափոր՝ ամս	10.
14.	Տէր Դաւիթ՝ ամս	27.

15. Տէր Մաթուսաղայ՝ ամս 18.
Ընդմէջ ամս 8.
16. Տէր Աբրահամ՝ ամս 30.
17. Տէր Յովսէփ՝ ամս 19.
18. Տէր Յովհան՝ ամս 22.
19. Տէր Մովսէս՝ ամս 7.
20. Տէր Անանիա՝ ամս 7.
21. Տէր Յովհան՝ ամս 9.
22. Տէր Ստեփաննոս՝ ամ 1.
23. Տէր Յովսէփ՝ ամս 17.
24. Տէր Յովակիմ՝ ամս 17.
25. Տէր Սադովկ՝ ամս 32.
26. Տէր Յովհաննէս՝ ամս 2.
27. Տէր Սաղոմոն՝ ամս 7.
28. Տէր Եղիա՝ ամս 8.
29. Տէր Թլդոդրոս՝ ամս 18.
30. Տէր Գէորգ՝ ամս 8.
31. Տէր Դաւիթ՝ ամս 17.
32. Տէր Յովհաննէս՝ ամս 10.
33. Տէր Սաղոմոն՝ ամս 17.
34. Տէր Յովհաննէս՝ ամս 33.
35. Տէր Յակոբ՝ ամս 41.
36. Տէր Վահան՝ ամս 6.
37. Տէր Աշոտ՝ ամս 17.
38. Տէր Յովհաննէս՝ ամս 6 և կէս.
39. Տէր Աշոտ նոյն՝ ամս 5 և կէս.
40. Տէր Սամուէլ՝ ամս 3.

41. Տէր Յակոբ՝ »
42. Տէր Գրիգոր՝ »
43. Տէր Յովհաննէս՝ ամս 50.
44. Տէր Գրիգոր՝ ամս 58.
45. Տէր Ստեփաննոս՝ ամս 27.
46. Տէր Բարսեղ՝ ամս 5.
47. Տէր Գրիգոր՝ ամս 20.
48. Տէր Ստեփաննոս՝ ամս 46.
49. Տէր Յովհաննէս՝ ամս 38.
50. Տէր Հայրապետ և
51. Տէր Սաղոմոն՝ ամս 20.
Իմիասին՝ ամս 40.
52. Տէր Յովհաննէս՝ ամս 3.

Իսկ որ ետուն ի Նորավանս ի նոյն ցեղէ արտաքսելոց:

1. Առաջինն՝ Տէր Յովհաննէս կապանեցին.
2. Տէր Ստեփաննոս՝ որդի Տեառն Գրիգորի.
3. Տէր Սարգիս՝ ամս 20.
4. Տէր Ստեփաննոս՝ ամս 20.
5. Տէր Գրիգոր՝ ամ 1.
6. Տէր Սարգիս՝ ամս 24.

Եւ ապա միապետեալ զերկոսին արտաքս:

53. Տէր Ստեփաննոս՝ եպիսկոպոս Սիւնեաց և Նորավանից՝ եօթնեերորդ:

Արդ՝ սրբոյ աթոռոյս ի բոլոր թէմի եղեալ վանք և անապատք են սոքա. Մեղրոյ սուրբ Յով-

հանդէս անուն վանքն. Մեծ անապատն արանց. Հարանց անապատն արանց. Շնհէրու Աստուածածնին անապատն կուսանաց. Հալիձորու անապատն կուսանաց. Մանկևու ամենափրկիչ անապատն կուսանաց. Գանձափարախու վանքն. Կարճևանու սուրբ ուխտն Յովհաննու և Ծիծեռնակու սուրբ վանքն։

Կաթողիկոսք Հայոց. ամք եւ թիւ նոցա։

1. Սուրբն Գրիգոր Լուսաւորիչ՝ ամս	30.
2. Արիստակէս	7.
3. Վրթանէս	15.
4. Յուսիկ	6.
5. Փառներսէհ	4.
6. Սուրբ Ներսէս	20.
7. Շահակ	4.
8. Զաւէն՝ եղբայր Շահակայ	1.
9. Ասպուրակէս՝ եղբայր սոցա	3.
10. Սուրբն Սահակ	51.
11. Յովսէփ	12.
12. Փիւտա	10.
13. Յովհան Մանդակունի	6.
14. Բաբգէն	5.
15. Սամուէլ	10.
16. Մուշէ	8.
17. Սահակ (Բ)	5.

18. Քրիստափոր (Բ) 6.
19. Ղևոնդ 3.
20. Ներսէս (Բ) 9.
21. Յովհաննէս (Բ) 17.
22. Մովսէս 44.

Ի արբոյն Գրիգորիսէ մինչեւ ի 4 ումն Մովսիսի, ուր եղաւ թուականն Հայոց՝ ամք 249. եւ յինն թուականին եղաւ հինգհարիւրեակն. ի Քրիստոսէ՝ ամք 553:

23. Աբրահամ՝ (Ա) ամս 23.
24. Յովհան՝ (Գ) ամս 16.
25. Կոմիտաս 8.
26. Քրիստափոր (Գ) 3.
27. Եզր 11.
28. Ներսէս (Գ) 21.
29. Անաստաս 6.
30. Իսրայէլ 10.
31. Սահակ (Գ) 26.
32. Եղիա 14.
33. Յովհան Օձնեցին (Դ) 11.
34. Դաւիթ (Ա) 12.
35. Տրդատ (Ա) 23.
36. Տրդատ (Բ) 3.
37. Սիոն 8.
38. Եսայի 13.
39. Ստեփաննոս (Ա) 2.
40. Յովաբ ամիսս 6.

41. Սաղոմոն 1.
52. Գէորգ (Ա.) 3.
43. Յովսէփ (Բ) 11.
44. Դաւիթ (Բ) 27.
45. Յովհաննէս ի Կոստայից (Ե) 22.
46. Զաքարիա ի Զապայ (Ա.) 21.
47. Գէորգ (Բ) ի Գառնւոյ 21.
48. Մաշտոց ի Սևանայ՝ ամիսս 7.
49. Յովհաննէս (Զ) պատմագիր 27.
50. Ստեփաննոս (Բ) 1.
51. Թէոդորոս (Ա.) 10.
52. Եղիսէ (Ա.) 7.
53. Անանիա 22.
54. Վահան 2.
55. Ստեփաննոս (Գ) 2.
Անկաթողիկոս 1.
56. Խաչիկ (Ա.) 19.
57. Սարգիս (Ա.) 27.
53. Պետրոս (Ա.) 40.
59. Խաչիկ (Բ) 6.
60. Գրիգոր (Բ) 40.
61. Բարսեղ (Ա.) 24.
62. Գրիգորիս (Գ) 53.
63. Ներսէս (Գ) 7.
64. Գրիգոր (Դ) 20.
65. Եղբօրորդի սոցին Գրիգորիս (Ե) 1.

Սա արգելեալ ի բերդն Կոպիտառայ՝ ի վիճերի կախեալ բնդ պարիսպն անկաւ եւ մեռաւ։

66. Գրիգորիս (Զ) ապիրատն 7.
67. Յովհաննէս (Է) մեծաբարոյն 18.
68. Կոստանդին (Ա.) 47.
69. Յակոբ (Ա.) 19.
70. Միւս Կոստանդին (Բ) երեք ամ կեցեալ աքսորեցաւ։
71. Ստեփաննոս (Թ) Հռոմկլայեցին երկու ամ կեցեալ՝ վարեցաւ ի գերուԹիւն ի Մըսր. և յետ մի ամի վախճանեցաւ ի բանտն և ի կապանքն։ Եւ այժմ է Տէր Գրիգոր (Է)՝ Անաւարզայ եպիսկոպոսն։

ՀԹ.

Ցիշատակարան մասնին Տեփանոսի։

Սկիզբն և կատարած ամենայնի Աստուած. զի ի նմանէ սկսեալ և նովաւ յառաջացեալ և ի նոյն կատարէ Տէրն, որպէս ի կարականակերտ բոլորումն է տեսանել զի ուստի սկսաւ ի նոյն յանգեալ միացաւ՝ իծոց իւր գրաւեալ զբազմաւորականն մասունսն։ Տինա և ի տպաւորումն շնորհին է տեսանել զի հոսեալ յորդառատ յականակիտ յաղբերէն անցանէ ընդ բնաւն բաշ-

խելով իւրաքանչիւրոցն զմանաւորն ըստ պատշաճին: Եւ այնպէս գործեալ յամենեսեան զօգուտն և զօգտակարն՝ ինքն նոյն պարգեւթեամբն միանայ ուստի բղխեցաւն: Ըստ որում և ես իսկ շնորհօք վերնային, բարուք սուրբնային, ձևով երկնային, վարուք եղեռնային, կերպիւ կենաբաշխ, ոգւով կենադրաւ, անուամբ քաւչապետ, բանսարկուին գործապետ, առեալ յաստուածային շնորհացն՝ կամեցաք սակաւ մի սեղանաւորել, և սկիզբն արարեալ Աստուծով յառաջացաք նովիմբ, զոր և աւարտեցուք ի նոյնն:

Սրդ գոհութիւն և փառք Ստեղծողին էիցս, անճառին և անհասին, պարգեւողին առատաբաշխ և խնամող բոլորիցս. օրհնութիւն, պատիւ և երկրպագութիւն անբաւ բիւրուք, անհաս և անվճար ի հրաբուն սեռից երկնաւորաց և ի նիւթեղէն տարրականաց երկրածին կենդանեացս, ի բոլոր եղականաց և ի բնաւից գոյութեանց արարածոցս, որ կարողացոյց զխակակիրթ տհասութիւն իմոյ մտացս և զցաւալից տարտամութիւն ծովահեղձուկ հոգւոյս տեսանել զաւարտ առարկութեանս և հասանել ի կատարումն սկզբամանս ի գառն աւուրս և ի սովաժածոյց մահաշունչ ժամանակս. յորում մանն ցանկալի և երանական. և կեանքն առելի և թշուառական. հանապազորդեալ ամենեցունց զցայգն ի ցաւ և զցերեկն ի ցնորք. և ակնկալութիւն ոչ ի բարին.

այլ օր ըստ օրէ յանհնարին վիշտս և նեղութիւնս։ Եւ արդ՝ ի կամս կարող և հզօրին Աստուծոյ Հօր, և շնորհս գթութեան միածնի Որդւոյն Յիսուսի և յողորմութիւն նախախնամող և ապատիչ սուրբ Հոգւոյն, ես նուաստ և յոգնամեղ ծառայ Քրիստոսի Ստեփաննոս, և ողորմութեամբ նորին եպիսկոպոս Սիւնեաց երկոտասան գաւառաց, նաև, ըստ ներող կամաց նորին, նստեալ ի գահ մեծապատուութեան տանս, տեսաք նուաղեալ և ժառեալ զանուն և զյիշատակ առաջնոցն, և յափշտակեալ և կորուսեալ զժառանգութիւնս եկեղեցեաց։ Եւ ի վաղուց հետէ ցանկացեալ այսմ նորոգման և վիպագրութեան։ Եւ բազում ջանիւ և յոլով աշխատութեամբ որոնեալ հաւաքեցաք ի հին և նոր պատմագրաց Հայոց, նաև յարձանագրութեանց եկեղեցեաց և ի հնագոյն նամակաց, որ կայր պահեալ յաժուրս տեղեացն աշխարհախումբ հանդիսարանին Տաթևոյ. էր ինչ և որ յաւանդութեանց ստուգագէտ արանց որում վկայէին իրքն և տեղիքն, զհետ ժառեալ ամենայն ճշդիւ ստուգութեան, ի բաց ձգեալ և զունայնախոյզ զրաբանութիւնն զի մի տաղտկասցին լսողք. և կարճաբան վիպասանութեամբ ցուցաք համառօտիւ զառաւել պիտանին և զճահագոյնն. և գրեցաք զայս քաղցրաբան պատմութիւն հանդէսք գպրութեանց յիշատակարանաց առաջնոցն, ոչ ընդհանրական. այլ առանձին Սի-

սական աշխարհիս, որ կոչի յիշատակաց մատեան:

Եւ թողաք զսա արձան անջնջելի և յիշատակ գովելի յապա ժամանակաց ի հաստատութիւն սուրբ և երկնահանգէտ աթոռոյս Սիւնեաց, և ի պայծառութիւն եկեղեցեացս որ ընդ սորին այցելութեամբ: Եւ բարձեալ զսա մեղսանեղկ բազկօքս տարեալ ընծայեցաք ի տուն Տեառն խայրիս խորհրդական. և զհամուսնս նուիրական կաթողիկէ և առաքելական եկեղեցւոյս Տաթևոյ և ամենայն աստուածաբնակ տաճարաց այսմ իշխանութեան. և ի գուճս անկեալ աղաչեմք և յոգնակառաչ ձայնիւ պաղատիմք, ոմ գերապանծ և լուսաճեմ առագաստ երկնաւոր փեսային՝ հայցեաւ ամենայն սրբովք ի Գլխոյն քոյ սխրալի ընդունիլ զսա յիւր աստուածային գանձարան զայսպատուղ շրթանց և ծնունդ հոգւոյ պատարագ հաճելի, և թէ ոչ ընդ պատուականն, սակայն ընդ չքաւորեալն առ խորանաւն որք մազ մատուցանէին, նաև ընդ բաժակ մի ցուրտ ջրոյն կամ ընդ երկու լոմայինս: Եւ շնորհաւորելով զսա եկեղեցւոյն իւրում տացէ մեզ ակն ունիլ բարեաց և առատաձիր պարգևին եթէ ոչ կատարելոյն. այլ փշրանացն յորմէ շունք կերակրին: զի քանքարս զոր ետուր ցիս, ոչ բնաւին ընդ անբանութեամբ փակեալ խորեցի. այլ սակաւ մի ըստ իմում սակի արկի ի սեղանաւորն՝ վասն

որոյ մի՛ լիցի ինձ լսել եթէ ծառայ չար և վատ՝ այլ յաներեակ աւուրն մեծի ուր բանք սպառին և գործք թագաւորին, արժանասցուք երանաւէտ ձայնին եթէ «եկ, մո՛ւտ յուրախութիւն Տեառն» որում գոհութիւն և փառք յամենայն եղելոց այժմ և յանսպառ յաւիտեանս. ամէն։

Աղդ՝ յարմարեալ այս հանդէսք բանի շարագրեցաւ յաշխարհակալութեան մեծի և ինքնակալ արքայի ղան Ղազանին՝ որդւոյ Արղունին, ի տիրել տիեզերաց ցեղին Նեաողայ, ի թագաւորութեանն վրաց Դաւթի՝ որդւոյ Դեմետրէի, և Հայոց Հեթմոյ՝ որդւոյ Լևոնի թագաւորի, յիշխանութեան այսմ նահանգի օրհնելոյն և բարեպաշտի Ելիկումին՝ որդւոյ Տարսայիճին և եղբարց իւրոց, յամս աստուածապատիւ և հոգևոր Տեառն Գրիգորի՝ ինքնագլուխ պատրիարքի, և Տեառն Ստեփաննոսի՝ Աղվանից կաթողիկոսի, ի թուաբերութեան անժամանակ Բանին 1299. և ըստ հայումս ի 14 յոբելեանին և 46 համարին, ի 186 ոլոմպիադին և յերկրորդ ամին, ի յիսուն ընդիքսիոնին պակասեալ թուով, իսկ ըստ քանանեան թնեակ շրջանի արեգականն միոյ հինգհարիւրեկին, յ214 թուին, ի վանս վսեմական և փառաբնակ ուխտիս Նորավանից, ընդ հովանեաւ աստուածաբնակ տաճարացս և աստուածակիր նշանացս, ի նժդեհ և ի դառնադաժան

աւուրս. մինչ կայաք ի մէջ սիեզերահոծ տագնապի միշտ զզուեալ երեքալեան դիմակցութեամբ ակնակառոյց միայն վերին այցելութեան։

Վասն որոյ մայրամած դիմօք մաղթեմ գդասս սրբազանիցդ զի յիշման զմեզ արասջիք արժանի, և ոչ առնէք անտես զանէութիւնս իմ որ կամ հողացեալ ի կորզացեալ զերեզմանի, այլ առաջի աչաց համարեսջիք գոգ ի վեր քարշեալ զօրէն մուրոդաց. շառագունեալ դիմօք և տուայտեալ երեսօք խնդրել ի ձէնջ փշրանս ողորմութեան, այսինքն միով նուագիւ երկնաւոր զենմանն առնել արժանի։ Եւ թէ սխալանս ինչ և կամ թերի գտանէք ի սմա, յաւելուած կամ պակասութիւն, մի ախտաւոր մտօք պարսաւեսջիք զի բնութիւն է մարմնոյ զթիլ և սկարանալ ի բանս և ի գործս. այլ ողջախոհ կամօք ուղղել և աստուածաբար սիրովներել մեզ և շնորհել զյանցանսն։ Եւ ձեզ ամենեցուն լիցի միոյն բիւրապատիկ գտանել ողորմութիւն յողորմածէն Աստուծոյ կրկին կենօք։ Բայց պատուէր դնեմ ամենեցուն որք հանդիպիք սմա՝ ոչ քեցել ի բանիցս սորա և կամ այլանդակել զյեղանակ կարգին, և կամ ժառել ի սմանէ կամ թուղթ հատանել. կամ վասն նախանձու և նենգութեան և կամ այլ ինչ պատճառի։ Ասպա թէ ոք ժպրծի յանդուգն լրբութեամբ՝ չնչեալ եղիցի ի դպրութենէն կենաց, և կտրեալ ի կատակէն յաւիտենից, ընդ

Յուդայի և խաչահանուացն վարձատրեացէ, ընդ սատանայի և ամենայն չարագործացն դատապարտեացէ. և որ ոք ընդար... և ընդ այլոցդ զսակաւագիծ յիշատակս. և առ հասարակ ամենեքեան մեք և դուք ի միասին գոյնւք ողորմութիւն յարարչական սիրոյն Աստուծոյ ի մարմնի և ի դերեզմանի, և յաներեկ աւուրն մեծի: Եւ նմա փառք յամենայն արարածոց, և գոհութիւն յամենայն բանակաց յերկնաւորաց յաւերամս ժամանակաց և յանվախճան յաւիտեանս. ամէն:

ՀԴ.

Սիւնեաց երկոտասան գաւառաց հարկ ևկեղեցւոյ ըստ հին սահմանին:

Ա. Ծղուկ գաւառ

Նորիք,	12:	Տաթև,	10:
Յուր,	6:	Ծացարդ,	10:
Խուիտ,	8:	Տաշու,	5:
Հարժիք,	10:	Արիտ,	6:
Բերդկանեբէի,	6:	Արծիւ,	6:
Խոտուք,	8:	Լծէն,	6:
Ախանէն,	8:	Որոտն,	10:
Բերդն,	10:	Ոպնի,	6:
Երեծ,	6:	Երեմի,	6:
Ղղուերծ,	10:	Մոգոյք,	10:
Մրուց,	8:	Լոր,	12:

Մարդակայր,	6։	Մշկաձոր,	6։
Տատան,	6։	Սապատաձոր,	8։
Մազազնի,	6։	Փոքրոյծ,	8։
Տորնիք,	12։	Տորունիք,	10։
Տորունկայ,	8։	Տխունիք,	12։
Աքաճի,	12։	Թործողու,	6։
Դաստակերն,	10։	Գրուակ	6։
Մեծիք,	12։	Պիսակ,	6։
Աղաթմարաթ	6։	Խուրեք,	12։
Յօղունի,	10։	Մորենի,	12։
Արևէս,	7։	Բնունիք,	6։
Արթէք,	10։	Աթղէք,	12։
Ծննի,	12։	Որդիքիք,	12։
Ոզիճի,	10։	Ըշակամայրի,	6։
Գետակից,	12։	Բղեան	6։
Խանք,	12։	Որճաբերդ,	12։
Ծաղկայ	12։	կորովի,	12։
Ծեղթի,	12։	կիրակոսիկ,	12։
Բռնակոթ,	12։	Ագարակիկ,	7։
կամավանք,	10։	Գայլոց վանք	10։
Վասակակերտ,	12։	Մուցք,	10։
Շաղատ,	12։	Շաղատոյ վանք,	6։
Ապարանից գետ,	10։	Շոքար,	10։
Մեծաձոր,	10։	Փեթականոց,	6։
Վաղատին,	12։	Ալիտու,	12։
Գոմեր,	7։	կուրավանք,	7։
կաւաքարախ,	12։		

Բ. եւ Այլախ գաւառ։

Քաղաքակ,	12։	Շաքէ,	12։
Զաքէի վանք,	12։	Լերին վանք,	12։
Դաստակերտ,	10։	Անկեղակոթ,	10։
Քարունջ,	10։	Բորտի,	12։
Վերին Բորտի	12։	Գովբթոտ,	6։
Բիւրոտի վանք,	6։	Իւղոտամաղք,	12։
Սարափարախ,	6։	Ուռական գետ,	10։
Գոթաձորնեերքին,	7։	Գինական գետ,	10։
Գոթաձոր վերին,	10։	Որդան հայր,	10։
Ականք,	10։	Զկնարած,	12։
Մեծաձոր միւս,	12։	Զղահայրեանք,	10։
Կոռոշափոր,	7։	Սաղատձոր,	8։
Մազազնի,	6։	Բողոտիջուր,	6։

Գ. Վայոց ձոր գաւառ

Գետիկ,	12։	Դերբն,	10։
Գոլոշաի վանք,	6։	Ու դի ձոր,	10։
Արտոց գետ,	6։	Տեառնավանք,	12։
Մարտիրոս,	7։	Ապարանք,	6։
Բարձի շէն,	12։	Մայրադուրք,	12։
Աչողք,	10։	Մոխրոց,	6։
Կապոյտք,	12։	Կարօնք,	10։
Դեկն,	10։	Աղեաւ,	10։
Արուճ,	12։	Բոր,	10։

Ալառապաւիթ,	6։
Գաղատայ,	10։
Կորնթիւնք,	10։
Ըրվէնք,	6։
Մորձայ,	8։
Զեդեայ,	8։
Եկեան,	10։
Գնչին,	6։
Էրդէշ,	10։
Ասպանայ,	6։
Մսեն,	12։
Ագարակի ձոր,	5։
Եղեգնաձոր,	12։
Բերդիմայր,	20։
Կուբանք,	12։
Հորք,	12։
Մարաշկօնք,	10։
Արաապ,	7։
Անգեղի	12։
Եղեգիք,	12։
Մոզն,	12։
Արկազն,	12։
Փշատիք,	6։
Երերն	10։
Մատորձի,	12։
Անգոնք,	6։
Պրակք,	12։
Փշօնք,	15։
Մոզաւաս,	10։
Լիճ,	6։
Կամրջոյ ձոր,	8։
Ադոպէն,	8։
Քաշի մարգ,	6։
Երերունք,	10։
Բակերա,	10,
Որգոյերեզի,	6։
Վարդենիք,	10։
Հայիք,	7։
Նրբիւն,	12։
Նորիք,	12։
Ամաղաւ,	10։
Արկադուկերա,	6։
Ողեան,	10։
Արտաբոյի,	10։
Փրակայ,	12։
Գրկիք,	6։
Սարկողովք,	20։
Ագարակ,	12։
Երիժու,	6։
Արենի,	12։
Աւչար,	6։
Երերունք միւս,	10։
Կէչուա,	6։
Զերմուկ,	12։

Աղթաբոյնի,	6։	Երկայնաբոի,	6։
Շատաղ,	6։	Շատաղ միւս,	6։
Գոսաեննի,	12։	Յրտոզետ,	6։
Հաւուս,	6։	Աբատէնք,	6։
Միջագետք,	6։	Ըռեդի,	8։
Ինձորուտ,	6։	Եճեղի,	10։
Դրունք,	10։	Ուռիք,	8։
կաքաւուց աղբիւր,	6։	Գոմք,	6։
Ունջոռք,	10։	Եզնանիստան,	6։
Աղնճոց բերդ	6։	Գնդեվանք,	10։

Դ. Գեղաքունի գաւառ։

Կոթ,	20։	Կակոյք,	12։
Գոճոյ ձոր,	12։	Սկերտ,	10։
Յըցնի,	7։	Ինձի թաղք,	7։
Ոփեաց ձոր,	6։	Նորաշէն,	7։
Եւանակաց հուն,	7։	Ողենի,	12։
Գանձաղանտառ,	7։	Գողձոր,	7։
Երիզկայք,	15։	Դաստակերտ,	10։
Վասակաշէն,	10։	Զառագարակ,	7։
Ամասբիա,	15։	Վաժոց,	10։
Կամբրիւն,	15։	Հագք,	15։
Ինկառինճ,	12։	Ինորոտն,	15։
Աբգիճի,	10։	Թմոկ,	15։
Մեհոգած,	10։	Հովուաց ագարակ,	7։
Զագ,	17։	Կածիք,	15։

Ութբրուն,	12։	Յուշապերեկ,	6։
Վարդենիք,	6։	Ներքին վարդենիք,	15։
Թամբարարք,	12։	Երերուք,	15։
Առնճոյ հուն,	15։	Գոմք,	12։
Պահավանք։	6։	Կուարտակոմք,	10։
Վանաւան,	7։	Փառականք,	10։
Բերան,	12։	Ղեխք,	10։
Բրախայրք,	12։	Շիկակարբն,	15։
Գերափուշ,	15։	Ծաղկայ,	7։
Աղաեանք,	15։		

Ե. Սոթիյ գաւառ։

Սոթք,	20։	Ծափաթաղք,	7։
Ունչիձոր,	7։	Հաւսաթաղք,	7։
Աւազան,	12։	Համամաբակք,	7։
Արևիսաբակ,	6։	Գուկառինճ,	15։
Տրէտուք,	8։	Սափչանապատ,	8։
Ծորթագետ,	8։	Վարդանաբակք.	6։
Նորաբակք,	6։	Վասակաշէն,	10։
Կուքն,	12։	Անապատ,	12։
Արփունչն,	12։	Շաղբէք,	10։
Կուչկունիք,	10։	Բարկոյք,	12։
Վաղաւեր,	10։	Ուռակարբ,	15։
Ամեռնափոր,	15։	Շաւան,	10։
Շինիք,	15։	Աստուածածին,	10։
Երէզ,	12։	Բակափոր,	12։

Մաքենոց, 15։
Ջերիշատ, 12։
Աղբերաձոր, 7։
Անապատ, 7։
Կուտակք, 10։
Ջաղացաձոր, 10։
Բաշուք, 12։
Բերդաձոր, 8։
Որթնիք, 15։
Տարանակ, 15։
Ոզմունք, 12։
Ջահոյ, 12։
Որոգիք, 12։
Գողոց ագարակ, 12։
Գեղամաբակ, 10։
Սահակաբակք, 7։
Ջաղացաձոր, 6։
Դպրաբակ, 6։
Ատրմեղենաբակ, 12։
Մնաձոր, 6։
Գետաբակ, 10։
Վարժանկէ աղբիւր, 10։
Եղջերուենիք, 8։
Աղձի գետ, 6։
Եռեցիք, 12։
Ազխոզ, 10։
Արմատ, 17։
Շապուհաթայ, 7։
Վաչէիբակք, 6։
Ղաչուրաբակ, 7։
Տեռնատեան, 12։
Դրունք, 12։
Տարօնք, 15։
Ախոռանատուն, 15։
Պաշոյ, 12։
Խորասանաբակ, 6։
Ակոնք, 10։
Այրք, 15։
Կախան աղբիւր, 8։
Խոնթակաբակ, 7։
Որուց, 8։
Տկոլաբակ, 6։
Խորժայ, 12։
Ծար, 15։
Երերի, 8։
Հոնճէնք, 7։
Անապատ, 10։

Ջ. Աղահէջ գաւառ։

Աւժէն, 10։
Անէժ, 12։

Տանձուտ,	7։	Հացեաց աղբիւր,	12։
Քեղաձոր,	10։	Հակ,	15։
Ա.րտագետ,	12։	Մեղի,	12։
Ականք,	8։	Ա.րուականն,	6։
Մշենի,	6։	Քաշաթաղք,	6։
Վերին շէն,	6։	Զիաստր,	6։
Մատրակերտ,	6։	Մննի	6։
Հունչաք,	12։	Մարգք,	10։
Պոխոչոխ,	10։	Սուրբ Գէորգ,	8։
Լսորք,	8։	Ագարակու գետ,	10։
Շապոկի,	7։	կարկասան,	6։
Պախախոնիք,	12։	Մոշենք,	10։
Որբոքոյ քար,	8։	Ա.րահուձ,	6։
Ծիծառնուվանք,	10։	Հայելեակ,	6։
կատոնորինք,	12։	Մախուլն,	10։
Խրու,	8։	Ծորացիք,	10։
Խախծիք,	12։	Վժնաբերդ,	12։
Հայրի,	8։	Անուշաւան,	12։
Ադտատ,	6։	Շամբթայ,	8։
Ա.րքոյ,	6։	Վատակակերտ,	10։
Ատրոկ,	12։		

Ի. Հաբանդ գաւառ։

Ադախերդ,	12։	Խալխալք,	8։
կատավանք,	8։	Խնձորեակ,	10։
Վանոցայ,	20։	Մրկաքար,	12։

Խորեայ, 7։
Տանձեակ, 7։
Տեղ, 12։
Պատանդավանք, 7։
Նորաշինիկ, 6։
Վաղատու, 12։
Խորխոռ, 7։
Կարբինք վերին, 8։
Կարբինք ներքին, 8։
Գօրու, 20։
Լուսակունք, 10։
Շագուայ, 10։
Անձկայք, 6։
Գենենաթաղք, 6։
Ղոկոնի, 8։
Յատղոնի, 12։
Ագարակ, 8։
Անձկայք, 12։
Զագաձոր, 12։
Նախանձփոր, 8։
Գորայք, 10։
Խոտ, 12։
Մարգաձոր, 8։
Բոքս, 10։
Արքոյ, 10։
Շաթիթաղք, 8։
Չալէ, 8։
Շորնոխոյ, 12։
Թաղթուն, 7։
Քօչագեղ, 12։
Եզնի, 7։
Խոնածախ, 20։
Ակարդոն, 10։
Մակաղոց, 10։
Մակաղոց միւս, 7։
Տեղի, 12։
Կռվայ, 6։
Բազմածակք, 6։
Արտաշէն, 6։
Քրվանք, 20։
Գնդաշէն, 12։
Բողեան, 12։
Քարոտան, 15։
Ըղուերձ, 12։
Ականայ, 10։
Պետրոսկայ վանք, 10։
Աղոջրիկ, 8։
Ուսկաձագ, 8։
Ստորին, 12։
Բահիզաձոր, 18։
Նափակաշէն, 12։
Թաղարայ, 8։
Շնոյ հերք։ 24։

Ը. Բաղք գաւառս։

Աչաղս,	8։	Եճանան,	12։
Բարերվայր,	6։	Շէքքս,	12։
Վարդավանք,	6։	Տորթն,	26։
Տափեար,	6։	Աւարագետք,	10։
Տագամար,	20։	Խոտանան,	12։
Եղէնգն,	6։	Նորաշինիկ,	6։
Նորաշինիկ միւս,	6։	Հիւնեաց ձոր՝	6։
Ոպն,	6։	Կոտեվանք,	12։
Աւտս,	10։	Արուքս,	6։
Հողար,	8։	Կրաւագետ,	6։
Խմայճ,	6։	Կաւարտ,	8։
Արկանիձոր,	10։	Տոգող,	6։
Զարերիտակերտ,	10։	Տատնեղիշէն,	10։
Տերոնդատ,	8։	Ագարակ,	20։
Թուրք,	12։	Մակարագ,	6։
Անագոն,	7։	Միւս Անագոն,	7։
Պարքոն,	6։	Պարքոն միւս,	6։
Գեղաքունի,	10։	Կմեզ,	10։
Գուկական,	10։	Փառաւակ,	8։
Մեծամարդ,	12։	Գիւղ Կովսական,	12։
Արձանաձոր,	6։		

Թ. Միւս Բաղք որ անուանի Բաշունիք։

Երէց,	12։	Խողվանի,	10։
Դատատակերտ,	6։	Տանձավայր,	8։

վանանդ,	10։	Մաճ,	7։
Անաստայձոր,	6։	Շոռնոխոյ,	8։
Լերմենիչէ,	6։	Խախաք,	12։
Եւեղի,	7։	Հաստատուք,	6։
Մոգք,	6։	Մատախոնի,	10։
Իցան,	6։	Տողոր,	6։
Աւերք,	6։	Տաճկաձոր,	6։
Տեխք,	8։	կոճարու,	7։
Մաղձնատուք,	6։	Խոսի,	6։
Ջաւթք,	8։	Տուտուստուք,	7։
Մնծնեակ,	6։	Ակն,	6։
Բակուրի վանք,	12։	Տախն,	12։
Մերթակերտ,	6։	Հայնեան,	6։
Ծղու,	8։	Տատայ,	12։
Բարկուշատ,	12։	Խիրք,	12։
Տրեայ,	12։	Ագատի,	8։
Ճակկուրթ,	12։	կորակիթ։	6։
Անդոկաբերդ,	12։	Նակորզան,	20։
Արտէն,	10։	Նախջաւանիկ,	10։
Արթիկ,	10։	Թով,	8։
Թով միւս,	7։	Աղահորդ,	10։
Պահու բերդ,	7։	Աժդակ,	12։
Աթխոյք,	12։	Երուանդակերտ,	6։
Վաժոնիք,	8։	կումեն,	6։

Ժ. կովսական գաւառ։

Իցան,	12։	Բևխ,	6։

Շտաուբ, 6։
Փառւարտոյ վանք, 6։
Լոսուկոր, 6։
Բոստ, 10։
Գագավանք, 6։
Թաթու մարդ, 6։
Մարուբ, 8։
Գոն, 5։
Երեգիք, 7։
Համուլք, 6։
Մաճկան, 6։
Նախկոտան, 6։
Լիմ, 8։
Լիմ վերին, 8։
Փշատեցարուս, 6։
Բերքնի, 8։
Արգաբ, 6։
Սղաթախք, 12։
Պօղոսի վանք, 7։
Թեղոյ կիւղ, 7։
Արձախամայրի, 17։
Մառի, 6։
Լուցմայրի, 6։
Տարվանոտ, 12։
Դռնակերտ, 7։
կիւղ, 15։
Ողոյնի, 12։
Բեխևերջի, 8։
Վաժնատուք, 10։
Մառակոթ, 12։
Մենիկ, 6։
Դալք, 5։
Վարոսի վանք, 10։
Հոյնոցկոր, 5։
Դախարեան, 10։
Վառամաղբիւր, 6։
Մանուշակի մարդ, 6։
Գիրկն, 8։
Զամոտուք, 8։
Լիմախովիտ, 6։
Դից մայրի, 6։
Աշտարակ, 6։
կերեն, 12։
Շիկահողք, 12։
Վախտանգաձոր 7։
Շաշիկէտ, 10։
Ծանաղու, 20։
Բարդուխաղք, 6։
Նորաշինիկ, 8։
Ոսկաձոր, 7։
Ծոբի, 12։

ԺԱ. Արևիք գաւառ։

Աղվանք,	7։	կառատի,	15։
Մայըի,	8։	Աբկավանք,	8։
Մալուենու։	8։	Տափեար,	8։
Մեղրոյ վանք,	20։	Լահավանք,	30։
Որդիշոյ վանք,	20։	Լուսակայ վանք,	12։
Խոլավանք,	12։	Զուարի վանք,	12։
կարճաւան,	12։	Մոլոշան,	12։
Տաշտուն,	12։	կուբրավանք,	8։
Ագարակ,	8։	Մանսղու,	8։
Մել։	6։	Տեհի,	8։
կորեկնեկ,	10։	Թաղամայըի,	6։
Խոզուղիւղ,	6։	Վարդանաձոր,	6։

ԺԲ. Զորք գաւառ։

Բաղաբերդ,	12։	Նորագիւղ,	12։
Տինիք,	12։	Բակավանք,	12։
Ծաղիանու,	6։	Գահուրայ,	6։
Գեղոյ վանք,	20։	Ոչէթի,	6։
Բեխորոտ,	8։	Շարաքոյ,	8։
Բեշ,	6։	կաճաճուտ,	8։
Բոկախու,	8։	կիցք,	8։
Աչարաչ,	10։	Վաժունիք,	12։

ԺԴ. Երկնչակ գաւառ։

Բուսաս,	12։	Ակովիկ,	12։
Բեկերունիք,	12։	Ամառաշէն,	10։
Ովդու,	12։	Քոփչայ,	8։
Աբրակունիք,	12։	Քարկոփ,	12։
Բերդիկ,	12։	Ռապատ,	12։

ԺԴ. Ճահուկ գաւառ։

Ճահուկ,	20։	Աղբերխաչ,	50։
Ծախ,	12։	կարմիր եկեղեցի,	12։
Որտոք,	12։	Բլուր,	12։
Պահեստ,	12։	Ղաբէն,	12։
Բզդատն,	12։	Ընջղակերտ,	12։
Նորագիւղ,	10։	Գուքի,	12։
Ծոռատունիք,	12։	Տիզէն,	12։
Գեհենիք,	12։	Արմաւաշէն,	10։
Սաղուատոնք,	8։	Զաղայ,	8։
Հեճանայ,	8։	Թամաշաղ,	12։
Ովիք,	12։	Նորագիւղ միւս,	12։
Թաթերք,	12։	Շամեն,	12։
Նորբերդ,	12։	Ակոռի,	12։
Եզատունք,	12։	Ագատակ,	8։
Դալարինք,	8։	Քրդն,	8։
Քոյլք,	12։	Ծոռունիք,	6։

Դրախտիկ,	6։	Ծաւալք,	12։
Ադու,	12։	Գայլակալ,	10։
Ջուր,	8։	Ոլեննի,	8։
Բաբունք,	12։	Տախտակք,	8։
Արկու գետ,	12։	Անուշավանք,	12։
Ադդաւ,	6։	Նորաշինիկ,	6։
Շմբթայի,	8։	Արքոյքայ,	6։
Վասակաբերտ,	10։	Աւերակի,	12։

Եւ Քրխտոսի փառք յաւիտեանս. ամէն։ Վերոյգրեալ շինից գումարն է վեց հարիւր եօթանասուն և եօթն։

ՅԱՒԵԼՈՒԱԾ։

ՀՀ.

Շարակարգութիւն եպիսկոպոսաց Սիւնեաց առաւել ի միաբանից Տաթեւոյ վանացս։

Ա.—Տէր սուրբ Յովհան Որոտնեցի վարդապետան Հայիկ շինեաց զզանգակատունն սրբոյ աթոռոյս և զզարմանահրաշ վանս սուրբ կարապետին որ է մերձ գեղջն Որոտնայ, զոր կարմիր վանք կոչեն. և եթող իւր յիշատակ։

Բ.—Եւ Տէր սուրբ Գրիգոր Տաթևացին գեր քան զամենայն վարդապետս եկեղեցւոյ, որք թէպէտ ոչ նստան եպիսկոպոսք յաթոռս, այլ ի վեր քան զնստողսն արդիւնաւորեցին զաթոռս Սիւնեաց. և թէ ատոյգ իսկ է ասել. զբոլոր զազգս Հայոց. վասն որոյ սակս անթուելի երախտեացն որք ունին արաքեալ առ սուրբ աթոռս և առ համայն լուսաւորչածին ազգս մեր (որոց գերամբարձութիւնն յայտ է ի շնորհաբուխ վարդապետութեանց իւրեանց և ի ատուգաբան սրբոց պատմագրողաց) եղան ի կարգի եպիսկոպոսաց սրբոյ աթոռոյս։

Գ.—Տէր սուրբ Առաքեալ՝ պետն Սիւնեաց, քուերորդի սրբոյն Գրիգորի Տաթևացւոյն. սա շինեաց զհարաւային կողման գաւիթն սրբոյ աթոռոյս ի պահպանութիւն ահեղասքանչ մեծի տաճարիս. և հրաշագործ խաչ իմն օծեալ ի յիշատակ սրբոյն Գրիգորի Տաթևացւոյ, և կառուցեալ յիւրմէ շինեալ գաւթին ի մէջ սեան։

Դ.—Տէր Սիմէոն եպիսկոպոսն Անկեղակոթցի, յետ յոլովից անյայտից, որ յոյժ Ջանակուռ եղև վասն շինութեան և պայծառութեան սրբոյ աթոռոյս։ Եւ զի Տաճիկք բռնութեամբ յափշտակեալ էին զբազում անդս և անդաստանս սրբոյ աթոռոյս, սա առեալ զամենայն մուրհակսն, յորս գրեալ գոյին ամենայն որքանութիւն սահմանաց, անդաստանաց սրբոյ աթոռոյս, զոր նախնի թագաւորքն Պարսից տուեալ էին իւրեանց կնքովն. և գնացեալ առ Շահն՝ ցուցանելով նմա զմուրհակսն՝ վերստին սեպհականեալ է սրբոյ տանս զխլեցեալսն զամենայն. վասն որոյ ի նախանձ բերդեալ անօրինացն սպանեալ են զինքն, որոյ սուրբ մարմինն ամփոփեալ կայ մերձ գաւազանին ի կողմն հարաւոյ։

Ե.—Տէր Շապանօղլին Յովհաննէս Շինաթաղեցին, որ էր հոգիբնկալ և բանիբուն և ամենայն առաքինութեամբ զարդարեալ, Ջահ եկեղեցւոյ և ախոյեան հաւատոյ և Ջատագով կրօնից քրիստոնէական եկեղեցւոյ։ Սա եօթնից

գնացեալ յԱսպահան առ շահ սուլտանն Հիւսէին, և ըզի վերոյ ասացեալ Սիմէոն եպիսկոպոսին հաստատեալ նմանական վերատին նորոգեաց: Սա արար բազում ուղղութիւնս և շինութիւնս ի սուրբ աթոռս. որ և զարևելեան թանապէն (դահլիճ) հանդերձ սենեկօքն նորին Թրաշ (տաշածոյ) քարիւ դեղեցկաձև յօրինուածով յոյժ ախորժ և զուարճալի տեսողաց: Իսկ ի վերջին գնալն և ի դառնալն անդուստ՝ հասեալ ի Դավրէժ. անդ վախճանի հատեալ ի կենաց. որոյ խաչակիր մարմնոյն վերայ լոյս ծագեալ իջեալ յերկնից, և կամարաձև շրջապատեալ զմարմնովն՝ ակներև տեսողացն ի վկայութիւն սրբութեանն. ուստի ղբազում վիճմունս արարեալ ընդիկ երկրացիքն ընդ Ղափանցիս՝ նոքա պատճառելով թէ ըստ որում ասա հանդեաւ՝ ասա հաճի ամփոփիլ. և մերայինքն թէ մեր է՝ պարտիմք տանել ի յիւր աթոռն հանդուցանել: Բայց տեսեալ մերայնոցն թէ վիճմամբ չէ հնար ունել զմարմին ցանկալւոյն, առեալ զնա ի գիշերի գաղտագողի՝ բերեալ անցուցին ընդ Երասխ. և նոցա ի լսելն հետամուտ եղեալ մինչ յեզր գետոյն, և տեսեալ եթէ անցուցեալ գոլով յայսկոյս, ոչ ինչ կարացեալ առնել. ապա աղերսիւ խնդրեալ ղգաւազանն և զակումբն, և դարձեալ յետս: Իսկ սոցա բերեալ զմաքուր մարմինն, գորով լոյսն կամարաձև տակաւին շրջապատեալ գոլով, ամ-

փոփեցին ի մէջ մեծի տաճարին առընթեր յետին դասուն հիւսիսակողման սեան։

Զ.—Տէր Ներսէս եպիսկոպոս՝ աշակերտ սրբոյն Փիլիպպոսի կաթողիկոսի, որ էր այր առաքինի, զարմանալի վարուք սրբութեան, պահող պատուիրանացն Աստուծոյ։ Զսա հարկադրեալ կաթողիկոսն Փիլիպպոս յղեաց ի դաստղութիւն սրբոյ աթոռոյս իբր արժանաժառանգ իւրում հայրենական աթոռոյ, գալ շինել և պայծառացուցանել զսա (քանզի էր ի ժամանակին յայնմիկ երկնահանդէս սուրբ աթոռս այս որպէս թէ ամայի գոլով անշուք և անկարգ)։ Որ և յանձն առեալ գնոգեշունչ հրամանն սրբազան վեհապետին և եկեալ ի սուրբ աթոռս՝ արար բազում ուղղութիւնս և բարեկարգութիւնս եկեղեցական և քաղաքական, և շինեաց արեւմտեան կողմի խուցսն և զերեսբացսն և զեկեղեցին ի գեղջ իւրում. և ապա վոխեցաւ ի Քրիստոս յոյն քնաւից, թողեալ զբաւական մեզ զսրբասուն մարմին իւր որ ամփոփեալ կայ ի զանգակատան սրբոյ աթոռոյս։

Է.—Տէր Զաքարիա եպիսկոպոս. և սա ևս էր այր սուրբ և առաքինի, և կարի ճգնաւէր. ուստի մինչ հասանէր ի մեծի պահոց առաջին օրն, զգենոյր զզգեստ կրօնաւորական. և զնայր ի Մեծ անապատն կացեալ անդ մեծաւ ճգնութեամբ մինչ ի Ծաղկազարդն. և ապա վերա-

դառնայր ի սուրբ աթոռս։ Եւ արար սա բազում շինուածս ի սուրբ աթոռս, զի շինեաց զիւր առաջնորդարանն յոյժ գեղեցիկ կերտուածով քարանց, և զերկար խցերն երկփեղկի հանդէպ միմեանց զդրունսն արարեալ ի բնակութիւն միաբան եղբարց. և ինքն վախճանեալ ի Գորադաշտ. և բերեալ զմարմինն ի սուրբ աթոռս ամփոփեցին ասա։

Ը.— Տէր Մարտիրոս եպիսկոպոս Մեղրեցի. որ էր յոյժ պահեցող և չորակաց։ Սա բարեպէս կառավարեալ զսուրբ աթոռս և զժողովուրդս իւր՝ հանգեաւ խաղաղութեամբ։

Թ.—Տէր Յովասափ Աղուերձեցին. որ էր այր հոգեկիր, եկեղեցասէր և ցանկացող շինութեանց նոցին. որ և շինեաց զեկեղեցիսն Անկեղակոթու և Բռնակոթու և զմեծ անապատի միաբանակեաց խուցսն. յետ որոյ վախճանեալ բարի մահուամբ հանգեաւ ի սուրբ աթոռս։

Ժ.—Տէր Առաքեալ եպիսկոպոսն Սադախլու Կալերեցի. սա էր կարի ճոռոմաբան և իմաստուն. որ և ճոռոմ խօսիւք զամենայն ընդդիմակ ներհակսն իւր ափ ի բերան առնէր։ Եւ նոցա լցեալ չար նախանձու հատին զլեզուն. իսկ սա տակաւին ասէր ցոսոխսն իւր թէ. թէպէտ զլեզուս հատիք. այլ ձեռքս իմ և միտքս իմ ընդ իս է. ի ձեռն որոց կարող եմ գրով ազդել շահին զամենայն չարիս ձեր. վասն որոյ ի կարի

նախանձ բրդեալ՝ ի գիշերի ծածկաբար սրախող-խող արարին ի կուսանաց անապատին Հալիձորու։

ԺԱ.—Տէր Աղուերձեցի Կիրակոս եպիսկոպոս. որ էր կարի քաղաքական, յոյժ իմաստուն և եղբայրասէր այնքան՝ մինչ զի թարց եղբարց ի մարմնաւոր կերակուրս ոչ մերձենայր քնաւ առանձին։ Սա արար բազում ուղղութիւնս սրբոյ աթոռոյս, և նոր նորոգեաց զմեծ կաթողիկէն սրբոյ տաճարիս օժանդակութեամբ Գաբրիէլ վարդապետին. և շինեաց զպարիսպն և զթաւլայն (ձիաստան) ի հիւսիսային կողման. և վախճանեալ ներ սրբոյ աթոռոյս ամփոփեցաւ աստ։

ԺԲ.—Տէր Թովմաս եպիսկոպոս Գարթեցի, այր աղօթասէր, սրբակեաց և նշանագործ, որ զբոլոր թիւրութիւնսն յերկրէ անհետ արարեալ նշանագործութեամբ. և փոխեալ յանցաւորէս յանանցն եթող մեզ զմաքուր նշխարս մարմնոյն ի սուրբ աթոռս։

ԺԳ.—Տէր Ներսէս՝ վերոյիշեալ Ներսիսի եղբօրորդին, որ էր այր պարթև, յոյժ արտասուահեղ և լռակաց այնքան՝ մինչ զի ասի զսմանէ թէ՝ մինչ մտանէր յեկեղեցին ի ժամ աղօթիցն մինչ ի յելանելն, անհնար էր սմա խօսիլ ընդ ումեք, սակս ո և իցէ հարկաւոր իրաց։ Որ և արարեալ անթիւ ուղղութիւնս և շինութիւնս

սրբոյ աթոռոյս և Մեծի անապատին՝ հանգեաւ ի Քրիստոս ալևորեալ և լի աւուրբք։

ԺԴ.—Տէր Մշմշօղլի Աստուածատուր վահրաւեցի. զսորա արդիւնս ի սուրբ աթոռս անկար է մի ըստ մխոչէ ի թիւս արկանել. զի ելից զսուրբ եկեղեցին բազում զգեստուք, անօթիւք և գրքօք. և յետոյ գնացեալ ի մեծն Պօլիս (Կոստանդնուպօլիս) անդ վախճանեցաւ։

ԺԵ.—Տէր Յովհաննէս Տաթևացի Ղալամեանց՝ այր քաղաքական և ճարտարալեզու, առատաձեռն և շինարար արդիւնաւորիչ սրբոյ տանս. որ գրեթէ նոր ի նորոյ նորոգեաց զեկեղեցեացս տանիսն և զսուրբ աթոռս, և շինեաց զկալի յարդանոցն և զպատակն անասնոց որ է Թալայն, զառաջնորդարանն իւր, և կից նմին՝ զշտեմարանն այսինքն զամբարներն. և ի պարսպի միջի զարևմտեան զմակաղատեղն. նաև յանթուեալի պարտուց զերծոյց զսուրբ աթոռս. և յետոյ սպանմամբ սրոյ մեռաւ և թաղեցաւ ի սուրբ աթոռս։ Ի սորա աւուրս անիծեալ բռնաւորն Ռուսմիոյ որ կոչիւր Ֆաթալի, եկեալ ի վերայ սրբոյ աթոռոյս՝ բազում մեքենայս լարեաց զանազան հնարիւք, կամէր չարին բռնութեամբ առնուլ զսա և աւարել. և իբրև եաես թէ բռնութեամբ ոչ կարէ առնուլ զանառիկ աթոռս. փոխեաց զմիտս իւր ի խորամանկութիւն. ըստ օձի, զի խաբէութեամբ և ստութեամբ երդուաւ

ի յօրէնս իւր (ըստ բնիկ պարսկական բարուց) չար և ոչ մի ինչ առնել սոցա բայց միայն գայցեն ի հնազանդութիւն ինքեան. և ելեալ գնայցէ։

